
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՌԱԿԱ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՆՏԻԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

★

ԵՐԵՎԱՆ — 1952



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՌԱԿԱ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

87/88.09-82
Ա-62

ԱՆՏԻԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՐԵՍՏՈՄԱՏԻԱ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՀԻՆ ՀՈՒՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կազմեց՝ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ա II/21826

ԵՐԵՎԱՆ 1952

Хрестоматия античной литературы

(На армянском языке)

Изд. Гос. Заочного пединститута Арм. ССР
Ереван—1952

ԿԱՐԼ ՄԱՐՔՍԸ ՀՈՒՆԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՄԱՍԻՆ

... 6. Նյութական արտադրության զարգացման անհավասար հարաբերությունը դեպի, օրինակ, գեղարվեստական արտադրությունը: *Ընդհանրապես առաջադիմության գաղափարը չպետք է ըմբռնել սովորական աբստրակցիայով: Գեղարվեստի և մյուսների հարցերում այդ դիսպրոպորցիան այնքան էլ կարևոր չէ ու այնքան էլ դժվար չէ ըմբռնել, ինչպես բուն իսկ գործնական սոցիալական հարաբերությունների բնագավառում, օրինակ, կրթության համեմատական դրությունը Միացյալ Նահանգներում և Եվրոպայում: Բայց իսկական դժվարին կետը, որը պետք է այստեղ քննարկել, այն է, թե ինչպես արտադրահարաբերությունները, իրրև իրավահարաբերություններ, անհամաչափ զարգացում են ունենում: Հետևաբար, օրինակ, հռոմեական մասնավոր իրավունքի (քրեական ու պետական իրավունքին դա ավելի քիչ է վերաբերում) առնչությունը ժամանակակից արտադրության հետ:*

7. *Այդ ըմբռնումը հանդես է գալիս իրրև անհրաժեշտ զարգացում: Սակայն պատահականության իրավազրկությունը: Varia*[1] *(ազատությունը և մյուսները): (Հաղորդակցության միջոցների ազդեցությունը): Համաշխարհային պատմությունը միշտ գոյություն չի ունեցել. պատմությունն իրրև համաշխարհային պատմություն՝ արդյունք է:*

8. *Իհարկե, ելակետ ընդունել բնական որոշություններ՝ սուբեկտիվ և օբեկտիվ ցեղեր, ռասաները և այլն:*

Գեղարվեստի նկատմամբ հայտնի է, որ նրա ծաղկման որոշ շրջաններն ամենևին չեն համապատասխանում հասարակության ընդհանուր զարգացմանը, հետևաբար նաև նրա նյութական հիմքի զարգացմանը, որը մի տեսակ կազմում է հասարակության կազմակերպության կմախքը: Օրինակ՝ հույները արդիական ժո-

---

[1] [Բնագրում «Va»: Խմբ.]:

ղովուրդների համեմատությամբ կամ թե Շեքսպիրը։ Գեղարվեստի որոշ ձևերի, օրինակ՝ էպոսի մասին ընդունված է նույնիսկ, որ նրանք երբեք այլևս չեն կարող ստեղծվել համաշխարհային դարաշրջան կազմող իրենց կլասիկ կերպարանքով, հենց որ սկսվեց գեղարվեստական արտադրությունն իբրև այդպիսին, և որ, այդպիսով, հենց գեղարվեստի բնագավառում նրա որոշ խոշոր նշանակություն ունեցող ձևերը հնարավոր են միայն գեղարվեստական զարգացման համեմատաբար անզարգացած աստիճանում։ Եթե դա տեղի ունի գեղարվեստի բնագավառում հենց նրա տարբեր ճյուղերի նկատմամբ, ապա էլ ավելի քիչ զարմանալի է, որ նույն այդ հանգամանքը տեղի ունի գեղարվեստի ամբողջ բնագավառի վերաբերմամբ հասարակության ընդհանուր զարգացման համեմատությամբ։ Դժվարությունը այդ հակասությունների ընդհանուր ձևակերպումն է միայն։ Հենց որ սպեցիֆիկացիայի ենթարկենք նրանց, իսկույն կատանան իրենց բացատրությունը։ Վերցնենք, օրինակ, հունական արվեստը և ապա Շեքսպիրը արդիականության համեմատությամբ։ Հայտնի է, որ հունական դիցաբանությունը ոչ միայն հունական արվեստի զինարանն էր, այլև նրա հողը։ Մի՞թե հնարավոր է, որ բնության ու հասարակական հարաբերությունների այն ըմբռնումը, որը կազմում է հունական երևակայության և, հետևաբար, հունական (արվեստի) հիմքը, գոյություն ունենա սելֆակտորի, երկաթուղիների, լոկոմոտիվների ու էլեկտրական հեռագրի ժամանակ։ Ո՞ւր կմնա վուլկանը Roberts et C°-ի հանդեպ, Յուպիտերը՝ շանթարդելի հանդեպ և Հերմեսը՝ Crédit Mobilier-ի հանդեպ։ Յուրաքանչյուր դիցաբանություն հաղթահարում, նվաճում և ձևավորում է բնության ուժերը երևակայության մեջ ու երևակայության օգնությամբ, հետևաբար, այն չքանում է, երբ մարդս իրոք տիրապետում է բնության այդ ուժերին։ Ի՞նչ կդառնար Ֆամա աստվածուհին՝ Printinghoussquare-ի[1] կողքին։ Հունական արվեստի նախադրյալը հունական դիցաբանությունն է, այսինքն՝ բնություն և հասարակական ձևեր, որոնք անգիտակցական գեղարվեստական եղանակով մշակված են արդեն ժողովրդի երևակայության միջոցով։ Դա է նրա նյութը։ Բայց ո՛չ ամեն մի դիցաբանություն, այսինքն՝ ո՛չ բնության ամեն

[1] [„Times"-ի տպարանը Լոնդոնում։ Ֆամա—համբավի աստվածուհին (Հռոմ)։—Խմբ.]։

մի պատահական անգիտակցական գեղարվեստական մշակում (այստեղ բնություն ասելով՝ հասկացվում է ամբողջ առարկայականը, հետևաբար՝ հասարակությունը ներառյալ)։ Եգիպտական դիցաբանությունը երբեք չէր կարող հունական արվեստը սնուցող հող ու մայրական դիրկ լինել։ Բայց, համենայն դեպս, հենց դիցաբանությունը։ Հետևաբար՝ բնավ ոչ այնպիսի մի հասարակական զարգացում, որը ժխտում է ամեն մի դիցաբանական վերաբերմունք դեպի բնությունը, բնության ամեն մի դիցաբանումը, որն այդպիսով գեղարվեստագետից պահանջում է դիցաբանությունից անկախ մի երևակայություն։

Մյուս կողմից՝ հնարավո՞ր է Աքիլլեսը վառոդի և կապարի դարաշրջանում։ Կամ, ընդհանրապես Իլիականը՝ տպագրական մամուլի և տպագրական մեքենայի հետ միասին։ Եվ մե՞րթ անհրաժեշտաբար չեն անհետանում ղրույցները, երգերն ու մուսաները, հետևաբար և վիպագրական բանաստեղծության համար անհրաժեշտ նախադրյալները տպագրական մամուլի երևան գալով։

Սակայն դժվար ըմբռնելին այն չէ, որ հունական արվեստն ու էպոսը կապ ունեն հասարակական զարգացման որոշ ձևերի հետ։ Դժվարությունն այն բանն ըմբռնելու մեջ է, որ հունական արվեստն ու էպոսը դեռ շարունակում են մեզ գեղարվեստական հաճույք պատճառել և որոշ իմաստով պահպանում են նորմայի և անհասանելի տիպարի նշանակություն։

Տղամարդը չի կարող նորից երեխա դառնալ, այլապես տղայամիտ կլինի։ Բայց մի՞թե նրան հրճվանք չի պատճառում մանկական միամտությունը և մի՞թե նա ինքը չպետք է ձգտի մի ավելի բարձր աստիճանի հասնելով՝ իր իսկական էությունը վերարտադրելու։ Մի՞թե՝ յուրաքանչյուր դարաշրջանում մանկական բնության մեջ չի վերակենդանանում մարդու սեփական բնավորությունը՝ իր բնական ճշմարտությամբ։ Եվ ինչո՞ւ մարդկային հասարակության մանկությունն այնտեղ, որտեղ զարգացել է ամենից ավելի դեղեցիկ կերպով, չպետք է հավիտենական գրավչություն ունենա մեզ համար իբրև մի այլևս երբեք չկրկնվող աստիճան։ Լինում են անկիրթ երեխաներ և ծերի խելոքություն ունեցող երեխաներ։ Հնադարյան ժողովուրդներից շատերը պատկանում են այդ կատեգորիային։ Հույները նորմալ երեխաներ էին։ Նրանց արվեստի թովչանքը մեզ համար հակասական չէ այն անզարգացած հասարակական աստիճանի նկատմամբ, որից բողբո-

ջել է այն: Ընդհակառակը, նրանց արվեստը հետևանք է այդ հասարակական աստիճանի և անքակտելիորեն կապված է այդ հանդամանքի հետ, որ չհասունացած հասարակական հարաբերությունները, որոնց մեջ ծագել է այդ արվեստը և որոնց մեջ միայն կարող էր ծագում առնել, երբեք չպիտի կարողանա նորից կրկնվել:

(Շեղագիրն այստեղ ընդհատվում է):

(Կ. Մարքս, «Քաղաքատնտեսության քննադատության շուրջը», Պետհրատ, Երևան 1948 թ., էջ 269—272):

ՖՐԻԴՐԻԽ ԷՆԳԵԼՍԸ ՍՏՐԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ՝ ՀՈՒՆԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՀԱՄԱՐ

... Հայտնաբերվեց ստրկության ձևը: Բոլոր այն ժողովուրդների մոտ, որոնց զարգացումն անցել էր հին համայնական կենցաղի սահմաններից, ստրկությունը դարձավ արտադրության տիրող ձևը, բայց վերջ ի վերջո՝ նաև դրա քայքայման գլխավոր պատճառներից մեկը: Միայն ստրկությունն էր, որ քիչ թե շատ լայն մասշտաբով հնարավոր դարձրեց աշխատանքի բաժանումը երկրագործության և արդյունաբերության միջև և դրանով հնարավոր դարձրեց հին աշխարհի ծաղկումը, հունական կուլտուրան: Առանց ստրկության հնարավոր չէր հունական պետությունը, հունական արվեստն ու գիտությունը. առանց ստրկության չէր լինի հռոմեական կայսրությունը, իսկ առանց հունական կուլտուրայի և հռոմեական կայսրության հիմնախարիսխի, չէր լինի նաև ժամանակակից Եվրոպան: Մենք երբեք չպիտի մոռանանք, որ մեր ամբողջ տնտեսական, քաղաքական և մտավոր զարգացումը բխում է նախապայման ծառայող մի գրությունից, որի ժամանակ ստրկությունը նույնքան անհրաժեշտ է, որքան և ընդհանրապես ճանաչված տարր է եղել: Այս իմաստով մենք իրավունք ունենք ասելու առանց հնադարյան ստրկության՝ ժամանակակից սոցիալիզմն էլ չէր լինի:

Շատ հեշտ բան է, իհարկե, ստրկության և նման խայտառակ երևույթների առթիվ ընդհանուր ֆրազներ ասել և բարձրաբարոյական զայրույթ թափել: Այս զայրույթը, դժբախտաբար, արտահայտում է միայն այն, ինչ հայտնի է բոլորին, այսինքն՝ որ այդ հնադարյան հաստատություններն այլևս չեն համապատաս-

խանում ո՛չ մեր ժամանակակից հանգամանքներին և ո՛չ էլ այդ հանգամանքներից բխող զգացմունքներին։ Բայց այդպիսի վերաբերմունքը մեզ ոչ մի նյութ չի տալիս այն բանը պարզելու համար, թե ինչպես են ծագել այդ կարգերը, ինչու են գոյություն ունեցել և պատմության մեջ ինչ դեր են կատարել։ Քանի որ մենք այս հարցը շոշափեցինք, պետք է ասենք,— որքան էլ այդ հակասական և հերձվածողական հնչի,— որ իր ժամանակի պայմաններում ստրկության հաստատումը մի մեծ առաջադիմություն է եղել։ Անվիճելի է այն փաստը, որ մարդկությունն իր զարգացումն սկսել է կենդանական վիճակից, ուստի և բարբարոսական, գրեթե գազանային միջոցների կարիք է ունեցել, որպեսզի ազատագրվի բարբարոսական դրությունից։ Ամենուրեք, որտեղ շարունակել են գոյություն ունենալ հին համայնքները, սկսած Հընդկաստանից մինչև Ռուսաստան, հազարավոր տարիներից ի վեր նա կազմել է պետական ամենաբիրտ ձևի՝ արևելյան բռնակալության հիմքը։ Միայն այնտեղ, որտեղ համայնական կարգերը կազմալուծվել են, ժողովուրդները սեփական ուժերով առաջ են ընթացել զարգացման ուղիով, և նրանց տնտեսական անմիջական առաջադիմությունն այն է եղել, որ ստրկական աշխատանքի միջոցով զորեղացրել և զարգացրել են արտադրությունը։ Մի բան պարզ է. քանի դեռ մարդկային աշխատանքի արտադրողականությունն այնքան ցածր էր, որ բացի կենսական անհրաժեշտ միջոցները քավարարելուց, միայն մի չնչին ավելցուկ էր տալիս, արտադրողական ուժերի աճումը, փոխանակության ծավալումը, պետության և իրավունքի զարգացումը, արվեստների և գիտության առեղծումը,— այս ամենը հնարավոր էր միայն աշխատանքի ավելի զորեղ բաժանման շնորհիվ, որի համար հիմք պիտի ծառայեր աշխատանքի մեծ բաժանումը՝ սովորական ձևի աշխատանքով զբաղվող մասսաների և սակավաթիվ արտոնյալ անձերի միջև, որոնք ղեկավարում էին աշխատանքը, պարապում առևտրով, պետական գործերով, իսկ հետագայում նաև արվեստով և գիտությամբ։ Աշխատանքի այս բաժանման ամենապարզ, տարերայնորեն առաջացած ձևը հենց ստրկությունն էր։ Հնադարյան, մասնավորապես հունական աշխարհի պատմական պայմաններում՝ դասակարգային հակադրությունների վրա հիմնված հասարակարգին անցյալը կարող էր տեղի ունենալ միայն ստրկության ձևով։ Մինչև անգամ

Հենց ստրուկների համար էլ դա առաջադիմություն էր. պատերազմական գերիները, որոնցից կազմվում էր ստրուկների հոծ բազմությունը, այժմ գոնե պահպանում էին իրենց կյանքը, մինչդեռ առաջ նրանց սպանում էին կամ, ինչպես ավելի առաջ էր լինում, նույնիսկ խորովում—ուտում էին:

Ի դեպ՝ նկատենք նաև այն, որ շահագործող ու շահագործվող, իշխող ու ճնշված դասակարգերի միջև այժմ գոյություն ունեցող պատմական բոլոր ներհակությունները բացատրվում են մարդկային աշխատանքի այդ նույն, համեմատաբար անզարգացած արտադրողականությամբ: Քանի դեռ ֆաստորեն աշխատող բնակչությունն այնքան է կլանված իր անհրաժեշտ աշխատանքով, որ ազատ ժամանակ չունի, հասարակական-ընդհանուր գործերով—աշխատանքի ղեկավարությամբ, պետական գործերով, արդարադատության խնդիրներով, արվեստներով, գիտություններով և այլն—զբաղվելու, մինչև այդ ժամանակ անխուսափելիորեն գոյություն պիտի ունենար մի հատուկ, իրական աշխատանքից ազատ դասակարգ՝ այս կարիքները հոգալու համար, ընդորում այս դասակարգի ուշադրությունից երբեք չէր վրիպում ոչ մի առիթ, որպեսզի իր սեփական շահերից ելնելով՝ ավելի ու ավելի ծանրաբեռնի աշխատավոր մասսաներին: Միայն խոշոր արդյունաբերության միջոցով ձեռք բերված՝ արտադրողական ուժերի հսկայական զորեղացումը թույլ է տալիս աշխատելու պարտականությունը տարածելու հասարակության, առանց բացառության, բոլոր անդամների վրա և այդ միջոցով յուրաքանչյուրի աշխատանքի ժամանակն այնպես սահմանափակել, որ բոլորն էլ բավականաչափ ազատ ժամանակ ունենան՝ ընդհանուր հասարակական, թե՛ թեորեական և թե՛ գործնական աշխատանքներին մասնակցելու համար: Հետևաբար, այժմ միայն ամեն մի իշխող և շահագործող դասակարգ ո՛չ միայն ավելորդ, այլև ուղղակի խոչընդոտ է դարձել հասարակական զարգացման համար. այժմ միայն նա անողոքաբար կվերացվի, ինչպիսի «անմիջական բռնությունն» էլ ունենա իր տրամադրության տակ:

(Ֆ. Էնգելս, «Անտի-Դյուրինգ», Երևան, 1940 թ., էջ 246—249)

ՖՐԻԴՐԻԽ ԷՆԳԵԼՍԸ ՄԱՅՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՅՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

Ընտանիքի պատմության ուսումնասիրությունն սկսվում է 1861 թվականից, երբ լույս տեսավ Բախոֆենի «Մայրական իրավունքը»։ Այդ գրքում հեղինակը հետևյալ թեզիսներն է առաջադրում։ 1) Մարդիկ սկզբում ապրել են անսահմանափակ սեռական հարաբերությունների մեջ, որ նա մի անհաջող բառով, «հետերիզմ» է անվանում։ 2) Այդպիսի հարաբերությունները բացառում են հայրությունը վավերական կերպով հավաստելու ամեն մի հնարավորություն, այդ պատճառով էլ ծագումը կարող էր որոշվել միմիայն կանացի գծով—ըստ մայրական իրավունքի,—և սկզբնապես այսպես էլ եղել է հին աշխարհի բոլոր ժողովուրդների մեջ։ 3) Սրա հետևանքով կանայք, իբրև մայրեր, իբրև երիտասարդ սերնդի միակ հաստատապես հայտնի ծնողներ, մեծ չափով ակնածություն ու պատիվ էին վայելում, որը, Բախոֆենի կարծիքով, հասնում էր կանանց լիակատար իշխանության (գյունեյկոկրատիա)։ 4) Անցումը դեպի մենամուսնությունը, երբ կինը պատկանում էր բացառապես մի մարդու, բովանդակում էր իր մեջ մի շատ հին կրոնական պատվիրանի խախտում (այսինքն՝ իսկապես մյուս տղամարդկանց միևնույն կնոջ վերաբերմամբ ունեցած վաղեմի իրավունքի խախտում). մի խախտում, որը պահանջում էր պատիժ, կամ եթե հանդուրժվում էր, պետք էր քավվեր նրանով, որ կինը մի որոշ ժամանակի ընթացքում անձնատուր էր լինում ուրիշներին։

Այս դրույթների ապացույցները Բախոֆենը գտնում է հին դասական գրականության բազմաթիվ հատվածներում, որ նա չափազանց մեծ աշխատասիրությամբ ի մի է հավաքել։ Նրա կարծիքով՝ զարդացումը «հետերիզմից» դեպի մոնոգամիան[1] և մայրական իրավունքից դեպի հայրական իրավունքը, մասնավորապես հույների մեջ, տեղի է ունենում իբրև հետևանք կրոնական պատկերացումների հետագա զարդացման, որի ժամանակ նոր հայացքների ներկայացուցիչ հանդիսացող նոր աստվածները

---

[1] *Մոնոգամիա (հունարեն monos—միակ և gamos—ամուսնություն)—բառացի՝ միամուսնություն։—Խմբ.։*

ներս են սողոսկում հին հայացքները մարմնավորող՝ աստվածների վաղեմի հին խմբի մեջ, այնպես որ վերջիններս ավելի ու ավելի հետին պլանն(երն) են մղվում առաջիններից։ Այսպիսով, ըստ Բախոֆենի, ոչ թե մարդկանց իրական կենսապայմանների զարգացումն է, որ առաջացրել է մարդու և կնոջ փոխադարձ հասարակական դիրքի պատմական փոփոխությունները, այլ այդ կենսապայմանների կրոնական արտացոլումը նույն մարդկանց գլուխներում։ Սրա համաձայն՝ Բախոֆենը էսքիլոսի «Օրեստեյան» մեկնաբանում է իբրև կործանվող մայրական իրավունքի և դյուցազնական շրջանում առաջ եկող ու հաղթող հայրական իրավունքի միջև տեղի ունեցող կռվի մի դրամատիկական նկարագրություն։ Կլիտեմնեստրան իր սիրական էգիստոսի սիրուն սպանում է տրովական պատերազմից վերադարձած իր ամուսին Ագամեմնոնին։ Բայց նրա և Ագամեմնոնի որդի Օրեստեսը հորսպանության վրեժն առնում է նրանով, որ սպանում է իր մորը։ Դրա համար նրան հալածում են էրիննեները[1], մայրական իրավունքի դեմոնական պաշտպանները, այն մայրական իրավունքի, որի համաձայն մայրասպանությունն ամենածանր, ոչնչով չքավվող ոճրագործությունն է։ Սակայն նրան պաշտպանում են Ապոլոնը, որ իր պատգամով Օրեստեսին հորդորել էր այդ գործը կատարելու, և Աթենասը, որին առկոչում են իբրև դատավորի—երկու աստվածներ, որոնք այստեղ ներկայացնում են նոր, հայրական իրավունքի կարգը։ Աթենասն ունկնդրում է երկու կողմին էլ։ Վեճի ամբողջ խնդիրը հակիրճ կերպով ամփոփվում է Օրեստեսի և էրիննեյների միջև տեղի ունեցող վիճաբանության մեջ։ Օրեստեսը մատնանշում է այն, որ Կլիտեմնեստրան կրկնակի ոճիր է գործել նրանով, որ սպանել է իր ամուսնուն և դրանով նաև Օրեստեսի հորը։ Էլ ինչո՞ւ համար են էրիննեյները հալածում նրան և ոչ թե Կլիտեմնեստրային, որ շատ ավելի հանցավոր է։ Պատասխանն ապշեցուցիչ է.

«Նա արենակից ազգական չէր ամուսնուն, որին սպանել է»։

Ոչ-արենակից ազգական մարդու սպանությունը, եթե նույնիսկ այդ մարդը սպանող կնոջ ամուսինն է, քավելի է, էրիննեյ-

---

[1] Էրիննեյներ (հունական դիցաբանություն)—վրիժառության ոգիներ, որոնք պատկերվում են մազերի փոխարեն օձեր ունեցող կանանց կերպարանքով։—Խմբ։

ներին ամենևին չի վերաբերում. նրանց պաշտոնն է միայն հաշծել սպանության արենակիցների մեջ, իսկ այստեղ, մայրական իրավունքի համաձայն, մայրասպանությունն ամենածանրն է ու ամենաանբավելին: Բայց ահա հանդես է գալիս Ապոլոնն իբրև Օրեստեսի պաշտպան: Աթենասը քվեարկել է տալիս արեոպագոսի անդամներին—Աթենքի երդվյալ դատավորներին: Ձայները բաժանվում են հավասար՝ արդարացնելու և դատապարտելու վերաբերյալ: Այն ժամանակ Աթենասն իբրև նախագահ իր ձայնը տալիս է Օրեստեսի օգտին և նրան արդար է հայտարարում: Հայրական իրավունքը հաղթություն տարավ մայրական իրավունքի դեմ, «սատվածների կրտսեր սերունդը», ինչպես նրանց անվանում են հենց էրիննեյներն իրենք, հաղթում են էրիննեյներին, և սրանք էլ վերջիվերջո համոզվում են նոր պաշտոն ստանձնելու նոր կարգի ծառայության մեջ:

Օրեստեայի այս նոր, բայց միանգամայն ճիշտ մեկնաբանությունը Բախոֆենի ամբողջ դրքի ամենադեղեցիկ և ամենալավ հատվածներից մեկն է, բայց այդ միևնույն ժամանակ ապացուցում է, որ Բախոֆենն առնվազն նույնքան հավատում է էրիննեյներին, Ապոլոնին և Աթենասին, որքան իր ժամանակ էսքիլեսը. նա հավատում է հենց, որ այդ սատվածները հունական պատմության դյուցազնական դարաշրջանում հրաշք կատարեցին—մայրական իրավունքը տապալեցին, այն փոխարինելով հայրական իրավունքով: Պարզ է, որ այդպիսի ըմբռնումը, ըստ որի՝ կրոնը համաշխարհային պատմության վճռական լծակի նշանակություն ունի, վերջիվերջո ամենամաքուր միստիկականության պետք է հանգի: Այդ պատճառով էլ մի ծանր և ամենևին ոչ միշտ շնորհակալ աշխատանք է Բախոֆենի մեծ հատորը մանրամասն ուսումնասիրելը: Բայց այդ ամենը չի նվազեցնում նրա նոր ճանապարհ բաց անող հետազոտողի ծառայությունը. նա էր, որ առաջին անգամ կանոնազուրկ սեռական հարաբերություններ ունեցող մեզ անծանոթ նախնական դրության ֆրազը փոխարինեց այն ապացույցով, թե Հին կլասիկական դրականության մեջ բազմաթիվ հետքեր կան, որոնց համաձայն հույների և ասիական ժողովուրդների մեջ մենամուսնությունից առաջ իսկապես մի այնպիսի դրություն է գոյություն ունեցել, երբ ո՛չ միայն մեկ տղամարդը մի քանի կանանց հետ է սեռական հարաբերության մեջ մտնել, այլև մեկ կինը մի քանի տղամարդկանց հետ, առանց ամենևին

սովորությունը խախտելու. թե՝ այս սովորությունն անհետանալիս՝ իր հետքը թողեց նրանում, որ կնոջ համար անհրաժեշտություն դարձավ իր մենամուսնության իրավունքը գնել՝ որոշ ժամանակ ուրիշ տղամարդկանց անձնատուր լինելու գնով, թե՝ այդ պատճառով ծագումն սկզբնապես միայն կանացի գծով կարող էր հաշվվել, մորից՝ մայրը. թե՝ կանացի գծի այս բացառիկ նշանակությունը դեռ երկար պահպանեց իր գոյությունը մինչև մենամասնության ժամանակաշրջանը, ապահովված կամ համենայն դեպս ճանաչված հայրությամբ, և թե՝ մայրերի այս սկզբնական դիրքն, իրև իրենց երեխաների միակ հաստատուն ծնողների, իրենց և դրանով նաև առհասարակ կանանց համար մի այնպիսի բարձր հասարակական դիրք էր ապահովում, որպիսին նրանք այնուհետև այլևս երբեք չեն ունեցել: Բախոֆենը, ճիշտ է, այսպիսի պարզությամբ չի ձևակերպել այս դրությունը,— այդ բանին արգելք էր հանդիսանում նրա միստիկական աշխարհայացքը,—բայց նա ապացուցեց նրանց ճշտությունը, իսկ այս բանը 1861 թվականին մի լիակատար ռևոլուցիա էր նշանակում:

(Ֆ. Էնգելս, «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», Երևան, Հայպետհրատ, 1948, էջ 15—18):

Ի. Վ. ՍՏԱԼԻՆԸ ՀՈՒՆԱԿԱՆ ԴԻՑԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հին հույներն իրենց առասպելաբանության սիստեմում ունեին մի հռչակավոր հերոս—Անթեյը, որն, ինչպես ասում է առասպելաբանությունը, եղել է ծովերի աստված Պոսեյդոնի և հողի աստվածուհի Գեյայի որդին։ Նա իրեն հատկապես կապված էր զգում իր մոր հետ, որը ծնել էր նրան, կերակրել և դաստիարակել։ Չկար այնպիսի հերոս, որին նա, այդ Անթեյը չհաղթեր։ Նա համարվում էր անպարտելի հերոս։ Ինչո՞ւմն էր նրա ուժը։ Այդ ուժն այն բանի մեջ էր, որ ամեն անգամ, երբ հակառակորդի դեմ մղած պայքարում նա նեղն էր ընկնում, նա շփվում էր գետնին, իր մորը, որը ծնել ու կերակրել էր նրան, և նոր ուժ էր ստանում։ Բայց նա, այնուամենայնիվ, ուներ իր թույլ տեղը—այդ որևէ կերպ հողից կտրվելու վտանգն էր։ Թշնամիները հաշվի էին առնում նրա այդ թուլությունը և դարանակալում էին նրան։ Եվ ահա, գտնվեց մի թշնամի, որն օգտագործեց նրա այդ թուլությունը և հաղթեց նրան։ Դա Հերկուլեսն էր։ Բայց Հերկուլեսն ի՞նչպես հաղթեց նրան։ Նա Անթեյին կտրեց գետնից, բարձրացրեց օդի մեջ, խլեց նրանից հողին շփվելու հնարավորությունը և այդպիսով օդի մեջ խեղդեց նրան։

Ի. Ստալին, «Կուսակցական աշխատանքի թերությունների և տրոցկիստական ու այլ երկերեսանիներին լիկվիդացիայի ենթարկելու միջոցառումների մասին», Երևան, Պետհրատ, 1939 թ., էջ 46—47։

ՀՈՒՆԱԿԱՆ ԷՊՈՍԸ

ՀՈՄԵՐՈՍ

Հունական գրականության ամենահին գործերը Հոմերոսի «Իլիական» և «Ոդիսական» պոեմներն են: Այդ պոեմների հիմքում ընկած են տրոյական պատերազմի անցքերը: Առաջներում թվում էր, թե այդ անցքերը ոչ մի իրական հիմք չունեն, այլ առասպելական ֆանտազիայի կամ բանաստեղծական մտահղացման արդյունք են: Սակայն կատարված պեղումները Հոմերոսի նկարագրած Իլիոնի վայրում, նմանապես և Միկենայի պեղումները ցույց տվեցին, որ տրոյական պատերազմը պատմական իրականություն է եղել. սակայն դարերի ընթացքում պարուրվել է ժողովրդի առասպելական ֆանտազիայով: Պոեմների մեջ անշուշտ առասպելական է պատերազմի պատճառաբանումը, առասպելական է այն, որ իբրև թե հուն-տրոյական պատերազմը ծագել է տրոյական թագավորի տղա Պարիսի կողմից Հելինեին փախցնելու պատճառով: Դեռևս Հերոդոտը մանրամասն քննության առնելով տրոյական պատերազմի պատճառները, դալիս է այն եզրակացության, որ այն ամենը, ինչ վերաբերում է Հելինեին և նրան փախցնելուն, մասամբ առասպելական է, մասամբ էլ բանաստեղծական ֆանտազիայի արդյունք:

Հոմերոսի «Իլիական» պոեմը նկարագրում է տրոյական պատերազմի անցքերը պատերազմի տասներորդ տարուց սկսած մինչև տրոյական թագավորի որդի Հեկտորի թաղումը: Իսկ «Ոդիսական» պոեմը նկարագրում է հունական հերոս Ոդիսևսի վերադարձը, նրա թափառումները և նրա տառապանքները: Ընդ որում «Ոդիսական» պոեմի մեջ պատմվում է և այն մասին, թե ինչպես է կործանվել Տրոյան:

Հոմերոսյան պոեմները արտացոլում են «դեռևս լիակատար ուժի մեջ հին տոհմական կազմակերպությունը, միաժամանակ և նրա քայքայման սկզբնավորումը» (Էնգելս): Իր պոեմների մեջ

Հոմերոսը գերազանցապես նկարագրում է հունական ցեղերի առաջնորդներին։ Իլիականի մեջ հատկապես նկարագրվում է այդ առաջնորդների քաջագործությունները։ «Իլիական» պոեմի մեջ ցայտուն դրսևորված է դեռևս ոչ մանսայական բնույթ կրող բողոք ընդդեմ առաջնորդների հարստացման (Թերսիդեսի բողոքը)։ Հոմերոսի ամբողջ համակրանքը առաջնորդների կողմն է, բողոքը նրանց դեմ նա համարում է լկտիություն։

Ամենից շատ աչքի է ընկնում հերոսների կենդանի նկարագրությունը. հոմերոսյան կերպարները պարզ ու գունեղ են, նրանց մեջ լիաթոք կերպով խոսում է ոչ միայն այն սկզբունքը, որի համար նրանք կռվում են, այլև նրանց մարդկային անհատականությունը։ Ամենից գունեղ նկարագրված է Աքիլլեսը. քաջ, պարզասիրտ, մարտի դաշտում անհաշտ, վճռական։ Հոմերոսի պոեմներն անմիջապես ժողովրդական հիմքեր ունեն, մի հանգամանք, որ ապացույց է այն բանին, որ Հոմերոսի պոեմները գրվել են տրոյական պատերազմի մասին ժողովրդական բազմաթիվ ավանդությունների հիման վրա։ Ժողովրդական ավանդությունները, սակայն, ծառայել են լոկ որպես նյութ, որոնց հիման վրա բանաստեղծը ստեղծել է իր երկերը։ Հին հույները բոլորովին չեն կասկածել, որ «Իլիական» և «Ոդիսական» պոեմները գրել է Հոմերոսը, որ բառացի նշանակում է կույր երգիչ։ Նման կույր երգչի նկարագրությունը մենք գտնում ենք նաև Հոմերոսի «Ոդիսական» պոեմում (Ալկինոսի պալատում Դեմադոկը)։ Հերոդոտը առանց տատանվելու ասում է, որ Հոմերոսը ապրել է իրենից չորս հարյուր տարի առաջ։ Արիստոտելը իր պոետիկայում բոլորովին չի կասկածում Հոմերոսի անձնավորության նկատմամբ։ Սակայն գիտության մեջ գոյություն է ունեցել տեսակետ, ըստ որի Հոմերոսի պոեմները ավելի շուտ կոլեկտիվ ստեղծագործության արդյունք են, քան անհատ հեղինակի։ Սակայն պոեմների քննությունը պարզ ապացուցում է, որ նրանք չեն կարող լինել կոլեկտիվ ստեղծագործության արդյունք, անկախ նրանից, թե այդ պոեմները գրող հեղինակը Հոմերո՞ս է կոչվել, թե այլ անուն է ունեցել։ Մի բան պարզ է, որ ժողովրդական ավանդությունների հիման վրա պոեմներ ստեղծել է որոշակի մի բանաստեղծ։ Ոչ մի հիմք չկա կասկածելու, թե այդ բանաստեղծը եղել է ինքը՝ Հոմերոսը։

ԻԼԻԱԿԱՆ

(ՀԱՏՎԱԾՆԵՐ)

ԴԻՄՈՒՄՆ ՄՈՒՍԱՅԻՆ

Երգիր քե՛նը, ո՜վ դիցուհի, Պելիսածին Աքիլլեսի,
Որ բյուր ցավեր աղետաւոր բերեց այնքա՜ն Աքայեցոց։
Որ շատ կորով դյուցազնների գահավիժեց դժոխքն ի վայր,
Ու դիշերը նրան ձգեց կեր շներին և բյուր թռչնոց։
Կատարվեց կամքն Արամազդի, և գժտվեցին իրարու հետ
Ատրիդեսը՝ քաջանց արքան և Աքիլլեսն աստվածազարմ։

Ա II 2182б

ԹԵՐՍԻԴԵՍԻ ԸՄԲՈՍՏԱՅՈՒՄԸ

Այսպես կարդաց նա հրաման իշխանաբար իրա զորքին.
Ու վեր կացան զորքերն համայն՝ վրաններից ու նավերից.
Խուճապեցին դեպի արքան խառնագոչով, որոտապին,
Որպես ահեղ, հավերժազոչ ծովի ալիք շրընդալից,
Որ ճողփում է ժեռուտ ափին, թնդում անդունդն ամեհաձայն։
Ու վերջապես նստոտեցին, բոլորեցին շուրջ հանդեսի,
Թերսիդեսն էր այնտեղ միայն, որ փրնթփրնթում անդուռ-բերան՝
Շաղ էր տալիս մտքում պահած իր խոսքերը խառնիճաղանջ՝
Արքաներին դեմ հակառակ, ափեղցփեղ իսկ մարդու պես,
Որ ծիծաղն էր շարժում միայն Աքայեցոց հանդիսատես։
Չեր տեսնված Իլիոնում մարդ մի այդքան տգեղադեմ.
Մի աչքը շիլ, մի ոտը կաղ, ման էր գալիս լընգլընգալեն։
Մեջքը սապատ, ուսերը ծուռ, կուրծքը փլած ընկած էր ներս,
Սրագագաթ իր կոնդ գլխին հազիվ ուներ քանի մի մազ։
Թշնամի էր նա ոխերիմ Աքիլլեսին և Ոդիսին,
Եվ շարունակ հանդեսի մեջ պարսավում էր նա երկուսին։

Եվ արդ ահա վեր կացավ նա Ագամեմնոն դյուզացնի դեմ
Ու ճղավեց նրա վրա, թունդ դիպչելով նրան արդեն...
Թեպետ և անդ Աքայեցիք լուռ զայրացան նրա վրա՝
Բայց նա այսպես թունդ դոդոռաց Ագամեմնոն դյուցազնի դեմ,—
«Ո՜վ Ատրիդես, ի՞նչդ է պակաս, ի՞նչ ես դժգոհ դու սրտնջում,
Վրաններդ՝ լիքը պղինձ, վրաններդ՝ ընտիր կանայք,
Եվ ընտիրն էլ այդ կանանցից՝ նախ և առաջ քեզ ենք բերում
Ամեն անգամ Աքայցիքս, երբ մոնում ենք մի նոր քաղաք։
Ոսկո՞ւ մեջն է աչքդ էլի, որ քեզ մի մարդ ձիահմուտ
Բերի նվեր Իլիոնից իբրև փրկանք իր զավակին,
Որ կապելով մոտդ բերեր՝ ե՛ս կամ այլ որ այս քաջերից,
Թե՞ մանկամարդ կին ես տենչում, որ նրա հետ սեր անես դու,
Որ տուփությամբ պղծես նրան, դու դողունի մեղնից հեռու։
Չէ՛ սազական իշխան մարդուդ, զորապլխիդ այդպիսի բան,
Աքայազարմ այս զորքերիս գլխին բերել չարիք այսքան։
Է՜յ, վախկոտներ, ամո՛թ է ձեզ, Աքայուհիք, ո՛չ Աքայցիք,
Ելե՛ք նատեք նավերը մեր և տուն դառնանք այժմ և իսկ։
Թողնենք սրան բազմահարուստ իր ավարը թող վայելի,
Որ հասկանա՝ արդյոք իրեն անպետք ենք մենք, թե՞ պիտանի.
Նո՛ր հենց հիմա դա անարդեց երկնից վեհազն Աքիլլեսին,
Այդ քաջազնիվ մարդու պատիվն հափռկելով իրա համար.
Բայց անհոգ է Աքիլլեսը և չունի մաղձ նա իր սրտում.—
Ապա թե ոչ՝ ո՜վ Ատրիդես, լրբությունդ վերջ կունենար»։
Այսպես ծաղրեց Թերսիդեսը Ագամեմնոն ազգապետին։
Բայց վեր կացավ Թերսիդի դեմ Ոդիսևսը աստվածային,
Գնաց մոտը, նայեց խոժոռ ու սաստելով թնդաց վրան։—
«Է՜յ Թերսիդես դու լեզվագար, ճամարտակո՛ղ, ճղավաճայն,
Քաշի՛ր լեզուդ, չհանդգնե՛ս արքաների հետ մանել վեճ,
Գիտցա՛ծ լինես, Ատրիդեանց հետ այստեղ եկած քաջերի մեջ
Եվ ո՛չ մեկը քեզնից ավել չէ սինլըքոր ու աննշան։
Եվ քեզ կասեմ՝ դրա համար, երբ բացվում է՝ այսպես ատյան,
Քո բանը չէ արքաներին բերան առնել, ճամարտակել.
Սանձի՛ր լեզուդ, չհանդգնես դարձի մասին այստեղ խոսել,
Քանի ատույգ դեռ չգիտենք այս ամենի վախճանն ու վերջ՝
Անփո՞րձ պիտի հելլեններս դառնանք մեր տուն, թե՞ վտանգվածծ։
Ի՞նչ ես այժմեն դու պատրավում Ագամեմնոն ազգավարին,

Թե քաջերը Դանայեցոց շատ պարգևներ նրան բերին,
Որի համար, լի՛րդ զքեզ, բորբոռում ես ատյանի մեջ։
Բայց քեզ կասե՞մ, խոսքս նշա՞ն, այսուհետև եթե էլի՞
Դու գլխիդ ափեղցփեղ դուրս տաս այնպես, ինչպես հիմի՝
Թող գլուխս չմնա՛ էլ կուռ ուսերին Ոդիսևսիս,
Եվ այն օրը ինձ այնուհետ չկոչեն հայր Տելեմաքիս՝
Թե չձևեմ պատառ-պատառ վերարկվեդ մինչև շապիկ.
Ամոթանքիդ ծածկույթն անգամ, և ատյանից լացակնելով՝
Դեպի տորմիդ քեզ չճամբեմ, խաղք-խայտառակ ծաղրել տալով»։
Ասաց ու իր գավազանով նրա կուզին այնպես զարկեց,
Որ Թերսիդես կծիկ դառավ, շիլ աչքերից արցունք թափեց։
Իսկույն և եթ այն ոսկեղեն գավազանի կուռ հարվածից
Նրա մեջքին ուռուցք ելավ կապուտակած, արյունալից։
Ահաբեկված նստեց Թերսիդ և արցունքն էր սրբում միայն,
Ապուշհայաց ու այլանդակ աչեր չորս դին պտրտելով։
Թե սիրտ չկար, բայց Աքա՛յցիք լավ խնդացին նրա վրան,
Այսպես ասին մեկզմեկու ամենքն իրար մտիկ տալով.
«Հիրավի՛ որ, ո՛վ աստվածներ, մեր Ոդիսևս լավ բան բռնեց,
Որ թե՛ խելոք խորհուրդ տվեց, թե՛ պատերազմ նա հարդարեց։
Իսկ հիմա էլ մեզ հույներիս գործ ցույց տվեց մի աննման
Եվ մի ամուր սանձ էլ դրեց լրբախոսին այս ժանտբերան.
Էլ այսուհետ սիրտ չի անի արքաների հետ հավասար
Վեճի մտնել ու նախատել նրանց խոսքովն իր լեզվագար»։

ՀԵԿՏՈՐԻ ՀՐԱԺԵՇՏԸ ԱՆԴՐՈՄԱՔԻՆ

Հասավ Հեկտոր կորդակաճոճն ապարանքը իր գեղեցիկ,
Պարեց իր տունն ու չգտավ Անդրոմաքին լուսածղիկ.
Չի նա առած իր քողազարդ նաժիշտի հետ իր մանկիկին՝
Աղիողորմ կոծ էր անում այն քաղաքի բարձր բուրգին։
Կանգնեց Հեկտոր իր տան դռան ու հարցրեց իր աղախնոց.
«Ջե՛ղ եմ, լսե՛ք, աղախիննե՛ր, ստո՛ւյգ տվեք ինձ պատասխան,
Ո՞ւր է մեկնել ապարանքից Անդրոմաքեն իմ լուսացայտ.
Արդյոք իրա տալերի մոտ, ներների մո՞տ իր քողազարդ,
Եվ կամ տաճա՞րն Աթենասի, ուր և ուրիշ Տրովուհիք
Ողոքում են հիմա ահեղ մեծ դիցուհուն վարսագեղիկ»։

Արդ պատասխան ավեց նրան հազարապետ կինը իր տան.
«Թե զորում ես իրավն ասեմ՝ ահա որ քեզ ասեմ իրավն՝
Արդ իմացիր. ո՛չ քողազարդ ներերի մոտ, ո՛չ տալերի,—
Այլ նա գնաց դեպ բարձրաբերձ աշտարակը Իլիոնի։
Իմանալով որ Տրովյանք Աքայեցոց թափից ուժգին
Խորտակվել են ու նեղն են խիստ՝ պարիսպ վազեց նա խենթի պես.
Եվ դայակն էլ հետը գնաց՝ վերցնելով քո մանկիկին»։
Այսպես խոսեց տան տնտուն, և Հեկտորը թռավ տանից,
Անցավ կրկին նույն բարեշեն պողոտաներն ու նույն ճամփան,
Մեծ ոստանից արագավազ հասավ դռներն Սկեական,
Չի նրանցից պիտի դուրս գար դեպի դաշտը բանակի դեմ։
Աստ ընդառաջ վազեց իր դեմ ամուսինը իր անձկալի,
Էտիովնի դուստրը նազիկ՝ Անդրոմաքեն լուսածղի։
Բնակվում էր էտիովն այս անտառուտում Իպոպլակաք,
Եվ Թեբեում Իպոպլաքեան, անդ Կիլիկեանց նա կապեց թագ-
Ահա սրա օրիորդն էր կինն Հեկտորի պղնձազեն,
Որ անդ նրան ընդառաջեց, նաժիշտին էլ հետն առնելով,
Եվ բերում էր նաժիշտը ահա՝ իր գրքի մեջ գուրգուրելով
Գողտր մանկիկը Հեկտորի՝ աստղի նման ճաճանչավառ.
«Իսկամանտրիկ» կոչում էր միշտ իր մանկիկին Հեկտորն—հայր,
Ուր շները «Ոստան իշխան», քանզի Հեկտո՛րն էր միմիայն,
Որ վտանգված Իլիոնը պաշտպանում էր միանգամայն։
Նայեց Հեկտոր իր մանկիկին ու լուռ ժպտաց նա հեզագին.
Մոտը եկավ Անդրոմաքեն, գովը կանգնեց արտասվագին,
Բռնեց ապա ձեռը նրա, տվեց անունն ու այս ասաց.
«Քա՛ջ սիրելիս, քաջությունդ կկործանի քեզ անպատճառ.
Չե՞ս մեղքանում մատաղ տղիդ, չե՞ս մեղքանում Թշվառիս՝ ինձ,
Որ պիտ անշուշտ վաղաժամիկ այրիանամ ես քեզանից,
Քանի որ պիտ վրադ խուժեն, քեզ սպանեն աքայեցիք։
Չի թե. այսօր անշնչացած դու տարածվես իմ հանդիման՝
Ի՞նչ սփոփանք էլ ինձ համար,— ինձ կմնա ցավ անվախճան։
Ո՛հ, չունի՛մ հայր, ոչ էլ ունիմ՝ ես աղեկեզ փարելի մայր,
Քանզի Հորս դեմին գլորեց Աքիլլեսը աստվածազարմ,
Քանդեց Թեբեն բարձրադուռն Կիլիկեացոց ոստանն ավրեց։
Բայց էտովնին սպանելով՝ զենքը չառավ, նա պատկառեց,
Եվ զենքերովն հրաշակերտ նրան խարույկ բարձրացրեց։

Տվեց նրան նաև դամբան մի վայելուչ, որի բոլոր
Նշդարիները անկեցին ողջ Զևսի դստերքն հավերժական։
Յոթն թվով դաս մի եղբարց իմ պալատում կար գեղապար.
Մի օրվան մեջ նրանք ամենքն իջան մռայլ դժոխքն ի վայր,
Զի սպանեց նրանց Աքիլլն աստվածային և երագոտն
Ձյունաթույրիկ ոչխարների և համընթաց եզների մոտ։
Իսկ իմ մորը, որ կենում էր անտառախիտն իր Իպոպլաք՝
Քշեց այտեղ իր դույքերով, իբրև գերի մի հասարակ,
Բայց և ապա ձգեց ազատ՝ փրկանք անբավ վերցնելով.
Նրան էլ զարկից հորս տան մեջ Արտեմիսը աղեղնասեր։
Հիմա, Հեկտո՛ր, դու ես ինձ հայր, դու ես և իմ մայր խնկեւին,
Դու ես եղբայր, դու ես նաև ծաղկափթիթ իմ ամուսին.
Արդ գթա՛ ինձ, մնա այտեղ բուրգի վրա մեր դղյակի,
Մի՛ թողնի որբ քո մանկիկին և մի՛ այրի՝ քո ամուսնուն.
Դասավորի՛ր քո զենքերը թշնաւ մոտ այն վայրենի,
Ուր բաղաքն է դյուրամատույց և ուր պարիսպն է դյուրաոիկ.
Քաջերն արդեն անդ փորձեցին իրենց գրոհը երեք հետ՝
Այաններըւ, Աւրիդներըւ, Իդոմեն ու քաջ Դիոմեդ.
Թերևս այտե՛ղ մի դուշակող հարձակումն է մատնանշել,
Կամ սեփական իրենց ոգին է գրոհներն այդ ներշնչել»։
Պատասխանեց կորդակաճոճ մեծն Հեկտոր և ասաց.
«Այդ ամենը, ի՛մ սիրելի, մտածում եմ ինքս ինձ,
Բայց ես սաստիկ ամաչում եմ տրովներից վեհապանծ,
Ամաչում եմ երկայնազգեստ տրովուհի կանանցից՝
Եթե ռազմից փախչեմ հիմա մի վատանուն վատի պես,
Նաև սի՛րտս դեմ է դրան, զի այդպես՝ եմ սովրել ես՝
Անցնել—պլուխ Տրովներին ու դեմ դնել թշնամուն,
Պահել բարձր հորս փառքը, նաև փառքը իմ կանգուն,
Լա՛վ գիտեմ ես, իմ հոգու մեջ նախազգում եմ նաև այն,
Որ կգա օր, կկործանվի Իլիոնը սրբազան,
Կկործանվի իր ցեղի հետ Պրիամոսը քաջագետ.
Բայց ո՛չ այնքան խռովում է ինձ այդ վիշտը Տրոյի,
Ո՛չ էլ վիշտը Պրիամոսի, ո՛չ էլ իմ մորն Հեկաբի.
Ո՛չ էլ վիշտը եղբայրներիս, իրենց խմբով քաջխիզախ,
Որ թշնամու սուսերներից պիտի ընկնեն փոշեթաղ,—

Որքան քո վիշտն, Անդրոմաքե՛, երբ որ մի օր չարաղետ
Կողոպտելով ազատությունդ ու քաշ տալով իրա հետ
Քեզ՝ լալագին՝ պիտի տանի պղնձազգեստ Աքայ՛ցին։
Անդ Արգոսում պիտի՛ հինես օտար կնոջ ձեռի տակ,
Ջուր պիտ կրես Մեսսեիսի կամ Հիպերի աղբյուրից՝
Բռնադատված տաժանելի և անողորմ կարիքից.
Գուցե մեկն էլ ասէ այնտեղ քո արցունքը տեսնելով.
«Դա՝ է ահա կինն Հեկտորի, ամենից քաջ մարտիկի
Տրոյացոց հերոսներից ահեղ ռազմում Իլիոնի»։
Այսպես կասե, և պիտ խոցվես մի նոր ցավով աղեկեզ
Եվ ամուսնուդ պիտի հիշես, որ կարող էր փրկել քեզ.
Բայց թող մեռնե՛մ, թող առաջուց մտնե՛մ շիրիմի ծածկի տակ,
Նախ քան լացդ ես կլսեմ, քեզ կտեսնեմ առևանգ»։
Այսպես ասաց շքեղն Հեկտոր իր ամուսնուն դորոված
Եվ իր ձեռքը պարզեց մանկան՝ գիրկն հայրական իր բացած։
Բայց հոր ահեղ կերպարանից մանուկն այնպես զարհուրեց,
Որ ճչալով սանտուխ ծոցում երեսն իր պահեց.
Վախեց մանուկն իր հոր տեսքից, զեն ու զրահից ահռելի
Եվ փնջիցը սաղավարտի, որ ճոճում էր կատարին։
Ժպտաց Հեկտոր, ժպտաց նաև մանկան մայրը մեծարոյ։
Իսկույն հանեց շքեղն Հեկտոր փայլակնացայտ իր կորդակ,
Դրեց գետին, գրկեց որդուն և ձեռքի մեջ ճոճելով՝
Դարձավ այսպես մաղթեց Զևսին, աստվածներին ասելով.
«Ո՜վ Արամազդ, և դուք ով այլ բոլոր անմահ աստվածներ,
Արեք ա՛յնպես՝ տղաս դառնա փառքը Տրոյայի
Եվ ինձ նման իր քաջությամբ թագավորե միշտ նրան.
Ունենա իմ զորությունս, և որ վրան նայելով,—
Երբ ամեհի պատերազմից նա հաղթական դառնա տուն,
Սպանելով ախոյանին, բերե ավարն արյունոտ,
Որ տեսնելով մայրը նրան՝ ուրախանա իր սրտում»։
Ասաց Հեկտոր և իր մանկան կնոջ գիրկը դրեց ետ,
Ժպտաց մայրը արտասվախառն՝ տղան ծոցում բուրավետ.
Հուզվեց Հեկտոր տեսնելով այս, գորովեց իր ամուսնուն
Եվ շոյելով նրան ձեռով, ասաց՝ տալով իր անունն.—
«Մի՛, նազե՛լի, մի՛ տխրությամբ սիրտդ ինձ համար համակի.
Ջկա մարդ որ՝ նախ քան օրհասն՝ ինձ դժոխքը ուղարկի.

Չի կարող մարդ երբեք փախչիլ, երբ օրհասը մոտենա,
Ո՛չ վախկոտը և ո՛չ քաջը՝ երբ ծնվել է մորից նա։
Տո՛ւն դարձիր դու, տո՛ւր աղախնոց զբաղեցնեն իմ մանկան,
Դու էլ նստիր, իլիկ պըտտիր, հանգիստ գործիր քո ոստայն։
Իսկ ռազմական գործը բոլոր՝ թող որ հոգսը լինի այդ՝
Իլիոնում ծնված մարդոց և իմ հոգսը մանավանդ»։
Ասաց, դրեց սաղավարտը, իսկ Անդրոմաք գնաց տուն՝
Ետ նայելով ճամփին տխուր և ջերմ արցունք թափելով,
Եվ Հեկտորի հրաշակերտ տունը հասավ նա արագ,
Իսկ աղախնոց բազմությունը խմբված գտավ հարկի տակ.
Բարձրացրեց սուգ ու կական, լացացրեց ամենին,—
Ողջը Հեկտորն էին սգում՝ մինչ նա կենդան տակավին.
Այնքան նրանք հույս չունեին, որ ետ գառնա այն մարտից,
Ոչ էլ փրկվեր աքայեցոց անվանելի բազուկից։

ՀԵԿՏՈՐԻ ԵՎ ԱՔԻԼԵՍԻ ԿՌԻՎԸ

... Իսկ Աքիլլեան հասավ նրան
Կերպարանքով Արեսի պես՝ սաղարտախրոխտ մաքառողի.
Պելիոնյան ահեղ նիզակն յուր աջ ուսին խաղացնելով.
Նրա վրա պղինձը վառ շող էր տալիս փայլակի պես,
Կամ ինչպես հուր բոցավառված և կամ արև ճաճանչափայլ։
Դողաց Հեկտորն, երբ այդ տեսավ, նա սիրտ չարավ մնալ
այնտեղ,
Այլ յուր հետև թողից դռներն ու սարսափած փախավ հեռուն։
Ու հետևից թռավ Պելյանն՝ հուսալով յուր վարժ ոտքերին։
Ինչպես օդում ճախրողներից արագաստուր ցինը սարում
Թեթևաթռիչ վազ է տալիս դեպի վախկոտ մի աղավնի՝
Շուտ-շուտ փախչող այս ու այն կողմ, ու ճչալով մոտ է գալիս
Եվ հարձակվում հաճախ վերան՝ շուտ բռնելուց խրախուսված։
Աքիլլն այդպես առաջ թռավ նրա հետքից, մա պարսպի
Երկարությամբ վազ էր տալիս և յուր ծնկներն արագ շարժում։
Դիտանոցի և զովաշունչ մոլաթզենու մոտ նորա
Միշտ պարապից դեպի այն կողմ վազում էին արահետով.
Նկան, հասան դեղեցկաբուղխ աղբյուրներին, ուր պղպջալով

Սկամանդրոսի երկու սիրուն առուներն են հոսում հորձուտ.
Բխում է մին ջերմախառն, և նրանից շոգին ելնում,
Շուրջն է պատում, ինչպես ծուխը բոցավառված հրի միջից։
Մյուսն հոսում ամառը պաղ՝ ինչպես կարկուտ գարնանային
Կամ ձմռան ձյուն, կամ թանձրամած և հաստաշերտ սառցի կտոր։
Նրանց մոտիկ կային այնտեղ լայն; ընդարձակ ավազաններ,
Գեղատեսիլ ու վիմաշաղ, ուր որ իրենց տոնազդեստներ
Լվանում էին տրովեան կանայք և դուստրեր չքնաղատեղ,
Խաղաղությունն էր երբ տիրում և աքայեանք չէին եկել։
Վազում էին դեպի այնտեղ՝ փախուստ տվողն ու հալածող։
Առաջից մի քաջ էր վազում և քաջադույն էր հալածում.
Կենդանի կամ ցլի կաշի չէին դրել կեռ նպատակ,
Ինչպիսի մրցանակներ դնում են վազող մարդկանց համար,
Այլ ձիավարժ այն Հեկտորի կյանքի համար էր արշավանք։
Ինչպես փութով դուպարահաղթ, սալամբակ երիվարներ
Նշանի շուրջ վազ են տալիս, և կա դրված մեծ մրցանակ՝
Եռոտանի կամ սիրուն կին՝ կռվում մեռած քաջին պատիվ,
Այնպես ահա Պրիամոսի քաղաքի շուրջ սրաթև ոտքով
Բոլորեցին երեք անգամ, և աստվածներն հանդիսատես։
Սկսեց նոցա աստվածների և մարդկանց հայրն ասել այսպես.
«Ո՜վ, աստվածներ, սիրելի մարդն հալածական պարսպի շուրջն
Իմ աչքերով տեսնում եմ ես, մորմոքում է սիրտս ու հոգիս
Հեկտորի վրա, որ ճենճերեց արջառների շատ ազդրեր ինձ
Բազմահովիտ Իդա լեռան սեդ գագաթին, այլ անդամներ
Բարձր և ամուր քաղաքի մեջ. քաղաքամարտ Աքիլլը արդ
Պրիամոսի ոստանի շուրջ սրընթաց ոտքով նեղում է նրան։
Բայց, օ՜ն, աստվածք, ձեր սրտերում դուք մի վճիռ արդ
խորհեցեք,
Թե արդյոք նա պիտ խուսափի մահվան ձեռքից, թե Պելիսյան
Աքիլլեսին թողնենք, որ այն քաջին ընկճի յուր զորությամբ»։
Նրան Զևսի խաժակ դուստր Աթենասը պատասխանեց.
«Ամպաթո՛ւմ հայր, կայծակնացոլ, այդ ի՞նչ խոսքեր ասացիր դու.
Մահկանացու ծնված մարդուն՝ վաղուց մահվան ճակատագրած,
Կուզես մահվան աղետալից զորությունից այժմ փրկել.
Արա՝ այդպես, մյուս բոլոր աստուածներս չենք համաձայն»։
Ապա նրան ամպրոպային Զևսը այսպես պատասխանեց.

«Սիրա աս, կառափնածին, սիրուն դստրիկ, ոչինչ սրտանց
Չեմ ասում ես և դեպի քեզ քաղցր լինել եմ ցանկանում.
Արա՛ այնպես, ինչպես որ այդ հաճո է քեզ. մի՛ լար այդպես»:
Չևսն այս ասաց և է՛լ հուզեց բորբոքվածին՝ աստվածուհուն.
Ուժգին թռիչքով սա ցած թռավ բարձրապառաժ Օլիմպոսից.
Իսկ Հեկատորին նեղում էր միշտ վանողն Աքիլլ վազելու մեջ.
Ինչպես բարակն է հալածում լեռների մեջ մի եղնորթի,
Քնատեղից արթնացնում, ձոր ու անտառ վազ է տալիս.
Եղջը թեև պաշտպանվելով՝ մացառների տակն է պահվում.
Բայց խուզարկուն վազում է միշտ նրա հետևից՝ մինչև գտնի.
Հեկատորն այսպես չթաքնվեց քաջահարձակ Աքիլլեսից:
Որքան հաճախ նա դիմելով դեպի դռներ Դարդանեսյան՝
Բարձրակատար աշտարակաց շուրջն էր վազում արշավասույր,
Որ թերևս նրան պահեր տրրովացող նետը վերից.
Վանողն այնքան աճապարում, դեպի դաշտն էր քշում նրան.
Բայց նա կրկին ետ դառնալով՝ դեպի քաղաքն էր սլանում.
Ինչպես որ մարդ երազի մեջ փախչողին զուր հալածում է,
Չի կարենում սա փախուստ տալ նրա ձեռքից, ոչ նա բռնել,
Այնպես նրան վազելու մեջ ոչ սա բռնեց, ոչ նա փախավ:
Հեկատորն ի՞նչպես պիտ ազատվեր և օրհասից, և մահվանից,
Թե մոտ չգար վերջին անգամ Ապոլլոնը հրամայող.
Որ նորոգեց նորա կորով ու ծնկները արագաշարժ:
Իսկ դյուցազարմ Աքիլլեսը սաստում զլխով զինվորներին,
Որ դառնաթույն իրենց նետեր էլ չձգեն դեպի Հեկատոր,
Գուցե պատիվ խոցողն առնի, և ինքն հանկարծ երկրորդ լինի:
Իսկ երբ նրանք չորրորդ անգամ հասան ցայտող աղբյուրներին,
Նախախնամող Չևսը վերցրեց ոսկի կշիռ՝ բարձրացրեց,
Մահվան երկու երկարաքուն վիճակ գցեց նժարներում,
Որոնցից մին Պելիսյանի, մյուսն Հեկատորի՝ ձիահմուտ.
Բարձրացրեց և միջից բռնեց, և Հեկատորյան նժարն իջավ
Դեպի դժոխք. այդպես նրան թողեց Գուշակն Ապոլլոնը:
Եվ Աթենաս աստուածուհին՝ խաժակն հասավ Պելիսանին
Ու նրա մոտ եկավ, կանգնեց՝ թևաթռիչ խոսքերն ասաց.
«Արդ հույս ունեմ, վեհդ Աքիլլես, աստվածներին դու սիրելի,
Որ մեր պարծանքը կվաստակենք միրմիդոնյան նավատորմին՝
Սպանելով քաջ Հեկատորին՝ անհագագույն ռազմիկին:

Էլ չի կարող այսուհետև ազատ մնալ նա մեր ձեռքից,
Որքան էլ որ կորովաճիպ Ապոլլոնը տանջանք կրի՝
Թավալելով հոր ոտքերին, ասպարատիաս շանթառաքի։
Դու կաց այստեղ և ոգի առ, իսկ ես գնամ Հեկտորի մոտ
Ուր նրա միտքն այնպես շահեմ՝ մնա քեզ հետ կռիվ մղի»։
Այսպես ասաց աստուածուհին, ու նա լսեց ուրախ սրտով
Եվ այնտեղ պղնձաոտեգ յուր նիզակին կոթնած կանգնեց.
Ու դիցուհին նրան թողեց, գնաց դյուցազն Հեկտորի մոտ՝
Յուր հասակով, բարձրահնչյուն ձայնով նման Դեիֆոբոսին,
Գնաց կանգնեց նրան մոտիկ, թևաթռիչ խոսքերն ասաց.
«Ո՜հ, մեծ եղբա՛յր, ի՞նչպես վազկան Աքիլլը քեզ նեղում է արդ
Պրիամոսի ոստանի շուրջ վարժ ոտքերով հալածելով։
Կանգնե՛նք այստեղ և անհողդողդ դիմադրենք քաջագույնին»։
Առյուծուհուն սաղվարտաճոճ Հեկտորն այսպես պատասխանեց
«Իսկապես դու, Դեիֆոբոս, ինձ սիրելի էիր փոքրուց
Իմ եղբարց մեջ, որոնց ծընան Պրիամոսն ու Հեկաբեն.
Եվ հենց այժմ էլ և՛ առավել պետք է ես քեզ հարգեմ,
պատվեմ.
Քանզի հենց ես աչքիդ ընկա՝ դու հանձն առար իմ պատճառով
Պարիսպն անցնել, իսկ ուրիշներն այնտեղ մնում պարսպից
ներս»։

Նրան Զևսի խաժակ դուստր Աթենասը պատասխանեց.
«Եղբա՛յր, հայրս, արդյո՜ մայրս թախանձագին խնդրեցին ինձ
Եվ միասին փաթաթվեցին իմ ծնկներին, ընկերներս էլ
Պաղատեցին այնտեղ մնամ՝ բոլորն այնքան լիքն են ահով։
Բայց քեզ համար իմ կրծքի մեջ հալ ու մաշ էր սիրտս լինում.
Այժմ ուղիղ դեպի կռի՛վ, այսուհետև չխնայենք
Մեր նիզակներ. տեսնենք Աքիլլն սպանելով՝
Արնոտ զենքեր դեպ գոգավոր նավերն ավար պիտի տանի,
Թե դուցե նա քո զեղարդով, դիատապատ կընկնի դեմդին»։
Այս էր խոստում նենգ դիցուհին, նրան տանում դեպի առաջ։
Երկու քաջերն երբ գնալով եկան, հասան միմյանց մոտիկ,
Այս խոսքերը Աքիլլեսին կորդակախրխոտ Հեկտորն ուղղեց.
«Էլ չեմ փախչի ես քեզանից, Պելիսի որդի, ինչպես առաջ,
Շուրջ ոստանին Պրիամոսի երեք անգամ փախուստ տվի,
Քո հարձակման չդիմացա, բայց արդ հոգիս հորդորեց ինձ

Ելնել անվախ քո դեմ կանգնել՝ քեզ սպանեմ, կամ ես ընկնեմ։
Այլ այժմ եկ, աստվածներին աննենք վկա, նոքա լինեն
Ազնիվ վկայք մեր երդումին և պահապան մեր դաշինքին.
Չլնի մարմինդ անարդեմ ես, թե Շանթառաքն ինձ շնորհե
Այս կռվի մեջ հաղթությունը, և չլինի հոգիդ առնեմ,
Այլ քեզանից չքնաղ զենքերդ ավարելով, Աքիլլե՛ս,.
Տամ մարմինդ աքայեցոց. և դու պահիր մեր այս դաշինք»։
Սրավազ Աքիլլն ակնարկելով ծուռ աչերով՝ ասաց նրան.
«Ինձ հետ, Հեկտո՛ր, անհաշտ ոտոխ, պայմաններից մի՛ հարի
դու..

Չկա երբեք առյուծների և մարդկանց մեջ աննենդ դաշինք,
Եվ չեն կարող սրտանց անկեղծ ընկերանալ գայլն ու գառ.
Հավետ անհաշտ՝ պետք է նոքա չարիք նյութեն մեկ մեկու դեմ.
Այդպես մեր մեջ և ո՛չ մի սեր, ոչ էլ դաշինք կարե լինել
Որ մենք հաշտվենք, մինչև մեկիս դին չի ընկնի թավալգլոր
Արյամբ հագուրդ տա Արեսին՝ մոլի, անսանձ ռազմիկին,
Ամեն տեսակ ռազմամիջոց նկատի առ. այժմ պիտի
Դու ավելի կորովատիպ և աննկուն կռվող լինես։
Ո՛չ մի փախուստ էլ քեզ չկա. և Արենաս Պալլասը քեզ
Շուտ իմ տեղով կնվաճե, և դու մեկեն կ՚հասուցես
Բոլոր տանջանքն ընկերներիս, որ կատաղած սպանեցիր»։
Ասաց, ճոճից երկայնատեսվեր իրեն նիզակն ու շպրտեց,
Որը իսկույն տեսավ Հեկտորն ու խուսափեց նա՝ պանծալին,
Քանզի նատեց ծնկանց վրա, պղնձի տեղն անցավ վերից,
Մեխվեց գետին, որ խլելով Զևսի դուստր աստվածուհին,
Ջիահմուտ Հեկտորից դարձ՝ Աքիլլեսին մատուցեց։
Իսկ Հեկտորն անսասանելի Պելիսյանին այսպես ասաց։
«Վրիպեցիր, ով Աքիլլես աստվածանման, բոլորովին
Դու չիմացար բախտս Զևսից, թեև այդպես ինձ ասացիր
Բայց դու խարդախ և խոսքերով շաղակրատ դարձար իմ դեմ,
Որ իմ կորով ու քաջությունն ես մոռանամ քո սարսափից։
Ես չե՛մ փախչի, և քո նիզակ թիկունքիս մեջ չես մխի դու.
Այլ ուղղակի առաջ շարժիր, կուրծքը մխի՛ր հարձակվողիս,
Եթե Աստուած ավել է քեզ։ Արդ խուսափի՛ր պղնձի տեղես,
Որ երանի՜ ամբողջովին ընդունեիր քո մարմնի մեջ,
Այն ժամանակ քո սատակմամբ թեթևագույն գուցե լիներ

Մեր Տրովյանց պատերազմը, նրանց շատ մեծ չարիք ես դու։
Ասաց, ձգեց երկայնասավեր այն նիզակը ճոճելով
Եվ անվրեպ պորտին զարկեց Պելիսյանի վահանի,
Բայց վահանից սեղն ետ դարձավ ու զայրույթով լցվեց Հեկտոր,
Որ սրաթև իրեն նիզակն ի զուր թռավ յուր բազուկից.
Կանգնեց, նայեց, խռովահույզ, ուրիշ զեղարդ էլ չուներ նա,
Կանչում էր նա սպիտակասպար Դեյիֆոբոսին ուժգին ձայնով
Եվ նրանից նոր սուր նիզակ էր խնդրում, բայց նա չկար։
Հեկտորն իր մեջ ամենայն ինչ լավ հասկացավ և այս խոսեց.
«Վա՜յ ինձ, ճիշտ որ ամենազոր աստվածներն ինձ մահվան
կանչին.
Ես կարծեցի ինձ հետ է նա՝ աստուածազարմ Դեյիֆոբոս.
Բայց պարսպի ներսումն է նա. Աթենասն ինձ մոլորեցրեց.
Եվ այժմ արդեն զարհուրելի մահն է ինձ մոտ, էլ չի դառնա,
Պրծում չկա, անշուշտ այսպես վճռեցին աստվածները
Շանթառաք Զևս և նետողը՝ նրա որդին, որ առաջուց
Ինձ պահեցին սիրահոժար, իսկ այդ օրհասն հասնում է ինձ։
Բայց ես իզուր հող չեմ մանի՝ բոլորովին անփառունակ։
Այլ մեծապանծ բան կգործեմ՝ ետնորդներին արժանալուր։
Այս ասաց նա և շպրտեց սուրը հատու վաղակավոր.
Որ ձախ կողքից էր կախ տվել՝ մեծ ու ամուր և հոծանյութ,
Կծկվելով թռավ տեղից, ինչպես արծիվ երկնաթռիչ,
Որ սևամած ամպոց միջից դաշտ է սուրում, ասպատակում
Հափշտակի մատաղ գառնուկ կամ նապաստակ՝ վախկոտ,
անսիրտ...
Նույնպես Հեկտորն առաջ թռավ, մահու սուսեր շողացնելով.
Սլացավ նաև քաջն Աքիլլես՝ սիրտն ամեհի լի բարկությամբ.
Եվ յուր լանջի առաջ պարզեց շքեղաշուք յուր վահանը՝
Չքնաղագեղ արվեստակերտ, չորեքխորան սաղավարտը
Փայլակնացայտ տատանվում էր, սիրունափայլ ծվում էին
Ոսկեծամեր, որ Հեփեստոսն այնտեղ շինեց՝ խորաններում.
Ինչպես մթին դիշերվա մեջ աստղերի շարքն աստղ է փայլում
Գիշերավարն՝ երկնքի մեջ չքնաղագեղ ու վառ աստղիկ,
Շողքեր էին ցայտում այնպես, սուր նիզակից, որ Աքիլլեսն
Աստուածազարմ Հեկտորի դեմ ոճիր նյութած ձեռն էր բռնել
Սիրուն իրանն արած նշան՝ զենքի համար հեշտաթափանց։

Բայց նրա մարմինն ամբողջովին զրահ էր պատել պղնձաձույլ
Եվ դեղեցիկ, որ Պատրոկլից էր կողոպտել՝ սպանելով այն
կտրիճին՝
Միայն այնտեղ, ուր անրակներն հոդվում ուսից պարանոցին,
Կոկորդն էր բաց, որի մեջն է հոգու կորուստն անդառնալի
Նետեց այնտեղ, ու նիզակով Աքիլլեսը խոցեց նրան,
Եվ մահաոիթ թույնը մտավ ճիշտ սպիտակ նրա վզի մեջ։
Բայց պղնձե նիզակն այնքան չկարտեց շնչափողը,
Որ նա խոսել պատասխան տալ ամենևին չկարաներ։
Գետին ընկավ նա փոշու մեջ, պանծաց Աքիլլն աստուածազարմ.
«Սպանեցիր Պատրոկլեսին ու կարծեցիր ո՛ղջ կմնաս.
Ինձանից էլ չվախեցար. երբ հեռացա պատերազմից.
Հիմա՛ր ոսոխ, նրա համար մեծ վրեժառու՝ քեզանից քաջ
Այն դոզավոր նավերի մեջ նրանից հետ ես մնացի,
Որ ջարդեցի քո ծնկները։ Եվ այժմ քեզ շուն ու թռչուն
Բզիկ-բզիկ կպատառեն, նրան թաղեն աքայեցիք։
Վերջին շնչին հասած Հեկտոր, սաղվարտաճոճն այսպես ասաց.
«Պաղատում եմ՝ ոտներդ ընկած՝ ծնողներիդ, կեանքիդ սիրուն
Ինձ մի՛ ձգիր միրմիդոնեան շների դեմ՝ պատառելու,
Առատ պղինձ, թանկ ոսկիներ որքան կուզես, պահանջի՛ր դու,
Քեզ կուղարկեն իբրև փրկանք իմ հայրիկը, արդոյ մայրս,
Միայն թե իմ մարմինը դու դարձրու նրանց, որ տրովացիք
Եվ տրովուհիք վերջին հարգանք մատուցանեն՝ հրով այրեն»։
Խեթ նայելով այսպես ասաց արագավազ Աքիլլը նրան.
«Ջո՛ւր ես գրկում ոտքերս, շո՛ւն, ծնողներիս անվամբ խնդրում.
Թե զայրույթիս ականջ դնեմ, պատառ-պատառ կանեմ ես քեզ
Եվ կլափեմ մարմինդ հում՝ ի տրրիտուր արարքներիդ։
Մարդ արարած քո վերայից լափող շներին չի հալածէ.
Այլ նույնիսկ տասնապատիկ, քսանապատիկ նույնքան պարգև
Եթե բերեն, այստեղ կշռեն և խոստանան ուրիշ շատեր,
Եթե նույնիսկ հրամայի ոսկու հետ քեզ կշռել
Դարդանյանն Պրիամոս, նույնիսկ այնժամ մայր Հեկուբան
Քեզ քո մահվան մահճի վրա էլ չի ողբա, ծնունդն անիծի։
Այլ քեզ իսպառ կրզկտեն պատառ-պատառ շուն ու թռչուն»։
Շունչը տալով՝ կորդակաճոճ Հեկտորը նրան կրկին ասաց.
«Գիտեի քեզ, նախազգացի, որ երբեք իմ աղերսանքով

Չես քաղցրանա, զի կրծքիդ տակ սիրտդ անշուշտ է երկաթի,
Բայց սպասի՛ր, աստվածներին դուցե դարձնեմ վրեժխնդիր.
Այն օրը, երբ Պարիսը քեզ և դուշակն Ապոլլոն
Կոչնչացնեն քաջահաղթիդ Սքեական դռների մոտ»:
Մինչ այս խոսքերն ասում էր նա՝ մահը եկավ, նրան պատեց,
Իսկ նրա հոգին անդամների միջից թռավ խորքը դժոխքի,
Ողբալով յուր բախտը դաժան, թողնելով ուժ ու քաջություն:
Նրան Պելեան Աքիլլեսը և անշնչին այսպես ասաց.
«Մեռի՛ր դու, իսկ իմ մահվան, երբ շանթառաքն ուղարկե ինձ
Եվ մյուս անմահ աստուածները, այն ժամանակ առաջ կերթամ»:
Այսպես ասաց և դիակից քաշեց պղնձի՝ տեգը հանեց,
Ու նա մի կողմ շպրտեց այդ, արնոտ զենքերն ուսից վերցրեց:
Դեպի այդտեղ գալիս էին աքայեցոց այլ զավակունք,
Սքանչացած նայում էին գեղեցկության և հասակին
Այն Հեկտորի, որին ոչ ոք մոտ չէր կանդնում՝ վհատելով:
Եվ մեկ մեկու ակնարկելով՝ նորա միմյանց ասում էին.
«Ա՜յ քեզ զարմանք, այժմ Հեկտորն ի՜նչ կակուղ է շոշափելիս,
Քան երբոր նա նավերի մեջ կրակ գցեց բոցավառված»:
Այս էր ասում ամեն մեկը և մոտ գալիս նրան խոցի:
Իսկ քաջոտն Աքիլլեսը նրա վերից զենքերն առավ
Ու կանգնելով աքայանց մեջ՝ թևաթռիչ խոսքերն ասաց.
«Ով սիրելիք՝ քաջք աքայեանք, դուք Արեսի սեգ ծառաներ,
Քանզի աստվածք ի վերջո ինձ չնորհեցին սրան հաղթել,
Որ շատ չարիք գործեց մեր դեմ, քան թե բոլոր ուրիշները,
Դեհ եկեք շուտ դեպի քաղաքն անցնենք զինված, հանդիսավոր,
Որպեսզի մենք տեղեկանանք՝ ի՛նչ միտք ունեն տրովագացիք,
Թե քաղաքի դղյակն արդյոք պետք է զիջեն նրա մահով.
Թե Հեկտորի մահից հետո էլ դեռ դիմանալ կհանդգնեն:
Ինչու արդյոք իմ սիրտը ինձ այսպիսի միտք թելադրեց.
Անսուտ, անթաղ մնում է այնտեղ նավերի մոտ մեռած ընկեր
Պատրոկլեսը, որին երբեք չեմ մոռանա, քանի շրջեմ
Ողջերի մեջ և քանի դեռ ծնկներիս մեջ ուժ կլինի:
Թե իսկ մեռյալները դժոխքի մեջ կորցնեն իրենց հիշողություն,
Այնտեղ էլ ես ևս պետք է հիշեմ մտերմագույն իմ ընկերին,
Դե՛հ, զինվորներ աքայեցոց, նվագենք պեյանն հաղթական
Ու ետ դառնանք՝ սրան տանելով դեպ խորափոր նավատորմիղ:

Մեծ է պատիվ մեր հաղթության. սատակեցավ դյուցազն Հեկտոր,
Որին տրովյանք ոստանի մեջ պաշտում էին Աստծու պես։
Այսպես ասաց, Հեկտորի վրա շատ անպատիվ բան կատարեց.
Նրա երկու ոտքը ճեղքեց ջղերի տակից՝ կրունկներից
Մինչև կոճերը, և նրանց մեջ կաշե խրացք անցկացրեց,
Կապեց նրան անվակառքից, իսկ գլուխը թողեց քարշվի,
Եկավ, կանգնեց կառքին մոտիկ և պերճափայլ զենքերն առավ
Ու մտրակեց նժույգներին, և սլացավ արագավազ.
Եվ քարշվողի թանձր փոշին ամպ էր կազմում, ու սև գեսերն
Այստեղ-այնտեղ թափվում էին, և փոշու մեջ գլուխը քաշվում։
Որ գեղեցիկ էր երբեմն, բայց Զևսն այսօր մատնեց նրան
Ոսոխներին՝ անարգելու յուր հայրենի աշխարհի մեջ։
Այսպես նրա գլուխն ամբողջ փոշու մեջ էր։ Այդ ժամանակ
Մայրը իրեն վարսը փետեց և դեն ձգեց զարդարուն քողն
Ու նայելով յուր որդյակին՝ գուժեց ուժգին, մեծաձայնյան.
Ողորմագին լաց էր լինում սիրելի հայրն, ու ժողովուրդն
Ամբողջ ողբում, հառաչանքի ձայն էր հնչվում ողջ քաղաքում։
Նման էր շատ այդ տեսարան, կարծես Իլիոնն բարձրայոն
Պետք է հիմքից հաղթահատակ հրդեհակեզ ոչնչանար։
Ամբոխն հազիվ էր կարենում այդ տխրալից ծերին բռնել,
Որ դարդանեան զարպասներից դուրս ելնելու ճիգ էր թափում։
Աղաչում էր՝ թավալելով քակորների, աղբերի մեջ,
Ամեն մեկի անունն ասում՝ այս խոսքերով աղաչելով.
«Հեռո՛ւ ինձնից, թողեք մենակ, որքան էլ որ դուք վշտանաք,
Այս քաղաքից թողեք ելնեմ՝ դնամ նավերն աքայեցոց.
Կպատասեմ ես այն մարդուն՝ եղեռնավոր և ոճրագործ,
Գուցե քաշվի իմ հասակից և ողորմի ալիքներիս,
Քանզի նրա հայր Պելեոն էլ անտարակույս է այսպիսի,
Որ նրան ծնավ և սնուցեց՝ պատիժ դառնա տրովադացոց,
Եվ մանավանդ ավելի՛ ինձ, քան բոլորին՝ ցավ ու մորմոք։
Քանզի քանի մատաղահաս զավակներիս զրկեց կյանքից,
Եվ բոլորին այն աստիճան ես չեմ ողբում կսկծելով,
Ինչպես մեկին, որի ժանտ սուգն ինձ պիտ դժոխք իջեցնի.
Իմ Հեկտորի՜ն։ Երանի նա գոնե մեռներ իմ գրկի մեջ.
Քանզի այնժամ կհագենայինք մեր ողբերով, արտասուքով,
Ե՛վ ես, և՛ նա, որ ծնավ նրան՝ թշվառական մայրը նրա»։

Այս էր ասում լալահառաչ, հեծում էին քաղաքացիք։
Իսկ կանանց մեջ նախ Հեկաբեն սկիզբ դրեց հեկեկանքին.
«Որդեակ, ինչո՞ւ էլ ապրեմ ես այսուհետև տառապալից,
Երբ դու մեռար, իմ սիրելիս, որ ինձ համար դիշեր-ցերեկ
Պարծանք էիր Իլիոնի մեջ և քաղաքում ողջին թիկունք՝
Տրովադացոց և տրովուհիաց՝ աստծու տեղ պաշտողներիդ,
Քանզի նոցա ճշմարիտ որ պարծանք էիր դու քո կյանքում.
Իսկ այժմ արդեն ահավասիկ օրհասն ու մահ տիրել են քեզ»։
Այսպես ասաց նա ողբալով։ Հեկտորի կինն ամենևին
Բան չէր լսել, մի լրաբեր չեկավ նրա մոտ ճիշտ լուր տալու,
Թե ամուսինն այնտեղ՝ դաշտում դռներից դուրս է մնացել,
Այլ պալատի վերնատան մեջ յուր պատմուճանն էր նա գործում
Երկու տեսակ, աչքը խաղող և դունագեղ նկարազարդ։
Ապարանքում պատվիրել էր յուր վարսագեղ նաժիշտներին
Շուտով մի մեծ եռոտանի դնեն վառուն կրակի վրա
Ջուր տաքանա՝ կռվից հետո քաջ Հեկտորին՝ լողանալու։
Ով միամիտ, չէր իմանում, թե շատ հեռու լողարանից
Աքիլլեսի ձեռքով նրան ընկճեց արդեն դուստրը Զևսի.
Հանկարծ լսեց աշտարակից դոռում-դոչյուն և ողբաձայն.
Անդամները ողջ դողացին, կրկոցն ընկավ նրա ձեռքից,
Եվ անհանգիստ նա ձայն տվեց գեղադանդուր նաժիշտներին.
«Դե՜հ, երկուսով եկե՛ք ինձ հետ, գնամ տեսնեմ ի՞նչ պատահեց.
Իմ պատվական սկեսուրի ձայնն եմ լսում. և կրծքիս մեջ
Սիրտս դալիս է բերանս, ու ծնկներս թուլանում են։
Պրիամոսի որդոց անշուշտ արդ մեծ փորձանք է սպասում։
Հեռո՛ւ ինձնից այդպիսի լուր. բայց սոսկալի մխիթ եմ անում
Ջ՚լինի խիզախ Հեկտորին այդ դյուցազն Աքիլլ հետացնելով
Պարիսպներից մեն-միայնակ՝ հալածում է դաշտի վրա.
Գուցե արդեն նվաճել է այն անողորմ քաջությունով,
Որ միշտ նրան կյանք է տալիս։ Նա չէ մնում բազմության մեջ,
Այլ համարձակ առաջ սուրում և ոչ ոքից հետ չի մնում»։
Այսպես ասաց ու դուրս թռավ տանից՝ նման Մենադային.
Դողում էր սիրտն ու հետևից գնում էին դայդ նաժիշտներ։
Իսկ երբ հասավ աշտարակին և միմյանց մոտ խմբված
մարդկանց,
Նա կանգ առավ պարսպի մոտ, աչքը պտտեց, տեսավ նրան.

Քաղաքի դեմ քաշվում էր նա, և նժույգներն արագընթաց
Նրան անխիղճ ձգում էին դեպ աքայեան սրաթև նավեր։
Խավարամած մութը խլուզն պատեց նրա պայծառ աչքն,
Գլորվեցավ դեպի հետև, շունչը կարծես արդեն փչեց.
Պերճապսակ շրեղ զարդեր ընկան հետու նրա գլխից՝
Ապարոշն ու ծամակալ և հյուսածո սիրուն երիզն
Ու քողն, որ ոսկեդինիկ Աֆրոդիտեն էր շնորհել
Այն օրը, երբ սաղվարտաճոճ Հեկտորը նրան էսիոնի
Տանից բերեց, մեծ գլխապին տալով նրա ծնողներին։
Նրա չորս կողմ խառնվել էին նրա տալեր, տադեր կանայք,
Բռնում էին շնչատպատին, որը մարում էր մահամերձ։
Երբ նա կրկին սկսեց շնչել, խելքն հավաքեց ուշքի եկավ,
Արտասվախեղդ կոծ անելով կանչեց արովյանց կանանց միջից.
«Հեկտո՛ր, վա՜յ ինձ տարաբախտիս, ուրեմն մի բախտով
ծնվանք
Թե դու, թե ես, դու Տրովայում, Պրիամոսի ապարանքում
Ես Թերեում, անտառախիտ Պլակայ սարի ստորոտում,
Գետիոնի հարկի տակին, որ սնուցեց ինձ փոքրկուց՝
Այն եղկելին՝ ողորմելուս. երնեկ բնավ ինձ չէր սնած։
Իսկ արդ ուղիղ Աիդի մոտ՝ մթին խորշեր երկրի խորքում
Գնում ես դու, և ինձ այրի, ծանրաթախիծ սգով թուլցած
Թողնում ես քո ապարանքում, և մանուկիս մատաղահաս,
Որին ծնանք մենք երկուսով՝ թշվառներս, նրա համար
Բերկրանք, Հեկտո՛ր, էլ չես լինի, քանզի մեռար. ոչ էլ նա քեզ.
Քանզի թեկուզ նա աղատվի աղետաբեր՝ աքյանց կռվից
Ցավ, տառապանք ապագայում միշտ նրա հետ պիտի լինեն.
Քանզի օտարք պետք է խլեն արտերն անբախտ որբի ձեռքից։
Կորցնում է նա յուր մանկության ընկերներին որբ ժամանակ,
Նա շարունակ դլուխը քաշ, նրա աչերն արտասվալից։
Խիստ չքավոր՝ դիմում է նա յուր հայրիկի ընկերներին,
Քաշում մեկի վերարկուից, մյուսի զգեստից կախ է ընկնում։
Մեկը նրան ողորմում է, քիչ խմելու ջուր է մեկնում,
Որ շրթերն է հազիվ թրջում, քիմքը բնավ թաց չի անում,
Հաճախ նրան խրախճանից երջանիկ ոմն հանում է դուրս,
Բռունցքներով գանակոծում և հալածում հայհոյելով.
«Կորիր գնա, քո հայրը մեր կերուխումից հետու է շատ»։
Եվ լալագին հետ է դառնում, այրի մոր մոտ գնում մանուկն—

— Աստիանաքս, որ երբեմն ծնկանց վրա յուր հոր գրկում
Ուղեղով էր կերակրվում և պարարակ. գառան մսով։
Իսկ երբ՝ հոգնած յուր խաղերից՝ նինջ առնելու էր գնում նա,
Մահճում անուշ քուն էր մտնում՝ յուր դայեակի ծոցը մտած՝
Կակուղ, փքված անկողնու մեջ՝ միափորությունից սիրտն զմայլած։
Իսկ այժմ շատ պիտի տանջվի՝ զրկված իրեն քաղցր հորից—
—Աստիանաքսն—ինչպես սրան տրովադացիք են անվանում.
Չի միայն դու էիր պահում նոցա բարձր դուռն ու պարիսպ։
Իսկ արդ հեռո՜ւ ծնողներից, մահիկաձև նավերի մոտ
Ջեռուն որդունք կուտեն մերկիդ, երբ շները քեղնով կհագենան,
Մինչ պալատում որքան զգեստ կա մբերված քաջիդ համար
Նուրբ, վայելուչ գործած, հյուսված տրովյանց կանանց հարսիկ
ձեռքով։
Բայց այդ ամենն ես բոցավառ կրակի մեջ պետք է նետեմ,
Քանզի բոլորն էլ քեզ պետք չեն և էլ երբեք դու չես հագնի.
Տրովադացոց աչքի առաջ ի փառս քո պիտի այրեմ»։
Այսպես ասաց նա ողբալով, շուրջը կանայք կոծում էին։

ԾԵՐՈՒՆԻ ՊՐԻԱՄՈՍԸ ԱՔԻԼԼԵՍԻ ՄՈՏ

... Եվ Պրիամոսն իջավ կառքից,
Թողեց այնտեղ Իտեոսին, որ պահպանի նժույգներին.
Ու մտավ ներս օթևանը, որտեղ զատված ընկերներից՝
Գտավ նստած Աքիլլեսին, Արամազդի սիրելիին.
Երկու հոգի մոտը կային պատրաստ նրա ծառայության՝
Մինը քաջն Ավտոմեդն էր, մյուսն՝ Ալկիմն հերոսական։
Եվ ընթրիքն էլ վերջանում էր, դեռ սեղանը մնում էր բաց,
Որ Պրիամոսն այնտեղ մտավ ներս՝ աննկատ աչքից նրանց,
Փարվեց ծնկանն Աքիլլեսի, բռնեց աջը արյունալի,—
Աչն ահավոր՝ զահիճն ահեղ իրա բազում որդիների։
Ինչպես մի մարդ իր երկրի մեջ մի օր դառնա արենապարտ
Եվ տադնապով ու ահաբեկ փախչի երթա օտար աշխարհ,
Հանկարծ մտնի ճոխ մարդու մոտ, զարմանք բերի տեսնողներին,
Այնպես ապշեց Աքիլլեսը, երբ տեսավ վեհ Պրիամոսին։
Մյուսներն էլ շատ ապշեցին ու նայեցին մեկմեկին.
Իսկ Պրիամը Աքիլլեսին այսպես խոսեց պաղատագին.—
«Ո՜վ Աքիլլեսդ աստվածատիպ, հիշի՛ր հորդ իմ հասակի,

Եվ ինձ նման զառամության դաժան շեմքին կանգնած հիմա.
Գուցե նա է՛լ շրջապատված ոսոխներից իր դրացի՝
Չունի անձին մի զորավիգ, որ եւ վանի ազետ ու մահ.
Բայց լսելով, որ դու ողջ ես՝ պիտի խնդա ծերի հոգին.
Եվ պիտ հուսա տեսնել որդուն, երբ Տրովից դառնա կրկին։
Բայց ավա՜ղ ինձ, որ Իլիոնում քաջ զավակաց էի ես հայր.
Հիսուն էին նրանք թվով, երբ աքայցիք եկան այս վայր,
Տասն և իննը մեկ մորից էր, մյուսները այլ կանանցից,
Նրանց շատի ծունկը ծալեց Արեսը այն բռնավայրագ.
Միայն մեկը մնում էր ինձ, պաշտպանը մեր ու քաղաքին,
Այն մեկին էլ դու զարկեցիր, հայրենիքի այն մարտիկին.
Ահա այդ իմ Հեկտոր քաջիս համար եմ ես եկել հիմա,
Նրա փրկանք անթաւ ընծան բերել եմ քեզ արդեն ահա.
Մտի՛կ արա աստվածներին, հիշի՛ր հորդ և ինձ գթա՛.
Նրանից շատ թշվառ եմ ես, և կրեցի այնպես վշտեր,
Որ ոչ մի մարդ՝ մահկանացու այս աշխարհում չէր տեսել դեռ.
Տես ձեռն անգամ համբուրեցի, որ սպանեց իմ զավակին»։
Ասաց և հոր հիշատակով լացացրեց Աքիլլեսին։
Բռնեց Աքիլլ նրա ձեռը և քաղցրությամբ հեռացրեց։
Եվ երկուսը լալիս էին.—ծերն հիշելով իր Հեկտորին՝
Լաց էր լինում թավալելով ոտների մոտ Աքիլլեսի,
Իսկ Աքիլլես հորն էր ողբում, ողբում մահը Պատրոկլեսի։
Եվ վրանի հարկը թնդաց նրանց ողբից կականավիր.
Եվ երբ որ շատ լացեց Աքիլլ ու հանդարտվեց լիք սիրտը իր՝
Յատկեց տեղից և իր ձեռքով բարձրացրեց հեգ ծերուկին,
Գթաց նրա ճերմակ գլխին և ալեւոր նրա մորքին,
Եվ այս խոսքերն ասաց նրան՝ արդ՝հատալից իրա ձայնով.—
«Հե՜գ ծերունի, ճշմարի՛տ որ տառապեցիր բյուր վշտերով
Եվ ի՞նչպես դու սիրտ արիր գալ դեպի նավերն աքայեցոց,
Այն մարդու մոտ, որ սպանեց քո բազմաթիվ կորով որդոց.
Երկաթի սիրտ ունիս անշուշտ, բայց ե՛լ նստիր այս աթոռին,
Թեև ցաված սիրտ ունենք մենք, սակայն հանենք ցավը սրտից,
Չի ի՞նչ օգուտ դառն ու ահեղ կանանցածին այս ողբերից։
Թշվառական մարդոց ճակտին այս են գրել անմահ դիք մեր,
Որ միշտ մարդիկ ցավով ապրեն, իսկ անցավ են միշտ
աստվածներ,
Քանզի Զևսի շեմքի վրա կարասներ կան երկու հիմա,

Երկու կարաս այն տուրքերի, որի միջից բաշխում է նա.
Մեկի միջին բարիքներ են և չարիքներ մյուսի մեջ։
Երբ տալիս է Զևսն այնտեղից մեկին խառն չարն ու բարին,
Մերթ բարուն է մարդ հանդիպում, մերթ էլ չարին այս աշխարհի,
Իսկ ում չարուց է տալիս նա՝ ցավերի է սա միշտ բաժին,
Շրջում է հար աստվածներից ու մարդկանցից արհամարհված։
Այսպես Պելին իր ծննդից բյուր պարգևով լիացրին,
Թագավորից Միրմիդացոց փառք ու շուքով նա ճոխացած։
Թեպետ ինքն էր մահկանացու՝ առավ իրեն կին դիցուհի,
Սակայն Զևսը պարգևատուն հանդիպեցրից նրան չարի.
Չի չունեցավ նա զավակներ՝ ժառանգ իրա իշխանության,
Այլ մի զավակ ծնվեց նրան, նա էլ եղավ բաժին մահվան.
Եվ ես ահա անկարող եմ ծերությունը իր խնամել,
Քանզի ահա Իլիոնում հայրենիքիցս հեռու այսաեղ՝
Ե՛վ քեզ, և՛ քո զավակներին պատուհաս եմ նաստած ահեղ։
Եվ լսեցինք, ո՜վ ծեր, երբեմն ճոխ էիր դու աշխարհներով
Եվ Լեսբոսից մինչև Փոյուզ, ուր Մակարն էր երբեմն իշխում՝
Մինչև անծայր Հելլեսպոնտոս իշխանությունդ էր տարածվում։
Եվ ճոխ էիր ու բարգավաճ որդիներով ու ինչքերով։
Բայց երբ երկնի աստվածները դլխիդ բերին այս մեծ աղետ՝
Միշտ արյուն է ու պատերազմ քո քաղաքի շուրջն այսուհետ։
Բայց համբերի՛ր, և մի՛ անվերջ հեծիր այսպես հառաչելով,
Քանի որ դու օգուտ չունիս քո զավակին միշտ ողբալով.
Եվ ո՛չ նրան այդ ողբերով կենդանացնել կարող ես դու,
Ու թերևս հասնեն դլխիդ ադետներ նոր և ահարկու»։

ՊՐԻԱՄՈՍԸ ԻԼԻՈՆ Է ՏԱՆՈՒՄ ՀԵԿՏՈՐԻ ԴԻԱԿԸ

ՏՐՈՅԱՑԻՆԵՐԻ ՈՂԲԸ

Քրքմնազդեստ առավոտը լույս էր սփռում աշխարհին,
Որ Պրիամը լաց ու կոծով քշեց ձիերն Իլիոն,
Զորիներն էլ տանում էին դիակն ընկած Հեկտորի։
Ջեր իմացել նրանց գալը դեռ ոչ մի մարդ, ոչ մի կին
Կասսանդրից շուտ, որ նման է ոսկեղենիկ Աստղիկին։
Հենց Պերգամի բարձունքներից տեսավ հորը կառքի մեջ
Մունետիկի հետ, որ գոռում էր դիակն ետքից բերելով՝

Ճիչ արձակեց ու ձայն ձգեց փողոցներում Իլիոնի.—
«Օ՜վ տրոյացիք, տրովուհի՜ք, եկեք տեսեք Հեկտորին,
Որին առջից հետ դառնալիս՝ ուրախ դնում էիք դեմ,
Քանի որ նա խնդություն էր քաղաքին և բանակին»:
Կոծեց, ղվխին ժողվեց ոստանն, ոչ մարդ մնաց և ոչ կին—
Ողջ աներից դուրս վազեցին մեռելների հանդեսին:
Նախ նապելի ամուսինը և մայրն արդոյ Հեկաբեն
Ընկան սայլին, ճիչ բառնալով դիի գլուխը դրկեցին
Ու փետեցին ծամերն իրենց, արտասվեց և ժողովուրդը:
Ու այսպես էլ ամբողջ օրը մինչ արևը մտավ մուտ՝
Անշուշտ քաղքի դռների մոտ պիտի լային ողբաձայն,
Թե չգոչեր այն ամբոխին կառքից այսպես Պրիամ.—
«Ճամփա տվե՛ք, կառքը անցնի, դին հասցնեմ ես մեր տուն,
Ապա այնտեղ ինչքան կուզեք դուք ողբացեք իմ որդուն»:
Այս որ ասաց՝ լսեց ամբոխն ու սայլակից ետ քաշվեց:
Ու տարան դին պերճ արքունիք, քանդակ մահիճ դրեցին,
Շուրջը բերին ողբերգուներ՝ եղերամայր կանանց հետ,
Ողբ ասացին ողբասացներն ու կանայք էլ կրկնեցին:
Անդրոմաքեն ձյունածղին սկիզբ դրեց մեծ կոծին՝
Իր ձեռքերով դիրկընդխառն ընկած գլխին Հեկտորի:
«Վա՜ղ արևդ հանգավ, ո՜վ քաջ, ու թողիր տանդ ինձ այրի,
Ի՞նչ կլինի վերջն այս մանկան, որին կյանք ենք տվել մենք:
Անշուշտ հասակ չի առնի սա. նախ կքանդվի Իլիոնն.
Որովհետև ընկար, ո՜վ քաջ, դու որ միշտ մեր քաղաքի
Պաշտպանն էիր, մանուկների, նաև պարկեշտ մեր կանանց:
Քաշ կտրվեն դեպի նավերն ու նրանց հետ նաև ես:
Եվ դու, մանկի՛կ, ինձ հետ պիտի երթաս երկիրն ոսոխի,
Ուր բռնադատ աշխատանքներ պիտի տան քեզ անարժան,
Ուր ակամա պիտի շոյեմ բռնակալին այն դաժան:
Կամ թե բուրդին քեզ զայրագին մի հույն պիտի գլորի՝
Դառն մահի քեզ մատնելով ի վրեժ արյան Հեկտորի,
Որի ձեռքով սպանվել է եղբայրն, հայրը կամ որդին,—
Զի քո հայրը շա՛տ հույների կրծել տվեց սև գետին.
Չէ՞ որ հայրդ էլ քաջ ահեղ էր պայքարի մեջ այս ռազմի,
Որի համար ժողովուրդներ սուգ են անում դեռ հիմի,
Ավա՜ղ, Հեկտոր, ծնողներիդ դու ձգեցիր սուգի մեջ,
Իսկ առավել ի՛նձ եղար ցավ, ինձ, անբախտիս եղկելի.

Չմեկնեցիր քո ձեռքը ինձ քո սև մահվան մահիճից,
Ոչ էլ խելոք, բարի մի խոսք կտակեցիր ինձ քեզնից,
Որ արցունքով գիշեր-ցերեկ գոնե ես միտ բերեի»։
Այսպես ողբաց ու լաց եղավ, կանայք ողբը կրկնեցին,
Եվ Հեկուբեն նրա ողբին կցեց ողբը ախտագին.—
«Հեկտո՛ր, որդի՛, որդիներիս դու ամենի՛ց սիրելի,
Որ դեռ կենդան՝ դու Թանկ էիր աստվածներին Օլիմպի,
Որ մահվանդ օրերին դարձյալ պաշտպան եղան քեզ.
Թեև գերեց հղբայրներից արագոտն Աքիլլես
Եվ տանելով կղզիները՝ այնտեղ ծախեց բոլորին,
Տ՛արավ Իմբրոս, տարավ Սամոս, մինչև Լեմնոս անմատույց,—
Միայն նա քո հոգի՛ն քաղեց սուր սլաքովն ահռելի,
Ու քաշ տվեց դամբանի շուրջ քո սպանած Պատրոկլի,
Որին երբեք այդ բանով է՛լ նա չտվեց հարություն։
Հիմա դու չես դեռ քայքայված, ասես նո՛ր ես զարկված դուն-
Պառկել ես դու ապարանքում, ֆերոան ասես քաջապեղ
Վրադ հասել՝ խոցել է քեզ դյուր խոցելի իր նետով»։
Ողբաց այսպես, և ամենքը ձայնակցեցին մեծ ողբով,
Ապա երրորդն առաջ եկավ, ախուր ողբով Հեղինեն.
«Ավա՛ղ, Հեկտո՛ր, իմ տագրերի դու թանկագի՛նն ամենեն,
Ինչո՞ւ համար Աղեքսանդրի ես հարսն անբախտ, լինեի,
Որ նա բերեր ինձ Տրոյա. լավ չէ՞ր ես վաղ մեռնեի։
Քսան տարի եկել եմ ես, թողել իմ տունն հայրենի,
Եվ քեզանից չեմ լսել դեռ մի խոսք դառը և կամ վատ.
Թե տագրերես ու տալերես կշտամբել է մինը ինձ
Կամ կեսուրս,— քանի կեսարս ինձ հետ քաղցր էր հորս պես՝
Դու արգելում էիր նրանց քո խելացի խոսքերով,
Ահա ինչո՛ւ քո վրա ես լաց եմ լինում մորմոքով։
Հիմա ինձ ողջ Իլիոնում չմնաց քեզ պես բարեկամ.
Հիմա բոլոր տրուվայցոց նշավակ պիտ ես դառնամ»։
Այսպես ասաց նա ողբալով, և ժողովուրդն հառաչեց։
Ապա Պրիամ ժողովրդին դարձավ՝ այսպե՛ս ձայն տվեց.—
«Դե՛, գնացե՛ք, տրուվացի՛ք, ու փայտ բերեք խարույկի.
Մի՛ վախենաք ամենևին դարանններից հույների.—
Աքիլլեսը մեզ Համփելիս խոսք է տվել նա ինձ մոտ,
Որ չի կռվի՝ մինչև ծագի պատնեներկու առավոտ»։

ՀԵԿՏՈՐԻ ԹԱՂՈՒՄԸ

Ասաց, իսկույն քաղաքի մոտ եզ ու ջորի լծեցին
Ու գնացին, փայտ կոտեցին անտառներում, դիզեցին,
Եվ տասներորդ երբ լուսաբեր առավոտը ծեգծեգեց՝
Արտասվելով վերցրին դին քաջ մարտիկի Հեկտորի,
Բարձր խարույկ պատրաստեցին, բոցը երավ մինչ երկինք։
Հազիվ ծագեց առավոտյան վարդամատն արշալույս՝
Դեպ Հեկտորի խարույկը մեծ ամբոխ եկավ արտմահույզ
Եվ խմբվելով՝ այրեցյալին ան գինիով օծեցին,
Հուրն հանգցրին և կրակից մնացածը մաքրեցին.
Ապա եկան ընկերները և եղբայրներն Հեկտորի,
Հավաքեցին ցաված սրտով նշխարները հերոսի,
Արտասվելով ամփոփեցին ողջը ոսկի սափորում
Ու վրան էլ ծիրանագույն քնքույշ մի քող ձգեցին.
Ապա սափորն իր աճյունով դրին խորունկ մի փոսում
Ու վրան էլ հետո բերին ծանր վեմեր քաշեցին.
Ապա շիրիմ կանգնեցրին, շուրջը դրին պահակներ,
Որ աքայացիք չհարձակվեն՝ ժամանակը չանցած դեռ.
Շուրջը շեղջեր բերին լցրին ու ետ դարձան տրոյացիք։
Եվ քաղաքում կազմ ու կարգով հոգեհացի նստեցին
Պերճ պալատում Պրիամոսի, Զևսից կարգված արքայի,—
Այսպես շքով պատկեցին թաղումը քաջ Հեկտորի։

ՈԴԻՍԱԿԱՆ

(ՀԱՏՎԱԾՆԵՐ)

ԴԻՄՈՒՄ ՄՈՒՍԱՅԻՆ

Երգի՛ր, Մուսա, այն մեծ մարդուն՝ խորագետին բազմահնար,
Որ Իլիոնը քանդելուց հետ Թափառական շրջեց երկար,
Որ այց գնաց շատ քաղաքներ, տեսավ մարդկանց վարքերն ու բարք,
Որ վշտերում և ծովերում կրեց բազում նա տառապանք,
Որ իր և իր ընկերների դեպ հայրենի դարձը հոգաց,
Բայց զուր եղավ հոգսը նրա, չհաջողեց փրկել նրանց,
Քանզի նրանք երկար ճամփին ոչնչացան բոլորովին։
Անմիտնե՛րը ճաշակեցին վհՀ Արեգի աստվածներին.
Սա զայրացավ, անհետացրեց օրը նրանց վերադարձի։
Արդ այդ մասին ասա մեզ բան, դուստր Զևսի, ով դիցուհի,
Ինչո՞ւ համար ուրիշները մահից այդպես ազատվեցին,
Ողջ և՛ կռվից, և՛ ծովերից, վերադարձան հայրենի տուն,
Սա միմիայն բազմաթափառ տենչաց դարձին և ամուսնուն։

ՆԱՎՍԻԿԱՅԱ.

Գնաց հոր մոտ Նավսիկայան և ժպտադեմ ասաց նրան.
«Հայրի՛կ, ասա, որ բարձրագահ, արագանիվ կառքդ ինձ տան.
Շատ լվացք է տանը կիտված, տանեմ գետը լվանալու.
Մեծիդ մաքո՛ւր կվայելի մեծերի մոտ երևալու։
Հինգ որդիքդ՝ երկուս ղուգված, երեքն առույգ ու անպսակ,
Ցանկանում են պարի գնալ շորեր հագած ջինջ ու ճերմակ.—

Այդ եմ հոգում միայն, ասաց և իր հորից քաշվեց նա՝ շատ
Խոսել իրա հարսանիքից. սակայն հայրը հասկացավ այդ։
«Գնա՛, ասավ, չեմ խնայում քեզ ոչ ջորի և ոչ այլ բան.
Կասեմ իսկույն ծառաներին, որ մեր շքեղ կառքը բառնան»։
Ասաց, կանչեց, ծառաները բերին կառքը արագանիվ
Ու լծեցին, և աղջիկը բերեց շորերն ընտիր, ազնիվ,
Բարձեց կառքին. մայրն էլ դրեց զամբյուղը մեծ կերակրով լի,
Լիքը լցրեց այծի սիրկը գինին անուշ, հրաշալի։
Ելավ կույսը կառքի վրա, դրեց ոսկի իր եղամանն
Անուշ յուղով՝ որով օծի նաժիշտներին, նաև իրան,
Առավ մարակն, առավ սանձերն, ձաղկեց դաշտում ջորիներին,—
Վազում, դոփում ու տանում են ձորձ ու նաժիշտ, հետն էլ
կույսին։
Հասան գետի հորդ հոսանքին, ուր կան անթիվ լողարաններ,
Ուր ջրերը արագահոս լվանում են ամեն կեղտեր։
Տեղ հասնելով, հորդ գետի մոտ արձակեցին ջորիներին,
Որ արածեն սեզը անուշ։ Ձորձը կառքից իջեցրին
Եվ ձգեցին փոսերի մեջ ու արորեցին ոտների տակ,
Մինչև մաքուր լվանալով՝ պերճ փռեցին կարդով հստակ
Ծովի ափին, ուր խիճերը ողորկվում են ծովաջրում։
Լվացվելով, յուղ օծվելով գետի ափին ճաշ նստեցին,
Ջորերն ամեն յամաքեցին արևի բարկ վառ շողերից։
Ու կույսը իր նաժիշտներով երբ լիակուշտ ճաշակեցին՝
Գնդակխաղի ելան ապա՝ քողն հանելով գլուխներից.
Եվ Նավսիկեն լուսածղի կցեց ապա երդն այնուհետ՝
Ինչպես հետքից Երի-մանթի կամ դեպ դժվար լեռն Տայգետ
Գնաց որսի լեռնախաղաց Արտեմիսը ոսկեփքին,
Որսաց նետով վարազներին, արագավազ եղնիկներին։
Նրանց շուրս դին խաչտում էին հավերժ՝ հարսներն անտառների,
Եվ Լետոնը դիտելով այդ՝ հրճվում էր այն կույսի պարից,
Որ իր գլխով և ճակատով բարձրահասակ էր ամենից,
Նաև իրա գեղովն էր վեհ նաժիշտներից իր սիրունիկ.
Այսպես աշխույժ աննման էր նաժիշտների միջին Նավսիկ։

ԱԼՔԻՆՈՅԻ ՍՊԱՐԱՆՔԸ

Մտավ տունը Երեքթևի, նրա պալատն այն ամրաշեն.
Մինչ Ոդիսևս մոտենում էր Ալքինոյի ապարանքին.

Ու հեռացավ դեռ չհասած նրա շեմքին պղնձեղեն—
Այնպես տունը ճաճանչում էր նման լուսնին, արեգակին։
Շեմքից դեպի խորքը նրա պղինձ էին պատերն աստ-անդ.
Ոսկի դռներ դուռը փակում, արծաթ էին դրսի դռներ,
Վերի շեմն էր արծաթաշեն, և ոսկի էր մանյակի զարդն,
Պահակներ կան այստեղ ու անդ. ոսկի, արծաթ ձույլ դամփռներ,
Հրաշակերտ Հեփեստոսի ձեռքով կերտած բոլոր բաներ։
Շները այս պաշտոն ունեն՝ հսկել տունը Ալքինոյի,
Եվ ամենքը էին անմահ, չեն ծերանում ամենևին.
Եվ պատերի շուրջ երկայնքով այստեղ ու անդ դահեր կառած
Կանանց ճարտար ձեռագործի՝ ծածկոցներ կան վրան փռած։
Փեկացիներն ականավոր անդ են նստում խրախճանքի
Եվ ձեռներին ջահ բոցավառ պատանիներ կային ոսկի,
Որ գիշերը ճոխ սեղանին վառ լույս սփռեն վերնահարկից։
Հիսուն էին աղախիններն. ո՛րն աղում էր ոսկի ցորեն
Երկանքներով, ո՛րը ջուհակ, ո՛րն էլ բոքն էր պտուտ տալիս.
Պատվում են, դողում արագ՝ ինչ տերևներ կաղամախի,
Իսկ ոստյանը այնպես էր պինդ՝ որ չէր ծծի կաթիլն յուղի.
Որչափ հմուտ՝ Փեկեաններն ծովի մեջ են արադանում,
Այնչափ Պալլաս նրանց կանանց տան դործի մեջ հանճար տվավ։
Դուրսը մոտիկ արքունիքին, կար մի պարտեզ սքանչելի,
Չորս օրավար, ցանկապատով ամուր պատած շուրջանակի,
Բարձր ծառեր դալարագեղ՝ կրում էին՝ նուռն ու տանձեր,
Ձքնաղ խնձոր, քաղցրիկ թուզեր, հմուտ տնկած ձիթենիներ.
Չէ՛ պակասում, չէ՛ նվազում նրանց պտուղն հավերժելով՝
Ո՛չ ձմռանը, ո՛չ էլ ամռան. միշտ փչում է զեփյուռը հով,
Անդուլ շնչում, կեսը եփում, կեսը հասցնում է հետզհետ,
Ծերանում է տանձ տանձից հետ և խնձորը՝ խնձորից հետ,
Խաղողից ետ խաղող գալիս, հետևում է թուզը թզին։
Հենց նույն տեղն էլ այգի մի կա բազմապտուղ և դինևետ,
Ողկուզների կեսն արևկող՝ չորանում է արևի տակ,
Կա՛ որ այգեկութի համար, ո՛րն հնձանի մեջն են կոխում,
Ո՛րն էլ մատղաշ, ատամ առնող, և հասնում են այլ տեսակներ՝
Մեծածաղիկ և դուլնզդուլն։ Կային կրկին և ադրլուրներ,
Մին ծավալվում պարտեզի մեջ, իսկ մյուսը դալթի տակով
Ջինջ հոսում էր մինչ ապարանք, որտեղից ջուր էին առնում,—
Այսպես էին աստվածները սարքել տունը Ալքինոյի։

Այնժամ Ոդիս թողեց ափերն ու շիտակվեց դեպ առապար
Ու գնում էր թավ անտառով՝ ելած դեպի լեռներ ու դար.
Ուր ասելովն Աթենասի՝ աստվածատիպն իր խոզարած
Ապրում էր ու հոտն էր հսկում Ոդիսևսին հավատարիմ։
Գտավ նրան բարձր արձակ իր գավթի մեջ դառն նստած.
Տունն էր անդորր ու գեղաշեն, որ չորս կողմից երևում էր։
Եվ դա շինեց խոզի համար, և արքան էլ այդ չգիտեր.
Բան չխնդրեց ո՛չ Թափուհուց և ո՛չ էլ ծեր Լայերտոսից.
Ժայռեր կարեց, ինքը կերտեց, հյուսեց մի ցանկ սուր փշերից։
Շուրջանակի գավթում տնկեց կաղնիների խիտ-խիտ ցցեր.
Խշափ շինեց իրար կողքի, տասներկու խոզարաններ,
Ամեն մեկում էգ հիսուն խոզ պառակ-պառակ էին հանդչում,
Իսկ արուները գեռնախշոի արու խոզերն հանգիստ ննջում.
Թվով սակավ էին դրանք (որ հոմանիք ծախում էին)։
Եվ խոզապանն ստիպված էր ընտիրներից ղրկել նրանց։
Երեք հարյուր հիսուն գլուխ այդ խոզերից միայն մնաց,
Գազանատիպ չորս դամփուռներ երամակին հսկում էին,
Եվ չորսին էլ խոզարածը լավ անում էր ինքն առանձին։
Գունեղ եզան մորթուց նաև տրեխներ էր այնտեղ շինում.
Երեք հովիվ ժողվում էին խոզը ցրված այստեղ ու անդ,
Իսկ չորրորդին մեծ խոզարածն ինքն էր ավել մի խոզ պարարտ,
Որ տանի տա հոմաններին վայելելու խնջույքներում։
Հենց ուր տեսան Ոդիսևսին, շներն հաջով դեմը եկան,
Իսկ Ոդիսևս զգուշացած՝ ցուպը ձգեց գետնի վրան,
Եվ քիչ մնաց իր կալվածքում ողորմ վախճան պիտի գտներ
Բայց հովիվը վրա հասավ վայր ձգելով իր տրեխներ.
Կանչեց աստով դամփուռներին և դես ու դեն խուճեց նրանց,
Քարեր նետեց նրանց վրա, և իր տիրոջն այսպես ասաց.—
«Քիչ էր ցավս, ո՛վ ծերունի, այս շներն էլ մաղ մնաց որ
Ցավ բարդեին ցավիս վրա, այստեղ և եթ քեզ հոշելով.
Ես հենց նստած լաց եմ լինում իմ տիրոջը աստվածատիպ,
Խորթ ու օտար մարդոց համար խոզերը այս պարարտելով.
Իսկ նա թափառ օտար աշխարհ կարող է մի կտոր հացի,
Եվ ով գիտե, կա տակավին և տեսնում է լույսն արևի։
Բայց մոնենք ներս, ո՛վ ծերունի, կրմպես մի քիչ, կուտես դու
հաց.

Եվ կպատմես՝ ո՛րտեղից ես, ի՛նչ բաներ են պլխովդ անցած»։
Այս ասելով ընկավ առաջ խողարածը այն հյուրասեր,
Մտավ նեքսև, բերեց փռեց գետնի վրա փափուկ ոստեր,
Ապա փռեց նրա վրան և մի մորթի վայրի այծի,
Եվ անկողին փռեց՝ բազմոց թանձր և՛ լայն և՛ հեշտալի։
Խնդաց Ողիս այս վարմունքից, ապա ասաց հյուրընկալին,
«Ես կաղոթեմ Արամազդին և մեծ խմբին աստվածների,
Քեզ հյուր ըրկեն՞ տ՛եմ որ կուզես, երբ ինձ այսպես ընդունեցիր»։
Պատասխանեց Էվմեն այսպես. «Հյո՛ւր, երբեք ինձ չի վայելի՝
Թեկուզ քեզնից վատն էլ հյուր գա՝ իմ հարկի տակ անշուք լինի.
Քանզի բոլոր հյուր և աղքատ Արամազդից են գալիս մեզ.
Եվ հյուրոյթքը թեկուզ չնչին՝ սիրելի է մեզ մեծապես.
Բախտից լքած ծառաներիս միշտ էլ այսպես վիճակն է հեզ,
Միշտ թաքթաքուն զործ են անում, երբ պատանի տերեր ունենք.
Աստվածները, ավա՛ղ, մեզնից կողոպտեցին տիրոջը մեր.
Նա սերտ սիրով սիրում էր ինձ ու միշտ լիքն էր պահում իմ
ձեռն։

Ինչպես Զևսը, որ բարեսիրտ խնամում է իր ծառային,
Տալիս է տուն և կարասի, տալիս է և փարելի կին,
Որի քիրտը տիրոջ համար ինքն օրհնում է մեծն Զևս,
Ինչպես և իր քիրտն օրհնեց և աստ հովիվ կարգեց այսպես,—
Անշուշտ իմս էլ այդպես կըլ՛ներ՝ թե ծերանար նա այս տան
մեջ

Ավա՛ղ, կորավ. Թող կուրանա՝ Հելինեի զարմը էրնեկ,
Շատ քաջերի ծունկը ծալեց, և ի՛մ տիրոջ, որը շքով
Ագամեմնի տանից գնաց՝ Տրոյի ռազմի լուրն առնելով»։
Ասաց, իսկույն պնդեց գոտով իրա հագած կապան տակի,
Ելավ ապա ու գնաց դուրս օթևանը երամակի.
Մորթեց երկու խոզաձագեր, խանձեց, հոշեց, ապա շամփրեց,
Լավ խորովեց ու հենց տաք-տաք շամփրներով առաջ բերեց։
Տվեց խորտիկն Ողիսևսին, լավ համեմեց ճերմակ ալրով,
Խառնեց ապա փայտե տաշտում անուշ գինին իր բաժակով։
Նստեց հանդեպ. «Ո՛վ հյուր, ասաց, կե՛ր, ծառայիդ այս
խորտիկից

Քանի որ այս պարարտ խոզերն հոմանիներն են միշտ խժռում։
Օ՜հ, չկա դութ այդ որկորին, ո՛չ էլ երկյուղ աստվածներից.
Բայց դիքն արդար չարիքն ատում և բարին են մարդկանց սիրում.

Դեռ հեներն էլ օտար երկրում Զևսի կամքով երբ կողոպտում
Ու նավերը իրենց ավարն երբ որ լցրած դառնում են տուն՝
Նրանք է՛լ դեռ երկյուղ ունեն իրենց գործի խիստ վրեժից։
Անշուշտ այդ դուռ սեղեխները մի լուր առան ինչ որ տեղից,
Լուրն իմ սիրոջ ևս օրհասի, կամ թե ինքը Զևսը հայտնեց,
Որ տարփում են նրա կնոջ և չեն գնում տներն իրենց, —
Այլ որկրամոլ՝ նրա գույքն են ծախսում հանգիստ շռայլաբար
Եվ օրենը մի կամ երկու մորթած խոզով բավական չեն։
Բաժակներն են քամում անչափ, քանի տերս բազմահամբար
Կարողություն և կայք ուներ, որչափ քսան դյուցազ չունեն՝
Ո՛չ ցամաքում, ո՛չ Իթակայում, որի՞ թիվը ևս քեզ ասեմ։
Տասնևերկու նախիր կա անդ, նույնչափ և թիվն է հոտերի,
Նույնչափ խոզեր՝ արոտներում, նույնչափ է և հոտն այծերի.
Արածում են սրանք ձեռքով վարձու և տան հովիվների։
Աստ տասնևմեկ փարախներ կան, ողջն այծերի համար միայն.
Կղզու ծայրից արոտներն են և կան մարդիկ քաջ պահապան.
Եվ նրանցից ամեն մինը ուղարկում է օրը մի այծ,—
Լավ ընտիրներն իրենց հոտից՝ հոմաններին վայելու։
Իսկ ես այստեղ վերակացու պահպանում եմ խոզերը այս
Ու մեր խոզի երամակից ընտիրներն եմ դրկում նրանց»։
Մինչ պատմում էր՝ Ոդիսն անուշ ուտում էր ու խմում լուիկ
Եվ նյութում էր իր սրտի մեջ հոմանների ոխն ու չարիք։

ՊԵՆԵԼՈՊԵՆ ԵՎ ՀՈՄԱՆԻՆԵՐԸ

Դուստրն Զևսի, լուսակն Աթեն ազդեց այնպես Պենելոպին,
Որ սա խաղ մի սարքի մրցման՝ օղ ու աղեղ ու երկաթի.
Եվ սարքեց նա հոմաններին մահահրավեր խաղ մի մրցման
Եվ օրհասի սկիզբ դրեց նրանց համար Ոդիսի տան։
Սանդուխն ելավ բարձրաստիճան Պենելոպեն իր տան հարկի
Եվ դիրք ձեռով վեր կալավ նա ամուր դռան մեծ բանալին։
Վարպետորեն ու զգեցիկ նա պղնձից էր ճարտարած,
Նաև դաստակ ուներ սիրուն փղոսկրից վրան հագած։
Արդ գնաց իր նաժիշտներով, առագաստը իրա մտավ,
Ուր մթերած պահած կային Ոդիսևսի գանձերն անբավ՝
Ոսկի, պղինձ բազմապատիկ և՛ երկաթի ճարտար գործեր,
Եվ լայնալիճ մեծ աղեղներ և՛ փքինով լի կապարճներ։

Արդ երբ հասավ ներս առագաստն Պենելոպեն գեղեցկափառ,
Ելավ կանգնեց կաղնու սեմին, որ կերտել էր հյուսնը ճարտար,
Ողորկել էր և հաստատել ուղղակշիռ, ճշգրտագեղ
Ու դրել էր բարավորներ, դրանդիներ նաև շքեղ։
Արդ մոտեցավ Պենելոպեն, քանդեց լարը պինդ մանյակի,
Դրեց մեջը կուռ բանալին, հրեց նիպը մեծ փականքի.
Ու այն դռան դրանդիներն այնպես ճռինչ արձակեցին,
Կարծես դաշտում նախիրի մեջ ցուլերը ղիլ բառաչեցին։
Ու երբ բացվեց դուռը հակա բանալիի թափը առած՝
Դշխոյն շքեղ ու հոյակապ՝ վերնահարկը ելավ գնաց,
Ուր զգեստի դարաններում կային ծածուկ պինդ դարաններ,
Ու նրանց մեջ պահված էին անուշաբույր պատմուճաններ։
Մեկնեց ձեռը Պենեպոլեն, պոկեց սեպից աղեղը մեծ
Ու պատյանը նաև նրա լուսաճաճանչ նա վերցրեց,
Նստեց այնտեղ, ծնկան դրավ հիշատակներն այդ դյուրալի
Ու լաց եղավ՝ մերկացնելով լայնալիճը իր արքայի.
Ու երբ հագուրդ առավ դշխոյն իր կոծերից արտասվագին՝
Իջավ դեպի հոմաններըը, որ երևա նրանց աչքին։
Բռնած ուներ դշխոյն ձեռին աղեղը կուռ և լայնալիճ,
Հետը նրա և կապարճը՝ լի փքինով մահաթռիչ.
Հետևից էլ նաժիշտները տանում էին իրենց ուսին
Սակառը լի երկաթ-պղինձ, մրցանքները մեծ Ոդիսի։
Արդ երբ հասավ չքնաղ դժխոյն սրահը լայն հոմաններին,
Կանգնեց այնպես պահ մի շեմքին հրաշակերտ այն սրահի,
Քողազարդված էին սիկնոջ այտերը վառ մի շարոցքով։
Եվ կողքերին երկու նաժիշտ փայլում էին նրա շքով,
Ձայն արձակեց Պենելոպեն. «Լսեցե՛ք ինձ, հոմանիներ,
Որ իմ տանը դուք ամեն օր ձեռնարկում եք դառնալու տեր,
Որ օրնիբուն ձեզ ավել եք խնջույքներին մեծահանդես,—
Լավ իմացեք իմ հարկի տակ, քանզի չկա էլ Ոդիսևս։
Ձեր բռնության համար չկա այլ պատրվակ մի գեղեցիկ,
Քան որ խլել մեկզմեկուց դուք ուզում եք իմ հարսանիք։
Ահա տեսեք, եկավ հասավ օրը մրցման ձեր բաղձալի.
Ես գնում եմ ձեզ մրցելու աղեղը մեծ Ոդիսևսի։
Ով որ ձեզնից հեշտ կլարի աղեղն ահա այս լայնալիճ
Եվ քաջաձիգ բազկի ուժով դնի փքին մահաթռիչ՝
Եվ շեշտելով կանոկացնի տասնևերկու օղի միջից՝

Նրան փեսա ինձ առնելով՝ ես կմեկնեմ այս պալատից,
Իմ ա՛յս տանից, ուր հարս էի, ա՛յս մեկ տանիցն իմ հացալի,
Որ և քնա՛ծ պիտի հիշեմ երազի մեջ կարոտալի»։
Ասավ դժխոյն և նույն ձայնով հրամայեց քաջ էվմեին,
Որ լայնալիճ նետն ու օղեր տանի և տա հոմաններին։
Առավ էվմեն, տվեց նրանց,— բայց լալիս էր արտասվալի,
Լաց էր լինում և Փելիտոս, տեսնելով զենքն իր արքայի։
Ապուշ կարեց Պենելոպեն և վերստին դարձավ նա ետ։
Վերև ելավ նաժիշտներով, իր Ոդիսին ողբաց թաքուն,
Մինչ Պալլասը իր աչքերին բաշխեց հանգիստ անուշ մի քուն։

ԷՎՄԵՈՍԻ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ

Ասաց, փռեց կրակի մոտ հյուրի համար անկողին
Եվ ոչխարի—այծի մորթով պատկեցրեց Ոդիսին,
Նաև ձգեց ծերի վրան իր վիրարկուն հաստաբուրջ,
Այն որ նաև ինքն էր հագնում ձմռան բուքին դառնաշունչ։
Հանգիստ առավ այսպես Ոդիս, և նրա շուրջն հովիվներ,
Միայն ծերուկ էվմեոսն էր, որ չպատկեց քնելու.
Զգուշացավ և շտապփույթ վեր կալավ նա իր զենքեր
Ու պատրաստվեց որ դաշտ գնա՝ երամակը հսկելու։
Ուրախացավ, երբ որ աչքով տեսավ արդեն Ոդիսևս,
Ինչպես իրեն հավատարիմ է էվմեոս։
Կախեց սուրը խոզարածը իր ամրակուռ ուսերից,
Հագավ և թավ իր վերարկուն՝ մենակ պաշտպանն հողմերից։
Դրեց գլխին երկարամազ իր թավաբուրդ այծենին,
Առավ ալաքն իր սայրասուր՝ ահարկողը գողերին,—
Ու գնաց այնտեղ ուր քնել էր իր խոզերի երամակ՝
Հյուսիսային բորյան քամուց պատսպարված ժայռի տակ։

ՀԵՍԻՈԴՈՍ

Ութերորդ դարի վերջում (մեր թվարկությունից առաջ) Հունաստանում արագորեն զարգանում են առևտուրը, փողային հարաբերությունները, մասնավոր սեփականությունը և վաշխառությունը։ Դրա հետևանքով քայքայվեց տոհմական կարգը և մանր հողատիրությունը։ Հենց քայքայվող գյուղացիության բողոքը լսվում է Հեսիոդոսի «Աշխատանք և օրեր» պոեմի մեջ։ Այդ պոեմը ստեղծվել է մոտավորապես 8-րդ դարի վերջում, մեր թվարկությունից առաջ։ Հեսիոդոսը իր պոեմի մեջ բողոքում է իշխանավորների, դատավորների բռնությունների դեմ։ Իշխանավորներին նա համարում է «արդարության խախտողներ և վաճառվածներ», խիստ բողոքում է թագավորների դեմ, նրանց անվանելով «բարիքների լափողներ»։ Պոեմի սկիզբը պեսիմիստական է։ Հեսիոդոսի կարծիքով մարդկային կյանքը դնալով ավելի ու ավելի վատանում է, ավելի մեծ չափեր են ընդունում անարդարությունը, մարդկային տառապանքները։ Պոեմի մեջ անմենադրական մոմենտը աշխատանքի գովքն է։ Այդ, ինչպես և նրա մյուս պոեմը, որ կոչվում է «Թեոգոնիա», գրված են հոմերոսյան բանաստեղծական չափով, այդ չափը, որ դակտիլիկ հեկզամետրն է, տեղ-տեղ բովանդակության համաձայն փոփոխվում է։ Հեսիոդոսի «Թեոգոնիա» պոեմը հանդիսանում է հունական դիցաբանության առաջին սիստեմատիկ շարադրությունը։

«ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՕՐԵՐ» ՊՈԵՄԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հեսիոդոսի դիդակտիկական բնույթի պոեմը, որ կազմված է 228 տողից, սկսում է վատի և լավի, արդարության և անարդարության վեճի նկարագրությամբ։ Առաջինը արժանի է պարսավանքի, նա առաջացնում է խառնակություն ու պատերազմ։ Երկրորդը բարի է, նա մարդկանց աշխատանքի է մղում։ Հարևանը տեսնելով հարևանի հարստությունը, ինքն էլ շտապում է վարել,

ցանել և փութաջան լինել: Բրուտը բրուտին է նախանձում, հյուսնը — հյուսնին, մուրացկանը — մուրացկանին, երգիչը — երգիչին: Հեսիոդոսը իր եղբայր Պերսին կոչ է անում հետևել բարի գործին:

Համաձայն Հեսիոդոսի, առաջ մարդիկ ապրել են չիմանալով չարություն, ծանր աշխատանք, մահաբեր հիվանդություններ, սակայն Պանդորան բացելով իր արկղը, մարդկանց բերեց կործանում և լաց: Արկղից դուրս թռան անսահման չարիքներ և նրա մեջ մնաց միայն հույսը:

Աստվածները մարդկային առաջին սերունդը ոսկուց ստեղծեցին. այդ այն ժամանակն էր, երբ Կրոնոսն էր թագավորում երկընքում: Մարդիկ ապրում էին աստվածների նման, առանց հոգսի, ազատ աշխատանքից և վշտից, երբեք չծերանալով, մշտական երջանկության մեջ: Դրանից հետո աստվածը մարդկային երկրորդ սերունդը ստեղծեց արծաթից, որը նման չէր առաջին սերնդին ոչ հասակով, ոչ էլ մտքերով, որն ինքն իր անխոհեմությամբ տառապանքներ էր ստեղծում իր համար: Այդ սերնդի մարդիկ չէին կարող իրենց զսպել խելագար բռնությունից, այլևս աստվածներին զոհեր չէին մատուցում, դրա համար Զևսը նրանց փակեց ստորերկրյա աշխարհում:

Երրորդ սերունդը Զևսը ստեղծեց պղնձից, որը բոլորովին նման չէր արծաթյա սերնդին: Այս սերունդը ուժեղ լինելով, պատերազմներ էր մղում. նրանք ունեին պղնձյա զենքեր, նրանց բնակարանները նույնպես պղնձից էին: Հաղթվելով իրենց եղբայրների կողմից, նրանք անփառունակ իջան Աիդը: Այնուհետև Զևսը արդավանդ հողի վրա ստեղծեց չորրորդ սերունդը, որը ավելի ողջամիտ էր: Այս սերունդը Հեսիոդոսի պոեմի մեջ համարվում է հերոսների և կիսաաստվածների սերունդ: Նրանց Զևսը ոչնչացրեց մասամբ պատերազմներում, յոթ դարպասանոց Թեբեի տակ, մասամբ էլ տրոյական պատերազմում: Այս սերնդի մնացորդներին Զևսը փոխադրեց երանավետների կղզին, օվկիանոսի հորդառատ գետի վրա: Այդ կղզին բերքաբեր էր և տարեկան երեք անգամ քաղցր պտուղներ էր տալիս: Անցնելով հինգերորդ՝ երկաթյա սերնդի կյանքի նկարագրությանը, Հեսիոդոսը ասում է՝ ավելի լավ է մեռնել, քան պատկանել այդ սերնդին, քանի որ այդ սերնդի ժամանակ ապօրինությունը չափ ու սահման չուներ: Երկաթյա սերունդ ասելով Հեսիոդոսը հասկանում է իր ժա-

մանակաշրջանի սերունդը։ Տալով մարդկային պատմության հինգ շրջանները, որոնք ցույց են տալիս, որ կյանքը դնալով ավելի ու ավելի վատանում է, Հեսիոդոսը անցնում է բուն պոեմին։

Ամենից առաջ նա սոխակի և բազեի մասին եղած ժողովրդական առածից այն խրատական եզրակացության է գալիս, թե որի մարդն իրեն ուժեղների հետ հավասարության մեջ չպետք է դնի, քանի որ ուժեղը օրենք չի ճանաչում, իսկ խեղացի մարդը պետք է խուսափի անօրենությունից և հետևի արդարության։ Արդարությամբ են ծաղկում քաղաքներն ու ժողովուրդները։ Անարդարներին և ամբարտավաններին Զևսը երկնքից դժբախտություն, սով և հիվանդություններ է ուղարկում։ Հատկապես թագավորներն արդարության պահապաններ պետք է լինեն։ Զևսի օրենքի համաձայն անաստվածները օրենքով չեն դեկավարվում և ոչընչացնում են մեկը մյուսին։ Իսկ մարդիկ պետք է դեկավարվեն օրենքով և պահպանեն արդարությունը։ Այնուհետև Հեսիոդոսը քարոզում է եռանդուն գործունեություն։ Եռանդուն գործունեություններ ասում է նա, տունը լցնում է հարստությամբ, իսկ ծուլությունը կարիքի աղբյուրն է։ Հարստության միայն այն տեսակն է գովելի, որ ձեռք է բերվում արդարությամբ և առաքինությամբ։ Զևսը պատժում է նրան, ով չարությամբ է վերաբերվում կարիքավորներին, ով անպատվում է եղբոր անկողինը, ով խիստ խոսքերով վիրավորում է ձեր ծնողներին։ Հեսիոդոսը պահանջում է հավատ չընծայել ամեն մարդու։ Ով հավատում է դեղեցիկ սիրող, եսասեր և կեղծավոր կանանց խոսքերին, նա հավատում է խաբեբաներին։

«Աշխատանք և օրեր» պոեմի երկրորդ մասի խրատները վերաբերում են երկրագործական աշխատանքին՝ տարվա տարբեր եղանակներին. երբ է գալիս ցանքսի և հնձի ժամանակը, ինչպես նախապատրաստել երկրագործական գործիքները, ինչպես դիմադրել ցուրտ ձմռան, ինչպես հավաքել և քամել խաղողը և այլն։ Պոեմը պարունակում է նաև բարոյական խրատներ այն մասին, թե որ հասակում և ինչպիսի կնոջ հետ ամուսնանալ։ Համաձայն Հեսիոդոսի պետք է ամուսնանալ երեսուն տարեկան հասակում և ջահել աղջկա հետ, որպեսզի հնարավոր լինի նրան դաստիարակել։ Պետք է ունենալ միայն մեկ երեխա, որպեսզի հոդի համար վեճեր չառաջանան։ Պոեմը վերջանում է ամիսների այն երջանիկ օրերի թվարկումով, որոնք բարերեր են մարդկանց համար։

ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՕՐԵՐ

(ՀԱՏՎԱԾՆԵՐ)

Սերունդներին մարդկության, ամեն բանից դեռ առաջ,
Ստեղծեցին մշտագո աստվածները տիրակալ,—
Օլիմպիական տերերը պալատների մարմարյա։
Այն ժամանակ Քրոնոսն էր տիրակալը երկնքի,
Աստվածների պես զվարթ՝ ապրում էին մարդիկ անդ—
Անցավ, անվիշտ ու խաղաղ և մշտապես կենսուրախ։
Եվ ծերությունը տխուր, վախենում էր դողահար,
Մերձենալ այդ մարդկանց, որ ունեին պինդ, ջղուտ—
Ձեռքեր, ոտքեր և մարմին, և որոնց կյանքն անցնում էր
Խնջույքների մեջ բորբոք, հանդեսների մեջ ցնծուն,
Իսկ երբ մահանո՛ւմ էին, նրանց մահը թվում էր
Քաղցր անուրջ միմիայն, մի խաղաղիկ անուշ քուն։
Ամեն ինչը նրանց մոտ անպակաս էր և առատ,—
Եվ բերքատու էր նրանց հացանվեր հողերը.
Նրանք հանգիստ աշխատում, հավաքում էին նրանք
Հարստություն աննվազ, և ունեին նրանք շատ
Երամակներ ու խաշներ և ջորիներ անհամար։
Բայց այն բանից հետո, երբ Զևսի կամքով ահասաստ՝
Մարդկանց այդ հողը ծածկեց՝ փոխարկվեցին մահից ետ—
Երկրային չար դևերի, ստվերների մահադեմ,—
Միշտ աչալուրջ հսկելով՝ հետևելով հանապազ
Գալոց մարդկանց թե բարի ու չարկամ գործերին.
Եվ, խավարով մշուշված, շրջում էին երկրով մեկ
Հարստություն տալով այն մարդկանց քաջ ու կենդանի,
Այն ամենը տալով ինչ արքաներին է վայել։
Երանի՜ չծնվեի իմ այս դարում հինգերորդ,

Կուզենայի մեռնել ես նրանից առաջ և կամ թե
Բախտի բերմամբ ծնվելի հետո, թեկուզ և աղքատ։
Երկրի վրա հիմա արդ ապրում է մի ա՛յլ սերունդ,
Երկաթակուփ սերունդը, որը սակայն զօր դիշեր
Չի գտնելու դադարում աշխատանքից ծանրատար,
Տառապանքից ու ցավից ու վշտերից ու հոգսից։
Աստվածները հոգսեր են տալու նրանց ծանրաբեռ,
Բայց և այնպես այդ բոլոր դժբախտությանցը պիտի
Միախառնվի քիչ նվազ երանություն ու ծիծաղ։
Կոչնչացնի Զևսը այդ խոսուն մարդկանց դումարած,
Եվ այդ բանից հետո դեռ կգա սերունդը այդ նոր
Մորուքները երկարած, ձյունաճերմակ, մեջքը կոր։
Որդիք իրենց հայրերի և հայրերը որդոց հետ
Կապրեն իմի և սակայն չեն հասկանա միմյանց.
Բարեկամները իրար չար օտարներ կդառնան,
Տանտերը իր հյուրի հետ կլինի բիրտ թշնամի։
Այլևս սեր չի լինի եղբայրների մեջ գժտված,
Ինչպես որ կա շատ հնուց, մի երանված ժամանակ։
Որդիները չեն հարգի ծնողներին իրենց ծեր,
Ու կլինեն անառակ, պիղծ, չար ու մոլեգին,
Ծնողներին կտան լոկ—ծանր անարգանք ու լուտանք,
Մոռանալով հատուցումն աստվածների խստագին։
Չի ցանկանա, օ՜, ոչ ոք, ծնողներին ծերացած
Ոչ սնունդ տալ, ոչ հագուստ և ոչ անգամ գավազան,
Դեն կնետեն երդումը և արդարը և բարին։
Ավելի շուտ կսկսեն սեր ու հարգանք տալ միայն
Չարագործին ու լրբին, անիրավին ու փուչին,
Որտեղ ուժն է, այնտեղ էլ իրավունքը կիշխի բիրտ։
Կչքանա ամոթը և վատշվեր մարդիկ կեղծ
Ցուցումներով իրենց սուտ՝ վերք ու վնաս կտան լոկ
Մարդուն հարգի ու բարի, և կեղծ ժպտով սառնածին
Կխոնարհեն գլուխը անամոթի պես ներքև։
Ամեն մեկին կրնկակոխ կհետևի անօրեն,
Սարսափատես նախանձը—չարախինդ ու չարախոս։
Այն ժամանակ, հիասքանչ իր մարմինը պարուրած
Ձյունսպիտակ թիկնոցով՝ Խիղճն ու Ամոթն իրար հետ՝
Մեր լայնուղի աշխարհից կբարձրանան բյուրգագաթ

Դեպի լեռը Օլիմպոս՝ փախչելով չար մարդկանցից։
Մարդկանց համար կմնան,—ճակատագիրը որպես,
Ցավ, տառապանք և արցունք, ծանր վիշտ ու հեկեկանք,
Եվ չարիցը ազատում չի լինելու բնավին։

[ԱՌԱԿ ՍՈԽԱԿԻ ԵՎ ԲԱԶԵԻ ՄԱՍԻՆ]

Այժմ ես մի առակ կասեմ արքաներին խելամիտ,
Թե ինչ ասաց հզոր բազեն խեղճ սոխակին խարտաշյա,
Երբ տանում էր նա թշվառին, բարձր ամպերում թռչելով,
Խեղճ սոխակը ճվճվում էր՝ մագիլներից խոցոտված,
Մինչդեռ բազեն նրա գլխին մի այսպիսի ճառ ասաց։—
— «Ի՞նչ ես, անբախտ, դու ճղճղում, քեզնից ուժեղ եմ ես շատ,
Ինչ էլ երգես՝ քեզ կտանեմ, որտեղ ինքըս ուզենամ.
Ուզենամ՝ քեզ կուտեմ իսկույն, ուզենամ՝ քեզ կարձակեմ.
Անմիտ է նա, ով չափվում է իրենից ուժեղ մարդու հետ,
Նա չի հաղթի, կավելացնի ստորացման լոկ տանջանք»։
Ահա թե ինչ ասաց բազեն—երկաթաթև, սրընթաց.—
Լսիր ձայնը արդարության, օ՜, Պերզ, և դու վախեցիր,
Մահացու գոռոզությունն փոքրի համար և մեծի,
Հեշտ չէ ապրելը նրա հետ, ծանր է նստում ուսերին,
Բայց երբ փորձանքը պատահի՝ հիմարը կհասկանա,
Մյուս ուղին հուսալի է, ուստի արդար եղիր դու,
Կսեվացնի միշտ արդարը՝ ամբարտավան գոռոզին,
Տուժելուց ետ՝ կհասկանա նույնիսկ հիմար գլուխը,
Որովհետև մահվամբ պատժող Օրքսոն իսկույն կհասնի,
Կվերացնի վճիռն այնժամ և խարդախ և անարդար,
Քանզի ուղին արդարության անխոտոր է մշտապես,
Թեկուզ որքան ուզեն շեղել մարդիկ նրան իր հունից.
Եվ նա ով որ համառում է գործերի մեջ անօրեն՝
Ըստ արժանվույն հատուցում է Քրոնիդեսը նրան։

[ՀՈՂԱԳՈՐԾԻ Ա.ՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ]

Զևսին չերմորեն աղոթիր և աղոթիր Դեմետրային.
Որ հատիկները նրանց սուրբ լինեն հասուն և ծանր։
Աղոթիր, երբ ցանքի ժամին ձեռքըդ դնում ես խոփին

Երբ որ խթում ես եզների կողը փայտով սրածայր։
Անկարգ տղան՝ թռչուններին դժվարություն թող առթի,
Նա անկարգ չէ, երբ սերմացուն խորը ծածկում է հողով,
Մահկանացու մարդու համար օգտակար է առավել
Կյանքում կարգն ու ճշտությունը, անկարգությունը մինչդեռ
Վնասակար է առավել և մայր է չար բարքերի։
Արտում այնպես են հակվել հասկեր ծանրը և հուռթի,
Նման բարիք կցանկար օլիմպիականը միայն։
Այն ժամանակ, երբ փշոտ կանկառներ են ծաղկում պերճ
Եվ ամառվա հեղձուցիչ տոթն է կանգնած ամենուր,
Ծառին թառած ճպուռն է երգում մեղմ ու համաչափ
Այծերն արդեն մսեղ են, դինին խելառ ավելի,
Կանայք՝ ցոփ ու ցանկասեր, տղամարդիկ՝ թուլակամ,
Քանզի Սիրուսն անխնա չորացնում է նրանց խոնջ
Գլուխներն ու ծնկները, կիզում մարմինը նրանց,
Այն ժամանակ քեզ համար մի տեղ ճարիր զովասուն,
Կամ քարափի զովի տակ և պաշար տես Բիբլինյան
Ընտիր գինու ու ճարիր հաց ու գինի, և անկաթ
Այծի միս, կամ անտառի հյութիչ խոտը ճարակած
Հորթի միս, կամ առաջին ծին ունեցած այծի միս։
Եվ զովի մեջ, ստվերում, անհոգ խմիր թունդ գինին
Խորտիկներով կշտացիր՝ Ջեփյուռին դեմքդ տված,
Դիտելով ջուրը հոսակ, հավերժահոս աղբյուրի,
Երեք բաժին ջուր խմիր և միայն մեկը՝ գինի։

[ԶՄԵՌԸ ԲԵՈԹԻԱՅՈՒՄ]

Դեկտեմբերը շատ վատ է, ծանր է տավարի համար,
Վախեցիր դու նրանից և սարսափիր դժնաչար
Խիստ ցրտերից, հողմերից, որոնք ծածկում են հողը՝
Ամուր շերտով ծածկում են Բորեասի շնչով ցուրտ։
Նա գալիս է մեզ մոտ պաղ Թրակիայից հեռավոր,
Ուր նժույգներ են սնում, և խոր պատռում է ծովը,
Անտառներում շառաչում, ցնցում թումբ ու հարթավայր,
Եվ թռիչքի մեջ անսանձ շատ բարձրաբերձ կաղնիներ
Ու տարածուն սոճիներ է տապալում արգավանդ
Հողի վրա և հեռու հովիտներում լեռնային։

Եվ հեծում է քամու տակ անտառն ամբողջ ցնցահար,
Դողդողում են գազաններն իրենց պոչերը սեղմած
Ոտների պինդ արանքում, և դողդողում են նրանք,
Որոնք տաքուկ մուշտակներ ունեն իրենց հագներին։
Ապա խփում է նրանց, որոնք ծածկված են շատ թավ
Տաքուկ բրդով, բայց քամին, այդ ամենքին անտարբեր,
Թափանցում է պնդակազմ ցուլի կաշին հաստաբեստ,
Եվ անցնում է մարմնով մեկ երկարամազ այծերի։
Քամին սակայն չի կարող հողմահարել և սարսել
Ոչխարների հոտերը, քանզի գեղմը բրդաշատ
Սաղպում է, որ վազեն ծերերն ընդդեմ հողմերի։

[ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ԴԵՊԻ ԿԻՆԸ]

Հենց որ հասնես արբունքի՝ տունըդ իսկույն մի կին բեր.
Մինչ երեսունը՝ ուշ չէ, երբ անցավ՝ մի՛ դանդաղիր.
Երեսունը լրացավ՝ ամուսնացի՛ր, քանզի դա
Ժամանակն է լավագույն—հասուն մարդու համար միշտ։
Թող աղջիկը նշանած մնա միայն չորս տարի,
Հինգերորդին՝ իրար հետ ամուսնացեք անհապաղ։
Կնության—կույս վերցըրու, նրան հեշտ է ներշնչել
Ազնըվություն ու պատիվ, և աշխատիր առնել դու
Նրան, որին դու գիտես, որ հարևան է մոտիկ։
Ամեն մի բան մանրամասն իմացիր դու, որ հետո
Հարևաններըդ մոտիկ քեզ չար ծաղրի չենթարկեն։
Լավ կնոջից ավելի լավ բան չկա աշխարհում,
Սակայն և վատ կնոջից ավելի վատը չկա,
Ջար, անզգամ և ագահ կինը ուժեղ մարդուն իսկ
Կրակի պես կվառի, կվռնդի, երբ ծեր ես։

[ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿՈՉ]

Աստվածները և մարդիկ իրավամբ են զայրանում
Նրա՛նց վրա, ովքեր որ բոռի նման ձրիակեր
Պառաղ թրև են գալիս—աչքն ուրիշի ձեռքերին,
Բո՛ւռ, որ անվում է հաշվին մեղուների ջանասեր։
Արդ՝ կատարիր գործերըդ ժամանակին եռանդուն,

Քո ամբարները այնժամ կպայթեն լի պաշարից.
Աշխատանքը մարդկանց միշտ նախիրներ է ընծայում
Եվ ունեցվածք է տալիս, պարգևում է ամեն բան։
Թե սիրում ես աշխատել՝ դու կլինես սիրելի
Աստվածների համար և շրջապատի մարդկանց ողջ,
Մինչ զզվելի կդառնաս դատարկապորտ մարդկանց դու։
Աշխատանքի մեջ չկա ոչ մի ամոթ ու պարսավ,
Պարապությունը սակայն ամոթալի է ինքնին։
Եթե աշխատում ես դու, այնժամ կդառնաս անպետք
Թե ծույլի և թե հարուստի նախանձանքի առարկան։
Իսկ հարստությունը քո ետևում է պատվավոր
Առաքինությունը, որ ամեն մարդուն չի տրված.
Թե ուզում ես վաղեմի երջանիկ կյանքն ետ բերել՝
Աշխատի՛ր միշտ և հեռու մնա այլոց բարիքից։
Անմտորեն ձգտելու ցանկությունից սրտակեր։
Սրդ, խորհուրդ եմ տալիս քեզ, քո ապրուստի մասին միշտ
Մտածիր խորն, ամոթը, որը վնաս է տալիս,
Բայց վնասի հետ մեկտեղ՝ օգուտներ է տալիս մեծ։
Ամոթը բաժինն է լոկ ձրիակերի, աղքատի,
Սակայն համարձակ է միշտ պարզ հայացքը հարստի։

[ՀՈՂԱԳՈՐԾԻ ՍՆԱՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ]

Վտանգավո՛ր է բույսերին վեցերորդ օրը, սակայն
Բարերար է սաղմնավորման աշխարհ եկող տղայի.
Վնասակար է այդ օրը կույսին—գնալ կնության,
Նույնպես, երբ նա հենց այդ օրը ուզում է գալ լույս աշխարհ։
Վեցերորդ օրն օգտակար չէ աղջիկներին, երբ նրանք
Բռնվում են ծանր երկունքով՝ ծնում տղա կամ աղջիկ։
Այդ օրը լավ է այծերը և ոչխարները բուժել,
Անասունը ճամփել նախիր, արածելու իր համար։
Այդ օրը լավ է, երբ տղան սաղմնավորվում է կյանքով,
Նա կսիրի հանաք ու խոսք և քչփչոց սիրային։

ՀՈՒՆԱԿԱՆ ԼԻՐԻԿԱ

ԱՆԱԿՐԵՈՆ

Հունական նշանավոր բանաստեղծ Անակրեոնը ծնվել է Իոնիայի Թեոս քաղաքում, 6-րդ դարի կեսերին (մեր թվարկությունից առաջ)։ Նա իր կյանքի զգալի մասը անց է կացրել տիրան Պոլիկրատեսի, ապա և Աթենքի տիրան Հիպարքոսի արքունիքում։ Ենթադրում են, որ Հիպարքոսի մահից հետո ապաստան է գտել Թեսալիայում։ Անակրեոնը մեռել է 85 տարեկան հասակում։ Անակրեոնը հռչակվել է որպես ծաղկի, սիրո և գինու ուրախ երգիչ։ Անակրեոնի սկզբունքն է եղել՝ քանի որ մարդը մահկանացու է, ինչքան կարելի է ավելի շատ վայելք ստանալ աշխարհից. հարստության մեջ նա ոչ մի հմայք չի տեսնում։ Նրա գործերից մեզ հասել են քիչ թվով լիրիկական բանաստեղծությունները և ֆրագմենտներ։ Հունական գրականության մեջ Անակրեոնին կարելի է համարել Լեսբոսյան լիրիկական դպրոցի տրադիցիաների ամենատիպիկ շարունակողը։ Հին ժամանակներում նրան համեմատել են Սաֆոյի հետ։ Անակրեոնի պոեզիան մեծ ազդեցություն է ունեցել ինչպես Ալեքսանդրյան էպոխայում, այնպես էլ եվրոպական նոր պոեզիայի վրա։ Նրա ազդեցությունը ուժեղացավ հատկապես վերածնության դարաշրջանում։

ՊԵՏՔ Է ԽՄԵԼ

Խմում է խոնավ հողը,
Խմում են ծառերը հողից,
Խմում են ծովերը օդից,
Ծովերից խմում է արևը,
Արևից խմում է լուսինը.
Ով կարող ինձ նախատել,
Որ ես էլ եմ ուզում խմել։

ԻՆՔՍ ԻՆՁ

Աղջիկները ինձ ասում են—
«Ծերացել ես, Անակրեոն,
Գլխիդ էլ մազ չի մնացել».
Ինչ հոգ գլխիս մազ կա թե չէ.
Երբ ծեր երգչի տարիքն անց է—
Սեր զվարճանք ավել պետք է։

ՔՆԱՐԻՆ

Կուզեմ երգել Ատրիդներին
Եվ Կադմոսին փառաբանել,
Բայց Բարբիտոն իր լարերով
Էրոսին է գովում սիրով.
Օրերս նորից ես լարեցի

Քնարը իմ քաղցրահնչյուն
Եվ ուզեցա պատմել մարդկանց
Ալկիդեսի սխրանքն անհուն,
Բայց քնարը իմ նոր լարած
Կրկին սեր է երգում տարված.
Ներիր հերոս իմ սիրելի,
Որ այսուհետ քնարը իմ
Միայն, միայն սեր կերգի

Ա Ղ Ջ Կ Ա Ն

Երբ հանդիպում եմ ես քեզ,
Դու ինչո՞ւ ես փախչում ինձնից,
Եվ քո գարնան արշալույսին,
Վախենում սպիտակ մազերից.
Ասի՛ր ինչո՞ւ դու չես սիրում
Կրակն ու կյանքը ծերուկի մեջ.
Նայիր ինչքան դյութանք ունի
Ծաղկեպսակն աննման,
Որտեղ կարմիր վարդերի հետ
Սպիտակին է տալիս շուշան:

ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ

Թե երբևէ հնար լիներ
Ոսկու ուժով մահը կանխել,
Ես շատ ոսկի կժողվեի,
Եվ երբ մահը դեպի ինձ գար,
Թող որ գանձս առներ գնար.
Բայց քանի որ անհնար է
Մարդու կյանքը ոսկով գնել,
Էլ ինչո՞ւ են հոգսերը մեր,
Ի՞նչ կարող է ոսկին անել.
Լա՞վ չէ խմեմ պուրպուր գինին,
Աֆրոդիտեն գիրկս առած
Մոնեմ փափուկ իմ անկողին:

ԿՈՒԶԵՍԻՆ

Ես հայելի կուզեմ լինել,
Որ իմ մեջը դու նայես,
Կամ պատմուճան կուզեմ լինել,
Որ ինձ հագիդ դու կրես։

Երբ մարմինդ լվանում ես,
Կուզեմ, որ ես ջուր լինեմ,
Կուզեմ, որ երբ քեզ օծում ես,
Անուշահոտ խեժ լինեմ։

Կուզեմ լինել կրծքակապդ,
Վզիդ՝ գոհար, անգին ակ.
Կուզեմ լինել ոտնամանդ,
Որ ինձ կոխ տաս ոտիդ տակ։

***

Չքանում են վշտերն իմ
Երբ ըմպում եմ ես գինի,
Չքանում են թե՛ հառաչանք,
Թե՛ տրտմություն, թե սև սուգ։

Ուզեմ չուզեմ
Պիտի մեռնեմ,
Էլ ինչո՞ւ եմ ես վարանում
Կամքիս ընտրած այս շավղից։

Օ՜ն, ուրեմն, ըմպենք նեկտար
Նեկտար զվարթ Բաքոսի,
Քանզի վիշտն իմ չքանում է,
Երբ ըմպում եմ ես գինի։

ՍԱՖՈ

Հունական բանաստեղծուհի Սաֆոն եղել է Լեսբոս կղզու բնակիչ։ Ապրել է 7-րդ դարի վերջերին և 6-րդ դարի սկզբներին (մեր թվարկությունից առաջ)։ Նրա գործունեությունը գլխավորապես անցել է Լեսբոսի Միտելեն քաղաքում։ Սաֆոյի գործունեության ժամանակաշրջանում սուր պայքար էր գնում արիստոկրատիայի և դեմոկրատիայի միջև։ Սաֆոն Լեսբոսի մի այլ բանաստեղծ՝ Ալկայոսի հետ միասին, որպես արիստոկրատիայի կողմնակիցներ, աքսորվել են Միտելեն քաղաքից և գնացել են Սիցիլիա։ Սաֆոն Լեսբոսում եղած ժամանակ գլխավորել է կանանց պոետական խումբը։

Նրա բանաստեղծությունների հիմնական թեման եղել է սերը, որը նա երգել է մեծ կրքոտությամբ։ Նրա բանաստեղծություններ ը ժամանակին կազմել են ինը գիրք, որոնց մեջ ընդգրկված են եղել տարբեր ժանրի և չափի շատ բանաստեղծություններ։ Սաֆոյի բանաստեղծություններից շատ քիչ բան է հասել մեզ, այն էլ մեծ մասամբ հատվածներ։

Ա Ֆ Ր Ո Դ Ի Տ Ե Ի Ն

Վեհ բարձունքից բազմագունյան դահույքի
Լուսյան մեջ նյութելով դավ խորամանկ՝
Մի քամահրիր իմ սրտամաշ թախծանքի
Ճնշված հոգուս քեզ աղերսող հառաչանք։

Օ, արի, եկ. չէ՞ որ և հին օրերին
Ունկդ արթուն՝ աղերսանքիս խոնարհած՝
Շանթ ընկեցի ապարանքն իսկ ոսկեղեն
Դու ինձ համար լքեցիր ու եկար ցած։

Տաորակների երամը ժիր քաջաթև
Թողրեց քո անվակառքը օդատար
Եվ եթերի կոհակները ճեղքելով
Նետի նման սուր սլացավ դեպի վայր։

Եվ ցոլալով անմահական քո գեղով
Անակընկալ դեմս եկար հարթըմնի,
Հարցրիր ինձ՝ արդյոք ի՞նչ է եղել ինձ,
Ինչո՞ւ համար կանչում եմ քեզ սրտալի։

Ասիր՝ «Արդյոք ի՞նչ ես հայցում ինձանից.
Գուցե անսեր մեկի սե՞րն է քեզ այրում,
Ո՞վ այդ համառն, ո՞ւմ ես պարում անցկալից,
Ո՞վ է, Սաֆո, դին չի դնում քո սիրուն։

Թող որ չունի սրտի մեջ քեզ նա հիմա,
Նա կսիրի խելակորույս քեզ մի օր.

Խորթանա թող—վերջը քեզ չի թողնի նա՝
Եթե անգամ ինքդ սառչես նորից նոր»։

Եկ ուրեմն, այժմ էլ արի, վեհանուշ,
Յրիր սրտիս անձուկները չարաղետ,
Եվ բաղձանքս դու ածելով ի կատար՝
Եղիր դաշն, հավատարիմ դու ինձ հետ։

***

Երջանկությունը աստծուն հավասար
Եվ խորն է թվում, երբ կողքիդ նստած
Մարդը լսում է ամեն հունչք ու բառ,
Զայնը քնքուշի, ծիծաղն հիասքանչ։
Այնժամ բաբախը սրտիդ դադարում
Կանգնում է մի պահ, և քեզ տեսնելիս
Թվում է թե ես ուժըս կորցընում
Եվ անգամ մի բառ լեզվիս չի գալիս,
Համրանում է նա իրեն կաշվի տակ,
Մարմընովս թեթև մի ջերմ է անցնում,
Դառնում են աչքերըս անընդունակ,
Իմ ականջները անվերջ զրնգում
Մի տաք քրտինք է գալիս ինձ վրա,
Մարմինըս սարսուռ—դողն է համակում,
Ու խամրում եմ ես, ուր որ է ահա
Հրաժեշտ կտամ ես ինձ այս կյանքում...
Հյուծիչ էրոսը կրկին տանջում ինձ,
Որպես քաղցր ու դառն անպարտելի օձ,
Եվ քո, զմայլված իմ շքեղությունից
Փայլով ոսկեզօծ՝
Աստս արևի ճաճանչը ամբիծ
Հմայում է ինձ։

***

Ես ունեմ մանկիկ մի հիանալի,
Ոսկե ծաղկի նման սիրելի
Իմ Բլեիդան։
Թող նրա համար տան ամբողջ Լիդիան,

Ո՛չ, համակ իմն է, իմն է սիրելի
(Լեսբոսը)։

***

Մահն ավելի հեշտ է թվում բաժանումից,
Հիշում եմ արցունքըս այն բաժանման ժամին,
Սիրալիր թոթովանքն ու գանգատները հեգ,
— «Սա՛ֆո, Սա՛ֆո, որքան դժբախտ ենք մենք,
Սա՛ֆո, ի՞նչպես, ինչպես բաժանվեմ քեզանից.. ».
Նրան, ի պատասխան, ասում էի այսպես.
— «Թող խինդը անբաժան լինի միշտ քեզանից,
Եվ մեր հիշատակը»։ Գուրգուրում էի քեզ։
— «Հիշելո՞ւ ես...այնժամ բոլորն հիշիր,—
Սփոփանքի ժամերն անդառնալի,
Հիշիր, թե ինչպես մենք, զվարճ ու սիրալիր,
Հիանում էինք այն գեղեցկությամբ,
Երբ մենք նստում էինք և միասին հյուսում
Պսակներ՝ վարդ ու մանուշակից,
Հյուսում հյուսքեր այն երփներանգ
Նորաբողբոջ, քնքուշ ծաղիկներից,
Քնքուշ վզիդ, որպես կենդանի զարդ,
Եվ մանյակներ՝ այնքա՜ն բուրումնալից
Բոլորը քե՛զ համար, օ՜, բոլորը,
Այն ծաղկանց մեջ, այնտեղ, այն զարնանը,
Շքեղ այն աշխարհում, որտեղ խոպոպների
Ալիքը լցնում էր քո կուրծը բուրմունքով,
Եվ օրը անցնում էր երգերով հեշտալի։—
Եվ ձեռքով քո սքանչելի
Ինջույքի թասն ինձ կերկարես,
Կլեցնեմ ես մեղր—ըմպելի
Ընկերուհուս թասի մեջ ես...»։

***

Պսակով ամփոփիր,
Ամոթխա՛ծ իմ,
Ալիքն հիանալի խոպոպներիդ։
Քնքուշ ձեռքով պոկիր

Քո պատկի համար
Թարմ հյուղեր ու սամիթ։
Որտեղ շատ ծաղիկ կա՝
Այնտեղ զվարճանում
Թնդում է դից սիրտը երանելի.
Իսկ նրանցից, ովքեր
Անպատկ են՝
Վանում են հայացքը աստվածների։

[ՊԱՏԱՍԽԱՆ ԱԼՔԵՈՍԻՆ]

Թե դեղեցիկ լիներ նպատակդ պահած՝
Թե քո ասելիքը ասելիր պարզապես՝
Ամոթից աչքերդ չէիր հառի դու ցած՝
Ուղղակի կասելիր ա՛յն, ինչ որ ուզում ես։

ԷՊԻԹԱԼԱՄԱՆՆԵՐ

(Հարսանեկան պարերգեր)

Է՛յ, առաստա՛ղ, բարձրացի՛ր,
Օ՛, Հիմեննե՛յ։
Ավելի բարձր, հյուսներ,
Օ՛, Հիմեննե՛յ։
Գալիս է փեսան—Արիոսի նման,
Նա բարձր է այսօր բոլոր մարդկանցից,
Նա բարձր է այնքան, որքան լեսբոսյան
Երկիրն է բարձրը այլ երկրներից։

***

Լուծված էր կաթսայի մեջ
Աստվածային ըմպելի.
Լցնում էր թասերն անվերջ
Ի պատիվ յուր հյուրերի
Հերմեսը—ժիր մատուռակ,—
Վեր պահած թասերը լի

Փեսայի կենաց նրանք
Խմում էին խմբովին։

***

Սիրելի մայր, դազդահը
Գարձել է ինձ գանելի,
Եվ գործելու ուժ չունեմ.
Սիրտս հույզն է խռովել
Վախարդել է ինձ ուժով

***

Ես ջերմ զգվա՛նք եմ սիրում,
Ջահելություն եմ սիրում,
Եվ խնդություն,
Եվ արև եմ սիրում ես։—
Եվ իմ սիրտը լինի թող—

Արևային լուսաշող.
Սիրահարի շքեղությամբ զարդարված
Ջգում ես ինձ մշտապես։

***

Աֆրոդիտեն քնքշադին։
Ծագեց լուսինը, աստղերը ելան,
Եվ կես գիշեր է թովչական ու վես։
Սպասումն այսօր անցավ ընդունայն,
Լուռ է իմ չորս դին, և մենակ եմ ես։

***

Ունքերդ կախում և իմ զգվանքին՝
Ջես պատասխանում նույնպես զգվանքով,
Այլոց ընծայում ես չքնաղ տաղեր,
Որ քո յոթնաղի քնարի քաղցրը
Հնչյունների տակ նրանց շուրթերը
Ծաղկեն, սակայն ինձ առիում ես միայն
Խորին թախծություն և սրտի նեղանք։
Իմ դառնակսկիծ խոսքերը թող քեզ
Վիշտ չպատճառեն։— Ես քեն չեմ պահում։
Մի՛ թունավորիր քո սիրտը բնավ։
Դու հասկացի՛ր ինձ, խաղաղություն եմ
Տենչում ես միայն...

ՊԻՆԴԱՐՈՍ

Պինդարոսը հանդիսանում է հունական լիրիկայի նշանավոր դեմքը։ Նա ծնվել է 521 թվին մեր թվարկությունից առաջ, Թեբեյ քաղաքի մոտերքում։ Նա եղել է հունական շատ քաղաքներում, ամենից շատ նա իր կյանքը անցկացրել է Սիցիլիայում, պոետներ՝ Սիմոնիդեսի և Բաքխիլիդեսի հետ միասին։ Նա գրել է բանաստեղծական տարբեր ժանրերով, ամենից շատ նա գործածել է օդայի ժանրը։ Մեզ հասել են Պինդարոսի 45 օդաներ։ Պինդարոսը մեռել է 441 թվին, հասնելով մեծ փառքի։ Պահպանված օդաներից երևում է, որ Պինդարոսը որոշակի հարել է տոհմատիրական արիստոկրատիայի գաղափարախոսությանը։ Իր ստեղծագործությունների մեջ նա մեծ չափերով օգտագործել է հունական դիցաբանությունը։ Սակայն հունական դիցաբանությունը դեռ Պինդարոսից շատ առաջ ենթարկվեց սուր քննադատության զարգացող գիտության կողմից։ Այդ հանգամանքը չէր կարող իր ազդեցությունը չունենալ Պինդարոսի ստեղծագործությունների վրա։ Այդ ազդեցության արտահայտությունը Պինդարոսի ստեղծագործություններում մեջ տեղ գտած դիցաբանության ռացիոնալիստական բնույթն է։ Սակայն ռացիոնալիզմը Պինդարոսի մոտ չոր չէ։ Նա կարողացել է հարուստ մտքերը արտահայտել պատկերավոր կերպով, տաղաչափական ցայտուն կառուցումներով և երաժշտականությամբ։

Լ. ԻՍԹՄԻԱԿԱՆ ՆԵՐԲՈՂ

[Թեբեացի Հերոդոտոսի կառիճ]

Ա.. ՍՏՐՈՖ

Մա՛յր իմ, բոլոր գործերից կնախընտրեմ քեզ համար
Աշխատանքը և նույնը ոսկեվահան Թեբեի.
Թող Դելոսը գահավիժ չղայլտանա ինձ վրա,
Թեև նրան ավելի պիտ հյուսեի երգըս վաղ։
Հորից, մորից ավելի ի՞նչն է թանկը այն մարդկանց,
Որոնց սրտերն ազնիվ են։ Հանուն նրանց՝ ե՛ս քաշվիր
Ապոլլոնի դու սովեր, երկու երգըս ահա ես
Վերջացնում եմ կամքով այդ աստվածների բարեհաճ։

Ա.. ԱՆՏԻՍՏՐՈՖ

Ով դանգրահեր Թեբեին եմ գովերգում պարի մեջ,
Գեղջուկների շրջանում, ուր Քեոս գետն է հոսում,
Ով պարանոցն Իսթմոսի՝ ալիքներով ողողված.
Նա վեց պսակ նվիրեց կադմեացոց աշխարհին,—
Հայրենիքին ի պատիվ—որպես ընծա հաղթական։
Այստեղ ծնվել էր որդին Ալքմենայի կուռ պողպատ։

Ա.. ԷՊՈԴ

Նրա առաջ սարսափած՝
Հերիոնի չար-կատաղած շների

Մաղերն իսկույն սուր կանգնեցին փշաքաղ։
Այժմ գովք եմ հյուսում ես
Քառաձի կառք ունեցող քաջ
Հերոդոտոս հերոսին։—
Նա սանձերն իր բաց չթողեց իր ձեռքից,
Ջվատահեց օտարների, և ահա
Ի տրիտուր, ես նրանց,—
Իոլային և Կաստորին ի պատիվ
Հիմն եմ հյուսում և գովերգում եմ նրանց։
Լակեդեմոն և Թերեն մեզ տվեցին
Հերոսներին այդ երկու,
Որոնք եղան կառավարներ հույժ ուժեղ։

Բ. ՍՏՐՈՖ

Առնում էին պարգևներ նրանք պեսպես խաղերում,
Նրանց փայլը զուգում էր, զարդարում էր ամեն տուն,
Նոոտանի և գավաթ, մարքուր թասերը ոսկյա.
Վաստակում էին նրանք, հաղթության բյուր պսակներ,
Ամենուրեք շողում էր փայլը նրանց քաջության,
Այնտեղ, մրցարանում, ուր մարդիկ էին մերկանում,
Ուր հոպլետները վազքի գնում էին հապշտապ
Վահաններով զինավառ։

Բ. ԱՆՏԻՍՏՐՈՖ

Այնտեղ, ուր նետում էին նիզակները սրածայր,
Կամ այնտեղ, ուր սլացնում սկավառակը քարե,
Չգիտեին խաղերում հինգ խաղը մեկ խաղ հաշվել,
Հատուկ պսակ կար ամեն մարդու համար մասնակից։
Հետո՝ երևում էին հոսանքի մոտ Դիրկայի,
Ծածկած իրենց գանգուրները սաղարթով խիտ ու թավ,
Հանգստանում այնտեղ, ուր ջուրն է հոսում Էվրոսի։

Բ. ԷՊՈԴ

Ո՜, դու, որդիդ Իֆիկլի,
Դու ծնունդըդ աշխարհին

Սպարտայի հարազատ։
Ո՜, Տենդարիտ, որ ապրում ես
Դու Տերպանում սրբազան,
Աքեական երկրի արանց շրջանում։
Ողջո՜ւյնս քեզ։ Իսկ հիմա
Կհյուսեմ մի ճարտար երգ՝
Քո մասին, ո՜վ Պոսեյդոն,
Ապա կրկին կհիշեմ
Իսթմոսը սուրբ,
Եվ քարափը Օնխեիստի կհիշեմ,
Հերոդոտոս, Ապսորիդոս այրերի
Պատվահարուստ հոր վիճակը կհիշեմ։

Գ. ՍՏՐՈՖ

Մի ժամանակ վերադարձավ նա դաշտավայրն հայրենի,
Եվ հայրենիքը ընդունեց նրան իր դիրկը մոր պես՝
Ջերմ պահելով ալիքներից և փորձանքից արյունոտ։
Այժմ բախտի դերերջանիկ, բարի հոսանքը նրան
Ահա մեզ մոտ է բերում։ Բայց մի անգամ տուժելով՝
Այնուհետև զգուշություն կպահպանի իր հոգում։

Գ. ԱՆՏԻՍՏՐՈՖ

Եթե ամբողջ ջանք-եռանդը նա սևեռի քաջության,
Չխնայած դրա համար ոչ մի ծախս ու աշխատանք,
Նրանք, ովքեր պիտի տեսնեն նրան ուժեղ և հզոր,
Եվ պատվարժան, նրանք պետք է չար նախանձը մոռանան։
Եվ իմաստուն արանց պարտքն է՝ աշխատանքի համար այդ՝
Բարի խոսքեր ասել նրան և նրա հետ միատեղ
Իրենց համար մի հուշարձան կանգնեցնել հար հավիտյան։

Գ. ԷՊՈԴ

Տարբեր մարդկանց համար միշտ
Քաղցր է լինում

Աշխատանքի յուր վաստակը սեփական։
Թե հովիվ, թե երկրագործ,
Թե թռչնորսը, և թե նա,—
Ով իր անունդը հանում է ծովերից՝
Այդ բոլորը միայն մի բան են խորհում,—
Ի՞նչպես քաղցը հագեցնել։
Սակայն նրանք, ովքեր որ
Խաղերում՝ ու մարտում փառք են նվաճում՝
Նրանց համար կա մի պարգև բարձրագույն,—
Եթե անունը նրանց
Հնչի իրենց երկրացի
Հնչի նաև օտարների շուրթերում։

Դ. ՍՏՐՈՖ

Սրդ՝ վայել է ինձ գովերգել երկիրն հիմքից
սասանողին,—
Բրոնոսի որդուն գովել, հարևանին մեր բարի.
Որ օգնում է վարել թափով կառարշավ ու ձիարշավ։
Ամֆիտրեոն, գովերգում եմ որդիներիդ ես հիմա,
Եվ խորանդունդ կիրճը ընկած ժայռերի տակ
Մինիայի,
Ելեվիոնան—Դեմետրայի ապաստանը պանծալի,—
Վայր էվբեյան խաղերի, վազքի ճամբան ոլորուն։

Դ. ԱՆՏԻՍՏՐՈՖ

Պրոտոսիլա՛յ, ես ծնունդն եմ աքայեցոց հզորազոր,
Կամփոփեմ ես գովքիս մեջ սուրբ տաճարը Ֆիլակի.
Թվարկել այն ամենը, ինչ հովանավոր Հերմեսը—
Հերոդոտոսին շնորհեց և իր ձիանց խաղերում
Երգն իմ այժմ չի կարող, փոքրիկ է չափը նրա։
Եվ հաճախ է պատահում՝ ինչի մասին լռում ենք՝
Հատկապես դա է բերում մարդկանց պայծառ
դովասանք։

Դ. ԷՊՈԴ

Հերոդոտոսն այժմ թող
Դեպի երկինք համբառնի՝
Սքանչելի թևերին
Պիերիդներ մուսաների քաղցրաչյա։
Թող պյութական խաղերից
Եվ ափերից Ալֆեյայի Օլիմպյան
Բերի պատիվ, պարծանք բերի
Յոթնդոնյան Թեբեին։
Թող ընտրադույն սաղարթով
Նրա ճեռքը դալարի,
Իսկ ով գաղանի հարստացած
Միծաղում է առատաձեռն մարդու վրա,
Նա դժոխքը մանելով՝
Բերնեբերան չի անցնի,
Այլ կմնա անփառունակ հավիտյան։

I. ՊՅՈՒԹԻԱԿԱՆ ՆԵՐԲՈՂ

[Էքենեյցի Հիերոնի կառին]

Ա. ՍՏՐՈՖ

Օ՜, ոսկի քնա՛ր։ Դու ընդհանուր բա՛խտ
Ապոլլոնի, որ դանդուրներ ունի մանուշակագույն.
Մուսաների բա՛խտ, դու, որ հիմունքն ես
Երգի և սկիզբն անհուն բերկրանքի։
Երգիչները հար հնազանդ են քո՝
Նրանց նվիրված նշաններիդ ողջ,
Հնչեղ թրթռում միմիայն դո՛ւ ես
Սկիզբ տալիս խումբը առաջնորդող
Նախերգողներին։
Մարում ահեղ լեզուն կայծակի, ցոլքը մարտական,
Բոցի բռնկոցը հավերժական։ Ննջում է նրա

Մականի վրա—արծիվը Զևսի,
Արագաթռիչ թևերը իրա
Իջեցնելով ցած—դեպի երկիրը։

Ա. ԱՆՏԻՍՏՐՈՖ

Թռչուններին տիրակա՛լ։ Թանձր քունը լցրեցիր
Նրա դլխին քո կատուցով կեռ ու կոր.
Քաղցր հայացքը փակեցիր քո ամրապինդ փականքով
Եվ նա, իր խոր քնի մեջ, տամուկ մեջքն է
բարձրացնում՝
Կախարդված քո երգերից։ Եվ ինքն, Արեսը ահա—
Հուժկու ռազմիկը երգով զվարթ սիրտն է ցնծացնում,
Հանկարծակի լքելով շարքը իր սուր տեգերի։
Աստվածների հոգին է թովչանքներով դերում նա,
Էգի նետը արձակված որդու վրա փարթամկուրծք
Լատոնի և Մուսաների Օլիմպյան։

Ա. ԷՊՈԴ

Իսկ նրանց, որոնց Զևսը չի սիրի,
Կդողան կանչը լսելով Պիերիդ
Մուսաների, որ արագ թռչում են երկրի վրայով,
Ինչպես և անդուսպ խոր ու անծավալ ծփուն ծովերով։
Նա է ամենից մեծը և ահեղ
Ով Տարտարոսն է գլորվել որպես
Հակառակորդը վեհ աստվածների,
Ինքը, Տիֆոնը հարյուր գլխանի,
Նա, որին դարեր դաստիարակել է
Հին քարանձավը Կիլիկյան լերանց,
Իսկ արդ՝ Կումայի ծովով ողողուն
Խոլ քարափներ են ճնշում ահռելի
Ուր որ սահմանն է ծանր ու թավամազ
Կուրծքը սիցիլյան։
Կբարձրանա այունը դեպի երկինք,
Ճողշողուն էթնան սառցադաշտերին

Սնարան դարձած՝ կշնչի երկար
Դեռ ձյունե մրրիկ։—

Բ. ՍՏՐՈՖ

Այնտեղ աղբյուրն է ցայտում յուր սրբազան
հոսանքով՝
Բոցաբորբոք ընդերքից անմատչելի և անմերձ.
Եվ հոսում են անընդհատ գետերն այնտեղ ցերեկով,
Եվ էթնան ծուխ է ժայթքում և լավա է ժայթքում անդ.
Որ դիշերով փայլում է ծիրանավառ ու պուրպուր.
Ամբողջ ժայռեր տեղահան, նա ահագնած աղմուկով՝
Գլորում է, շպրտում ծովի անդունդն անհատակ.
Հեփեստոսի գաղանն այդ դեպի վեր է ուղարկում
Սարսափելի մի հոսանք, որ արմանք ու զարմանք է
պատում բոլոր բոլորին, ով այն տեսնում է աչքով։
Արմանք զարմանք է պատում նրանց՝ բոլոր բոլորին
Ով այդ մասին լսում է հրաշալի զրույցներ։

Բ. ԱՆՏԻՍՏՐՈՖ

Նրա՛ն, ով որ պահակած է էթնայի բորբ կատարին
Թիատերև բարձրերից՝ բուն ստորոտը մինչև՝
Ժայռերի սուր ծայրերը պատռում են մեջքը նրա։
Օ՜, Զևս, եթե դուրեկան կարենայի լինել քեզ,
Քանզի դու ես այցելում նրա գագաթը բարձր,
Երկրների ճակատն այդ, որ հարուստ է ու փարթամ։
Արդ՝ հարևան քաղաքը նրա անվամբ է կոչվել,
Չի այդպես է ցանկացել քաջ կառուցողը նրա։
Չի մունետիկը այդպես տարածեց այդ անունը,
Մունետիկը Պյութիական խաղերի և հանդեսի,
Ուր Հիերոնը հաղթեց մրցավազքում ձիերի։

Բ. ԷՊՈԴ

Եթե մարդիկ հավաքվել են
Նավարկելու ծովի ճամփով հեռավոր,
Նրանց համար այդ խնդություն կլինի,

Եթե փչի այդ օր քամին ուղեկցող,
Այն ժամանակ նավարկումը
Հաջող ավարտ կունենա։
Դրա նման հաղթանակով
Տրված է մեզ ապագայի հաստատ հույս,
Որ մեր քաղաքը կլինի շատ հարուստ,—
Պատկերով ու ձիերով փառապանծ,
Խնջույքներում թնդաձայն
Գովաբանվի պիտի անունը նրա։
Դու Լիկխոցի ֆեբ, դու արքադ Դելոսի
Որ Կաստալյան սուրբ աղբյուրն ես սիրում դու,
Արդ՝ շնորհիր այդ երկրին—
Քաջագնաց մարդիկ հուժկու և արի։

Գ. ՍՏՐՈՖ

Աստվածների կամքովն է լոկ քաջությունը ողջ
մարդկանց։
Լոկ նրանցո՛վ են իմաստուն և նրանք են տալիս մեզ
Ջեռքերի ուժ ու կորով ու՝ բան ու բան բարձրարվեստ։
Արդ՝ ուզում եմ Պատնասին գովերդ ասել այսօր ես,
Համոզված, որ ուժգնապես պիտի նետեմ անտատան
Պղնձաշուրթ տեգը իմ։
Թող այն թռչի ավելի հեռուները, քան թե իմ
Ոսոխների նիզակները թափընկեց,
Ժամանակը վերահաս երջանկություն թող բերի
Այլ մարդուն և թող որ բերի հարուստ կյանք
Եվ կեցություն, իսկ վիշտ նա թո՛ղ մոռանա
առընդմիշտ։

Գ. ԱՆՏԻՍՏՐՈՖ

Թող հիշի նա, թե որքան ծանրը ռազմերթեր է վարել
Եվ մարտեր է վարել նա հոգով պինդ ու աննկուն.
Ի տրիտուր՝ բարձրադույն աստվածների կամքով վեհ՝
Արժանացել է կյանքում նա այնպիսի մի պատվի

Որին ո՛չ մի այր երբեք Հելլադայում ծայրեծայր
Դեռ չի եղել արժանի։—Նրան վիճակ է տրված
Փարթամ պսակ, հարստություն առավել։
Բայց արդ՝ մարտի դնալով, ճակատագիր կրկնեց
Ֆիլոկտետի և նրան իր գլուխը խոնարհեց.
Նա՛, ով հպարտ էր այնքան։ Համբավն ասում է սակայն
Իրենց ուժով հերոսներն հավասար են անմահ դից։

Գ. Է Պ Ո Դ

Հին ժամանակ այստեղ բերին Լեմնոսից
Ռազմիկ որդուն Պոանտի։
Տառապում էր ծանր վերքից,
Բայց և այնպես նետաձիգ էր պանծալի։
Դանայեցոց աշխատանքին
Նա վերջ տվեց, կործանելով հիմնիվեր
Պրիամոսի քաղաքը։
Մարմնով թույլ էր, բայց ընտրյալ էր բախտից։
Հիերոնի հետ թող լինի հար հավերժ
Ապագայում՝ մեծ աստվածը արարիչ,
Եվ թող նրան արարիչը միշտ բարի
Ու ցանկալի առիթ տա,
Որ նա հասնի ցանկությանը ամենքի։
Մուսա՛, գովերգ ասա դու
Դեչնոմենի տան պանծալի ճիանց աշխույժ քառյակին.
Չէ՞ որ երբեք խորթ չի հնչի
Հայրենական հաղթանակի բերկրանքը։
Արդ՝ սկսիր։ Թագավորին մեր էոնա
Երգեր հյուսեն և հղենք ջերմ ողջույններ։

Գ. Է Պ Ո Դ

Աստվածների կերտվածքը՝ այս քաղաքը պանծալի,
Ազատության հետ մեկտեղ՝ այր Հիերոնն հիմնարկեց
Որդու համար։ Պահելով նա ավանդները Հիլլի։
Չէ՞ որ սերունդը այժմյան,—Պանֆիլոսի սերունդը

Հերակլիտների ցեղից է, որ ապրում են Տայգիտի
Դափնիներին մերձակա, և որ ուզում են ընդմիշտ
Սուրբ պահպանել հնավանդ օրենքներից Դորիական,
Այնպես, ինչպես հրաման է տվել նրանց էդեմիան։
Մի ժամանակ նրանց ցեղին՝ երանելի Ամիկլը
Վերցրել էր իր հետ, երբ իջնում էր Պինդոսից։—
Եվ այդ պահից՝ այդ ցեղը դարձավ հպարտ հարևան
Որմիններին Տինդարի, որոնց նժույգն է ճերմակ,
Եվ մարտիկներն են զինված սուր տեգերով պղնձյա։

Դ. ԱՆՏԻՍՏՐՈՖ

Ջև՞ս արարի՛չ։ Բոլոր մարդկանց, որ ապրում են
Ամենի
Հոսանքի մոտ, տերերի հետ՝ երջանկության պարգևիր։
Որպեսզի խոսքը ճշմարիտ գովաբանի ամեն տեղ
Նրանց, և Թող Հաստատուրեն առաջնորդող քո ձեռքով
Եվ մշտական քո օգնությամբ այր-իշխանը Թող վարի
Ժողովրդին—խաղաղության և համերաշխ կեցության՝
Պահակելով նրան պատվի և հարգանքի պահակով։
Թող, որ իր տներում մնա նորից Պունիացին
Որպեսզի կանչն ռազմական լռի ընդմիշտ, և հիշեն
Բազմահատաչ մարտը այն՝
Ծովի վրա Կումայի։

Ե. ԷՊՈԴ

Ի՛նչ քաշեցին նրանք այդ օր իսկապես,
Երբ առաջնորդը սիրակուզցոց հանձնեց
Նրանց ծաղկող ջահելությունը նավից՝
Ծովի խորունկ անդունդին,
Սարկության շղթաներից Հելլադային փրկելով։
Արդ՝ կուզեի Սալամինը գովերգել՝
Մեթենալով աթենացոց որպես մոտիկ բարեկամ.
Երբ հյուսելով Սպարտային,—
Կիթերոնի մարտի մասին հիշելի,

Որտեղ նրա առաջն ընկան
Լիդիական նետաձիգները ճկուն ու կորաղեղ։
Թող թնդա ափին Հիմերայի ջրառատ,
Դեյնոմենի որդիների քաջաձեռ
Հաղթանակի նոր դովքով։
Իմ այս երգը հանուն նրանց թող լինի
Հստակ պարգև ու պատիվ,
Որոնք փախուստի մատնեցին ջոկատները ոսոխի։

Ե. ՍՏՐՈՖ

Եթե երգըդ խելացի է և դրված է ճաոիդ մեջ
Շատ գործերի դովասանք, այնժամ քեզ քիչ կդիպչի
Խծբծանքը մարդկային։
Լսողությունն հագենալ կարող է միշտ ամեն ժամ։
Բռնկումն է մարում շուտ արագախառ հույսերի
Հաճախ ճնշում գաղտնաբար, մարդու հոգին բզկտում,
Ի լուր նրանց, իհամբավ օտարների այլացեղ։
Այսուհանդերձ՝ լավ է միշտ ենթարկվել չար նախանձի,
Քան թե դառնալ առարկա կարեկցության ու պութի։
Բարուն ձգտիր մշտապես, ժողովրդին վարիր դու
Արդար ղեկով և առանց սուության ու կեղծիքի՝
Եվ կոփիր միշտ քո լեզուն
Ճշմարտության զնդանին։

Ե. Ա.Ն Տ Ի Ս Տ Ր Ո Ֆ

Եթե նույնիսկ դու մի փոքր նահանջես,
Ապա այդ քեզ ավելի շատ կհամարեն շաոերը։
Դու շաոերի պահապանն ես։
Եվ վկաներ շատ կան արդ՝
Արարքներին քո բոլոր,
Որոնք եղել են թե՛ բարի և թե չար։
Եղիր բարուն հավատարիմ, խա՛նդ զարթեցրու
հավիտյան։
Թե ուզում ես բարի համբավ վաստակել,

Առատաձեռն եղիր միշտ։
Ձեկավարիր նավը դու՝
Քո սեփական առագաստը լցնելով
Քամիով քեզ ուղեկից։
Բանսարկությունը նրանց, որ օգուտ են սպասում՝
Մի՛ հավատա, բարեկամ,
Մի հավատա երբեք փառքին հետ մահվա։

Զ. ԷՊՈԴ

Միայն վաղուց հեռացած
Մարդկանց ուղին կարող է
Ի ցույց հանել երդիչներին,
Բացահայտել նրանց, որոնք տարեգիրներ են հմուտ։
Կրեսոսի ջերմ գգվանքի համբավը
Կենդանի է մինչ հիմա։
Նա՛, ով սրտով անողոք էր, նա՛ ով այրում էր
մարդկանց
Պղնձակերտ ցուլի մեջ՝ դա Ֆալարեան էր, որի
Վատ համբավն է տարածվել,
Որի անունը չի հնչում տներում,
Ջահելների խնջույքների մեջ ցնծո՛ւմ։
Հաջողություն վաստակելը՝ դա պարգևն է առաջին։
Երկրորդ շնորհքն է—կյանքում բարի համբավ
վաստակել։
Եվ նա, ով որ դրանք արդեն ստացել է և հասել՝
Արժանացել է նա արդար ու բարձրագույն պսակին։

ԷՍՔԻԼԵՍ

Հունական մեծ ողբերգու Էսքիլեսի գործունեությունը ընկնում է 557—524 թվերին (մեր թվարկությունից առաջ)։ Նա ծնվել է Հունական Էլևսին քաղաքում։

Ինգելսի բնութագրությամբ Էսքիլեսը տրագեդիայի հայրն է և վառ արտահայտված տենդենցիոզ բանաստեղծ է։ Իր ստեղծագործություններում դիցաբանական կերպարների միջոցով Էսքիլեսը արտացոլել է աթենական Պոլիսի ծաղկումը։ Նրա քննության հիմնական պրոբլեմներն են՝ պետության հարցը, տոհմական տրադիցիաների հարցը, մարդու և ճակատագրի, փոխհարաբերությունը, մարդու և բնության փոխհարաբերությունը և այլն։ Էսքիլեսը առաջադիմական դրող է։ Վերջնականապես չազատվելով տոհմական դաղափարախոսությունից, այնուամենայնիվ նա մերժում է տոհմական կացության մի շարք հակահումանիստական կողմերը։ Նա կանգնած էր դյուղական պարտիայի (որին գլխավորում էին այսպես կոչված էվպատրիդները) կողմը և պայքարում էր առևտրական փողային դասի դեմ։ Նա իր ամենավաղ տրագեդիայում՝ «Աղաչողներ»-ի մեջ դուրս է գալիս տոհմական ամուսնական նորմաների դեմ։ «Պարսիկներ» ողբերգությունում արտահայտված է Էսքիլեսի ջերմ հայրենասիրությունը։ Պետականության և հայրենիքի պաշտպանության գաղափարը հանդես է գալիս և նրա «Յոթը Թերևի դեմ» դրամայի մեջ։ Էսքիլեսը համաշխարհային գրականությանը հայտնի է և իր նշանավոր «Պրոմեթևս» տրիլոգիայով, որտեղ պատկերված է տիտանի պայքարը ամեն տեսակի բռնության դեմ, հանուն կուլտուրայի և լուսավորության տարածման։ Ավելի ուշ շրջանին է պատկանում տրոյա-

կան անցքերից վերցրած մի տրիլոգիա «Օրեստեա» խորագրով, որի մեջ մտնում են «Ագամեմնոնը», «Խոյեֆորի» և «Էվմանիդներ» դրամատիկական գործերը։ Այս տրիլոգիայի մեջ նկարագրվում է մայրիշխանության և հայրիշխանության պայքարը և վերջինի հաղթանակը։ Էսքիլեսը գրել է մոտ 70 տրագեդիա, որոնցից մեզ հասել է միայն յոթը։

240—6

ՊՐՈՄԵԹԵՎՍԸ ՇՂԹԱՅՎԱԾ

(Բռնությունը, Իշխանությունը և Հեփեստոսը խարշ տալով բերում են շղթայված Պրոմեթևսին)

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Արդեն հասանք մենք հեռավոր ծայրն աշխարհի,
Սկյութական երկրի մեջն ենք ամայի։
Դո՛ւ, Հեփեստոս, պիտ կատարես Զևսի վճիռն.
— Պետք է այստեղ այս գոռոզին գամել պողպատ շղթաներով
Եվ ամրապինդ կապանքի մեջ բարձր ժայռին զառիվայր.
Քանզի իրոք նա գողացավ ու պարգևեց մարդկության
Քո հուր-կրակը շողշողուն,— քո վառ պսակն, հիմքն արհեստի.—
— Թող սովորի առմիշտ հարգել Զևս աստծո իշխանությունն
Եվ դադարի այսուհետև սիրել մարդկանց։

ՀԵՓԵՍՏՈՍ

Իշխանություն և Բռնություն,
Դուք կարգացիք Զևսի վճիռն ահավոր,
Եվ այդ գործում ոչ մի արգելք ձեզ չեղավ։
Մինչ ես ահա տատանվում եմ,
Ի՞նչպես, ավա՜ղ, ես հարազատ իմ աստծուն
Այստեղ գամեմ փոթորկի դեմ բաց այս ժայռին։
Բայց պետք է որ հնազանդվեմ,
Քանզի չէ՞ որ զարհուրելի գործ կը լինի,
Եթե թողնեմ իմ հոր վճիռն անկատար։

(Դիմելով Պրոմեթևսին)

Ո՜վ գերիմաստ, հզոր զավակ բարեխորհուրդ Թեմիդի,
Ես ակամա այս անխորտակ շղթայով
Պիտ քեզ դամեմ այստեղ՝ ժայռին այս ամայի,—
Որ դու երբե՛ք մարդու երես չտեսնես, ձայն չը լսես։
Այստեղ, հավերժ հրատոչոր ճառագայթովն արևի
Դու կը փոխես գույնը մաշկիդ։ Իսկ դիշերը,— քեզ իբր հաճույք
Լույսն արևի կը պարփակի յուր մթնագույն քողի տակ,
Որից հետո այգացողը՝ ցրիվ կը տա ինքն արեգակ։
Միշտ, հանապազ քեզ պիտ մաշի տանջանքի բեռն ահավոր,
Քանզի իրոք դեռ չի ծնված քո փրկիչը մեծահաղթ։
Արդյունքն է սա քո մարդասեր և մեծ գործի.—
— Ինքըդ աստված,— աստվածների զայրույթն հուզած,—
Դու մարդկության շահն հարգեցիր չափազանց
Եվ փոխարենն, իբր հատուցում, դու կը դառնաս պահապան
Այս ամայի, տխուր ժայռին հավիտյան,—
— Հավերժ անքուն և միշտ կանգուն, ծունկ չը ծալած
Պիտ արձակես բյուր-բյուրավոր հեծեծանք,
Եվ չի լինի, ավա՜ղ, երբեք վերջ ու սահման քո տանջանքին։
Մինչդեռ Զևսի սիրտն է դաժան և անողոք,—
— Ժանտ են տերերը նորագույն իշխանության։

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ ես իզուր տրտնջանքով դու դանդաղում.—
Մի՞թե իրոք ատելություն դու չես զգում դեպի սա,—
— Անմահների թշնամագույն այս աստվածն,—
Որն հանդգնեց քո պարգևը գողանալ։

ՀԵՓԵՍՏՈՍ

Մեծ է, այո, և ազդեցիկ
Զորությունը ազգականի և ընկերոջ։

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Ճշմարիտ է։ Սակայն Զևսի հրամանն է ահավոր,
Իսկ խախտումը նրա կամքի՝ զարհուրելի կը լինի։

ՀԵՓԵՍՏՈՍ

Դաժա՜ն ես դու և վիսությամբ միշտ լցված։

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Անիմաստ են այստեղ տրտունջ և հառաչանք,
Որոնք բնավ օգնել սրան չեն կարող,
Ուստի և դու մի աշխատիր ունայնաբար։

ՀԵՓԵՍՏՈՍ

Ո՜րքան, ավա՜ղ, ատելի է ինձ համար
Այս արհեստն իմ անիծված։

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ ես իզուր զղվանք տածում դեպի արհեստն,
Ճիշտը ասած՝ արհեստն այստեղ ամենևին մեղք չունի։

ՀԵՓԵՍՏՈՍ

Բայց երանի՜ արհեստը այս մեկ ուրիշին վիճակվեր։

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Բոլոր անմահ աստվածները ծանրը բեռներ ունեն միշտ,
Զևսն է միայն, իբրև իշխող հայր աստված,
Աշխատանքից միշտ ազատ։

ՀԵՓԵՍՏՈՍ

Ես այդ գիտեմ, ուստի քեզ հետ այդ առթիվ
Վիճաբանել չեմ ուզում։

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Եթե գիտես՝ գործդդ արա
Եվ շտապիր շղթաներն այդ ամրացնել,
Որ Զևսն այստեղ քեզ չը տեսնի դանդաղելիս։

ՀԵՓԵՍՏՈՍ

Տե՛ս, պատրաստ են, ահավասիկ, կապանքները ձեռքերին։

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Դի՛ր ձեռքերին և կռանով մեծազոր
Ջա՛րկ ուժգնակի ու պինդ գամիր այս ժայռին։

ՀԵՓԵՍՏՈՍ

Ահա պատրաստ է գործն արդեն,
— Ջանքս, կարծեմ, իզուր չեղավ։

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Ջա՛րկ և ձգի՛ր, որ այն երբե՛ք չթուլանա,
Ապա թե ոչ, նեղ տեղն ընկած, ելք կը գտնի,—
Քանզի չէ՞ որ վարպետ է նա։

ՀԵՓԵՍՏՈՍ

Մի ձեռքն արդեն գամված, մեխված է ամրակուռ։

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Եվ մյուս ձեռքը գամիր ուժգին,
Գամի՛ր այնպես, որ նա մնա անսասան,
— Թող հասկանա իմաստունն այդ,
Որ Ձևսն է միշտ աստվածներից իմաստնագույնն։

ՀԵՓԵՍՏՈՍ

Սակայն միայն սա՛ ունի
Ինձ, արդարև, կշտամբելու իրավունք։

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Վերցրո՛ւ, վերցրո՛ւ պողպատե սեպն
Եվ սուր ծայրով ուժգին գամիր կրծքի մեջ,
— Գամի՛ր ամուր և միջանցուկ։

ՀԵՓԵՍՏՈՍ

Ավա՜ղ, ավա՜ղ, Պրոմեթևս, ողբո՜ւմ եմ քեզ,
Քո ահռելի այդ տանջանքին նայելով։

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Նորի՞ց ես դու զուր դանդաղում.
Ո՞ւմ համար է այդ հառաչանքն.— հանուն Զևսի չար թշնամո՞ւ.
Զգո՛ւյշ եղիր, իմ բարեկամ, տես, որ հետո այդ առթիվ
Դու ինքըդ քեզ չը ողբաս։

ՀԵՓԵՍՏՈՍ

Ավա՜ղ, մի՞թե դու չես տեսնում, անզգա,
Սարսափելի՜ տեսարանն այս։

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Տեսնում եմ այդ և գիտեմ,
Արդարապես պատժված է նա ըստ արժանվույն,
Իսկ դու հիմա շտապ կապիր նրա կողքերն երկաթով։

ՀԵՓԵՍՏՈՍ

Հարկավոր չէ պատվեր տալ ինձ,
Ինքս գիտեմ իմ անելիքն առանց քեզ։

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Ո՛չ, չես կարող ինձ արգելել.—
Ահա, ես խիստ կաղաղակեմ, կը պատվիրեմ.
Շուտով, շուտով իջիր ցած,
Նաև ոտներն օղերի մեջ դիր ու կապիր։

ՀԵՓԵՍՏՈՍ

Էհ, ի՞նչ կա որ, կը կատարեմ նաև այդ,
Մեծ բան չէ դա։

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Զա՛րկ, որ շղթան ոտների մեջ վարսվի խորունկ,
Որ ծանրագին գործիդ մասին հաշիվդ տաս։

ՀԵՓԵՍՏՈՍ

Որքա՜ն նման է ձայնդ ժանտ կերպարանքիդ իսկական։

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Ժամանակ չէ քնքշության,—
Քեզ է հարմար քնքշանքն այդ,— իսկ պարծանքն իմ
Կամ դժնության բնույթի չհանդգնես կշտամբել։

ՀԵՓԵՍՏՈՍ

Գնա՛նք։ Արդեն շղթայված է նա չորս կողմից։

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

(Պրոմեթևսին դառնալով)

Ահավասիկ՝ դու հիմա
Ե՛կ, անպատվիր, գանձը շորթիր աստվածների,
Եվ այն, որ լավ հափշտակես, հանձնիր մարդկանց մահկանացու.
Տեսնենք ապա,— ի՞նչպես մարդիկ քո տանջանքը պիտ ամոքեն։
«Պրոմեթևս,—նախատեսնող» սուտ անուն են տվել քեզ.
Մինչդեռ հիմա քեզ է միայն հարկավոր
Մի այդպիսի «նախատեսնող», որ ցույց տար քեզ,
Թե ի՞նչպես դու դուրս պիտի գաս թակարդից։

(Հեփեստոսը, Իշխանությունը և Բռնությունը հեռանում են)։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Ո՜հ, դու, եթեր աստվածային, և դո՛ւք, պետեր հորդաջուր,
Հողմե՛ր, հողմե՛ր արագաթև և սրընթաց,
Դուք, ծովային ալիքների ծոր ու ծփանք բազմաբյուր,

Անմահ երկիր, կենդանության ամենամայր,
Եվ դո՛ւ, պայծառ, ամենատես շքեղ արև,
— Կանչում եմ ձեզ, իբրև վկա.— տեսե՛ք, ահա—
Ի՞նչ եմ կրում, ինքըս աստված, աստվածներից.
Գեթ ձեր հայացքն ուղղեք դեպ ինձ,
Նայե՛ք, տեսեք այս տառապանքն իմ ահավոր։
Եվ ո՞րպիսի ժանտ անարգանք պիտ հանդուրժեմ ես բյուր դարեր,
Ի՞նչ խայտառակ դաժան կապանք արդ հորինեց ինձ համար
Աստվածների նորածնունդ մեծ թագավորն։
Ավա՜ղ, ավա՜ղ, հեծում եմ ես և հառաչում դառնադառն,—
Այս իմ ներկա և ապագա տառապանքից անվախճան.
Արդյոք կը դա՞, ե՞րբ կլինի վերջ ու սահման իմ տանջանքին։
Բայց ի՞նչ եղավ,— ինչո՞ւ եմ ես այսպես խոսում։
Չէ՞ որ դալիքն ամբողջովին ես նախապես իմացա,
Չէ՞ որ չկա անակնկալ տանջանք ու փորձ ինձ համար,
Ուստի հեշտիվ պետք է տանել, պիտ հանդուրժել
Նախավիճակ ճակատագիրն և նրա ժանտ արարքները,—
Քանզի ճիշտ է և բացահայտ, որ անհրաժեշտն
Անխախտ է միշտ, անհաղթելի և անշեղ։
Բայց չեմ կարող ես ոչ լռել, ոչ էլ պատմել իմ վիճակն։
Տանջվում եմ ես, չարաբաստիկ, միա՜յն, միայն նրա համար,
Որ իսկապես ստեղծեցի անմահ բարիք մարդկության.
Կրակի բոցը շողշողուն,—աղբյուրն ամեն արվեստի,
Եղեգնի դոս ցողունի մեջ ես դողացա,—
Հուրն այդ դարձավ մարդկանց համար բարիքների նոր
ճանապարհ,
Ու կատարյալ մի ուսուցիչ նրանց բոլոր գործերում.
Մեղքըս ա՛յդ է, որի համար ահա այսպես շղթայակապ
Դատապարտված եմ այս պատժին ու կախված բարձր երկնքի
տակ։

Սակայն ավա՜ղ, ի՞նչ աղմուկ է լսվում հեռվից.
Կամ ի՞նչ անտես բուրմունք է սա։ Մա՞րդ է գուցե մահկանացու
Թե՞ մի աստված, որ գալիս է դեպի ժայռն այս հեռավոր.—
Ո՞վ է գալիս, որ զարհուրանքն իմ տանջանքի տեսնի այստեղ...
— Նայե՛ք, ավա՜ղ, նայեք դժբախտ, շղթայակապ աստծուն,
Որը միայն հանուն սիրո,— դեպ մարդկությունն հուզված սիրո—
Իշխանազոր Զևսին դարձավ դաժանպուրս թշնամի,

Դարձավ նաև միշտ ատելի բոլոր այն մյուս աստվածներին,
Որոնք Զևսյան ապարանքի հաճախորդներն են անմահ...
Ավա՜ղ, կրկին, կրկին ահա լսում եմ ես ինչ որ շարժում,—
Կարծես թռիչքն է այդ թևոզ, մոտ՝ սավառնող թռչունների,
Իսկ եթերում կան հնչյուններ հեռվից սահող թևերի.—
Վա՜յ ինձ, ավա՜ղ, ասա մոտեցող ամեն շշուկ, ամեն բան
Զարհուրելի է թվում ինձ։

(Հաճդես է գալիս օվկիանուհիների երգչախումբը՝ թևավոր կառքերի վրա)։

ԵՐԳԱԽՈՒՄԲ

Ստրոֆ 1.

Մի՛ վախենա, միա՜յն, միայն քո սիրույն
Մենք թևերով թեթևագույն
Թռանք, եկանք դեպ ամեհի ժայռը այս,
Համոզելով մեր հոր սիրտը հազիվհազ,
Արագահոս հողմի շունչը բերեց մեզ.
Ինդյունն, աղմուկը երկաթի խուժեց ներս
Խորքերի մեջ քարանձավի։ Եվ մենք բոբիկ.
Նույնիսկ ամոթն անտես արած, ահավասիկ
Կառքերի մեջ թևավոր
Թռանք եկանք դեպ քո վիճակն ահավոր։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Դո՞ւք եք, ավա՜ղ, ով դստրիկներ բազմազավակ Տեթյուսի,
Դո՛ւք, մանուկներ ավագագույն Օվկիանոսի,
Որ վիթխարի յուր հեղեղովն հորդաշունչ
Միշտ հոսում է, պտույտ գալով աշխարհի շուրջ։
— Նայի՛ք, տեսե՛ք,— ինչպես ահա շղթայակապ
Այս ժանտ ժայռին մեխված եմ ես խայտառակ,
Անդունդի մոտ թշվառաբար և անմերժ
Պիտ պահպանեմ ժայռի դագաթն ես հավերժ։

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Անտիստրոֆ 1.

Տեսա՞նք, տեսա՞նք, Պրոմեթևս թշվառ ու հեք,
Ու մեր աչքերն, արցունքով լի, քողարկեցին
Ահն ու սարսափն, ինչպես մեզ։
Տեսա՞նք, ինչպես խիստ չարաստանջ քո մարմինն
Տոչորվում է ժայռի գլխին խայտառակ,
երկաթաձույլ կապանքի մեջ դժընդակ։
Ալիմպոսում իշխում են այժմ նո՛ր տերեր,—
Զևսը բռնի հաստատել է նոր օրենք.
— Այն, ինչ իրավ մեծ էր առաջ,—վերացնում է հիմա նա
Եվ ոճրաբար ոչնչացնում է հին կարգերն անխնա։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Ա՛խ, երանի նա ինձ նետեր սանտարամեան անդընդից
Կամ դեպի տունը Հադեսի,—մեռյալների հյուրընկալ.
Կամ անխորտակ ժանտ կապանքով ինձ շղթայված
Թող նա նետեր դեպ տարտարոսը խավարչուտ,
Որպեսզի ինձ ոչ աստվածներն, ոչ մարդիկ
Ջահանեին, չը ծաղրեին այս ահավոր իմ տանջանքն։
Մինչդեռ հիմա, իբրև անբախտ և հողմերին խաղալիք,
Տանջանքներս զարհուրելի և անվերջ,
Ահավասիկ տառապում եմ եթերի մեջ,
Ինքս դարձած իմ թշնամուն մի բերկրանք։

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Ստրոֆ 2.

Աստվածներից ո՞վ է սակայն այնքան դաժան
Կամ քարասիրտ, որ քո տանջանքը ծաղրի հեգ.
Ո՞վ է այնքան ժանտ, անողորմ, բացի Զևսից,
Որ չդառնա այդ վիճակում քեզ կարեկից։
Զևսն է դառոզ, ծանրացաստում և անխնա

Այժմ կործանում հին սերունդը Ուրանոսի,
Եվ նա բնավ չի դադարի, մինչև սրտով չհագենա,
Կամ մինչև որ մեկն ու մեկն
Նրա ձեռքից իշխանության գահը կորզի։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Եվ թեպետ ես տանջվում եմ այժմ կապանքի մեջ ահավոր,
Բայց անկասկած ասուպածներին պլխավորող թագավորն
Մի օր խաստիվ պետք կունենա իմ օգնության,
Որ բաց անեմ ես դավանքը ուղղված նրան,
— Ջար դավանքը սպառնալից, ծանրագին,—
Մահ խոստացող մի օր նրա գավազանին ու գահին։
Որքան էլ նա այդ ժամանակ ինձ համոզի,
Որքան էլ պերճ ու մեղրահոս ճառեր խոսի,
— Թեկուզ ահեղ ինձ սպառնանք կարդա սեգ,
Ես չեմ վիշի, բաց չեմ անի գաղտնիքն երբեք,
Մինչև որ ինձ այս ժանտալի շղթաներից չը փրկի նա,
Եվ մինչև որ իզուր կրած տառապանքիս փոխարեն
Ինձ նա արդար հատուցում տալ չը կամենա։

ԵՐԳՉԱԽՈՒՄԲ

Անտիստրոֆ 2.

Համարձա՞կ ես, համարձակ ես դու իրավ,
Եվ աղետի հանդեպ դաժան՝ չես խոնարհվի դու բնավ.
Գիտես ճառել դու չափազանց ազատախոս,
Մինչ լցվում է վշտով, ահով մեր հոգին.
Երկյուղած ենք մենք սաստկապես քո վիճակի, քո մասին.
— Ե՞րբ պիտի գա վերջ ու սահման քո տանջանքի.
Եվ կարո՞ղ ես արդյոք անցնել դու դառնության ծովն անհուն,
Չէ՞ որ սիրտն է Քրոնոսյան մեծ զավակի
Միշտ անողորմ, չար ու դաժան և աննկուն։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Ջևան է, գիտեմ, ժանտաբարո, կամայական.
Նա յուր կամքը համարում է անշեղ օրենք, անձնիշխան.

Սակայն, կարծեմ, կը գա մի օր, երբ նաև նա,
Ճակատագրի ձեռքով պարտված, կը փափկանա.
Այն ժամանակ,— երբ մեղմանա նենգապատիր նրա քենն,
Մտերմական նա դաշինքի ձեռք կը մեկնի ինձ անշուշտ,
Իսկ ես նրան կընդառաջեմ, ապաքեն։

ԵՐԳԱԽՈՒՄԲ

Ուրեմն ասա՛, բացահայտիր ամեն բան,
Ու մեզ պատմիր մանրամասն.
— Ի՞նչ ծանրամեղ գործի համար, ի՞նչ առթիվ
Զևսն, անողորմ Քրոնոսյանն—
Լըլկում է քեզ այդքան ահեղ չարչարանքով.
— Պատմի՛ր, եթե ցավ չէ քեզ այդ կամ վնաս։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Ծանր է անշափ ինձ այդ մասին խոսել այստեղ,
Ծանրագույն է նաև լռել։ Խորն է վիշտը ամեն կողմից։
Երբ զայրագին աստվածները գժտվեցին իրար, ժանտալից,
Ու բորբոքվեց նրանց միջև կռիվն ահեղ,—
Ոմանք սրտանց Քրոնոսին կամեցան
Հաղթահարել և գահընկեց անել առմիշտ,
Որ նրա տեղ թագավորի Զևսը, իբրև գերակա։
Մինչդեռ ոմանք ջանում էին չճանաչել բնավին
Զևսին իբրև աստվածների մեծ արքա։
Անմահ երկրի և երկնքի հզոր զավակ տիտաններին
Ներշնչեցի այնժամ ես լավ, բայց անհաջող խորհուրդներ։
Սակայն նրանք լոկ ցանկացան սրտատենչ,—
Արհամարհած խարդախության միջոցներն,
— Իշխանության գահին ուժով տիրանալ։
Մինչդեռ մայրն իմ՝ երկիրն անմահ, վեհ Թեմիդն,
Որ բազմաթիվ անուններով է օժտված,
Ինձ շա՜տ անգամ զուշակել էր նախօրոք,
Թե ի՞նչ վախճան պիտ ունենա կռիվն այդ։
Մորըս խոսքով ևս գիտեի ճշգրիտ,
Որ հիրավի անհնար է աստվածներին

Հարթել ուժով դեմ-հանդիման, բացահայտ,
Այլ պիտ կռվել գաղտնի ու նենդ և խորամանկ։
Տիտաններին են պատմեցի այդ հանգամանքն.
Ավա՜ղ, նրանք գոռոզացած, ամենևին
Չը կամեցան նույնիսկ նայել ինձ համակիր։
Ուստի իմ մոր հետ միացած ուխտադիր՝
Ես գերադաս համարեցի ու լավագույն՝
Հոժարակամ լինել Զևսին օգնական։
Միայն այդպես, իմ խորհրդով իմաստուն
Զևսը հաղթել կարողացավ Քրոնոսին
Յուր բազմաթիվ այն դաշնակից մեծերի հետ,
Որոնց հետո անդուռ նետեց միասին
Դեպի հավերժ խավարամած սանդարամետն։
Ահավասիկ աստվածների երկնազոր տերն
Իմ այդ ազնիվ ծառայության փոխարեն
Մատնել է այժմ ինձ ահռելի այս տանջանքին։
— Չարակասկած լինել դեպի ընկերներն,—
Այդ ախտով է հաճախ հիվանդ բռնակալն,
Իսկ ձեր հարցին, թե ինչո՞ւ է դառնադառն
Նա ինձ տանջում,—ես ձեզ ասեմ պարզորոշ.—
Երբ որ Զևսը գահ բարձրացավ հաղթաբար՝
Անմիջապես աստվածներին նա բաժանեց
Առատաձեռն ամեն տեսակ ճոխ պարգևներ։
Եվ այդպիսով իշխանությունն իր հաստատեց։
Բայց անտեսեց նա մարդկային ցեղն անբախտ,
— Մարդկանց ոչինչ չշնորհեց և ավելին՝
Ուզեց ջնջել, ոչնչացնել ողջ մարդկությունն
Եվ փոխարեն ստեղծել նոր մի սերունդ։
Ոչ ոք դրան բացի ինձնից, չընդդիմացավ.
Այլ միայն ես հանդգնեցի հանդես գալ,—
Արհավիրքից ես փրկեցի ցեղը մարդկանց,
Թույլ չը տվի, որ նա իջնի տունն Հադեսի։
Եվ փոխարենն ես շահեցի տանջանք, պատիժն այս ահեղ,
Որի տեսնելն է զարհուրանք, իսկ կրելը է՛լ ավելի.
Ես մարդկության դարձա փրկիչ գորովադուրթ,
Բայց ինձ, ավա՜ղ, ես չը գըտա կարեկցություն։

Աստվածահայր մեծ թագավորն ինձ հետ վարվեց անագորո՞ւն,
Բայց տառապանքն իմ չարաշանջ Զևսին ամոթ կը բերի։

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Երկաթասիրտ պետք է լինի մարդն իսկապես
Կամ պիտի նա յուր կրծքի տակ քար ունենա,
Որ նա իրոք, Պրոմեթե՛ս, անկարեկից լինի քեզ։
Ա՜խ, երանի չը տեսնեինք քո տանջանքը դառնադառն,
Մինչ տեսնելիս խորտակվում են մեր սրտերը վշտահար։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Բարեկամներս, այո,
Անկարող են անվիշտ նայել այսպես ինձ։

ԵՐԳԶԱ՛ԽՈՒՄԲ

Սակայն ասա՛, դուցե դու
Կատարել ես էլ ավելին, քան պատմեցիր։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Ես բացի այդ՝ մարդկության
Պարգևեցի մոռացումը ժանտ մահվան։

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Ի՞նչպես արդյոք դեղը գտար այդ աղետի։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Մարդկանց սրտին ներշնչեցի կույր հույսեր։

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Դու արդարև՝ մարդկության
Շնորհել ես մեծապարգև շահ և բարիք։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Եվ բացի այդ՝ ես մարդկանց
Պարգևեցի կրակի բոցը փայլուն։

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Սակայն ասա՛,— ձեռքին մարդկանց կարճակյաց
Դեռ հուրը կա՞ շողշողուն։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Այո։ Եվ նա մարդուն կը տա բյուր արհեստներ։

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Ա՞յդ պատճառով դատապարտեց Զևսը քեզ։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Խոշտանգում է ինձ անողոք և անխնա։

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Ասա, արդյոք
Սահման ու վերջ քո տանջանքին կը լինի՞։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Ոչ, չի լինի,— մինչև որ նա այդ բանն ինքը կամենա։

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Ի՞նչպես սեթք է նա կամենա,— հիմք կա՞ արդյոք հուսալու.
Չե՞ս դիտակցում, որ դու իրոք սխալ ես.
Բայց սխալներն հիմա հիշել ցավ կը լինի քեզ սաստիկ.
Իսկ ինձ համար այդ կը լինի անախորժ։
Մի կողմ թողած հուշերը այդ, չե՞ս կարող դու
Մի ելք փնտրել ժանտ աղետից դուրս գալու։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Նա, ով զերծ է ժանտ աղետից
Կամ վիշտ չունի յուր սրտին,
Հեշտ կարող է տալ խորհուրդներ,
— Կամ քարոզել դժբախտին։
Ես նախապես լավ դիտեի այդ ամենն.
Այո՛, այո՛. նախահոժար
Մեղք եմ արել ու հանցանք.—
Ջեմ բացասում,— մարդկանց համար
Իմ օգնութ֊յամբ փրկիչ դարձա և ապավեն.
Եվ դրանով հորինեցի ես ինքըս ինձ
Ջարհուրելի և չը լսված տառապանքն։
Թեպետ բնավ չէի կարող ես սպասել
Ո՜հ, չարչարանքն այսքան դաժան ու ժանտալից,—
Նաև երբեք չէի կարող մտածել,
Որ պետք է ես ժայռի գլխին ամայի
Հալվե՜մ, հյուծվե՜մ և չորանամ անխնա...
Դադարեցեք ողբալ իմ վիշտն ու վիճակն,
Այլ իջե՛ք ցած, երկրի վրա, որ իմանաք
Գալիք անդեղ ճակատագիրն,
Եվ այն՝ ինչո՞վ այս ամենը կը վերջանա։
Հավատացե՛ք, լսեք խոսքերն իմ, ավա՜ղ,
Եվ միասին ապա ինձ հետ, որ խորունկ
Տառապում եմ չարաբաստիկ, տանջանք կրեք նաև դուք,
Քանզի աղետն է միշտ շրջիկ՝ մեկից մյուսին կանցնի հաճախ։

ԵՐԳ Ջ Ա. ԽՈՒՄԲ

Ո՜հ, մեզ համար քո կանչն ու խոսքն, Պրոմեթևս,
Վիրավորիչ չեն բնավին, և ահա տե՛ս,
Մեր կառքերից արդեն իջանք մենք թեթև
Ու թողեցինք եթերը ջինջ ու խորին,
— Թռչուններն պայծառ և նուրբ այն ուղին,
Եվ մոտեցանք, ահավասիկ, երկրին ժայռոտ,—

— Փափագում ենք քեզ լավ լսել մինչև վերջ,
Լսել սրտանց քո տանջանքը չարաղաժան ցավիդ մեջ։

(Հանդես է գալիս Օվկիանոսը հրեշակերպ
և բևավոր ձիու վրա)։

ՕՎԿԻԱՆՈՍ

Պրոմեթևս, այցելության քեզ եկա,—
Անցնելով մեծ ու հեռավոր ճանապարհն,
Եվ տես, առանց երասանի, ինքնաբար
Քշել դիտեմ այս դիշատիչ ժիր թռչունին։
Քո տանջանքին ցավակի՛ց եմ, հավատա,
Չէ՞ որ դու իմ ազգականն ես հարազատ։
Ազգակցության տենչը մի կողմ՝ բացի այդ,
Անկեղծ ասեմ, չը կա ոչ ոք, որին ես
Այնքան սրտանց, ջերմ սիրեի, ինչպես քեզ։
Ահավասիկ, կը հասկանաս դու իսկույն,
Որ իմ խոսքը ճշմարիտ է և իսկություն,
Որ շողոքորթ, ունայնախոս չեմ անգամ։
Հայտնիր շուտով, քեզ ի՞նչ է պետք, ի՞նչ օգնություն,
Որ էլ չասես, իբրև թե կա քեզ բարեկամ
Շատ ավելի ջերմ, հուսալի, հավատարիմ,
Քան ինքն է իսկ ծեր Օվկիանոսը մտերիմ։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Ի՞նչ եմ տեսնում,— եկար և դու, որ նայես ժանտ իմ
տանջանքին.
Ի՞նչպես եղավ, որ կամեցար թողնել հեղեղն համանուն,
Վամ ժայռապատ քո քարանձավն ինքնաստեղծ
Եվ գալ այստեղ երկաթածին այս երկիրն.
Երևի դու հապճեպ եկար, որ իմ վիճակը տեսնես՝
Եվ վրդովմունք հայտնես ընդդեմ չարչարանքին այս ահեղ։
Տե՛ս տեսարանն այս քո աչքով.— ահա Զևսի բարերարն,
Որը նրան իշխանության գահը տվեց մեծիմաց,—
— Զևսի կամքով այժմ ահա տառապանքի է մատնված։

ՕՎԿԻԱՆՈՍ

Տեսնում եմ ես, Պրոմեթևս, բայց կը ցանկամ քեզ լավագույն
Մի խորհուրդ տալ, թեպետ ինքըդ իմաստուն ես խորամիտ.
Քեզ դու ինքըդ լա՛վ ճանաչիր և բարքըդ Ծով գոռոզասիրտ.
Չէ՞ որ հիմա աստվածներին իշխում է նոր մեծ թագավոր.
Եթե այդպես դու շարունակ խոսքեր խոսես բիրտ ու վայրագ,
Այդ կը լսի Զևս թագավորն, թեպետ բարձր է նա բազմած,
Այն ժամանակ,— ինձ հավատա, տառապանքը քո նախորդ,
Տանջանքն անցյալ քեզ մանկական խաղ կը թվան։
Թշվառակա՛ն, զայրույթն ու կիրքն մի կողմ Ծով,
Եվ աղետից քեզ ազատող ելք որոնիր փրկության,
Գուցե և քեզ իմ խորհուրդը թվա նույնիսկ հնացած.
Բայց դու չէ՞ որ, Պրոմեթևս, արդեն փորձով հասկացար
Ամբարտավան լեզվի արժեքն իսկական.
Սակայն դեռ դու չես խոնարհվել և սովոր չես հեզության։
Մի՞թե իրոք փափագում ես էլ ավելի փորձանք շահել.
Արդ՝ հետևիր ուսանելի իմ խրատին,
Անպարտելի արդելքի դեմ աչքերըդ բաց,— իշխողն է, տե՛ս,
Միահեծան ժանտ թագավորն, որն ոչ ոքի չի ենթարկվում։
Ահավասիկ՝ ես կը գնամ և կաշխատեմ
Քեզ ազատել այդ տանջանքից, եթե միայն կարողանամ։
Իսկ դու գոռոզ խոսքերըդ Ծով, հանդատացիր, եղիր հեզ,
Եվ մի՞թե դու չես հասկանում, ամենաառաջ ով իմաստուն,
— Ի՞նչ վարձ ունի և կամ պատիժ ունայնախոս չար լեզուն։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Նախանձում եմ ես քեզ, ահա,
Քանզի քո դեմ առայժմ չկա մեղադրանք,—
Թեպետ ինձ հետ միաժամանակ
Դու հանդրգնող և մասնակից էիր արտանց։
Սակայն հիմա դու իմ մասին մի՛ հոգա.
Անկասկած է, Զևսին քնավ չես համոզի,
Հաստատամիտ, կամակոր է նա չափազանց։
Զգո՞ւշ եղիր, մի գուցե քեզ
Դու այդպիսով և այդ ճամփին վնասես։

ՕՎԿԻԱՆՈՍ

Քո խոսքերից և քո գործից եզրափակել կարող եմ ես,
— Դու ուրիշին ավելի լավ խրատ կըտաս, քան թե քեզ։
Մի խանգարիր դու ինձ բնավ, թող որ գնամ,
Քանզի հաստատ ես հույս ունեմ և խոսք կըտամ,
Որ, հիրավի, Զևսը իբրև մի պարգև ինձ
Քեզ կապատի դաժանագույն այդ տանջանքից։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Շնորհակալ եմ քեզ սրտով և կը մնամ շնորհապարտ,
Որ պատրաստ ես դու ինձ համար լինել անկեղծ հոգատար։
Բայց իմ մասին մի աշխատիր.— ջանքըդ, դիտեմ,
Իզուր կանցնի, թեկուզ գործի կամք ունենաս։
Հանգիստ եղիր և այս գործից հեռու կաց.
Դժբախտ եմ ես և իմ վիճակն է ծանրագին,
Բայց իմացիր. չեմ ցանկանա ես բնավ
Ուրիշներին դժբախտության ածիք տալ...
Ոչ, քավ լիցի։ Առանց այդ էլ տանջում է ինձ
Վիշտը եղբայր իմ Ատլասի, որն իր ուսին
Արևմտյան սահմանի մոտ պահում է մեծ մի ծանրություն,
Երկինքն-երկիրը բաժանող վիթխարի սյունն։
Ես սաստկապես ափսոսացի նաև ահեղ հրեշին,
Երկրի զավակ հաղթ Տիփոնին, որն էր հարյուր գլխանի
Բնակիչն էր կիլիկիական նա այրերի,
Եվ հաղթարար ապստամբեց ընդդեմ բոլոր աստվածների։
Նրա բերնից ահագնակի մահն էր ժայթքում շշալով.
Իսկ աչքերում շանթն էր շողում, ինչպես հուրը Գորգոնի։
Սպառնում էր նա յուր ուժով գահը Զևսի կործանել.
Մինչդեռ Զևսը ուղղեց դեպ նա հավերժ անքուն յուր սլաքն,
Զարկեց, դարձրեց կայծակնահար՝ շանթ-որոտով բոցաթույր
Եվ կործանեց նրան իբրև դոռոզ ու հեք սնապարծի։
Շանթ-սլաքը զարկվեց ուղիղ նրա սրտին,—
Այրեց այդպես, ոչնչացրեց ուժն հրեշի և կորովն.
Եվ նա հիմա յուր վիթխարի մեծ մարմնով, բայց ուժաթափ
Արդեն ընկած է ծովային նեղ ծոցի մոտ

Էթնա լեռան հիմքերի տակ, որի բարձր գագաթին
Հեփեստոսն է կռում, կոփում յուր երկաթը ատրաշեկ։
Սրդ՝ այնտեղից դուրս կը ժայթքեն բորբ կրակի հորդ գետեր,
Որոնք այնժամ իրենց վայրագ ծնոտներովն ահագին
Պետք է լափեն սիկիլիական լայնածավալ պերճ արտերն
Խիտ կատաղած կրակի մեջ հրատարած շանթերի։
Տիփոնն այնժամ ահագնակի կը բորբոքի յուր քենն ու ոխն,
Թեպետ Զևսի կայծակներով նա հրկիզված դարձել է հող։
Իսկ դու, չէ՞ որ ոչ անգետ ես, ոչ էլ անփորձ.
Միտք էլ չկա, որ ուսուցիչ ես դառնամ քեզ.
— Փրկի՛ր դու քեզ,— քո գլուխը, ինչպես գիտես։
Իսկ իմ բախտը մտադիր եմ ես սպառել,
Եվ տանջանքն այս պիտի կրեմ մինչև վերջ,
Քանի Զևսը յուր զայրույթին վերջ չըտա...

ՕՎԿԻԱՆՈՍ

Ուրեմն այդպես, Պրոմեթևս, չե՞ս հասկանում տակավին,
Որ հիվանդում հոգու համար բարի խորհուրդն է բժիշկ։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Ճիշտ է, այո, եթե միայն—
Վշտերով լի սիրտը բուժել ժամանակին,
Եվ չանարգել հպարտ հոգին կոպտաբար։

ՕՎԿԻԱՆՈՍ

Բայց ինձ ասա դու պարզորոշ.
— Ի՞նչ ես գտնում դու քեզ համար վնասակար,
Երբ պատրաստ եմ իրոք լինել քեզ հոգածու սրտագին։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Ավելորդ ջանք և միամիտ բարեմիտություն։

ՕՎԿԻԱՆՈՍ

Ա՛խ, երանի նաև ես
Գեթ այդպիսի հիվանդությամբ հիվանդանայի.
— Իմաստունն իսկ մեծ շահ ունի հիմար դառնալ շատ անգամ։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Եվ այդ մեղքը փաթաթեցին իմ վզին։

ՕՎԿԻԱՆՈՍ

Քո խոսքերից պարզ է ուրեմն, որ ե՞տ դառնամ ես դեպի տուն։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Որպեսզի քո ողբն ու ջայլանքն իմ մասին
Քեզ չը մատնի ժանտ զայրույթին։

ՕՎԿԻԱՆՈՍ

Նրա՞, որ նոր բազմեց գահին
Միահեծան իշխանության։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Զգո՞ւյշ եղիր, չը զայրացնես դու նրան։

ՕՎԿԻԱՆՈՍ

Քո արկածը, Պրոմեթևս,
Միշտ կը հիշեմ, իբրև մի դաս խրատիչ։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Գնա՛, խորհի՛ր, բայց պահպանիր
Զգացմունքդ դեպի ինձ։

ՕՎԿԻԱՆՈՍ

Նաև առանց քո խորհրդի
Պատրաստ էի ես ետ գնալ դեպի տուն,
Քանզի արդեն չորքոտանի իմ թռչունն
Ահավասիկ յուր առներով թակում է խիստ
Անեղը ուղին եթերի մեջ,— ուրախ է նա,
Որ շատ շուտով մեր տնային ախոռում
Պիտ վայելի յուր հանգիստն։

(Օվկիանոսը հեռանում է)։

Ստրոֆ 1.

Մենք ողբում ենք աղետաբեր
Քո սև բախտը, Պրոմեթևս.
Դառն արցունքի գետերը, տե՛ս,
Հոսում են հորդ, դառնավեր,
Ու մեր այտերն ոռոգում են վշտագին,
— Չէ՞ որ հիմա Զևսն է իշխում սոսկական
Ժանտ զորությամբ ինքնահավան օրենքի.
Բռնակալի պես է վարվում նա դաժան
Դեպի բոլոր մեր աստվածները նախկին։

Անտիստրոֆ 1.

Հեծեծում է ամբողջ երկիրը խստիվ.
Մեծածավալ, չեմառանդ
Ողբում են քեզ և քո պատիվն,
Եղբայրներիդ փառքն հնավանդ.
Արդ՝ ասիական բոլոր ազգերը սրբածես
Դառնակսկիծ ջայլում են քեզ.
Քո շարշարանքն աղետակոծ
Կարեկցաբար ողբում են ջերմ, սրտաճմլիկ,
Մահկանացու բյուր մարդիկ։

Ստրոֆ 2.

Ողբում են քեզ Կողքիս երկրի կույս աղջիկներ,
Որ կռվի մեջ քաջազոր են և անվեհեր.
Ողբում են քեզ և ամբոխներն սկյութացի,
Որ ապրում են հեռու, երկրի եղերքին
— Մեվոտական ծովախորշին դրացի։

Անտիստրոֆ 2.

Իրանցիներն, որ ծաղիկն են քաջության,
Եվ Կովկասի բարձունքներում լեռնաբնակ
Քաջակորով ազգերը վեհ,
Որ նետում են սրաթռիչ սուր նիզակ,
Սուգ են անում, արտոսրացայտ ողբում քեզ։

Ստրոֆ 3.

Մինչև հիմա մենք գիտեինք մեկին միայն
Աղետի մեջ,—երկաթաձույլ շղթայված.

Աստված է այդ, անարդ եղած հզոր տիտանն,
Որ ժանտասլի մեծ փորձանքի է մատնված.
Նա կռացած, յուր ուսերին պահում է միշտ
Երկինքն ամբողջ ու երկիրը ծանր ու խիստ։

Անտիստրոֆ 3.

Լալիս են խոր ծովի ալիքն ու անդունդ,
Որոտում են խորունկ խորքերն երկրի տակ,
Աղմկում է մութ Հադեսը թունդիթունդ,
Ջինջ ջրերը աղբյուրների և գետի
Հեծեծում են և լալիս
Դառն աղետը, չար տանջանքը դժբախտի։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Դուք չը կարծեք, որ լուռ եմ ես
Իբնահավան գոռոզության շնորհիվ.
— Խորտակվում է սիրտս ցավից,
Երբ տեսնում եմ ինձ անարգված, անպատիվ։
Բոլոր այս նոր աստվածներին
Ո՞վ էր բաշխեց պերճ պարգևներ, թե ոչ ես.
Բայց այդ մասին լավ է լռել և չպատմել
Այն, ինչ արդեն հայտնի է ձեզ։
Լանք սակայն, որ ձեզ պատմեմ դառնագին
Վիշտը մարդկանց մահկանացու.
Առաջ նրանք անմիտ էին, անհասկացող.
Ես դարձրեցի նրանց խոհուն և բանական։
Եվ ես հիմա հայտնում եմ այդ ոչ թե իբրև
Մի կշտամբանք մարդու ցեղին,
Այլ որ ցույց տամ բյուր բարիքներն իմ կատարած։
Առաջ մարդիկ տեսնող էին, բայց անօգուտ,
Քանդի տեսնել չէին կարող. լսող էին,
Սակայն բնավ չէին կարող նրանք լսել։
Ուղիղ ինչպես ուրվականներն երազում՝
Շրջում էին նրանք անփույթ ու քարշ գալիս։
Չը գիտեին պիրկ աղյուսից տներ շինել լուսաշող.
Չը գիտեին նույնիսկ արհեստն հյուսնական։
Արագաշարժ մրջյուններին միշտ նման

Ապրում էին այրերի մեջ միշտ գետնատակ,
Խավարատած և անարև։
Չէրս կարող զանազանել նշանները տարբերակի
Ոչ ձմեռվա, ոչ ծաղկափայլ գարունքի,
Ոչ պտղաբեր, ճոխ աստուղա, այլ ամեն ինչ
Կատարվում էր առանց պայծառ դիտակցության։
Մինչ ես նրանց ցույց տվեցի բարեգութ
Այգն աստղերի և մայրամուտն.
Ստեղծեցի նրանց համար թիվը, իբրև վեհ ուսմունք,
Հորինեցի ես այբուբենն, հիշողության սկզբունքն,
Որ աղբյուրն է և ծնող մայրն ստեղծագործ մուսաների։
Եվ նախապես իմ շնորհիվ անասուններն վայրենի
Ընտելացան իբրև լծկան, լուծ տանող,
Որ ծառայեն մարդուն նրանք, աշխատանքը հեշտացնող,
Երասաններ սիրող ձիանց իսկ արագ
Ես առաջին անգամ երկրում լծեցի կառք,
Որ պերճաշուք հարուստների զարդարանքն է հիմա ճոխ։
Ես էի լոկ, բացի ինձնից ուրիշ ոչ ոք,
Որ առագաստն հորինեցի մեծահոգ,
Նաև նավեր, ջուրը ճեղքող, ծովընթաց։
Ես՝ դժբախտս, ստեղծեցի այդ ամենն
Մահկանացու մարդուն օգուտ և ապավեն,
Մինչդեռ, ավա՜ղ, ես ինձ համար ոչ մի ճար
Չեմ գտնում այժմ և չը գիտեմ այդ բնավ,
Որ գեթ փրկվեմ այս աղետից դառնադառն։

ԵՐԳԸ ԱԽՈՒՄԲ

Այդ խայտառակ չարչարանքից, արդարև,
Դու կորցրել ես քո ճշմարիտ ճանապարհն,
Ինչպես երբեմն վատթարագույնն մի բժիշկ,
Որն իր հիվանդ մարմնի համար անզոր է իսկ
Գտնել դարման, կամ այլ բուժիչ մի հնար։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Լսե՛ք, լսեք, ձեզ կը պատմեմ բյուր այլ բաներ,
Որ առավել զարմանաք դուք.

Ո՞րքան, իրավ, մարդկանց համար
Հորինել եմ ես արհեստներ, հնարքներ.
Եվ ամենից կարևորը սա է հատուկ.—
Առաջ, երբ հիվանդանար մարդն հանկարծ,
Չը գիտեին, բնավ չը կար
Ոչ խմելու, ոչ քսելու դեղ ու դարման.
Եվ հիվանդը, տառապանքով թուլացած,
Մահանում էր առանց դեղի, անօգնական,
Մինչև որ ես ավեցի ցույցն ու խորհուրդ,
Թե հիրավի ի՞նչպես պետք է խառնել դեղերն
Եվ ստանալ միշտ հարկավոր նոր խառնուրդ,
Որ ճիշտ վանվի հիվանդությունն ամեն տեսակ։
Ես հիմնեցի դուշակության ձևերն, հնարքն,—
Եվ մեկնեցի տեսիլները երազադյուք,
Երազների նշանները հմայիչ,
Ճիշտ հայտնելով, ո՞րն է ուղիղ, ո՞րը սուտ։
Ես իմացա, ներշնչեցի մարդկության
Ճանապարհի բարդ նշաններն ու ցույցերն,
Կորամագիլ թռչունների թռիչքների մեծ իմաստն։
Ես իմացա, թե ո՞րպիսի կենցաղ ունեն հավքերն այդ,
Որո՞նք արդյոք բարեբեր են կամ չարագույժ.
Եվ որոնք են միմյանց հանդեպ սիրազեղուն կամ թշնամի։
Ես հիմնեցի բարդ ուսմունքը մարդկանց համար,
Ինչպես պետք է կատարել զոհն և սպանդն.
Իսկ կենդանու փորոտիներն ճանաչելու խելքի ուժն
Ես բաց արի, ցույց տվեցի գործը տեղին,
— Ի՞նչ գույն ունեն կամ ինչպես են լյարդն ու լեղին,
Եվ որոնք են աստվածներին հաճելի։
Միսը զոհի, նրա ազդրերը պարարտ
Ես այրեցի ու ցույց տվի դժվար արհեստը մարդկանց.
— Ի՞նչպես արդյոք պետք է մեկնել սուրբ կրակի նշաններն,
Մինչդեռ ոչ ոք այդ բանն առաջ չը գիտեր։
Այո, դրանք են գործերը իմ կատարած։
Եվ բացի այդ՝ ո՞վ կարող է հանդուգն ասել,
Որ մարդկային ցեղի համար օգտամատույց,
Հողոտմ թաղված ոսկին, պղինձն, երկաթն, արծաթ

Նա ինձանից ավելի վաղ է հորինել—
Մարդուն իբրև գերաշնորհ ուղեցույց.
— Կարծեմ ոչ ոք, երեւ միայն
Գոռոզանալ չը ցանկանան անապարծ։
Կարճ կարեմ խոսքս,— որ իմանաք ամեն բան.
— Արհեստները ամբողջովին, ուսմունքն ու ծես,—
Այդ ամենը՝ մարդկանց տվեց Պրոմեթևան...

ԵՐԳԱԽՈՒՄԲ

Պետք չէ բնավ, ոչ չափազանց, ո՜վ տիտան,
Մարդկանց համար լինես անվերջ օգտավետ.
Այլ միտք արա և մտածիր դու քո մասին,
Որ կաշկանդված ես փորձանքում բազմադեմ.
Հուսով եմ, երբ կապանքներից դու դուրս գաս,
Վե՜հ կլինես, հզորագույն, հաղթական՝
Աստվածահայր Զևսից ոչ պակաս։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Ո՛չ, բնավի՛ն, ճակատագիրն ամենազոր
Իմ վիճակը չի սահմանել դեռ այդպես.
Ո՜հ, բյուր տանջանք բազմաչարչար և աղետ
Պիտ հանդուրժեմ այս վիճակում տակավին,
Մինչև որ ժանտ այս կապանքից ես խույս տամ։
Բոլո՜ր, բոլո՜ր արհեստներից ու խելքից
Անհրաժեշտը ուժգնագույն է բյուր անգամ։

ԵՐԳԱԽՈՒՄԲ

Ո՞վ է սակայն Անհրաժեշտի դեկավարն։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Ճակատագիրն եռանձնադեմ,
Եվ բացի այդ՝ էրինները վրեժխնդիր։

ԵՐԳԱԽՈՒՄԲ

Բայց միթե՞ Զևսն աստվածահայր
Ավելի թույլ է նրանցից և անզոր։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Այո և նա անկարող է խուսափել
Ճակատագրից նախավիճակ։

ԵՐԳՉԱԽՈՒՄԲ

Բացի գահիցն հավերժացող իշխանության,
— Ի՞նչ է նրան վիճակվածք։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Հարց մի տվեք դուք այդ մասին, թողեք այդ։

ԵՐԳՉԱԽՈՒՄԲ

Հետևապես՝ գաղտնի՞ք է այդ մեծագույն,
Որ ցանկացար թաքցնել դու։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Ժամանակը դեռ չի հասել այդ բանի,
Դուք կարող եք այլ խոսք ասել,
Իսկ այդ մասին դուք հիշեցեք միայն գաղտ.
Մինչ գաղտնիքն այդ խորունկ պահված սրտիս մեջ,
Ես խույս կը տամ այս տանջանքից,
Այս ահռելի շղթաներից իմ անբախտ։

Ստրոֆ 1.

Թող որ հզոր աշխարհատերն ամենակալ՝
Զևսը բնավ ինձ հակառակ չը լինի,
Իսկ ես երբեք չեմ դադարի օրն ի բուն
Աստվածներին զոհեր բերել սիրակարոտ,
Եզներ զոհել պարարտագույն.
Իմ ծնող հայր Օվկիանոսի ջրերին մերձ,
Գոռոզամիտ խոսքերից զերծ
Ես բնավին չեմ մեղանչի
Եվ ուխտն այս սուրբ թող իմ սրտում չը հանդչի։

Անտիստրոֆ 1.

Քաղցր է անշափ կյանք ունենալ արևաշատ,
— Լի հույսերով քաղցր ու պայծառ խրախճանք.

Ես գուրգուրել, սնել բերկրանքն անընդհատ,
Որ նա շողա սրտին լույսեր ու փափագ։
Բայց դողում եմ ես սարսափից, տեսնելով քեզ,
Բյուրապատիժ աղետի մեջ դառնավեր.
Ջը դողալով, չը քաշվելով Զևսից անգամ
Մարդկանց դու խոր և չափազանց անձնվեր
Անհունաբա՜ր միշտ սիրեցիր, Պրոմեթևս։

Ստրոֆ 2.

Ավա՜ղ, դու իմ սիրազեղուն բարեկամ,
Գիտե՜ս արդյոք.—շնորհատուր քո բարությյան
Շնորհապարտ չեն լինի.
Կամ կարճակյաց մարդու սերը ի՜նչ գին ունի։
Մարդկանցից ո՜վ քեզ այժմ կօգնի ժրաջան։
Չե՜ս տեսնում դու մթին բնավ անընդունակ,
Հիվանդագին անզորությունը նրանց.—
Երազական տեսիլներին հանդուրնակ
Շրջում է կույր, շղթայակապ ցեղը մարդկանց։
Ո՛չ, չեն կարող մահկանացու մարդիկ երբե՛ք
Խախտել, շեղել Զևսի հիմնած կարգն ու օրենք։

Անտիստրոֆ 2.

Քո ժանտալի տառապանքը տեսնելուս պես .
Ես խորասույզ այդ հասկացա, Պրոմեթևս,
Ավա՜ղ, երգն այս բնա՜վ, բնա՜վ նման չի
Հարսանեկան այն նվագին երգիչի,
Որն հնչեցի սրտանց ես քեզ մի ժամանակ,
Քո հոյակապ ննջարանում նորապսակ,
Ուր աղջըկան մայրը լվաց բարեմիտ։
Երբ բերեցիր բազմատեսակ դու օժիտն
Եվ համոզվեց այն օր·մեր քույրն՝
— Մեր համահայր Հեսիոնն—
Քեզ ձեռք մեկնել, քեզ կողակից դառնալ կին։

(վազելազ և մոլեգնած ներս է մտնում
Իոն, որի ճակատին կովի եղջյուրներ)։

Ի՞նչ տեղ է սա, ի՞նչ ցեղ է սա, կամ ո՞վ է նա,
Արդ՝ հողմահար ժայռերի մեջ շղթայված,—
Որն այստեղից նայում է ինձ.
Ինձ ասացե՛ք, ավա՞ղ, նա ի՞նչ մեղքի համար
Չարչարվում է այդպես դամված
Այդքան դաժան ու անխնա։
Երկրե երկիր շրջելով հեք,
Ո՞ւր եմ եկել,— ինձ ասացե՛ք,
Կրկին խայթում է անբախտիս դաժան բոռն,
Հալածում է ինձ ուրվականն Արգոսի.
Ի՞նչ է, տեսեք, նայում նա դուռ,
— Ժանտ հովիվը հազար-հազար աչքերի տեր,
Տե՛ս գալիս է, աչքն ինձ ուղղած, նենգատատիր,
Նրան մեռած չի ընդունում յուր մեջն երկիր։
— Մինչ նա այդպես չարչարում է ինձ ահաբեր։
Գերեզմանից ու խորքերից անդունդի
Նա դուրս եկած՝ հալածում է ինձ անոթի
Այս ծովային լայն ափերովն ավազուտ։

Ստրոֆ

Երգ է հասնում իմ ականջին անխռով.
— Սրի՞նգն է այդ այն մոմակերտ եղեգնի
Ա՜խ, հնչում է ինչպես նվագ քնարեր...
Վա՜յ ինձ, ավա՞ղ,
Նա ո՞ւր եկա թափառելով, կամ ո՞ւր հասա,
Իսկ դո՛ւ, զավակ Քրոնոսի, դեթ ինձ ասա.
Ինչո՞ւ դու ինձ վիճակեցիր տանջանքն այս ժանտ,—
Ինձ, բոռերից սարսափահար ահաբեկված,
Ի՞նչ ես տանջում.—
Ո՞ւր է քշում խենթ աղջկան թշվառական,
Քեզ եմ կանչում,—
Դեթ կայծակով այրիր, ազա հրակեզ,
Կամ հողի տակ ինձ թաղիր։
Ինձ ծովերի խոր անդունդը դու նետիր,
Որ ձկներին այնտեղ ուտեստ դառնամ ես.
Լսի՛ր, լսի՛ր աղերսանքն իմ.

Անմահների աստվածահայր մեծ արքա,
Շատ եմ շրջել ես տանջահար,
Բայց չը գիտեմ ու չեմ տեսնում մի հանգիստ.
Ե՞րբ կը լինի, ե՞րբ կը լինի, ե՞րբ պիտի գա
Վերջն ու սահման իմ տանջանքին չարաչիտա,—
Արդյոք լսո՞ւմ ես աղերսը դառնադառն
Ջարաբաստիկ կով-աղջկա...

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Ի՞նչպես, ավա՞ղ, ես չը լսեմ բիրտ բոռերից
Խորունկ խայթված կույս աղջկան Ինաքոսի.
Որն իր սիրով բոցավառեց սիրտը Զևսի,
Ոստի նրան խանդոտ Հերան
Ամենուրեք հալածում է ժանտալից:

Ի Ո

Անտիստրոֆ

Դու ո՞րտեղից հորս գիտես, կամ ո՞վ ես դու,
Գեթ ինձ ասա, ո՞վ տառապյալ դառնավեր,
Որ այդքան ճիշտ և ազդու
Ինձ հայտնեցիր վիշտն ու աչեսն իմ ահարեր:
Դու լավ գիտես.— հայտնի է քեզ
Իմ ժանտաժուռ հիվանդությունն աստվածատուր,
Որ խայթում է կուրծքըս ահեղ,
Այրում ինձ բոցակեզ.
Ահավասիկ թափառում եմ ես ամեն տեղ,
— Վիշտս անվերջ ու անսահման, սիրտըս հուր:
Վա՛յ ինձ, վա՛յ ինձ.
Ոստյուններով գերաշարշար ու քաղցական
Իբրև շրջկեն այստեղ հասա ես արագ.
Ջար Հերայի ծանրացասում քենն է վայրագ,
Որ հալածում, խորտակում է ինձ դաժան:
Ավա՛ղ, ասե՛ք. կա՞ արդյոք
Մեկը ինձ պես այսքան անբախտ ու թշվառ:
Գեթ ինձ ասա՛ և պարզորոշ գեթ հայտնի՛ր.
— Դեռ մինչև ե՞րբ ես պիտ կրեմ տանջանքն այս.

Իմ ցավերին կա՞ մի դարման, դեղ ու ճար՝
Ցույց տուր, ասա, եթե դիտես.
Խոսիր շուտով, տուր պատասխան
Այս չարաբախտ և շրջմոլիկ կով-աղջկան...

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Ճշմարտացի ես քեզ կասեմ բացահայտ,—
Այն, ինչ իրավ դու իմանալ ցանկանաս.
Գաղտնիք, ակնարկ կամ կասկածանք թույլ չեմ տա ինձ.
Այլ ամեն բան քեզ կը պատմեմ անպակաս,
Ինչպես պետք է խոսքն հորդորիչ՝ բարեկամին.
— Ես եմ այստեղ, Պրոմեթևան,
Որ պարգևեց հուրն անբասիր՝ մարդկանց ցեղին:

ԻՈ

Ա՜խ, ապաբախտ Պրոմեթև՜ս,
Ո՞վ մարդկության մեծ բարերար, ինչո՞ւ ես դու
Այդպես կրում դաժանաբար
Տանջանքների ժանտ պատիժն այդ բազմաչարչար:

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Ես նոր այստեղ ավարտեցի ողբն աղետիս ամբողջովին:

ԻՈ

Բայց չե՞ս ուզում լինել նաև
Դու դեպի ինձ պարգևատու, ողորմած:

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Ասա միայն, ինչ որ իրոք կը ցանկանաս,
Ես ամեն բան բաց կանեմ քեզ:

ԻՈ

Ո՞ւմ պատվերն է արդյոք այդ,
Քեզ ո՞վ դամեց ժայռին այդպես:

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Կամքը Զևսի, նաև ձեռքը Հեփեստոսի։

ԻՈ

Ի՞նչ մեղք ունես, որ կրում ես այդ պատիժն։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Ես այդ մասին
Բավականին ադրեն այստեղ պատմեցի։

ԻՈ

Լսիր նաև դեթ մի խոսք.—
Ես ե՞րբ, արդյոք, պիտ դադարեմ թափառել.
Ե՞րբ կը լինի վերջն ու սահմանն իմ տանջանքի։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Բայց քեզ համար շատ ավելի լավ կը լինի,
Եթե քնավ այդ չիմանաս։

ԻՈ

Դու մի՛ ծածկիր,
Թեկուզ լինի այդ տանջալից մի գալիք։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Այդ պարգևը ահա ես քեզ անմերժ կըտամ։

ԻՈ

Էլ ինչո՞ւ ես դու դանդաղում,— պատմի՛ր, լսե՞մ ամեն բան։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Ուրախությամբ
Բայց մի՛ գուցե սիրտդ հուզվի, հեկեկա՞ս։

ԻՈ

Պատմիր խնդրեմ, և իմ մասին մի՛ հոգա։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Եթե այդ ես դու ցանկանում,
Ահավասիկ՝ ես կը պատմեմ, լսի՛ր ինձ։

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Ո՛չ, սպասի՛ր տակավին,
Թող ինքը դեռ փոքր ինչ հաճույք մեզ պատճառի
Եվ նախապես պատմի վիճակն իր ժանտալի,—
Թող յուր գլխով անցած ազետը ցույց տա
Եվ փորձանքը ամբողջ պատմի մեզ այստեղ,
Իսկ հետո դու պատմիր նրա գալիքն ահեղ։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Լսիր, Իո,—քո պարտքն է իսկ,
Որ դու սրանց այդ հաճույքը պատճառես,
Եվ մանավանդ, որ քույրեր են սրանք քո հոր.
Լա՞վ է, եթե յուր վշտերը լալիս է մարդ,—
Կամ ողբ անում այնտեղ միայն, ուր լսողներն
Պատրաստ են ջերմ կարեկցության արցունք թափել։

ԻՈ

Ես չը պիտեմ, ի՞նչպես պիտի մերժեմ ձեզ.
Ահա, պատմեմ ես պարզ խոսքով ձեզ ամեն բան,
Որ կամեցաք։ Ա՜խ, ամոթից և սրտակեզ
Լաց կը լինեմ ես վշտահար,— ավա՜ղ, վա՜յ ինձ,
Եթե պատմեմ աստվածատաք այն մորիկն,
Որն էությունն իր ջախջախեց դժընդակ,—
Այլև դեմքս այլանդակեց նա վայրագ։
Կախարդական վառ երազներն
Ներս խուժելով իմ կուսական ննջարանն,
Գիշերները գլխիս վերև սուրսուրալիս,

Խոսքեր էին ինձ փափսում միշտ քաղցրաձայն.
— «Ո՞վ երջանիկ, գեղեցկատեսիլ կույս աղջիկ,
Ի՞նչ ես մնում կուսության մեջ դու երկար,
Երբ վիճակված է մեծափառ քեզ հարսանիք.
Խոր տափանքի սուր սլաքով ցավագար
Խայթված է Զևսն աստվածահայր՝—
Եվ տենչում է անմահական յուր գգվանքի
Հավերժացող սիրով քեզ հետ միանալ։
Որդյա՜կ, Զևսի պերճ մահիճը մի ժխտիր,
Այլ սլացիր դեպ Լեռնևյան դաշտը պայծառ,
Ուր կան քո հոր ճոխ եղնանոցն ու նախիրն,
Այնտեղ, ահա, հաղուրդ կտաս Զևսի աչքին,
Նաև նրա սիրակարոտ վեհ ցանկությանն»։
Ինձ՝ անբախտիս, այդ թևավոր պերճ երազներն
Գալիս էին, հուզում էին ամեն գիշեր։
Եվ վերջապես հանդգնեցի ես մի օր
Գիշերային տեսիլների այդը պատմել իմ մեծ հոր։
Եվ նա հղեց աստվածաճառ շատ բանբերներ
Դեպի Պեթոն, դեպի Դոդոն, որ իմանա,
Ի՞նչպես վարվել։— Ի՞նչպես խոսքով կամ գործով
Գոհացում տալ աստվածների պահանջին։
Սուրհանդակներն վերադարձան ու հայտնեցին
Մութ, անորոշ և անհնար շատ-շատ բաներ,
Առեղծվածի պատասխաններ անիմաց։
Եվ վերջապես եկավ հասավ Ինաքոսին
Գուշակության բացահայտ խոսքը ոչ բարի,
Որն անկասկած խիստ պատվեր էր և հրաման.—
— Աքսորել ինձ հայրենիքից և մեր տնից,
Որ տարագիր և միշտ մենակ
Ես թափառեմ երկրե-երկիր երկնքի տակ.
Որ ես անվերջ շրջեմ, հասնեմ մինչ հեռավոր
Եվ ծայրագույն սահմաններն աշխարհի։
Սակայն եթե իմ հայրը այդ չը ցանկանա,
Զևսն հրաշունչ իր կայծակով պիտ հարվածի
Եվ խորտակի ցեղը նրա անխընա։
Արդ՝ ենթարկված Լոքսիասի գուշակման,

Հայրս տնից վտարեց աքսորանքի,
Բայց ոչ կամավ, այլ ակամա քանզի Ջևսի
Կամքն էր ահեղ, որ նրան խիստ սանձահարեց։
Այնժամ դեմքըս և իմ հոգին
Իսկույն, խստիվ այլանդակված, փոփոխվեցին,
Ու ես դարձա եղջյուրավոր,
Ինչպես ահա տեսնում եք ինձ ձեր առջև։
Ահավասիկ՝ բոռերի սուր խայթով խայթված,
Միշտ տարադիր, հալածական և մոլեգնած,—
Արագ, հոժկու ոտյուններով նետվեցի ես
Դեպի հեռո՜ւն, դեպի կերքինևը քաղցրաջուր,
Դեպ Լեռնևյան ջինջ աղբյուրն։
Մինչ ժանտ Արգոսը երկրածին,— աչքերն ահեղ,
Ինքը դաժան ու զայրագին, ինձ ամեն տեղ
Հետևում էր, իբրև հավերժ մի պահապան։
Մահը սակայն ոչնչացրեց հանկարծ նրան,
Իսկ ես, ավա՜ղ, խայթված խայթով ժանտ բոռերի,
Ահա այսպես թափառում եմ երկրե-երկիր,
— Միշտ մոլեգին,— գլխիս մտրակն աստվածների...
Անցյալը իմ-դու լսեցիր,— պատմիր հիմա
Դու իմ գալիքն ու աղետներն իր դուշակիր։
Սակայն իբրև ինձ կարեկից մի վկա
Սուտ խոսքերով զուր չամոքես,
Սուտ խոսելուց ավելի ցած և ստոր,
Եվ ավելի ամոթալի բան չկա։

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Բավական է, լռի՛ր, ավա՜ղ.
Երբե՛ք, երբե՛ք չէի կարծում բնավ ես,
Որ անսովոր քո պատմվածքը իսկապես
Պիտ վրդովի լսողությունն իմ խստիվ։
Այո՛, երբե՜ք չէի կարծում, որ անպատիվ
Քո տանջանքը դաժանագույն և ահեղ,—
Իբր ցրտաշունչ և սրասայր մի սսեղ—
Պիտ թափանցի մեր հոգու խորքը խոով...

Ճակատագի՛ր, ճակատագի՛ր,—ավա՛ղ, Իո,
Մենք սարսում ենք, քո վիճակը տեսնելով։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Վաղաժամ է ահաբեկման ձեր լացն ու կոծ,
Սպասեցեք, որ իմանաք մնացյալն։

ԵՐԳԱՀՈՒՄԲ

Պատմի՛ր շուտով և մի ծածկիր,
Քանզի հաճույք է իսկապես տանջվողին
Լսել գալիք աղետներն իր կանխաբար։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Արդ՝ ինչպես որ դուք կամեցաք, հնշումյամբ
Կատարեցի ես առաջին ձեր խնդիրն,—
Իսկ սա հիմա յուր խոսքերով պատմեց ձեզ
Անցյալ վիճակն իր մեծատանջ և չարաչար։
Լսե՛ք հիմա, թե այսուհետ որքա՞ն դաժան
Բազմատխուր չարչարանք է վիճակված
Ժանտ Հերայից՝ Թյվառադույն այս աղջկան։
Իսկ դու, դատրիկ Ինաքոսի,
Իմ խոսքերը ամուր պահիր սրտիդ մեջ,
Որ տանջահից թափառումիդ վերջն իմանաս։
Նախ՝ այստեղից կուղղվես դեպի արևելք
Եվ կրնթանաս դու դաշտերով անհեռի, անվար,—
Սկյութական շրջիկ ազգին կը հասնես,
Որն ապրում է գեղեցկանիվ, վերևն հյուսված
Սայլերի մեջ դյուրաշարժ,
Եվ զինված է աղեղներով հեռաձիգ։
Բայց այդ ցեղին չմոտենաս,
Այլ ալացի՛ր,—մի կողմ թողած նրանց երկիրն.—
Եվ մերձ անդիր դեպ այն ափունքն ու ժայռերն,
Ուր հնչում է բարձր ադաղակն ալիքների,
Ահավասիկ՝ այդ վայրերից դեպի ձախ
Վաղուց ի վեր բնակվում են խալիբներ.

Երկաթագործ են միշտ նրանք, բայց վայրենի,—
Անհյուրընկալ.— դու նրանցից խուսափիր։
Այնուհետև կանցնես դեպի դեպի Անզուսպ,
Որը այդպես արդարացի է կոչվում։
Այդ դեպի անցնել դու չըփորձես բնավին,
— Անանցանելի է իրոք նա և դժվարին.—
Այլ կը հասնես անդ Կովկասին բարձրադիր,
Որ բարձրագույնն է լեռներից։ Գնաս այդ վարար
Այնտեղից է ծնվում ցասկոտ և կորովի։
Արդ՝ անցնելով լեռնաբարձունքն երկնահաս,
Դու կը թեքվես դեպի հարավ և քո ճամփին
Կը հանդիպես բանակ զարկած ցեղն ամազոն,
Որն ապրում է Թեմիսկիրում,
Թերմոդոնդի ափերին մերձ.—(ամազոններն
Ատում են միշտ տղամարդկանց)։ Անդ Սալմեդեան
Դունչն իր ժայռոտ պիրկ ցցել է ծովի մեջ.—
Խորթ մայր է նա միշտ նավերին ծովադնաց,
Եվ ոխերիմ ժանտ թշնամի նավորդներին։
Ամազոններն ուրախությամբ ցույց կըտան քեզ
Ուղին դեպի կիմերական պարանոցն.
Այնտեղ մի անցք կա ծովային նեղ և անձավ.
Բայց դու կանցնես այդ նեղուցը համարձակ,
Հետո կուղղվես դեպ նեղուցը Մեվոտյան։
Ծովն այդ կանցնես։ Մինչ մարդկանց մեջ կը մնա
Քո հիշատակն հավիտյան,—
Քանզի նեղուցն Բոսպոր անուն կըստանա։
Ահավասիկ՝ կանցնես այդպես դու Եվրոպան
Եվ կը հասնես անդ. Ասիական ցամաքին։
— Ձեզ չի՞ թվում, որ հիրավի միակերպ
Ժանտ է և խիստ,—դեպի ամենքն անագորույն
Աստվածահայր մեծ թագավորը գերագույն։
Նա ինքն աստված, բայց միացավ այս կույտի հետ,
Եվ ժանտ ձգեց դեպերման մեջ մեծաղետ։
Իսկ դու, աղջիկ, ամուսնության ճամփին վեհ
Խի՛ստ դառնադառն փեսացու ես գտել քեզ։
Եվ ինչ հիմա դու լսեցիր ինձնից այստեղ,
Սկիզբն է լոկ աղետների քո ահեղ։

ԻՈ

Ավա՜ղ, վա՜յ ինձ, վա՜յ ինձ։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Դու արդեն իսկ սկսեցիր լացուկոծն.
Ապա ի՞նչպես պիտ հանդուրժես,—
Երբ իմանաս դառն աղետներն հետագա։

ԵՐԳԱՀՈՒՄԲ

Ասա՛, ասա՛, էլ ի՞նչ տանջանք
Սա պիտ կրի առաջիկա յուր ճամփին։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Դեռ կործանիչ տառապանքի անհուն ծով։

ԻՈ

Էլ ի՞նչ օգուտ այս կյանքը ինձ,
Լավ չէ՞ր լինի, որ հենց հիմա, շուտափույթ
Ես այս ժայռից ինձ նետեի դեպ անդունդ,
Այդպես գետնին խիստ զարկվելով միանգամից
Կազատվեի տառապանքից այս անդուք,
Քանզի լա՜վ է, որ մի անգամ մարդ մահանա,
Քան ամեն օր և անսահման
Տանջանքի մեջ միշտ հալ ու մաշ դառնանա։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Ո՛րքան, ավա՜ղ, քեզ պիտ թվար ծանրագին,
Աղետալից իմ տանջանքը դառնավեր.
Ինձ մահանալ չի կարելի, ինձ մահ չըկա,—
Միայն մահը ինձ աղետից կը փրկեր։
Բայց վերջ չըկա տառապանքիս ժանտ ու մեծ,
Մինչև մի օր Օլիմպոսի գագաթին,
Անագորույն Զևսը լինի գահընկեց։

ԻՕ

Մի՞թե Զևսը,—օլիմպիացին,
Երբևիցե լինելու է դահավուրկ։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Նվ դու, կարծեմ, պիտ հրճվես,
Եթե իրավ մի այդպիսի գործ լինի։

ԻՕ

Այո՛, հարկավ, քանզի չէ՞ որ
Զևսից եմ ես կրում այսքան վիշտ ու ցավ։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Ճշմարիտը այդ է, այո,
Լա՛վ իմացիր, այդպես մի բան կը կատարվի։

ԻՕ

Բայց ո՞վ պետք է հափշտակի
Աստվածահայր արքայի մեծ գավազանն։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Անմատաբար
Նա ինքն իրեն գավազանից կը զրկի։

ԻՕ

Սակայն ի՞նչպես. ասա, եթե վնաս չէ այդ։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Ամուսնական կապ կըստեծի,—
Այնուհետև ինքը սաստիկ կը զղջա։

ԻՄ

Անմահի՞ հետ, թե՞ կնոջ հետ մահկանացու,
— Պատասխանի՛ր, եթե միայն կարելի է։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Այդ հարցը թո՛ղ, խոսելն անգամ այդ մասին
Արգելված է խստապես։

ԻՈ

Կի՞նը ուրեմն նրան գահից կը զրկի։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Նա մի զավակ կը ծնի,
Որն իր հորից լինելու է ուժգնագույն։

ԻՈ

Նա չի՞ կարող ճակատագիրն այդ վանել։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Եվ ոչ մի կերպ,
Մինչև որ ես այս կապանքից դուրս չը գամ։

ԻՈ

Ո՞վ կարող է, Զևսի կամքին հակառակ,
Այդ կապանքից քեզ փրկել։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Նա լինելու է անհրաժեշտ քո սերընդից,

ԻՈ

Ի՞նչ ասացիր։ Եվ մի՞թե
Զարշարանքից քեզ կազատի իմ զավակն։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Տասն պորտ հետո, երրորդ պորտից։

ԻՈ

Գուշակումն այդ հեշտ հասկանալ չեմ կարող։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Ջուր մի փորձիր քո ցավն ու վիշտն իմանալ։

ԻՈ

Գեթ մի զրկիր ինձ այն բանից,
Որը արդեն խոստացար։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Երկու գաղտնիք. միայն մեկը քեզ կընծայեմ։

ԻՈ

Բայց ո՞ր մեկը, նախ ցույց տուր ինձ, որ ընտրեմ։

ՊՐՈՄԵԹԵՎԱ

Ընտրիր, ահա ցույց կը տամ.—
Կամ քո գալիքն,—քեզ սպասող տառապանքն,
Կամ կը հայտնեմ,—ո՞վ պիտ փրկի ինձ կապանքից։

ԵՐԳԱԽՈՒՄԲ

Շա՜տ ավելի լավ կը լիներ,
Եթե հաճույքն այդ պարգևես նրան և մեզ,
Որ այդպիսով քո խոստումը չխախտվի։
Պատմիր նրան դաժան տանջանքն իր գալիք,
Իսկ մեզ ասա՛,—փափագում ենք սրտագին,
— Ո՞վ է արդյոք, որ պիտ լինի քո փրկիչն։

Երբ դուք այդքան փափագում եք,
Ձեզ կը պատմեմ,—քանզի մերժել չեմ կարող.
Իսկ քեզ, Իո,—ես կը հայտնեմ մանրամասն
Քո տարաբախտ բազմաշրջիկ թափառումն,
Որ գրես այդ քո հուշերի և հոգուդ մեջ:
Դո՛ւ, անցնելով ցամաքներին սահման եղած
Խոր հոսանքը, կը գաս այնտեղ, ուր փառապանծ
Արեգակն է ծագում պայծառ, լուսաճե՜մ.—
Այնտեղ ծովն է միշտ մըռնչում մեծաձայն,
Ծովը թողած—Քիսիմնեին կը հասնես—
Ու Գորգոնյան դաշտը կը գաս: Ապրում են անդ
Ավազադույն երեք դստերը Ֆորկիսի,
Որոնք նման են արտաքուստ կարապին.
Այդ երեքն էլ միականի են իրոք,
Քանզի միայն մեկ աչք ունի յուրաքանչյուրն,
Եվ մեկ ատամ: Ոչ արևն է նայում նրանց
Ճառագայթովն իր լուսեղեն, ոչ լուսինն:
Ահա այնտեղ բնակվում են մերձակա
Գորգոնները,—երեք քույրով մարդատյաց.—
Թևավոր են նրանք, հուժկու և դաժան,
Օձեր ունեն իրենց գլխին, իբրև սարսափ,
Եվ ով նայի, կը մահանա անխուսափ.—
Ես պատմեցի քեզ այդ իբրև զգուշանք:
Սակայն լսի՛ր, պատմեմ մի այլ տեսարան,—
Որն ահեղ է և ծանրագին մի վտանգ.—
Զգուշացիր, այնտեղ են միշտ Զևսի շներն,
Սրակտուց, հավերժ անձայն ժանտ Կորճերն:
Զգուշացի՛ր արիմասպյան նաև ցղրքից,—
Միականի և ձիավոր, ապրում է նա
Պլուտոնի հեղեղի մոտ ոսկեհոս:
Նրանց բնավ չմոտենաս, այլ անցիր
Դեպ հեռավոր և անծանոթ մի երկիր,
Դեպ սևագործ մի ազգություն,
Որն ապրում է ակունքի մոտ արևի,
Ուր սահում է Թմովպա գետն հոսանուտ:

Դու կընթանաս այնտեղ նրա ափերին,
Մինչև հասնես ջրվեժներին մեծագոչ։
Այնտեղ ահա սեգ լեռներից այն Բիբլին
Սուրբ Նեղոսն է աստվածային
Առաջ նետում ալիքներն իր քաղցրահամ։
Այդ հորդահոս գետի ափովն անցնելիս,
Կըգաս շուտով եռանկյունի մի աշխարհ,
Որ Նեղոսի գետաբերանն է սրբազան.
Այնտեղ, Իո, քեզ, նաև քո սերընդին
Վիճակված է հիմնել քաղաք մի հեռավոր։
Արդ՝ եթե կա իմ խոսքերի պատմածի մեջ
Մի որևէ դժվարիմաց, խրթին բան,
Հարց տուր կրկին, և կիմանաս պարզապես,
Քանզի ունեմ ես շատ ազատ ժամանակ,—
Շատ ավելին, քան կը ցանկամ։

ԵՐԳԱԽՈՒՄԲ

Եթե իրավ էլ ասելիք դու ունես
Սրա գալիք տաժանելի ճամփի մասին,
Պատմիր շուտով։ Սակայն եթե խոսքըդ արդեն
Ավարտված է, հաճույք արա հիմա մեզ,
— Հիշիր նաև մեր խնդիրն։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Արդեն լսեց սա վախճանն իր ճանապարհի.
Բայց որպեսզի լավ հասկանա,
Որ ունայն չէր իմ ասածը, պետք է հայտնեմ,
Իբր ապացույց իմ խոսքերի ճշմարտության,
Թե իսկապես ինչ է կրել նա իր կյանքում։
Մինչ անցքերի մեծ մասը ես բաց կը թողնեմ,
Եվ կըսկըսեմ հեք թափառման վերջերից։
Երբ դու եկար, երկրին հասար Մոլոսի,
Ուր Դոդոնն է բազմած բարձր լեռան ուսին,
Ուր կա դուշակ և Թեսպրոտյան գահը Ջևսի,—
— Անակնկալ անդ կատարվեց մի զերահրաշք.

Տերևախիտ և սոսափող կաղնիներն,
Համայքով լի, ողջունեցին քեզ սիրացայտ.
Եվ հնչեցին գուշակությյան բացահայտ,
Որ վիճակված է քեզ լինել աստվածահայր
Ջևս արքային պատվելի կին,— փա՞ռք էր քեզ այդ:
Իսկ այնտեղից ճանապարհով ծովափնյա
Դու մոլեգնած շեշտ ուղղվեցիր դեպ հեռուն,
Դեպ Ռեվայի ծովածոցը ընդարձակ.
Բայց ետ դարձար դու վազելազ և վրդովված:
Արդ սերունդներն,— խոսքըս դրան հավատափք,—
Բազմաչարչար թափառումիդ հիշատակ,
Քո անունով կանվանեն ծովն Իոնիկ:
Թող լինի սա մի ապացույց, որ իմ ոդին
Ընդունակ է նախատեսել ավելի շատ,
Քան կարող է հայտնի դառնալ ուրիշներին:
Մնացյալը ձեզ և սրան պատմեմ մեկտեղ,—
Հետքը բռնած իմ ընդհատած խոսքերի:
Երկրի հեռու ծայրերի մոտ, ահավասիկ,
Կա Կանոբոս մի հին քաղաք.— Նեղոսն է անդ
Տիղմից կազմել ջրաբերուկ դետաբերան:
Ջևսը այնտեղ ետ կտա քեզ բանական ուժն
Եվ պիտակցող քո մաքերի պարզ ոգին,
Երբ քեզ փարվի ձեռքով սերող, հաղթական:
Այնտեղ ապա դու կծնես սև էպաֆին.—
Որին տրված համանունը ցույց կըտա,
Որ ծնված է ինքը Ջևսից հրաշազան:
Նա պտղավետ կապրի երկրում, որ Նեղոսն
Ոռոգում է յուր ջրերով հորդահոս:
Իսկ նրանցից նրա սերունդն հինգերորդ—
— Հիսուն հոգի, հիսուն զավակ քույր աղջիկ,
Պիտ ետ դառնա և պիտի գա կրկին Արգոս,
Բայց ոչ կամավ, այլ փախեփախ՝ խույս տալով
Քեռու զավակ փեսաների վտանգից:
Նրանք, ինչպես ճուտակներն են շատ անգամ
Դաժանաբար հետապնդում աղավնյաց,
Լցված կրքով դեպ ազգակից ամուսնությունն,

Եվ ձգտելով դեպ անօրենն անձգտելի,
Պիտ հալածեն հիսուն՝ մատաղ քույրերին։
Բայց թույլ չի տա ապօրինի դործն աստված,
Այլ կմատնի փեսաներին նա մահվան։
Եվ հիրավի.— նրանց երկիրն Պելասգյան,—
Ժանտ Արեսի ներշնչումով դժընդակ—
Եվ քույրերի ձեռքով դիշերն սպանված։—
Պիտ ընդունի յուր հողի մեջ։— յուր կրծքի տակ,—
—Երբ նրանցից ամեն մեկին հարսնացուն յուր
Անակնկալ պիտ կոտորի քնած տեղ,—
Խոր վարսելով նրա կրծքին երկասյրի սուրն։
Թող որ այդպես մի կիպրուհի այցի դար
Իմ թշնամուն։ Սերը սակայն՝ այդ քույրերից
Մեկին միայն կը կախարդի,— միայն այդ մեկին
Այն մութ դիշերն յուր ամուսնուն չի սպանի.
Այլ առավել նա դերադաս կը համարի
Կոչվել անդար, քան թե լինել մարդասպան։
Եվ քույրերից միայն այդ մեկին կը ծնի
Տոհմը ամբողջ Արգոսական արքաների։
Երկար է խոսքն, եթե ասվի ամեն բան.
Արդ՝ այդ տոհմից առաջ կը գա մի մեծ կարիճ,
Մեծահռչակ աղեղի տեր քաջազոր,
— Հերոս՝ որն և ինձ կը փրկի տանջանքից։
Մայրն իմ Թեմիս—Տիտանուհին գուշակեց այդ։
Բայց թե ի՞նչպես,— խոսքն է արդեն շատ երկար.
Եթե նույնիսկ դու ամեն ինչ իմանաս,
Այդ քեզ բնավ լինելու չէ օգտակար։

Ի Ո

Ավա՜ղ, վա՜յ ինձ, ավա՜ղ, վա՜յ ինձ.
Ողջ էութեամբ ցնցվում եմ ես, ահա նորից.
Տենչի խայթը այրում է ինձ անկրակ.
Իմ հոդի՛ն է և իմ միտքն է կարծես խորտակ.
Ա՜խ, սարսափից սիրտս է զարկում դառնացավ.
Միտքս ահա հանդչում է խուլ հարվածներից,

Գլուխն է իմ պատւոտի մեջ երերում,
Եվ ամեն ինչ շուռ է գալիս աչքիս դեմ.
Գիտակցութիւնն եմ կորցնում ես.—ահա կրկին
Մոլեգնութիւնն է ինձ իշխող։—Նա է, նա,
Որ նետում է դեպի փախուստն ահաբեկ,—
Դեպի անվերջ, հուժկու վազքը խենթացնող.
Համր է դառնում լեզուս անգամ,
Որ անզոր է և կարկամ.
Եվ խոսքերն իմ,—այս բառերը խառնիճաղանջ,—
Հոսում են հորդ, ինչպես վայրագ ալիքներ.
— Ո՞ր զառանցանք, դո՛ւ ես քշում ինձ հեռուներ...

(Իոն մոլեգնած, փախչում, հետապնդում է)։

ԵՐԳԱՆՈՒՄԲ

Ստրոֆ

Նա է միայն իմաստունը լուսավոր,
Ով առաջինն ինքն համոզվեց
Եվ ամենքին խրատ տվեց,
— Որ հավասարն հավասարի հետ միանա.
Միայն այդպես ամուսնության գործի մեջ
Մարդ երջանիկ կյանք կունենա։
Իսկ հասարակ և աղքատ մարդն, երանի՜
Երբե՛ք, երբեք չը պարծենա՛, չը որոնի՜
Սիրո հմայքն, մտերմությունն
Հարուստներից ու մարդկանցից մեծանուն։

Անտիստրոֆ

Թող որ երբե՛ք,— ճակատագիր մեծազոր,
Ես չը դառնամ արքա Զևսին
Մեկ մահիճում ամուսին։
Թող որ բնավ աստվածներից մեկն ու մեկին
Ես կողակից կամ հարսնացու չը դառնամ։
Սարսափում եմ, սարսափի մեջ ահագին,
Երբ նայում եմ տղամարդկանց չը սիրող
Գեղգեղափայլ Իո կույսին,

Որին Հերան դատապարտեց այդքան դժգամ—
Թափառումի տաժանելի այդ վիճակին։

ԷՊՈԴՈՍ

Երկյուղ չունեմ, չեմ վախենա
Ինձ հավասար մարդու գնալ.
Ամուսնությունն հավասարի—
Սարսափելի չէ բնավ։
Բայց թող երբեք, քավ լիցի,
Աստվածների սերը դեպ ինձ չը դառնա...
Թող անխուսափ աչքով նրանք
Ինձ չը նայեն չարադավ.
— Քանզի սերն է նրանց անգութ, անխնա,—
Սերը, որ միշտ կռիվ է լոկ։
— Անվերջ կռիվ անհույս, տխուր և անօգ.
Ես այդ դեպքում չէի կարող մի ելք գտնել.
Կամ մատածել որևիցե մի միջոց,
Որ վավաշոտ քո ժանտ կամքից, Զևս երկնատեր,
Հնար լիներ խուսափել։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Թող իր սիրով Զևսը լինի վեհ ու դաժան,
Սակայն շուտով կը խոնարհվի։ Արդեն իսկ
Պատրաստում է կորստաբեր նա հարսանիք,
Որն անխուսափ նրան զահից իշխանության
Անակնկալ ցած կը նետի զահավեժ,
Իւրկ նզովքը աստվածահայր Քրոնոսի,—
Որով որդուն յուր անիծից, իբրև վրեժ,
երբ նախակերտ յուր մեծ զահից զուրկ եղավ, —
Մի օր անշուշտ արդարացի—կը կատարվի,—
Իսկ թե ի՞նչպես պետք է վանել այդ աղետն,
— Աստվածներից և ոչ մեկը հիրավի,
Բացի ինձնից, այդ գաղտնիքը չը գիտի։
Ես եմ միայն, որ ճիշտ գիտեմ գաղտնիքն այդ,
Թող որ առայժմ Զևսն իր գահին բազմի ազատ,

Հույսն իր դրած երկնադղրդ
Որոտների շանթի վրա ահաբեկիչ.
Թող դեռ նետի շանթ, սլաքներ հրակայծակ,
Բայց չի օդնի նրան ոչինչ.
— Նրա անկումն է անխուսափ և դժընդակ։
Ո՛չ, չի օդնի նրան կայծակն հրատարած,
Այլ դահավեժ պիտ նա ընկնի անփառունակ։-
Ինքը յուր դեմ կը պատրաստի ահեղ փորձ,
Մի այնպիսի անպարտելի քաջագործ,
Որ կը գոնի կայծակից շատ ավելի հաղթ
Ոչնչացնող ու դերազոր մի կրակ,—
Կը հորինի ահագնագույն դղրդյուն,
Բյուրապատիկ ավելի խիստ, քան որոտն։
Եվ կը զարկի՛, կը չախչախի՛ մի օր նա
Ծովը սաստող Պոսիդոնի երկրադղրդող
Ու մեծափորձ երեքարձենը կտրուկ։
Այն ժամանակ Զևսը, պարտված, կիմանա,
— Մեկ չէ բնավ իշխող լինել կամ սպրուկ։

ԵՐԳՉԱԽՈՒՄԲ

Ինչ որ ինքըդ փափագատենչ կը ցանկանաս,
Այն էլ հիմա գուշակում ես դու Զևսին։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Ա՛յն եմ ասում, ա՛յն եմ ուզում ես միայն,
Ինչ անխուսափ պիտ կատարվի։

ԵՐԳՉԱԽՈՒՄԲ

Հավատալու բա՞ն է արդյոք.
— Միթե՞ պետք է մեկը իշխի Զևսի դլխին։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Եվ առավել նա ծանրագին
Տանջանք ու վիշտ պետք է կրի, քան իսկ ես։

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Եվ ինչպես դու չես սարսափում
Սպառնանքի այդ խոսքերը ասելիս։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Ի՞նչից պետք է ես վախենամ,
Քանի որ ինձ մահն իսկապես չի վիճակված։

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Կարող է նա քո պատիժն,
Քո տանջանքը բազմապատկել ավելի։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Թող որ անի, ինչ ցանկանա,
Պատրաստ եմ ես ամեն բանի։

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Իմաստուն են անշուշտ նրանք,
Որոնք զիտեն երկրպագել Նեմեզիսին։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Աղո՛թք արեք, հարգանք տվեք բյուրապատիկ,
Սամիշտա, անվերջ շողոքորթե՛ք դուք նրանց,
Որոնք դաժան իշխում են միշտ ձեր գլխին,
Իսկ ես երբե՛ք։ Զևսի մասին
Անգամ խորհել, կամ մտածել չեմ ուզում։
Ինչպես զիտի, թող որ իշխի առ ժամանակ,
Թող նա գործի. սակայն երկար
Նա չի մնա աստվածներին արքա և տեր։
Բայց տեսնում եմ,— գալիս է նա, ահավասիկ,
— Զևս արքայի արագավազ մունետիկն,
Որն հնազանդ ծառայում է նոր իշխողին։
Նա գալիս է և բերում է երևի

Աստվածներից որևէ նոր մի համբավ։

(Հանդես է գալիս Հերմեսը)։

ՀԵՐՄԵՍ

Քե՛զ եմ ասում, նենգապատիր ո՞վ կծվակիծ.
Հավերժակյաց աստվածների հանդեպ դու
Մեղապարտ ես գլխովին։
Սուրբ կրակը դու գողացար, գող ու սնանկ,
Մահկանացու և կարճակյաց մարդկանց համար
Իբրև պատիվ ու հարգանք։
Պատվիրում է ահա քեզ նա՛, աստվածահայրն,
Որ դու հայտնես բացահայտ.—
Արդյոք այդ ի՞նչ ամուսնություն է արդի,
Որը, ինչպես կարծում ես դու, պիտ շորթի
Եվ գրավի իշխանությունը նրա.
Արդ՝ ամեն ինչ դու պարզապես ասա մեզ,
Ու գործն առանց այլևայլի բաց արա։
Պրոմեթե՛ս, պատմիր իսկույն, որ ստիպված
Երկրորդ անգամ ճանապարհն այս չանցնեմ ես։
Զևսը, դիտես, չի փափկանա և կամակոր
Քո վարմունքից նա նրբասիրտ չի դառնա։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Աստասանել ճոռում խոսքն այդ ամբարտավան
Կարող է լոկ քծնող սորուկն աստվածների։
Դեռ նոր եք դուք թագավորում, նոր իշխողներ,
Եվ կարծում եք արդեն հպարտ ու մեծամիտ,
Որ վիշտն, աղետն և փորձանքը բնավ ձեզ,
Ձեր ապարանքն այցելության չըպետք է դան։
Մինչդեռ ահա իմ այս աչքով տեսել եմ ես,
Ինչպես երկու բռնակալներ մեծազոր
Գահավիժած ցած նետվեցին գահընկեց,
Ահավասիկ՝ նաև հիմա կըտեսնեմ,
Ինչպես երրորդ իշխողը մեծ
Ամոթանքով պիտ կործանվի գահավեժ։

Նվ մի՞թե դու կարծում էիր, ողորմելի,
Որ նորածագ աստվածներիդ առջև ես,
Իբրև պերի իմ անարժան հեզությյան,
Կը սարսափեմ, կը խոնարհվեմ ստրուկի պես,
Օ՜ն, անդր, շատ եմ հեռու ես այդ բանից։
Ուստի շուտով աճապարիր ետ դառնալ,
Գնա այդ նույն ճանապարհով, որով եկար,
Քանզի ինձնից քո հարցերին պատասխան
Չե՛ս ստանա դու երբեք։

ՀԵՐՄԵՍ

Ճիշտ այդպիսի դառնությամբ
Նվ վարմունքով միշտ մեծամիտ՝ դու հասցրեցիր
Քո դժբախտ նավն առապարին աղետի։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Բայց իմացիր, որ քո քաջ ճորտության հետ
Ես չեմ փոխի տանջանքն ու վիշտն իմ հատուկ.
Լավ է ժայռին դամված մնալ, կապանքի մեջ չարչարվես,
Քան ժանտ Զևսին հավատարիմ լինել ստրուկ։

ՀԵՐՄԵՍ

Ի՞նչ ես կարծում. լա՞վ է միթե ավելի
Ճորտ ու ծառա դառնալ ժայռին,
Քան թե Զևսին լինել բանբեր հավատարիմ։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Ճիշտ է, այո, վիրավորանք պատճառողին՝
Պիտ վճարել վիրավորանք ոխերիմ։

ՀԵՐՄԵՍ

Պարծենում ես դու երևի
Նույնիսկ դաժան քո տանջանքումն ապարեխա։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Պարծենում եմ, ահա տե՛ս.
Եվ այսպիսի երջանկություն կը ցանկամ
Ես ոխերիմ իմ թշնամուն, նաև քե՛ղ։

ՀԵՐՄԵՍ

Քո չարաբախտ տանջանքի մեջ
Նաև ի՞նձ ես դու մեղավոր ճանաչում։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Այո, կասեմ ես բացահայտ.
— Ատում եմ ես բոլո՜ր, բոլո՜ր աստվածներին։
Ինձ, բարության փոխարեն,
Տանջանք ու դավ վճարեցին անօրեն։

ՀԵՐՄԵՍ

Դու, տեսնում եմ, ճիշտ հիվանդ ես խենթությամբ

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Հիվանդ եմ ես,— եթե միայն
Ատելությունն ու զզվանքը դեպ թշնամին
Հիվանդություն է իրոք։

ՀԵՐՄԵՍ

Դու իսկապես անտանելի կլինեիր
Երջանկության մեջ նաև։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Ավա՜ղ, ավա՜ղ։

ՀԵՐՄԵՍ

Բառեր են այդ, Զևսին բնավ անծանոթ։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Ժամանակին կը սովորի ամեն բան։

ՀԵՐՄԵՍ

Մինչ դու բնավ
Չես սովորել կյանքում լինել խելամուտ։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Եթե խելոք լինեի ես,
Չէի խոսի ես քեզ նման ճորտի հետ։

ՀԵՐՄԵՍ

Դու վերջապես չե՞ս ցանկանում՝ ասել այն,
Ինչ քեզանից պահանջում է աստվածահայրն։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Ախ, ինչպե՞ս չէ.—այս լավության փոխարեն
Հարկավոր էր նրան հաճույք պատճառել...

ՀԵՐՄԵՍ

Բավական է.
Ծաղրո՞ւմ ես ինձ, ինչպես փոքրիկ մի մանուկի՞։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Նայե՛ք սրան...և մի՞թե դու
Ավելի խենթ և հիմար չե՞ս, քան մի մանուկ,
Երբ հույս ունես դու ճապուկ,
Թե հիրավի գաղտնիքը քեզ ես բաց կանեմ։
Ո՛չ, դեռ չկա այնպիսի ցավ ու չարչարանք,
Խարդախություն խորամանկ,
Որոնցով ինձ կարողանար Զևսն ստիպել,
Որ ես հայտնեմ գաղտնիքն այդ։

Երբե՛ք, երբեք այդ չի լինի, մինչև որ նա
Ինձ չազատի այս կապանքից խայտառակ։
Որքան կուզի թող նա նեռի,
Ջորս կողմ ցրի խիստ բոցավառ շանթ ու կայծակ.
Թող բորբոքի նա մոլեգնած
Ճերմակաթև բուք ու բորան, փոթորիկ,
Մրրիկներով խառնաշփոթ, համատարած
Թող պարուրի ու թունդ ծածկի նա երկինքն,
Եվ կատաղած ու կործանիչ
Թող խորտակի նա անխնա ամե՜ն ինչ.
— Օ՜ն, անդր, ո՛չ, չեմ խոնարհվի, չեմ հայտնի ես,
Թե ո՞մ ձեռքով պետք է լինի նա գահավեժ։

ՀԵՐՄԵՍ

Լա՜վ մտածիր, արդյոք հիմա կօգնի՞ այդ քեզ։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Վաղուց եմ ես այդ մտածել ու որոշել անսասան։

ՀԵՐՄԵՍ

Եկ սիրտ արա, համաձայնվիր.
Դու, հիմարի, խենթի մեկն,
Տանջանքի մեջ դեռ սովորի՛ր, խելքի՛ եկ։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Ջուր ես թափում դու այդքան ջանք ու եռանդ.
Ահավասի՛կ, ինչպես ալի՛ք, խուլ եմ ես։
Իսկ դու երբե՛ք, ամենևին չմտածես,
Որ իսկ և իսկ Զևսի առջև ահաբեկ
Կարող եմ ես,—ինչպես երկչոտ կնամարդ,
Ջեռքս մեկնել իմ թշնամուն չարանենգ
Եվ պաղատել, դառն աղերսել խոնարհ ու հեք,
Որ խիղճ անի և կապանքից փրկի ինձ...
Ո՛չ, այդ չի լինի, դուխս չի գա և երբե՛ք,—
Քանզի անչափ հեռու եմ ես այդ ամենից։

ՀԵՐՄԵՍ

Շատ խոսեցի ես այստեղ զուր, ապարդյուն,
Իզուր խոսքեր շռայլեցի,
Քանզի ոչինչ են քեզ համար խոսքն ու խրատ.
Եվ չեն ազդում նրանք բնավ քո սրտին։
Ինչպես անփորձ և նոր լծված մի հովտակ,
Սանձն ես անվերջ դու կրծոտում,
Զուր մղելով կռիվն ընդդեմ երասանի։
Բայց անզոր է խարդախությունն այդ խորամանկ,
Անօգուտ է և մեծամիտ դողոջությունն.
Երբ ապիկար տերը նրա, յուր սրտում
Հանդգնության և չար գործի տենչ ունի։
Եթե խոսքն իմ կատարելու միտք չունես,
Լավ մտածիր և քեզ նայիր հեռատես.
Աղետների և դժնության մրրիկն ահեղ
Պիտ քո գլխին զարհուրելի բորբոքվի
Եվ դըժբնդակ ու անխուսափ քեզ կործանի։
Նախ կը զարկի հայրըս շանթով հրակայծակ,
Կը ջախջախի քո ժայռը այդ սրածայր,
Նարաննները քարաժայռի քեզ կը թաղեն իրենց տակ։
Կանցնի երկա՜ր, շա՜տ ժամանակ, անթի՜վ դարեր,
Մինչև որ դու տեսնես կրկին լույս աշխարհն.
Այնժամ Զևսի թևավոր շունն՝ արծիվն հաղթ,
Արյունարբու, ժանտ և ագահ, կարմրաթույր,
Կը հարձակվի ամենօրյա իբր անկոչ հյուր,
Կը կտրատի մարմինը քո տարաբախտ.
Եվ ամեն օր մարմնիդ վրա ժանտալի
Քո սև, կրծած լյարդը պիտ նա կտցահարի.
Քո տանջանքին բնավ վախճան դու չըսպասես,
Մինչև որ ճիշտ մեկն ու մեկը աստվածներից
Չը ցանկանա հոժարակամ և անբիծ,
Փոխարինել քո չարչարանքն, քո վիշտն ու քեզ,
Մինչև որ նա քո փոխարեն չիջնի խավար տունն Հադեսի—
Խորքը անդունդ սանդարամետ տարտարոսի։
Էա՜վ մտածիր, ունայն խոսքեր չեմ վատնում ես,

Ոչ էլ գործ է սա մի դատարկ և սնապարծ.
Զևսի լեզուն ստել երբեք չի կարող,
Կը կատարվի, ինչ որ ասի մեծ աստվածն։
Զգո՞ւշ եղիր, որ քո համառ տենչանքն այդ
Անմտաբար այժմ գերազաս չը համարես՝
Բարեխրատ խոհեմության համեմատ։

ԵՐԳԱԽՈՒՄԲ

Մենք կարծում ենք, որ ճիշտ խոսեց,
Հերմեան այստեղ բարեխորհուրդ խոսք ասաց քիզ,
Արդարացի ուղղեց նա այդ հորդորանքն,
Որ միշտ ուղին խոհեմության դու ընտրես՝
Լսի՛ր նրան։ Չէ՞ որ սխալն
Իմաստալի մարդու համար ամոթ չի։

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Այն, ինչ ասաց, լավ գիտեի ես վաղուց,
Ամոթալի և խայտառակ գործ չը հաշվեք,—
Երբ թշնամին յուր թշնամուց կրում է ժանտ չարչարանք։
Թող որ թափի նա իմ գլխին,— ինչպես տարափ,
Գալարաձև ու երկսայր շանթ ու կայծակ.
Թո՛ղ թնդյունից ահագնագույն որոտների
Եվ կատաղի արշավանքից մրրիկների
Խորունկ ցնցվեն եթերն ամբողջ և տիեզերքն,
Թո՛ղ մռնչան ուժգին թափով հողմն ու քամին.
Թո՛ղ սասանի երկիրն համայն յուր հիմքերով հավերժական.—
Այդ ընդհանուր, խիստ մոլեգնած բըռնկման մեջ վայրերի՝
Թող բորբոքի դաժանաբար և վեր հանի
Անսասան ծովի հուզմունքն, ալիքն աղմկող
Եվ խառնակի անդ աստղերի ուղիներին բյուրաթոց.
Հորձանքի մեջ բյուրագտույնն, աշխարհակալ անհրաժեշտի,
Թող մարմինն իմ անողոք վերցնի, նետի
Դեպ տարտարոս, սանդարամետան անդընդոց,—
— Ես անմահ եմ,—նա բնավի՞ն ինձ սպանել չի կարող։

ՀԵՐՄԵՍ

Այդպիսի, խոսք, կամ այդ կարծիքն ու մտքերն
Պետք է իրոք, խելագարից միայն լսել։
Տեսե՛ք, երբ սա չի ցանկանում
Յուր խենթությունը սանձել,
— էլ ինչո՞վ է խելագարից սա տարբեր։

(Դառնալով օվկիանոսուհիներին)

Դուք, որ այստեղ կարեկից եք
Սրա դաժան տառապանքին,
Արդ՝ հեռացեք դուք այստեղից շուտափույթ,
Որ չը ցնցի, վնաս չը տա ձեր սրտերին—
Որոտների ընդյունն ահեղ,— գոռոցն անգութ։

ԵՐԳԱԽՈՒՄԲ

Այդ ի՞նչ խոսք էր, դու ասացիր.
Լա՛վ է մի այլ խորհուրդ տաս մեզ, որ լսենք.
Իսկ անտեղի խոսքը հաշվի չենք առնի մենք։
Ինչո՞ւ ես դու մեզ հեռացնում հարկադիր,
Կուզենք այստեղ մենք նրա հետ սրտանց տանջվել ու ողբալ.
Իսկ տորին և խարդախին սաստիկ տեղ մենք գիտենք.
Քանզի չէ՞ որ ժանտ վարմունքն է դավաճանի տեղին,—
— Ամենավատ ու խայտառակ մի ոճիր։

ՀԵՐՄԵՍ

Սակայն հիշեք, ձեզ ասացի կանխապես,
Հորդորեցի, որ դուք զգույշ լինեք խիստ։
Իսկ երբ ընկնեք աղետի մեջ,—էլ իզուր
Չը տրտնջաք դուք ձեր բախտից չարագույժ.—
Նվ կամ բնավ չըհանդգնեք խոսել անվերջ,—
Թև Ջևսը ձեզ հանկարծ ձգեց փորձանքի մեջ։
Մեղքը ձերն է և ոչ նրա—մինչ աղետը ձեզ կը բռնի
Յուր անմեկին թակարդի մեջ, ոչ թե հանկարծ ու գաղտնի,
Այլ ձեր մեղքից, որ գործեցիք դուք անզգույշ և անգետ։

Տեսե՛ք, ահա.—ոչ թե միայն դատարկ խոսքով, այլ իսկապես
Դողդողում է երկիրն ամբողջ խոլաբար։
Խուլ դղորդով մռընչացին և թնդացին որոտներն.
Արդ՝ բոցափայլ շողշողում են շեկ շանթերի դալարներն,
Պատույտի մեջ մրրիկն ու հողմն դալարում են խիտ փոշին.
— Աղմըկում են փոթորիկներն ահագնակի
Եվ չարաղետ միմյանց հանդեպ թռչկոտում են արշավանքի։
Ողջ տիեզերքը խառնիճաղանջ,
— Երկինք,—երկիրն է շփոթվում մեծականչ։
Այս արհավիրքն ահաբեկիչ,
Մրրիկն ահեղ ժանտաժուռտ,—
Խուլ հողմերի շունչն ու ճիչ,
— Այս ամենը նա է քշում ինձ վրա—
Աստվածահայր Զևսն ոխակալ և անգութ։
Երկի՛ր-երկի՛ր, ո՛վ սուրբ իմ մայր, և դու եթեր տիեզերքի,
Որ սիրում ես մի՛շտ, ամենուր լույսերդ պայծառ,
— Տեսեք, ի՞նչպես տառապում եմ ես անարդար...

(Թևդում են որոտները, շողշողում և զարկում են կայծակները, և Պրոմեթևսը ժայռի գլխից գահավիժում է երկրի տակ)։

ՍՈՖՈԿԼԵՍ

Ծնվել է 496 թվին և մեռել է 406 թվին (մեր թվարկությունից առաջ)։

Սոֆոկլեսը հանդիսանում է Պերիկլեսյան դարի խոշորագույն դրողը և Պերիկլեսյան դեմոկրատիայի գաղափարախոսը։ Սակայն, հետագայում, 5-րդ դարի վերջի քառորդում, նա հանդես է գալիս օլոգիգիայի լագերում ընդդեմ դեմոկրատիայի և մասնակցում է 411 թվի օլիգարխիական հեղաշրջմանը։ Որպես դրամատուրգ նա հայտնի է դարձել 486 թվին, երբ թատերական մրցակցությունների ժամանակ հաղթանակ տարավ Էսքիլեսի նկատմամբ։ Սոֆոկլեսը գրել է մոտ 120 դրամա, որոնցից մեզ հասել է միայն յոթը։ Շատ դրամաներից պահպանվել են առանձին կտորներ։ Սոֆոկլեսը հունական պետության, նրա դեմոկրատիայի ծաղկման, նմանապես և նրա անկման ժամանակաշրջանի դրամատուրգն է։ Դա այն ժամանակաշրջանն էր (5-րդ դարի 2-րդ կես), երբ Հունաստանում զարգացավ առևտրա-փողային հարաբերությունները։ Այդ հանգամանքը սրեց անհատի և պետության, անհատի և հասարակության հակասությունը։ Այս է պատճառը, որ Սոֆոկլեսի մոտ ավելի սուր, քան Էսքիլեսի մոտ, դրված է անհատականության պրոբլեմը։ Սոֆոկլեսը պաշտպանում է հունական պոլիսի համայնական, բարոյական հիմքերը, միաժամանակ նրա ուշադրության կենտրոնումն է մարդը և նրա ապրումները։ «Անտիգոնե» տրագեդիայում Սոֆոկլեսը անհատին վեր է բարձրացնում պետությունից, կոնֆլիկտը լուծում է հօգուտ անհատի։ Իր «Էդիպ արքա» տրագեդիայում Սոֆոկլեսը ոչ միայն քննության է առնում անհատի և ճակատագրի փոխհարաբերությունը, այլ ընտանեկան երկու ձևերի՝ ընտանիքի ավելի հին ձևի

և համեմատաբար նոր ձևի բախումը։ Սոֆոկլեսը աշխատում է այդ երկու ձևերը զուգակցել իրար հետ։ Դրա ապացույց է նրա «Էդիպը Կոլոնում» տրագեդիան, որտեղ Սոֆոկլեսը փաստորեն արդարացնում է Էդիպին։ Սոֆոկլեսը մարդկանց նկարագրում է այնպես, ինչպես նրանք պետք է լինեն. այս հարցում նա հակադրվում է հունական նշանավոր դրամատուրգ Եվրիպիդեսին։ Սոֆոկլեսի պահպանված գործերից են «Էդիպ արքան», «Այաքսը», «Էլեկտրան», «Անտիգոնեն», «Էդիպը Կոլոնում», «Տրախինյանները», «Ֆիլոկտետը»։

ԷԴԻՊ ԱՐՔԱ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Աւրա էդիպ—*Թեբական թագաւոր*
Իոկաստե—*նրա կինը*
Անտիգոնե, Իսմենե } *նրանց դուստրերը*
Կրեոնտ—*Իոկաստեի եղբայրը*
Տերեզիաս—*Կույր գուշակ,—հավահմա*
Փորիկ մի տղա—*Տերեզիասին առաջնորդող*
Ջևսի Իրմապետը
Կորնթացի *սուրհանդակ*
Հովիվ
էդիպի *տնասուն ծառան*
Երգչախումբ, *բաղկացած Թեբ քաղաքի ավագանի ծերերից*
Երգչախմբի *խմբապետը*
Այլ քրմապետներ, էդիպի թիկնապահներն ու ստրուկները, Իոկաստեի նաժիշտները, Կրեոնտի թիկնապահները և այլ տղայք ու աղջիկներ։

Դործողությունը կատարվում է Բեոթական Թեբ քաղաքում, էդիպ թագավորի պալատի առջև։

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Ք

(Գործողությունը կատարվում է Թեբ քաղաքում, արքայական պալատին կից հրապարակում: Հավաքված են բազմաթիվ բոմներ, բոմապետներ, մանուկներ, երիտասարդներ բոլոր ծածկոցներով, ձիթենու ճյուղեր ձեռքերին: Շատերը նստած են աստվածների արձանների աստիճաններին: Պալատից դուրս է գալիս էդիպ թագավորը):

Է Դ Ի Պ

Ո՛վ Կադմոսյան հինավուրց տան զավակներ.
Ձեր ձեռքերին ճյուղեր բռնած աղերսական,
Ինչո՞ւ եք դուք այստեղ տխուր հավաքված.
Մինչ՝ ոչ հեռու, քաղաքի մեջ խունկն է ծխում,
Եվ հնչում են երգն աղոթքի և հեծեծանքն:
Ես չուզեցի լսել ձեր հայցն բանբերների բերանով,—
Այլ ես, էդիպ մեծ թագավորն, ամենուրեք հռչակված,
Ինքըս անձամբ՝ ահավասիկ՝ այստեղ եկա:
Խոսի՛ր, դիցուք, դու, ծերունիդ, խոսելն իրոք վայել է քեզ,
— Դու կարող ես ձայնդ հնչել.—ինչո՞ւ եք դուք այստեղ եկել.
Ա՞հն է արդյոք ձեզ աստ բերել, թե ձեր սերը դորովագութ:
Ինչ որ արդար կըցանկանաք,— կը կատարեմ, ձեզ կօգնեմ,
Քանդի սիրտն իմ ոչ անփույթ է, ոչ անզգա.
— Կարեկից եմ ձեզ, զավակներ, ձեր կարիքը կը հոգամ ես:

Ք Ր Մ Ա Պ Ե Տ

Արքա՛ էդիպ, ո՛վ իմ երկրի իշխանատեր,
Տեսնում ես դու, շուրջը քո սուրբ մեհյանների

Հավաքվել ենք՝ ահա բոլոր հասակների՝ մենք մարդիկ,
— Նույնիսկ նրանք, որ տակավին թևեր չունեն թռչելու,
Նաև քրմերն, որ ծանրացած են ալհզարդ ծերությամբ։—
Եվ ե՛ս՝ Ջևսի թուրմն իսկական, ու բազմաթիվ դեռահասներ։
Պսակակիր ամբոխն ամբողջ նստած է, արդ—
Շուրջը երկու տաճարների Պալլասի,
Այլև ընթերը Իմենեի գուշակավոր մոխիրի։
Ինքդ դիտես,—ժանտ աղետն է դրկել արդեն ողջ քաղաքն.
Մրրկահույզ անդունդների բերանն է բաց,—
Ու ճար չը կա արյունահեղ ալեկոծման դեմ դաժան։
Կործանվում են բերրի հողում ծիլ ու բույսն,
Խորտակվում են նախիրներով անասուններն,
Անպտուղ են դառնում նույնիսկ ծնունդները մեր կանանց,
— Մինչդեռ աստվածն, հուր տարածող, դաժանագույն
ժանտախտով
Ապգն է մատնել տառապանքի. կործանվում է Կադմոսի տունն,
Եվ հրճվում է նույնիսկ դժոխքն հառաչանքով այս դառնավեր։
Աստված չես դու,— դիտեմ ես այդ,—
Քեզ հավասար աստվածներին չեմ համարում,—
— Մենք, մեր որդիք, այստեղ գալով, դիմում ենք վեհ քո
օջախին
Մեր գոյության փոթորկալից ալիքներում տարաբախտ,
Պատուհասի աղետներում,— մարդկանց մեջ
Առաջի՛նն ես դու մեզ համար, աստվածներից ուղարկված։
Ա՛րդ՝ դու էիր, որ Կադմոսյան քաղաքն եկած,
Ազատեցիր մեզ ժանտաժուռտ այն տուրքից,
Որ վճարում էինք անթառ զարհուրանքի երդիչին։
Մինչ քեզ չէինք մենք ուսուցել հանելուկի պատասխանն,—
— Այն իմացար աստվածների ներշնչումով դո՛ւ միայն,
Եվ կյանքը մեր դու փրկեցիր արհավիրքից։
Դո՛ւ ես էդիպ, ամենքից վեհ, վսեմագույն երկնակամ.
Մենք բոլորս թախանձագին աղերսում ենք ահա քեզ.
Մի ճա՛ր գտիր, մի օգնություն մեզ դարձ.
Դո՛ւ ես միայն, որ լսում ես աստվածների պատգամներն,
Դո՛ւ լավ գիտես նաև մարդկանց միտքն ու ենչանք.
Դու կարող ես քո մեծափառ հմտության
Խորհուրդներովն հիմա փրկել կյանքը մեր։

Ո՜հ, դու, իրավ մարդկանց միջևն ամենաազոր, վսեմափայլ—
Դարձի՛ր, եղի՛ր մեր քաղաքին բարեգործ։
Եղիր նրան դու հոգատար,—ինչպես որ քեզ երկիրն ամբողջ
Անվանում է վսեմ փրկիչ քո բարերար գործի համար։
Թող քո հզոր իշխանության փառքն հիշելիս,
Երբե՛ք, երբե՛ք չարտասանեն սերունդներն.—
— «Մեր գոյությանն ընծայեց նա փրկության լույս,
Բայց մեր կյանքին նրա օրոք և աղետներ տիրեցին»։
Եղի՛ր դու միշտ մեզ բարերար, և այն բարի նշանակին,
Որ մեր քաղաքը քեզ տեսել մի ժամանակ,
Թող նաև այժմ քաջալերի քեզ դեպի գործը փրկության։
Եթե սրտանց ցանկանում ես և՛ այսուհետ իշխել երկրին,
Թո՛ղ որ փրկվեն մարդիկ հանուն իշխանական քո փառքի,
Քանզի անզոր և անկարող են իսկապես
Պատվար լինել պարսպային աշտարակը կամ մակույկն,
Եթե չը կան, կործանված են մարդիկ իբրև կենդանի զորք։

Ե Դ Ի Պ

Ո՜հ, իմ թշվառ դուք զավակներ, անտեղյա՛կ չեմ ես բնավ.
Ձեր տենչանքը կարոտակեզ,—ձեր տանջանքը լա՜վ գիտեմ.
Տառապում եք դուք բոլորդ հիվանդագին, ցավադար,
— Բայց ձեր ցավով տանջվում եմ ես, ձեզ, բոլորիդ հավասար։
Ամեն մեկը ձեզնից, իրավ, յուր անձնական վիշտն ունի,—
Եվ տանջվում է լոկ յուր ցավով։ Մինչ իմ հոգին
Տառապում է և իմ մասին, և ձեր ցավով,
Եվ բովանդակ այս քաղաքի բյո՜ւր հոգսերովն անսպառ։
Դուք, քա՜վ լիցի, քնած տեղից չե՛ք արթնացրել բնավ ինձ,
Ես շա՜տ երկար և անդադար լաց եմ եղել դառնադառն.
Միտքս շրջող,—ձեզ հոգատար, շատ է անցել ճանապարհ։
Եվ ես մի ճար միայն գտա, իբրև բուժիչ մի միջոց.
Եվ այդ արդեն կատարված է. Կրեոնտին Մենևկոսյան,
— Աներ որդուն իմ անձնական, ուղարկեցի ես Դելփիք՝
Ֆոյբոսի տունն, որ նա այնտեղ հարցում անի բանիմաց.
— Ի՞նչ օգնությամբ, ի՞նչ աղոթքով ես կարող եմ փրկել քաղաքն։
Օրերն եմ ես արդեն հաշվում,—սպասում եմ անհանգիստ.
— Նա ի՞նչ եղավ, ինչո՞ւ չեկավ. անց է արդեն շատ ժամանակ։

Իսկ երբ նա գա, կիրագործեմ ես ամեն ինչ ճշտությամբ։
Լավը կանեմ, կկատարեմ, ինչ հայտնել է ինքն աստված։

ՔՐՄԱՊԵՏ

Ահա բարի և նշանակ,—քո այդ խոսքերն հնչելիս,
Սրանք իսկույն դուշակեցին Կրեոնտի վերադարձն։

ԷԴԻՊ

Տե՛ր Ապոլլոն,—հայացքումն իր բերկրություն կա լուսափառ.
— Գեթ ոչ պակաս բերկրանք լինի և փրկարար իր խոսքում։

ՔՐՄԱՊԵՏ

Բայց հավատա՛,—գալիքն է լավ.—քանզի ահա գլխին ունի
Պատուղներից փարթամ հյուսված բազմածաղիկ զարդեպսակ։

ԷԴԻՊ

Այդ կիմանանք մենք շատ շուտով։ Արդեն ահա մոտ եկավ նա։
Ո՛վ իշխանազն իմ խնամի, Մենեկոսի դու զավակ,
— Ի՞նչ պատգամ ես դու մեզ բերել աստրծուց։

ԿՐԵՈՆՏ

Բարենպաստ։ Ազեատն անգամ
Մենք հաշվում ենք երջանկություն, երբ վերջն է լավ և բարի։

ԷԴԻՊ

Բայց ի՞նչ ասաց աստվածն իրոք.—Մինչ խոսքն է քո անորոշ.—
Ոչ խիզախ է, ոչ երկչոտ։

ԿՐԵՈՆՏ

Պատրաստ եմ ես խոսքը պատմել բացահայտ,—
Սակայն դուցե մենք նե՞րս գնանք և այնտե՞ղ։

249—10

ԷԴԻՊ

Ասա՛ այստեղ, ամենքի դեմ։ Վիշտն ու ցավերը սրանց
Ավելի են տանջում հոգիս, քան դառնությունն իմ անձնական։

ԿՐԵՈՆՏ

(Մեկնելով էդիպ արբային գրված տախտակը)
Ահավասի՛կ՝ երբ ես եկա, հասա այնտեղ աստրծուն,
Իմ հարցումին՝ արքա Ֆոյբոսն հայտնեց պատգամն իր
բացահայտ.
—«Ոչնչացրե՛ք Թեբե երկրում անված վարակը պղծադործ,
Որպեսզի նա անբուժելի չը դառնա»։

ԷԴԻՊ

Ինչպե՞ս արդյոք ոչնչացնել.—և ի՞նչ աղետ, կամ ի՞նչ վարակ։

ԿՐԵՈՆՏ

—«Աքսորանքով,—կամ լվանալ արյամբն—արյուն,
Այն արյունը, որը տանջում, ալեկոծում է քաղաքն»։

ԷԴԻՊ

Այդ ի՞նչ մարդու արյան մասին է խոսքն հնչում աստվածն
այդպես։

ԿՐԵՈՆՏ

Մեր իսկ երկրի իշխանատեր Թագավորի—Լայոսի,
Որն իշխում էր այս քաղաքին քեզնից առաջ։

ԷԴԻՊ

Գիտեմ, միայն լսել եմ ես. բայց չեմ տեսել նրան բնավ։

ԿՐԵՈՆՏ

Սպանվեց նա մի ժամանակ։ Պատգամն ա՛յդ է վրեժխնդիր,—
Պահանջում է մարդասպանին մեղապարտ։

ԷԴԻՊ

Ո՞րտեղ է նա, կամ ո՞ր երկրում. ինչպե՞ս գտնել հետքն հինավուրց

Եվ անիմաց եղեռնության։

ԿՐԵՈՆՏ

Այստե՛ղ,—ասաց,—որոնողը հեշտ կը գտնի,
Թեպետ աչքից խույս է տալիս անփնտրելին։

ԷԴԻՊ

Բայց ո՞րտեղ է Լայոսն ընկել,—դաշտո՞ւմ արդյոք, թե յուր տան մեջ.

Օտար երկրո՞ւմն, թե՞ սպանվեց մարտակռվումն ընդհանուր։

ԿՐԵՈՆՏ

Յուր ասելով,—գնացել էր դեպի գուշակ, իբրև հարցումն.
Մինչ այնտեղից ետ չդարձավ դեպի տուն։

ԷԴԻՊ

Իսկ սուրհանդա՞կն և կամ նրա ուղեկիցներն, մի՞թե չը կան,—
Մի՞թե չեղավ գեթ ապացույց, կամ որևէ լուր բերող։

ԿՐԵՈՆՏ

Բոլորն էին անդ սպանվել, բացի մեկից,— որը սակայն,
Սարսափահար փախուստ տալով, ոչինչ ասել չէր կարող.
— Մի բան միայն հայտնեց նա։

ԷԴԻՊ

Նա ի՞նչ ասաց։ Այդ մի բանից շատ բան գտնել կարող ենք մենք։
Հույսի ծայրը ձեռքիդ բռնած,—գործդ կանես կատարյալ։

ԿՐԵՈՆՏ

Նա հաղորդեց. մե՛կ չի եղել հանդիպելիս, ավազակն,—
Եվ չի սպանվել նա զորությամբ միայն մեկի.
— Կործանվել է նա բազմության ձեռքերով:

ԷԴԻՊ

Ավազակը չէր հանդրգնի այդ գործն անել ինքնակի,
Եթե իրոք չը մասնակցեր արծաթի ուժն այստեղից:

ԿՐԵՈՆՏ

Ես այդպես էլ կարծում եմ իսկ: Մինչ կործանված Լայոսին
Այդ չարագետ փորձանքի մեջ ոչ ոք չօգնեց, պաշտպան չեղավ:

ԷԴԻՊ

Ի՞նչ խոչընդոտ կար այդ գործին: Սպանված էր ձեր թագավորն.
Ի՞նչ էր պատճառն, որ չը գտաք ոճրագործին:

ԿՐԵՈՆՏ

Զարհուրելի երգն էր միայն Սֆինքսի,
Որ տանջում էր մեզ ահաբեր.
Եվ սոսկալի տանջանքի մեջ անհայտ մնաց ոճիրն այդ:

ԷԴԻՊ

Սակայն կրկին և սկզբից ես այդ գործը կը պարզեմ,
Քանզի Ֆոյբոսն արժանավուր և դու նաև արժանաբար
Խոր հուզեցիք իմ հոգսերը սպանվածի մասին այժմ.
Ուստի և ինձ դուք հաշվեցեք ձեզ մարտակից.
Իսկ վրեժը ես կլուծեմ հանուն երկրի և աստծու:
Չէ՞ որ այդպես ես հոգատար կը դառնամ
Ոչ թե օտար և հեռավոր մարդկանց համար,
— Այլ ես ինքըս սոսկ ինձ համար, որ աղետը ինձնից վանեմ:
Մարդասպանը,—ով էլ որ նա իրոք լինի,
Նույն իր ձեռքով կարող է միշտ և ինձ լինել վրեժխնդիր.
Ես, Լայոսի գործն հոգալով, պաշտպանում եմ նաև ինձ:

(Դառնալով ամբոխին)

Ուրեմն խնդույն, ո՛վ զավակներ, նստարանները թողած,—
Շուտ վերկացեք և բարձրացրեք աղերսանքի ոստն ու ճյուղեր։
(Դիմելով Կրեոնտիճ)
Թող մեկն ու մեկն շուտ հավաքի կադմոսական ժողովուրդն.
Ես ամեն ինչ կը կատարեմ։ Կամքովն անմահ աստվածների—
Կամ կվինենք մենք երջանիկ,— կամ պետք է մենք խորտակվենք։
(Հեռանում է դեպի պալատը։ Հանդես է գալիս երգչախումբը)։

ՔՐՄԱՊԵՏ

Ո՜հ, վեր կացեք դուք, զավակներ. մենք հանուն այն ողորմության
Այստեղ եկանք, որը արդեն հայտնեց նա.
Իսկ Ֆոյբոսը,—գուշակության պատգամը մեզ ուղարկողն,—
Թող այժմ լինի մեզ փրկարար և ժանտախտը վերացնի։
(Ամբոխը հեռանում է)։

ՊԱՐՈԴ

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Ստրոֆ 1.

Ո՜հ դուք, ո՜հ դուք, Զևսի ճառեր քաղցրաձայն,
Ի՞նչ եք բերել դուք Դելփիքից ոսկեհոս
Թեք քաղաքին փառավոր։
Սիրտս ահից դողդողում է, ոստոստում է կրծքիս տակ։
Դու, Դելփիքի աղեղնաձիգ արքա Պեան,
Ի՞նչպես, ասա, ես կատարեմ պաշտամունքդ սրբազան,
Նո՞ր ծեսերով, թե՞ հին կարգով. ասա դու ինձ սրտաբեղձ՝
Ոսկեճաճանչ հույսի զավակ, անմահական դու Համբավ...

Անտիստրոֆ 1.

Նախ՝ Աթենաս,— անմահադործ Զևսի դստրիկ, կանչում եմ քեզ
Նվ քո քրոջն՝ Արտեմիսին երկնազոր,
Որ բազմած է միշտ վաճառքի կլոր դահին փառապանծ,
Նվ քե՛զ, և քեզ, ով հեռաձիգ հզոր Ֆոյբոս,—
Դուք երեքով մահաճալած, հանդես եկեք ինձ վկա,—

— Եթե երբեմն, քաղաքիս մեծ աղետների ժամանակ—
Դուք մեզանից վանում էիք բոցն ու կրակն արհավիրքի,
Ո՜հ, նաև ա՛յժմ եկե՛ք, եկե՛ք դուք, գերակա։

Ստրոֆ 2.

Ավա՜ղ, ավա՜ղ, մաշում են ինձ բյուր-բյուրավոր աղետներն.
Ողջ ժողովուրդն է ցավի մեջ, հիվանդությամբ տառապող.
Ջուրկ է միտքն իմ սլաքներից, մահը վանել չի կարող։
Էլ չեն աճում փառապարգև երկրի փարթամ պտուղներն։
Ծննդական երկունքի մեջ դառնակական
Հառաչում են կանայք անվերջ,—բայց վիրկության ճար չկա։
Նայի՛ր, ահա հոգիները, արագաթև թռչունի պես, խումբ ի խումբ
Ահագնակի կայծակներից ավելի ժիր սրընթաց
Սլանում են դեպի ափունքն հրածուփ,—
Դեպի այն կողմն,—ուր իշխում է աստվածն անանց խավարի։

Անտիստրոֆ 2.

Լիքն է քաղաքը անհամար կոտորածով.—
Եվ ժանտաժուտ, գետնաթափավալ դիակները մահաբեր
Անողբակոծ տարածված են ամենուր.
Անթիվ կանայք, նաև մայրերն ալեհեր
Մեհյանների եզերքներին հեծեծում են դառնադառն,—
Ո՜հ, վիրկություն աղերսելով աղետակոծ տանջանքից։
Մինչ շողում է երգը—Պեան,—իսկ առընթեր,
Թնդում է ողբը վշտակիր հառաչանքի։
Հանուն դրան,—Զևսի դստրիկ, գեղեցկատես և ոսկեհուր,
Մեզ վիրկության պաշտպանություն առաքիր։

Ստրոֆ 3.

Աղերսագին աղաչում եմ. ո՜հ, լսիր ինձ,—
Ահեղաձայն և կորովի Արեսին,—
Որն այրում է մեզ անվահան և անպղինձ,—
Դու ե՛ս մղիր, մատնի՛ր նրան փախուստի,—
Վանի՛ր նրան հայրենադիր սահմաններից,
Ջգիր նրան Ամփիտրիտի ննջարանը մթնագույն,
Նետիր դեպի փրոյուգիական.
Անհուրընկալ նավակայանն,
Թող նա բաժին դառնա այնտեղ ալիքներին մրրկահույզ,
Քանզի ինչ որ գիշերն է մեզ թողնում գաղտուկ,
Օր-ցերեկն է շորթում, տանում իբրև տուրք։

Եվ դո՛ւ, Ջևս հայր,—ահեղագույն և հրաստւյզ
Կայծակների անմահ տեր—
Ջա՛րկ, խորտակիր նրան շանթով մահաբեր։

Անտիստրոֆ 3.

Դու, լիկիական հզոր արքա,
Ջդի՛ր լարը ոսկեհյուս.
Քո սլաքներն անպարտելի, ո՞վ դերակա—
— Նետիր շուտով և տարածիր ամենուր։
Եվ դո՛ւ, և դո՛ւ, հրատարած Արեամիս,
Որ ցրում ես լիկիական բարձունքներից շողշողուն հուր,—
Ե՛կ և ուղղիր դեպ թշնամին նետերը քո մահասփյուռ։
Կանչո՛ւմ եմ քեզ, ո՞վ երկնահաս,
Ոսկեպաճույճ և գինևվետ, ո՞վ Բաքոս,—
Որ մեծազոր քո անունով հորջորջել ես երկիրն այս,—
Մենադների ոգեշնչող ուղեկից,—
Ե՛կ նաև դու։ Ո՜հ, հանդես ել քո ջահերով շողշողուն,—
Բեր հաղթական քո կրակը երկնքից,
Ջա՛րկ ահարկու և տապալի՛ր—աստվածներից
Ամենագեղ և անպատիվ աստրծուն։

Է Պ Ի Զ Ո Դ Ա. Ռ Ա Ջ Ի Ն

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Է Դ Ի Պ

(Դիմելով երգչախմբին)

Աղերսո՞ւմ ես. ի՞նչ ես խնդրում։ Եթե խոսքերն իմ հարգել
Դու ցանկանաս,—հիվանդությանն հնազանդ,
Շուտ օգնություն, տառապանքի թեթևություն կըստանաս։
Ասեմ խոսքն իմ, բայց ասածիս ինքս եմ օտար և անմատույց,—
Օտար եմ ես և հանցանքին։ Առանց երկար հարց ու փորձի—
Հետքը անշուշտ կը դտնեի, եթե լիներ որևէ ցույց կամ նշան։
Եվ արդ՝ հիմա ես, իբր վերջին քաղաքացին այս քաղաքի,—
Ջեզ բոլորիդ, կադմոսյաններ, հայտնում եմ իմ այս պատվերն.—
— Ով սեղյակ է ձեզնից իրոք և ճիշտ գիտե ա՛յն մարդուն,
Որի ձեռքով կործանված է արքա Լայոսն Լաբդակիդյան,—

Թող նա իսկույն,—պատվիրում եմ,—դա և հայտնի այդ ամենն
ինձ.
Իսկ եթե նա, ինքը իրեն համարելով մեղապարտ,—
Վախենում է այդ բանն անել,—արդ՝ տալիս եմ ես հավատիք.
Թող հավատա, որ Թշնամի չի համարվի նա բնավ,
Եվ այս երկրից կհեռանա նա լիովին անվնաս.
Սակայն եթե մեկն ու մեկըդ իրոք գիտի իրազեկ,—
Մեկ ուրիշի, կամ իրապես այլ երկրացի մի անհատի,—
Որ նա ինքն է մարդասպանը,—թող չլռի, թաքցնելով այդ.
— Կը վարձատրեմ նրան շահով և գթությամբն իմ առատ:
Եթե սակայն դուք լուռ մնաք հանուն սիրած բարեկամի,
Կամ անձնապես ահաբեկված,—անտես անեք պատվերն իմ,—
Արդ՝ այդ դեպքում ես կը վարվեմ ձեզ հետ ինչպես Թշնամի:
Եվ լսեցե՛ք, ահավասիկ, իմ հրամանն այդ մասին.
— Պատվիրում եմ, որ այդ մարդո՛ւն,—թեկուզ ով էլ լինի նա,
Իմ երկրի մեջ, ուր իշխում եմ ես գահակալ, իբրև արքա,
Բնավ ոչ ոք ոչ ընդունի, ոչ էլ խոսի նրա հետ,
Թող թույլ չտա մասնակցելու ասուլածային աղոթքին,
Եվ արբարար զոհաբերմանն, կամ սուրբ ջրին մերձենալու:
Պետք է բոլորը տներից դուրս վռնդեն այդ մարդուն.
Քանզի նա է ժանտ պղծություն մեր մեջ,—
Ինչպես հայտնեց այդ պյութական ինձ աստվածն
Գուշակությամբ խորհրդալի և բացահայտ:
Ուրեմն այսպես՝ այս գործի մեջ ես կը լինեմ այսուհետև
Ժիր մարտակից և՛ աստըծուն, և՛ հանդուցյալ Թագավորին:
Արդ՝ այն գաղտնի ոճրագործին անիծում եմ ես խստաբար.—
Թեկուզ մենակ թաքնված լինի, կամ բազմության հետ միասին—
Ինքը դժբախտ թող կյանք վարի աղետակոծ ու թշվառ:
Երդվում եմ ես,—եթե իրավ իմ գիտությամբն՝ ոճրագործն
Գտնվում է նույնիսկ իմ տանն, իմ հարկի տակ,
Թող իմ հայտնած նույն այդ նզովքն ինձ վիճակվի չարաչար:
Եվ արդ՝ խստիվ պահանջում եմ, որ կատարվի այս ամենն,—
Նախ հանուն ինձ և աստըծու, ապա հանուն այս երկրի,
Որն անպտուղ և մեղսամած տառապում է տարաբախտ:
Եթե նույնիսկ գործն այդ իրոք աստվածատաք չլիներ—
Ե՛վ այդ դեպքում հանցագործին դուք պարտավոր եք փընտրել—

Հանուն միայն արբագործման,—քանդի չէ՞ որ սպանվածն
Քաջամարտ էր վանեափայլ և քաջարի թագավոր։
Ուստի և դուք պետք է փնտրե՛ք։ Այստեղի տերն ե՛ս եմ հիմա,
Իմն է գահը իշխանության, որին առաջ տիրում էր նա.
Նույն մահիճը և նույն կինը պատկանում է հիմա ինձ։
Նույն ընդհանուր զավակներին՝—եթե դժբախտ չը լիներ նա
Սերընդի մեջ,—տեր-տիրական պիտ լինեի միայն ես։
Երբ աղետի կրակն արդեն նրա դլխին է թափված,
Ես նրա տեղ և փոխարենն հանդես կը գամ իբրև հայր։
Կը պաշտպանեմ նրա պատիվն ու բաց կանեմ ես ամեն բան,
Որ շուտափույթ հայտնաբերվի մարդասպանն,—
Որի ձեռքով սպանված է արքայն,—որդին Լաբդակի,
Թոռն հարազատ Պոլիդորի,—պապն էր նրա ինքը Կադմոսն,
Որը սակայն ծագումն ուներ Ագենորից հնամյա։
Ահավասիկ՝ ես ջերմեռանդ աղոթում եմ աստվածներին.
Թո՛ղ անիծված լինի հավերժ նա, ով խախտի իմ պատվերն.
Թո՛ղ ցանքսի տեղ ոչինչ չը տա նրան երկիրն,
Թո՛ղ նրա կինն չըբեր զաոնա և զավակներ չըծնի,
Թո՛ղ խորտակի նրան օրհասն դժբախտությամբ վշտահար։
Իսկ ձեզ,—բոլոր կադմոսյաններ, որ հոժար եք իմ կամքին,
Թող անխափան և մի՛շտ լինի ճշմարտությունը մարտակից,
Այլև բոլոր աստվածները հավիտյանս հավիտենից։

ԽՄԲԱՊԵՏԸ ԵՐԳԶԱԽՄԲԻ

Քանի որ դու այդ անեծքը ինձ ուղղեցիր,—կարող եմ ես
Ասել, արքա՛,—չեմ սպանել և չը գիտեմ սպանողին.
Իսկ փնտրելու գործի մասին,—թող Ֆոյբոսը, որ գուշակեց,
Հայտնաբերի և ինքն ասի,—ո՞վ է ոճիրը կատարել։

ԷԴԻՊ

Արդարացի դու խոսեցիր, սակայն բնավ մարդ չի կարող
Հարկադրել աստվածներին՝ գործ կատարել ակամա։

ԵՐԳԶԱԽՄԲԻ ԵՐԿՐՈՐԴ ԾԵՐՈՒԿ

Ես կարող եմ երկրորդն ասել, իբրև կարծիք։

ԷԴԻՊ

Ասա, թեկուզ երրորդ կարծիքն,—միայն խոսիր ուղղամիտ։

ԵՐԳԶԱԽՄԲԻ ԵՐԿՐՈՐԴ ԾԵՐՈՒԿ

Ես կարծում եմ,—իշխանազոր Տերեզիասն իւր գիտությամբ
Հզոր Ֆոյբոս թագավորից էլ պակաս չի։ Ուստի, արքա՛,
Դու նրանից գործն ավելի ճիշտ կիմանաս։

ԷԴԻՊ

Ես անփույթ չեմ և այդ առթիվ. կատարել եմ գործն անխնա
Եվ խորհրդով Կրեոնտի ուղարկել եմ երկու բանբեր.
— Զարմանում եմ, որ մինչև այժմ նա չկա։

ԵՐԳԶԱԽՄԲԻ ԵՐՐՈՐԴ ԾԵՐՈՒԿ

Բայց կա նաև երրորդ համբավն,— ավելի մութ և հնամյա։

ԷԴԻՊ

Ի՞նչ լուր է այդ։ Պետք է քննել ամեն մի լուր անկասկած։

ԵՐԳԶԱԽՄԲԻ ԵՐՐՈՐԴ ԾԵՐՈՒԿ

Խոսում էին, որ սպանվել է նա ձեռքով համփորդների։

ԷԴԻՊ

Լսել եմ այդ։ Սակայն ոչ ոք սպանողին չի տեսել։

ԵՐԳԶԱԽՄԲԻ ԵՐՐՈՐԴ ԾԵՐՈՒԿ

— Մինչդեռ նրա ոճրագործն է ահն զգալու ընդունակ,
Չի՛ հանդուրժի նա,—լսելով անեծքը քո դժբընդակ։

ԷԴԻՊ

Բայց ով գործից չի սարսափում,—չի սարսափի և խոսքից։

ԵՐԳԶԱԽՄԲԻ ԽՄԲԱՊԵՏԸ

Ահա և նա,—մերկացուցիչն իսկական.
Տես, բերում են աստվածակամ գուշակին.
Մարդկանց միջև ճշմարտության ջատագովն է նա իրոք։
(Մոտենում է կույր Տերեզիասը,—ցուպը
ձեռին, նրան առաջնորդում է մի մանուկ)։

ԷԴԻՊ

Ո՜հ, Տերեզիաս ամենատես, դու լավ գիտես քաջիմաց—
— Երկնայինը և երկրայինն,—տեսանելին և անտեսն.
Ջուրկ ես թեպետ աչքի լույսից,—բայց գիտակցում ես արդեն,
Թե ո՞րպիսի ժանտախտի է մատնված ահա մեր քաղաքն,
Ընդդեմ դրան՝ իրրև արդար պաշտպանի,
Քեզ ենք միայն մենք ճանաչում փրկարար,
Քանզի Ֆոյբոսն,—դու չես լսել, թե ինչ ասաց սուրհանդակն,
Արդեն հայտնել է մեր մարդկանց յուր պատգամն,
Որ մենք միայն այն ժամանակ այս ժանտախտից կազատվենք,
Երբ Լայոսի սպանողին հայտնաբերած
Մենք շուտափույթ մատնենք մահվան, կամ աքսորենք
երկրից դուրս։
Դու տեղյակ ես և լավ գիտես գուշակումներն թռչունների,
Հայտնի են քեզ և մարգարե ճանապարհները զանազան.
Ահավասիկ, փրկիր դու քեզ, փրկիր քաղաքն, փրկիր և ինձ,
Եվ բոլորիս դեմ ազատիր սպանվածի պղծանքից։
Դու ես հույսը մեր փրկության։—Օգնությունը, մարդուն հասցրած,
Գործ է անշուշտ ազնվաբարո ու վսեմ։

ՏԵՐԵԶԻԱՍ

Ավա՜ղ, ավա՜ղ, ահավոր ես դու, գիտություն,
Եթե իրոք իմացումից շահ չըկա։
Թեպետ ես լավ ու հաստատուն գիտեի այդ,
Բայց մոռացա, քանզի այստեղ ես այլապես չէի գա։

ԷԴԻՊ

Ի՞նչ կա սակայն. ինչո՞ւ տխուր խոսք ասացիր։

ՏԵՐԵԶԻԱՍ

Եկ, ինձ լսի՛ր, Թող ինձ ազատ, որ գնամ տուն.
Շա՜տ ավելի հեշտ կլինի, որ դու կրես քո վիճակն,
— Իսկ ես միայն իմ գիտության մեջ մնամ...

ԷԴԻՊ

Օրինավոր չես խոսում դու և չես սիրում քո քաղաքն.
Գուշակումը թաքցնելով, զրկանք կտաս հայրենիքիդ։

ՏԵՐԵԶԻԱՍ

Ես տեսնում եմ, որ խոսքերն այդ օգուտ չեն քեզ ընավին,
Եվ մի գուցե նույնը զգամ նաև ես։

(Ուզում է հեռանալ)

ԷԴԻՊ

Հանուն անմահ աստվածների,—եթե հիշտ
Գործը գիտես,—ո՜հ, մի մերժիր անողոք,
— Մենք բոլորս աղերսում ենք՝ քո դեմն ահա ծնկաչոք։

ՏԵՐԵԶԻԱՍ

Խելագուրկ եք դուք բոլորդ։ Երբե՜ք, երբե՜ք
Չեմ ասի այն,—ինչ կը ստիպես.
Քեզ չեմ հայտնի աղետը քո դժբախտության։

ԷԴԻՊ

Ի՞նչ խոսք էր այդ։ Դու լավ գիտես և չե՞ս ասում։
Մտադիր ես դավաճանել և քաղա՞քը կործանել։

ՏԵՐԵԶԻԱՍ

Ես չեմ կարող տանջել ոչ ինձ և ոչ քեզ.
Ինչո՞ւ ես դուր այդպես խոսում,—
— Երբե՛ք, ոչինչ ես չեմ հայտնի։

ԷԴԻՊ

Ո՜հ, դու դաժա՛ն,—վատթարագույն.
Քո վարմունքից կը վրդովվի, կը զայրանա քարն անգամ.
Սրդ՝—վերջապես հայտնելու ես, ո՞վ դաժան,
Թե՛ պիտ մնաս այդպես անդութ և անխախտ։

ՏԵՐԵԶԻԱՍ

Կշտամբում ես դու իմ բնույթն, մինչ ավելի քոնն է քեզ մոտ,
Չես նկատում դու բարքը քո, այլ զուր ի՞նձ ես պարսավում։

ԷԴԻՊ

Ո՞վ կարող է,—քո ժանտ խոսքերը լսելիս,
Չը զայրանալ.—դու քաղաքն ես խայտառակում անվայել։

ՏԵՐԵԶԻԱՍ

Թեկուզ թաքցնեմ ես լռությամբ, բայց կը բացվի ինքնաբար։

ԷԴԻՊ

Ուստի և դու պարտավոր ես ինձ այդ ասել ուղղակի։

ՏԵՐԵԶԻԱՍ

Ոչինչ այլևս ես չեմ ասի, թեկուզ վայրագ դու զայրանաս,
Թեկուզ սրտով ահագնակի բորբոքվես։

ԷԴԻՊ

Պետք է արդեն ես ճիշտն ասեմ,—զայրացած եմ քանզի սաստիկ.
Լավ իմացիր, որ իսկ և իսկ դո՛ւ ես, կարծեմ,

Մասնակիցն այս եղելության, կատարել ես ինքդ այդ բանն,
Թեպետ դուցե անձեռնամուխ։ Ի դեպ՝ եթե ունենայիր
Դու աչքի լույս, ճիշտ կասեիր, որ քո գործն է այդ իրոք։

ՏԵՐԵԶԻԱՍ

Ա՞յդ էր միթե ճշմարտությունը խոսքերիդ.
Թե այդպե՛ս է, ես քեզ ահա կը պատվիրեմ, որ կատարես
Դու ինքըդ քո դատավճիռն։— Էլ չը դիմես այսուհետև
Բնավ ոչ ինձ, ոչ էլ սրանց։ Դու ես միայն այս երկրի
Չարադաժան և անաստված եղեռնագործն։

ԷԴԻՊ

Եվ դու այդպես հանդգնեցիր այդ խոսքն ասել, անամոթ.
— Ջուր ես կարծում, որ խույս կտաս դու պատժից։

ՏԵՐԵԶԻԱՍ

Ես արդեն իսկ խուսափեցի,—
Քանզի իրոք ճշմարտությամբ հզոր եմ ես։

ԷԴԻՊ

Ո՞վ է, ասա քեզ ուսուցողն։ Արվեստը այդ քոնը չէ։

ՏԵՐԵԶԻԱՍ

Դու ես միայն,—դու դրդեցիր ինձ ակամա ասել այդ։

ԷԴԻՊ

Ի՞նչ ասացիր,—կրկին նորից, որ ավելի լա՛վ հասկանամ։

ՏԵՐԵԶԻԱՍ

Իբրև թե դու չհասկացա՞ր,
Թե՞ փորձում ես խոսքեր քաշիլ ինձնից այդպես։

ԷԴԻՊ

Այնքան էլ լավ չհասկացա, որ իմանամ, նորի՛ց ասա։

ՏԵՐԵՁԻԱՍ

Ասում եմ, արդ՝ մարդասպանն այն,
Որը անհայտ է տակավին,—դու ես իրոք։

ԷԴԻՊ

Թեկուզ լինի այդ քո անձին մեծ հաճույք,
Բայց նույն չար խոսքն երկու անգամ ղուր չես կարող ասել դու։

ՏԵՐԵՁԻԱՍ

Կասեմ ահա, որ առավել մեծ ցասումով բորբոքվես։

ԷԴԻՊ

Ասա, որքան հարկավոր ես համարում
Քանի որ ղուր և ունայն է քո սաստն։

ՏԵՐԵՁԻԱՍ

Ասեմ.—անգետ կապված ես դու ամենամերձ մարդկանց հետ—
Խիստ խայտառակ, զազիր կապով, բայց չես տեսնում քո աղետն։

ԷԴԻՊ

Դու կարծում ես, որ կարող ես մի՞շտ անպատիժ խոսել այդ։

ՏԵՐԵՁԻԱՍ

Այո, այդպես,—եթե միայն ճշմարտությունն
Իրոք ունի դեռ որևէ ուժ ու կորով։

ԷԴԻՊ

Ունի, այո, բայց քեզնից զատ։ Ստոր ես դու ճշմարտության,
Քանզի զուրկ ես դու և խելքից, և աչքերից,
Եվ կորովից հիշողության։

ՏԵՐԵՁԻԱՍ

Անարդեցիր այդպես դու ինձ,—ինքդ ես թեպետ թշվառագույն,
Եվ ամենքից շուտով անարդ ու անպատիվ կդառնաս։

ԷԴԻՊ

Ո՜հ, դու սանիկ՝ ժանտ խաւարի.—դու չես կարող, հիրավի,
Վնասել ինձ, նաև նրանց, ով տեսնում է արևի լույսն։

ՏԵՐԵՁԻԱՍ

Բայց իմ ձեռքով չի լինելու
Քո անկումը օրհասական, այլ պիտի գա
Ինքն Ապոլոնն ամենազոր, որ յուր ձեռքով
Քո ահավոր կործանումը կատարի։

ԷԴԻՊ

Ասա սակայն, ո՞ւմ դավանքն է այդ իրապես.—
— Կրեոնտի՞, թե միայն քո։

ՏԵՐԵՁԻԱՍ

Թող որ բնավ Կրեոնտը ցավ չը դառնա քո սրտին,
Դու ես, որ կաս ժանտ աղետը, քո էությամբ ստեղծված։

ԷԴԻՊ

Ավա՜ղ, ոսկի իշխանություն, ո՜հ խելք, որ այս նախանձաբեկ
Կյանքի բոլոր արվեստներից մեծագույնն ես ու դերազոր.
Ո՜րքան մեր մեջ կան զազանացած նախանձ ու կիրք։
— Հանուն միայն այս քաղաքի իշխանության,—որն իսկապես
Տրված է ինձ ոչ իմ կամքով, այլ իբր պարգև փառավոր,—
Այժմ Կրեոնտն, հավատարիմ և մեծագույն իմ բարեկամն,
Գաղտնի ու նենգ կամենում է ինձ աքսորել գահընկեց,—
Ուստի դեպ ինձ նա ուղարկեց նենգապատիր այս գուշակին,
— Այս խորամանկ սրիկային, որն իմաստուն է միայն
Շահեստի մեջ, բայց կույր է միշտ գուշակության արվեստում։—
— Արդ, ինձ ասա, ե՞րբ է եղել քո գուշակումն պարզ և ընտիր.
Եվ ինչո՞ւ դու այն ժամանակ,երբ կար հրեշն այստեղ երդիչ,
Այս քաղաքի բնակչության խոսք չասացիր մի փրկարար.
Մինչ չէր կարող և ոչ մի մարդ հանելուկն այն հասկանալ.

Պետք էր այդտեղ խոր զորությունը, մարգարե գուշակության։
Նույնպես և դու չհասկացար ոչ հմայքով թռչունների,
Ոչ էլ անմահ աստվածների ներշնչմամբ.—
Այլ ես՝ եկա,— ես, Էդիպը, գուշակությանն անտեղյակ —
Ու փորձանքին վերջ տվեցի. ես իմ խելքով այդ հասկացա,
Եվ ոչ թռիչքը հավքերի հետազոտող ուսմունքով։
Եվ ջանում ես ահավասիկ ինձ զահընկե՞ց անել դու,
— Փափագելով Կրեոնտի զահին լինել մերձակից։
Կարծեմ արցունք, ողբ և աղետ, իբր հատուցում,
Կը խոստանա այս գործը քեզ և նրան,
Որ միտք ուներ սրբագործել քաղաքը այս անխնա։
Եվ եթե դու, համոզված եմ,—չը լինեիր մի ծերուկ,
Ժանտ արժեքը այս դավանքի տանջանքիդ մեջ կըզգայիր։

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Մենք կարծում ենք, որ արդարև նա խոսեց զայրացած
Եվ դուր ցասկոտ խոսքեր ասաց, և դու, արքա, ո՞վ զորություն։
Բայց կարևորն այդ չէ հիմա. պետք է հոգալ, ինչպե՞ս արդյոք
Ավելի լավ գլուխ բերել գուշակությունն աստվածների։

ՏԵՐԵԶԻԱՍ

Իշխանավոր ես դու Թեպեա,—սակայն ես քեզ հավասար՝
Իրավունքով պատասխանի։ Իշխանատեր եմ նաև ես։
Քեզ բնավին ես ծառա չեմ, այլ միմիայն Լոքսիասին։
Ենամբի տակ Կրեոնտի չեմ դառնում ես բնավ,
Եվ քանի որ դու այժմ այստեղ կուրությունն իմ կշտամբեցիր,
Ասում եմ քեզ, դու աչք ունես, բայց չես տեսնում հիրավի,
— Ինչ աղետի մեջ ես թաղված անագորույն,
Ո՞րտեղ, ո՞մ հետ ես ապրում դու։ Գիտե՞ս, ո՞վ է ծնողը քո.
— Մոռացել ես, քո մերձ մարդկանց թշնամի ես դու դաժան
Եվ իսկ այստեղ, երկրի վրա, և իսկ այնտեղ, երկրի տակ։
Շուտով հանուն քո հորն ու մոր,—ահեղ Ոգին Անեծքի
Կը հալածի քեզ այս երկրից, իբրև վրեժ ահարկու.
Լույսն արևի տեսնում ես այժմ, բայց աչքերդ կխավարեն։
Շուտո՞վ, շուտո՞վ ժամը կգա, երբ դու բնավ
Քո ահավոր հառաչանքին ոչ մի կայան չես գտնի,—

Կիթերոնն իսկ քո հեծեծին չի տա նույնիսկ պատասխան,—
Երբ որ իրոք դու իմանաս այն ահռելի ամուսնությունն,
Որի համար հաջողությամբ նավըդ դեպ տուն լող տվեց,
Բայց և այնտեղ՝—քո հարկի տակ վիճակված է քեզ, ավա՜ղ,
Որ միշտ լինես դու անկայան: Դու չը պիտես տակավին
Բազմաբազում այլ աղետներն, չես հասկանում, ո՜վ թշվառ,
Որ ինքդ քեզ և քո որդոց լինելու ես հավասար:
Հիմա արդեն կարող ես դու անարգել ինձ, Կրեոնտին,
Բայց իմացի՛ր. մարդկանց միջև մեկը չըկա,
Որի վիճակն ավելի ժանտ և ավելի տխուր լինի,
Քան քո վիճակը չարաղետ և դառնադառն:

ԷԴԻՊ

(Երգչախմբին դառնալով)

Մի՞թե, ավա՜ղ, անտանելի ճառը սրա պետք է լսել:

(Խոսքն ուղղելով Տերեզիասին)

Էլ չե՞ս կորչի,—չե՞ս չքանա դու վերջապես,—կորի՛ր շուտով
Եվ ետ գնա, գեթ իմ անից շուտ հեռացիր:

ՏԵՐԵԶԻԱՍ

Ինքս բնավ ես չէի գա, եթե դու ինձ չը կանչեիր:

ԷԴԻՊ

Չը պիտեի սակայն, որ ես հիմար խոսքեր պիտ լսեմ.
Քեզ այլապես չէի կանչի ես իմ տուն:

ՏԵՐԵԶԻԱՍ

Հիմարներ ես մեզ համարում,—այդպես է իսկ քո կարծիքն.
Մինչ իմաստուն էին հաշվում մեզ երբեմն քո ծնողները:

ԷԴԻՊ

Ո՞ւմ հիշեցիր,—ո՞ր ծնողներն: Դեռ սպասիր,—
Ո՞վ է ծնել ինձ իրոք:

ՏԵՐԵԶԻՍ

Այս իսկ օրը քեզ կը ծնի և կործանման կմատնի։

ԷԴԻՊ

Մութ ես խոսում դու չափազանց, խոսքերն են քո առեղծված։

ՏԵՐԵԶԻՍ

Բայց այսպիսի առեղծվածներ՝ դու քաջաբար պիտես լուծել։

ԷԴԻՊ

Վատաբանիր այդպես դու ինձ,
Մինչ մեծագործ է հիրավի իմ կատարածն։

ՏԵՐԵԶԻՍ

Սվ կործաննես քեզ միմիայն հաջողությունն այդ իզուր։

ԷԴԻՊ

Հոգ չէ՛ բնավ, եթե քաղաքն ազատեցի ես իրավ։

ՏԵՐԵԶԻՍ

Հիմա արդեն ես կը գնա՛մ։

(Դառնալով տղային)

Իսկ դու, մանուկ, առաջնորդիր և ինձ տար։

ԷԴԻՊ

Թող շուտ տանի, քանզի ներկա դանվելով
Վիշտ ես միայն ինձ պատճառում.—
Գեթ չե՛մ տանջվի, եթե միայն հեռանաս։

ՏԵՐԵԶԻՍ

Բայց ասեմ այն, ինչի համար ես եկա,
Ահռելի չէ քո դեմքը ինձ։ Դու կործանել ինձ չես կարող։

Եվ ես ահա ասում եմ քեզ,—այն մարդը սոսկ, իսկ և իսկ
Որին դու ժիր որոնում ես, սպառնալով անխընա,
Իբր Լայոսի սպանողին,—ահավասի՛կ այստեղ է իսկ,
Իբր անսովոր, օտարազգի մի զաղթական։
Բայց նա շուտով հանդես կը գա իբրև բնիկ Թեբացի,
Ու բնավին նա չի խնդա եղելությամբ կատարված։
Նա,—աչքի տեր,—կը կուրանա և կը զրկվի աչքերից,
Նա, ինքն հարուստ,—կաղքատանա։ Ցուպը ձեռին, տարագիր,
Ցուպովն ուղի բաց անելով, օտար երկիր կդնա։
Զավակներին միանգամից նա կը դառնա հայր ու եղբայր.
Եվ կը լինի նա միաժամ—իրեն ծնող կնոջ համար՝
Եվ ամուսին անկողնակից և իսկ որդի։ Իսկ հոր համար—
Իբր համազարմ և հարազատ որդի զավակ և հայրասպան։
Ահավասիկ, տուն մտնելիս—լավ մտածիր այս մասին։
Իսկ եթե քեզ, հայտնելով այս, սուտ խոսեցի,—
Ասա, որ ես չեմ հասկանում դործը բնավ զուշակման։

ՍՏԱՍԻՄ ԱՌԱՋԻՆ

ԵՐԳԱՀԱՄԲԻՄԲ

Ստրոֆ 1.

Արդ ո՞վ է նա, որին նշեց աստվածախոս
Ժայռը հզոր Դելփիքի.
Նա, որ ձեռքովն արյունահոս
Գործեց ոճիրն անասելի, անլսելի՜ ժանտ մեղքի։
Նժույգի պես մրրկաթև, կորովալից
Եվ շուտափույթ, արագալուր
Թող շարժի նա քայլվածքը յուր
Եվ հեռանա ու փախուստ տա մեղանիչ։
Քանզի հուժկու կը հարձակվի շանթ—կայծակով բոցավառ,—
Նրա վրա Զևսի զավակն զինակիր.
Կը հետևեն նրան նաև աննահանջ
Վրիժառու ժանտ ոգիներն։

Անտիստրոֆ 1.

Պառնաս լեռան բարձունքներից ձյունազարդ

Նոր շողշողաց Համբավի—լուսն,
Որ ամենքը և ամենուր
Փնտրեն մարդուն այդ անհայտ.
Քանդի շրջում է նա անդուլ՝
Անտառներում վայրի ու թավ,
Եվ այրերում—քարանձավ,
— Ժայռերի մեջ, ինչպես դաժան վայրենի ցուլ:
Նա չարաբախտ և քայլվածքովն իր Թշվառ
Նույն է տալիս երկրի պորտից ամեն կերպ—
— Հուժկու հնչող դուշակության ձայներից.
Սակայն նրանք հավերժաբար կենդանաշունչ
Թռչկոտում են, սուրսուրում են նրա շուրջն:

Ստրոֆ 2.

Ահագնացայտ, ահեղ մարքեր
Այժմ բորբոքից իմ սրտի մեջ հավահմայն.
Ոչ կարող եմ ես հավատալ, ոչ կարող եմ բացատրել այդ.
Ո՜հ, ինչ ասեմ,—տարակուսած եմ միայն:
Մինչ հույսերով թևավորված
Ես չեմ նայում ոչ անցյալին, ոչ օրերին ապագա:
— Պոլիբոսի գավակի մեջ՝ Լաբդակիդյան ցեղին ընդդեմ—
Ոչ դժտություն և ոչ կռիվ,—ես լա՜վ գիտեմ,
Թե անցյալում, թե ներկայում—ոչ եղել է ոչ էլ կա:
Ո՜ւր է,— չը կա ոչ մի վկա կամ ապացույց.
Ուստի և ես չեմ հանդգնի
Ընդդեմ փառքին հանրամեծար և անվանի էդիպի
Պաշտպան լինել Լաբդակիդյան մահին անհայտ, անմատույց:

Անտիստրոֆ 2.

Ամենատես են, հիրավի, միայն Զևսը և Ապոլլոնն.
Միայն նրանք գիտեն վիճակը մարդկության:
Ճշմարիտ չէ մարդկանց կարծիքն,—իբր գիտությունն է
դուշակի

Միշտ ամենից գերազանց:
Մարդը միայն իմաստությամբ,—իմաստության դեմ—
հանդիման—

Կարող է ճիշտ հասնել վսեմ հաղթանակի։
Եվ արդ մինչև ես չիմանամ նախապես—
Ճշմարտությունն՝ այստեղ ասված նրա խոսքի,—
— Ո՛չ, չեմ կարող համաձայնվել—մերկացուցիչ լինել ես։
Մինչ էդիպը,—երբ թևավոր կույսն էր փորձանք մի դաժան,
Հասցնես եպավ իմաստությամբ իր քաջարի,
Եվ մեծարեց փառքով նրան ողջ քաղաքն,
— Ո՛չ, չեմ կարող ես չարագործ հաշվել նրան։

ԷՊԻԶՈԴ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ԿՐԵՈՆՏ

(Դիմում է երգչախմբին)

Քաղաքացի՛ք, ես իմացա, որ թագավոր էդիպը ինձ
Մեղադրում է ժանտ խոսքերով զարհուրելի մեղքի մեջ.
Եթե իրավ՝ աղետների փորձանքի մեջ
Կարծում է նա, որ իրապես ե՛ս եմ նրան վնաս տալիս—
— Թե՛ վարմունքով և թե՛ խոսքով, այդ դեպքում ես,—
Արժանացած այդպիսի չար համբավին,
Չեմ ցանկանա կյա՛նք ունենալ երկարատև։
Ահավասի՛կ, այդ չարիքը,
Եվ վնասն այդ, որն իբրև դավ,
Վերագրում է ինձ նա խոսքով, գործ չէ բնավ հասարակ,
Այլ մեծագույն,—քանզի այսպես ես ոճրագործ պիտի դառնամ
Ե՛վ քաղաքում, և՛ ձեզ նման մարդկանց առջև,—բարեկամ։

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Բայց հավատա. ավելի շուտ կշտամբանքն այն
Հետևանք էր ժանտ զայրույթի, քան կռապաշտ մտքերի։

ԿՐԵՈՆՏ

Սակայն ասա՞ց, որ դուշակը իմ խորհրդով էր ազդված,

Որ ես եմ իսկ նրան այդպես ներշնչել,
Որպեսզի դա և սուտ ճառեր արտասանի։

ԵՐԳՉԱԽՈՒՄԲ

Ասաց, այո։ Բայց չը. գիտեմ,—ի՞նչ իմաստով։

ԿՐԵՈՆՏ

Ուրեմն այդպես,—կարողացավ բաց հայացքով, խելքը գլխին
Ինձ մեղադրել այդ զրախոս բառերնքով։

ԵՐԳՉԱԽՈՒՄԲ

Այդ չգիտեմ։ Ես չե՛մ կարող դատել արարքն արքաների.—
Ինքը, սակայն, արդ գալիս է, ապարանքից դուրս գալով։
(Գալիս է էդիպ արքան)

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

ԷԴԻՊ

Դո՞ւ ես միթե։ Ի՞նչպես, ասա, այստեղ եկար. հանդըգնեցիր
Ամրթահար քո երեսով գալ, երեալ իմ հարկի տակ,
Դո՛ւ, որ նրա մարդասպա՞նն ես անվիճելի ու զազիր,
Եվ ի՞մ, և ի՞մ իշխանությունն հափշտակող ավազակն։
Գեթ պարզ ասա՛,—ասուված սիրես,—արդյոք իմ մեջ ի՞նչ տեսար,
Որ վճռեցիր կատարել այդ,—հիմարությո՞ւն, վա՞խն անխնա։
Կամ դու գուցե կարծում էիր, որ ես գործն այդ չե՞մ իմանա,—
Քանզի չէ՞ որ ինձ մոտեցար սողսողալով, նենգապատիր։
Ո՞հ զզվելի, բայց և անմիտ,—կարծում էիր,
Որ ես, եթե այդ իմանամ, կըհանդուրժեմ երևի։
Մի՞թե ձեռնարկն այդ հիմար չէ,—և ի՞նչ,—առանց հարստության
Եվ կողմնակից ընկերների, դա՞հը որսալ թագավորի...
— Ոսկի է պետք, նաև մարդիկ, որ գործը այդ դլուխ դա։

ԿՐԵՈՆՏ

Գեթ ընդունի՛ր դու իմ խորհուրդն.— քո այդ խոսքին
Իմ պատասխանն, այլև լսիր, ապա դատիր մտածված։

ԷԴԻՊ

Գերազանց ես խոսելու մեջ և մեծարվեստ.
— Բայց քեզ լսել չեմ կարող,—
— Թշնամին ես իմ ոխերիմ և դավադիր։

ԿՐԵՈՆՏ

Հենց այդ մասին,— ասում եմ արդ՝
Նախ և առաջ լսիր ինձ։

ԷԴԻՊ

Բնավ դու ինձ չը համոզես, որ դավաճան չես դու իրոք։

ԿՐԵՈՆՏ

Եթե իրավ կարծում ես դու, որ ինքնապարծ վսեմությունն
Առանց խելքի գանձ է վսեմ,—սխալվում ես, բարեկամ։

ԷԴԻՊ

Սակայն եթե կարծում ես դու,
Որ հարազատ ազգականին դավանք սարքողն
Կը խուսափի ժանտ պատժից արդարացի,
Սխալվում ես չարաչար։

ԿՐԵՈՆՏ

Համաձայն եմ, արդարացի դու ասացիր.
Բայց ցույց տուր ինձ,—ի՞նչ դավանք է արդյոք այդ։
Կամ ինչ վնաս, որն հասել է ինձնից քեզ։

ԷԴԻՊ

Սակայն խորհուրդն ինձ ավելի՞ր դու, թե՞ ոչ,—
— Խորհուրդ, որ ես մարդ ուղարկեմ
Աստ կանչելու այդ փառապանծ գուշակին։

ԿՐԵՈՆՏ

Ես նաև այժմ նույն կարծիքին եմ ահա։

ԷԴԻՊ

Բայց ինձ ասա դու միայն,
Ո՞րքան արդյոք ժամանակ է անցել ճիշտ,
Երբ թագավոր Լայոսը...

ԿՐԵՈՆՏ

Այսինքըն ի՞նչ։ Երբ այդ գործը կատարվեց,
Հարցըդ ես լավ չը հասկացա։

ԷԴԻՊ

Անհա՜յտ կորավ, բռնի մահով կործանված։

ԿՐԵՈՆՏ

Ինքդ թեկուզ հաշվի առ այդ.—շատ երկար
Վաղնջական տարիներ են անցել արդեն։

ԷԴԻՊ

Գործի մե՞ջ էր և ձեր գուշակն այն ժամանակ։

ԿՐԵՈՆՏ

Այո, նույնպես իմաստնագույն,
Եվ նույնքան իսկ մեծարելի չափազանց։

ԷԴԻՊ

Արդյո՞ք նա ինձ մտաբերեց այն ժամանակ։

ԿՐԵՈՆՏ

Ես չեմ լսել.— իմ դեմ՝ երբե՛ք և ոչ մի տեղ։

ԷԴԻՊ

Սպանության առիթով, սակայն, կատարեցի՞ք
Դուք որևէ քննարկություն հետախույզ։

ԿՐԵՈՆՏ

Եվ ինչպե՞ս չէ։ Չէինք կարող այդ չանել.
Կատարեցինք, սակայն ոչինչ դուրս չեկավ։

ԷԴԻՊ

Ինչո՞ւ ապա ոչինչ չասաց այն ժամանակ
Իմաստնագույն գուշակն այդ։

ԿՐԵՈՆՏ

Այդ չէգիտեմ։ Եվ քանի որ ես չգիտեմ,—
Գերադաս է լռել միայն։

ԷԴԻՊ

Մինչ խելացի և լա՜վ գիտես դու գործը քո,
— Լավ կարող ես հայտնել այդ ինձ։

ԿՐԵՈՆՏ

Այդ ի՞նչ գործ է դեթ իմանամ.
— Ինչ որ գիտեմ, անշուշտ կասեմ, չեմ բացասի։

ԷԴԻՊ

Եթե նրան դու մասնակից չի լինելիր,
Չէր կարող նա հայտնել այնտեղ բացարձակ,—
Որ ես եմ իսկ մարդասպանը Լայոսի։

ԿՐԵՈՆՏ

Ինչ որ իրոք ասել է նա, այդ գիտես դու.
Սակայն թույլ տուր, որ ես հիմա հարց տամ քեզ.—
Պատասխանիր արդարացի։

ԷԴԻՊ

Հարցրու, եթե դու խոսք ունես, թեպետ բնավ
Դու չես կարող ինձ համարել մարդասպան։

ԿՐԵՈՆՏ

Ասա՛, չէ՞ որ ամուսինն ես դու իմ քրոջ։

ԷԴԻՊ

Ա՛յն, ինչ իմասան է քո հարցի,
Անժխտելի է իրոք։

ԿՐԵՈՆՏ

Բայց չէ՞ որ դու ճիշտ նրա հետ այս երկրին
Միշտ միասին և հավասար ես իշխում։

ԷԴԻՊ

Ինչ որ ուզի, կը կատարեմ ես անխախտ։

ԿՐԵՈՆՏ

Սակայն չէ՞ որ երրորդն եմ ես,
Ջեզ երկուսիդ իրավացի հավասարված։

ԷԴԻՊ

Այո՜, այո՜, դու հենց այդտեղ իսկ և իսկ
Ինձ դավաճան ընկեր դարձար։

ԿՐԵՈՆՏ

Ո՛չ, բնավին,—եթե միայն կըշռադատես դու ինձ պես.
Լա՞վ մտածիր, ո՞վ կուզենա ձեռքը մեկնել իշխանության,—
Որն իրատես կապված է միշտ սարսափի հետ ահռելի,—
Եթե իրոք առանց այդ էլ կարող է նա
Հանգիստ քնել, բայց ունենալ ազդեցությունն իշխանավոր։

Արդ՝ ես երբե՞ք չեմ ցանկացել կոչմանն հասնել արքայական,
Այլ գերադաս եմ համարում—արքայի պես լինել իշխող.—
Ի՞նչ այդպես է միայն դառում խորհրդածող ամեն մարդ:
Այժմ, օրինակ, ես ամեն ինչ քեզնից ունեմ՝ առանց ահի:
Մինչդեռ եթե ես լինեի իշխանատեր,—
Շատ բան պետք է կատարեի ես ակամա:
Հետևաբար, ինչո՞ւ պետք է արքայական իշխանությունն
Ես համարեմ ավելի լա՞վ, նախընտրելի ու գերազանց,
Քան կորովն իսկ հզորության, քան միշտ անհոգ կյանքն
ազդեցիկ.
Ո՛չ, դեռ խելքից ես այնքան էլ զուրկ չեմ բնավ,
Որ որոնեմ ա՞յլ բարիքներ, կամ ա՞յլ օգուտ ինձ համար:
Բոլորն ինձ այժմ բարևում են,—միշտ ողջո՞ւյն են ինձ տալիս.
Ով դեպի քեզ խնդիր ունի, հաճոյաբար դիմում է ինձ.
— Քանզի նրանց ձգտումները կախված են միշտ ինձանից:
Ուրեմն ի՞նչպես կարող եմ ես արհամարհել այս բոլորն,
Որ հանդգնեմ ընտրել միայն քո ակնարկած ճանապարհն:
Միտքն իմաստուն՝ անկարող է դառնալ ոճիր ու պատուհաս:
Ո՛չ, բնավին սիրահար չեմ ես այդպիսի հակումներին,—
— Չե՛մ հանդգնի ուրիշներին նաև օգնել նման գործում:
Եթե կուզես գործն ատուգել, ինքըդ անձամբ դնա Դելփիք,
Հարցում արա,—ճի՞շտ եմ արդյոք ես դուշակումն հաղորդել քեզ:
Եվ բացի այդ.—եթե իրոք ապացուցես դու ճշտիվ,
Որ դավանքով դուշակի հետ ես եղել եմ միացած,—
Վճռիր իսկույն ինձ չարաղետ մահվան մատնել՝—
Եվ այն ոչ թե լոկ մի անգամ, այլ կրկնակի.
Քեզ այդ բանում անձնատուր եմ ես ինքնակամ:
Արդ՝ իմ վզին զուր մեղք մի դիր կասկածանքով քո անհայտ.
Քանզի ինչպես անարդա՞ր է— չարագործին անվանել լա՞վ,
Անարդար է նույնպես և այն, երբ որ լավն է համարվում վատ:
Ասեմ և այս—իզուր վանել լավ ընկերոջ, բարեկամին—
Նույնն է, եթե զրկես կյանքդ սիրակարոտ պերճանքից:
Մինչ դու հետո, իր ժամանակ, ճշմարիտը կհասկանաս.
ժամանակն է միշտ որոշում,—ո՞վ է արդար և անբիծ մարդն,
— Մինչ կարող ես չարագործին հեշտ ճանաչել մեկ օրվա մեջ:

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Ով խելամուտ է հիրավի,—նրա համար վեհ բան ասաց։—
Արքա՞, հապճեպ դատաստանը ճշմարիտ չէ, իսկապես։

ԷԴԻՊ

Բայց Թշնամին դավանքն իր գաղտ կատարում է շուտափույթ,
Պետք է և ես անելիքն իմ որոշեմ շուտ և արի։
Մինչդեռ երեք հանգիստ մնամ,—կկատարի նա գործը յուր,
— Այն ժամանակ իմ խնդիրը տանուլ կըտամ ես անշուշտ։

ԿՐԵՈՆՏ

Ինչ ես ուրեմն ցանկանում դու.—
Աքսորե՞լ ես ուզում, դուցե, ինձ երկրից։

ԷԴԻՊ

Ոչ.—սխալ ես. ուզում եմ քեզ տալ մահվան,
Այլ ոչ միայն աքսորել։

ԿՐԵՈՆՏ

Ուրեմն այդպես,—պարզ է արդեն։
— Դու չե՞ս զիջում և ինձ բնավ չե՞ս հավատում։

ԷԴԻՊ

Դու կը տեսնես և կիմանաս,— ինչ ասել է—
Իրար լինել նախանձաբեկ ու դաժան։

ԿՐԵՈՆՏ

Տեսնում եմ արդ,—որ խելագարկ ես արդեն։

ԷԴԻՊ

Բայց ոչ գործումն իմ սեփական։

ԿՐԵՈՆՏ

Դուցե նաև ի՞մ գործի մեջ։

ԷԴԻՊ

Զարագո՞րծ ես դու, սակայն։

ԿՐԵՈՆՏ

Չե՛ս հասկանում դու իմաստը խոսքերիդ։

ԷԴԻՊ

Բայց և այնպես՝ հնազանդվի՛ր դու իմ կամքին։

ԿՐԵՈՆՏ

Ո՛չ. քավ լիցի, երբ իշխողն է վատախնդիր։

ԷԴԻՊ

Ո՜հ, դու քաղաք, ավա՜ղ, ավա՜ղ, ժողովուրդ։

ԿՐԵՈՆՏ

Դու չես միայն քաղաքի մեջ.—կամ նաև ես։

ԵՐԳՉԱԽՈՒՄԲ

Դադարեցեք, թագավորնե՛ր. ես տեսնում եմ, իզեպ ահա՝
Ապարանքից արդեն դալիս է Թագուհի Իոկաստեն,
Նրա հանդեպ խռովությունը ձեր մեջ
Բարյացակամ թող վերջանա։

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

ԻՈԿԱՍՏԵ

(Ներս գալով)

Այդ ի՞նչ անմիտ վեճ կա այստեղ, ո՜վ դժբախտներ,
Որն, հիրավի, բորբոքել է ձեր լեզուն
Չե՞ք ամաչում այս տառապող համայն երկրից,
— Այլ զբաղված եք անձնական հաշիվներով ձեր ունայն։

Դու, ամուսին, շուտ տուն գնա, նույնպես և դու, ով Կրեոնտ,
— Մի՛ բորբոքեք առիթն անմիտ—որ չդառնա նա մեծ չարիք։

ԿՐԵՈՆՏ

Քո՜ւյր հարազատ. քո ամուսին էդիպն ահա
Սպառնում է ինձ ահավոր ազետներով երկակի.—
— Կամ արտաքսել հայրենիքից, կամ ժանտաժուռ մատնել
մահվան։

ԷԴԻՊ .

Ճիշտ է, այո՛, մեղապարտ է սա ճիշտ, ա՜յ կին,
Եվ չարագործ է ճանաչված,—դավադրաբար—
Նա սարքում է իմ կյանքի դեմ մահափորձ։

ԿՐԵՈՆՏ

Թո՛ղ որ զրկվեմ երջանկության ես բերկրանքից,
Թո՛ղ դառնապես արժանանամ ես անեծքին ահարկու,
Թո՛ղ կործանվեմ, դեսին մանեմ ես առհիշտ,
— Եթե իրոք կատարել եմ ես այն մեղքն,
Որի մեջ դու մեղադրո՜ւմ ես ինձ այդպես։

ԻՈԿԱՍՏԵ

Հանուն անմահ աստվածների, էդի՛պ, սրան հավատա,
— Նամանավանդ՝ սրա դաժան երդումին,—
Եվ իմ պատվին,—այլև սրա՛նց,
Այս ծերերին, որ կանգնած են մեր դեմ այստեղ։

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Աղերսում եմ,—ո՜հ, հավատա,
Հոգով, սրտանց դո՜ւ եղիր, թագավոր։

ԷԴԻՊ

Ի՞նչ ես ուզում, որ զիջեմ ես։

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Հարգիր սրան, որը առաջ իմաստուն է եղել միշտ,
Նվ հիմա էլ երդվեց երդմամբ մեծագույն։

ԷԴԻՊ

Սակայն դիտե՞ս, ի՞նչ ես խնդրում դու արդյոք։

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Գիտե՞մ, դիտե՞մ։

ԷԴԻՊ

Հայտնիր ապա,—ի՞նչ ասացիր։

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Անբասիր է քո բարեկամն ու մեղք չունի,—
Այդպես նրան, միայն մի մութ խոսքի ուժով,
Ջուր անպատիվ մի՛ արա։

ԷԴԻՊ

Ուրեմն ահա լա՛վ իմացիր,—ինձանից այդ հայցելով—
Իմ կործանումն ես դու հայցում,
Կամ իսկապես իմ աքսորանքն այս երկրից։

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Ո՛չ, քա՛վ լիցի. վկա է ինձ լույսի աստվածը Հելիոս,—
— Առաջնորդը բոլոր անմահ աստվածների.
Թող անընկե՛ր, անբարեկամ ես կործանվեմ դաժան մահով,
Թող զո՛ւրկ մնամ ես խնամքից աստվածության,—
— Եթե միայն հղացել եմ ես իմ մտքումն այդպիսի տենչ.
Այլ միմիայն ժանտ աղետն է այս հնք երկրի
Տանջանք ծնում իմ ցավագար հոգու մեջ։
Մի՞թե նրա վաղընջական աղետներին չարադեպ,
Անակնկալ պիտ միանա մի նոր աղետ դառնադառն։

ԷԴԻՊ

(Դառնալով Իոկաստեին)

Թո՛ղ որ գնա,—իսկ ես թեկուզ,—միանգամայն կործանվեմ,
Կամ խայտառակ, բոնի ուժով ես արտաքսվեմ այս երկրից։
— Այժմ խղճացի կարեկցաբար, բայց քո խոսքովն ազդեցին.
Եվ ոչ սրա՛, որն մշտապես ատելի՛ է և դժկամ։

ԿՐԵՈՆՏ

Պարզ է, այո՛, դու զիջեցիր ատելությամբ,—բայց կը զղջաս,
Երբ քո զայրույթը վերանա։ Քո դժնաբարք բնությունն
Քեզ կը դառնա ժանտ պատուհաս ծանրագին,—
Իբրև արդա՛ր հատուցում։

ԷԴԻՊ

Եվ վերջապես պիտ չքանա՞ս դու, թե՞ ոչ.
Գնա՛, կորի՛ր շուտ հեռացի՛ր իմ աչքից։

ԿՐԵՈՆՏ

Ես կը գընամ, քեզնից սակայն չը ճանաչված,—
— Բայց նո՞ւյնն եմ ես սրանց համար։

ԷԴԻՊ

Ի՞նչ ես, ա՛յ կին, զուր դանդաղում,
Արդյոք շուտով ներս չե՞ս տանի դու սրան։

ԻՈԿԱՍՏԵ

Նախ ուզում եմ—ես իմանալ ողջ պատահարն։

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Մի զրահոս, անհայտ համբավ,—իբրև մի խոսք, առաջ եկավ.
Եվ տանջում է մեզ չարաչար,
Թեպետ հաստատ բասրանք է դա մի անմիտ։

ԻՈԿԱՍՏԵ

Եվ երկո՞ւն էլ արդյոք միմյանց սպառնացին։

ԵՐԳՉԱԽՈՒՄԲ

Ճիշտ է, այո՛, երկուսով իսկ։

ԻՈԿԱՍՏԵ

Ի՞նչ խոսք եղավ, ինչի՞ մասին։

ԵՐԳՉԱԽՈՒՄԲ

Բավ է, կարծեմ։ Մինչ երկիրն է աղետի մեջ վշտապին,—
Վերջ տուր խոսքին, երբ վերացած է վեճն արդեն։

ԷԴԻՊ

Տես, ո՞րպիսի վերաբերմունք ես դու ասծում դեպի ինձ.
— Դու,—միշտ խոհեմ և բարեհաճ լավամարդ,—
Անտարբեր ես այժմ դեպի ինձ և սրտով իսկ անզգա։

ԵՐԳՉԱԽՈՒՄԲ

Ո՜հ, թագավոր, քանի՞ անգամ ասել եմ քեզ,—կրկնեմ նորից.—
Լա՞վ իմացիր.—խելացնոր պիտ լինեմ ես,
Կամ իսկ բնավ ունայնամիտ,
Եթե իրոք ես քեզ թողնեմ, դավաճանեմ,
— Քեզ, որ երկիրն իմ սիրելի, աղետի մեջ տառապող,
Վեր հանեցիր դեպի կյանքը երջանկավետ ու բարեբեր։
Եղի՛ր և այժմ նրա համար դու բարեսիրտ առաջնորդ։

ՏԵՍԱՐԱՆ ԶՈՐՐՈՐԴ

ԻՈԿԱՍՏԵ

Ասա, հանուն աստվածների,—հայտնիր և ինձ, թագավոր,
— Ի՞նչ էր իրոք, որ բորբոքեց զայրույթը քո ահավոր։

ԷԴԻՊ

— Ասեմ, ա՛յ կին, քանզի ես քեզ
Մեծարում եմ անհամեմատ ավելի։
— Կրեոնտը դավադիր է,—իմ դեմ դավա՞նք է նյութում։

ԻՈԿԱՍՏԵ

Եթե գիտես, պատմի՛ր, ասա՛
Ճիշտ պատճառը մեղադրանքի կամ դժտության։

ԷԴԻՊ

Նա ասում է, որ Լայոսի սպանողը ես եմ իրոք։

ԻՈԿԱՍՏԵ

Ի՞նքն այդ գիտե, թե՞ կրկնում է միայն կարծիքն ուրիշի։

ԷԴԻՊ

Ուղարկել էր աստ գուշակին նենգապատիր,
— Իսկ ինքն անձամբ բնավ ժխտում է յուր մեղքն։

ԻՈԿԱՍՏԵ

Թող այսպեսն ու այդ մտքերն և լսի՛ր ինձ.
Մահկանացու մարդկանց համար,—հավատացիր,—
Գուշակության զուր արվեստն է միշտ անիմաց և անմատույց,
Եվ ես դրան, ահավասիկ, քեզ կը բերեմ ճիշտ ապացույց։
Գուշակություն էր ստացել մի ժամանակ Լայոսն արքա,
(Ինքը Ֆոյբո՞ն էր գուշակել, թե՞ ոչ,—հաստատ չգիտեմ,
Բայց քրմից էր այդ նրա), որ ննջակա յուր օրհասին,
Նա կը սպանվի ինձնից ծնված որդու ձեռքովն իր հարազատ։
Մինչդեռ,—ինչպես պատմում են այդ, կիցքումն երեք ուղիների՝
— Անդ սպանել էին նրան օտարազգի ավազակներն.
Իսկ յուր որդուն,—իմ արդանդից երեք օրվա նոր ծնունդն,—
Ոտքն ու ձեռքը ամուր կապած նա ստլուկի միջոցով
Հրամայեց անմատչելի լեռան լանջից անդունդ նետել։

Այդպես ուրեմն ինքն Ապոլլոնն չը կատարեց այն, որ որդին
Դառնար յուր հոր մարդասպանը,—այն,—որ Լայոսն այն ժամանակ
Կրեր սարսափն յուր իսկ որդու և կործանվեր նրա ձեռքով:
Այդպե՞ս եղան հարցումների դուշակումներն հմայական:
Սակայն դրանց դու մի նայիր,—մի մտածիր այդ մասին:
Եթե աստված դիտավորյալ որևէ բան ցանկանա,
Նա հեշտությամբ այդ կը հայտնի և ինքն էլ իսկ այդ կատի:

ԷԴԻՊ

Այդ ամենից, որ ես հիմա նոր լսեցի,—
Ա՜յ կին, սաստիկ ալեկոծվեց իմ հոգին.
Եվ հուզվում է միտքըս ահա ինչպես ահեղ մի մրրիկ:

ԻՈԿԱՍՏԵ

Ի՞նչ հոգսով ես տանջվում արդյոք, այդ ասելիս:

ԷԴԻՊ

Քեզնից կարծեմ ես լսեցի,—դու ասացիր,—
Որ Լայոսը ճանապարհին սպանվեց անդ—կիցքռան երեք ոտքինների:

ԻՈԿԱՍՏԵ

Այո, այդպես պատմում էին,—չի վերացել դեռ համբավն այդ:

ԷԴԻՊ

Ի՞նչ տեղ է այդ, կամ ի՞նչ երկիր,
— Գիտես, ասա,—ո՞րտեղ արդյոք պատահարն այդ պատահեց:

ԻՈԿԱՍՏԵ

Այդ երկիրը, գիտեմ, կոչվում է Ֆոկիս.
Իսկ ճանապարհն բաժանվում է անդ երկուսի—
— Մեկը տանում է դեպ Դելփիք,—մյուսը՝ Դավլիս:

ԷԴԻՊ

Շա՞տ է անցել այն օրվանից,—ո՞րքան արդյոք ժամանակ։

ԻՈԿԱՍՏԵ

Փոքր ինչ առաջ այն օրերից,
Երբ դու այստեղ, այս երկրի մեջ հանդես եկար
Ու տեր դարձար իշխանության, ու ողջ քաղաքն այդ լսմացավ։

ԷԴԻՊ

Ավա՜ղ, ի՞նչ ես սահմանել, դու, Ջևս արարիչ,
Որ ժանտ թափես իբրև կրակ իմ գլխին։

ԻՈԿԱՍՏԵ

Ի՞նչ պատահեց քեզ, ով Էդիպ,—ինչո՞վ ես դու հուզված այդպես։

ԷԴԻՊ

Բավ է, այլևս պետք չէ հարցմունք։ Բայց ինձ ասա դու իրոք,
— Ի՞նչ կերպարանք ուներ Լայոսն. ի՞նչ հասակի տեր էր նա։

ԻՈԿԱՍՏԵ

Քաջահասակ, գեղագանգուր, գլուխը նոր ալեզարդ,
Տեսքով ուղիղ քեզ էր նման, քեզնից մի քիչ տարբերվող։

ԷԴԻՊ

Ավա՜ղ դժբախտ,—տեսնում եմ արդ, որ ինքնաբար,
Անգիտակից՝—ես ինքն եմ ինձ մատնել ահեղ անեծքի։

ԻՈԿԱՍՏԵ

Ի՞նչ ասացիր։ Սարսափում եմ նույնիսկ նայել քեզ, արքա՛։

ԷԴԻՊ

Սարսափում եմ ես վշտաբեկ,—
Գուցե դուշակն էր հեռատես և Ճիշտն ասաց.

Բայց կը պարզվի գործն առավել՝
Եթե, ա՜յ կին, մի բան նաև հայտնես ինձ։

ԻՈԿԱՍՏԵ

Ահաբեկված եմ ես թեպետ, բայց կը հայտնեմ, ինչ որ պիտեմ։

ԷԴԻՊ

Լոկ մի քանի մարդկա՞նց հետ էր ուղեվորված թագավորն,
Թե իր շուրջը ուներ բազում նա թիկնապահ զինվորներ,
Ինչպես վայել է արքային իշխանազոր։

ԻՈԿԱՍՏԵ

Լոկ հինգ հոգի էին նրանք, որոնց թվումն և սուրհանդակն.
Եվ Լայոսը ինքը մենակ ընթանում էր կառքի վրա։

ԷԴԻՊ

Ավա՜ղ, ավա՜ղ, պարզ է արդեն ինձ ամեն բան։
Բայց ո՞վ, ա՜յ կին, համբավ բերեց ձեզ այդ մասին։

ԻՈԿԱՍՏԵ

— Ստրուկ ծառան, որը փախել, ազատվել էր ինքը մենակ։

ԷԴԻՊ

Արդյոք հիմա մեր տա՞նն է նա գտնվում։

ԻՈԿԱՍՏԵ

Ո՛չ, իմ արքա։ Երբ հազիվ-հազ տուն դառնալով, նա տեսավ,
Որ Լայոսի մահից հետո քո ձեռքն անցավ իշխանությունն,—
Ինձ աղերսեց, ձեռքս բռնած,—խոսքեր հնչեց թախանձանքի,—
Որ նրան դյուղ ես ուղարկեմ,—դեպ արոտներն իրեև հովիվ,
Որպեսզի միշտ նա քաղաքից հեռու մնա։
Ու ես նրան արձակեցի։ Մինչդեռ եթե չլիներ այդ,—
Ստրուկն անշուշտ կարժանանար առավել մեծ հարգանքի։

ԷԴԻՊ

Չէ՞ր կարելի, որ նա կրկին և շուտափույթ ետ դար այստեղ։

ԻՈԿԱՍՏԵ

Կարելի է։ Բայց ինչո՞ւ ես փափագում այդ։

ԷԴԻՊ

Վախենում եմ, որ մի գուցե քեզ արդեն
Ես հայտնեցի չափազանց շատ, շատ բաներ.—
Ուստի, ա՜յ կին, ցանկանում եմ նրան շուտով տեսնել այստեղ։

ԻՈԿԱՍՏԵ

Նա պե՛տք է գա և կը գա,
Սակայն և ես արժանի եմ իմանալու ամեն բան...
Ո՜հ թագավոր, ի՞նչ ծանրագին հոգսերով ես տառապում դու։

ԷԴԻՊ

Ինքըս մատնված անհուսալի այս վիճակին,
Չեմ մերժի քեզ։ Գտնվելով աղետի մեջ դառնադառն,
Ո՞ւմն առավել կամ դերադաս ես պիտ պատմեմ, եթե ոչ քեզ։
Հայրն իմ, ուրեմն, Պոլիբոսն էր կորինացի,
Իսկ մայրը իմ Մերոպեն էր դորեացի։ Ահավասիկ՝
Քաղաքի մեջ ես համարվում էի ավագ և քաջանուն,—
Նախքան այդ դեպքը պատահար, որն արժանի էր զարմանքի,
Որը սակայն չարժանացավ իմ ջանքերի հոգածությանն։
Մի դիպվածում խնջույքի մեջ՝ հարբած մի մարդ
Հայտնեց հանկարծ, որ ես իմ հոր կեղծ զավակն եմ
անհարազատ։
Ես, վրդովված, հաղիվ այդ օրն համբերեցի։ Մյուս առավոտ
Վաղվաղակի՝ հետս վերցրած վիրավորիչ խոսքն ասողին,
Ես գնացի դեպ իմ հայրը, դեպի մայրն իմ հարցմունքի։
Նրանք հուզվեցին այդ առիթով նաև նրանք վշտագին։
Նրանց հուզմունքն ուրախություն պատճառեց ինձ,—ներքուստ
սակայն

Մաշում էր ինձ կասկածն ահեղ.—մինչ համբավն էր շարժվում գաղտ։
Արդ՝ իմ հորից և իմ մորից—ճամփա ընկա ես ծածուկ
Եվ գնացի դեպի Դելփիք։ Բայց Ցոյբոսից պատվական
Գատասխանի չարժանացա։ Նա ետ դարձրեց ինձ այնտեղից,
Գուշակելով ահեղություն, նողկանք ու վիշտ աղետաբեր։—
Անդ իմացա, որ անկողնով պիտ միանամ ես իմ մոր հետ,
Որ այնպիսի պետք է ծնեմ ես չարաղետ մի սերունդ,
Որի դեմքից անտանելի գարշանք կղգա ամեն մարդ։
Որ ես նաև պիտ սպանեմ իմ հարազատ ծնող հորն։
Այդ լսելով, Կորնթոսը ես թողեցի ինքնակամ,
Որն այնուհետ լոկ աստղերով ես իմանամ նրա դիրքն։
Փախա այդպես դեպ երկրներն, ուր չէր կարող տեսնել ոչ ոք
Նախադուշակ առականքիս ժանտ կատարումն անողոք։
Արդ՝ շրջելով, եկա հասա ես այն վայրը և այնտեղ՝
Որտեղ, ինչպես դու պատմեցիր, կործանվել է քո արքան։
Ես քեզ, ա՛յ կին, պատմեմ իսկույն գործի ամբողջ ճշմարտությունն.—
Երբ ես հասա կիցքին երեք ճանապարհի, այնտեղ հանկարծ,
Ճեպ անցնելիս, դեմ-հանդիման պատահեցին
Մի սուրհանդակ և մի ծերուկ, զերդ հիշեցիր, բազմած կառքին։
Ճանապարհից ինձ վտարել ուզեց բռնի—կառապանն—
Ու նրա հետ նաև ծերուկն։ Ես զայրագին բորբոքված,
Հարվածեցի ինձ ղուր բոթող կառապանին։
Մինչդեռ ծերուկն, երբ նկատեց, որ ես կառքին մոտեցա,
Յուր երկսայրի խարազանով հանկարծակի զարկեց գլխիս,—
Սակայն հատուցն իր ստացավ անհավասար.—անմիջապես՝
Ձեռքիս հզոր գավազանով նա, ջախջախված,
Կառքի միջից ժանտ գլորվեց, ընկավ ցած, մեջքի վրա։
Ապա իսկույն կոտորեցի ես նաև մյուս բոլոր անձանց։
Եթե կայուս Թագավորի և անծանոթ այդ մարդու մեջ
Կա հիրավի ազգակցություն,—ապա ուրեմն կա՞ մի մարդ
Ինձնից ավել աստվածատյաց, առավել հեք և անբախտ,—
Մի մարդ, որին երբեք ոչ-ոք յուր հարկի տակ չի ընդունի,—
Ոչ անծանոթ օտարազգի, ոչ հայրենի քաղաքացին,
Որին ոչ ոք երկրի վրա խոսք չի ասի ողջույնի,
Եվ յուր տնից ամեն մի մարդ կը հալածի դժընդակ։

Արդ՝ ո՞վ է այդ թշվառագույնն, թե ոչ իրոք միայն ես,
Որ անեծքին ինձ մատնեցի այս չարաղետ և անողոք։
Արդ՝ պղծում եմ ես մեռածի մահիճը այժմ իմ այս ձեռքով,
Որով երբեմն սպանվեց նա,—ոճրագործ չե՞մ ես միթե։
Կամ մի՞թե ես չարագործ չեմ,—ամենավատ եղեռնագործն։
— Գուցե պետք է, որ ես փախչեմ,—սակայն, ավա՜ղ,
Եթե փախչեմ,—չեմ կարող ես նայել նույնիսկ ծնողներիս,
Կամ ոտք դնել իմ հայրենի հողի վրա.—այդ անելով,
Ամուսնությամբ իմ մորս հետ պետք է կապվեմ ես դաժան։
Պիտ սպանեմ հորս ծնող,—Պոլիբոսին ինձ սնուցող։
Այո, բնավ կասկած չը կա,—այդ է խոսքը ճշմարիտ,—
Որ ամենն այդ սահմանել է աստվածներից մեկն ու մեկն,—
Իբր անողոք մի պատուհաս՝ ինձ պես մարդուն թշվառագույն։
Բայց ո՛չ, երբե՛ք։ Ո՜հ, սրբություն աստվածների երկնակյաց,
Ո՜հ, արեգակ,—թող չըտեսնեմ շողյունը քո իմ աչքով.
Թող չքանա՜մ մահկանացու մարդկանց միջից առանց հետքի,
— Գեթ չը տեսնեմ ինձ խայտառակ նշանակովն անարգված։

ԵՐԳՉԱԽՄԲԻ ԽՄԲԱՊԵՏ

Վրդովված ենք և մենք, արքա, բայց և այնպես,
Քանի գործը չես իմացել ականատես վկայից,
Հույսդ բնավ մի կտրիր։

ԷԴԻՊ

Ի՞նչ է մնում ինձ հուսալու, աննշան է և այդ հույսն,
Բայց սպասեմ միայն հովվի գալստյան։

ԻՈԿԱՍՏԵ

Սակայն ինչո՞վ կարող է քեզ թեթևացնել նրա գալուստն։

ԷԴԻՊ

Բացատրեմ քեզ։ Եթե նույնը ցույց տա և նա, ինչպես սրդեն
Պատմել ես դու,—արհավիրքից ես խուսափած կը լինեմ։

ԻՈԿԱՍՏԵ

Բայց ի՞նչ խոսք ես ինձնից լսել դու էապես կարևոր։

ԷԴԻՊ

Դու պատմեցիր, որ իբրև թե ասել է նա,
Որ արքային սպանեցին ավազակներն։
Եթե նույնը նաև հիմա նա հաստատի,—
— Այսինքն, որ սպանողներն անդ եղել են մի քանի մարդ,
Ապա ուրեմն մարդասպանը ձեր արքայի՝ ես չեմ բնավ.
Քանզի պարզ է, որ մեկն երբեք հավասար չէ բազմության։
Եթե ասի, որ սպանողն էր միմիայն մի ճամփորդ,
— Կասկած չը կա, որ ինձ վրա կրնկնի մեղքը բացահայտ։

ԻՈԿԱՍՏԵ

Այո՛, եթե այդ է խնդիրն,— նա իսկ և իսկ այդ խոսքն ասաց,
Եվ չի կարող յուր ասածը այլևս ժխտել բնավին,—
— Այդ լսել եմ ոչ միայն ես, այլև քաղաքը ամբողջ։
Եթե նույնիսկ հրաժարվի յուր խոսքերից նա վաղանց,
Այդ հանգամանքն, երբեք,—արքա՛, չի հաստատի
Արդարացի ճշմարտությունն Լոքսիասի դուշակության,
Որ իբր Լայոսն պիտ կործանվեր ինձնից ծնված որդու ձեռքովն,—
Մինչ չէր կարող հեք զավակն իմ նրան երբեք սպանել,
Երբ նախքան այդ՝ ինքն էր արդեն կործանված։
Ուստի և ես չեմ հավատում հմայանքին ասավածների—
— Ոչ ներկայում, ոչ էլ գալիք գործերի մեջ ապագա։

ԷԴԻՊ

Ճարտարամիտ ես դու դատում, բայց և այնպես մի դանդաղիր—
Մարդ ուղարկել, որ շուտով գա ականատես գյուղացին։

ԻՈԿԱՍՏԵ

Արդ՝ կուղարկեմ ես անհապաղ, իսկ դու հիմա եկ, տուն գնանք,—
Չէ՞ որ միայն լավը կանեմ և հաճելին ես քո սիրույն։

(Գնում են պալատ)։

ՍՏԱՍԻՄ ԵՐԿՐՈՐԴ

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Ստրոֆ 1.

Տո՛ւր ինձ, տո՛ւր ինձ, ճակատագիր,
Տուր զորություն, որ անբասիր ես կառարեմ
Արժանագով սրբությունը խոսքերի,—
Եվ պերճանքը ամեն տեսակ վսեմափայլ գործերի,
Որ մեծարեմ ես օրենքներն բարձրակա,
— Այն օրենքներն, որ ծնունդ են հավերժացող ճշմարտության,
Որոնց հայրը վսեմական ինքն է միայն,—Օլիմպոսն,—
Որոնք բնավ մահկանացու մարդկանց ցեղից չեն ծնված.
— Նրանց վսեմ ծննդավայրն երկինքն է լոկ բարձրաբերձ։
Մոռացության ենթակա չեն նրանք երբե՛ք,
Եվ ապրում է միշտ նրանց մեջ ինքը աստված
Ամենազոր, անծերական և անեղծ։

Անտիստրոֆ 1.

Գոռոզությո՞ւն, ծնունդ ես դու իշխանության.
Վխտությունը, որն հագեցած բարիքներով,—անմտաբար
Չի ճանաչում սահման ու չափ,—այլ անօգուտ
Երջանկության վերին գագաթն է բարձրանում միշտ անփույթ,—
Մինչ այնտեղից, այդ ծայրահեղ բարձունքներից, անակնկալ
Գահավիժում է անխուսափ, նետվելով ցած դեպի անդունդ,
Քանզի գոռոզն ոտքի վրա իր երերուն
Անկարող է երկարատև այնտեղ մնալ հաստատուն։
Իսկ քեզ, աստվա՞ծ, աղերսում եմ սրտագին,
Մի ընդհատիր դու քո պայքարն ճշմարտադյուտ,
Որն հորդորիչ է քաղաքին,
Աստվա՞ծ, եղիր դու ինձ հավերժ հովանավոր ու պաշտպան։

Ստրոֆ 2.

Եթե մեկը խոսքովն իրոք կամ գործի մեջ
Խիստ գոռոզ է և մեծամիտ—
Ու չի հարգում աստվածներին սրտատենչ,

— Չի սարսափում արդարության և օրենքից ճշմարիտ,—
Թող որ նրան,—այդ գոռոզին ժանուժոտ
Հաղթահարի ճակատագիրն աղետալի և անգութ։
Եթե, ո՛վ մարդ, շահ ես փնտրում, շահեստի մեջ անարդար,
Կամ անքնին խորհուրդներն ես գործնում կրքի առարկա,
Եվ արարքից շար ու դաժան չես խուսափում խենթաբար,
— Հույս մի՛ տածիր,—թե կարող ես նեան արդարի երկնագո
— Վանել մի-կերպ կրծքից քո։
Քանզի եթե գործն ամբարիշտ
Արժանանա մեծարանքի,
Էլ ինչո՞ւ ես ճշմարտության երգը այսպես հնչում միշտ։

Անտիստրոֆ 2.

Դեպ սրբազան պորտը երկրի
Ես չեմ գնա աղոթքի,
Էլ չեմ գնա ես Աբաևան սուրբ տաճարն,
— Չեմ այցելի Օլիմպոսի սրբավայրն,
Եթե իրոք չի կատարվում այն, ինչ կամքովն աստվածների
Վիճակված է մարդկանց համար։
— Սակայն եթե կորովագույնն ես դու իրոք, Զևս երկնավոր,
Եվ ամենքին իշխում ես դու ամենազո՞ր,—
— Թող քո անմահ իշխանության կորովից
Նա բնավին գաղտ չը մնա։
Կործանվում են Լոքսիասի դուշակումները աստվածատուր,
Անհետանում է սրբությունն աշխարհից,
Վերանում է Ապոլլոնի մեծարանքը անխնա,—
— Չքանում է աստվածային՝ ամենուր։

ԷՊԻԶՈԴ ԵՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

(Իոկաստեն ներս է գալիս, ձեռքին թղթով ծխրեճաճյուղ և խնկով լցված մի արկղիկ, նրա հետևից գալիս է ճաժիշտը)։

ԻՈԿԱՍՏԵ

Իշխանավոր երկրի տերեր. իմ մեջ ահա միաթ հղացավ.—
— Ձեռքիս բռնած խունկ ու պսակ

Գնամ, շրջեմ տաճարները աստվածների.
Քանդի վշտից դըժբընդակ
Ալեկոծված է չափազանց հոգին Էդիպ արքայի.
Եվ անցյալի փորձով արդեն՝ նա չի կարող,—
Իբր անիմաց, ճշդրիտ դատել դործի մասին ապագա,—
Այլ լսում է նրանց միայն, ով պատմում է ահ ու սարսափ,
Մինչ իմ խորհուրդն անուշադիր է թողնում միշտ։

(Զիբեենու ձյուղը դնում է Ապոլլոնի արձանի տակ և խունկի հատիկները ձգում կրակի մեջ)։

Քեզ եմ դիմում, ո՜վ Ապոլլոն Լիկիական,
— Մերձավորն ես դու ամենից,—պերճ ընծաներ եմ բերել քեզ.
Քո բարեգութ վճիռը մեզ դեթ հայտնիր,
Մենք բոլորս,—երբ նեռված է նա հուզմունքի ծովի մեջ,
Նրան նայում ենք ահաբեկ,
Ինչպես հուզած նավավարին ահեղ ժամին փոթորիկի։

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

(Ներս է մտնում կորնթացի սուրհանդակը)։

ԿՈՐՆԹԱՑԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Արդյոք ձեզնից, այլազգիներ, կարո՞ղ եմ ես դեթ իմանալ,
— Ո՞րն է այստեղ ապարանքը,—պալատն Էդիպ թագավորի,
Կամ ավելի լավ կլինի,
Եթե հայտնեք,—ո՞րտեղ է այժմ ինքը նա։

ԵՐԳՉԱԽՈՒՄԲ

Տունը նրա սա է ահա, օտարական,
Ինքը սակայն ներսն է հիմա.
— Իսկ սա նրա ամուսինն է,—մայրը նրա զավակների։

ԿՈՐՆԹԱՑԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Ո՜հ, արքայի դու ամուսին գերամեծար,
Միշտ երջանիկ կյանք ունենաս ու մարդկանց մեջ
Հաղե՜ր ապրես երանավետ։

ԻՈԿԱՍՏԵ

Նույնը և քեզ ահավասիկ կը ցանկամ ես,
Արժանի ես նույն մաղթանքին այդ բարեսիրտ խոսքիդ համար,
Բայց ի՞նչ կարիքն է քեզ բերել.—ի՞նչ խոսք ունես ասելիք։

ԿՈՐՆԹԱՑԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Միայն բարիք, ով թագուհի.—երջանկություն
Քո ամուսնուն և օջախին։

ԻՈԿԱՍՏԵ

Բայց ի՞նչ բարիք, ո՞ւմ կողմից ես ուղարկված դու։

ԿՈՐՆԹԱՑԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Կորնթոսից եմ ես եկած, և խոսքը այն, որ պիտ ասեմ,
Ուրախարիթ քեզ կը լինի,—այլ կերպ լինել չի կարող,
Թեպետ դուցե վիշտ պատճառի։

ԻՈԿԱՍՏԵ

Ի՞նչ կա սակայն։ Ի՞նչպես է, որ միևնույն խոսքն ու համբավն—
Երկու տարբեր ուժ ունի։

ԿՈՐՆԹԱՑԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Իսթմիական երկրի բնիկ ժողովուրդն
Ցանկանում է դրան կարգել թագավոր,—
— Այնտեղ այդպես ահավասիկ որոշեցին։

ԻՈԿԱՍՏԵ

Ինչպե՞ս. մի՞թե ծեր Պոլիբոսն անդ չի իշխում տակավին։

ԿՈՐՆԹԱՑԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Այլևս ոչ։ Նա մահացած, գերեզմանումն է արդեն։

ԻՈԿԱՍՏԵ

Ի՞նչ ասացիր։ Մի՞թե մեռավ հայրն էդիպի։

ԿՈՐՆԹԱՅԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Այո, մեռավ.
Եթե խոսքն այս ճշմարիտ չէ, ինքս եմ մահվան արժանի։

ԻՈԿԱՍՏԵ

(Ծառային)

Մի դանդաղիր, ո՛վ սպասիկ, շուտով գնա
Եվ արքային կանչիր,—թող գա՛։ Ո՛ւր ես արդյոք
Դու, հմայանք աստվածային գուշակության.
Սարսափում էր էդիպն իրավ մի ժամանակ,
Որ կը սպանի ինքը նրան, յուր ձեռքով,
Ուստի փախավ հայրենիքից դեպ հեռուներն,
Մինչ կործանվեց նա յուր մահովն օրհասական,—
Եվ ո՛չ ձեռքովն իր որդու։

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

ԷԴԻՊ

(Ներս է գալիս էդիպը)։

Ո՛վ Իոկաստե, սիրատենչիկ իմ ամուսին,
Ինչո՞ւ արդյոք ապարանքից ինձ դու կրկին կանչեցիր։

ԻՈԿԱՍՏԵ

Մի լավ լսիր, ի՞նչ է ասում այս մարդն, ահա,
Եվ լսելով, ինքըդ դատիր.—Ո՞ւր մնացին
Կամ ի՞նչ եղան քո սրբազան գուշակումներն աստվածների։

ԷԴԻՊ

Բայց ո՞վ է սա։ Ի՞նչ է ուզում ասել ինձ։

Կորնթոսից է սա եկած—և բերել է քեզ համբավ,
Որ հայրը քո,—ծեր Պոլիբոսն, այլևս չը կա,—
Այլ մահացել է նա արդեն։

ԷԴԻՊ

Ի՞նչ ես ասում,—օտարական. ինքըդ անձամբ ինձ պատմիր։

ԿՈՐՆԹԱՑԻ ՍՈԻՐՀԱՆԴԱԿ

Եթե նորից և բացահայտ պետք է պատմել այդ համբավն,—
— Լա՛վ, իմացիր, որ նա գնաց ճանապարհով մեռյալների։

ԷԴԻՊ

Սպանվա՞ծ է, թե կործանվեց հիվանդությամբ պատահական։

ԿՈՐՆԹԱՑԻ ՍՈԻՐՀԱՆԴԱԿ

Քի՛չ բան է պետք,—որ ծերուկի կյանքը մարի։

ԷԴԻՊ

Ո՛հ, երևի հիվանդությամբ է վախճանվել դժբախտն այդ։

ԿՈՐՆԹԱՑԻ ՍՈԻՐՀԱՆԴԱԿ

Հետևանք է այլև իր ծեր և ալևոր հասակի։

ԷԴԻՊ

Ավա՛ղ, կին իմ, պետք չէ հարգել զոհարանը Դելփիքի,
Եվ հնչյուններն թռչունների երկնավոր,
Որոնք երբեմն նշել էին սուրբ բարբառով գուշակման,
Որ ես մի օր պիտ սպանեմ իմ ծնող հորն հարազատ.
Մինչդեռ հայրըս վախճանված է,—արդեն պառկած խոր
հողի տակ.
Իսկ ես այստեղ—ընդդեմ նրան նիզակ ու սուր չեմ շարժել։

Սակայն գուցե նա մահացավ, վշտանալով իմ մասին.—
— Այդ իմաստով ճի՞շտ է գուցե—ես եմ նրա մահվան պատճառն։

Մինչ տանելով յուր հետ ամբողջ այդ վաղեմի գուշակությունն։
Ծեր Պոլիբոսն հիմա արդեն դռնվում է տանն Հադեսի.
— Իսկ հմայանքը իմ մասին՝ ոչի՞նչ է այժմ, սի՞ն մի հնչյուն։

ԻՈԿԱՍՏԵ

Այո։ Չէ՞ որ այդ էի միշտ ես քեզ ասում, պնդում վաղուց։

ԷԴԻՊ

Այո, դու միշտ ասում էիր, մինչ սարսափն էր հետևում ինձ։

ԻՈԿԱՍՏԵ

Այսուհետև մի հավատար,
Եվ քո սրտում այդ լուրերին տեղ մի տար։

ԷԴԻՊ

Սակայն ինչպե՞ս կարող եմ ես
Չը սարսափել իմ հարազատ մոր անկողինն պղծելուց։

ԻՈԿԱՍՏԵ

Պետք չէ բնավ, որ մարդ կյանքումն սարսափ զգա.
Երբ միմիայն ապրում է նա պատահմունքի զորությամբ,
Կամ երբ չկա նախատեսվածն անխուսափ։
Մարդ ես, իրավ, ապրի՛ր, ինչպես կարող ես դու ըստ վիճակի,
Իսկ դու, Էդիպ, մի վախեցիր այսուհետև,
Որ իբրև թե կամուսնանաս դու հարազատ քո մոր հետ։
Հին մարդկանցից շատ շատերն են տեսել իրենց երազի մեջ՝
Մոր հետ մեկտեղ, մեկ անկողնում միացած։
Բայց մոռացվել են երազներն այդ խաբուսիկ,
Ու ապրել են մարդիկ կյանքում ավելի հեշտ ու խաղաղ։

ԷԴԻՊ

Այդ ամենը բարբառում ես դու խելացի ու չքնաղ,
Բայց քանի որ կենդանի է իմ ծնող մայրն—
Եվ ապրում է նա տակավին,—անխուսափ են սարսափներն,
— Ահաբեկված եմ ես իրոք,—թեպետ ճարտար ես խոսում դու։

ԻՈԿԱՍՏԵ

Բայց քեզ քո հոր գերեզմանը սփոփա՞նք է մեծագույն։

ԷԴԻՊ

Համաձայն եմ. մեծ հույս է այդ,
Կենդանի է մայրըս սակայն, սարսափում եմ ես դրանից։

ԿՈՐՆԹԱՅԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Ի՞նչ կին է այդ, որից իրոք սարսափում ես դու այդքան։

ԷԴԻՊ

Մերոպեն է, ո՛վ ծերուկ,
Որ կողակիցն էր Պոլիբոս թագավորի։

ԿՈՐՆԹԱՅԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Եվ ի՞նչ սարսափ է, հիրավի, ազդում նա ձեզ։

ԷԴԻՊ

Կա ահավոր աստվածական դուշակություն, օտարական։

ԿՈՐՆԹԱՅԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Կարելի՞ է, որ հայտնես այդ, թե՞ արգելված է իմանալ։

ԷԴԻՊ

Լսի՛ր, պատմեմ.—դուշակել էր Լոքսիասն. ինձ մի ժամանակ,
Որ մահիճով ամուսնական ես իմ մոր հետ կը միանամ.

Եվ կը թափեմ իմ ձեռքով իմ հարազատ հոր արյունն.—
Ուստի վաղուց ապրում եմ ես Կորնթոսից շատ հեռու։
Եվ թեպետ աստ երջանիկ եմ ես չափազանց ու ցնծավետ,
— Բայց առավել հաճելի է և արտատենչ
Ապրել այնտեղ,—ծնողների դորովագութ աչքի տակ։

ԿՈՐՆԹԱՑԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Եվ այդ բանից ապրատփահար—աքսորակա՞ն դու դարձար։

ԷԴԻՊ

Այո, ծերուկ,—որպեսզի ես հայրասպան չը դառնամ։

ԿՈՐՆԹԱՑԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Արդ՝ քեզի ի դեպ, իմ թագավո՞ր, ես կազատեմ այդ սարսափից,
Քանի որ աստ ես եկել եմ իբրև բարի սուրհանդակ։

ԷԴԻՊ

Եվ կը ստանաս քո գործին այդ՝—վարձ ու պատիվ արժանավոր։

ԿՈՐՆԹԱՑԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Ես եկել եմ այստեղ հենց այդ նպատակով. ո՛վ արքա,
Որ դու քո տուն վերադառնաս և անդ ինձ տաս վարձ ու բարիք։

ԷԴԻՊ

Ո՛չ, ես քնալ եմ չե՞մ դառնա այնտեղ, դեպի իմ ծնողներն։

ԿՈՐՆԹԱՑԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Ո՜հ, իմ զավակ, լա՜վ չը գիտես, թե ի՞նչ ես դու կատարում։

ԷԴԻՊ

Ի՞նչ կա, ծերուկ,—ասա շուտով, պատմի՛ր հանուն աստվածների։

ԿՈՐՆԹԱՅԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Եվ դու նրա՞նց պատճառով լոկ
Խուսափում ես և չես ուզում վերադառնալ հայրենիք։

ԷԴԻՊ

Երկյուղ ունեմ իսկապես,
Որ մի գուցե գուշակությունը Ֆոյբոսի կատարվի։

ԿՈՐՆԹԱՅԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Խուսափում ես, որ չը պղծես դու մահի՞ճը քո ծնող մոր։

ԷԴԻՊ

Այո, ծերո՛վ իմ պատվական, սարսափում եմ միշտ այդ բանից։

ԿՈՐՆԹԱՅԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Արդ՝ իմացի՛ր, որ քո երկյուղն անտեղի է և իզուր։

ԷԴԻՊ

Ի՞նչպես։ Չէ՞ որ ես հարազատ զավակն եմ այդ ծնողների։

ԿՈՐՆԹԱՅԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Թեկուզ այսպես. Պոլիբոսը արյունակից չի եղել քեզ։

ԷԴԻՊ

Ի՞նչ ասացիր.—Մի՞թե իրոք Պոլիբոսից ես չեմ ծնված։

ԿՈՐՆԹԱՅԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Ո՛չ ավելի, քան ես ինքըս—կամ ճիշտ այնքան, որքան ես։

ԷԴԻՊ

Ինչպե՞ս կարող էր այդ լինել, որ զավակը հայր չունենա։

ԿՈՐՆԹԱՅԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Բայց և այնպե՛ս,—քեզ չի ծնել—ոչ նա, ոչ ես։

ԷԴԻՊ

Թե այդպես է,—ինչո՞ւ էր ինձ որդի կոչում։

ԿՈՐՆԹԱՅԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Որովհետև անզավակ էր մինչև այդ։

ԷԴԻՊ

Ինձ, օտարի ձեռքից վերցրած, կարո՞ղ էր նա այդքան սիրել։

ԿՈՐՆԹԱՅԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Արդ՝ իմացի՛ր, որ իմ ձեռքից նա ընդունեց պարգևն այդ։

ԷԴԻՊ

Դու գնեցի՞ր, թե՞ ինձ գտար և հանձնեցիր ապա նրան։

ԿՈՐՆԹԱՅԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Քեզ ես գտա Հիթերոնի անտառապատ ձորերի մեջ։

ԷԴԻՊ

Եվ ի՞նչ գործով, ինչո՞ւ էիր շրջում այնտեղ այն վայրերում։

ԿՈՐՆԹԱՅԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Նշանակված էի այնտեղ
Իբրև հովիվ նախիրներին լեռնական։

ԷԴԻՊ

Դու թափառում էիր այնտեղ իբրև վարձկա՞ն մի հովիվ։

ԿՈՐՆԹԱՅԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Ո՜հ զավակս,—քեզ ես իրո՛ք փրկիչ դարձա այն ժամանակ։

ԷԴԻՊ

Ինչո՞վ էի այն ժամանակ ես հիվանդ,
Եվ ո՞րպիսի աղետի մեջ ինձ գտար...

ԿՈՐՆԹԱՅԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Քո ոտքերի վիրավորված հոդերն են քեզ ճիշտ վկա։

ԷԴԻՊ

Ի՞նչ ես, ավա՜ղ, իզուր հիշում աղետները վաղընջյան։

ԿՈՐՆԹԱՅԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Եվ ես ինքս արձակեցի այն ժամանակ
Ոտքերիդ մեջ խորունկ վարսված պիրկ կապանքն։

ԷԴԻՊ

Ինձ, տակավին խանձարուրի մեջ պատած,
Մի՞թե, ավա՜ղ, կաշկանդել էր
Այդ ահավոր ծանր վիճակը խայտառակ։

ԿՈՐՆԹԱՅԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Եվ անունն իսկ դու ստացար քո վիճակին համաձայն։

ԷԴԻՊ

Ասա՛, Հանուն աստվածների,
Ո՞վ էր դրա մեղավորը,—հա՞յրըս, մա՞յրըս, թե՞ այլ մի ոք։

ԿՈՐՆԹԱՅԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Ես չը գիտեմ։ Այդ կիմանա և տեղակ է միայն նա,
Ով ինձ հանձնեց։

ԷԴԻՊ

Ուրեմըն քեզ այնտեղ հանձնեց մի ա՞յլ մարդ,—
Եվ ոչ անձամբ ինքըդ գտար։

ԿՈՐՆԹԱՑԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Ո՛չ, քեզ, արքա, անդ ինձ հանձնեց մի այլ հովիվ։

ԷԴԻՊ

Իսկ ո՞վ է նա։ Գուցե դու ինձ տեղյակ անես նրա մասին։

ԿՈՐՆԹԱՑԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Նա ինքն իրեն, կարծեմ, ծառա էր անվանում Հայոսի։

ԷԴԻՊ

Այսինքըն այն թագավորի,
Որը երբեմըն իշխում էր այս երկրի մեջ։

ԿՈՐՆԹԱՑԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Ճիշտ է, այո,—նախրապանը այդ արքայի։

ԷԴԻՊ

Կենդանի՞ է նա տակավին։ Կարո՞ղ եմ ես տեսնել նրան։

ԿՈՐՆԹԱՑԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Իբրև բնիկ, տեղացի—
Ամենից լավ դո՛ւք այդ պետք է իմանաք։

ԷԴԻՊ

(Դիմելով երգչախմբին)

Գուցե ձեզնից մեկն ու մեկը, ո՞վ ծերուկներ,
Ճանաչում է նախրապանին, որի մասին խոսեց նա.

Եթե կա մեկն, որ տեսել է նրան գյուղում կամ այստեղ,
Թող ցույց տա մեզ, որ բաց անենք այս հանգամանքն վերջապես։

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Կարծեմ նա հենց այն գյուղացին է իսկ և իսկ,
Որին տեսնել դու կամեցար մի փոքր առաջ.—
Նրա մասին ամենից լավ քեզ կը պատմի Իոկաստեն։

ԷԴԻՊ

(Դառնալով Իոկաստեին)

Դու, Իոկաստե, գիտե՞ս արդյոք,—այն հովիվն,
Որին այստեղ մենք կանչելու ուղարկեցինք,—նա՞ է ճիշտ,
Որի մասին խոսեց սա։

ԻՈԿԱՍՏԵ

Ո՞վ, ի՞նչ ասաց։ Ո՛չ, բնավին մի մտածիր դու իզուր,
Մի պրպտա, այդ հիշելով,—մի քրքրիր ամեն բան։

ԷԴԻՊ

Ո՛չ. այդ բնավ գլուխս չի դա։ Այս ապացույցն իմ ձեռքին
Ես չեմ կարող չը մերկացնել իսկությունը ծագումիս։

ԻՈԿԱՍՏԵ

Աղաչում եմ ես քեզ, հանուն աստվածների,
Կյանքդ սիրես,—մի՛ աշխատիր և մի խոկա այդ մասին,
— Բավ է որքան տանջվում եմ ես դառնալից։

ԷԴԻՊ

Տոկուն եղի՛ր, մի՛ վախենա.— եթե իրոք իմ մորից
Երրորդն եմ ես, եթե նույնիսկ ստրուկ եմ ես եռակի,
— Ո՛չ, դրանով չես զրկվի դու քո ծագումից ազնվական։

ԻՈԿԱՍՏԵ

Ավա՜ղ, լսի՛ր, լսի՛ր դու ինձ,—մի կատարիր այդ բնավ։

ԷԴԻՊ

Ինձ համոզել դու չես կարող։ Պիտ իմանամ գործն հաստատ։

ԻՈԿԱՍՏԵ

Գործին տեղյակ՝ ես լավագույն այդ խորհուրդն եմ տալիս քեզ։

ԷԴԻՊ

Այդ լավագույն քո խորհուրդն է, որ տանջում է ինձ վաղուց։

ԻՈԿԱՍՏԵ

Ավա՜ղ, դժբա՜խտ։ Գեթ դու երբե՛ք չիմանայիր, թե ո՞վ ես դու։

ԷԴԻՊ

(Թիկնապահներին)

Շուտո՛վ, շուտո՛վ գտեք, բերեք նախրապանին՝ այստեղ ինձ մոտ.
Իսկ սա այստեղ թող դեռ հրճվի յուր ծագումովն ազնվական։

ԻՈԿԱՍՏԵ

Ավա՜ղ, ավա՜ղ. դժբախտ ես դու. ահա միակ խոսքն է սա,
Վերջին խոսքը, որ ունեմ քեզ ասելիք,—
— էլ ոչ մի խոսք դու ինձանից լսելու չե՛ս հավիտյան։

(Հեռանում է)

ՏԵՍԱՐԱՆ ԶՈՐՐՈՐԴ

ԵՐԳԱԽՈՒՄԲ

Արքա՛ էդիպ. կինըդ գնաց դաժան վշտով ալեկոծված,
Երկնչում եմ,—ո՜հ, մի գուցե հանկարծ նրա լռությունն
Անդ բռնկվի ժանտ աղետով ահավոր։

ԷԴԻՊ

Թող բռընկվի, ինչպես ինքը կը կամենա։ Սակայն ես
Ցանկանում եմ սակայն իմանալ իմ գոյության,—

— Իմ ծագումը, թեկուզ լինի նա հիրավի ստորադույն։
Հպարտ է նա,—սընափառ է կինն ըստ ասենչող յուր բնույթի,
Ուստի ստոր իմ ծագումից ամոթա՞նք է զգում այդպես։
Մինչդեռ իրոք զավակն եմ ես լոկ պատահար մի բախտի՞,
Որն և առատ պարգևել է ինձ անմատույց բարիքներ,—
Էլ ինչո՞ւ զուր պիտ ստրսափեմ ես անպատիվ լինելուց։
Բա՞խտն է, այո, իմ ծնող մայրն, ամխանե՞րն են եղել ինձ հայր,
Որոնք իրավ դարձել են ինձ և մեծադույն, և ստոր.
Արդ՝ դրանցից իբրև ծնված—ես այլազան չեմ լինի,
— Ուստի պետք է, որ իմանամ սկիզբը իմ ծագման։

Ս Տ Ա Ս Ի Մ Ե Ր Ր Ո Ր Դ

Ե Ր Գ Ջ Ա Խ Ո Ւ Մ Բ

Ստրոֆ 1.

Ո՜հ, եթե ես դուշակ լինեմ և մարգարե,
Հոգիս լցված իմաստությամբ լուսեղեն,—
Քե՜զ, Օլիմպոս երկնադո,
Փա՜ռք հնչելով, անվերջ պիտի երկրպագեմ,
Քե՜զ, Կիթերոն, վաղ առավոտ
Մեզմ ժամերին լուսնալիր—
Կը ներբողենք,—փառք կը երգենք սիրակարո՜տ,—
Քանզի դու ես փառապանծ
Մեր էդիպին՝ և՛ Հայրենիք, և՛ հոգածու, և՛ անող մայր։—
Համբապարով մենք կսկսենք փառաբանել քեզ երկար,
Քանզի դու ես, որ բերեցիր արքաներին Թեբ քաղաքի՝
Բերկրանքի սեր և խանդավառ հիացմունք.
Ո՜հ, դու, Ցոյբոս. փառքն ու պատիվ նաև քեզ,
— Քո երկնափառ գումն ենք տենչում սիրակեղ։

Անտիստրոֆ

Հավերժահարս հավերժակյաց կույսերից
Ո՞վ է ծնել քեզ, ով մանկիկ փառունակ,
Արդյոք Պանի ընկերուհի՞ն լեռնաբնակ.
Եվ կամ գուցե պերճ սիրուհի՞ն Լոքսիասի փառաշուք.

— Լոքսիասի, որ սիրում է վայրի լանջերը լեռանց,
Գուցե ինքը իշխանատերն Կյուլլենի,
Եվ կամ Բաքոս աստվածն արի,
— Որն ապրում է բարձր ուսերին լեռների,—
Որոնց հետ նա՝ ամենից շատ պար է բռնում սիրատաք։

ԷՊԻԶՈԴ ՉՈՐՐՈՐԴ

ԷԴԻՊ

(Երգչախմբին)

Ինչպես ահա դատողությամբ կռահում եմ, ծերուկներ,
Կարծեմ իրոք նա է գալիս,—հովիվը այն,
Որին երկար սպասեցինք,—
Թեպետ երբե՞ք չեմ հանդիպել ես նրան։
(Ցույց տալով կորնթացի սուրհանդակին)
Բայց հասակովն իր ալևոր ծերության
Ուղիղ սրա՛ն է հավասար,—իսկ մյուսներին,
Որ բերում են նրան այստեղ, ճանաչեցի ես արդեն,—
— Ծառաներն են նրանք մեր տան։ Ավելի ճիշտ—
Դո՛ւ, բարեկամ, այդ կիմանաս,—
Քանզի նրան դու տեսել ես շատ, շատ անգամ։

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Այո՛, դու ճիշտ ճանաչեցիր,—բայց և հաստատ իմացիր,
Եթե Լայոսն ունեցել է հավատարիմ, լա՛վ ծառա,
— Սա է, որ կա այդպիսին։

ԷԴԻՊ

(Դիմելով կորնթացի սուրհանդակին)

Նախ և առաջ հարցնում եմ քեզ, կորնթացի դու եկվոր,
Սա՞ է արդյոք, որի մասին հիշեցիր։
(Մոտենում է հովիվը)։

ԿՈՐՆԹԱՑԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Սա է, այո, իսկ և իսկ։

ԷԴԻՊ

(Հովվին դառնալով)

Ինձ նայելով, հարցերիս ճի՛շտ պատասխանիր, ով ծերուկ,
— Ծառայե՞լ ես դու Լայոսին, իբրև սարուկ։

ՀՈՎԻՎ

Այո՛, նրա սարուկն էի,—սակայն գնված չե՛մ եղել,
Մեծացել եմ նրա տան մեջ։

ԷԴԻՊ

Ի՞նչ գործ էիր դու կատարում. ինչո՞վ էիր ապրում դու։

ՀՈՎԻՎ

Հովիվ էի և մեծ մասամբ նախիրների պահապան։

ԷԴԻՊ

Բույց դու ո՞րտեղ,—ո՞ր վայրերումն էիր ապրում ավելի շատ։

ՀՈՎԻՎ

Կիթերոնում, այլև նրա շրջակայքում։

ԷԴԻՊ

(Ցույց տալով կորնթացի սուրհանդակին)

Արդյոք սրան ճանաչո՞ւմ ես. ծանո՞թ էիր այս մարդու հետ։

ՀՈՎԻՎ

Ի՞նչ էր անում նա իրապես.—ո՞ւմ մասին է խոսքդ, արքա՛։

ԷԴԻՊ

Սրա՛ մասին, որ կանգնած է ահա քո դեմ,
— Հանդիպե՞լ ես երբևիցե դու սրան։

ՀՈՎԻՎ

Բայց ոչ այնքան,
Որպեսզի այժմ իսկույն հիշեմ և ասեմ։

ԿՈՐՆԹԱՅԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Ջը զարմանաս, ով թագավոր, զարմանալու բան չը կա,
Ջիմացողին ես կստիպեմ, որ պարզ հիշե ամեն բան.—
(Դիմելով ճովվին)
Բայց դու, կարծեմ, չե՞ս մոռացել և կարող ես հիշել լավ,
Ինչպես երբեմն շրջում էինք մենք միասին
Կիթերոնի շրջակայքում։ Դու հիշո՞ւմ ես,—այն ժամանակ
Արածացնում էիր այնտեղ երկու նախիր,—իսկ ես մեկին։
Մենք անդ միմյանց շատ մոտ էինք՝ երեք տարի շարունակ
Սկսած ուղիղ վաղ գարունքից՝ մինչև Արքտուրն։
Իսկ ձմեռը ես նախիրն իմ քշում էի դեպ իմ դոմերն,
Եվ դու, սակայն, քշում էիր դեպ Լայոսի փարախներն։
Տե՛ս, ես հիմա այդ եմ ասում—ճի՞շտ է արդյոք իմ ասածն։

ՀՈՎԻՎ

Դու ճշմարիտն ասացիր.
Բայց վաղո՜ւց էր, և շա՜տ վաղուց. անցել են շա՜տ տարիներ։

ԿՈՐՆԹԱՅԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Բայց ինձ ասա,—լավ հիշո՞ւմ ես,
Այն ժամանակ դու մի մանուկ հանձնեցիր ինձ.—
Որ ես նրան դաստիարակեմ, իբր սեփական իմ զավակին։

ՀՈՎԻՎ

Ինչո՞ւմն է հարցն.—Ի՞նչ կարիք կա հարց ու փորձել այդ մասին։

ԿՈՐՆԹԱՅԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Տես, թե ի՞նչ կա.—սա է ահա մանուկը այն բարեկա՞մ։

ՀՈՎԻՎ

Գեթ անիծվեր քո այդ լեզուն։ Ըր պե՞տք է դու լռես արդյոք։

ԷԴԻՊ

Դու, ծերունի, մի կշտամբիր այդպես նրան։ Խոսքիդ համար
Ավելի շուտ կշտամբանքի դու ինքըդ ես արժանի։

ՀՈՎԻՎ

Ո՜հ, փառապանծ իմ թագավոր, ինչո՞վ արդյոք մեղանչեցի։

ԷԴԻՊ

Հենց նրանով, որ չես ուզում ճիշտը խոսել մանկան մասին,
Որին արդեն հիշեց նա։

ՀՈՎԻՎ

Նա, երևի, չի՛ հասկանում, ի՞նչ է խոսում,
Այլ միմիայն ջանք է թափում զրահս։

ԷԴԻՊ

Ինձ լա՞վ լսիր,— թե քաղցրությամբ գործը հայտնել չյանկանաս,
Մտրակի տակ լալակամած կը պատմես։

ՀՈՎԻՎ

Ո՛չ. դու, հանուն աստվածների, ինձ մի ծեծիր,
Ես մի տանջիր հեք ծերուկիս։

ԷԴԻՊ

(Թիկնապահներին)

Շուտո՞վ, շո՞ւտո՞վ սրա ձեռքերն պիրկ ոլորած, կապեք մեջքին։

ՀՈՎԻՎ

Ինչո՞ւ։ Ավա՞ղ, դժբախտ եմ ես.—ի՞նչ ես ուզում իմանալ։

ԷԴԻՊ

Հանձնե՞լ ես դու այն մանուկին, որի մասին հիշեց նա։

ՀՈՎԻՎ

Հանձնել եմ, ճի՞շտ. ո՞հ, երանի,
Ջըքանայի, կործանվեի ես այն օր։

ԷԴԻՊ

Կարժանանաս այդ վիճակին, եթե չասես ճշմարիտն։

ՀՈՎԻՎ

Եթե ասեմ, ո՞, ավելի՞ դաժանաբար պիտ՝ կործանվեմ։

ԷԴԻՊ

(Թիկնապահներին)
Ձգձգելով, կարծեմ կրկին խուսափել է ուզում սա։

ՀՈՎԻՎ

Ո՞հ, քավ լիցի, չէ՞ որ արդեն ես ասացի,
Որ հանձնել եմ մի ժամանակ։

ԷԴԻՊ

Ամնի՞ց էիր վերցրել սակայն։ Քո տնային զավա՞կն էր նա,
Թե՞ իսկապես ուրիշի։

ՀՈՎԻՎ

Ո՛չ, ի՛մը չէր,—այլ ուրիշից ես ստացա այն մանկիկին։

ԷԴԻՊ

Ամնի՞ց—կամ ո՞ր քաղաքացուց. ո՞ր օջախից։

ՀՈՎԻՎ

Ո՜հ, թագավոր, դթա, հանուն աստվածների,
Բավակա՛ն է. թող հարցն ու փորձն։

ԷԴԻՊ

Կործանվա՜ծ ես, եթե նորից ես ստիպված հարցը կրկնեմ։

ՀՈՎԻՎ

Արդ՝—իմացիր.—Նա Լայոսի տանն էր ծնված։

ԷԴԻՊ

Սակայն ի՞նչպես.—իբրև ստրո՞ւկ թե արքայի արյունից։

ՀՈՎԻՎ

Ավա՜ղ, արդեն ստիպված եմ հայտնել ամբողջ զարհուրանքն։

ԷԴԻՊ

Իսկ ես պետք է որ այդ լսեմ մինչև վերջ։

ՀՈՎԻՎ

Նրա զավակն էր կոչվում նա։ Սակայն քո տանն,—ով թագավոր,
Ավելի լա՜վ քեզ քո կինը կը պատմի։

ԷԴԻՊ

Ուրեմն նա,—կինըս,—հանձնեց քեզ մանկիկին։

ՀՈՎԻՎ

Այո, արքա։

ԷԴԻՊ

Ինչո՞ւ, կամ ի՞նչ նպատակով։

ՀՈՎԻՎ

Որ ես նրան ոչնչացնե՞մ։

ԷԴԻՊ

Թշվառագույնն իր զավակի՞ն։

ՀՈՎԻՎ

Աղետաբեր և ահավոր դուշակումից ահաբեկված։

ԷԴԻՊ

Ի՞նչ դուշակում։

ՀՈՎԻՎ

Լուր կար, որ նա,—երեք մնար և մեծանար,
Պիտ սպաներ յուր ծնող Հորն։

ԷԴԻՊ

Ուրեմն ի՞նչպես և կամ ինչո՞ւ ինձ Հանձնեցիր այս ծերուկին։

ՀՈՎԻՎ

Արքա՛, միայն կարեկցաբար։ Մտածեցի.—Թող տանի սա
Հեռու երկիր, որտեղից և ինքն էր իրոք.—
Բայց նա վրիպեց քեզ, մեծագույն աղետների համար միայն։
Ահավասիկ. երեք դու ես ճիշտ այն մանուկն, լա՛վ իմացիր,
Որ էլ քեզնից ավելի հեք և չարաբախտ մարդ չը կա։

ԷԴԻՊ

Ավա՜ղ, ավա՜ղ։ Արդ ամեն ինչ կատարված է բացահայտ.
Վա՜յ դժբախտիս։ Արեգի՜ լույս, վերջին անգամ տեսնում եմ քեզ,
Մինչ ծնվել եմ ես նրանից, ումնից պետք չէր, որ ծնվեի,
Եվ կապվել եմ ամուսնության ես մահիճով նրա հետ,
Ում հետ կապվել չէր կարելի։ Սպանել եմ ես նրան,
Ում սպանել պետք չէր բնավ։
(Դեմքին փաթաթելով ծածկոցն, ետառնում է)։

ՍՏԱՍԻՄ ՉՈՐՐՈՐԴ

ԵՐԳՉԱԽՈՒՄԲ

Ստրոֆ 1.

Ավա՜ղ, սերունդ դու մարդկային,
Մահկանացու ունայն մարդիկ,—
Որքան էլ դուք բյուր-բյուրերով երկրի վրա կյանք վարեք,
Ավա՜ղ, ձեր մեջ չկա բնավ կեթ մի մարդ,
Որ լինի ճի՛շտ, հաստատապես երջանիկ,—
Այո, չըկա։ Երբ մեկն ու մեկն բախտավոր է կարծում իրեն,
— Կարծելով այդ, կործանվում է նա անխուսափ։
Այդպես ահա քո վիճակն է ինձ օրինակ,—
Քո բախտամեծ կյանքը, ավա՜ղ, էդիպ արքա,
Դո՜ւ, Լայոսի դժբա՜խտ զավակ.
Ո՛չ, հիրավի մահկանացու մարդկության մեջ
Երանավետ չկա ոչ ոք, ոչ մի մարդ։

Անտիստրոֆ 1.

Ո՜հ, ի՞նչպես դու գերազա՜նց,
Ճարտարապետ ու կորովի տեգ-նիզակը նետեցիր,—
Եվ երկնային անմատչելի բարձունքներից
Երջանկության ամենաճոխ փարթամությունն ստացար։
Ո՜հ, ինչպե՜ս նա կարողացավ, Ջևս արարիչ,
Ոչնչացնել կորամագիլ, չարագուշակ ժանտ կույսին,—
Եվ անոտաման պատվար դառնալ իմ հայրենի ողջ երկրին.
Դեմ Հանդիման հանդես գալով կործանումին ու մահվանն։
Ուստի և դու հռչակվեցիր վսեմափա՜յլ վեհ արքա.
Ամենից շատ արժանացար դու գերհրաշ մեծարանքի,—
— Դո՛ւ, Թեբեական իշխաններից մեծադույնն,
Դո՛ւ, Թագավոր աստվածափա՜ռ, գերակա։

Ստրոֆ 2.

Եվ այժմ ո՞վ կա արդյոք քեզնից ավելի հեք, Բշվառագույն
Կամ առավել չարաբաստիկ, մատնված վայրագ վշտերին։

Ո՞վ կա արդյոք կյանքի ահեղ իրադարձովն ավելի ժանտ,
Ո՞վ կա քեզ պես—անագորույն տառապանքով կաշկանդված։
Վա՜յ քեզ, Էդիպ, ո՜վ դերհրաշ, վսեմափայլ մեծ արքա.
Նավակայան դու քեզ դառար,—դաժան սիրո նավակայան,
— Հոր և որդու ննջարանը դարձավ քեզ ժանտ ապաստան։
Ո՜հ, դու մտար ամուսնական հոր մահիճը, որ կործանվես։—
Ինչպե՞ս, ինչպե՞ս կարողացավ լսելյայն
Արտը քո Հոր,—նրա մահիճն,—այդքան երկար ժամանակ,
Ո՞վ տարտարախատ, հանդուրժել քեզ,—
— Լուռ համբերել անասելի զարհուրանքն։

Անտիստրոֆ 2.

Ժամանակը կաշկանդեց քեզ ակամա,
— Ժամանակը ամենատես.
Նա է դաժան դատում քեզ.—
Նվ անօրեն ամուսնության քո գործն հիմա։
Նրա համար է ահավոր քեզ դատողն,
Որ դու իրոք նույն մահիճի և ծնվածն ես, և ծնողն։
Ո՜հ, երանի՜ որ լայտոսի հեք զավակ,
Չը տեսնե՜մ քեզ, չը տեսնե՜մ միշտ, հավիտյա՜ն։
Վշտացած է սիրտս խորունկ, տառապում եմ չափազանց,
Նվ ցավագար բերանն է իմ աղաղակում վշտաբեկ։
Սակայն հիմա քո պատճառովն, ահավասիկ,
Պիրկ փակում է աչքերը իմ՝ խավար մեղն։

ԷՍՓՈԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ԷԴԻՊԻ ՏՆԱՏՈՒՆ ԾԱՌԱՆ

Դո՛ւք, որ հարգված եք այս երկրում ամենից շատ, ղերամեծար,
Ո՞հ, որպիսի՞ գործի մասին վիճակված է լսել ձեզ.
Նվ ո՞րպիսի դեռ աղետներ տեսնելու եք ձեր աչքով։
Ավա՞ղ, ի՞նչպես պիտ վշտանաք ողբաձայն,
Եթե իրոք ձեր սրտերը հուզված են խոր

Էաբգակիդյան Հայրենի տան ցավերով։
Ա՛վ ղ, կարծեմ, այնքա՞ն աղետ, այնքա՞ն նողկանք ու չարիք
Կան գաղտնացած այս օջախում,—և դեռ կրկին սպասելիք
Այնքա՞ն փորձանք,—և՛ ակամա, և՛ կամովին, հանդիս կը գա,
Որ հիրավի անկարող են նույնիսկ Իստրոսն ու Ցղիսն
Մաքրե՛լ, զտե՛լ այդ ամենը և լվանալ տունն այդ անբախտ։
Սակայն բոլոր տանջանքներից ա՛յն աղետն է դառնագին,
Եվ այն վիշտը, որ կրում է հոժարակամ մարդու հոգին։

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Բայց առավել դառնակսկիծ աղետ լինել չի կարող,
Քան այն, որ մենք արդեն գիտենք։
Սակայն հայտնիր, դո՛ւ ինչ ունես ասելիք։

ՏՆԱՍՈՒՆ ԾԱՌԱՆ

Հարկավոր չէ երկար պատմել, որ իմանաս այդ աղետն,—
— Մեռավ, ավա՛ղ, ատումածակամ Իսկատոեն։

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Ավա՛ղ, թշվառ։ Սակայն ինչ էր դրա պատճառն։

ՏՆԱՍՈՒՆ ԾԱՌԱՆ

Ինքը իրեն պատճառ եղավ. տատապանքիդ վիշտը ասկայն,
Այնքան էլ խոր, խիստ չի լինի, քանզի աչքով չես տեսել դու,
Մինչ իմ սրտում կենդանի է հիշողությունն այդ ահեղ։
Արդ՝ իմացիր, որքան դաժան տանջանք կրեց դժբախտն այդ,—
— Երբ բորբոքված, հուժկու եկավ ու ներս մտավ սրահի մեջ.
Վազեց, ընկավ ամուսնական յուր մահիճի վերա խոուին.
Եվ սկսեց դաժանաբար—երկու ձեռքով փնտել մազերն։
Դուռը, սակայն ներս մտնելիս, զարկեց, փակեց նա ուժգին։
Կանչեց ապա վաղուց մեռած՝ յուր ամուսին Լայոսին,
Հիշեց նաև յուր զավակին անիծյալ,
Որի ձեռքովն սպանվեց Հայրն,—որին, որդուն, յուր հարազատ,
Ինքը մայրը դարձավ ապա կին—կողակից,

Որ այդպիսով աշխարհ բերի,—ծնի դժբախտ զավակներ։
Ու լաց եղավ նա վշտահար, դառնակսկիծ
Յուր կրկնակի ամուսնական մահճի վրա,
Որի միջև ծնվեց երբեմն իր ամուսինն յուր ամուսնուց,
Եվ մոր որդին յուր խակ որդուց։
Ինչպես սակայն այնուհետև նա կործանվեց,—ես չիմացա,
Որովհետև հառաչանքով անդ ներս խուժեց էդիպն հանկարծ.
Ուստի և ես չը մարթեցի տեսնել կնոջ տանջանքն ամբողջ։
Նայում էի ես արքային.—նա զարկվում էր ամենուր,
Պտտվում էր և պահանջում զենք ու սուր,—
Որ հարձակվեր նրա վրա, որն իր կինն էր և ոչ—կինն,
Յուր մայրական—երկու տեսակ սերմ ունեցող արտի—վրա,
Յուր մոր վրա, որ մայրն էր յուր զավակների։
Դողդողում էր նա մոլեգին։ Աստվածներից մեկն ու մեկն
Այդ վիճակում ուղեցույց էր անշուշտ նրան։
Մինչ մարդկանցից ոչ-ոք չէիկար անդ մերձակա։
Եվ նա ահեղ աղաղակեց.—կարծես ուժ կար մի դերբնական,
Որ դրդում էր նրան այդպես։ Արդ՝ հարձակվեց նա կատաղած
Դեպի դուռը երկփեղկանի.—քաշեց, հանեց նա ուժգնակի—
Նիզը դռան—յուր խոր բնից ու ներս խուժեց սենյակի մեջ։
Դժբախտ կնոջն անդ մենք տեսանք արդեն կախված.
Նա օրորվում էր,—կախ ընկած
Ոլորածու պիրկ պարանի օղակից։
Իսկ երբ արքան տեսավ նրան, դռռաց ահեղ ու դառնաձայն
Եվ արձակից պարանն իսկույն։ Դժբախտ կինը ընկավ գետին։
Այնուհետև մենք անդ տեսանք սարսափելի զարհուրանք.—
Ծոկից իսկույն նա թագուհու պերճ հագուստից զարդարանքն.—
Ճարմանդ—քորոցը ոսկեկուռ և սրածայր. վեր բարձրացրեց
Եվ սկսեց վարսել ուժգին յուր աչքերի բբերի մեջ.
Ապա բարձր բացագանչեց.—«էլ չըտեսնեք այսուհետև
Դուք ձեր սիրոջ,—որ չը տեսնեք մինչև հիմա իմ կրած
Ահագնագույն տանջանքն ու վիշտ, որ չըտեսնեք ոճիրն աղետ,—
Որ կատարել եմ ես կյանքում.—այլ հավիտյան խավարի մեջ
Պետք է նայեք միայն նրանց, որոնց տեսքն է ձեզ արգելված,—
Որ չը տեսնեք և չիմանաք դուք երբե՛ք
Նաև նրանց, որոնց իրոք ուզում եք դուք փափագատենչ»։
Այդպես խորունկ հեծեծալով, նա ոչ միայն մի անգամ,

Այլ շատ անգամ հարվածելով քանդում էր յուր աչքի բներն
Եվ արյունն էր թափվում արդեն յուր խորտակված աչքերից՝
Ու ոռոգում նրա մերուքն.—բայց թափվում էր ոչ թե միայն
Կաթիլ-կաթիլ ու սեղմացայտ, այլ կարկուտի,—անձրևի պես,
— Ուշպես մի սև և հորդ հեղեղ արյունալից:
Այդպես թնդաց ու բըռընկվեց արհավիրքի աղետն երկյակ.—
Ու երկու մահ օրհասական—մեկը կնոջն, մեկն ամուսնուն:
Թեպետ վաղանց բախտը նրանց՝—արդարացավ
Երջանկության բախտն էր իրոք.—սակայն այսօր անագորույն
Վի՜շտն, հեծեծա՜նք, դաժան տանջանքն, մահ, կործանում
խայտառակ,
— Ոճիրն ու մեղքն և աղետներն ամեն տեսակ,
Որ աշխարհում կան բազմապես, բըռընկվեցին մեկանգամից:

ԵՐԳԱԽՈՒՄԲ

Իսկ այժմ արդյոք ի՞նչ վիճակումն է Թշվառն,
— Դադարե՞լ է տանջանքի ցավն:

ՏՆԱՍՈՒՆ ԾԱՌԱՆ

Գոչում է խիստ, որ բաց անեն դուռը շուտով և ցույց տան
Կադմոսական զավակներին—ոճրագործին հայրասպան,—
Նրան, որ յուր հարազատ մորն...ո՜հ խոսք չկա, որ անվանեմ
Խայտառակ գործն այդ ամբարիշտ,—որ այս տան մեջ նա չի
մնա,
Իբր անիծվածն,—որ ինքն իրեն պիտ աքսորի այս երկրից:
Սակայն, հարկավ, անհրաժեշտ է, որ այդ գործը կատարվի
Հսկողությամբ և օգնությամբ որևէ այլ ուղեկցողի,
Քանզի ինքը տառապում է և տանջահար է չափազանց:
— Ահա՜, շուտով ցույց կըտան քեզ: Դռան սողակն է շարժվում
արդ,
Դուռն է բացվում: Այո, շուտով դու կը տեսնես մի տեսարան,
Որն, հիրավի՜, արժանի է և՛ Թշնամու ցավակցության:

ԿՈՄՈՍ

(Պալատից դուրս է գալիս արմա էդիպն, իմքն իրեն կուրացրած, դեմքն արյունով ծածկված)։

ԵՐԳԱԽՈՒՄԲ

Ո՜հ, ահավոր գործ է, իրավ, տեսնել տանջանքը մարդկային.
Բոլո՜ր, բոլո՜ր տանջանքներից,—ինձ իմ կյանքում հանդիպած,
Զարհուրելին սա է իրոք։ Ասա, դժբախտ, թշվառագույն,
Ո՞ր խոլական մոլեգնության մատնվեցիր դու դժնաբար,
Ո՞ր խենթացնող չար պատուհասն այդքան դաժան հասավ քեզ։
— Ամենաժա՜նտ դժոխածին ոգիներից—ո՞ր չար ոգին,
Յատկում գործեց քո անողոք, ապերջանիկ բախտի վրա։
Վա՜յ ինձ, սակայն,—անկարող եմ նույնիսկ նայել քեզ,
Թշվա՜ռ,—
Թեպետ անչափ ցանկանում եմ հարց անել քեզ,
Որ շա՜տ, շա՜տ բան դեռ իմանամ, լսեմ քեզնից,—
Մինչ դու միայն ժանտ սարսափ ես ազդում ինձ։

ԷԴԻՊ

Վա՜յ ինձ, վա՜յ ինձ, դժբախտագույն եմ ես, ավա՜ղ,
Ո՞ր երկիրն են ինձ, թշվառիս, տանում այսպես.
Ո՞ւր են թռչում, ո՞ւր են սահում իմ հնչյուններն.
— Ջայն տուր, Ոգի, ո՞ւր ես քշում ինձ արդյոք։

ԵՐԳԱԽՈՒՄԲ

Դեպ արհավիրքն, ավա՜ղ, դեպի դեռ չը լսված զարհուրանքն,—
Դեպի ահեղ, դեռ չը տեսնված մի խայտառակ գոյություն։

ԷԴԻՊ

Մտրոփ 1.

Ո՜հ մթության ամպ անթափանց,
Անասելի, անանցնելի ժանտ խավար,

Որ անողոք ես հավիտյան
Ավա՜ղ, վա՜յ ինձ,
—Կրկին անգամ ավա՜ղ, վայ ինձ, դժբախտիս.
Թափանցում են հոգուս խորքը—սրտիս մեջ
Դաժան ցավերն իմ վերքերի,—
—Հիշողությունն աղետների։

ԵՐԳԱԽՈՒՄԲ

Ավա՜ղ, բնավ զարմանալի բան չը կա,
Որ այդպիսի տանջանքի մեջ տառապում ես չափազանց,
Զայնն հնչելով կրկնապատիկ աղետների։

ԷԴԻՊ

Ո՜հ, սիրելիս,
Միա՜կն ես դու, իմ մտերիմ բարեկամ,
Որ մնացիր, իբր հոգատա՜ր դժբախտացած կույրի մոտ.
Ավա՜ղ ավա՜ղ.—
Աստվածների, մահկանացու մարդկանց միջև
Միշտ առելի և խայտառակ թշվառին։

ԵՐԳԱԽՈՒՄԲ

Ո՜հ, տարաբախտ դու թագավոր, որ մեծ խելքով
Աղետաբեր փորձանքի մեջ՝ թշվառության արժանացար։
— Ավա՜ղ,—ո՜րքան փափագելի, լավ կլիներ ինձ համար
Մնալ առ միշտ քեզ անծանոթ,
Չը ճանաչել և քո մասին երբեք ոչի՜նչ չիմանալ։

ԷԴԻՊ

Անտիստրոֆ 2.

Ա՜խ, երանի ժանտ խորտակվեր նա, որ երբեմն ձորերի մեջ
Իմ մանկական թույլ ոտքերիդ զուր արձակեց պինդ կապանքն,
Եվ զո՜ւր փրկեց կործանումից կյանքն իմ անմիտ.
Մինչ եթե նա չը կատարեր գործն այդ բարի,
Եվ մահակոչ դառնայի ես ժայռերի մեջ ամեհի,—
Այս չարաղետ պատուհասն
Ջեր հասնի ինձ և հարազատ իմ մարդկանց։

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Նույն այդ փափագն, ահավասիկ, զգում եմ ես։

ԷԴԻՊ

— Ես այդ դեպքում այստեղ բնավ չէի դա,
Որ սպանեմ իմ հարազատ ծնող հորն,
Այնժամ մարդիկ չէին կոչի ինձ ամուսին
Այն հեք կնոջ,—որի ծնունդն եմ ես իրոք,
Որի արգանդն է ինձ իզո՜ւր—
Աշխարհ բերել, իբրև պատուղ դառնարմատ։
Մինչ ես հիմա անպատված եմ,—ոճրագործի գարշ մի զավակ
Կողակիցն եմ այն հեք կնոջ,
Որից դժբախտ ծնված եմ ես, ինքըս, ավա՜ղ։
Ախ, եթե կա ժանտ մի չարիք աշխարհում—
Բոլոր, բոլոր չարիքներից գերազանց,—
Մի արհավիրք—բոլոր դաժան աղետներից մեծագույն,—
— Ո՜հ, այդպիսին վիճակված է միմիայն ի՛նձ,—էդիպին։

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Բայց չը գիտեմ, պե՞տք է արդյոք
Հաշվի առնել քո արարքը այդ դեղեցիկ...
Մինչ առավել գերագաս է, միանգամայն չըլինել,—
Քան լինելով, կո՜ւյր ապրել։

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

ԷԴԻՊ

(Երգչախմբին)

Ինձ խրատներ զո՜ւր ես կարդում,—և ցուցումներ ինձ մի՛ տուր,
Որ իբրև թե արարքը իմ լավագույնը չէ բնավ։
Ես չգիտեմ, թե ինչ աչքով պիտ նայեմ ես դեմքին իմ հոր
Եվ դժբախտ մոր, երբ որ իջնեմ տունն Հադեսի.
Ես այնքան եմ խիստ մեղապարտ այդ երկուսի վերաբերմամբ,

Որ առավել լավ կը լիներ և գերազան,
Եթե իրավ դրա համար ինձ կախեին բյուր անգամ։
Գուցե տե՞սքն է զավակների ինձ ցանկալի, իբրև բերկրանք,
Ինձնի՛ց ծնված զավակների, և այն, ավա՜ղ, ի՞նչպես ծնված.—
Ոչ, այդ տեսնել և հանդուրժել չէին կարող իմ աչքերն,
Չէին կարող նրանք նայել ու չեն կարող տեսնել և այժմ
Ո՛չ մեր քաղաքն, ոչ հոյակապ աշտարակներն, ոչ արքայան
Սառվածների պերճ արձաններն.—զրկված եմ ես այդ ամենից,
Ես, հիրավի, դժբախտագույնն,—ես,—Թեբեական մեծ թագավորն,
Որի փառքն է համատարած։ Այդ ամենից զրկված եմ ես,
Քանզի ինքս պատվիրեցի խստաբար,
Որ աքսորեն բոլոր, բոլոր այն մարդկանց,
Որոնք պի՞ղծ են և անաստված, որոնք իրոք
Հանդես պիտ գան, իբրև ազգի եղեռնագործ պղծարարներ։
Ոչ, չէր կարող Ջևսի Էդիպն այդ չանել.—
Ավա՜ղ, եթե հնար լիներ իմ ձեռքին,
Աղբյուրն այլև լողության կը փակեի ես ընդմիշտ,
— Նույնիսկ, նույնիսկ ականջներն իմ կը լցնեի ես անթափանց,
Որ լսական զորությունն իմ անջատեի իմ մարմնից,—
Որպեսզի կույրն, կույր լինելով ոչինչ բնավ չը լսեր.—
— Քաղցր է ապրել՝ աղետները դիտակցելու չանքերից դուրս։
Ո՜հ, Կիթերոն,—ինչո՞ւ դու ինձ ընդունեցիր,
Կամ ընդունած, ինչո՞ւ, ավա՜ղ, չմատնեցիր իսկույն մահվան,
Որպեսզի ես մարդկանց միջև բնավ, բնա՜վ չը լինեի։
Ո՜հ, Պոլիբոս, և դո՛ւ, և դո՛ւ, ո՜վ Կորնթոս,
— Իմ վաղեմի հայրական տուն,—այդպես էի ձեզ անվանում,—
Ինչո՞ւ, ինչո՞ւ դուք ննեցիք ինձ արտաքուստ վայելչատես,
Սակայն ներքուստ իբրև մի թույն,—մի դառնարմատ, ժանտ
պտուղ,

Աղետաբեր ու զազրելի մի էություն...
Քանզի ես այժմ աղետ եմ լոկ, աղետներից իսկ ծնված։
Ո՜հ, դուք, երեք ճանապարհներ, դու, անտառում թաքնված
մութ ձոր,

Եվ դու, կաղնուտ, և դու, երեք ուղիների սուզ հանդիպում,
— Դո՞ւք ծծեցիք, դո՞ւք քամեցիք արյունն իմ հոր,
Այն արյունը, որը, ավա՜ղ, թափվեց ձեռքով իմ դժբնդակ,

Հիշո՞ւմ եք դուք, որպիսի գործ կատարեցի ես այնտեղ,—
— Ինչի՞ր, ինչի՞ր ես գործեցի այնուհետև:
Ամուսնության զարհուրելի,—ինձ ծնեցիր, ինձ սերմեցիր,
Ապա ինձնից,—քո ծնածից, նույն սերմը ես ընդունեցիր:
Ո՜հ, դու, արյուն ծնողական, որից, ավա՜ղ, առաջացան
Հայր ու որդի և՛ եղբայրներ, և՛ ծնողներ,
Ե՛վ հարս, և՛ կին, և՛ իսկ մայրեր: Ո՜հ, առավել ժխնաբարք,—
Կամ ավելի նողկ ու պատիր և զազրագույն—
Ասելի գործ մարդկանց միջև բնավ լինել չի կարող:
— Պետք չէ սակայն լսել, խոսել, նողկապատիր գործի մասին.
Աղաչում եմ.—հանուն անմահ աստվածների, ո՜հ, շուտ, իսկույն
Արտաքսեցեք ինձ երկրից դուրս, ծովից այն կողմ և հեռուն,
Ինձ սպանեք, հողում թաղեք,—դեթ չըտեսնեն ինձ մարդիկ:
Բայց մոտ եկեք, դեթ արժանի ինձ համարեք ձեր մերձության,
— Շփվեցեք ինձ, չը սարսափեք դուք բնավին—պղծանքից,
Քանզի ոչ ոք մահկանացու մարդկանց միջև,—բացի ինձնից,—
Անկարող է կրել, տանել աղետները իմ դաժան:

ԵՐԳԱԽՈՒՄԲ

Ահա գալիս է Կրեոնտն.—
Քո խնդիրը կը կատարի, նաև խորհուրդ կը տա քեզ.
— Նա է հիմա միակ տերը և պահապանն այս երկրի:

(Ներս է գալիս Կրեոնտը արքայական նագուստների մեջ):

ՏԵՍԱՐԱՆ ԶՈՐՐՈՐԴ

ԷԴԻՊ

Ավա՜ղ, ավա՜ղ, ես ի՞նչ խոսքով կարող եմ այժմ դիմել նրան,
Կամ ի՞նչ արդար վստահություն կարող է նա ցույց տալ ինձ,
Քանզի այդքան վատ վարվեցի ես նրա հետ մի փոքր առաջ:

ԿՐԵՈՆՏ

Ես չեմ եկել նրա համար, որ քեզ ծաղրեմ, արքա Էդիպ.
Ոչ էլ նաև նրա համար, որ կշտամբեմ
Նոր կատարած քո վատության փոխարեն:

(Դառնալով երգչախմբին)

Իսկ դուք, երեք մահկանացու մարդկանց ցեղից չեք ամաչում,—
Գեթ հարգեցեք իշխանազոր Հելիոսին,
Կամ ամենքին կյանք պարգևող նրա կրակն հրաշող.
— Կարելի՞ է մերթ ցույց տալ այս օրինակ ոճիր ու մեղք,
Որն ընդունել կամ հանդուրժել չեն կարող
Ոչ սուրբ անձրևն, ոչ կենարար լույսն արևի, ոչ երկիրն:
Շուտո՜վ, շուտով ներս տարեք տուն, քանզի ազնիվ ազգականի
Հեշտ կարող են լսել, տեսնել արյունակից միայն մարդիկ:

ԷԴԻՊ

Արդ՝ քանի որ չարդարացավ երկյուղն իմ,
Եվ քանի որ դու դեպի ինձ, այս զարշելի արարածիս,
Այդքան ազնիվ, մեղմ վարվեցիր,—լսի՛ր, հանուն աստվածների,
Գեթ ինձ լսիր,—հոգատար եմ ես քո մասին, և ոչ իմ:

(Այդ միջոցին դայակը դուրս է բերում
Անտիգոնե և Իսմենե հույրերից):

ԿՐԵՈՆՏ

Ի՞նչ ես այդպես խիստ ցանկանում, որ կատարեմ քեզ համար:

ԷԴԻՊ

Ինձ այս երկրից շուտ աքսորիր և դուրս նետիր շուտափույթ,
Որ մարդկանցից ողջույնի խոսք ես չլսեմ բնավին:

ԿՐԵՈՆՏ

Գիտցիր, որ այդ կանեի ես, երեք կարիք չլիներ
Աստվածների կամքն իմանալ նախապես,—այսինքն այն,
— Թե ի՞նչ պետք է կատարել:

ԷԴԻՊ

Չէ՞ որ արդեն հայտնաբերված է դուշակումն,
Որ հայրասպանն ու ամբարիշտն պետք է անշուշտ կործանվի:

ԿՐԵՈՆՏ

Ճիշտ է, այո, այդ խոսքը կար.—բայց երբ գործն է դանդաղում,
Հարկավոր է լավ իմանալ անելիքն։

ԷԴԻՊ

Սֆյոնքսի հեք, թշվառագույն մարդու մասին
Մի՞թե պետք է աստվածների կամքը հարցնել։

ԿՐԵՈՆՏ

Եվ դու կամքին աստվածների պատրա՞ստ ես այժմ վստահանալ։

ԷԴԻՊ

Ահավասիկ, հանձնում եմ քեզ,—և աղերսում թախանձագին,—
— Նրան, որ տանն ընկած է այժմ, թաղիր պատվով, ինչպես
կուզես,
Եվ դրանով կը կատարես քո սրբազան պարտքը սեպուհ։
Իսկ ինձ,—քանի կենդանի եմ,—Թող Հայրենի իմ քաղաքն
Ատ մնալու և ապրելու միշտ անարժան համարի։
Թույլ տուր, սակայն, որ ես գնամ և բնակվեմ լեռների մեջ,—
Անդ, ուր բարձր Կիթերոնն է ինձ վիճակված,
Այնտեղ, ուր ինձ դեռ կենդանի իմ հայրն ու մայրն
Կարդել էին իրը անհրաժեշտ, օրինավոր գերեզման,—
Թող որ այնտեղ ես մահանամ, ուր կործանել կամեցան ինձ։
Բայց ինձ,— պիտեմ, չի կործանի ոչ մահն և ոչ հիվանդությունն
Ոչ էլ այլ բան, քանզի եթե իրոք մեռնող լինեի, ես
— Չէի փրկվի,— որ կատարեմ զարհուրելի աղետներ։
Տպաններիս մասին, սակայն, դու մի հոգա, Կրեոնտ,
Չափահաս են նրանք արդեն, կապրեն իրրև տղամարդ
Ու կյանքի մեջ ոչ մի կարիք, ոչ մի պակաս չեն զգա։
Մինչ տարաբախտ, կարեկցության դեռ արժանի դստերերին,
Որոնց երբեք կերն ու սեղանն
Ինձնից անջատ և առանձին չի տրվել·
— Ո՜հ, որոնց հետ ես եղել եմ միշտ շփման մեջ ու միասին,
Որոնք ինձ հետ միշտ ամեն ինչ ունեցել են անբաժան,—

— Ահավասիկ նրանց մասին, ո՞վ Կրեոնտ, դու հոգաս։
Իսկ այժմ թույլ տուր, որ գեթ ձեռքով շփվեմ նրանց
Եվ աղեաղն իմ ողբամ ու լամ դառնակսկիծ։
Թույլ տուր, արքա, աղնվասիրտ,
Թույլ տուր դու ինձ, գեթ իմ ձեռքով շոշափեմ
Եվ ճանաչեմ, որ հիրավի իմն են նրանք,
Ինչպես երբեմն տեսնում էի նրանց աչքով իմ առջև։
Ի՞նչ ասացի.—
Ավա՜ղ, հանուն ասուվածների, ասեք, միթե՞ լսում եմ ես
Արտասրացայտ ողբն ու լացը իմ սիրատենչ դստրների։
Եվ մի՞թե դու, ով Կրեոնտ, ցավակցաբար
Դուրս բերեցիր իմ սիրատուն զավակներին.
— Ճշմարի՞տ եմ ասում արդյոք։

ԿՐԵՈՆՏ

Ճիշտն ասացիր։ Ես, հիրավի, թույլ տվեցի,
Որ նրանց հետ դու միասին այժմ լինես,
Հաշկանալով, թե ո՞րքան դու փափագում ես այդ սրտանց։

ԷԴԻՊ

Ո՜հ, միշտ եղիր դու օրհնյալից։ Թող մշտապես բարի հոգին
Քեզ ավելի ջերմ պահպանի քո համփեքին,
Քան պահպանվել եմ ես, ավա՜ղ։
Սխ, ո՞ւր եք դուք, իմ զավակներ. մոտ եկեք ինձ.
Եվ շփվեցեք դուք ձեռքերին ձեր եղբոր,—
Այն ձեռքերին, որոնց արդյունքն է ահռելի գործը այս,—
Որ տեսնում եք ձեր հոր երբեմնի շողշող աչքերն այս վիճակում,
— Ձեր ծնող հորն, որն,—հիրավի չտեսնելով, չիմանալով,—
Ծնեց և ձեզ այն արգանդից, որից ինքն էր ծնված իրոք։
Ձեր վիճակն եմ ես այժմ լալիս։ Ո՜չ, չեմ կարող ձեզ նայել,
Միաք անելով բախտի մասին ձեր կարճակյաց գոյության,—
Գալիք տխուր ձեր օրերի, որ պիտ ապրեք մարդկանց մեջ։
Այս քաղաքի բնիկներից արդյոք ո՞ւմ հետ
Դուք կարող եք ժողով գնալ կամ մասնակցել հավաքույթի.
Ո՞ր ցնծավետ երեկույթից, ո՞ր հանդեսից տոնակատար

Տուն պիտի գաք դուք անարցունք, առանց ողբի դառնագառն,
Ո՛ր խնջույքից վիշտ չի հասնի ձեզ բերկրության փոխարեն։
Իսկ երբ հասնեք ամուսնության ժամանակին ձեր արքույն.
— Կը գտնվի՞ մեկը արդյոք, որ ձեզ սրտանց չարհամարհի։
Ո՞վ, իսկապես, ո՜հ, զավակներ, հոժարակամ կը ցանկանա
Այն ահռելի առակները վերցնել այդպես յուր վրա,
Որը ինձնից հասել է ձեզ և ապագա ձեր սերնդին։
Էլ ի՞նչ ադեա, կամ ի՞նչ չարիք կա առկախին ձեզ պակաս.
— Հայրն հարապատ հորն ապանեց, ապա սիրով մոր հետ
կապվեց,
Հետո ծնեց ձեզ նրանից, որից ինքն էր աշխարհ եկած։
Այդ է, ահա, ձեր պատիվը,—այդպես պետք է կշռադրեմ ձեզ։
Ո՞վ կը գառնա խնամախոս.—ոչ ոք, ոչ ոք չի անի այդ։
Ով դուք անշուշտ, խե՜ղճ զավակներ, միշտ միայնակ, անպտուղ
Պիտ ըստանաք, պիտ կործանվեք ամուրի։
Ո՜հ, դու, զավակ Մինևկոսի, այսուհետև դու կը լինես
Իսկական հայր սրանց համար.—քանդի արդեն մենք երկուսովս
Կործանվեցինք, իբրև ծնող։ Մի՛ թող, մի՛ թող, որ սրանք
Աղքատ, անտեր, անամուսին շրջեն, մատնված պատուհասին։
Ով մի դարձրու սրանց կյանքը դժբախտությանն իմ համասար։
Խղճա սրանց, որոնք այսպես դեռահաս են և կայտառ.—
Սակայն բախտի հմայքից զուրկ։ Դու ես սրանց տերն ապավեն.
Երդվիր ուրեմն, ով ազնվագույն և քո ձեռքով շիվիր դեթ ինձ։

(Կրեոնտը ձեռքը մեկնում է Էդիպին, ապա վերջինս խոսքը ուղղում է Անտիգոնեին և Իսմենեին)։

Իսկ ձեզ, զաւրեր, որ միշտ լինեք դուք խելամուտ և խոհեմ,—
Շատ խորհուրդներ կտայի ես.—բայց լոկ մի բան ձեզ կմաղթեմ.
— Ապրեք այնպես, ինչպես բախտը ցույց կըտա ձեզ յուր
ուղին,—
Բայց թո՛ղ լինի ձեր կյանքն իրոք ավելի լավ, քեռեւագույն,
Քան վիճակված էր այդ ձեր հորն,
Ձեր տարաբախտ ծնողին։

ԿՐԵՈՆՏ

Բավ է, որքան հորդ արտասուք թափվեց արդեն,—
Ժամանակ է,—ներս մտեք տուն։

ԷԴԻՊ

Հնազանդ եմ, թեպետ այդ ինձ հաճելի չէ։

ԿՐԵՈՆՏ

Ինչ որ իրոք չափավոր է, վեհերիկ է այն անշուշտ։

ԷԴԻՊ

Իսկ դու գիտե՞ս իմ ցանկությունն։

ԿՐԵՈՆՏ

Ասա, որ ես, քեզ լսելով, իմանամ։

ԷԴԻՊ

Աքսորիր ինձ այս երկրից։

ԿՐԵՈՆՏ

Նախ պետք է ես աստվածների կամքն իմանամ։

ԷԴԻՊ

Բայց չէ՞ որ ես ատելի եմ աստվածներին։

ԿՐԵՈՆՏ

Ապա ուրեմն՝ այդ շատ շուտով կը կատարվի։

ԷԴԻՊ

Եվ իսկապես ճի՞շտ ասացիր։

ԿՐԵՈՆՏ

Ինչ որ իրոք չեմ հասկանում,
Ես չեմ սիրում զուր բարբառել այդ մասին։

ԷԴԻՊ

Ինձ այստեղից շուտ հեռացրու։

ԿՐԵՈՆՏ

(Ցույց տալով Անտիգոնեին և Իսմենեին)

Դու հեռացիր,—սակայն սրանք թող մնան։

ԷԴԻՊ

Իմ դստրերից ինձ մի զրկիր։

ԿՐԵՈՆՏ

Ամեն բանի մի ցանկանա տիրանալ.
Եվ այն, որի իշխողն էիր,
Կյանքում քեզ միշտ չի հետևի անբաժան։

(Էդիպը գրկում է յուր դստերին և ապա հրաժեշտ է տալիս Կրեոնտին ու երգչախմբին։ Հովիվը հանձնում է Էդիպին յուր ցուպը, Էդիպը, ձեռ՛ը հովվի ուսին դրած և ցուպը շարժելով հեռանում է)։

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Ո՛վ բնիկներ իմ հայրենի Թեբ քաղաքի.
Տեսեք ահա. արքա Էդիպն օրինակ ձեզ,
Մեծափառ էր նա գերազանց, իշխանազոր գերակա,
— Նա, որ լուծեց խորախորհուրդ առեղծվածներն,
Որի բախտին նայում էին բյուր բյուրերը նախանձաբեկ.—
Բայց ի՞նչ ահեղ դժբախտության հորձանքի մեջ նետվեց նա։
Զգույշ եղիր, մահկանացու, վերջին օրըդ միշտ հիշիր.—
Եվ ոչ ոքի դու կանխաբար երջանկավիտ չհաշվես,—
Թեև կյանքի վերջին սահմանը տակավին չի անցել նա։
Եվ չի փորձել դեռ յուր ճամփին դառնությամբ լի վերջին աղետն։

(Բոլորը մեկնում են)։

ԵՎՐԻՊԻԴԵՍ

Եվրիպիդեսը ծնվել է 480 թվին (մեր թվարկությունից առաջ) Սալամին կղզում։ Խուսափել է լայն հասարակական գործունեությունից, կյանքի վերջին շրջանը անցկացրել է Մակեդոնիայում և այնտեղ մեռել 406 թվին։

Եվրիպիդեսի դրական գործունեությունը ծավալվում է հատկապես 5-րդ դարի վերջին քառորդում։ Եվրիպիդեսը ավելի ցայտուն արտահայտել է Աթենքի պոլիսի քայքայումը և դրա հետևանքով առաջացած սուր հակասությունները։ Ի տարբերություն Սոֆոկլեսի, Եվրիպիդեսը կյանքին մոտենում է ավելի դեմոկրատական դիրքերից, իրականությունը նա չի գունավորում, այլ մերկացնում է. ժամանակակից մարդկանց նա նկարագրում է ոչ թե այնպես, ինչպես նրանք պետք է լինեն, այլ այնպես, ինչպես նրանք կան։ Այս է պատճառը, որ Եվրիպիդեսը հանդիպեց հունական արիստոկրատական գաղափարախոսության դիմադրությանը։ Եվրիպիդեսը չհրաժարվելով դիցաբանական կերպարների օգտագործումից, նրանց արժանիքը նսեմացնում է։ Այդ է պատճառը, որ տրագեդիան նրա մոտ երբեմն նույնանում է ընտանեկան դրամայի հետ, ինչպես, օրինակ, նրա «Մեդեան» և «Իֆիգենիան Ավլիդում»։ Եվրիպիդեսը արտահայտելով իր ժամանակի ինդիվիդուալիստական տենդենցը, մերձենում է իր ժամանակի լուսավորիչներին՝ սոփեստներին. հենց սոփեստների դիրքերից նա քննադատում է իր ժամանակի ժողովրդի հավատալիքները, սակայն այդ քննադատությունը աթեիզմին չի հասնում։ Եվրիպիդեսը Սոֆոկլեսի նման խորացնում է իր հերոսների հոգեբանական

վերլուծությունը։ Սակայն եթե Սոֆոկլեսի մոտ հերոսները տառապում են ներքին բախումից, ապա Եվրիպիդեսի մոտ հերոսները տառապում են արտաքին ֆիզիկական պատճառներից։ Այդ տեսակետից Եվրիպիդեսի հերոսները հանդիսականի մեջ առաջացնում են կարեկցություն դեպի հերոսների ֆիզիկական տառապանքը։ Եվրիպիդեսը Պերիկլեսյան դարի Աթենքի դեմոկրատիայի գաղափարախոսն էր և Աթենքի պոլիսի քայքայման պրոցեսում նա աստիճանաբար անցնում է գյուղացիության կողմը։ Այս պրոցեսը արտահայտվել է նրա «էլեկտրա» տրագեդիայում։ Հետևելով այն սկզբունքին, ըստ որի բանաստեղծը պետք է նկարագրի իրականությունն այնպես, ինչպես որ նա կա, Եվրիպիդեսը իր դրվածքները ենթարկեց այդ պահանջին և դրանով իսկ խախտեց սոֆոկլեսյան ողբերգության տրադիցիաները, նրա ամբողջականությունը և ներդաշնակությունը։ Խումբը Եվրիպիդեսի մոտ արդեն համեմատաբար քիչ դեր է խաղում, քան Սոֆոկլեսի մոտ։ Եվրիպիդեսյան դիալոգները հաճախ վեր են ածվում հռետորության, բանաստեղծականը տոնը փոխվում է սովորական խոսակցության։ Եվրիպիդեսից պահպանվել են 17 դրամաներ։

Մ Ե Դ Ե Ա

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Դայակ
Մանուկների դաստիարակ
Մեդեա—*Յազոնի կինը*
Կրեոնտ—*Կորնթական թագավոր*
Յազոն—*Մեդեայի ամուսինը։ Արգոնավորդ հերոսների ղեկավարը, Իոլկոս քաղաքի ազնվականներից մեկը*
Էգևոս—*Աթենական թագավոր*
Սուրհանդակ—*Յազոնի ստրուկներից մեկը*
Մեդեայի *որդիները*
Երգչախումբ—*կորնթացի կանանցից բաղկացած*

Գործողությունը կատարվում է Կորնթոսում, Մեդեայի տան առաջ։

ԴՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ Ա.ՌԱՋԻՆ

ՏԵՍԱՐԱՆ Ա.ՌԱՋԻՆ

Մեդեայի տուները

Դ Ա Յ Ա Կ

Ա՜խ, երանի Արգո նավը,—որն հաջողակ
Սիմպլիգադի սև ժայռերը անցկացավ,—
Չը մոտենար Կողքիդական ափերին։
Ո՜հ, երանի Պելիոնի անտառապատ ձորի մեջ
Չը կտրատվեր և վայր չընկներ եղևնին,
Որ թի դարձավ ձեռքին հզոր հերոսների,
— Որոնք ավա՜ղ, արշավեցին մի ժամանակ
Ոսկեգեղմը հայթայթելու Պելիասին։
Ավա՜ղ, եթե այդ չը լիներ, իմ Մեդեա թագուհին,
— Հաղթահարված ահեղ սիրով Յազոնի,—
Ծովն անցնելով՝ չէր գա երբեք դեպ պարիսպներն Իոլկոսի,
Եվ նա երբեք չէր համոզի դստրիկներին Պելիասի,
Որպեսզի անդ նրանք իրենց ծերունի հորն սպանեն.
— Չէր բնակվի յուր ամուսնու և որդոց հետ Կորնթոսում,—
Թեպետ այնտեղ յուր փախուստով արժանացավ
Երկրի ամբողջ ժողովրդի համակրանքին փառավոր.
Ինքն էլ իրոք սրտի խորունկ սիրով դարձավ Յազոնին
Հավատարիմ, սիրանվեր ամուսին։
Իրավ, չը կա երկրի վրա
Ավելի բարձր և ավելի երանավետ երջանկություն,

Քան այն, երբ միշտ համերաշխ են մարդն ու կինը
միմյանց հետ։
Մինչ ամեն բան փոխվել է այժմ թշնամանքի.
Այն, ինչ առաջ սեր էր միայն,—ատելի է դարձել այժմ,—
Յազոնն ահա դավաճանած իմ թագուհուն և յուր որդոց,
Յանկանում է փեսա դառնալ թագավորի ընտանիքին,—
— Ամուսնանալ երկրին իշխող Կրեոնտի դստրիկի հետ։
Իսկ Մեդեան թշվառագույնն,—անարգանքից վշտաբեկ,
Վերհիշելով սուրբ երդումներն,—ետ է կանչում մեծագույն
Խոստումները հավատարիմ և սիրատենչ, մտերմության,—
Աղերսում է աստվածներին՝ վկա լինել արդարացի,
Թե ո՞րքան ժանտ և ապերախտ վարվեց Յազոնն իր հանդեպ։
Երբ իմացավ նա ամուսնու ժանտ վարմունքը դավաճան,
Քաղցած, ծարավ մատնվեց ցավին տառապանքի.—
Օր ու գիշեր արցունքի մեջ մաշվում է այժմ կականավիր,
Հայացքն անշեղ դեպի գետին սևեռած.
Չի ցանկանում վեր բարձրացնել աչքերն անգամ,
— Ասես մի ժայռ, ինչպես ծովի հուժկու հորձանքն,
Էլ չի լսում նա բարեկամ մարդկանց խրատն և սփոփանքն։
Բայց և հաճախ վեր ուղղելով յուր ձյունափայլ ճերմակ վիզն,
Նա ջայլակոծ ողբում է յուր սիրելի հորն, հայրենի հողն
Եվ սուրբ օջախն, որոնց թողեց իբրև դաժան դավաճան,—
Հանուն միայն յուր երախտիքն այժմ ուրացող ամուսնուն։
Եվ միայն այժմ է հասկանում վշտերի մեջ՝ նա դժբախտ,—
Թե իսկապես ո՛րքան քաղցր է և ցնծավետ—
— Չը բաժանվել, չը հեռանալ հայրենիքից սրտատենչ.
Ատում է նա նույնիսկ որդոց յուր հարազատ,
Բերկրանք ու սեր նա չի զգում նրանց վրա նայելիս.
Երկյուղ ունեմ, գուցե նույնիսկ մտադիր է կատարել
Մի որևէ ահռելի գործ։ Անզուսպ է խիստ և հիշաչար.
Նա հանդուրժել կամ մոռանալ վիրավորանքը չի կարող.
Նրան, ավա՜ղ, ես լավ դիտեմ,—վախենում եմ ուստի խիստ.
Գուցե, ավա՜ղ, նա ներս խուժի յուր ննջարանն
Եվ կատաղած՝ վարսի սուրըն իր կրծքի մեջ.
Կամ սպանի Կրեոնտին, այլև նրա փեսային—
Ու ավելի դառն աղետի, սրհավիրքի մեջ ընկնի։

Ահագնագո՛ւն է Մեդեան,—զարհուրելի բարքի տեր—
Եվ հեշտությամբ յուր թշնամուն նա անձնատուր չի լինի։
Արդ՝ տեսնում եմ, նա են գալիս մարզարանից մանուկներն,
Բայց անհոգ են և չգիտեն դժբախտությունն իրենց մոր.
— Կյա՛նք պատանի,—դու չես սիրում վիշտ և հոգսեր։

(Ներս են գալիս մանուկները դաստիարակի հետ միասին)։

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

(Դայակը, դաստիարակն ու մանուկները)

Դ Ա Ս Տ Ի Ա Ր Ա Կ

Իմ տիրուհու դու վաղեմի սպասավոր,—
Ի՞նչ ես կանգնել դու միայնակ դռների մոտ.
Եվ կարծես թե վիշտն ես ողբում դառնաբար.
Արդյոք ինչպե՞ս առանց քեզ
Կարողացավ մենակ մնալ Մեդեան։

Դ Ա Յ Ա Կ

Ո՜հ, ծերունի, դու Յազոնի մանուկների դաստիարակ.
Լավ ծառայի սրտի համար հուզիչ է խիստ վիշտը տիրոջ,
Որն, հիրավի, ալեկոծում է հոգին։
Արդ՝ այնքան եմ ես տանջահար, որ ցանկացա գալ այստեղ
Եվ ողբակոծ պատմել երկրին ու երկնքին
Իմ Մեդեա իշխանուհու դժբախտության պատուհասն։

Դ Ա Ս Տ Ի Ա Ր Ա Կ

Մի՞թե դըժբախտը տակավին
Չի դադարել լալ ու ողբալ։

Դ Ա Յ Ա Կ

Լավատես ես դու, ծերունի,—սկիզբն է դեռ՝
Նրա դաժան տառապանքի.

Կեսը նույնիսկ յուր տանջանքի
Նա չի կրել տակավին։

ԴԱՍՏԻԱՐԱԿ

Ո՜հ, խելագուրկ,—եթե միայն
Կարելի է այդպես ասել տիրոջ մասին,—
Դեռ չգիտե,—ի՞նչ աղետներ, ի՞նչ նոր փորձանք
Կա յուր առջևն սպասելիք։

ԴԱՅԱԿ

Ի՞նչ կա, ավա՞ղ, ո՞վ ծերունի,
Մի չարշարիր, ասա՛ ինձ։

ԴԱՍՏԻԱՐԱԿ

Ոչի՞նչ, ոչի՞նչ։ Գուցե նույնիսկ արժանի եմ սարջանքի,
Որ այդ խոսքը ասացի։

ԴԱՅԱԿ

Ծերո՛վ, հանուն քո ծերության, բնավ ինձնից՝—
— Համածառա քո ընկերից, մի՛ ծածկիր.
Իսկ ես, եթե անհրաժեշտ է, երբե՛ք բերանըս բաց չեմ անի
Եվ այդ մասին խիստ լռության կը պահեմ։

ԴԱՍՏԻԱՐԱԿ

Արդ՝ մի անգամ, անցնելիս,
Ես գնացի, հասա այնտեղ,—
— Գերամեծար Պիրինեի աղբյուրին,
Անակնկալ անդ լսեցի,—
Բայց առերես ինձ չը լսող ցույց տալով,—
— Ծերունիները,—նատոտած՝—
Այդպես դամա խաղալիս
Խոսում էին, որ Կրեոնտն՝
— Մեր այս երկրի թագավորն,

Որոշել է Կորնթոսից արտաքսել դուրս,
— Աքսորել այս մանուկներին և սրանց մորն։
Սակայն ինքըս չը գիտեմ լավ,—
— Որքա՞ն արդյոք ճշմարիտ է այդ համբավն.
Կը ցանկայի, որ այդ երբե՛ք չը կատարվե՞ր։

ԴԱՅԱԿ

Սակայն մի՞թե Յազոնն իրավ թույլ կը տա,
Որ հարազատ յուր որդոց հետ վարվեն այդպես,
— Ինքը թեպետ իսկապես
Սրանց մոր հետ խոով է այժմ և թշնամի։

ԴԱՍՏԻԱՐԱԿ

Նորագույն սերն է ավելի միշտ գերադաս,
Քան վաղընջյան ազգակցություն։ Յազոնն հիմա
Բարեկամ չէ յուր վաղեմի ընտանիքին։

ԴԱՅԱԿ

Կորա՞ծ ենք մենք։ Հին աղետից
Չենք ազատվել տակավին.
— Մինչդեռ արդեն նոր կսկիծ,—
— Նոր կրակ է թափվում ահա մեր գլխին։

ԴԱՍՏԻԱՐԱԿ

Բայց իմացի՛ր, ժամանակ չէ հարմարագույն,
Որ այդ մասին մեր տիրուհին իմանա.
Ուստի լռիր, և այդ առթիվ բերանդ փակ,
Ամենևի՛ն և ոչ մի տեղ ոչ մի խոսք։

ԴԱՅԱԿ

Ո՜հ, մանուկներ, խե՜ղճ մանուկներ,
Գեթ լսեցեք, թե ինչ մարդ է ձեր ծնող Հայրը,
Բայց ես նրան չեմ անիծի,— տե՛րն է նա իմ.

Թեպետ և խիստ, դաժանաբար,—
Վատ է վարվում յուր բարեկամ մարդկանց հետ։

ԴԱՍՏԻԱՐԱԿ

Ո՞վ կարող էր մահկանացու մարդկանցից—
Նույնը չանել։ Եվ մի՞թե դեռ չգիտես,
Որ ամեն մարդ ինքը իրեն ավելի է սիրում միշտ,
Քան ուրիշին,— մերձավորին,— ոմանք սակայն
Ազնվաբար են այդպես վարվում, ոմանք էլ խիստ շահախնդիր։
Ուստի պարզ է՝ երկրորդ անգամ ամուսնացող
Հայրը անշուշտ դադարում է այլևս սիրել
Յուր վաղեմի նախկին կնոջ զավակներին։

ԴԱՅԱԿ

Տո՛ւն գնացեք դուք, մանուկներ, լավ կը լինի ամեն բան։
Դու, ծերունի, սրանց անջատ, առանձնակի տանը պահիր,
Մի՛ թող գոնե, որ մոտենան իրենց մորը զայրագին.
Նկատել եմ ես շատ հաճախ, որ նույնիսկ այս մանուկներին
Նա նայում է միշտ կատաղած, վայրագ ու ժանտ հայացքով.
Եվ կարծես իսկ սրանց հանդեպ մտքում ունի դաժան մի գործ,
Քանզի գիտեմ, ես լա՞վ գիտեմ,— չի դադարի նրա քենն,
Մինչև որ նա մեկն ու մեկին չը խորտակի դժնաբար,
Բայց թող զայրույթն այդ բռնկվի ինձ մահու դեմ վրեժխնդիր,—
Եվ ո՛չ ավա՞ղ, յուր բարեկամ մարդկանց հանդեպ։

ՄԵԴԵԱ

(Բեմի ետևից)

Ավա՞ղ, ավա՞ղ.
Թշվառ եմ ես, դժբախտագո՞ւյն,—
Անվախճան է տառապանքը դժնի կյանքիս.
Վա՛յ ինձ, ինչո՞ւ չեմ կործանվում ես, ավա՞ղ,
Ո՞ւր ես ժանտ մահ, ինչո՞ւ դեպ ինձ չես գալիս։

ԴԱՅԱԿ

Այդպես է միշտ, իմ սիրելի մանուկներ,
Խիստ մոլեգնած է ձեր մայրը, ահավասիկ,

Բորբոքված է, ինչպես վառվող բորբ կրակ։
Եվ զայրույթն է նրա սրտի այդպես եռում ահռելի։
Շուտո՜վ, շուտո՜վ տուն գնացեք, ձեր մոր աչքին չերևաք.
Նրան այնտեղ չը մոտենաք։ Զգուշացեք դուք խստիվ—
Նրա բարքից վայրագ ու ժանտ,— զարհուրելի բնույթից,
Հայացքներից հպարտ ու վեհ։
Ուրեմն իսկույն տուն գնացեք
Եվ թաքնվեցեք ներսումն, այնտեղ։

(Մանուկները հեռանում են)։

Պարզ է արդեն...սիրտը այրող տառապանքի դառնությյան
Լոկ առաջին ամպն է ահա, որ այդպես
Արդ՝ կուտակվում է թանձրախիտ և ահեղ.
Եվ շատ շուտով պիտ բռնկվի, իբրև ուժգին փոթորիկ.
Ա՜խ, ով գիտե,—ի՞նչ կարող է դեռ կատարել անդիմադարձ,
Ծանրացասում,— ժանտ վշտերից գազազած
Եվ անսահման զայրույթով լի անզուսպ հոգին։

Մ Ե Դ Ե Ա.

(Բեմի եռևից)

Վա՜յ ինձ, ավա՜ղ.
Ա՜խ, որքան ես տարաբախտ եմ և թշվառ.
Բյուր մեծագույն հեծեծանքի արժանի են ցավերն իմ.

(Նկատելով մանուկներին)

Եվ դո՛ւք, և դո՛ւք, խիստ չարաբախտ մոր զավակներ,
— Գեթ կործանվե՛ք, չքվե՛ք բնավ դուք ձեր հոր հետ,
Գեթ խորտակվի, ավեր դառնա մեր տունն հիմքից,
Թող չքանա՛, ոչնչանա՛ և մեր ամբողջ ընտանիքն։

Դ Ա Յ Ա Կ

Ավա՜ղ, ավա՜ղ,
Վա՜յ ինձ, վա՜յ ինձ,— դժբախտ եմ ես։
Ո՜հ, ինչո՞վ են քո դեմն,— ասա, մեղապարտ
Խեղճ մանուկներն մեղքի համար իրենց հոր։

Կամ ինչո՞ւ ես այդպես ատում դու սրանց։
Ավա՜ղ, թշվառ և բախտազուրկ դուք մանուկներ,—
Սարսափո՞ւմ եմ, ահաբեկված եմ չափազանց...
Ո՜հ, մի դուցե զարհուրելի պատուհաս է սպասում ձեզ։
Միշտ ահավոր կրքի տեր են թագավորներն,
Եվ միշտ սակավ, քիչ են լսում նրանք խորհուրդ կամ խրատ,
Բայց առավել սիրում են խիստ հրամայել և իշխել։
Դժվար է շատ նրանց համար զսպել կրքի տենչը դաժան։
Մինչդեռ իրոք մարդու համար շատ ավելի
Ցանկալի է և գերագա՝— կյանքն հավասար,—
Ինձ, օրինակ, շա՜տ ավելի գրավիչ է և սրտաուենչ—
Ապրել հանգիստ և ծերանալ անվտանգ,
Քան կյանք վարել փարթամության փայլի մեջ։
«Ծղիր համեստ և չափավոր»,—խոսքերն են այդ իմաստուն,
Վսեմափայլ ու հաղթական։ Չափավոր կյանք,—
Դու ես միայն մարդկանց համար կարոտագին,
Երանավետ և մեծարժեք երջանկություն.
Մինչդեռ անմիտ գոռոզության նախատվացն,
Հպարտությունն և գերագո մեծ պչրանքն
Մարդուն երբեք չեն խոստանում և չեն տալիս երջանիկ կյանք,
Ընդհակառակ, ընտանիքի և տան համար
Վաստակում են ավելի շատ վիշտ ու աղետ,
— Նամանավանդ՝ երբ այդպիսով զայրացած են աստվածներն։

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

(Դայակն ու երգչախումբը)

Ե Ր Գ Չ Ա Խ Ո Ւ Մ Բ

(Դառնալով դայակին)

Մենք լսեցինք աղաղակներ։ Մենք լսեցինք իրարոց,—
Կողքիդացի տիկնոջ լացը և հեծեծանքն աղեցավ.
Չի՞ մեղմացել նա տակավին։ Ի՞նչ կա, ասա, ո՛վ պառավ.
Կանգնած էինք մենք դռան մոտ և լսեցինք
Ներսից հնչող սրտաճմլիկ ողբակոծն։
Ո՜հ, բնավին մենք ուրախ չենք այս տան վիշտը տեսնելով,

Հավատա մեզ, ո՞վ կինարմատ, մենք հիրավի—
Կարեկից ենք քո տիրուհու ցավերին։

ԴԱՅԱԿ

Ջը կա՞, չը կա այս ընտանիքն,— չքացել է նա արդեն.
Տերն է նրա ամուսնությամբ կապվում հիմա
Թագավորի դստրիկի հետ.
Մինչդեռ դժբախտ իմ տիրուհին սենյակի մեջ
Տառապում է ժանտ վշտերից հալումաշ,
— Խուլ է կարծես և չի լսում ոչ ոքի,—
Ոչ էլ նույնիսկ յուր բարեկամ մարդկանց խոսքերն ամոքիչ։

ԵՐԳԱԽՈՒՄԲ

Ստրոֆ.

Ձև՞ս արարիչ, և դո՛ւ, և դո՛ւ արևի լույս.
Անմա՞հ երկիր,— լսո՞ւմ եք դուք
Խոր ջայլակոծն և հեծեծանքն
Աղաղակող և չարաբախտ այդ կնոջ։
Նվ մի՞թե դու տառապում ես այդքա՞ն խորունկ
Ամուսնական մահճի համար փափագատենչ
Ու հեկեկում ես այդ առթիվ արտահույզ։
Ի՞նչ ես իզուր մահրդ կանչում, ով անգետ.
— Մահը կգա՛ ինքը հապճեպ և անկոչ։
Լռի՛ր շուտով և թո՛ղ անմիտ այդ աղերսանքն։
Եթե իրավ քո ամուսինն բացահայտ
Թողնում է քեզ, փնտրելով սերն այլ կնոջ,
— Նրա վրա մի՛ զայրանա բորբոքված,
Քանզի Ձևն է քո պահապանն արդարագով։
Մի՛ վշտանար և դառնապես մի՛ ողբար
Ամուսնական քո մահիճն։

ՄԵԴԵԱ

(Բեմի եռևից)

Ո՜հ, դու, Թեմիս ամենազոր, դու Արեեմիս իշխանավոր,—
Տեսե՞ք, ինչպես տանջվում եմ ես, որ անիծյալ ամուսնու հետ

Կապված էի երդումներով մեծագույն։
Ո՜հ, գեթ մի օր, մի ժամանակ տեսնեի ես
Այդ ամուսնու և նրա նոր հարսնացուի դիակներն—
Բեկորներումն անդ խորտակված ապարանքի.
Քանզի նրանք հանդգնեցին վիսաբար—
Նախ և առաջ խիստ անարգել, անպատվել ինձ։
Չա՜յր իմ, հա՜յր իմ, ո՞ւր ես, ավա՜ղ,
Քեզ եմ կանչում, իմ հայրենիք հեռավոր.
Ա՜խ, չէ որ ես, իբրև դաժան դավաճան,
Ձեզ թողեցի և խայտառակ հեռացա.
Այո, նույնիսկ,— սերն իմ սրտում ահռելի,—
Սպանեցի ես հարազատ իմ եղբորն։

Դ Ա Յ Ա Կ

Արդ, լսո՞ւմ եք, ինչպես ահա կանչում է նա
Այժմ Թեմիսին ուխտակատար, այլև Զևսին,
Որը մարդկանց երդումների տերն է հսկիչ.
Այո՛, հիմա իմ թագուհին հագուրդ կըտա յուր զայրույթին,
Ահագնակերպ կատարելով յուր վրեժը մեծագույն։

Ե Ր Գ Զ Ա Խ Ո Ի Մ Բ

Ա ն ա խ ս տ ր ո ֆ.

Ինչո՞ւ դեպ մեզ դուրս չի գալիս սենյակից,
Որպեսզի գեթ զրույց անի մեզ հետ այստեղ.—
Մենք կաշխատենք մեր ամոքիչ խորհրդով
Գեթ փարատել նրա վշտերն ու կսկիծ
Եվ մեղմացնել նրա զայրույթն ահեղ,—
Քանզի իրոք պատրաստ ենք մենք բարեկամին՝
Տառապանքի մեջ չթողնել անկարեկից։
Գնա՛, կանչի՛ր քո թագուհուն,
Թող սենյակից դուրս գա այստեղ.
Չը մոռանաս նաև հայտնել դու նրան,
Որ եկել ենք մենք սիրաբար այցելության։
Աճապարի՛ր, քանի շուտ է, քանի դեռ նա
Չի կատարել աղետալից գործեր ահեղ,

Քանզի նրա զարհուրելի վիշտն ու տանջանք
Հեշտ կարող են նետել նրան դեպի փորձանք։

ԴԱՅԱԿ

Շատ լավ եք ասում,—ահա, կաշխատեմ ես այդ կատարել.
Բայց երկյուղ ունեմ,—բնավ հույս չը կա,
Որ կարողանամ մի կերպ համոզել ես իմ տիրուհուն,—
Թեպետ սիրալիր ես կիրադործեմ ձեր խնդիրն իսկույն։
Երբ ստրուկներից մեկն ու մեկն հաճախ, մոտ գալով նրան,
Փորձում է խոսել, կամ մի բան ասել,—ո՜հ, այնպիսի՜ ժանտ,
Վայրագ, մոլեգին հայացքով է նա նայում ամենքին,
— Ինչպես առյուծ—մայրն,—պահապան կանգնած յուր
կորյուններին։
Եվ ի՞նչպես, ասեք, հիմար չանվանել,—կամ իսկ անիմաստ,—
Հին, վաղնջական այն նախնի մարդկանց, որոնք, հիրավի,
Վատ խրախճանքի—և հանդիսավոր խնջույքի համար,—
Իրրև միջոցներ խորունկ բերկրության, ցնծավետ կյանքի,—
Հորինել են պերճ ու զվարճաձայն երգեր ու նվագ։
Բայց չի մտածել ոչ ոք բնավին բազմաձայն երգով
Կամ ջերմ, հոգեզմայլ քաղցր նվագով—
— Ջսպել մեծագույն և կործանարար կրքերը մարդկանց,
Նաև ամոքել ժանտալի վիշտը տառապող սրտի
Եվ վերացնել այն, որ իսկ պատճառն է, ահռելի պատճառն,—
Ընտանիքներում հաճախ կատարվող ժանտ աղետների։
Այո՛, շահավետ և լավ կլիներ,— դյուրին չափազանց—
Միշտ քաղցրանվագ երգերով բուժել վշտերը մարդու։
Արդ՝—ի՞նչ կարիք կա,—խնջույքին հարուստ և փարթամաճոխ
Ձուր, աղմկաձայն երգել, նվագել,— քանի որ այնտեղ—
Սեղանի առատ, ճոխ ուտեստներով,— նույնիսկ առանց այդ,—
Մարդիկ կստանան լիուլի բերկրանք և սրտին հաճույք։

(Հեռանում է)

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Մենք լսեցինք հեծեծանքդ բազմահառաչ,
Ո՛վ Մեդեա տանջալից,—

Դու լալիս ես ահագնաձայն, դառնակսկիծ.
Անիծում ես ուխտադրուժ քո ամուսնուն՝
— Դավաճանին ամուսնական սրբության։
Ո՜հ, անարդար անարդ եղած կանչում ես դու
Ձևս—զգոնի հզոր դստրիկ Արտեմիսին,
— Այս գոյության երդումների պահապանին։
Աղերսագին, սրտամորմոք կանչում ես, արդ՝
Նրան, ավա՜ղ, որ ներշնչեց երբեմն քեզ,—
Ո՜վ տարաբախտ աքսորական,—
Մութ դիշերով անցնել ազի ծովը Պոնտոս
Եվ սլանալ դեպի օտար հեռուները,—
Դեպ անծանոթ և հեռավոր Հելլադան։

ԴՈՐՇՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա.ՌԱՋԻՆ

Երգչախումբն ու Մեդեան

Մ Ե Դ Ե Ա.

Ահա, դուրս եկա ես իմ սենյակից
Դեպի ձեզ, կանայք,—ո՜վ կորնթացիք,
Որ դուք, հիրավի, առիթ չունենաք կշտամբելու ինձ։
Շատ մարդկանց դիտեմ ես, ահավասիկ,
Որոնք հայտնի են իբրև սնապարծ կամ վեհ ու հպարտ,—
Եվ ի՞նչ, այդ մարդիկ արժանացել են այդ վատ համբավին,—
— Ոմանք, շնորհիվ իրենց վարմունքին դեպի շրջապատն,
Ոմանք էլ միայն շնորհիվ իրենց տնակցության—
Եվ դեպի մարդիկ սոսկ արտահայտված անտարբեր կյանքի։
Բայց չի՞ բնակվում ճշմարտությունը աչքերում մարդկանց։
Դեռ հոգին մարդու լավ չը հասկացած, պատրաստ ենք իսկույն
Մենք մեր առաջին միայն հայացքից ատել և նրանց,
Որոնք մեզ երբեք չարիք չեն արել,—ոչ էլ վատություն։
Օտարերկրացին պետք է սերտորեն կապվի, միանա
Բնիկների հետ։ Սակայն և նրանց,—որոնք հարազա՜տ,
Հայրենի երկրում դեպ իրենց բնիկ քաղաքացիներն

Արհամարհիչ են, իբր ինքնահավան, հպարտ, անխնա,—
Բնավ չենք կարող փառաբանելով՝ գովասանք անել։
Ես հիմա պատմեմ իմ մասին նաև.—արդ՝ վերջին հարվածն,
Որ անակնկալ շանթահարեց ինձ, կործանեց հոգիս,—
Խորտակեց կյանքս, իբրև ժանտ աղետ անսպասելի։
Ինձ համար արդեն կորած են կյանքի հմայքն ու տենչանք.
Ո՜հ, սիրելիներս, չեմ ուզում ապրել, կարոտ եմ մահվան։
Եվ այն, որ իրոք ճիշտ ամեն բան էր ինձ համար ընդմիշտ,—
— Իմ ամուսինը, ընտրյալն իմ սրտի,—դուք լավ գիտեք այդ,—
Այժմ հանդես եկավ իբրև մի սոսր, իբրև ամբարիշտ,
Զազիր դավաճան։ Բայց մենք, կանայքս,—կասեմ բացարձակ,
Հոգի, նաև միտք ունեցող բոլոր արարածներից
Դժբախտագո՜ւյնն ենք և թշվառական։ Ստիպված ենք նախ
Մեզ համար, ավա՜ղ, ոսկի օժիտով գնել ամուսին
Եվ հանձնել նրան, այդ բռնակալին, մեր սորուկ մարմինն,
Վատթարագույնն է չարիքը վերջին—չարաղե՜տ մի դործ։
Ապա կանդնում է հեք կնոջ առջև մեծագույն խնդիր,—
— Վսեմագո՜ւյնն է ամուսինն արդյոք, թե՞ նենգապատիր։
Անպատվություն է ապահարզանն, իբրև մի միջոց,
Մինչդեռ չի կարող կինը հեռանալ սոսր ամուսնուց։
Եվ այդպես ահա նա մի նոր աշխարհ ընկնելով հանկարծ,
Պիտի հարմարվի նոր օրենքներին, նոր վարք ու բարքին—
Իբր ամենագետ, իբրև մարգարե։ Քանզի անդ նրան—
Հայրենի տան մեջ չէին ուսուցել, թե ի՞նչպես արդյոք
Նա պետք է ապրի, սերտորեն կապվի յուր ամուսնու հետ։
Եվ լա՜վ է, եթե մեր բոլոր ջանքերն անցնեն հաջողակ,
Եթե ամուսինն արժանավայել, կնոջն համերաշխ
Հանդուրժում է հաշտ յուր լուծը կրել կյանքի դոյության։
— Սակայն եթե ոչ, այդ մահ է, ավա՜ղ, մահ կնոջ համար։
Ամուսինն իրավ, եթե յուր տան մեջ, յուր ընտանիքում
Ջանձրույթ զգալով, բերկրանք չի գտնում յուր սրտի համար,
— Գնում է դեպի հասակակիցներն, ընկերների մոտ,
Որպեսզի այնտեղ հագուրդ տա սրտին։ Մինչ մենք՝
կանայքս,
Ստիպված ենք միշտ նայել լոկ մեկին, մեկի աչքերին։
Ասում են հաճախ, որ տան մեջ փակված կինը անվտանդ,

Անվրդով խաղաղ միշտ կյանք է վարում, մինչ նրանք այնտեղ
— Պատերազմի մեջ ահեղ կռվում են, ձեռքերին նիզակ։
Անհեթեթ կարծիք։ Կը ցանկամ իրավ, ես ավելի շուտ
Եռակի կռվել մարտական դաշտում վահանը ձեռքիս,
Քան լոկ մեկ անգամ ծանր երկունքով ծնել մի զավակ։
Բայց ձեր վիճակը նման չէ բնավ իմ հեք վիճակին.
Դուք այստեղ ունեք և հայրական տուն և քաղցր հայրենիք.
Հմայքն ու սերը լավ ծանոթների,—շահեստ և օգուտ,
Հարազատ երկրի և բարօրության ամեն մի բարիք.
Մինչդեռ ես, ավա՜ղ, մենակ եմ, օտար, հայրենիքից զո՜ւրկ,
Նաբվա՜ծ, կեղեքվա՜ծ ձեռքովն ամուսնու սուր և անգութ։
Աքսորված եմ ես, ո՜հ, օտար երկրից. չունեմ ես այստեղ
Ոչ մայր, ոչ եղբայր, ոչ արյունակից և ոչ հարազատ,—
Որոնց մոտ հիմա գեթ մի ապաստան գտնեի ես ինձ՝
Իմ դժբախտության այս ժանտ օրերին։
Ես, սակայն, ձեզնից, ով սիրելիներ, խնդրում եմ մի բան.
Եթե ես մի կերպ միջոցներ գտնեմ,—վշտիս փոխարեն
— Իմ կրած ահեղ այս տառապանքի վրեժն առնելու
Իմ գարշ ամուսնուց և նորահարսից կամ հորիցն հարսի,—
Լռե՛ք այդ մասին և մի մերկացրեք դուք իմ անելիքն։
Վախկոտ է կինը, մարտական գործին օգտակար չէ նա.
Սարսափում է խիստ սրից, արյունից։ Բայց եթե իրոք
Վիրավորված է նա ամուսնության իրավունքի մեջ,—
— Այդ դեպքում արդեն ահեղագույն են նրա քինն ու ոխն
Եվ ժանտ վրեժի ու կատորածի զայրույթն աղմկոտ։

ԵՐԳԱԽՈՒՄԲ

Ճիշտ կը կատարենք քո խնդիրը մենք, այո՛, Մեդեա,
Արդարացի ես վրեժդ լուծում դու քո ամուսնուց.
Մենք չենք զարմանում, որ ողբում ես դու քո տխուր վիճակն։
Բայց տե՛ս, գալիս է ինքը Կրեոնտն, երկրի թագավորն,
Որպեսզի այստեղ քեզ հայտարարի յուր վճիռը նոր։

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

(Նույն անձինք և Կրեոնտ)

ԿՐԵՈՆՏ

Քեզ եմ ասում, մոայլատես ո՛վ վհուկ,
Դո՛ւ, Մեդեա, որ զայրագին սպառնում ես քո ամուսնուն,—
— Պատվիրում եմ, որ իմ բոլոր երկրներից դու քո երկու որդոց հետ
Շուտ հեռանաս դեպի աքսոր,—ա՛յդ է վճիռն իմ հատուկ։
Արդ՝ շուտ արա, մի՛ դանդաղիր,—որ կատարես կամքն արքայի,
Իմ անձնական պատվերն է այդ,—ես դեպի տուն ետ չեմ գնա,
Մինչև որ քեզ դուրս չընետեմ սահմաններիցն իմ երկրի։

ՄԵԴԵԱ.

Ո՜հ, ես դժբա՜խտ, կործանված եմ իմ օրհասի ժամն է վերջին։
Հալածում են թշնամիներն ինձ հետամուտ, անողոք.
Արհավիրքի մեջ ահա, մինչ փրկվելու ճար չկա.
Եվ թեպետ իսկ իմ վիճակն է թշվառագույն և ծանրագին,—
Բայց և այնպես հարցում կանեմ։—Դո՛ւ, Կրեոնտ, իմ արքա,—
— Ի՞նչ պատճառով այդպես դու ինձ արտաքսում ես քո երկրից։

ԿՐԵՈՆՏ

Կարիք չկա, որ թաքցնեմ այդ։ Երկյուղ ունեմ ահավասիկ,
Որ մի՛ դուցե իմ դստրիկի կործանումին դառնաս պատճառ։
— Դեռ շատ բան կա—իմ երկյուղը և կասկածանքն հաստատող.
Իմաստուն ես դու չափազանց, չար դործերի ընդունակ.
Եվ բացի այդ՝ համարելով քո ամուսնուն դավաճան,
Նրա հանդեպ այժմ կատաղի զայրացած ես դու իրոք։
Ես լսում եմ,—քանզի արդեն ինձ հայտնել են այդ մասին,—
— Սպառնում ես վրեժ առնել դու միևնույն ժամանակ
Նորահարսից և փեսայից, այլև նրա աներից։
Ուստի և ես ցանկանում եմ կանխել դալիք աղետներն
Եվ պահպանել իմ ընտանիքն, ինձ և իմ տունն։
Շատ ավելի լավ կը լինի, որ ես, ո՜վ կին,

Քեզ իմ հարվածն այս ուղղելով, այժմ ատելի դառնամ քեզ,
Քան զուր ողբամ իմ բարեբախտությունն հետագայում։

Մ Ե Դ Ե Ա.

Ավա՜ղ, ավա՜ղ.
Այժմ առաջին անգամը չէ, այլ շատ անգամ, ո՜վ Կրեոնտ,
Որ իմ փառքը մեծահռչակ ինձ չարիք է վաստակում։
Խելացի մարդն, որ գիտությամբ է իմաստուն, չը պետք է զուր
Որդոց միտքը ծանրաբեռնի խոր ուսմունքով չափազանց.
Ով չափից դուրս, երկարատև անձնատուր է գիտության,
Նա շահում է ոգեհների ատելությունն ու նախանձն
Եվ կշտամբանքն՝ իբր հատուցում անգործության։
Փորձիր հայտնել հիմարներին ճշմարտության բարձունքներ,
— Եվ կանվանեն նրանք իսկույն քեզ անպիտան ու ոգեհ։
Սակայն եթե միշտ համարվես դու առավել խելացի,
Քան ամբոխի դատաստանովն իմաստալից ճանաչվողներն,
— Քաղաքի մեջ ողորմելի,—թշվառագույն կը դառնաս։
Ճիշտ այդպես է և իմ վիճակն, ով Կրեոնտ.
Ահա ես իմ իմաստությամբ ատելի եմ ոմանց համար,
Ոմանք անմիտ և հիմար են անվանում ինձ,
Ոմանց համար ես մի մարդ եմ անտանելի,—նույնիսկ բիրտ.
Իսկ ոմանք էլ համարում են ինձ խելացի և բարեսիրտ։
— Մինչդեռ իրոք ոչ իմաստուն, ոչ մեծագով,—
Այլ մի կին եմ ես հասարակ, սովորական իմ խելքով։
Մի՞թե և դու մտածում ես այլոց նման, իմ թագավո՛ր,
Որ իբրև թե ես կարող եմ վատ բան անել քո հանդեպ.
Ո՜հ, քավ լիցի. թո՛ղ այդ միտքը։ Մի՛ վախենա ինձնից երբեք.
Ես, իբրև կին, այս վիճակում, ո՜վ Կրեոնտ,
Արքայազոր մարդկանց հանդեպ չեմ մեղանչի բնավին։
Ի՞նչ ես արել դու ինձ արդյոք, չես անպատվել բնավ դու ինձ.
Քո աղջիկն ես մարդու տալիս և կարող ես, իրավացի—
Քո հավանած մարդուն ընտրել,—ով հաճելի է քո սրտին։
Մինչ միմիայն ես ատում եմ իմ ամուսնուն։
Իսկ դո՛ւ, գիտեմ, վարվում ես այժմ բարեխորհուրդ և իմաստուն։
Ջեմ նախանձում ես քո ներկա երջանկությանն, ահավասիկ,

Եվ դատիկիդ չքնաղ բախտին,—բարո՞վ սարքես դու հարսանիքն։
Բայց մի բան եմ ես աղերսում.—Թո՛ղ որ մնամ ես այստեղ
Եվ բնակվեմ քո երկրի մեջ։ Ճիշտ է, թեպետ—
Վիրավորված եմ ես իրոք, բայց կը լռեմ այդ մասին,—
Միշտ զիջելով իշխանության և ուժին։

ԿՐԵՈՆՏ

Բարբառում ես դու քաղցրաձայն,—երկյուղ ունեմ ես սակայն,
Որ քո սրտում կա չար դավանք, և նյութում ես դաժան մի գործ.
Շատ ավելի հեշտ է, իրավ, պաշտպանվել
Մի կատաղի ժանտ կնոջից կամ նույնատիպ տղամարդուց,
Քան իմաստուն և լռասեր թշնամուց։
Ուստի իսկույն և անհապաղ,—շուտ այստեղից հեռացիր.
Մի ճոռոմիր ունայնախոս. իմ վճիռը պիտ կատարվի։
Որքան էլ դու վարվես խորդախ, նենգապատիր,
Ոչինչ այստեղ քեզ չի օգնի,—մնալ այստեղ չես կարող.
— Թշնամի ես,—իմ թշնամին իսկական։

ՄԵԴԵԱ.

(Ծունկ չոքելով)

Ո՜հ, խնայիր հանուն դստեր քո նորահարս,
— Աղերսում եմ, ահա քո դեմ ծնկաչոք։

ԿՐԵՈՆՏ

Բոլոր խոսքերն ավելորդ են և ունայն.
Զուր մի փորձիր ինձ համոզել,—չես կարող։

ՄԵԴԵԱ.

Դու ինձ ուրեմն արտաքսո՞ւմ ես և այդպես
Անուշադիր, անտես անում իմ աղերսանքն։

ԿՐԵՈՆՏ

Քանզի քեզնից շա՜տ ավելի ես սիրում եմ իմ ընտանիքն։

ՄԵԴԵԱ.

Ո՜հ, հայրենիք, որքան ծանր է և դառնալից
Այս միջոցին հիշել քեզ։

ԿՐԵՈՆՏ

Ինձ առավել սրտալի են և ավելի սիրատենչ
Իմ զավակներն, իմ հայրենքն։

ՄԵԴԵԱ.

Ավա՜ղ, ավա՜ղ, սեր մարդկային,
Դու որպիսի մեծ չարիք ես կյանքի համար։

ԿՐԵՈՆՏ

Ինձ թվում է, որ չարիքի և բարութեյան տնօրենն
Բա՜խտն է միայն,—բա՜խտը հզոր։

ՄԵԴԵԱ.

Ձևս երկնատեր, չարշարանքիս մեղավորին
Մի ազատիր վրեժից։

ԿՐԵՈՆՏ

Ո՜հ, անմիտ կին, կորիր շուտով և ազատիր ինձ հոգսերից։

ՄԵԴԵԱ.

Ես ավելի և չափազանց շատ հոգս ունեմ,
Մինչ նոր հոգսեր պետք չեն ինձ։

ԿՐԵՈՆՏ

Զգույշ, թե ոչ կը պատվիրեմ, որ ծառաներն
Քեզ ուղղակի բռնի ուժով դուրս ձգեն։

ՄԵԴԵԱ.

(Նրա ձեռքը բռնելով)

Բայց սպասիր, աղերսում եմ, ո՜վ արքա.
Մի այլ խնդիր ես ունեմ։

ԿՐԵՈՆՏ

Ա՜յ կին, կարծեմ, ուզում ես ինձ դու ավելի զայրացնել։

ՄԵԴԵԱ.

Մի՛ վախենա, կը հեռանամ, աքսոր կերթամ.
Մի այլ բան կա, որի մասին աղերսում եմ հիմա քեզ։

ԿՐԵՈՆՏ

Էլ ինչո՞ւ ես դու համառում
Եվ չես ուզում կորչել, գնալ իմ երկրից։

ՄԵԴԵԱ.

Թույլ տուր մնալ ինձ լոկ մի օր, միայն այսօր,
Որպեսզի ես գեթ մտածեմ և իմանամ որոշակի,
Թե ո՞ւր արդյոք պետք է գնամ,—ո՞րտեղ, ի՞նչպես ինքնաբար
Ես կարող եմ զավակներիս համար գտնել մի ապաստան։
Մինչ հայրը՝ յուր որդոց մասին հոգատար չէ բնավին։
Խղճա՜ նրանց. ինքըդ նույնպես հայր ես ծնող
Եվ ընդունակ կարեկցության։ Իմ մասին չէ՛, քավ լիցի,
Որ հոգածու եմ սրտագին։ Թող որ աքսոր ընկնեմ ես.
Աղերսում եմ նրանց համար թախանձագին,—
— Նրա՜նց դժբախտ վիճակն է այդ, որ լալիս եմ դառնապես։

ԿՐԵՈՆՏ

Բռնակալ չեմ ես, հիրավի, ոչ էլ դաժան, անողոք.
Եվ շատ հաճախ գթությունն իմ շահագործել են մարդիկ։
Նույնպես և այժմ—գիտեմ, ա՜յ կին, որ սխալ է իմ արածն,

Սակայն հոժար կը կատարեմ ես քո խնդիրն, ահավասիկ,—
Բայց նախապես՝ հայտնում եմ քեզ,—եթե ճաճանչն արշալույսի
Վաղ առավոտ քեզ, նաև քո զավակներին
Տեսնի այստեղ, իմ երկրի մեջ,—կը կործանեմ քեզ իսկույն։
Լա՛վ հասկացիր,—խոսքըս սուրբ է և հաստատուն.
Եթե պետք է, տալիս եմ քեզ միայն մի օր ժամանակ,
Քանզի գիտեմ, մեկ օրվա մեջ չես կարող դու
Ինձ պատճառել վիշտ ու աղետ ահարկու։

(Կրեոնտը հեռանում է)

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Ո՜հ, դու դժբախտ և թշվա՜ռ կին.
Ավա՜ղ, ավա՜ղ,
Մենք լալիս ենք քո մասին։
Ո՞ւր կարող ես դու գնալ,
Ո՞վ կըլինի քեզ հյուրընկալ.
Ո՞ւմ հարկի տակ դու տարագիր ու մենակ
Պիտ որոնես քեզ, քո որդոցն ապաստան։
Ո՞րտեղ, ի՞նչպես, ո՞ր երկրի մեջ
Դու կը գտնես քեզ փրկություն՝ քո վշտերից.
Ո՜հ, ո՜րպիսի աղետների հորձանքի մեջ
Ավա՜ղ, նետեց քեզ անողոք ժանտ ասավածն։

ՄԵԴԵԱ.

Արհավի՜րքն է աղետալի ինձ հալածում ամենուր,
Բայց չը կարծեք՝—ընկճված է իմ հոգին.
Ե՛վ նորահարսն, և փեսացուն,—նաև նրանց միացնողն,—
Շատ փորձանքներ դեռ կը տեսնեն դառնագին։
Կարծում եք դուք, որ ես իզո՞ւր կարողացա նրա դեմ
Շողոքորթել, քծնե՞լ նույնիսկ—ո՛չ, ո՛չ, երբե՛ք.
Եթե ես շահ չունենայի, եթե չօգներ իմ գործին այդ,
Ես նրա հետ չէի խոսի աղերսանքով սրտալի,
Ձեռքը նրա չէի սեղմի, որ չը պղծեմ ձեռքերը իմ,—
Մինչ հիմարն այդ—այնքան իրոք տգետ եղավ և անմիտ.

— Կարող էր նա մի մերժումով նպատակներն իմ խորտակել,
Եվ արտաքսել, ինձ դուրս նետել երկրից առ միշտ։
Մինչ թույլ տվեց այստեղ մնալ ինձ մեկ օր.—
Իսկ ես, այո, այդ մեկ օրում կարող եմ ճիշտ
Խորտակ անել, դիակ դարձնել անշուշտ երեք Թշնամի մարդ,—
— Նորահարսին, իմ ամուսնուն և հարսի հորն։—
Դրանց կյանքը ոչնչացնող շատ մահացու կան ուղիներ.
Բայց չը գիտեմ,—ո՞րն է արդյոք հարմարագույն,
— Ո՞րը պետք է ես ձեռնարկեմ, սիրելիներ։
Արդյոք հրո՞վ տունն հրկիզեմ հարսանեկան.
Թե՞ լուռ, դաղտնի ես ներս խուժեմ անդ՝ ննջարան, դեպի
մահիճն
Եվ սրասայր սուրը վարսեմ սրտերի մեջ երկուսի,
Բայց ինձ համար անշուշտ այստեղ կա անհարմար մի
հանգամանք.
Եթե այստեղ ծրագիրն իմ կատարելու ժամանակ—
Ապարանքի շենքն անցնելիս, ձերբակալվեմ ես հանկարծուստ,
— Ինձ կը սպանեն ու կը ծաղրեն ինձ՝ մեռածիս, իմ Թշնամիք։
Բայց լավագույն, ամենաճիշտ,—կանանց ձեռքով լավ սուտված,
Միջոցն է, արդ—Թունավորել նրանց Թույնով։
Թող գլուխ գա գործը այդպես։
Դիցուք՝ նրանց սպանեցի.—դեպ ո՞ր քաղաք, դեպի ո՞ւր
Պիտ հեռանամ այնուհետև։ Ո՞ր երկրի մեջ, ո՞ւմ տանը ինձ,
Իբր օտարի,—կարող են տալ դեթ անվտանգ ապաստան։
Ո՞վ կը դառնա ինձ, ասացե՛ք, երաշխավոր ու պաշտպան։
Ո՛չ, չի լինի։ Դեռ կսպասեմ քիչ ժամանակ,—
Մինչև որ ինձ հաստատ գտնեմ ես ապաստան մի անվտանգ։
Ապա իսկույն գաղտնի ու նենգ կը կատարեմ սպանությունն։
Սակայն եթե ինձ հալածի իմ անողոք ճակատագիրն,
Այն ժամանակ սուրը ձեռիս,—խիզախությամբ զայրալիր—
Կը հարձակվեմ, թեկուզ մահը ինձ սպառնա,
Եվ կը սպանեմ, կը կոտորեմ նրանց արդեն բացեբաց։
Արդ երդվում եմ ես անունովն իմ դիցուհի Հեկատեի,
Որին անշեղ հարգում եմ ես ամենից շա՜տ և գերարժան,
Որին նաև ընտրել եմ ինձ ես գերափառ օգնական,—
Որի արձանն է միշտ դրված սրբավայրումն ապարանքիս,—

— Երդվում եմ ես նրա փառքով, որ չե՞ն կարող անպատիժ
Վերք պատճառել նրանք սրտիս, թունավորել վշտով հոգիս։
Թող որ լինի հարսանիքը նրանց դժբախտ ու դառնավեր,
Իսկ աքսորն իմ, խնամությունը նորակերտ—
Լինելու են նրանց համար դառն ու դաժան, չարաղետ։
Հապո՞ն հառաջ, ո՛վ Մեդեա, շուտ դործի դիր մտքերըդ բյուր,
Դրսևորիր խոր խորհուրդներ, կախարդական քո թովչանքն,
— Շարժվիր դեպի քո մեծագույն և ահավոր նպատակն։
Այսօր ևեթ դու հանդես բեր քաջարության գերահանճարն...
Լա՛վ մտածիր, ինչպե՞ս ես դու անա՛րդ եղած, չարաբաստիկ,
Մի՛ հանդուրժիր, մի՛ թող, որ քեզ ծաղրեն որդիք Սիզիփոսի,
Որ Յազոնի սիրուհիները քեզ դարձնեն խաղալիք։
Դատրիկն ես դու փառապանծ հոր, որ ծնունդ էր Հելիոսի։—
— Պատրաստ եղիր և իմաստուն։ Ջուր չի ասված, որ մենք՝
կանայքս,
Անկարող ենք ազնվաբարո ձեռնարկի մեջ,—բայց քաջունակ
Եվ հզոր ենք ասպարեզում ամեն տեսակ չարիքների։

(Հեռանում է)։

ԵՐԳԱԽՈՒՄԲ

Ստրոֆ.

Նա են հոսում սուրբ գետերի սուրբ ջրերն,
Ոտնակոխ են պատիվն արդար, իրավունքն,
Խախտված է արդ՝ ամեն բանի վեհ ընթացքն,
Նենգամիտ են մարդիկ արդեն ու խարդախ,
Ուխտազանց են բոլորն իրոք
Եվ ծաղրում են երդումն—հանդեպ աստվածների։
Բայց կփոխվեն դեպի լավը, դեպ փառահեղն
Խոսքն ու կարծիքն այս գոյության կյանքի մասին.
Եվ կը լինեն կանայք նորից պատվի տեր,
— Կը հայթայթի ցեղը կանանց նոր մեծարանք.
Կանանց մասին ոչ ոք երբեք ու բնավ
Չի տարածի դժգույն կարծիք վատհամբավ։

Անտիստրոֆ.

Դուք, մեծասքանչ երգիչների փառունակ
Ով մուսաներ վաղնջական.

Կը դադարե՞ք հնչել երգերն ու նվագ
Ովսաադրուժ գործի մասին գոյության։
Ինչո՞ւ արդյոք Ֆոյբոսն, հզոր Ապոլլոնն—
— Վեհ երգերի առաջնորդը գերահանճար,
Մեզ չի տվել քաղցրահնչյուն նուրբ քնար,
— Ջիրքը երգի աստվածազոր, երկնաձոն,—
Որ հյուսեինք մենք պերճ երգեր
— Տղամարդկանց արարքներին նվիրված.
Որ հնչեին երկար շարքով հին դարերն՝
— Ճակատագիրն ու բախտը մեր և նրանց։

Ստրոֆ 2.

Իսկ դո՛ւ, իսկ դու դժբախտ կին,—
Սիրակարոտ կրքի ուժով մոլեգնած,
Քո հայրական տունը, ավա՜ղ, թողեցիր—
Ու երկվորյակ ժանտ ժայռերի միջովն անցած,
Դու անվեհեր ծովն ալեկոծ լող տվեցիր,—
Եվ ապրում ես օտար երկրում, տարաբախտ,—
Դավաճանել, ձգել է քեզ քո ամուսինն,
Իսկ այժմ անտեր, խիստ անարգված և պատվազուրկ
Պիտի աքսորվե՞ս, պիտ հեռանա՞ս երկրիցն այս—
— Միշտ տարապիր, դաժան բախտին իբրև տուրք։

Անտիստրոֆ 2.

Չի կատարվում երդումն արդեն սրբանվեր,
Իսկ ամոթը վսեմափայլ, աղնվաբար
Հելլադական երկրիցն հզոր, մեծափառ
Հեռացել է դեպի երկինքն ու եթեր։
Մինչ դու, անբա՜խտ, զուրկ ես, չունես հայրական տուն,—
Որը դառնար քեզ ապաստան.
Եվ ազատեր քեզ քո վշտիցն անադորույն։
Ահավասիկ, ամուսնական քո մահիճին
Տիրացել է իշխանազոր մի այլ կին,—
Արդ քո տան մեջ տերը նա է և տնօրեն.
Քո ամուսնու սերը նա է քո փոխարեն։

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐՐՈՐԴ

(Նույն անձինք և Յազոն)

ՅԱՍՈՆ

Ոչ միայն հիմա, այլև շատ հաճախ համոզվել եմ ես,
Որ վայրագ զայրույթն միշտ անուղղելի չարիք է կյանքում.
Դու, ահավասիկ, կարող էիր միշտ, ատա հյուրընկալված,
Մնալ և ապրել ապահանքի մեջ,—եթե անտրտունջ
Հլու լիներիր,—սրտանց հնազանդ կամքին արքայի։
Մինչդեռ քո հիմար խոսքերի համար
Այժմ ահավասիկ, արժանացել ես դու աքսորանքի։
Քո խոսքն ինձ համար ոչինչ է բնավ.—կարող ես դու միշտ
Ասել, քարոզել, որ մարդկանց միջև Յազոնն է, որ կա
Վատթարագույնը, վերջին ղզվելին, այլև ամբարիշտն։
Սակայն քեզ համար ճիշտ երջանկություն պետք է համարես,
Որ արքաներին կշտամբանք տալով. անարդ անելով,
— Պատժվում ես միայն, միայն աքսորով։
Եվ շա՜տ, շա՜տ անգամ ես ջանք եմ թափել, որ արքայի քենն
Մի կերպ մեղմացնեմ իմ աղերսանքով.—որ քեզ թողնի ատա։
Սակայն դու, անմի՜տ, անուղղելի ես.—շարունակ անսասան—
Վատաբանում ես թագավորներին խոսքերով զազիր.
Ուստի անխուսափ աքսորում են քեզ։ Չը նայած դրան՝
Ես չը կամեցա խզել կապերը բարեկամության,—
Եվ ահա եկա, սրտանց կարեկից, ա՜յ կին, դեպի քեզ,
Որ դու ձեռնունայն, առանց դրամի,
Խիստ կարիքի մեջ զավակներիդ հետ աքսոր չը գնաս.
Քանզի, հիրավի, աքսորանքի մեջ վիշտն է անպակաս։
Եվ թեպետ գիտեմ, որ թշնամաբար ատում ես դու ինձ,
Սակայն քեզ համար անկարող եմ ես ցանկանալ չարիք։

ՄԵԴԵԱ.

Վախկո՛տ, դու վախկո՛տ, ամենազազիր, ավա՜ղ, իմ լեզուն
Չի կարող անգամ դեթ նշավակել զորությամբ խոսքի
Քո գա՛րշ, ամարդի, նողկանքի արժան մեծ ստորությունն։
Ինչպե՞ս։ Դո՞ւ եկար, դու եկար մեզ մո՞տ։ Մի՞թե դու իրոք

Հանդգնեցիր գալ, իբրև դերագույն վերջին ատելին։
— Լինել դավաճան յուր ընտանիքին և դաժանագույն
Աղե՞տ պատճառել սիրելի անձանց,—հետո պարզերես
Ու դեմ հանդիման հանդգնել նայել նրանց աչքերին,—
— Քաջությո՞ւն է այդ, կամ հանդուրժելի մի խիզախությո՞ւն,
Թե՞ ամենադարշ և նողկ ոճիրը մարդկանց մեջ իրոք։
Լա՞վ է, որ եկար, բանդի կարող եմ թեթևացնել դեթ
Տանջանքը սրտիս,—դեթ թափել հոգուս թույնը չարաղետ,—
— Պատմել քո մեղքերն, որ բարոյապես խորտակվե՛ս, երկչո՞տ
Պատմեմ սկզբից,—վաղանց օրերի պատմությունն է այս.—
Տեղյակ են, դիտեն բոլոր հույները, որոնք անդ քեզ հետ
Նավակովն Արգո ճանապարհվեցին,—թե ի՞նչպես իրոք
Փրկեցի ես քեզ այնտեղ այն ժամին, երբ քեզ հանձնեցին
Լծել հրաշունչ եզներն ու ցանել լայն արտը մահվան.
Ահեղ վիշապին, որ բազմապատույտ պառկած էր անքուն,
Եվ պահպանում էր ոսկեգեղմն այնտեղ,—ես սպանեցի,—
Եվ քեզ այդպիսով փրկություն գտա։ Ես էի միայն,
Որ ետ դարձրեցի քեզ լույսն արևի և քո գոյությունն։
Դավաճանեցի ես իմ ծնող հորն,—թողեցի մեր տունն
Եվ եկա քեզ հետ դեպի Պելիոն,—դրդված ավելի—
Սիրո հուզմունքով,—քան իմաստության ներշնչման ներքո։
Արդ՝ իմ շնորհիվ յուր զավակների ձեռքովն ահարկու
Պելիասն սպանվեց ու մեռավ մահովն ամենադաժան,—
— Որ դու վտանգից ազատվես միայն և ապրես անհոգ
Եվ փոխարենն ինձ,— ո՜հ դու զազրագործ, դավաճանեցիր։
Իբրև որդոց հայր, ամուսնանում ես մի այլ կնոջ հետ.
Եթե լիներիր իրոք անզավակ, գուցե և մի կերպ
Ներելի լիներ նոր կրքիդ սերը, նոր ամուսնությունն։
Ոչի՞նչ ես գուցե դու այժմ համարում հավատն ու երդում.
Գուցե կարծում ես, որ էլ չեն իշխում աշխարհին, կյանքին
Աստվածները այն, որոնց անունով երդվեցիր դու խիստ.
Կամ գուցե հիմա նո՞ր օրենքներ են գործում մարդկանց մեջ,—
— Քանդի լավ գիտես, որ դրժել ես դու երդումն ու խոստում։
Եվ ինչո՞ւ, ավա՜ղ, դու աջ ձեռքը իմ սեղմեցիր հաճախ,
Ինչո՞ւ ես իզուր թույլ տվեցի քեզ, ո՜վ դու զազրագործ,—
Ծնկներս դրկել, աղերսն աչքիդ մեջ, բայց սիրտդ խարդախ։

Սակայն ուզում եմ ես քեզ հետ խոսել այժմ իբրև ընկեր,
Իբրև բարեկամ,—թեպետ լավ բանի հույս չունեմ քեզնից։
Մեկ է ինձ համար.—մինչ իմ հարցմունքովն այժմ, ահավասիկ,
Պարզ կը մերկանա վիճակը քո ժանտ անամոթության։
Ո՞ւր գնամ ես այժմ։ Դեպի հա՞յրն իմ ծնող, թե՞ դեպի մեր տուն,
Որոնց ես, ավա՞ղ, հայրենիքիս հետ,—դավաճանեցի։
Կամ գուցե գնալ դեպի Պելիասի դստրե՞րն ապաբախտ.
— Անշուշտ, նրանք ինձ շատ լավ կընդունեն իրենց հարկի տակ,
Որտեղ իմ ձեռքով սպանվեց հայրը նրանց դժընդակ։
Ճիշտ չէ՞ միթե սա, հարազատներից զրկվեցի առմիշտ,
Եվ արդ այն մարդկանց թշնամի դարձա,—որոնց իսկապես
Պետք չէր բնավին չարիք պատճառել։ Սակայն ամենն այդ
Ես կատարեցի հանուն քո սիրույն։ Եվ դրա համար
Ինձ հելլադական բոլոր կանանց մեջ
Դո՛ւ վեր հանեցիր, ինձ դո՛ւ, միայն դու,
Պերճ երջանկության և երանավետ կյանք պարգևեցիր.
— Ի՞նչպես կարող եմ ես այդ ուրանալ, քանզի ես՝ դժբա՞խտս,
Լոկ քո մեջ գտա, քո դաժան սրտում, քո էության մեջ—
Սրբության սրբոց, ինձ հավատարիմ և սուրբ ամուսին,—
Եվ դրան ահա մի անժխտելի և պարզ ապացույց,
Ա՛յն է, որ ես այժմ, դառն հալածանքի, զրկանքների մեջ
Արդ՝ անբարեկամ, մենակ, անընկեր և միշտ տարագիր
Աքսոր եմ գնում որբ, անօգնական զավակներիս հետ։
Կեցցե՞ս ամուսին, կեցցե՛ քեզ նման արժանավոր քաջն.
— Արժանի ես դու վսեմ փառքերի, երկնային պատվի.
Քեզ արդարագոռ մեծարանքն է պետք այս դառն օրերին,
Երբ աքսորվում է յուր խեղճ որդոց հետ քեզ փրկող քո կինն,
Երբ արտաքսվում է նա իբրև վերջին հեք թափառական։
Ավա՞ղ, աստվածներ, ո՜հ, Զևս երկնավոր, ինչո՞ւ դու մարդկանց
Նշան տվեցիր հեշտիվ տարբերել կեղծիքից ոսկին,
— Մինչ չունեն բնավ մարդկանց մարմիններն որևէ նշան,
Որով ճանաչել կարելի լիներ նողկ սրիկային։

ԵՐԳԱԽՈՒՄԲ

Ջարհուրելի է և անբուժելի այն թշնամանքը,
Որ բռնկվում է ժանտ գժտությունից սիրելի մարդկանց։

Կարծեմ պետք է ես լինեմ մեծարվեստ, փայլուն ճարտասան,
Կամ իրրև նավի հմուտ նավապետ մրրիկների դեմ,—
— Պետք է լայնալիր մեկնեմ, բաց անեմ առագաստը իմ,
Որ դեթ ազատվեմ, ա՜յ կին, կծվակիծ քո անզուսպ լեզվից։
Թեպետ չափազանց բարձր ես դու դասում օգնությունը քո,
Բայց ես կարծում եմ, որ ինձ ծովերի ճանապարհն հաջող
Պարգևեց միայն ինքն Ափրոդիտն և ուրիշ ոչ ոք—
Մարդկային ցեղից և աստվածների հույլից երկնագո։
Իմաստուն ես դու և շատ նրբամիտ,—ուստի լավ գիտես,—
— Թեպետ ձանձրացնել քեզ չեմ ցանկանա,—որ միայն էրոսն,—
Սիրո դիցուհին անխուսափելի սլաքներով յուր
Քեզ ուժգին դրդեց, իրոք ստիպեց ազատել իմ կյանքն։
Ես չեմ ցանկանում չափազանց ուշիմ և մանրակրկիտ
Այդ գործը քննել,—լավ թե վատ, սակայն օգնե՛լ ես դու ինձ։
Բայց դու,—ինչպես ես այդ կապացուցեմ, ստացել ես արդեն,—
— Մի բան էլ ավել,— ինձ ազատելու գործի փոխարեն։
Նախ՝ դու ապրում ես Հելլադում և ոչ բարբարոս երկրում,
— Ըմբռնել ես դու այստեղ իրավունքն արդարապատում։
Բացի այդ, իրոք, հույները բոլոր ճանաչում են քեզ
Եվ փառաբանում իբրև իմաստուն, խելացի կնոջ,
Մինչդեռ եթե դու ապրեիր հեռու ծայրումն աշխարհի,
Ոչ ոք քո մասին, քո փառքի մասնի չէր խոսի երբեք։
— Թեկուզ օրինակ իմ մասին անձամբ։ Ջե՛մ ցանկանա ես
Իմ տանն ունենալ ոսկեղեն և դանձ, դոհար ու զարդեր,
Կամ երգեր հնչել ավելի շքեղ, քան ինքն Օրփեոս,—
— Եթե, հիրավի, իմ վաստակներին փառք չի վիճակված։
Իմ կատարածի արդյունքի մասին լավ է և այսքանն,
Որքան ասացի, ստիպված եղա այդ մասին խոսել,
Քանզի, Մեդեա, այս վեճի առիթն ստեղծեցիր դո՛ւ։
Վերջապես դառնամ իմ ամուսնության իսկական խնդրին,
Որի առիթով կշտամբում ես ինձ այդքան չարաչար։
Ես կապացուցեմ, որ ես վարվել եմ նախ իմաստնաբար,
Ետքը և ուշիմ, երկրորդ՝ ազնվագույն նպատակներով,

Եվ երրորդ՝ իբրև սրտատեղ ընկեր քեզ, ով Մեդեա,
— Իմ ընտանիքի և զավակների բարիքն հոգալով։

(Այդ խոսքերը լսելով՝ Մեդեան վրդովմունքից
ցնցվում է)։

Ջուր մի՛ վրդովվիր և լսիր հանդիստ,—ինչ եմ ասում քեզ.
— Երբ զարհուրելի ժանտ աղետներով հալածված, թշվառ—
Իոլկոս քաղաքից ես այստեղ ելա իբր աքսորական,—
Ի՞նչ կարող էի ընտրել ինձ համար, իբրև նորագյուտ—
Երջանիկ վիճակ, իբր անակընկալ բախտ երանավետ,
— Եթե ոչ միայն ամուսնությունը կայսեր դստեր հետ։
Զանձրալի չէ ինձ կյանքն իրավ. քեզ հետ, և չեմ ատում ես
Բնավ քո մահիճն.—ինչպես կարծում ես դու խանդից դրդված։
Հափշտակված չեմ ես նաև կրքով նոր հարսնացուի։
Ջե՞մ մրցում նաև բազմաթիվ սերունդ ունենալու մեջ,
— Շա՜տ զավակ ունեմ, և դժգոհելու բնավ հիմք չկա։
Մինչդեռ մեծագույն նպատակն էր իմ ապրել ապահով,
Առանց կարիքի և միշտ վայելուչ։ Գիտեի ես լավ,—
Որ աղքատներից խորշում են մարդիկ, նույնիսկ ընկերներն։
Հափշտակում էր ինձ այն փափագը, որ կարողանամ
Տալ զավակներիս արժանավայել վսեմ կրթություն.—
Իսկ եթե ծնվեն երկրորդ կնոջից ինձ նոր զավակներ,—
Եվ նրանց դարձնեմ քո որդոց սիրող, սրտալի եղբայր,—
Հավասարաբար մեկ ընտանիքում աճած ու սնված,
Երբ կա բաղձանքն այս,—էլ ի՞նչ կանես դու ուրիշ նոր զավակ։
Մինչդեռ ինձ որդիք երկրորդ կնոջից պետք են, հիրավի,
Որ նեցուկ դառնան նաև անդրանիկ մյուս զավակներիս։
Ի՞նչ կարծիք ունես,—մի՞թե բաղձանքն իմ լավ չի մտածված։
Հարկավ եթե իմ նոր ամուսնության խանդը չլիներ,
Համոզված եմ ես,—ճշմարտությունը չէիր բացասի։
Այդպես եք, կանայք, ձեզ համարում եք դուք դերերջանիկ
Եվ ամենատեր, երբ ամուսինն է հավատարիմ ձեզ։
Իսկ եթե հանկարծ ձեր ամուսնական գոռ իրավունքին
Ու ձեր մահիճին սպառնում է չնչին հեռավոր կասկած,
— Պատրաստ եք իսկույն դուք ամենալավ, վսեմ գործն անգամ
Դարձնել առարկա ձեր դաժանագույն չար թշնամանքին։

Ավաղ, երանի կարողանային մարդիկ դեթ այլ կերպ
Զավակներ ծնել,—իսկ կանայք բնավ դեթ չլինեին,
Եվ չէր իմանալ մարդկությունն այնժամ տանջանքն ու աղետ։

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Յազոն, դիտես դու զարդարել ճառերը քո փարթամաճոխ,
Բայց կարծում եմ,—թեպետ իրավ իմ կարծիքն է քեզ հակառակ,
Որ քո կնոջ դավաճանած, գործ ես արել դու անազնիվ։

ՄԵԴԵԱ

Բազմաբազում ես մարդկանցից կարծիքովն իմ տարբեր եմ միշտ.
Հպմոզված եմ, ահավասիկ, որ ոճրագործը ամբարիշտ,—
— Որքան էլ նա կարողանա լինել փարթամ ճարտասան,—
Արժանի է դատապարտիչ ամենաժանտ պատիժներին.
Լոկ զորությամբ լեզվի՞, խոսքի կարող է նա
Սուտն ու կեղծիքը զարդարել պչրանքի ճոխ հագուստի մեջ
Եվ վիսաբար գործել անվերջ նողկ ոճիրներ և չարություն,
Սակայն երբե՞ք նա այդպիսով լինելու չէ իմաստուն։
Նույնպես նաև վարվում ես դու։ Ուստի հիմա իմ առջև
Թող այդ փարթամ խոսքերը քո,—ճառերն ունայն, գեղեցկաձև։
— Հարկավոր է ինձ լոկ մի խոսք, և կործանված ես դո՛ւ, ստոր.—
Եթե իրավ չէիր ուզում ինձ պատճառել դու չարիք,
Անհրաժեշտ էր որ իմ կամքը հարցնեիր դու արդարապես,—
Նախքան նորից ամուսնանալն։—Մինչ դու, դաժա՞ն զաղրագործ,
Այդ ձեռնարկը կատարել ես գաղտագողի և թաքուն։

ՅԱԶՈՆ

(Հեգնաճոխ)

Ո՜հ, ո՞րպիսի հարմարագույն և գեղեցիկ օգնական
Պիտ գտնեի հանձինս քո,—եթե իրոք նախապես
Քեզ հարցնեի ամուսնության գործիս մասին,—
Մինչդեռ և այժմ չես կարող դու զսպել սրտիդ վայրագ զայրույթն։

ՄԵԴԵԱ.

Այդ չէր բնավ քեզ խանդարող խոչընդոտն.—
Չէիր ուզում կապված լինել մինչ ծերության ալևույթն
Օտարազգի մի կնոջ հետ,— որը սակայն չէր կարող
Քեզ խոստանալ փառք ու պատիվ, շահ ու օգուտ։

ՅԱՍՈՆ

Ո՜հ, չես ուզում դու հասկանալ,—ո՛չ թե իրոք կնոջ սիրույն
Ամուսնանալ ես կամեցա արքայական դստրիկի հետ,
— Այլ միմիայն ցանկանալով,—այդ է խոսքըս,—քեզ բարիք,
Միայն հանուն ընտանիքիս բարեկեցիկ կացության,
Որպեսզի իմ և քո որդոց տամ պինդ նեցուկ—
Զավակներովն, որ պիտ ծնվեն արքայական արյունից։

ՄԵԴԵԱ.

Պետք չէ, պետք չէ ինձ բնավ
Քո խոստացած կյանքը հարուստ, բայց տխո՜ւր,
— Կյանքն երջանի՜կ,—որն իմ սիրտը միշտ կը կրծի դառնավեր։

ՅԱՍՈՆ

Լա՜վ մտածիր, խոհեմ եղիր և ուշիմաց,—
— Հայացքներըդ դեռ կը փոխվեն, կը հասկանաս։
Վսեմագույնն, ավա՜ղ, դու վատ մի համարիր,
Բախտն երջանիկ բնավ, երբեք դժբախտություն չը հաշվես։

ՄԵԴԵԱ.

Ի՞նչ կա, իրավ, կարող ես դու հեգնել, ծաղրել վիսաբար,
Քանզի ունես կորովալիր և՛ օգնական, և՛ ապավեն,—
Իսկ ես, դժբախտ, աքսոր ընկնեմ անտուն, անտեր և տարագիր։

ՅԱՍՈՆ

Դո՛ւ ես միայն այդ բանի մեջ մեղավոր,
— Ուրիշներին զուր մեղապարտ մի՛ ճանաչիր։

ՄԵԴԵԱ.

Ի՞նչ եմ արել ես, Հիրավի, դավաճանե՞լ եմ քեզ արդյոք,
Քեզ պես դուցե կին եմ առել ես կրկին։

ՅԱՍՈՆ

Արքաներին անիծել ես դու չարաչար, ամբարիշտ։

ՄԵԴԵԱ.

Ես պիտ դառնամ մի ժա՞նտ անեծք և՛ քեզ, և՛ քո ընտանիքին։

ՅԱՍՈՆ

Ես չեմ ուզում քեզ հետ անվերջ դատել, դատվել վեճի մեջ.
Թե ուզում ես վերցնել ինձնից քեզ, քո որդոց փող ու նպաստ—
— Իրր օգնություն սև օրերին քո աքսորի,—ասա, և ես
Այս իմ ձեռքով առատ տալու այժմ հոժար եմ ու պատրաստ։
Կը տամ նաև ես նամակներ հանձնարարիչ—
Իմ բարեկամ ծանոթներին, որ հյուրընկալ ընդունեն քեզ։
Տես դու, ա՛յ կին, եթե մնաժես, վատ կը վարվես և անիմաստ.
Մինչ՝ զսպելով զայրույթը քո, լավագույն շահ կունենաս։

ՄԵԴԵԱ.

Ոչ, ես բնավ կարիք չունեմ քո բարեկամ ծանոթների,—
Քեզնից ոչի՛նչ չեմ ընդունի,—այդ առաջարկն է իզուր,
Քանզի պարգևն ատոր մարդու, զազրագործի—
Անօգուտ է,—բախտ չի բերի մեզ երբեք։

ՅԱՍՈՆ

Կանչում եմ ձեզ, ո՛վ աստվածներ, եղեք վկա,—
Արդ՝ կարեկից այժմ կամեցա ես օգնել քեզ ու քո որդոց.
Բայց ինքնապարծ դու ժխտեցիր իմ բարության վսեմ գործն,
Եվ վիսաբար վանում ես քո հավատարիմ, սիրող մարդկանց—
— Այդպես միայն կավելացնես դու քո տանջանքն և կը ղջաս։

(Հեռանում է)

ՄԵԴԵԱ.

(Յազոնի եւևից)

Վազի՛ր շուտով, մի դանդաղիր.
Քանզի չէ՞ որ տխրում ես դու այստեղ՝ առանց նորահարսիդ.
Շա՜տ ժամանակ անց է արդեն, երբ դու անից դուրս եկար։
Այժմ կատարիր քո մեղրամիսն։—Թող լսեն ինձ աստվածներն,—
Մի արդար օր դու կը զղջաս և անիծվա՜ծ կանվանես
Քո նորադյուտ ամուսնությունն։

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Ստրոֆ.

Ո՜հ, երբ սիրո խոր հուզմունքն է չափազանց,
Կիրքն է նաև՝ սիրո առթիվ անչափավոր,
— Նա չի բերում երբեք մարդկանց
Ոչ բարի փառք և ոչ պատիվ։
Սակայն եթե Կիպրուհին
Չափավոր է ոգեշնչում մեր հոդին,
— Չի՛ք ավելի չքնաղ աստված,
Քան ինքն է նա մեծասքանչ։
Ո՜հ, դու երբե՛ք, աստվածուհիդ իշխանազոր,
Քո աղեղովն ոսկեզրվագ
Գեթ մի ձգիր դեպի մեզ
Քո անխուսափ և թունավոր սուր սլաքն։

Անտիստրոֆ.

Թո՛ղ մեծարենք կյանքն անարատ համեստության՝
Վսեմագույն պարգևն անմահ աստվածների,—
Թող որ ահեղ աստվածուհի Կիպրուհին
Մեր սրտերում երբեք, երբեք չը վառի
Կիրքն ու սերը դեպ ուրիշի ամուսինն.
— Թո՜ղ չը ձգի մեզ նա անվերջ և անհաղ
Թշնամանքի, վիճմունքի մեջ դրժընդակ.
Թող հարդարի անբիծ կանանց ամուսնությունն
Հաշտ, ողջախոհ, իբրև սիրո սրբություն։

Ստրոֆ.

Ո՜հ, հայրենիք, հայրենի տուն.
— Գնե՛ք մենք երբեք աքսորական չդառնանք—
Եվ չը տեսնենք աքսորի մեջ
Կարեկցության միշտ արժանի, թշվառագույն,
Անօգնական, վշտակիր կյանք։
Միայն մահով, միայն մահով ժանտալից
Թող այն օրը խավարի,
Երբ պիտ հասնենք մենք դառնացավ աքսորի։
Ավա՜ղ, չկա ավելի դառն մի վիճակ,
Քան զուրկ լինել սիրակարոտ հայրենիքից։

Անտիստրոֆ.

Տեսանք, տեսա՜նք դառնությունը քո վիճակի.
Եվ կարող ենք խոստովանել մենք ինքնակի,—
— Այո՛, անձամբ, և ոչ այլոց խոսքով միայն.—
Ոչ մի քաղաք և ոչ մի մարդ,—ոչ ոք անգամ
Մերձ մարդկանցից բարեկամ—
Քեզ չը խղճա՜ց, ձեռք չմեկնեց կարեկցության—
Այն ժամանակ, երբ ահավոր վշտի մեջ
Տառապում ես դու չարաչար և անվերջ։
— Թող կործանվի և չքանա ապերախտն,
Բարեկամին չմեծարո՜ղ դաժան մարդն,—
— Ա՜յն սիրատենչ բարեկամին, որը նրան
Հանձնեց մաքուր և սուրբ սրտի բանալին։
Ո՜հ, նա երբե՜ք մեզ բարեկամ չի լինի։

ԴՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԶՈՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

(Մեդեան և երգչախումբը։ Հանկարծ հանդես է գալիս ոտոռդի հագուստի մեջ արևնական թագավոր էգևոսը)։

ԷԳԵՎՈՍ

Ողջո՜ւյն, ողջույն, ով Մեդեա,—
Բարեկամիս համար ճիշտ—
Ես չը գիտեմ ավելի պերճ նախաբան։

ՄԵԴԵԱ.

Ողջո՞ւյն և քեզ, ո՞վ Էգևոս,—ո՞հ, դու զավակ
Իմաստալից Պանդիոնի,
Ո՞րտեղից ես դու գալիս։

ԷԳԵՎՈՍ

Ցոյքոսի հին վաղընջական
Գուշակավոր սրբավայրից։

ՄԵԴԵԱ.

Ինչո՞ւ էիր դու գնացել դեպ աշխարհի կորընթարդն—
— Գուշակական այդ սրբավայրն։

ԷԳԵՎՈՍ

Ուզում էի ես իմանալ,
Ինչպե՞ս արդյոք զավակների լինեմ հայր։

ՄԵԴԵԱ.

Ո՞հ, աստվածներ,—և մի՞թե դու մինչև հիմա
Քաշքշում ես կյանքիդ օրերն անզավա՞կ։

ԷԳԵՎՈՍ

Այո՛, կամքովն աստվածների
— Անզավակ եմ տակավին։

ՄԵԴԵԱ.

Ունե՞ս արդյոք կին—կողակից,
Թե՞ ապրում ես դու միայնակ, ամուրի։

ԷԳԵՎՈՍ

Վաղուց է, որ իսկապես
Ամուսնական լուծն է դրած իմ վզին։

ՄԵԴԵԱ.

Եվ ի՞նչ ասաց Ֆոյբոսը քեզ—
Ձավակների մասին արդյոք։

ԷԳԵՎՈՍ

Մարդու խելքին անմատչելի—և անիմաց
Մի պատասխան ավեց նա։

ՄԵԴԵԱ.

Չի՞ կարելի, որ նաև ես իմանամ
Այդ գուշակումն աստծու։

ԷԳԵՎՈՍ

Ո՜հ, ինչո՞ւ չէ, քանզի իրավ սրա համար
Հարկավոր են իմաստալից խելք և միտք։

ՄԵԴԵԱ.

Ի՞նչ գուշակեց։ Եթե միայն կարելի է,
Ասա, որ ես նույնպես լսեմ և իմանամ։

ԷԳԵՎՈՍ

Ասաց, որ ես տիկ-տիկճորի բերանը
Չը հանդգնեմ բաց անել։

ՄԵԴԵԱ.

Եվ մինչև ե՞րբ.—մինչև որ դու ի՞նչ բան չանես,—
Կամ ո՞ր երկիրն մինչև չըգա՛ս։

ԷԳԵՎՈՍ

Մինչև որ ես եա չը դառնամ
Կրկին իմ տունն հայրենական։

ՄԵԴԵԱ.

Ինչո՞ւ ապա դու կամեցար
Ճանապարհին, նավըդ ուղղել դեպ այս երկիրն։

ԷԳԵՎՈՍ

Կա իմաստուն մի թագավոր՝
— Պիթևսը Տիրեզենի։

ՄԵԴԵԱ.

Այո, գիտեմ, ասում են դա
Պելեպոսի սուրբ զավակն է բարեպա՞շտ։

ԷԳԵՎՈՍ

Ցանկանում եմ հայտնել նրան դուշակումը անմահության։

ՄԵԴԵԱ.

Այո, իրոք իմաստալից մարդ է նա,—
— Բազմահմուտ այդ օրինակ գործերի մեջ։

ԷԳԵՎՈՍ

Եվ բացի այդ իմ զինակից ընկերներից
— Ամենամերձ իմ բարեկամն։

ՄԵԴԵԱ.

(Խրաձայն)

Ուրեմն այդպե՞ս.—ցանկանում եմ հաջողություն,
Եվ քեզ բարի ճանապարհ։

ԷԳԵՎՈՍ

Սակայն ինչո՞ւ գունատ ես դու,
— Դեմքըդ մոայլ է, Մեդեա.

Իսկ հայացքդ անչափ աղոտ.
Ի՞նչ է արդյոք պատահել քեզ։

ՄԵԴԵԱ.

Ո՜հ, էգևոս, մահկանացու մարդկանց մեջ
— Իմ ամուսինն ամենագարշ մարդն է իրոք։

ԷԳԵՎՈՍ

Ի՞նչ ես ասում.—քո վիշտը ժանտ—
Պարզաբանիր ինձ բացահայտ։

ՄԵԴԵԱ.

Վիրավորեց Յազոնն ինձ զուր,
Նույնիսկ առանց պատճառի։

ԷԳԵՎՈՍ

Ի՞նչ արեց նա։ Պատմիր ստույգ և մանրամասն։

ՄԵԴԵԱ.

Ուզում է նա նոր կին բերել
Եվ այս տան մեջ դարձնել նրան տիրուհի։

ԷԳԵՎՈՍ

Եվ մի՞թե նա հանդգնում է այդ անամոթ
Ու խայտառակ գործն անել։

ՄԵԴԵԱ.

Այո.—նույնիսկ արհամարհում,
— Ատո՜ւմ է ինձ և սերը իմ։

ԷԳԵՎՈՍ

Արդյոք սիրում է ա՞յլ կնոջ,
Թե՞ քո մահիճն է ատելի նրա համար։

ՄԵԴԵԱ.

Ո՜հ, մեծապես սիրահարված լինելով,
— Յուր ընտանիքն և սերը իմ
Արհամարհեց երդըմնազանց։

ԷԳԵՎՈՍ

Եթե իրոք զազրագործ է, ինչպես ասացիր,
Դու թող նրան և մոռացիր։

ՄԵԴԵԱ.

Իղձն է նրա և բաղձանքը սրտալի՝
— Արքաների ազգակցությունն հայթայթել։

ԷԳԵՎՈՍ

Խոսքըդ սակայն կարճ կտրիր,—
Ո՞վ է նրան աղջիկ տալիս,—
Ո՞վ է նրա հարսնացուն։

ՄԵԴԵԱ.

Կրեոնտը,—իշխող տերը և թագավորն
Կորնթական այս երկրի։

ԷԳԵՎՈՍ

Այժմ հասկացա։ Դժբա՜խտ դու կին,
Շա՜տ չան ունես տխրելու։

ՄԵԴԵԱ.

Կորած եմ ես, և բացի այդ—
Ահա շուտով աքսորում են ինձ այս՝ երկրից։

ԷԳԵՎՈՍ

Ո՞վ, կամ ինչո՞ւ։ Այլ նորանոր աղետներ,
Որոնց մասին ցանկանում ես դու դեռ պատմել։

ՄԵԴԵԱ.

Կրեոնտն է Կորնթոսից աքսորում ինձ։

ՏԳԵՎՈՍ

Իսկ Յազոնը.—միջամտել չի՞ ուզում նա։

ՄԵԴԵԱ.

Խոսքով դեմ է, բայց յուր սրտում կողմնակիից է այդ բանին։

(Ջոհում է էգևոսի առաջ)

Աղաչում եմ ես հանուն քո ծերության,
— Արքայական քո ծնկների, որոնց առջև
Ջոքած եմ ես, աղերսա՞նքը շրթունքիս,
Խղճա՞ դու ինձ և կարեկցիր իմ ահռելի դժբախտությանն.
Մի թող, որ ես աքսոր գնամ անապատատան, տարագիր.
Բա՛ց դռները քո օջախի, ինձ ընդունիր քո երկրի մեջ.
Թող փոխարենն աստվածները,—ինչպես դու ես փափագում այդ,—
Շուտ պարգևեն քեզ զավակներ ու երջանիկ կյանքի վախճան։
Դու չը գիտես, ի՞նչ ես գտել հանձինս իմ և իմ մեջ—
— Ո՞րպիսի գյուտ հրաշագործ, ի՞նչ գաղտնիքներ մեծ արվեստի։
Կը վերացնեմ ես անզավակ վիճակը քո,
Եվ անպտուղ կյանքդդ իրոք դառնալու է բեղմնավոր.
Սերմեր կը տամ զավակների և անընդհատ սերընդի,—
— Քանդի ունեմ շա՛տ միջոցներ,—ամե՛ն տեսակ դեղորայք։

ՏԳԵՎՈՍ

Պատրաստ եմ ես, ա՛յ կին, օգնել քեզ կարեկից.
— Կը կատարեմ քո աղերսանքն ես մի քանի դրդումներից.—
Նախ և առաջ հանուն անմահ աստվածների,
Հետո.—դու ինձ խոստացար տալ սերունդ, զավակ,—մի բան, որից,
Ո՛հ, զուրկ եմ ես,—որն իմ սրտի ջերմ փափագն է ըղձալիր։

Այսպես կանեմ.—եթե անձամբ դու ինքըդ գաս իմ երկիրն,
Ես կաշխատեմ քեզ ընդունել արդարապես և հյուրընկալ,—
—Քանզի ոչ ոք վարմունքը այդ ի՛նձ արգելել չի կարող։
Սակայն մի բան,—ես քեզ, ա՛յ կին, կզգուշացնեմ նախապես.
Ինքըս անձամբ չեմ ցանկանա քեզ դուրս բերել այս երկրից.
Այլ եթե դու, իբր աքսորված, հոժարակամ տունս գաս,
Քեզ կընդունեմ.—իմ հարկի տակ դու անվտանգ կը մնաս,—
—Չեմ հանձնի քեզ։ Իսկ այս երկրից ինքըդ անձամբ հեռացիր,
—Քանզի կուզեմ լինել անմեղ և բոլորին բարեկամ։

ՄԵԴԵԱ.

Շա՜տ լավ, այո՛, բարվոք է այդ—
Եվ այդպես էլ թող լինի.
—Բայց դու երդվիր ուխտադիր,
Որպեսզի ես վստահավատ և համոզված՝
Հույսով լինեմ, որ փափագն իմ կատարես լիովին։

ԷԳԵՎՈՍ

Մի՞թե դու ինձ չես հավատում
Կամ ինչպես ես ահաբեկված դու հիրավի։

ՄԵԴԵԱ.

Հավատում եմ, բայց հզոր են իմ ոխերիմ թշնամիներն—
—Կրեոնտը իշխանազոր և Պելիասի ընտանիքն.
Եվ արդ՝ եթե կապված լինես սուրբ երդումով, ուխտաբար,
Թույլ չես տա դու, որ քո երկրից դուրս հանեն ինձ։
Մինչդեռ եթե խոսք տաս միայն,—բայց երդումովն աստվածային
Պարտավորված դու չլինես,—հեշտ կարող ես նրանց հետ,
Բանակցության մեջ մտնելով, իբր հարգելի բարեկամ,—
Համաձայնվել և ինձ հանձնել նրանց խստիվ պահանջին.—
Քանզի չէ՞ որ դժբախտ եմ ես, իրոք անզոր և անպաշտպան,
Սակայն նրանք արքաներ են ազդու, հարուստ և հզոր։

ԷԳԵՎՈՍ

Ճիշտ որ,— ա՛յ կին, հեռատես ես և իմաստուն.
Եթե իրոք ցանկանում ես, կը կատարեմ, չե՛մ մերժի քեզ.

Քանզի նաև իմ դիրքն այդպես հաստատագույն կը լինի.
Ես կարող եմ քո Թշնամի մարդկանց ցույց տալ այդ
փաստարկված
— Արդարացումն.— և կը լինես այդպես իրավ դու անվտանգ:
Ուստի՝ հայտնի՛ր,— աստվածներից ո՞ւմ անունով երդվեմ ես:

ՄԵԴԵԱ.

Անմա՞հ երկրի, իմ նախահայր արևի՞,
Նաև բոլոր օլիմպական աստվածների:

ԷԳԵՎՈՍ

Երդվե՞մ այդպես, որ ի՞նչ անեմ,
Կամ ի՞նչ պետք է չը կատարեմ.—
— Յո՛ւյց տուր, ասա:

ՄԵԴԵԱ.

Որ բնավին ինձ քո երկրից չես վտարի դու անձամբ,
Եվ որ իրոք իմ Թշնամի նաև մարդկանց,—
Եթե նրանք ցանկանան ինձ քո օջախից բռնի տանել,—
— Դու թույլ չես տա հոժարակամ,—
Մինչև կյանքիդ վախճանն իսկ:

ԷԳԵՎՈՍ

Երդվում եմ արդ՝ երկրովն անմահ,
Պայծառ լույսով փայլենազարդ արևի,—
Եվ ողորմությամբն Հավերժ—բոլոր աստվածների,—
— Որ սրբությամբ կը կատարեմ այն, որ քեզնից լսեցի:

ՄԵԴԵԱ.

Բավ է այդքանն: Սակայն եթե քո երդումին
Հավատարիմ դու չըմնաս,—ի՞նչ կը լինի:

ԷԳԵՎՈՍ

Կարժանանամ ես ահռելի այն պատժին,
Որին Հավերժ արժանի են երդըմնազանց միայն մարդիկ:

ՄԵԴԵԱ.

Գնա՜ս բարի։ Գործը արդեն գլուխ եկավ դերազանց։
Երբ ամեն բան ես կատարեմ,—իրագործեմ իմ փափագն,
Կաճապարեմ ես շուտափույթ
Գալ դեպի քեզ և քո քաղաքն։

(Էգևոսը հեռանում է)

ԵՐԳԱԽՈՒՄԲ

(Էգևոսի հետից)

Թող Մայաստի զավակն արքա,
— Ուղղորդների հովանավորը դերակա,—
Քեզ ուղեկից դառնա բարի
Եվ հաջողակ դեպի տունը քեզ բերի։
Ո՜հ, շուտափույթ թող կատարվեն
Քո փափագներն ըղձալիր.
— Քանզի գիտենք մենք հաստատ,
Որ դու աղնի՜վ ես Էգևոս,
Եվ բարեսի՜րտ, իբրև մարդ։

ՄԵԴԵԱ.

Ձևո՜ւս երկնատեր, և դո՜ւ, և դո՜ւ, Ձևսի դատիկ արդարություն,
Ո՜հ, փայլակիր արեգակի պայծառ լո՜ւյս,—
Արդեն ահա գտել եմ ես ամենաճիշտ ճանապարհն,—
Եվ կը տանեմ, բարեկամներ, ես հաղթանակն իմ վսեմ.
Իմ ատելի և թշնամի մարդկանց ընդդեմ։
Թշնամության կը վճարեմ ես վրեժով չարաչար.
Կանդնի՛ր, կանդնի՛ր իմ սրտի մեջ քո մեծ դահը, ո՜վ մեծ հույս.
Ինչպե՜ս գտա ես այդ մարդուն դժվար ժամին իմ դյուրության,
Եվ նա դարձավ իմ տանջալից փափագներին նավակայան.—
Ա՛րդ փառավոր ես կը ձգեմ մեծ խարիսխը իմ նավի,
Երբ ժամանեմ, մտնեմ քաղաքը Պալլասի ամրապինդ։
— Լսե՜ք, պատմեմ և բաց անեմ ձեզ իմ բոլոր խորհուրդներն.
Թևպետ գիտեմ,—պատմվածքն ահեղ ձեզ չի կարող տալ հաճույք։

Ես կուղարկեմ սարկուհի ծառաներից մեկին ու մեկին
Եվ կը խնդրեմ, որ Յազոնը շուտ դա ինձ մոտ։
Իսկ երբ նա գա, ես նենգաբար ու շողոքորթ,
Մեղմ ու զիջող կը ձևանամ,—խոսքեր կասեմ հաճելի,
Կը համոզեմ, որ մեր միջևն, իմ կարծիքով այսուհետ
Չըկան բնավ ոչ գժտություն, ոչ այլ կարծիք տարաձայն,—
Որ, հիրավի, ամուսնությունն արքայական դստրիկի հետ,
—Հանուն որի նա ինձ թողեց,—հորդորիչ է և բանական,—
Ընտանիքին մեր օգտավետ,—ուշիմ ու լավ մտածված։
Ապա նրան ես կը խնդրեմ, որ իմ որդոց թողնեն այստեղ։
Բայց դրանով չեմ ուզում ես զավակներիս, հիրավի,—
Թողնել երկրում թշնամական, ուր թշնամիքն իմ ոխերիմ
Պիտ վիսացած արհամարհեն և դառնապես ծաղրեն նրանց,—
—Այլ միտք ունեմ նրանց ձեռքով ես նենգորեն ու չարաղետ
Ոչնչացնել ու կործանել թագավորի դստրիկին։
Նրանց ձեռքով հարմնացուին ես կուղարկեմ ընծաներ,—
—Մի ոսկեկուռ շքեղ պսակ և ձեռագործ մի նուրբ զգեստ։
Իսկ մանուկներն, ընծաները որ հանձնելիս, կաղերսեն,—
Որ գեթ իրենք ազատ մնան աքսորանքից։
Երբ զարդարանքն ու հագուստը կույսը վերցնի ու հագնի,—
Կը կործանվի նա տանջալից և ամեն ոք, ով կպչի,
Քանզի ծծված են նվերներն թույնով ահեղ ու մահացու։
Այստեղ, ավա՜ղ, կարող էի ես դադար տալ իմ պատմվածքին,
—Սարսափում եմ ես այն գործից, որ տակավին
Վիճակված է ինձ կատարել.—պիտ սպանեմ ես իմ որդոց,
Եվ չի փրկի նրանց մահից ոչ մի ուժ։
Երբ լիովին ոչնչացնեմ սերունդն ամբողջ Յազոնի,
Կը հեռանամ ես այս երկրից,—որտեղ, ավա՜ղ, դաժանաբար
Ես իմ ձեռքով կոտորեցի զավակներին իմ սիրատենչ.
Ուր գործեցի ամենանողկ և ամբարիշտ այս ոճիրն,
—Մի զազրելի եղեռնություն, որին չըկա նույնիսկ անուն։
Քանզի բնավ, սիրելիներ, չի կարելի հանդուրժել,
Որ վիսաբար ծաղրանք նետի մեզ մեր դաժան թշնամին։
Թող կատարվի։ Ինձ ի՞նչ օգուտ դառն իմ կյանքից, պետք չէ՛
նա ինձ,
Երբ ես չունեմ՝ ո՛չ հայրենիք, ո՛չ սփոփանք իմ վշտերին,

Ո՛չ բարեկամ, ո՛չ ապաստան, ո՛չ տուն ու տեղ,
Երբ ապրում եմ թշվառի պես սրտակոտոր և անհույս։
Սխալվեցի, երբ հեռացա ես մեր տնից հայրական,
Համատալով երդումներին նենգապատիր, ստոր հույնի,
Բայց ես նրան, կամքովն անմահ աստվածների,
Կը վճարեմ չար վրեժով,—կը կործանեմ նրա սերունդն.
— Զավակներին, ինձնից ծնված, նա կենդանի չի տեսնի.
Եվ չի ծնի նրան զավակ նորապսակ նաև կինն,—
Որը,—իբրև ամենանողկ և դավաճան տարփածու,
Կը խորտակվի դաժան մահով՝ թույնիցն իմ ժանտ և անխուսափ։
Թող չը հաշվե՞ն ինձ բարեսիրտ, թույլ կամ անզոր, վեհերոտ—
Եվ հեզ մի կին.—ո՛չ, ո՛չ, երբե՛ք այդպիսին չէ Մեդեան։
Զորհուրելի՜ատում եմ ես իմ ոխերիմ թշնամուն,
Բայց ուժգնակի սիրում եմ միշտ բարեկամին հավատարիմ։
— Միայն այդպես կարող ենք մենք փառքն հայթայթել վեհագույն։

ԵՐԳԱԽՈՒՄԲ

Եվ քանի որ մեզ հայտնեցիր քո մտածած ծրագիրն.—
Հանուն բարձր, վսեմագույն օրենքների մարդկային,
Հանուն նաև քո անձնական բուն բարիքի ու շահերի,—
— Աղաչում ենք,—հորդորում ենք. մի կատարիր այդ բնավ։

ՄԵԴԵԱ.

Ո՛չ, չի կարող այդ չլինել։ Հեշտ է, այո՛, ձեզ համար
Եվ կարելի,—այդպես դատել, մտածել...
Քանզի ինձ պես չեք տառապում դուք չարաչար։

ԵՐԳԱԽՈՒՄԲ

Եվ մի՞թե դու պիտ հանդգնես զավակներիդ հարազատ
Մորթել, ա՜յ կին, քո սեփական դաժան ձեռքով։

ՄԵԴԵԱ.

Այո՛։ Այլ կերպ չեմ կարող ես ավելի խիստ, ավելի ծանր
Խայթել սիրտը ամուսնուս։

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Բայց կը լինես դու այդպիսով
Դժբախտագո՜ւյն, ամենահե՜ք, թշվա՜ռ կինն։

ՄԵԴԵԱ.

Թող որ լինեմ։ Բավական է։ Ավելորդ է արդեն հիմա
Միջնորդության ամեն տեսակ խորհուրդներն։

(Դիմելով դայակին)

Գնա շուտով և Յազոնին կանչի՛ր, թող գա։
Այո՛, դու միշտ եղել ես ինձ հավատարիմ,—
Եթե ադնիվ կին ես իրոք և սիրում ես քո տիրուհուն,
— Լռի՛ր, ոչի՛նչ և ոչ մի խոսք ոչ ոքի
Չասես երբեք իմ մտքերի, գործի մասին։

(Դայակը հեռանում է)։

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Ստրոֆ.

Աթենացի՛ք, սերունդ հավերժ երջանիկ.
Հնադարյան դուք պալակներ
Հավերժակյաց, երանավետ աստվածներին։
Ապրում եք դուք սրբազնասուրբ երկրի մեջ,
Երբե՛ք, երբե՛ք ավերմունքի չը մատնված։
Սնվում եք դուք պտուղներովն ազնվության,—
— Անկրկնելի իմաստությամբ փառապանծ։
Քայլում եք միշտ փայլենազարդ նուրբ օդի մեջ,—
— Անդ, ասում են, Հարմոնիեն քաղցրատենչ,
Խարտիշազեղ,—սրտում սերը ճշմարիտ՝
Ծնեց երբեմն ինը մուսա Պիերիդ։

Անտիստրոֆ.

Եվ կիպրուհին՝ սիրո հավերժ դիցուհին,—
Ասում են, անդ բարեհաճ

Գեղեցկահոս ջինջ հորձանքից կեփիսի
Ջուրը հանած թարմագույն
Նուրբ հողմերի շնչովն արդա՞ր, հոգեզվարճ
Ոգեշնչեց, ցանեց երկրի երեսին։

Գեղգեղափայլ դանգուրները յուր վարսերի
Միշտ զարդարված պերճ պսակով
Անուշաբույր և անթառամ վարդերի,
Նա՝ Կիպրուհին, իմաստության հետ միասին—
Առաքում է սերն անբասիր, իբրև նեցուկ,
— Իբր համախոհ առաքինի գործերին։

Ստրոֆ.

Մի՞թե քաղաքն հավերժակյաց,
Որ կանգնած է սուրբ, հոսանուտ դետերի մոտ,
Մի՞թե երկիրն այժմ հյուրընկալ, սիրակարոտ,
Որ սովոր է միշտ ընդունել սիրող մարդկանց,—
— Կարող են այժմ ընդունել քեզ,
Եղևնադարձ և որդեսպան զազրելի մորն,
Որին նման չը կա պարկեշտ կանանց մեջ։
Մտածե՞լ ես, կամ տեսնո՞ւմ ես դու արդյոք
Արյունն ահե՞ղ որդիական անմեղ վերքի,—
Մտածե՞լ ես, կամ լսում ես դու իրոք
Հառաչանքը ժանտ մահացող զավակի։
Ո՛չ, այդ չանես,—խնայիր.
Մենք բոլորս քո դեմն ահա ծնկաչոք
Աղերսում ենք, աղաչում ենք սրտամորմոք,—
Գթա՛, ո՛վ կին, զավակներիդ մի՛ սպանիր։

Անտիստրոֆ.

Եվ ո՞րտեղից կը գտնես դու
Խիզախությո՞ւնն այդ ահարկու,
Կամ ո՞րտեղից ուժ կը ստանա քո ոգին,
Եվ ո՞վ կը տա ժանտ ուղղություն քո ձեռքին,
Որ բարձրանա նա դժնաբար
Ընդդեմ որդոց անպաշտպան։

Եվ մի՞թե դու պիտ հանդգնես, ո՜վ դաժան,
Իրագործել ցանկությունն այդ բազմաչար։
Մի՞թե արցունքն չի հեղեղի քո աչքերից,
Երբ որ նայես, սպանելիս, քո որդոց.
Իսկ երբ, ավա՜ղ, ծընկներիդ մոտ ընկնեն նրանք աղերսալից,—
Դու չե՛ս կարող,—չես հանդգնի քո ձեռքն անգութ
Անդ ոռոգել նրանց անմեղ արյան մեջ,—
— Թեպետ սիրտն է քո ահռելի—և ժանտաժո՛ւտ։

ՏԵՍԱՐԱՆ ՆՐԿՐՈՐԴ

Յազոնն ու Մեդեան

ՅԱՋՈՆ

Կանչել ես ինձ։ Արդ ես եկա։ Ջայրացած ես թեպետ իմ դեմ,
Բայց սխալ չէ քո համոզմունքն, որ պատրաստ եմ լսելու քեզ։
Ի՞նչ ես ուզում։ Ի՞նչ նոր բան կա,—ա՜յ կին, ասա։

ՄԵԴԵԱ

Ներողամիտ եղիր, Յազոն. ներիր դու իմ զայրույթն ու քենն
Եվ քեզ հասցրած վիրավորանքն։ Արդարացի, կարող ես դու,—
Հանուն սիրույն մեր վաղեմի,—ներող լինել դեպի ինձ։
Ինքըս իմ մեջ ինձ դատելով՝ հաշվի առած իմ վարմունքն,
Կշտամբեցի ես ինձ այսպես.—«Ո՜հ, դու գոռո՜զ և դժբա՜խտ,
Ինչո՞ւ ես զուր դու կատարում և զուր ատում այն մարդկանց,—
Որոնք միայն լավն են ուզում և բարիքը քեզ համար։
Ինչո՞ւ ես դու թշնամացել թագավորին այս երկրի—
Եվ ամուսնուդ,—որն իսկապես վաստակում է քեզ մեծ օգուտ՝
Ամուսնությամբ թագավորի դստրիկի հետ, նա,—բարեգութ,
Ցանկանում է տալ քո որդոց նոր եղբայրներ ազնվագույն։
Լավ չի՞ լինի, որ ազատես ժանտ ցասումից դու սիրտը քո.
Մի՞թե կյանքը լավ չեն հոգում աստվածները երկնագո։
Կամ կարո՞ղ են դժգոհ լինել,—որ զավակներ չունես դու։
Մինչ ա՜յլ երկրից աքսորվածներն,—հասկանո՞ւմ ես դու,
Թե՞ ոչ,—

Առանց այդ էլ շատ քիչ ունեն մերձ բարեկամ և ընկեր»։
Այս ամենը ինքըս իմ մեջ ես քննեցի կշռադատ
Եվ զգացի ես արդարև, որ արարքն է իմ հիմար,
Որ իմ վարմունքն իմաստ չունի,—և զայրույթն է իմ ունայն։
Ուստի հիմա ես հասկացա, որ քայլն է քո ճիշտ և ուշիմ,
Որ հիրավի, քո վարմունքն է լոկ արժանի դովեստի,—
Քանզի միայն հոգացել ես դու իմ շահը, իմ բարիքն։
Մինչ ես, անմիտ, ինքս պետք է ուրախանայի
Մասնակցեի քո սրտաառնչ հարսանեկան խորհուրդներին.
— Ինքըս պետք է հոգեզվարճ աշխատեի հարսանիքիդ գործի
համար։

Այո՛, սրտանց պետք է ինքս աջակցեի հարսնացուին,—
Բարեշնորհ պատրաստվելու ամուսնության պսակի։
Բայց մե՞նք՝ կանա՞յքս,—ես չեմ ուզում խոսքեր ասել
պարսավանքի,
Ինչպես որ կա՛նք և եղել ենք,—այդպես էլ կին կը մնանք։
Հարկավոր չէ, որ վեճի մեջ պատասխանես դու նրանց
Հայհոյանքին—հայհոյանքով,—հիմարությանն—հիմարությամբ։
Արդ՝ սխալներն իմ հասկացած, զղջում եմ ես հոգեառնչ—
Եվ արդեն լավ գիտակցում եմ իրադարձը իմ և քո մեջ։

(Մոտենում է պալատի դռան և կանչում)

Ո՜վ զավակներ, իմ զավակներ, շուտ դուրս եկեք սենյակից,—

(Մանուկները դաստիարակի հետ դուրս են
գալիս բեմի վրա)։

Ինձ մոտ եկեք,—գրկեք սրտանց, ողջունեցեք դուք ձեր «հոր»,
Համբուրեցեք ինձ հետ նրան։ Թշնամանքը դեպի նա,
Ձեր մոր նման, փոխեք սիրո և սրտալի քաղցրության.—
Հաշտություն կա մեր մեջ արդեն, դժտությունն է մոռացված,
Ձեռքը սեղմեք սիրելի հոր։ Ավա՜ղ, ծանր է և տանջալից,—
Ձեզ նայելով միտք եմ անում,—ի՜նչ աղետներ կըսպասեն ձեզ.
Ո՜հ, զավակներ, արդյոք երկա՞ր դեռ ժամանակ, կյանք վարելով
Պիտի գրկեք, պիտ փայփայեք ձեր ձեռքերով ձեր ծնող մորն։
Դժբա՜խտ եմ ես, և ինձ համար ծանր է, ավաղ, և դառնավեր։

Պատրաստ եմ ես լաց լինելու, դողն է բռնում մարմինն իմ։
Ճիշտ է, երկար, շատ ժամանակ խոսով էի ես ձեր հոր հետ,
Բայց այժմ արդեն վերացած է գժտությունն այդ, և ես,
հաշտված՝
Խոր բերկրանքի ջերմ արցունքով ողողում եմ ձեր նուրբ այտերն։

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Պայծառ արցունքն հորդ թափվում է և մեր աչքից,
Ո՜հ, երանի ավելի մեծ դժբախտության չհանդիպեք։

ՅԱԶՈՆ

Գովելի է այդ ամենը, այ կին, որ այժմ ասացիր.
Իսկ անցյալը ես կշտամբել չեմ կարող։
Բնական է, որ կինն հաճախ զայրանում է ամուսնու դեմ,
Երբ նա կնոջ կենդանության դեռ ժամանակ—
Ամուսնությամբ կապվում է նոր, այլ կնոջ հետ։
Մինչ դու հիմա լավ ես արել, նոր մտքերի հանգելով,
Հաճելի՞ է, որ իսկապես կարողացար դու բարեժամ
Անցնել այդ նո՞ր և անսխալ մտածության ճանապարհին,
Ուր անկասկած քո խելքն ուշիմ, հաղթանակող կը լինի,—
Ուստի արդեն հանդես եկար իբրև խոհեմ, իմաստուն կին։

(Դիմելով իր որդուց)

Իսկ ձեր հանդեպ, ո՜հ, սիրասուն իմ զավակներ, ձեր ծնող հայրն
Եղել է միշտ բարեշնորհ, բարեխնամ հոգատար,—
Եվ զորությամբն աստվածների կատարել է ձեզ շա՜տ բարիք։
Հույսով եմ ես, որ Կորնթոս քաղաքի մեջ դուք մի օր
Առաջնակարգ մարդ կը դառնաք, ձեզ հետ նաև ձեր եղբայրներն։
Արդ աճեցեք,—իսկ մնացյալն ձեզ կը հոգա ձեր սիրող հայրն,—
Եվ մեկն ու մեկն աստվածներից՝ ձեր գալիքը բարեմատույց։
Ո՜հ, գեթ տեսնեմ ձեզ աճեցուն, բարեսնունդ, ժիր և արքույն,
—Որ միշտ լինեք ձեր կյանքի մեջ իմ թշնամուն հաղթանակող։
Ինչո՞ւ ես դու, ա՜յ կին, լալիս և ողողում քո այտերն
Դառն արցունքի կաթիլներով շողշողուն,—

Եվ քո գունատ դեմքը ինչո՞ւ մի կողմ թեքած
Սրտահաճո դու չես լսում ուրախալիր խոսքերն իմ։

ՄԵԴԵԱ.

Ոչի՞նչ, ների՛ր,—մտահոգ եմ այսպես ես իմ որդոց մասին։

ՅԱՍՈՆ

Հանգի՛ստ եղիր։ Նրանց համար ես ամեն բան կը հոգամ։

ՄԵԴԵԱ.

Ո՛հ, կաշխատեմ հանգիստ լինել, հավատում եմ քո խոսքին.
Կինը սակայն յուր կանացի բնությամբ
Հակված է միշտ լաց ու կոծի, արցունքի։

ՅԱՍՈՆ

Ո՛հ, ինչո՞ւ ես դու, ապաբախտ, զուր հառաչում որդոց մասին։

ՄԵԴԵԱ.

Չէ՞ որ նրանց ես եմ ծնել։ Ահավասիկ՝ երբ պարծեցա
Ես իմ որդոց գալիք կյանքով,—արտասվեցի հոգեհույզ,
Քանզի իսկույն մտածեցի,—կը կատարվի՞ արդյոք այդ։
Ես, տակավին, իմ ասելիքն, որի համար կանչեցի քեզ,
Չեմ ավարտել։ Ուստի լսի՛ր, որ խոսքըս ես շարունակեմ։
Երբ ցանկանում է թագավորն ինձ արտաքսել յուր երկրից,—
—Հասկանում եմ ես ուշիմաց,—որ արդարև ինձ համար
Ամենալավ և բարեբեր բարիքն է այդ։—
Ճի՛շտ է, գիտեմ,—եթե այստեղ բնակության ես մնամ,
Քեզ և երկրի թագավորին զուր խոչընդոտ կը դառնամ,—
—Թշնամի են ինձ համարում մարդիկ իրենց օջախին։
Ուստի և ես մտադիր եմ շուտ հեռանալ դեպի աքսոր,
Բայց մեր որդոց այստեղ պահիր քո ձեռքի մեջ, խնամքիդ տակ,
Եվ աղերսիր Կրեոնտին, որ չաքսորի դեթ նրանց։

ՅԱՋՈՆ

Բայց չը գիտե՞մ,—կարո՞ղ եմ ես արդյոք նրան համոզել,
Թեպետ անշուշտ կը փորձեմ։

ՄԷԴԵԱ

Դիմիր սակայն հարսնացուիդ, թո՛ղ նա խնդրի յուր ծնող հորն
Որ չաքսորի նա այս երկրից մանուկներին։

ՅԱՋՈՆ

Շա՜տ գեղեցիկ,—ենթադրում եմ,—կը համոզեմ ես նրան,
Քանզի չէ՞ որ այլ կանանց պես մի կին է նա։

ՄԵԴԵԱ

Արդ՝ այդ գործում կօգնեմ ես քեզ և իմ որդոց ձեռքով նրան
Ես կուղարկեմ մի այնպիսի ընծա-պարգև շքեղագեղ,
Որ մարդկանց մեջ, համոզված եմ,—գերհրա՜շ է և մեծաազդանչ.—
Մի ձիուագործ շքեղ զգեստ և պերճ պսակ մի ոսկեկուռ։
Շուտո՜վ, շուտո՜վ պիտ պատվիրել ստրուկներից մեկն ու մեկին,
Որ շուտափույթ այստեղ բերի զարդարանքն այդ մեծաշուք։
Բախտավո՞ր է, երանավե՜տ,—և ոչ միայն մեկ անգամ,—
Այլ բյուր անգամ երջանիկ է այն հարսնացուն,
Որն հայթհայթի քեզ պես ազնիվ, վսեմափայլ ամուսին
Եվ ստանա պսակն անեղծ,—որ ինքն Հելիոս իմ նախահայրն
Պարգևել էր յուր թոռներին՝ երբեմն իբրև փարթամ ընծա։
Շո՜ւտ, իմ որդիք, վերցրեք, տարեք այս գերհրաշ զարդարանքն
Եվ հանձնեցեք անդ արքայի երանափառ դստրիկին,—
Ստանալով նա այդ պարգևն, երբե՞ք, երբե՞ք չի մոռանա։

ՅԱՋՈՆ

Ո՜հ, միամիտ, ինչո՞ւ ես զուր զրկում դու քեզ։ Կարծես, իրավ,
Տունն արքայի կարի՞ք ունի զգեստների։ Կարծում ես դու,—
— Ոսկեղե՞ն է նրան պակաս։ Պահիր այդ քեզ.—մի՛ տուր նրան։
Համոզված եմ և լավ գիտեմ,—հարգում է ինձ հարսնացուն,
— Ոչ մի դանձով ինձ չի փոխի նա բնավ։

Ո՛չ, ո՛չ, պարգևն դայթակղիչ է աստվածների համար նույնիսկ,
Մինչդեռ ոսկին մահկանացու մարդկանց աչքում
Միշտ առավել ուժգնագույն է, քան բյուր ճառեր ճարտասանի:
Նրան արդեն բախտն է ժպտում: Աստվածներն են նրա համար
Բարեշնորհ խնամակալ, և իշխո՞ղ է նա արդեն:
Մինչ իմ որդոցն աքսորանքից փրկող գործին պատրաստ եմ ես
Տալ ոչ միայն ոսկին ու գանձն, այլև զոհել կյանքս ու հոգիս:
Արդ՝ զավակներ, շո՛ւտ գնացեք փարթամահոխ ապրանքն
Եվ պարգևն այս հրաշակերտ՝ հանձնեք ձեր հոր նոր կնոջը,—
— Իմ պատվական նոր տիրուհուն,—և խնդրեցե՛ք աղերսալից,
Աղաչեցե՛ք, որ չաքսորեն ձեզ այս երկրից:
Գլխավորը այն է, սակայն, որ ինքն անձամբ և իր ձեռքով
Անդ ընդունի պարգևը պերճ: Ճանապարհվե՛ք հիմա շո՛ւտ,
Եվ հաջողակ կատարելով հանձնարարված գործը ձեր,—
— Փափագատենչ համբավ բերեք ձեր մայրիկին շուտափույթ:

(Յազոնն ու մանուկները հեռանում են):

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Ստրոֆ.

Արդե՞ն, արդե՞ն էլ հույս չկա,—հույս չունեմ ես,
Որ մանուկներն այժմ կենդանի կը մնան.
Արդ գնում են ճանապարհով նրանք մահվան:
Եվ կընդունի ոսկի պսակը հարսնացուն,—
— Նա կընդունի յուր անիծված կործանումն:
Ո՜հ, իր ձեռքով և իր գլխին խարտիշագեղ
Նա կը դնի այժմ դժոխքի զարդն ահեղ:

Անտիստրոֆ.

Պերճ հագուստի և ոսկեկուռ վառ պսակի
Գեղեցկությունն իր շողյունովն անմահական
Կը հմայի, կը կախարդի հարսի հոգին.
Հրապուրված նա կը հագնի այդ զարդարանքն,

Որ զգեստովն հարսանեկան իջնի դժոխք՝
— Սովերների, դաժան մահու մութ աշխարհն։
Ո՜հ, այնպիսի թակարդի մեջ կընկնի նողկ,
Որից արդեն փրկությունն է անհնար,
Որտեղ նրան որսալու է մահվան ոգին չարադաժան։

Ստրոֆ 2.

Իսկ դո՜ւ, իսկ դո՜ւ, ո՜հ, ամուսին դժբախտագույն,
Որ կամեցար թագավորին փեսա լինել արքայաշուք.
Բայց ակամա, անդիտաբար պատրաստեցիր
Մահ և կորուստ անագորույն
Քո նոր կնոջն և քո որդոց դեռ մանուկ,
Եվ ծաղրո՜ւմ է քեզ չարաղետ ճակատագիրն։

Անտիստրոֆ 2.

Ողբում ենք մենք և քո՜, և քո՜ վիշտը դաժան,
Ով դժբախտ մայր՝ դժբախտ որդոց,
Դու շատ շուտով լինելու ես որդեսպան
Եվ քո խախտված ամուսնական իրավունքի
Վրեժխնդիրն ահագնակի։
Դու անարդ ես, վիրավորված,—քանզի քեզ
Դավաճանեց ժանտ անօրեն քո ամուսին,
Որ տուն բերի նա յուր համար մի նոր կին։

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

(Մեդեան, երգչախումբը և դաստիարակը)

ԴԱՍՏԻԱՐԱԿ

Ո՜վ տիրուհի, ահա և քո զավակներն.
Բեկանված է նրանց աքսորն։ Արքայական հարսնացուն
Սրտահաճո անդ ընդունեց ընծան ձեռքից քո որդոց։
Մանուկների վիճակն արդեն ապահով է և հանգիստ։
Սակայն ինչո՞ւ կանգնած ես դու խիստ հոգեհույզ և ալեկոծ
Եվ չես հրճվում այժմ՝—լսելով խոսքերը իմ ուրախառիթ։

ՄԵԴԵԱ.

Ավա՜ղ, ավա՜ղ։

ԴԱՍՏԻԱՐԱԿ

Ի՞նչ միտք ունի քո հառաչանքն,—
Բարեզեկույց իմ համբավին չի հարմարվում նա բնավ։

ՄԵԴԵԱ.

Ավա՜ղ, ավա՜ղ։

ԴԱՍՏԻԱՐԱԿ

Ցանկանալով քեզ լավագույն համբավը տալ,
Գուցե, սակայն, չիմանալով, վա՜տ լուր իրոք հայտնեցի։

ՄԵԴԵԱ.

Դու հայտնեցիր, ինչ որ պետք է հայտնեիր։

ԴԱՍՏԻԱՐԱԿ

Ինչո՜ւ ապա աչքդ դետնին սևեռած,
Դառն արցունք ես թափում այդպես։

ՄԵԴԵԱ.

Ո՜հ, ծերունի, չեմ կարող ես լաց չինել.
Երբ իմ զայրո՜ւյթն և աստվածներն
Ինձ նետել են կրակի մեջ։

ԴԱՍՏԻԱՐԱԿ

Հանգստացի՜ր, կանցնեն օրերն և կրկին դու
Այստեղ կապրես զավակներիդ հետ միասին։

ՄԵԴԵԱ.

Նախ ես ինքըս, իբրև դժբա՜խտ,
Ուրիշների՜ն պիտ ուղարկեմ աքսորանքի։

ԴԱՍՏԻԱՐԱԿ

Դու չես միայն, որ անխուսափ պիտ բաժանվես զավակներից,—
— Մահկանացու մարդիկ պետք է իրենց վիճակն հանդուրժեն։

ՄԵԴԵԱ.

Ես կաշխատեմ նույնը անել։ Դու ներս գնա ապարանքն
Եվ պատրաստիր, ինչ որ պետք է մանուկներին մեկ օրում։
Ո՜հ, մանուկներ, իմ մանուկներ, դուք դեռ ունեք տո՜ւն,
ապաստա՜ն,
Ուր բնակված դեռ պիտ ապրե՜ք,—բայց առանց ի՜նձ,
դժբախտի՜ս,—
— Ձեր հեք մորից, թշվառ մորից միշտ, հավիտյան անջատված։
Մինչ ես մենա՜կ, միշտ տարագիր պիտ աքսորվեմ օտար երկիր։
— Հոգեզվարճ ու բերկրալից էլ չեմ տեսնի ես, ավա՜ղ,
Ձեր կյանքն երբե՜ք երջանկավետ, հարսանիքը ձեր ցնծավետ.—
Չեմ զարդարի ձեզ, ձեր կնոջն, ամուսնական ձեր մահիճն,—
Ո՜հ, չեմ բռնի ես իմ ձեռքով հարսանեկան ձեր ջահն ուրախ։
Թող անիծվի իմ տարաբախտ չար զայրույթը ինքնապարծ...
Ավա՜ղ, ձեզ զուր ես սնեցի,—սրտակարո՜տ իմ մանուկներ,
Զուր տանջվեցի չարաշաժան, զուր կրեցի խոնջանքն և վիշտ.
Իզո՜ւր, իզո՜ւր ձեզ ծնեցի ես երկունքով դառնավեր։
Ո՜րքան, ավա՜ղ, պայծառ հույսեր հյուսեց երբեմն իմ խեղճ
հոգին.
Քաղցրագորով հո՜ւյս ունեի, որ ծերության իմ օրերին
Ինձ կը պահեք, ինձ կը սնեք դուք հոգատար և սրտացավ.
Հո՜ւյս ունեի,—երբ կը մեռնեմ,—դուք ձեր ձեռքով սիրամեծար
Ինձ կթաղեք վայելչագեղ, հարգանքով լի՜, արժանապո՜վ,
— Մարդկանց սրտին նախանձարկո՜ւ։ Այդ քաղցր հույսերն,
ըղձանքը վառ
Կորած են այժմ, ընդմիշտ կորած։ Իսկ ես ձեզնից միշտ
անջատված,—
Պիտ կյանք վարեմ դառնակսկիծ, զուրկ ու մենակ, վշտառա՜տ,
Եվ դուք, ավա՜ղ, էլ չեք տեսնի ձեր հարազատ մայրիկին.
Ձեր աչքերով միշտ սիրատենչ էլ չեք նայի ձեր մորն երբե՜ք,
Քանզի արդեն վիճակված է ձեզ այլ մի կյանք, ա՜յլ գոյություն։

Ավա՜ղ, ավա՜ղ, ձեր հայացքն եմ տեսնում քնքուշ, սիրաշատ.--
Ի՞նչ եք նայում ինձ, զավակնե՜ր, ձեր աչքերով լուսաշող.
Ի՞նչ եք ժպտում դուք ինձ այդպես ձեր ժպիտով վերջնական։

(Դիմելով երգչախմբին)

Ավա՜ղ, վա՜յ ինձ։ Ի՞նչ անեմ ես։ Ծանր է, ծա՜նր է վիճակն իմ,
Ո՜հ, թուլացավ սիրտս արդեն.—ի՞նչ անեմ ես, ո՞վ կանայք,—
Մինչ նայում են,—ինձ են նայում զավակներիս շողշող աչերն։
Ոչ, ո՛չ երբե՛ք, ես չեմ կարող։ Թո՜ղ հեռանա, թո՜ղ չքանա,
Առ միշտ կորչի իմ դավադիր, անխնա միտքը նախկին,—
Ես այս երկրից դուրս կը տանեմ զավակներիս ինձ հետ աքսոր։
—Ի՞մն են սրանք։ Ինչո՞ւ սրանց անմեղ մահով մահապարտ
Պետք է անշուշտ վրեժխնդիր վրե՜ժ առնեմ իմ ամուսնուց,
Եվ ինձ ապա ձգեմ այդպես ա։անջանքի մեջ կրկնակի։
Ո՜չ, չեմ անի։ Թող որ կորչի դա։վանքը իմ չարամիտ։

(Մտաճոգված)

Իսկ հետո՞ ինչ։ Մի՞թե պետք է հանդիսատ սրտով ես հանդուրժեմ,
Որ թշնամին,—ժանտ թշնամին ինձ միշտ ծաղրե անդատապարտ,
Որ իմ պատվին հեգնանք նետե չարախնդիր և անպատիժ։
Օ՜ն, անդր, ո՛չ, ոտքի կանդնի՜ր դու ջախջախիչ խիզախություն,
Ո՜հ, ամոթ քեզ,—հազա՜ր ամոթ, իմ քաջունակ, ուշիմ սի՜րտ,
Որ հղացար այդպես քո մեջ այդքա՜ն ատոր, գարշելի միտք։
Զազրելի է, երբ մեր հոգին—յուր գոյության դժվար ժամին
Կարեկցության կամ զիջումի խոսք է հնչում մեր ականջին։
Ո՛չ։ Հեռացեք, իմ մանուկներ. տուն գնացեք շուտափույթ,
Թող հեռանա, ով հիրավի չը պետք է աստ ներկա լինի
Այս ահռելի զոհաբերման ծիսարանումն իմ անգութ,—
—Իմ զոհն այստեղ ժանտ մորթելիս։—Չե՜ռք իմ, ձի՜ռք իմ,
չը դողա՜ս։

(Մանուկներին ուղեկցում է մինչև դուռը. բայց շեմքի մոտ կանգ է առնում, ձեռքը զավակներին մեկնելով լաց է լինում արտասվախառն)։

Ավա՜ղ, ավա՜ղ սիրտ իմ, սիրտ իմ,—մի կատարիր, այդ գործը
թող.

Ո՜հ, դժբախտ կին, թող դու սրանց,—խղճա՜, խղճա՜ քո որդոց։
Ինձ հետ այնտեղ միշտ ապրելով, ինձ միշտ բերկրանք կը
պատճառեն։
Բայց ո՜չ, ահա երդվում եմ ես ժանտ դժոխքովն Հադեսյան,
— Ստորերկրյա ոգիներով վրեժխնդիր ու դաժան,—
Երբե՜ք, երբե՜ք չեմ թողնի ես, որ զավակներն իմ սիրասուն
Չար թշնամուս ձեռքին դառնան լիրբ ծաղրանքի առարկա։
Վերջացած է,—կը կատարվի՜ ճակատագիրն անխուսափ.
Մեկ է օրհասն.—և չեն կարող սրանք մահից խո՜ւյս տալ երբեք։
Ես եմ ծնել սրանց իրոք և ես էլ իսկ կըսպանեմ։
Բայց լա՜վ գիտեմ. պսակն է այժմ արքայազուն հարսի գլխին.—
— Կը կործանվի նա չարաչար Հադեսի մեջ թունավոր։
Ո՜հ, կանգնած եմ ահավասիկ՝ աղետաբեր ճանապարհին,
Մինչդեռ նրանց աղետագույն կը պատրաստեմ ճանապարհ։
Սակայն պետք է զավակներիս սիրով գրկեմ վերջին անգամ,
— Ավա՜ղ, նրանց վերջին անգամ սիրակարոտ ողջո՜ւյնըս տամ։
Թողե՜ք, թողե՜ք, իմ մանուկներ, որ ձեր մայրը համբուրե ձեզ.
Ձեր ձեռքը քաղցր ու դալար։

(Համբուրում է մանուկներին)։

Ել որքան նուրբ, քաղցրանուշ են ձեր ձեռքերն այս՜ սիրունիկ,
Ո՜րքան սիրուն, սրտառուչ են դանդուրագեղ ձեր գլուխներն.
Ձեր տեսքը վառ, ձեր դեմքն անմեղ, հայացքը ձեր ազնվագույն.
Ո՜հ, մանուկներ, լա՜վ եղեք միշտ և երջանիկ, սակայն այնտե՜ղ.
Իսկ երկրային ձեր բախտն, ավա՜ղ, ձեզնից արդեն շորթեց
Ձեր հայրն։
Սիրուն և հեզ իմ մանկիկնե՜ր, զգում եմ ես
Ձեր քաղցրությունն, սուրբ համբույրի վսեմական
քաղցրությունն,
Մշտաժպիտ ձեր նուրբ այտերն, ձեր մեղմագո՜ւյն անբասիր
շունչն։
— Բայց հեռացե՜ք, շուտ հեռացե՜ք. էլ չեմ կարող նայել ձեզ.
Սիրտս է, ավա՜ղ, հաղթահարված դառնության մեջ վշտերի,—
Տեսնում եմ արդ.—զարհուրելի, դժնական է իմ անելիքն,
Մինչդեռ կիրքը ուժգնագույն է իմ ուժերից բանական,—

— Նա աղբյուրն է այս աշխարհում միշտ մեծագույն աղետների։

(Մանուկները հեռանում են, իսկ իմը
հայացքն ուղղած դեպ հեռուն, նայում է լուռ)՝

ԵՐԳ ՁԱԽՈՒՄԲ

Ես խելքով նրբագույն որոնել եմ հաճախ,
— Մրցական վեճի մեջ հետախույզ եմ եղել—
Այն հարցով,—որն իսպառ ու երբեք
Դյուրամա՛րս, մատչելի՛ չէ կանանց։
Ճիշտ է, ճի՛շտ,—որ մուսայք երկնածին
Ներշնչում են հաճախ նաև մեզ
Եվ դրդում են հոգին դեպի վեր,
— Դեպի վեհ թռիչքներն իմաստուն,—
Սակայն ոչ բոլորին։
— Այլ միայն հազվական քչերին,—
Բազմաբյուր շատերից լոկ մեկին։
Ճշմարի՛տ է սակայն,
Որ հատուկ է, իրավ և կանանց
Ոգեշունչ արվեստի սուրբ ոգին։

Արդ լսե՛ք, որ հիմա ասեմ ձեզ.
Մարդկանց մեջ հայրերին համեմատ—
Նա է լոկ ավելի երջանիկ,
Ով անկին, ամուրի և անհոգ
Չի ծնել յուր կյանքում զավակներ։

Քանզի ճիշտ՝ ազնվական մարդիկ միշտ,—
Լինելով անտեղյակ, անծանոթ այն հարցին,—
— Ի՞նչ հաճույք խնդության, ի՞նչ վշտեր դառնալի
Հայրերին պատճառում են հաճախ զավակներն,—
— Միշտ ազատ են հոգսից ծանրագին
Եվ բազում ցավերից սրտավեր։
Իսկ նրանք, որոնց տան հարկի տակ
Կան բազում քաղցրատենչ, ծաղկաբույր մանուկներ,

— Չէ՞ որ միշտ նրանց կյանքն է անհագ—
Խոնջանքի, հոգեհույզ հոգսերի
Անխափիր և անվերջ դառնություն,—
— Անսահման հոգսերի,
Որ մաշում և հուզում են ամեն ժամանակ։
Անհրաժեշտ է իրոք նախ հոգալ,—
Թե. ի՞նչպես պիտ վարվել, ի՞նչ միջոց ձեռք առնել,
Կամ ինչպես լավագույն և վսեմ—
Ազնվաբար կրթություն տալ նրանց.
Կամ ի՞նչպես հայթայթել միջոցներ
Նրանց լուրջ, ապագա ապրուստին։

Այդ ամենն հոգալիս տակավին,
Դժբախտ հայրը բնավ չը դիտի,—
Ո՞ր որդին, իսկապես, հուսալիր,
Լինելու է ազնի՞վ, պիտանի,
Ո՞ր մանուկը, իրոք, անպիտան,
— Կյանքի մեջ վատամարդ պիտ լինի։

Իբրև հայր, աշխատիր չարաչար.
Սակայն դու ոչ մի կերպ չը դիտես,—
— Չես կարող դու բնավ իմանալ—
Այն գաղտնի և վերջին ժանտ աղետն,
Որ մարդու կյանքի մեջ անհաստատ՝
Լինելու է անշե՞ղ, բայց անհայտ։

Եվ ասենք՝ թե հաջող, շնորհքով դու գտար
Քո որդոց գոյության լավագույն մի նեցուկ.
— Հիմնեցիր անվտանգ, արբույն կյա՞նք երջանիկ,
Կրթեցիր քո որդոց մեծապե՞ս փառաշուք.—
Եվ ասենք՝ թե նրանք մեծացան անաղարտ,
Զորացան աստղծու խնամքով,—գեղեցի՞կ
— Ազնվագույն և վսեմ դարձան մարդ.—

Մինչ, ավա՞ղ, հանկարծուստ մահը չար
Հարձակվում և շորթում է նրանց
Եվ նետում դժնի տունն Հադեսի,
Իբրև տո՞ւրք և ավա՞ր խավարին անթափանց։

Արդյոք կա՞ ձեզ համար, ո՜վ հայրեր,
Անկործան բերկրանքի խնդություն,
երբ, ավա՜ղ, անողորմ աստվածներն
Մարդու բյուր ցավերին սրտակոծ,
Անսահմա՜ն և մաշող տանջանքի՜ն
— Միացնում են նաև սաստկագույն
Ամենից ավելի չարաղետ, դաժան վիշտը ծնողին,—
— Կործանումը նրա սիրասուն զավակի և որդո՜ց։

ՄԵԴԵԱ.

Սիրելինե՛ր,—ահա երկար սպասում եմ, աչքըս ճամփին,—
Անդ, պալատում կը կատարվի՞ իմ հնարած դործն արդյոք։
Բայց տես, գալիս է Յազոնի ծառաներից մեկն ահա.
Կարծես նույնիսկ շնչապատառ վազ է տալիս և երևի
Նոր աղետի համբավ ունի հայտնելու մեզ։

ՏԵՍԱՐԱՆ ԶՈՐԱՎԱՐ

(Սուրհանդակ, Մեդեա, երգչախումբ)

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Ո՜հ, Մեդեա. փախի՛ր շուտով, փախիր նավով ծովի վրա,
Կամ կառքի մեջ և ցամաքով, փախի՛ր, թեկուզ ոտքով լինի,
— Քանզի ահեղ և անօրեն եղեռնություն կատարեցիր։

ՄԵԴԵԱ.

Ի՞նչ պատահեց,—որ պե՛տք է ես այդքա՞ն հապճեպ
Շուտով փախչե՞մ, հեռանամ։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Կործանվեցին այս րոպեին ժանտ զորությամբ քո թույնի
Ե՛վ դստրիկը թագավորի, և՛ ինքն արքա Կրեոնտան։

ՄԵԴԵԱ.

Ամենուրախ, դերբերկրալի խոսքն ասացիր, սուրհանդա՛կ,—
Բարեգործ ես դու ինձ համար։ Այսու հանդերձ դու կլինես
Իմ սիրելի,—ամենամերձ և պատվական բարեկամ։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Ի՞նչ ես խոսում։ Խելքդ մի՞թե կորցրել ես դու.
Խելագա՞ր ես գուցե, ա՞յ կին։ Խելքի եկ.
Թագավորի ընտանիքն է կործանված,
Մինչ համբավն այս դու լսեցիր հոգեզվարճ
Եվ ցնծավե՞ս, առանց վախի,—չե՞ս էլ դողում ահաբեկ։

ՄԵԴԵԱ.

Կարող էի քո խոսքերին պատասխանել ես տեղին,
Բայց մի՛ շտապիր, մի՛ զայրանա, պատմի՛ր հանգիստ,—
Ի՞նչպես արդյոք կործանվեցին։ Կուրախացնես ինձ կրկնակի,—
Եթե իրոք մահն էր նրանց խստադաժան և ահեղ։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Երբ երկուսով քո զավակներն հոր հետ եկան—
Ու ներս մտան հարսի սենյակն, ուրախացանք մենք, ծառաներս,
Իբրև վշտի՞ն քո ցավակից. քանզի արդեն լուր տարածվեց,
Որ վերացել է քո նախկին գժտությունը ամուսնուդ հետ։
Մանուկների շուրջն հավաքված, մեկն համբուրեց նրանց
ձեռքերն,
Մյուսը շոյեց,—համբույր տալով,—խարտիշագեղ գլուխներին։
Այն ժամանակ և ես իսկույն—մանուկների եռևից
Կանանցական բաժինն անցա ուրախալիր։
Մեր տիրուհին,—որը հիմա քո փոխարենն էր տան մեջ,—
—Քո երկվորյակ զավակներին դեռ չը տեսած,—սիրատենչ
Եվ բարեհաճ հայացք ձգեց դեպ ամուսինն իր Յազոն,
Սակայն հետո երբ նկատեց մանուկներին,
Իսկույն ևեթ,—տհաճությամբ լցված խորունկ,—

Կկոցելով աչքերը յուր, մի կողմ թեքեց դեմքը պայծառ։
Այդ ժամանակ ամուսինդ, մեղմացնելով քենը կույսի,
Այսպես ասաց.—«Մի՛ զայրանա, այլ հայացքդ դարձրու այս
կողմ,
Եվ բարեսիրտ սիրիր նրանց, ում սիրում է քո ամուսին,—
Արդ՝ ընդունիր պարգևներն այս և աղերսիր սրտանց քո հոր,
Որ իմ սիրուն զավակներիս աքսորանքի չենթարկի»։
Մինչ տեսնելով պերճ զարդերը, խիստ մեղմացավ կույսը իսկույն,
Եվ մարդու հետ ամեն բանում համաձայնվեց։ Հայրն ու որդիք
Ապարանքից հազիվ էին դեռ դուրս եկել, երբ հարսնացուն
Վերցրեց, հագավ պերճ հագուստը խայտաճամուկ,
Իսկ պսակվն այն ոսկեկուռ հյուսեց վարսերն իր դանդուր։
Այնուհետև՝ նա սկսեց հայելու դեմ փայլենազարդ
Ջուգել, սարքել, վարսերը յուր մեծաշուք։
Այդպես զուգված՝ նա ժպտում էր, հիանում էր սրտահաճ.
Հայելու մեջ արտացոլված յուր կերպարի ուրվականով.
Հետո հանկարծ նա բազմոցից վեր կացավ
Եվ սկսեց սենյակի մեջ քայլել չորս կողմ նազենի,—
Նա շարժում էր ճերմակ ոտքերն իր քնքշաբար, նրբագե՛ղ.
Ման էր գալիս թեթև՛, թեթև՛ յուր ոտքերի մատներին,
— Պարգևներով խիստ հիացած, շուրջն էր նայում մերթակի։
Սակայն հանկարծ մեր աչքի դեմ գործ կատարվից զարհուրելի.—
Դեմքն այլայլվեց խիստ սրփրթնած։ Սաստիկ դունա՛տ, մահադե՛մ
Նա օրօրվեց, ետ-ետ քաշվեց դողդողադին
Եվ հազիվ հազ, մի կերպ հասավ, իրեն ձգեց բազմոցին,—
Որպեսզի դեթ չըգլորվի գետնի վրա, չընկնի տապատ։
Անդ մի պառավ սորկուհի, մտածելով, որ կույսի դեմ
Ինքը Պանոսն է զայրացած կամ մեկն ու մեկն աստվածներից,—
Սկսեց իսկույն ջերմ աղոթել բարձրաձայն։
Մինչդեռ հետո, երբ նկատեց, որ աղջկա շրթունքներին
Ճերմակ փրփուրը տարածվեց, որ աչքերը շուռ եկան,—
Դեմքը դարձավ արյունաքամ,—ճչա՛ց, ոռնա՛ց սարսափահար,
— Աղաղակե՛ց վայրենագոչ։ Ծառաներից մեկն իսկույն
Վազեց դեպի հոր սենյակը,—իսկ երկրորդը դեպ ամուսին,
Որ համբավ տան կույսի մասին։ Մի վայրկյանում ողջ ապարանքն
Ուժգին թնդաց վազվզոցով, աղմուկի մեջ խառնաշփոթ։

Մի ակնթարթ,—նույնիսկ չանցավ այնքան սակավ կարճ
ժամանակ,
Որքան պետք է ասպարիզում քաջընթացիկ վազողին,
Որ մրցության ճանապարհը անցնի արագ նա քայլով
Եվ շեշտ հասնի մրցարանում նշանակի ուղիղ մետին,
Երբ դժբախտը բացեց աչքերն, ուշքի եկավ,
Շանր հառաչեց.—տառապում էր տանջանքի մեջ նա կրկնակի,—
Գլխի վարսերն ամուր սեղմող այն ոսկեհուտ պսակից
Ցայտում էր ժանտ բոցն ահավոր,—կրակն հզո՜ր, ամենակեր.
Իսկ նրբագեղ փայլուն զգեստն,—պարգևն, ավա՜ղ, քո որդոց,
Այրում, վառում, կտրատում էր ողջ մարմինը թշվառի։
Եվ վեր թռավ նա բազմոցից ու վազ տվեց սենյակի մեջ,—
— Մարմինն ամբողջ բոցածավալ և բոցապատ։
Նա յուր գլուխն ու վարսերը թափահարեց այլընդայլ,
Կամենալով պոկել պսակն։—Բայց ոսկին էր պրկված գլխին։
Եվ քանի որ թափ էր տալիս վարսերն ուժգին, թափահար,
Էլ ավելի բորբոքվում էր գլխի կրակն հրածորան։
Տանջանքի մեջ խիստ ուժասպառ, նա վերջապես ընկավ գետին։
Այդ վիճակում, բացի հորից, ոչ ոք նրան չէր ճանաչի,—
Էլ չկային պայծառ աչքերն, չքնաղ ու գեղ դեմքը չը կար.
Վերուստ գլխից ծործորում էր արյունը մուգ, հրախառն։
Անտես թույնի ուժիցն ահեղ միսն էր թափվում ոսկորներից,
Ինչպես վառվող եղևնու հյութ,—կուպրի նման ինչպես խեժ։—
— Տեսարանն էր զարհուրելի։ Չէր հանդգնում նույնիսկ ոչ ոք
Գեթ մերձենալ, դիպչել մարմնին մեռած կնոջ,—
Քանզի նրա վիճակն արդեն մեզ խրատ էր անողոք։
Թշվառագույն հա՜յրը հանկարծ,—դժբախտությանն անտեղյակ,—
Ներս խուժելով սենյակի մեջ, վրա վազեց դեպի դիակն։
Նա դառնաձայն հառաչանքով գրկեց մարմինն ու ճչա՜ց.
Եվ այս ասաց.—«Ո՜հ, տարաբա՜խտ, ապերջանիկ իմ զավա՜կ,
Ո՞վ էր արդյոք աստվածներից, որ անպատի՜վ, չարադաժան
Խորտակեց քեզ։ Ո՜վ ինձ, ավա՜ղ, գերեզմանիս արդեն ափին
Մատնեց անգութ այս որբության։ Ո՜հ, դու որդյակ իմ սիրասուն,
Երանի՜ թե և ե՜ս, և ե՜ս մեռնեմ քեզ հետ այժմ միասին»։
Երբ հեծեծանքն ու ողբակոծն ծերն ավարտեց սրտաճմլիկ,
— Նա կամեցավ ոտքի կանգնել, բայց անհաջող.—նուրբ զգեստն

Բաղեղի պես, ինչպես ընկույզը դափնենի,—սիրուկ փաթաթվեց
Մարմնին իսկույն հեք ծերուկի,—և սկսեց պայքարն ահեղ.
— Ճգնում էր ծերն, որ վեր կենա, որ ազատի յուր ծնկներն,—
Բայց մեռյալն էր նրան ձգում.—կաշկանդված էր նա ուժգին:
Իսկ երբ ուժով փորձում էր նա պոկել հագուստն իր մարմնից,
Կտրատելով միսն էր թափում միայն յուր ծեր ոսկորներից:
Վերջ ի վերջո չարշարանքից հաղթահարված և ուժաթափ
Ցած գլորվեց նա մահակուլ և ավանդեց յուր հոգին:
Այժմ ընկած.են հոր և որդու դիակն իրար մոտ:
Արժանի է դառն արցունքի այդ վիճակը դառնաղետ:
Բավ է այսքանն: Ուրիշ խրատ այլևս չունեմ քեզ տալիք,
— Ինքդդ գիտես,—ի՞նչպես պետք է, որ ազատվես դու պատժից:
Արդ՝ առաջին անգամը չէ, որ մարդկային կյանքն ամբողջ
Ես հաշվում եմ միայն՝ նանի՞ր, ունա՞յն մի սովեր,
Ուստի պնդում եմ համարձակ.— և այն մարդիկ մահկանացու,
Որոնք իրենց համարում են ամենագետ ու ճարտասան,
Արժանի են ամենից խիստ՝ հիմարադույն կոչվելու:
— Երջանիկ մարդ այս աշխարհում բնավ չկա:
Իսկ եթե բախտն հարստության,—հաջողության այլընդայլ—
Ժպտա երբեմն մեկին ավել, մյուսին պակաս,—
Երբե՞ք դու այդ երջանկության չիմանա՞ս:

(Սուրհանդակը հեռանում է):

ԵՐԳԶԱՀՈՒՄԲ

Այսօր, Յազոն, ասուվածները արդարացի՝—
Կարծեմ բազում, աղետալի՞ կրակ գլխիդ կը թափեն:
Ո՜հ, Կրեոնտ,—թագավորի թշվառադույն դու դստրիկ,
Դու, որ հանուն ամուսնության Յազոնի,
Ներս ես մտնում հիմա դժոխք, դարբասներովն Հադեսի,—
Ողբում ենք քեզ և դառնաղետ քո վիճակը, ահավասիկ:

ՄԵԴԵԱ.

Ավա՜ղ, կանա՜չք իմ սիրելի, կարծեմ շուտով ես արդեն
Պիտ սպանեմ զավակներիս և հեռանամ երկրիցն այս հեք:

Իսկ եթե ես դեռ դանդաղեմ,—սիրտ կոտորի իմ որդոց
Մ՛յլ, ավելի դաժանադույն թշնամի ձեռքն,—
— Համենայն դեպս անխուսափ է մահը նրանց.
— Եթե անշեղ այդ պիտ լինի, կը կործանեմ ես, իբրև մայր,
Ես եմ նրանց աշխարհ բերել, ես էլ պետք է ոչնչացնեմ։
Ի՞նչ եմ այսպես զուր դանդաղում, անկարո՞ղ եմ միթե ես
Գլուխ բերել ոճիրն ահե՞ղ, որն անխուսափ է, անշե՞ղ։
Քաջալերվի՛ր, ձեռք իմ անբախտ, սուրը վերցրու, սուրն ահեղ
— Վերցրո՞ւ շուտով և քաջ մտիր կյանքի տխուր ասպարեզն։
Մի՛ վախենա. հանդո՞ւգն եղիր,—մտքիցըդ հան գեթ մի րոպե,
Որ դու նրանց մայրն ես ծնող։ Մի՛ մտածիր, որ դու իրոք
Նրանց սիրում ես սրտաառնչ, այլ կարճատև, միայն այսօր
Գեթ մոռացիր, որ հիրավի զավակներն են նրանք քո—
— Միայն հետո,—կյանքդամդ ամբողջ դու լաց եղիր նրանց
համար։
Եթե նույնիսկ սպանես դու, ո՛վ դժբախտ կին,
Երբե՞ք, երբե՞ք չես մոռանա, որ դու սիրում էիր նրանց։

(Մեդեան սուրը բաշած ներս է մտնում պալատը
և իր եռևից փակում է դռները)։

ԵՐԳԶԱԽՈՒՄԲ

Ստրոֆ.

Ո՞հ դու երկիր, դու արևի ամենաշող
Եվ լուսատիպուռ ճառագա՞յթ.
Նայե՞ք, տեսե՞ք գեթ այս կնոջը կործանված,
Քանի դեռ նա, սուրը ձեռին արյունախանձ,—
Չի մորթոտել զավակներին հարազատ։
Ո՞հ, դու, արև՞, լուսի աստված ճաճանչագեղ,
Չէ՞ որ և սա ցեղից է ձեր երկնային,
Ձեր սերո՞ւնդն է ոսկեշող.
Ահռելի՞ է, եթե ձեռքով մարդկային
Թափվի արյունն հավերժակյաց աստվածների,
Ե՞կ դու հիմա, լո՞ւս արևի աստվածազարմ.
Ե՞կ և զսպիր մոլեգնությունն ահագնակի.

Սանձի՛ր սրան, ապարանքից դո՛ւրս վանիր—
— Սրան, որին ոգիներն են վրեժխնդիր
Դարձրել այսպես վրիժառու չար ոգի։

Ա ն տ ի ս տ ր ո ֆ.

Ավա՛ղ, իզուր դու զավակներ քեզ ծնեցիր սիրակարոտ,
Նանիր ու զուր դու քո որդոց սերտ սիրեցիր հոգատար.
Դու, ո՛վ դժբախտ, որ լող տալով նեղուցն անցար—
Սիմպլիգադյան անհյուրընկալ ժայռերի մոտ։
Ահռելի՛ կին. ինչո՛ւ արդյոք չարադաժան
Ձայրույթը այդ տիրապետեց քո սրտին.
Մայր որդեսպան, ինչո՛ւ ես այժմ դու կրկին
Պատրաստվում նոր, արյունախանձ սպանության։
Դառնաղե՛տ է և ծանրագին մարդկանց վիճակն,
Եթե թափեն նրանք արյունը աղգակից, միածնունդ։
Աստվածները պատժում են ժա՛նտ, դըժնդա՛կ
Որդեսպանին, նրա օջախն ու սերունդն։

(Պալատի ներսից լսվում են մանուկների
ահաբեկ ձայները)։

Մ Ա Ն Ո Ւ Կ Ն Ե Ր Ի Ց Մ Ե Կ Ը

Ավա՛ղ, ավա՛ղ, ի՞նչ անեմ ես. իմ մոր ձեռքից ո՛ւր փախչեմ։

Մ Ա Ն Ո Ւ Կ Ն Ե Ր Ի Ց Ե Ր Կ Ր Ո Ր Դ Ը

Ո՛հ, չը գիտեմ եղբայր, եղբայր իմ սիրելի,
Կորա՛ծ ենք մենք։

Ե Ր Գ Ջ Ա Խ Ո Ւ Մ Բ

Լսո՛ւմ եք դուք—լացն աղաղակ. լսո՛ւմ եք այս հեծեծանքն.
Ո՛հ դու թշվա՛ռ, եղեռնագործ, մահապարտ կին։
Մտնենք,,—մտնե՛նք տունը արդյոք։ Պետք է, պետք է
մանուկներին
Մահից փրկել,—ձեռքը գսպել արյունահե՛ղ, դժնաբա՛րք։

ՄԱՆՈՒԿՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Ո՜հ, օգնեցե՜ք, քանի շուտ է։ Հասե՜ք, հանուն աստվածների,—
Արդե՜ն, արդե՜ն մոտ է մահը, սուրն է շողում մեր գլխին։

ԵՐԳԱԽՈՒՄԲ

Ո՜հ, դու դժբախտ. քո սիրտն, ուրեմն, քո սիրտն իրոք
Երկաթից է, կամ քար է, քար,—
Որ քո ցանած կամ ծնած զավակներին
Սպանեցիր դու ինքնաձեռն, անողո՜ք։

Մենք լսել ենք, գիտենք միայն մեկ օրինակ,—
Ավա՜ղ, միայն մի ժանտ կնոջ անցյալի,—
Որն սպանեց զավակներին յուր սիրելի.—
— Ինոն էր այդ խելացնոր.—մի ժամանակ
Խելագար էր աստվածների նա կամքով,—
Երբ աքսորեց նրան հանկարծ հայրենիքից
Զևս-ղդոնի ամուսինը խանդալից,—
Նա բարձրաբերձ ժայռից մի օր նետվեց ծով
Զավակների մահովն անմեղ անբախտացած,—
Նա կործանվեց հորձանքների անդունդի մեջ
Եվ միացավ իր զույգ որդոց սիրատենչ։
— Ի՜նչ կա այստեղ ավելի ժանտ, ահեղագույն, ո՜վ աստված։
Ո՜հ, կանացի բազմաչարչար դու մահիճ,
Ավա՜ղ, ո՜րքան ժանտ աղետներ, տանջանք և վիշտ
Ստեղծել է կյանքում քո կիրքն ամբարիշտ,—
— Ի՜նչպես այստեղ հանդես եկար իբրև դահիճ։

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

(Երգչախումբը և Յազոնը, որը դուրս է գալիս մյուս դռնից)

ՅԱԶՈՆ

Դո՜ւք, ո՜վ կանայք, որ կանգնած եք ապարանքի դռների մոտ,—
— Ո՜ւր է, ասեք,—տա՞նն է արդյոք եղեռնագործ Մեդեան,—

Որ կատարեց այս անօրեն, զարհուրելի եղեռնությունն,
Թե՞ հեռացավ, կամենալով արդեն դիմել փախուստի։
Ավելի շո՜ւտ պետք է թաքնվի նա երկրի տակ,
Կամ թև՜ առած պետք է թռչի, դեպի երթեր բարձրացած,
Որ դեթ խույս տա ժանտ վրեժից արքայական ընտանիքի։
Մի՞թե իրոք, սպանելով թագավորին այս երկրի,
Մտադիր է նա անպատիժ խույս տալ, փախչել այստեղից։
Բայց ես հիմա հոգան եմ քաշում իմ հարազատ զավակների,
Եվ ոչ նրա,—որին անշուշտ պատժելու են այն մարդիկ,
Որոնց կյանքը նա խորտակեց չարադաժան։
Ես եկել եմ, որ հիրավի, կյանքը փրկեմ իմ որդոց։
Վախենում եմ, ո՜հ մի գուցե ազգականներն արքայի
Վրեժխնդիր լինեն իմ խեղճ զավակներին—
—Մոր կատարած նողկ, ամբարիշտ եղեռնության փոխարեն։

ԵՐԳԱԽՈՒՄԲ

Ո՜հ, դու թշվա՜ռ, դեռ չգիտես քեզ վիճակված պատուհասն,
Թե ոչ այդպես չէիր խոսի, ո՜վ Յազոն։

ՅԱԶՈՆ

Ի՞նչ կա արդյոք. ի՞նչ պատուհաս.
Գուցե և ինձ մտադիր է սպանել նա։

ԵՐԳԱԽՈՒՄԲ

Սպանված են քո զավակներն ձեռքով արդեն իրենց մոր։

ՅԱԶՈՆ

Վա՜յ ինձ, ավա՜ղ. ի՞նչ ասացիր.
Դու ինձ արդեն, ա՜յ կին, այդպես խորտակեցիր։

ԵՐԳԱԽՈՒՄԲ

Այո՜, ճիշտ է. իսկ դու հաշտվիր այն մտքի հետ,
Որ քո որդիքն էլ չկա՜ն։

ՅԱՋՈՆ

Սակայն ո՞րտեղ սպաննեց նա,
Արդյո՞ք տան մեջ, թե՞ տնից դուրս։

ՅԱՋՈՆ

(Մոտենալով տան դռան)

Շուտո՜վ շուտո՜վ դուք սարսվիներ՝
Ջարդեք, ջախջա՜խ փակերն իսկույն,
Եվ բաց արեք դուռն իմ առջև,—
Որ ես տեսնեմ անդ տատապանքն իմ կրկնակի՝
Մահը, ավա՜ղ,—իմ զույգ որդոց դաժան մահն
Եվ վրեժը՝ որդեսպանի՜ն սպասող։

(Պալատի դռները բացվում են և այնտեղից կախարդական, թևավոր վիշապներ լծված կառքի մեջ դուրս է թռչում Մեդեան)։

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

(Յազոնը, երգչախումբը և Մեդեան, որը բազմած է օդում բարձրացած կախարդական կառքի մեջ, իսկ նրա ոտքերի մոտ ընկած են սպանված մանուկների դիակները)։

ՄԵԴԵԱ

Ի՞նչ ես ջարդում դռներն այդպես.
Ի՞նչ է քեզ պետք, որ ուզում ես բռնի, զոռով ներս խուժել։
Դիակնե՞րն ես փնտրում արդյոք, թե՞ սպանությունն կատարողին.
Բա՜վ է։ Իզուր մի չարչարվիր, եթե իրոք ե՜ս եմ քեզ պետք,—
— Ասա շուտով,—ի՞նչ ես ուզում։ Ձեռքդ սակայն ինձ չի հասնի։
Տե՛ս, կառքը այս, պաշտպանություն թշնամու դեմ իբրև պարգև,
Ինձ շնորհեց պապն իմ Հելիոս՝ շողշող արևն։

ՅԱՋՈՆ

Կին զազրագործ, ո՜վ դժնաբարք դու հրե՜շ,
Որ զերազանց ատելի ես աստվածներին,

Ինձ և բոլո՜ր բոլո՜ր մարդկանց։ Դաժան մի կին, որ ժանտ սրով
Ոչնչացրեց ու խորտակեց յուր հարազատ զավակներին,—
Եվ ինձ, ավա՜ղ, մեկ հարվածով թողեց առմիշտ անզավակ։
Ո՜հ, դու, և դո՜ւ կատարելով այդ նողկ ոճիրն,
Հանդգնում ես նույնիսկ նայել դեպի արև՜ն ու երկիրն։
Ա՜խ դու նզովք՝ թույն աննման, գեթ չքանա՜ս, կորչե՜ս առմիշտ։
Նո՜ր հասկացա, թե ո՜րքան ես կույր եմ եղել ու հիմա՜ր,
Երբ բարբարոս ընտանիքից քեզ բերեցի ինքնակի
Դեպ այս երկիրն Հելլենական,—քե՜զ, ով ժանտախտ, զազրելի օձ,
Քեզ, որ դաժան դավաճանեց յուր ծնող հորն, հայրենիքին։
Աստվածներն են ինձ առաքել քեզ վրեժի չա՜ր ոգի։
Նախքան Արգո դեղեցկատես նավի վրա բարձրանալն—
Կատարեցիր դու այլ ոճիր և հայրական ձեր տան մեջ
Սպանեցիր դու հարազատ քո եղբոր։
Եվ այդ եղավ սկիզբն ահե՜ղ, եղեռնական քո գործերի.—
Այնուհետև ինձ պես մարդու դարձար դու կին
Եվ ծնեցիր դու ինձ համար սերմ զավակներ, որոնց, ավա՜ղ,
Սպանեցիր, թշնամացած ընդդեմ իմ նոր ամուսնության.—
Դու քո որդո՜ց կործանեցիր, զինված խանդի կրքով դաժան։
Այդպիսի գործ չէր կատարի երբե՜ք, ոչ ոք, ո՛չ մի հույն կին։
Մինչդեռ ես քեզ համարեցի նախընտրելի և գերադաս,
Ուստի քեզ հետ ամուսնացա ես միամիտ, սիրատենչ։
Քեզ սիրելով, վաստակեցի ինձ թշնամի անագորույն,
Քանզի դու ճիշտ օ՜ձ ես եղել, թունավոր օձ սրտի մեջ։
Ո՛չ, կին չես դու, այլ կատաղած և անողոք մայր-առյուծ,—
Շա՜տ ավելի անգութ և ժանտ, քան Աքիլլան վայրենագույն,
Որն ապրում է Տիրենական ծովերի մեջ անմատույց։
Բայց ի՜նչ, զուր է նախատինքն այս։ Այդքան դոռոզ, հանդուգն
ես դու,
Որ քեզ ոչի՜նչ էլ չի օգնի, թեկուզ հազար եպերանք։
— Կորի՛ր, կորի՛ր դու անամոթ, պիղծ, զազրագործ որդեսպան։
Ինձ մնում է միայն սգա՜լ, ողբալ բախտը իմ դաժան,
Ի՜նձ, թշվառի՜ս, որ զրկվեցի իմ ամուսնուց նորապսակ։
Իսկ ձե՜զ, ով զավակներ իմ քաղցրատենչ,—
Որոնց սիրով և հոգատար ես սնեցի, իբրև հայր,

Այլևս երբեք չեմ տեսնի ես,—կորած եք դուք,—առմիշտ կորած.
— Մինչ ես ինքըս պատճառ եղա ձեր կորստյան։

ՄԵԴԵԱ.

Ես շատ երկար կարող էի առարկել քեզ,
Իբր պատասխան քո խոսքերին, եթե Ձևս հայրն չիմանար,
Թե ինչե՞ր եմ ես քեզ համար միշտ կատարել, և փոխադարձ
Ինչո՞վ ես դու ինձ վճարել։ Դու, որ իբրև դավաճան,
Անարգեցիր իմ մահիճը և սրբությունն ամուսնական,—
Չէի՛ր կարող անշուշտ վարել կյանք երջանիկ, ցնծավետ,—
Եվ ինձ մատնել անպատվության ու ծաղրանքի։
Այլև դուստրը արքայական, ինքը նաև Կրեոնտան—
— Հարսանիքիդ գործը սարքող,—չը պետք է ժա՞նտ, անպատի՞ժ
Հանդգնեին դատապարտել ինձ անարդար աքսորանքի։
Ուստի եթե հաճո է քեզ՝ անվանիր ինձ մայր-առյուծ,
Կամ Տիրենում միշտ բնակվող ժանտ Սֆիլլա,
Մինչ այժմ ես ա՛յն կատարեցի, ինչ անշեղ էր և ինձ պետք,—
Եվ քո սրտին ես վարսեցի անբուժելի դաժան վերք։

ՅԱՍՈՆ

Բայց նաև դու պիտ չարչարվե՞ս, նույն տանջանքին մասնակից։

ՄԵԴԵԱ.

Թո՛ղ, որ լինի։ Մինչ քաղցրատեսիլ է ինձ համար չարչարանքն,
Երբ դու բնավ էլ ինձ ծաղրել չես կարող։

ՅԱՍՈՆ

Խե՛ղճ զավակներ, ո՛րքան ատոր կին է եղել ձեր մայրն, ավա՛ղ,
Կամ ո՞րպիսի զարհուրելի մի ճիվաղ։

ՄԵԴԵԱ.

Խե՛ղճ զավակներ, կործանվեցիք դուք դավանքով մի՛այն ձեր հոր։

ՅԱՍՈՆ

Բայց իմ ձեռքով չեն սպանված,—դահիճը չեմ ես նրանց։

ՄԵԴԵԱ.

Քո վիտությամբ այլև քո նո՞ղկ ամուսնությամբ նորապսուտ։

ՅԱՍՈՆ

Այնքան էիր քո մահիճը դու համարում գերադաս,
Որ այդ առթիվ սպանեցիր։

ՄԵԴԵԱ.

Կարո՞ղ ես դու կնոջ համար անարգանքը մահիճի
Փոքր, աննշան վիշտ համարել։

ՅԱՍՈՆ

Այդ արդար է կանանց մասին բարեսիրտ,—
— Մինչ դու, զազի՛ր, ոտից գլուխ սատ՞ր կին։

ՄԵԴԵԱ.

Գիտես, որ ճիշտ նրանք չկան.—
Իսկ քեզ համար բավական է և այդքանն,
Որ մի՞շտ, անվե՞րջ դու տանջվես։

ՅԱՍՈՆ

Գիտեմ, որ ճի՞շտ նրանք դեռ կան
Եվ պետք է միշտ քեզ հետևեն, իբրև ոգի վրեժխնդիր։

ՄԵԴԵԱ.

Մեղապարտին ճիշտ կը դատեն աստվածներն...

ՅԱՍՈՆ

Նրա՞նք, այո՞, ճիշտ կը դատեն չարադաժան քո հոգին։

ՄԵԴԵԱ.

Ատի՛ր դու ինձ։ Իսկ կծվակիծ քո խոսքերն
Կարող եմ ես արհամարհել։

ՅԱՋՈՆ

Նույնը և ես ճիշտ քո մասին։ Մեր անջատումն հեշտ կը լինի։

ՄԵԴԵԱ

Սակայն ի՞նչպես, ի՞նչ կարող եմ անել ես.
— Այդ չափազա՞նց ցանկալի է նաև ինձ։

ՅԱՋՈՆ

Տուր դիակներն իմ որդոց, որ դեթ նրանց
Ո՞ղբը անեմ և թաղեմ։

ՄԵԴԵԱ

Ո՞չ, կրկին ո՞չ,—ես դիակներն ինքըս ինձ հետ կը տանեմ
Եվ կը թաղեմ սրբազնասուրբ անտառի մեջ Հերայի,
— Լեռնակեցիկ բարձունքներում, որ իմ դառոզ թշնամին
Անդ չքանդի սուրբ գերեզմանն—
Եվ իմ որդոց քունն հավիտյան չը վրդովի։
Ես երկրի մեջ Սիզիփոսյան կը հորինեմ աստվածահայր
Ջոհաբերման նոր պաշտամունք,—իբրև քավիչ իմ կատարած
Դժբախտագույն սպանության և իմ որդոց անմեղ արյան։
Ինքըս անձամբ ես կը գնամ դեպ Էգևոս—Պանդիոնյանն,—
Որ բնակվեմ անդ՝ երկրի մեջ Էրեքթևսյան։ Իսկ դու ատո՛ր,
Մահ կընդունես խիստ չարաղետ, երբ բեկորներն Արգո նավի,—
Թափվելով ցած, քո գլուխը դաժանաբար ջախջախեն,—
Քանզի տեսար դու հեք վախճանն իմ տարաբախտ ամուսնության։

ՅԱՋՈՆ

Թո՛ղ որ, ավա՛ղ, քեզ խորտակեն վրեժխնդիր ոգիներն
Եվ դիցուհին արդարության։

ՄԵԴԵԱ

Աստվածներից ո՞վ կը ցանկա
Այժմ քեզ լսել, երդմնազա՞նց, օտարամերժ ո՞վ սրիկա։

ՅԱՋՈՆ

Ավա՜ղ, ավա՜ղ դու զազրագործ, պիղծ որդեսպան։

ՄԵԴԵԱ.

Գնա, գնա՜ դեպի պալատն, որ լավ թաղես հարսնացուիդ։

ՅԱՋՈՆ

Գնա՜մ, այո՜, սակայն մենակ և որդեզուրկ
Առանց իմ զույգ զավակների։—

ՄԵԴԵԱ.

Դու արտասուք դեռ մի թափիր,
Դեռ պիտի դա քո ծերության դառն ալևույթն, սպասի՛ր։

ՅԱՋՈՆ

Ո՜հ, զավակներ իմ սիրելի—և սրտատենչ։

ՄԵԴԵԱ.

Բայց մո՜ր համար, և ոչ քեզ։

ՅԱՋՈՆ

Ինչո՜ւ ապա սպանեցիր։

ՄԵԴԵԱ.

Որպեսզի քեզ մատնեմ դաժան տանջանքի։

ՅԱՋՈՆ

Վա՜յ ինձ, ո՞րքան ես դժբախտս, կարոտ եմ
Գեթ համբույր տալ շրթունքներին իմ որդոց։

ՄԵԴԵԱ.

Միայն հիմա՞ կարոտեցիր, միայն հիմա՞ սեր ղդացիր,
— Մինչդեռ առաջ միտք ունեիր աքսորելո՞ւ։

ՅԱՍՈՆ

Թույլ տուր հանուն աստվածների,
Որ գեթ շոյե՞մ, ձեռքով շփվեմ մարմնին նրանց նրբագույն։

ՄԵԴԵԱ.

Ո՞չ, կրկին ո՛չ։ Իզուր խոսքեր մի վատնիր։

(Մեդեան կախարդական կառքի վրա թռչում, հեռանում է)։

ՅԱՍՈՆ

Ձե՞ս հայր, արդյոք լսո՞ւմ ես դու, ինչպե՞ս ավաղ, մերժեց նա ինձ,
Ինչպես եմ ես տանջվում՝ դաժան որդեսպանիցն այդ անիծված,
Այդ ատելի և զազրագործ մայր-առյուծից։
Ո՞րքան, սակայն կարող եմ ես, ո՞րքան իմ մեջ զորություն կա,
— Մինչև վերջին շունչը իսկ՝ անմահներին կաղերսե՞մ,
Կաղաղակե՞մ, ես կը կանչեմ աստվածներին, իրրև վկա,—
— Ինչպես ահեղ մորթոտեցիր դու իմ որդոց,—ի՞նչպես անգութ
Թույլ չես տալիս ձեռք տալ նրանց դիակներին և թաղել։
Ա՜խ, երանի՞ հայր չը դարձած, ես մնայի միշտ անզավակ,
Որ գեթ երբե՞ք չը տեսնեի, ինչպես դու, մայր,
Քո ժանտ ձեռքով կործանեցիր քո հարազատ զավակներին։

(Հեռանում է)։

ԵՐԳՉԱԽՈՒՄԲ

Օլիմպոսում Ձևսն երկնատեր կատարում է շատ գործեր.
Բյուր-բյուրավոր անակնկալ գործ են վարում աստվածներն,
Ջի՛ կատարվում այն, ինչ հաստատ մեզ թվում է կատարվելիք.
Իսկ դեպի այն, ինչ մենք իրոք համարում ենք անհնար,—
Աստվածն անշուշտ գտնելու է ճանապարհ,—
Այդպես եղավ գործի վախճանն այլև այստեղ, ահավասիկ։

ԱՐԻՍՏՈՖԱՆ

Հին հունական կատակերգության ամենախոշոր դեմքը Արիստոֆանն է։ Նա գրել է 54 կոմեդիաներ, որոնցից պահպանվել է միայն 11-ը։ Դրանցից են «Հեծյալները», «Ամպերը», «Գորտերը», «Վիզիստրատա»-ն և այլն։

Արիստոֆանը ծնվել է Էտինե կղզում մոտ 450 թ. (մեր թվարկությունից առաջ), սակայն համարվել է Աթենքի քաղաքացի։ Արիստոֆանը էնդելսի բնութագրությամբ կոմեդիայի հայրն է և վառ արտահայտված տենդենցիոզ բանաստեղծ։ Արիստոֆանը կյանքին մոտենում էր դյուղական ազատ աշխատողների տեսակետից, հենց այդ դիրքերից նա քննադատում է փողային առևտրական հարաբերությունները, որոնք քայքայում էին Աթենքի պոլիսի հիմքերը։ Արիստոֆանը միաժամանակ ծաղրում է ստրկատիրական դեմոկրատիան, նա կողմնակից է «մարաթոնյան մարտիկների» դեմոկրատիային և կծու ծաղրում է Աթենքի դեմագոգներին («Հեծյալները»)։ Աթենքի դեմոկրատիայի դեմ ուղղված Արիստոֆանի քննադատությունը օգտագործվեց Աթենքի հողատիրական արիստոկրատիայի կողմից, որը նույնպես դեմ էր փողային առևտրական հարաբերություններին, սակայն այլ նպատակներ էր հետապնդում, քան Արիստոֆանը։ Արիստոֆանի յուրաքանչյուր կոմեդիան անմիջական քաղաքական նպատակ է հետապնդում։ «Հեծյալների» մեջ նա ծաղրում է Աթենքի դեմագոգներին, «Ամպերի» մեջ՝ սոփեստներին և այլն։ Արիստոֆանի գրական գործունեության երկրորդ շրջանի գործերն են՝ «Հարստություն», «Թռչունները», «Կինը ժողովրդական ժողովում» կոմեդիաները և այլն։

ՀԵԾՅԱԼՆԵՐԸ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Աբենական ժողովուրդ—*զառամյալ ծերունի*
կաշեգործ *(Կլեոն)*
Երշիկագործ *(Ագորակրիտես)*
1-ին ստրուկ *(Նիկիաս)*
2-րդ ստրուկ *(Դեմոսթենես)*
Ծառաներ
Աշխարհի հավերժահարսներ
երգչախումբ՝ 24 հեծյալներից՝ աթենական ազնվական պատանիներից

Ն Ա. Խ Ե Ր Գ Ա. Ն Ք

(Բեմի վրա ժողովրդի բնակարանը: Դռնից լալով դուրս է վազում առաջին ստուկը—Նիկիասը):

ՆԻԿԻԱՍ

Յատատատարա՜յ, յատատատարա՜յ, ա՜խ, վա՜յ ինձ։
Պաֆղագոնցուն, թող այդ նորեկ ժանտախտին,
Իր նենգությամբ՝ աստվածները կործանեն։
Այն պահից ինչ ներխուժել է նա այստեղ՝
Անպակաս ենք հայհոյանքից ու ծեծից։

(Դուրս է վազում երկրորդ ստուկը—Դեմոսթենեսը)

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Այո՛, այո՛, թող կործանեն, այն էլ դառը կործնամամբ,
Պաֆղագոնցուն նենգամիտ։

ՆԻԿԻԱՍ

(Նկատելով Դեմոսթենեսին)

Հը՛, ի՞նչպես ես ապրում դու։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Ինչպես ինքդ, հրաշալի՛։

ՆԻԿԻԱՍ

Մոտ եկ այստեղ. օլիմպիական աղեկեզ
Մի լաց ու կոծ սարքենք մենք։
(Յույց տալով, որ իբր սրինգ են նվագում)
Միու-միու, միու-միու, միու-միու։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Հերի՛ք ողբանք։ Հիմա, արդյոք, չփնտրե՞նք—
Աղատվելու մի միջոց։ Լացից սփոփանք չկա։

ՆԻԿԻԱՍ

Ուրեմն, ասա՛, ի՞նչ անենք։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Դու՛ ասա։

ՆԻԿԻԱՍ

Ջէ՛, դու՛ ասա,
Որպեսզի ես չվիճեմ։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Կա Ջևսը, ոչ մի բառ։

ՆԻԿԻԱՍ

Խոսքերիդ մեջ, աղաչում եմ, խոստովանքս զարդարիր։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Դե՛, համարձակ, իսկ ես հետո կխոսեմ։

ՆԻԿԻԱՍ

Վախենում եմ։ Եվ ոչ մի կերպ չեմ կարող
Գտնել խոսքեր եվրիպիդյան թե՛ սահուն,

Թե՛ ճարտար ու թե կոկիկ։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Ա՜խ, ո՛չ.
Եվրիպիդյան շաղգամը չի հարկավոր.
Մտածի՛ր, ո՞նց ազատվենք մեր տիրոջից։

ՆԻԿԻԱՍ

Որ այդպես է՝ ասա «կը-վենք»։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Ահա՛ ասում եմ.—«կը-վենք»։

ՆԻԿԻԱՍ

Այժմ մի վանկ ավելացրու
«Ծըլ» «կը»-ից և «վենք»-ից առաջ։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

«Ծըլ» «կը»-ից և «վենք»-ից առաջ։

ՆԻԿԻԱՍ

Դե այժմ կապիր
«Կը-վենք» հետո «ծըլ» շուտասելուվով։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Կը-վենք, ծըլ-կը-վենք, ծլկվե՜նք։

ՆԻԿԻԱՍ

Այդպես. և ի՞նչ, հավանեցի՞ր հնարքս։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Իհարկե, բայց վախենում եմ իմ կաշվից։

ՆԻԿԻԱՍ

Իսկ ինչո՞ւ։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Որովհետև գանակոծված մարդու կաշին պլոկվում է։

(Երկուսն էլ մտախոհ լռում են)

ՆԻԿԻԱՍ

Լավ չի՞ լինի, որ փորձության ժամին մենք
Ծունկը իջնենք սեղանի դեմ սրբազան։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Ո՞ւմ սեղանի։ Չլինի՞ թե աստվածների սեղանին։
Հավատո՞ւմ ես դու նրանց։

ՆԻԿԻԱՍ

Հավատո՛ւմ եմ. բա ի՞նչպես։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Ինչի՞ համար։

ՆԻԿԻԱՍ

Նրա համար. ո՞վ հիմա՛ր.
Որքան որ ես զգվելի եմ նրանց աչքում՝
Նշանակում է աստվածներն ապրում են։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Իրավ ես դու։ Բայց և այնպես մի՞թե ուրիշ ելք չկա։
Չպատմե՞նք մենք հանդիսատես բազմության
Գործի մասին մենք այսօր։

ՆԻԿԻԱՍ

Հարշալի է։ Միայն մի բան մենք խնդրենք։

Թող ասեն մեզ անկեղծորեն թե դո՞հ են
Մեր խաղից ու պատմածից։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Այսպիսով ես սկսում եմ։

(Հանդիսատեսներին)

Մի տեր ունենք, բակլա կրծող, կռվարար.
Ինքը մարդ չէ. մարդու էլ չի հավանում։
Իսկ այդ մարդը աթենական խուլ ծեր է։
Անցյալ անգամ սորուկ գնեց իր համար,
Մի կաշեգործ պաֆղագոնցու, իսկ սա էլ
Սոսկալի մի խաբեբա է և ծայրահեղ սրիկա։
Շուտով ծերի բնությքն առավ,
Ինչպես ասում են՝ մտավ աչքը մարդու.
Եվ սկսեց ստիպել, որ ծերունին
Ամեն ինչին «այո՛» ասի և այսպես
Քաղցր խոսքերով կերակրել նենգաբար,
Գլուխն յուղել ու քծնել.—«Ո՜վ ժողովուրդ,
Բավ է որքան չաըչարվես ու դառն դատես,
Հանգստացի՛ր, վեր կաց ոտքի քեֆ արա,
Ահա՛, վեցրու երեք լոմա, և արդյոք,
Չե՞ս հրամայի քեզ համեղ ընթրիք պատրաստել»։
Այսպես, ուրեմն, հանդգնորեն խլելով
Կերակուրը, որ եփել էինք երկուսս,
Մեր տիրոջը մատուցեց։
Հենց սրանից մի քանի օր առաջ էր,
Ես Լակոնյան Փիլոսոսում մի թանձր
Խաշիլ էի եփել, սակայն այդ փուչը
Վրա պրծավ, խլեց ինձնից եփածըս
Եվ հրամցրեց մեր պարոնին։
Մեզ չի թողնում սպասարկենք մեր տիրոջ,
Բոլորիս դեն է շպրտում, և ինքը
Տիրոջ վրա գառան մորթի է քաշում,
Ոնց որ հովհար, որպեսզի հենց դրանով

Հռետորներին ամբողջ ուժով հալածեն։
Գուշակություն է անում, իսկ մեր տերը
Խեղթացել ու բթացել է ողջ տեղով։
Դրա համար կաշեգործը ուրախ է,
Եվ ինչո՞ւ չէ. իսկ մեզ ամեն, ամեն տեղ
Բամբասում է, գանակոծում և ապա
Բակով ամբողջ վազվզում է և ոռնում
Ջեռքն ընկածից էլ կաշառք է պահանջում։
«Դուք հո տեսա՞ք, տեսա՞ք, ինչպես Փիլոսին
Դնքսեցին այսօր հենց իմ պատճառով.
Թե հնազանդ չլինեք դուք բոլորդ,
Ծեծից միայն կլինեք շուն շանսատակ»։
Ու մենք տալիս ենք նրան ա՛յն բոլորը
Ինչ ուզում է. թե չէ՝ այնպես ծոծրակիդ
Կհասցնի, որ աչքերըդ կմթնեն
Եվ ոչխարի մորթու մեջ, ողջ աշխարհը կտեսնես։

(Նիկիասին)

Իսկ այժմ մենք նորից պիտի մտածենք
Թե ինչ կերպով ապաստարան ճարենք մեզ։

ՆԻԿԻԱՍ

Ի՞նչ կերպ. այո՞։ Նորից այնպես, սիրելիս։
Ժամանակն է ծլկվենք։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Պաֆղագոնցուց ոչ մի բան չես թաքցնի,—
Նա տեսնում է, օ՜ նա գիտե ամեն ինչ։
Նա մի ոտքով Փիլոսոսին է հենվել,
Իսկ մյուսով՝ Ժողովին։
Ջուվելով այսպես։

(Լայն չռում է ոտքերը)։

Հաստ հետույքը միշտ կռացած է ներքև,
Ջեռքերն այնտեղ, որտեղ կա բիրտ կողոպուտ։

ՆԻԿԻԱՍ

Ուրեմն, այսպես. մեր միակ ելքն է—մեռնել։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Սակայն, ի՞նչպես։
Թե մեռնում ենք՝ վայել կերպով պիտ մեռնենք։

ՆԻԿԻԱՍ

(Մտախոհ)

Ախար ինչպե՞ս։ Վայել կերպո՞վ. Իսկ հետո՞։
Լավ է ցուլի արյուն խմենք։ Հրաշալի միտք.
Մահերի մեջ Թեմիստոկլեսի մահն եմ ես
Նախանձելի համարում։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Ոչ թե ցուլի արյուն, օ՜, ոչ, այլ գինի,
Որ գլուխները քո խելացի մտածեն։

ՆԻԿԻԱՍ

Դե՛, տե՛ս, գինի՞։ Քեզ մի բաժակ գինի տան՝
Էլ խելացի մտքե՞ր գլուխդ կգան։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

(Դեպի հանդիսականները)

Տեսնո՞ւմ եք ինչ լավն է մեր այս անալի
Ջրի դողդոջը, որ արձակ-համարձակ
Գինին այսօր վնասակար անվանեց։
Մի՞թե գինուց կա ավելի օգտակար
Մի այլ խմիչք։ Եվ նա ով որ հարբած է՝
Առատաձեռն, հարուստ է ու երջանիկ,
Ամեն բանում հնարամիտ ու ճարպի՛կ,

Դժվարությունը հաղթող է։ Շո՛ւտ արա,
Քարշ տուր այստեղ մի շիշ գինի, դե շուտ, շուտ,
Ցողենք ուղիղն ու խելացի մտածենք։

ՆԻԿԻԱՍ

Բայց ի՞նչ օգուտ հիմա գինի խմելուց։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Օգուտ, անշուշտ, կլինի։ Դե, շուտ գնա՛։

(Նիկիասը վազելազ գնում է)

Ու խմելուց հետո չորս կողմ շաղ կտամ
Սուր սուր մտքեր ու սողանցներ, պլաններ։

(Շուռ գալով տեսնում է, գալիս է Նիկիասը՝ գինու տիկն ու բասը բերելով)։

ՆԻԿԻԱՍ

Հաջողվեց մի շիշ դուրս քաշել, և ոչ ոք
Չնկատեց արարքս։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Նույնիսկ լինքը պաֆղագոնցին չտեսավ։

ՆԻԿԻԱՍ

Խոմփում էր կաշիների վրա պառկած,
Քաղցր լիզած և գաթանները խժռած։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Որ այդպես է՝ լցրու մի թաս փրփրուն։

ՆԻԿԻԱՍ

(Լցնում է)։

Խմի՛ր, սակայն չմոռանաս աղոթել

Գինին տվող դևերին։

(Տալիս է բասը Դեմոսթենեսին)

Ծծիր, ծծիր Պրամանյան բարի դևերի ընծան։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

(Շուռ տալով բասը)

Օ՜, բարի դև, քեզ փառք հայտնությունս։

ՆԻԿԻԱՍ

Էլ ի՞նչ, ասա՛։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Պաֆլագոնցուց գուշակարանը շորթիր,
Խորը քնով քնած է նա, և իսկույն,
Վազքով եկ։

ՆԻԿԻԱՍ

Վազում եմ։

(Ինքն իրեն)

Ա՜խ միայն թե բարի դևը մի չար խաղ
Հանկարծ չխաղա ինձ հետ։

(Վազում է)

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

(Դեպի հանդիսականները)

Իսկ ես, մինչ այդ, դեռ մի կում էլ կլցնեմ
Հանուն նրա, որ խելացի մտածեմ։

(Խմում է։ Նիկիասը վերադառնում է աղյուսիկներով)

ՆԻԿԻԱՍ

Պաֆլագոնցին մի այնպիսի խոմփոց է բարձրացրել,

Մի թունդ որոտ, այդ աղմուկի տակ ահա
Թոցըրի ես դուշակարանը նրա,
Որ ամենից խնամքով էր պահպանում։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Ա՜յ թե կտրիճն ես, Նիկիա՛ս,
Տուր ինձ կարդամ, մինչ դու մի թաս գինի տուր։

(վերցնում է աղյուսիկը)

Տեսնես, թե ի՛նչ է գրված։

(կարդում է)

Օ՜, իմաստությո՛ւն։

(Նիկիասին)

Դե տո՛ւր, շուտ տուր ինձ թասը։

ՆԻԿԻԱՍ

(թասը տալով)

Ա՛ռ. և ասա գրերը ի՞նչ են ասում։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

(թասը շուռ տալով)

Ապա մի հատ էլ լցրու։

ՆԻԿԻԱՍ

Իրոք. այդպես էլ գրվա՞ծ է.
«Ապա մի հատ էլ լցրու...»։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

(Շարունակում է կարդալ)

Մե՞ծ է Բակիզը։

ՆԻԿԻԱՍ

Ի՞նչ է որ։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Նորից մի թաս էլ լցրու։

ՆԻԿԻԱՍ

Չէ՞ որ Բակիդն էլ սիրում է հիշեցնել
Գինին ու թասը...

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Ա՜խ, դու ատոր պաֆղագոնցի՛, մի՞թե դու
Դողում էիր, թե քո մասին ինչ պիտի
Աղյուսակն այս դուշակի։

ՆԻԿԻԱՍ

Հապա՞։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Ինչպես պիտի նա խորտակվի՝ ահա թե
Ինչի մասին է խոսքը։

ՆԻԿԻԱՍ

Իսկ ի՞նչպես։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

(Հանդիսավոր)

Դե ամեն ինչ նշված է շատ պարզորոշ.—
Կանեփաթել վաճառողն հենց սկզբից
Կգա, շիտակ կկանգնի մեր քաղաքի
Կառավարման ղեկի մոտ։

ՆԻԿԻԱՍ

Մեկն արդեն կա՝ առևտրական։ Բայց հետո,

Ասա՛, էլ ո՞վ է գալու։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Մյուսը, և ոչխարների մեծ առևտուր պիտ անի։

ՆԻԿԻԱՍ

Առևտրակա՞ն։ Դրա հետ ի՞նչ է լինելու։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Մինչև ուրիշը չգտնեն—առավել
Նողկալիին։ Կառավարի նա պիտի
Սակայն հետո տապալվելու է, այո՛։
Ապա կգա պաֆղագոնցին կաշեգործ
Աղմկարար, կռվարարը, ճչանը՝
Ինչպես ջրաղացը չորս կողմը դղրդացնող։

ՆԻԿԻԱՍ

Փուլ է գալու ոչխարանոցն, ուրեմն,
Կաշեգործի՞ց է վիճակված այդ բանը։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Ոնց տեսնում ես։

ՆԻԿԻԱՍ

Զախորդությո՞ւն։ Եվ մի՞թե մենք չպիտի
Կարողանանք գեթ մի ուրիշը գտնել։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Կա և չորրորդը՝ արհեստով շատ ընտիր։

ՆԻԿԻԱՍ

Իսկ ո՞վ է նա, արդյոք ո՞վ։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Ասե՞մ։

ՆԻԿԻԱՍ

Ասա՛, խնդրում եմ։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Կգա ինքը—երշիկագործն և ապա
Կխողխողի կաշեգործին...

ՆԻԿԻԱՍ

Երշիկագո՞րծ։ Օ՜, աստվածնե՛ր, արհեստը հրաշալի է։
Բայց ո՞րտեղից, ո՞րտեղից
Երշիկագործ մենք գտնենք։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Կգտնե՛նք։

(Բեմն է մտնում երշիկագործը, ձեռին երշիկներով ափսե).

Նայի՛ր, ահա, ինքը շուկա է մտնում
Կամքով՝ նշված իվերուատ։

(Բղավում է)

Է՛յ, սիրելիս։
Երշիկագործ, շուտով այստեղ բարձրացիր։
Դու աշխարհ ես եկել՝ թե մեզ, թե երկիրը փրկելու։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Ձեզ ի՞նչ է պետք, ձեզ հետ ի՞նչ է պատահել։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Լսի՛ր դու ինձ բարեկամ,
Մի պահ դու քո բախտի մասին լսիր ինձ։

(Երշիկագործը մոտենում է բեմին)

ՆԻԿԻԱՍ

Ձեռքի ափսեն թող վայր դնի։ Դու նրան
Դուշակությունը կարդա, որ գիտենա
Ապագայի մասին իրեն վիճակված։
Ես կգնամ կաշեգործին հսկելու։

(Գնում է)

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

(երշիկագործին)

Նախ այդ բեռըդ մի կողմ դիր։

(Երշիկագործը ցած է դնում ծաւերոցը)

Այժմ ողջունիր հողին և մեր աստուածներին սրբազան։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

(Ողջույն տալով)

Ահա՛, սակայն հետո ի՞նչ։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Բարև՛, այրդ երանելի։
Այսօր՝ ոչինչ, սակայն վաղը՝ ամեն ինչ։
Ողջո՞ւյն քեզ, ո՛վ տիրակալըդ մեր փարթամ
Փառաբանված Աթենքի։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Բարեկա՛մս, աղիք չունե՞ս լվանալու։
Եվ չե՞ս ուզում երշիկ առնել, դու ինչո՞ւ
Ծաղրում ես ինձ, ծանակում։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Աղիքն այստեղ ի՞նչ դործ ունի։ Նայի՛ր, տե՛ս։

(Յույց է տալիս ձրաձ հանդիսականներին)

Տեսնո՞ւմ ես դու մարդիկ այնտեղ, ներքևում։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Դե, իհարկե, տեսնում եմ։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Այդ ամենին պիտի տիրես ահավասիկ,—
Ե՛վ շուկային, և՛ ժողովին, և՛ ծովին.
Պիտի շուտ տաս և խորհուրդը, և սափրես
Սորատեզները բոլոր և պիտի դու
Կարգ սահմանես և դատես և կույսերին
Առաջնորդես Պրիտանի։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Այդ ամենը ե՞ս։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Բոլորը դո՛ւ։
Բայց դեռ բոլորը չես տեսնում տակավին.
Ապա այստեղ քիչ բարձրացիր, արկղի վրա,
Այժմ տեսնո՞ւմ ես թե ծով, թե կղզիներ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Պարզ տեսնում եմ ամեն ինչ։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Նավակներ ու նավեր լցված ապրանքո՞վ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Եվ նավակներն եմ տեսնում։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Այժմ ասա՛, երջանիկ չե՞ս դու միթե։
Քո աջ աչքը հիմա գցիր կարիային,
Կարթագենին՝ ձախ աչքըդ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Էս հո աչքերըս դուրս կընկնեն իր տեղից։
Եվ, հիրավի, շլդիկ բախտ է վիճակվելու ինձ այսօր։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Այդ ամենը դու պիտի որ վաճառես.
Գուշակությունն ասում է, որ կլինի
Ինչ որ ուզես։ Հզո՛ր մարդ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Սակայն ի՞նչպես.
Երշիկագործից ես պիտի մա՞րդ դառնամ։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Նրա համա՛ր ես լինելու մեծավոր,
Քանզի ատոր լպիրշ ես և կռվարար,
Աղմկարար և ճչան։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Իմ մասին մեծ նման կարծիք չունիմ դեռ։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Օ՜, ասովածնե՛ր, ինչո՞ւ ոչ մեծ կարծիքի։
Գուցե կարծես, թե դովական բա՞ն ունես,
Կամ ցեղի՞ց դու ազնիվ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Օ՜, այդ մեկը արդեն՝ ո՛չ։
Ավելի շուտ անպետքներից եմ սերում։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Բախտավոր ես, սիրելիս։
Ես տեսնում եմ, որ աջողակ ես ծնվել։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Աղավնյա՛կս, կիսագրագետ մարդ եմ ես,
Կարդում եմ, բայց հազար վա՜յ էն կարդալուն։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Ցավն էլ այդ է։ Թե ուզում ես լինել դու
Մի դեմագոգ՝ պիտի լինես անգրագետ։
Քաղաքացին՝ օրինավոր և ազնիվ
Դեմագոգ չէ։ Դա մի գործ է, որ սադում է
Տգետներին, անպետքներին։ Դե, լսի՛ր,
Գուշակությունը թեբեյան թե ինչ է
Ազդարարում ահավասիկ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Արդյոք ի՞նչ։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Ջևսը վկա, ամեն ինչ լավ է գնում։

(կարդում է աղյուսակիկը)

«Այն օրը, երբ չար մորթապաշտ կորամագիլ արծիվը
Մահվան կռիվ պիտի մղի վիշապի հետ արնահոտ,
Պաֆլագոնցու ուտեստները պիտի թթվեն և հոտեն,
Երշիկագործ տոհմին այնժամ կշնորհեն աստվածներն
Իշխանություն, փառք ու պատիվ։ Մինչդեռ տոհմը տենչում է
Ինչպես առաջ՝ լոկ երշիկի վաճառումով զբաղվել...»։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Ասա՛, ի՞նչ եմ անելու ես։ Սովորեցրու բարեկամ։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

«Արծիվ մորթապա՛շտ».
Մականունն է պաֆղագոնցու, իմացի՛ր։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Հետո ասիր «կորամագիլ», իսկ ինչո՞ւ։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Չէ՞ որ իր կոր ճիրաններով ամեն ինչ
Դեպի իրեն է քաշում։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Իսկ վիշապը ինչացո՞ւ է, հասկացրո՛ւ։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Դա արդեն շատ հեշտ է իսկույն հասկանալ։
Վիշապն՝ երկար, դե երշիկն էլ երկար է։
«Արնախում»-ը—արյունալի երշիկն է։
Այստեղ ասված է՝ վիշապը կսպանի
Կաշեգործին և կսկսի կառավարել ինքնիշխան։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Դե քանի որ այդպես է՝ ես գո՛հ եմ շատ։
Զարմանում եմ, թե ինչպես ես քաղաքը
Կառավարեմ ինքս ինձ։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Հիանալի կկառավարես։

Այնպես արա, ինչպես ինքդ ուզում ես։
Նախ և առաջ աղա՛, հետո մանրացրու,
Լցոնը պինդ արա, խառնիր ու խառնիր,
Պղպեղ դցիր, աղ ածիր և յուղ լցրու,
Եվ քաղցրացրու գաղտագողի խոսքերով։
Ընդհանրապես դու ծնված ես մեր դլխին
Ամբոխավար լինելու։
Արբեցողի քո թավ ձայնով, ստահա՛կ,
Օժտված ես կառավարիչ դառնալու։
Իշխանություն է խոստանում բախտը քեզ։
Վերցրո՛ւ պսակն և աղոթիր չար ոգուն,
Որ օգնի քեզ ախոյաններին հաղթելու։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Իսկ ո՞րտեղից դաշնակիցներ ճարենք մենք։
Կաշեգործից հարուստները դողում են,
Աղքատներին զզվելի են ողջ արարքները նրա։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Հազար հազար հեծյալներ կան աներկյուղ.
Նրանք կօգնեն մեզ, անշուշտ։
Լավ է ընտրենք դաշնակիցներ մենք սրա՛նց,—
Դիտողներին և՛ խելացի, և՛ ազնիվ։
Գործի կանցնենք Ապոլոնն ու ես ինքս։
Մի՛ վախեցար։ Պաֆղագոնցուն չի նմանվի
Դիմակավոր դերասա՛նը։ Ա՜խ, վախեցա՛վ։
Սակայն մեկ է, նրան այդպես կճանաչեն ամենքը.
Չէ՞ որ մեզնում դիտողները ժողովրդին հասկացող։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Ա՜խ, վա՜յ մեզ, վա՜յ։ Պաֆղագոնցին է գալիս։

(Վազվզում է օրխեստրում։ Գազազած
ներս է վազում Կլեոնը)

Երդվում եմ ես աստվածներով, պիտի զղջաք ամենքդ,
Եթե հանկարծ ժողովրդի ընդդեմ վատ բան եք նյութել։

(Նկատում է բասը, որից խմում էր Դեմոսթենեսը)

Ըհը՞։ Քաղքեդոնյան բասը ինչո՞ւ է այստեղ։
Չլինի՞ թե Քաղքեդոնում դավ եք լարում ընդդեմ մեզ.
Կորեք։ Անեծք։ Մահ և արյուն դավաճաններին բոլոր։

(Աշխատում է բռնել Երշիկագործին)

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Է՛յ, դու, ետ եկ։ Ո՞ւր ես փախչում, պատվելի։
Հայրենիքը մի կործանիր, երշիկագործ սիրելի։

ԱՐԱՐ ԱՌԱՋԻՆ

ԺՈՂՈՎՈՒՐԴ

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

(Գոռում է)

Այր հեծյալնե՛ր, մեզ օգնության հասեք շուտ։
Ժամը հնչեց։ Է՛յ, դու, Սիմոն, է՛յ Պանխոխոս,
Առաջացիր աջ թևով։

(Երշիկագործին)

Արդեն գալիս են, մարտնչի՛ր, պաշտպանվի՛ր։
Ահա փոշին քուլա-քուլա ելնում է,
Օգնությունը մոտ է մեզ։
Դու համարձակ հետապնդիր թշնամուն,
Քշի՛ր, մատնիր փախուստի։

(Օրխեստր է մտնում երգչախումբը 24 հեծյալներից, բաժանված երկու կիսախմբերի)

ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱԽՄԲԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Խփե՛ք, խփեք ձիավնաս Պիծակին,
Այդ անկշտում խարիբդային, կենդանակուլ այդ սարդին։
Խփեք անպետք-անղգամին, երկու անգամ և երեք։
Օ՜, նա միայն անպիտան չէ, այլ եռակի անպիտան։
Խփեք դրան, քշեք, ծեծեք, ձաղկեցեք։
Թքեցեք ինչ մենք ենք թքում, անպատվեցեք անարգին։
Լավ նայեցեք, որ չփախչի, քանզի նա
Շատ ճարպիկ է փախչելու մեջ մանավանդ,
Ինչ էվկրատոսն, որ գլխիվայր
Ալրանոցում թաղվեց խոր։

(Հեծյալները հալածում են Կլեոնին)

ԿԼԵՈՆ

(Փախչելով)

Ավազանի՜ք, դատավորնե՜ր, բարեկամնե՜ր, արդյոք ձեզ
Ջեր սրտովը չե՞մ մեծացրել, չե՞մ սնել։
Դավադիրները ծեծում են, օգնեցե՜ք։

ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱԽՄԲԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ

(Իր ջոկատով փակում է Կլեոնի
ճանապարհը)

Ա ն տ ե պ ի ո ե մ ա

Քո արարքի համար է այդ, չէ՞ որ դու
Մեն մենակ ես խժռում բոլոր բաժիններն ընդհանուր։
Քեզ հետ ընկածի կողերը շոշափում են ինչպես թուզ,
Տեսնես, արդյոք, հասե՞լ են, թե դեռ խակ են,
Ակնկալվող քո կաշառքի համար միշտ։
Դու փնտրում ես հարուստներ, որ հիմար են,
Միամիտներ ես ընտրում դու, որ գջլես.
Խերսոնեսյան հողերից միշտ քշում, քերում դատարան,
Մի ակնթարթ՝ ոլորում ես, մեջքի վրա ես գցում,

Եվ մուրացկի տոպրակով բաց ես թողնում,
Որ թափառի աշխարհում։
Դու ամենքին նողկալի ես շատ վաղուց։

ԿԼԵՈՆ

Ինչպե՞ս, դուք է՞լ եք նեղում ինձ,
Օ՜, չէ՞ որ ինձ ձեր պատճառով են թակում,
Եվ միմիայն նրա համար, որ վաղուց
Ուզում էի արժանապատ արձանով
Ապրությունը մեծարել բոլորիդ։

ԱՎԱԳ ՀԵԹՅԱԼ

Եզրափակիչ էպիսեմա

Ահա թե ի՛նչ խորամանկն է բանսարկուն.
Տեսնո՞ւմ ես ինչ հնարեց։
Ծերունիներ է հաշվում մեզ և ուզում է նենգությամբ
Իր գլուխը ազատել։
Դե, այստեղ դու փորձի՛ր, մտի՛ր, այստեղ էլ
Պիտի ծեծվես, իսկ դենը քո կողերը
Կհամրենք մենք մեկ առ մեկ։

ԿԼԵՈՆ

(Դուրս է)

Հե՜յ։ Ժողովո՛ւրդ։ Հե՜յ, քաղաք.
Գայլերը ինձ հոշոտում են, օգնությո՜ւն։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Լավ ես գոռում, գոռոցովդ քաղաքն իրար ես խառնում։

ԿԼԵՈՆ

Գոռոցովդս քեզ փախուստի կմատնեմ։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

(Ցույց տալով երշիկագործին,
որ կանգնած է մի կողմ)

Թե գոռոցով գերազանցես դու նրան,
Առաջնության դափնին՝ քեզ։
Իսկ եթե քեզ պոռոտությամբ նա անցնի՝
Այն ժամանակ պսակը՝ մեզ։

ԿԼԵՈՆ

Ես հո դրան մաքսանենգ եմ համարում.
Պելոպոնեսում երշիկ է նա վաճառում գաղտնաբար։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Տոպրակավո՛ր։ Պրիտանիայում դատարկ փորով ես շրջում,
Որպեսզի այն ուտելիքով սեղմես, սեղմես լիք լցրած։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Եվ արգելված ուտելիքով՝ հացով, ճարպով, երշիկով,
Մի բան, որը Պերիկլեսը չի տեսել։

ԿԼԵՈՆ

(Գոռում է)

Մի օր հանկարծ կատակես ոռնոցից։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

(Գոռում է)

Ես ավելի բարձր պիտի մռնչամ։

ԿԼԵՈՆ

(Ավելի բարձր)

Հենց որ գոռամ՝ կպայթես։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Թե մի փոքր ծպտուն հանեմ՝ կճաքես։

ԿԼԵՈՆ

Կմերկացնեմ քեզ որպես մի դավաճան։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Կդնեմ քեզ կոճղի տակ։

ԿԼԵՈՆ

Անպատկառությամբ պիտի քեզ խլացնեմ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Պարծենկոտությամբ պիտի քեզ շրջանցեմ։

ԿԼԵՈՆ

Նայիր աչքերիս և ապա նոր շարժիր։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Է, ինչ կա որ, սոված եմ ես շուկայում։

ԿԼԵՈՆ

Կճզմեմ քեզ, եթե մի քիչ բան ճանկես։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Հենց կռկռաս՝ կթքեմ քո երեսին։

ԿԼԵՈՆ

Գողանում եմ, խոստովանում եմ ես այդ.
Դու սիրտ չունես խոստովանել համարձակ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Ջևսը վկա՝ կարող եմ ես ճարպկորեն
Գողանալ և կոծկըվել։

ԿԼԵՈՆ

Մի խուզարկիր գրպանները ուրիշի։

(Սաստեցնող ձիշով)

Կհաղորդեմ ես քրմերին,
Որ ճրագույով սրբազան,
Առևտուր ես անում, բայց դից
Տաճանորդ չես վճարում։

ԱՐԱՐ ԵՐԿՐՈՐԴ

ՓՈՔՐ ԱԳՈՆ

ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱԽՈՒՄԲ

ՆԵՐԲՈՂ

Դու նողկալի, և ատելի աղմկարար անամոթ.
Քո գործերով, որ հանդուգն են՝ լցված են
Աշխարհը և Պնիքսոսը լիուլի։—
Դատարաններն ու շարքերը, խանութները,
Ու շուկաները բոլոր...
Մեծաքերա՛ն խրտվիլակ.
Վրդովեցիր մեր քաղաքը հիմնիվեր.
Եվ ամեն ինչ շուռ տվեցիր գլխիվայր.
Պայծառ Աթենքը խլացրիր ոռնոցով.
Քո դաշնակցին, ձվի նման, պաշտպանում ես
Սակայն ժայռի վրայից։

ԿԼԵՈՆ

Գիտեմ, գիտեմ ես աստառը հայհոյանքի ձեր բոլոր։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Եվ եթե դու աստառները չիմանաս,
Նշանակում է չգիտեմ ես լցոնը երշիկի։
Վարպետ ես դու փտած կաշին լավի տեղակ վաճառել,
Խարդախությամբ՝ թեք ձևելով՝ տալիս ես
Գեղջուկներին միամիտ, որ չհագած
Մեկ էլ տեսար՝ նոր կոշիկը քրքրվեց։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Ինձ հետ էլ նա օրերս մի խաղ խաղաց.
Ծանոթներս և տանեցիք սկսեցին ծիծաղել,
Մինչև Պերգաս դեռ չհասած՝ ես արդեն
Քայլում էի կոշիկներով հնամաշ։

ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱԽՈՒՄԲ

Մի՞թե դու հենց առաջին իսկ օրերից
Հիմար չէիր, չէիր կոպիտ, անամոթ.
Չկա ամոթ, չկա պատիվ բնավին
Քեզ պես ճչան, աղմկարար մարդու մոտ։
Կողոպտում ես հունձն օտարի, առաջինն ես թատրոնում.
Հիպոդամի խղճուկ տունը նստած ես դու վերևում.
Բայց ի լուր մեզ՝ գոնվեց մի ուրիշը այս երկնի տակ.
Քեզանից էլ առավել նենգ և առավել խորամանկ։—
Անազնիվ է և անամոթ,
Հնարքների մեջ խիստ ուժեղ։

ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱԽՄԲԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Այժմ, աղավնյակս, ցույց տուր մեզ, թե ինչ պտուղ ես դարձել։
Թող բոլորը գիտենան, որ գրող չարժե ուսումը։

Էպիսեմա.

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Թե ինչպիսին է այս մարդը, իսկույն ես ձեզ կպատմեմ։

ԿԼԵՈՆ

Թույլ չե՞ս տա, որ առաջինը ես խոսեմ։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Թե դժգոհ է՝ ավելացրու՝ «Գողի ծնունդ»։

ԿԼԵՈՆ

Չե՞ս թողնի, որ ես խոսեմ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Ո՛չ, չեմ թողնի։

ԿԼԵՈՆ

(Հարձակվում է նրա վրա)

Ո՛չ, թույլ կտաս։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Տեսնում ես, որ թույլ չեմ տալիս ահավասիկ։
Առաջինը ես կխոսեմ և կկռվեմ առաջին։

(Ծեծկվում են։ Ծեծում են կլեոնին)

ԿԼԵՈՆ

Բարկությունից պատրաստ եմ ես պայթելու։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

(Մոլեգնած)

Աստվածներով երդվում եմ, որ չեմ թողնի։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Ա՛խ, ինչո՞ւ։ Այս մեկը թույլ տուր,
Թող որ բարով տրաքվի։

ԿԼԵՈՆ

Հանդուգն, ի՞նչպես սիրտ արեցիր
Վեճի մտնել ինձ հետ դու։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Ոչ վատ դիտեմ այնպես ասել՝ ինչպես դու։

ԿԼԵՈՆ

Ասել կարող ես. սակայն ես կուզեի
Նայել թեկուզ՝ ինչպես ես դու այդ թարմ գործը սկսում։
Գիտե՞ս, արդյոք, ինչպիսին ես, քեզ նման
Շատախոսները հոտերով են հաշվում։
Շահել ես դու մի միամիտ օտարից,
Գաղթականից կամ թե խոսքեր սովորել.
Որ դիշերով անգիր արած՝ մռմռում է փողոցում.
Ծանոթների ականջները խլացնելով.
Եվ չեռացրած ջուր խմելով օրնիբուն
Մտածում է «հռետո՛ր եմ».
Ես հռետոր չեմ, հիմա՛ր։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Ի՞նչ թունախոտ ես խմել դու,
Որ քաղաքի աչքերին թոզ փչեցիր.
Ի՞նչ են լռել այս բոլորը, և սոսկ դու ես գոռգոռում։

ԿԼԵՈՆ

Իսկ ո՞րտեղից ինձ հավասարը կճարես, բարեկամ,
Որը, փորը թնդացնելով, ապուխտի հետ միասին,
Կոնծելով մի թաս թունդ գինի հուպ կտա
Ջորավարներին Պիլոսյան մեծարված։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Իսկ ես ճաքելու չափ կուտեմ թարմ խորտիկ,

Կճաքեմ լյարդ ուտելով,
Եվ մի պուտուկ ապուր գլուխը քաշած՝
Ջլվացված՝ կխճըճեմ շատախոսներին բոլոր
Եվ կգզեմ Նիկիասին։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Հավանում եմ քո խոսքերը, բայց ճաշակովս չէ,
Երբ մեն-մենակ ես պատրաստվում դու համեղ ապուրին վերջ տալ։

ԿԼԵՈՆ

Տափակաձուկ ուտես թեկուզ, բայց մեկ է
Միլեթցիներին հաղթել չես կարող դու։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Իսկ ես դոնդող որ խփշտեմ, իմացիր
Ուզած չափով անգամ հանքեր կգտնեմ։

ԿԼԵՈՆ

Դեռ սպասի՛ր. կներխուժեմ ես խորհուրդ
Աղեկտուր, զիլ կոռնամ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Դու սպասիր. պապա թե ոչ աղիքներըդ,
Փորոտիքըդ կթափեմ։

ԿԼԵՈՆ

Քո հետույքին քացի տալով՝ դռնից դուրս կշպրտեմ։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

(Հարձակվում է նրա վրա)

Ուրեմն և ի՞նձ, աստվածներով երդվում եմ։

(Բռնում է երշիկագործի կողմը: Ծեծկվոց: Նորից ծեծում են Կլեոնին)

ԿԼԵՈՆ

(Գոռում է)

Կաղապարո՛ւմ կքամեմ քեզ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

(Գոռում է)

Դեպի վանդակ քարշ կտամ։

ԿԼԵՈՆ

(Ավելի բարձր)

Մեջքիդ կաշին կքերթեմ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

(Ավելի ուժեղ)

Քեզ փուչ ծծուկ կդարձընեմ, անպիտա՛ն։

ԿԼԵՈՆ

Քեզ կոշիկի միջադակի պես կբացեմ, իմացիր։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Քեզ կբրդեմ լցոնի պես աղիքի։

ԿԼԵՈՆ

Թարթիչներըդ կպոկոտեմ, ճակատիդ կբուացընեմ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Քեզնից աղցան կշինեմ։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Այո՛, վկա է աստված.
Խոհարարների պես մենք պիտի ցից խրենք,
Մսոտ լեզուն կպոկենք,

Խոզի կոկորդը կքրքրենք,
Հաստ հետույքը ղույդ կանեենք,
Ու կնայենք,
Փչացած չի՞ արդյոք կինճը։

ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱԽՈՒՄԲ

Անտոդա

Բոցավառ բոցից կրակ գտնվեց,
Կռվից, որ իջավ՝
Ավելի տաք էր, ավելի հանդուգն.
Թեթև էր հաշիվն և իմ հաղթության
ժամն արդեն մոտ է։ Թույլ է թշնամին։
Վայր իջնել նրան թույլ մի տաք երբեք,
Ուժգին հարձակվեք և ուժգին խփեք.
Ամրոցում արդեն անցքեր են բացվել։
Եթե նետվում ես դու տաք գրոհի՝ եղիր համարձակ.
Եվ հաղթանակը քոնը կլինի, ես այդ քաջ գիտեմ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Եվ այսպես՝ նա անարգ վախկոտ է եղել,
Բայց անվեհեր էր թվում մարդկանց միամիտ.
Ուր չէր ցանել՝ այնտեղ հունձ էր անում նա։
Ահա խուրձերն, որ շռվա էր քարշ տալիս,
Փառեցնում էր, որ թանկ գնով վաճառի։

ԿԼԵՈՆ

Ձեմ երկնչում սպառնանքի, քանի խորհուրդը ապրում
Եվ ժողովուրդն հիմարաբար ժողովներում քնում է։

ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱԽՈՒՄԲ

Այ քեզ լպիրշ և աներես.
Արարքներից ու մեղքերից
Իր երեսը դեռ կարմիր է
Բայց խոսում է առանց վախի, ամոթի։

Եթե դու ինձ զզվելի չես՝ դրամայում խաղալու,
Եվ հարբեցող Կրատինեսին կոշիկի տակ դառնալու.
Ապա՝ լսիր.
«Դու ասես մի մեղու ես բարձր թռած,
Ամեն փնջից հավաքում մի մի աոք»։
Ինչպես բռնել ես պատառը կուլ տալու՝
Այնպես էլ ետ կզկռտաս դառնորեն։
Այն դեպքում ես կերգեմ մի բան քեզ համար.—
«Խնդության ժամին դու մինչև խորին հատակը խմիր»։

ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱԽՄԲԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Իմ հարևանն—իղոսների տղան քաղցած ծերուկ է,
Նա էլ ուրախ ձայն է տալիս «Օ՜, Բաքոս, օ՜, Բրոմոս»։

Անտեպիռեմա

ԿԼԵՈՆ

Երդվում եմ ես աստվածներով, որ դուք ինձ
Երբևէ չեք գերազանցի պոռոտորեն խոսելում.
Ապա թե ոչ՝ արժանի չեմ ողջակեզի փսորին։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Ես էլ երդվում եմ թակով և մսագործների քացիով,
Որ դեռ փոքրուց ստացել եմ շատ ու շատ,
Գերազանց եմ ես քեզանից որպես լափրշ-անամոթ,
Ապա թե ոչ ստացվում է, որ ես ձրի փշրանքով
Այսպես սնվել և քաջ-կորիճ եմ դարձել։

ԿԼԵՈՆ

Փշրանքներով դու սնվել ես որպես շուն,
Եվ ի՞նչպես ես կռվի մտնում դու ինձ հետ,
Ես որ ունեմ դեռ իսկական շան գլուխ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Երդվում եմ ձեզ Ջևսով, որ ես մանկուց էի սրիկա.
Ճաշեփներին խաբում էի. «Տղերք, ապա նայեցեք,
Միծեռնակը գարուն բերեց»։ Նրանք նայում են չուված
Իսկ ես ինքս՝ խորովածը շորթում էի ափսեից։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Տեսնում եմ, որ դու կարիճ ես և քո արարքը ճարպիկ.
Ճիշտ է առածը՝ դու մինչև գարուն՝ եղինջ ես կրծել։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Այս էլ ասեմ՝ գաղտնի էի աշխատում.
Պատահում էր՝ միսը արագ՝ դնում էի իմ տակը,
Ապա երդում էի ուտում, որ իբր թե չեմ տեսել։
Պնիքսոսից մի շատախոս գործի վրա ինձ բռնեց
Այն ժամանակ դուշակեց, որ պիտի դառնամ դեմագոգ։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Ջախջախվեց. նա հասկացավ նշաններից այդպիսի,
Որ գողացար և ուրացար, միսը տակըդ պահելով։

ԿԼԵՈՆ

Գոռոզությունը քո միջից դուրս կհանեմ և ապա
Կսլանամ ինչ փոթորիկ դղրդացող և ահեղ.
Որ մոլեգնած մռնչում է երկիրն ու ծովը ցնցում։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Է՛, ի՛նչ արած։ Ես էլ նստած երշիկ կայմին շատ հանգիստ,
Ուրախ առաջ կլողամ, իսկ քեզ վրա ես թքել եմ։

(Նստելով ափսեի վրա ձևացնելով, թե նավի վրա է)։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

(Նման խաղ անելով)

Ես քեզ հետ եմ, թե ջուր լցվի՝ դուրս կթափեմ ես արագ։

ԿԼԵՈՆ

Երդվում եմ ես Դեմետրայով քեզ սազում է տաղանդը,
Որ սակայն գողացել ես աթենացի մարդկանցից։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

(Հրամանն է տալիս)

Առագաստները սեղմեցեք, պինդ կապերով կապեցեք,
Կլեոնի մատնությունից փոթորկի հոտ է փչում։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Պոտիդեոսից տասը տաղանդ դու շորթել ես, ես գիտեմ.

ԿԼԵՈՆ

Է՜, ի՛նչ կա որ։

(Կիսաձայն)

Իսկ մի տաղանդ ստանալով՝ ինձ խոսք կտա՞ս լռելու։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Համաձայն է, այդպիսին է նա միշտ էլ։

(Երշիկագործին)

Առագաստը դու կարող ես բարձրացնել.
Քամին արդեն մեղմացավ։

ԿԼԵՈՆ

Հարյուր տաղանդ ես հաշվեցի, ահա՛ առ,
Կվճարես դատարանին, որ գործն այսքան ուշացավ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Դու գողության համար կտաս—հինգ հարյուր,
Ինը հարյուր՝ դասալքության համար։

ԿԼԵՈՆ

Այո՛, այո, քո մեջ եռում է նորից
Ալքմեոնների արյունը չարաշուք։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Իսկ ես կասեմ, որ ապուպապդ ազնիվ
Պալատական է եղել։

ԿԼԵՈՆ

Ո՞ւմ, համբերիր։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

«Մորթիները» կնոջ Հիպիոսի։

ԿԼԵՈՆ

Դո՛ւ, անպիտա՛ն։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Դո՛ւ, անամո՛թ։

(Նետվում են ծեծկրտուքի)

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Դատի՛ր դրան։

ԿԼԵՈՆ

Է՛յ, է՛յ, է՛յ, է՛յ։
Ինձ կսպանեն, օգնությո՛ւն։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Խփիր, խփիր, փորին խփիր համարձակ,
Պոկիր մազերը, հարվածիր անխնա,
Աղիքներով խփիր դու,
Որ փորի մեջ աղիքները ճքճքան։

(Կլեոնին ծեծում են)

ԱՎԱԳ ՀԵՏՅԱԼ

(Բարձրաձալով գետնից)

Երդվում եմ ես Դեմետրայով բացահայտ են բոլորը.
Հայտնի է ինձ ինչ որ սարքում եք այստեղ,
Այն ամենը, ինչ որ այստեղ տաշում եք ու կպցնում։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Իսկ մենք, ի՞նչ է, չգիտե՞նք թե
Ինչ ես անում Արգոսում։

(Դեպի հանդիսատեսները)

Ոչ թե դաշինք է կապում նա այնտեղ,
Այլ գաղտնաբար առուծախով է զբաղված։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

(Երշիկագործին, շշուկով)։

Փորձա՛նք, փորձա՛նք։ Դու հյուանուբյուն չգիտես։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Ինչ որ այնտեղ լեհեմում եք՝ հայտնի է։—
Գերիների մասին այնտեղ դուք դաշինք եք դարբնում։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Հյուսնին պիտի պատասխանենք դարբնի պես։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Եվ նորանոր դավեր եք դուք պատրաստում.
Դու ինձ ոսկով ու արծաթով չես գնի.
Բարեկամներ մի ուղարկիր դու ինձ մոտ.
Աթենացոց կպատմեմ ես քո գործերի մասին ողջ։

ԿԼԵՈՆ

Իսկ ես ուղիղ ճանապարհով դեպի Խորհուրդ կվազեմ.
Ու բոլորիդ կմեղադրեմ որպես դավադիրների,
Որ գիշերով հավաքներ եք գումարում,
Մահափորձ եք պատրաստում պարսիկներին դաշնակցած
Այն ամենի, ինչ որ ինքներդ մակարդել եք Բեովտիայում։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Իսկ մերանը թա՞նկ է արդյոք Բեովտիայում։

ԿԼԵՈՆ

Երդվում եմ ես Հերակլեսով, որ վառոդում քեզ կայրեմ։

(Կատաղությամբ փախչում է)

ԽՄԲԻ Ա.Վ.Ա.Գ.Ը

(Երշիկագործին)

Իսկ ինքըդ քո քաջությունը և հնարքը գործի դիր.
Կտեսնենք մենք, թե ոնց էիր մսի կաոր թոցընում։
Վազ տուր Խորհուրդը հենց հիմա
Կաշեգործի եռևից,
Ամբաստանում է ամենքիս հենց որ այնտեղ է թռչում,
Խլացուցիչ աղաղակ և ոռնոցներ է բարձրացնում։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Վազում եմ։ Բայց դանակներն ու երշիկը,
Ողջ վաստակս աճա թողնում եմ այստեղ։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

(Մի բաս գինի տալով)

Յուղի՛ր սրանով կոկորդըդ, որպեսզի
Բամբասանքից ճարպկորեն խուսափես։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

(Խմում է)

Բարի խորհո՛ւրդ։ Դասախարակ ես դու փորձված։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Այս էլ կուլ տուր։

(Սխտոր է տալիս նրան)

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Իսկ սա ինչո՞ւ համար է։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Նրա համար խիզախ լինես որպեսզի։
Դե, վազ տուր։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Վազեցի։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Սակայն հիշիր։—
Կծի՛ր, չանգռի՛ր, զրպարտի՛ր, և կատարը
Կտցահարած՝ վերադարձիր շտապով։

(Երշիկագործը հեռանում է շտապ։
Դեմոսթենեսը մտնում է տուն)

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐ

ՄԵԾ ՊԱՐՍԿԱՍՔԱՍ

ԽՄԲԻ Ա.ՎԱԳԸ

Գնա աստծով և քաջությունդդ գործիր
Ի խնդություն բոլորիս։ Թող Ձևսը քեզ
Պաշտպան կանգնի, և հաղթելով թշնամուն՝
Մարտից շուտով վերադարձիր դու մեզ մոտ,
Հաղթանակի դափնիներով ծանրաբեռն։

(Դեպի հանդիսականները)

Լսողությունը ձեր դարձրեք դեպի մեզ,
Մենք և կերգենք և կպարենք ձեզ համար։
Ինչպես առաջ՝ մարզում էիք լսողություն ու թև միտք—
Արվեստների մեջ այլոց։
Եթե անցած տարիներին, պոետներից վաղեմի,
Պարով երգով՝ ուզենար ձեր ներկայությունն հանդես գալ՝
Դժվարությամբ կուզեինք մենք, թեև պոետն արժանի է,
Որ խորապես իրեն սիրեն և ծառայեն հաճությամբ։
Պոետն այդ մեր բարեկամն է, մեր թշնամյաց՝ թշնամի
Արդարություն է պաշտպանում անհողդողդ,
Ու քաջաբար մարտ է նետվում Տիֆոնասի հետ հնչեղ։
Զարմանք է նա պատճառում մեզ. ինչո՞ւ պետիցն Աթենքի
Չի՛ խնդրել նա դերասաններ, երգեցիկ խումբ նրանց հետ։
Բայց ահա ինչ հաճեց խնդրել այսօր նա մեր միջոցով.—

Որ կոմեդիան փուչ կատակ չէ, այլ օգտավետ աշխատանք,
Ինքնահաճ է կոմեդիայի Մուսան, այո՛, պարզ է շատ,
Թեև շատերն են ձգտում ջերմ նրա քնքշանքը վայելել՝
Բայց նա միայն քչերին է լինում մոտ ու բարեհաճ։
Նա գիտե մեր սիրո արժեքն, որ կարճատև է, ավա՜ղ,
Հենց գալիս է ծերությունը՝ մարդուն շուտ եք մոռանում,
Այնպես, ինչպես որ Մագնեթը մոռացված է ձեր կողմից,
Ճաշակելով անպատվություն՝ իր ծերական մազերով։—
Թեև հաղթեց նա երգեցիկ խմբերին մեր թշնամու,
Թեև երգում և լիգիական քնարով էր նվագում,
Թռչնի նման ճովողում էր և բզզում էր մեղվի պես,
Կռկռում էր ինչ ուրախ գորտ, բայց ի՞նչ օգուտ դրանցից,
Հենց որ եկավ ծերությունը՝ ջահելությունը ցնդեց,
Տեսողությունը թուլացավ և ձեռքերը թալկացան։
Իսկ Կրատինո՞սը վշտալի, նա, որ փքված էր փառքից,
Մարգ ու դաշտով սլանում էր—հոսանքի պես շաչելով.
Չինարիներ ու կաղնիներ արմատահան անելով՝
Ախոյաններն ընկնում էին ինչ թփուտները փոքրիկ։
Միայն նրա երգերն էին խնջույքներում լսվում միշտ,—
Թզենու և խաբեության և հիմների մասին հաղթ։
Ինչո՞ւ այժմ չեք խնայում տխմարին այդ շատախոս,
Երբ կիթառից սաթը ընկավ, եղջյուրները ճաքեցին,
Նվ այժմ ահա թափառում է որպես թշվառ մի ծերուկ.
Նվ. հարբեցող Կոնիասի պես՝ խեղճ մեռնում է ծարավից։
Բայց չէ՞ որ նա արժանի է ի նշան իր հաղթության՝
Պրիտանեում քեֆ անելու օրերի պես վաղեմի,
Պատվավոր տեղ դրավելու առջևում, քովը Դիոնեսի մոտ։
Կրատեսը չէ՞, որ ձեզանից վիշտ է կրել ու տանջանք,
Թեև ոչ ճոխ ճաշկերույթով՝ խնդացնում էր բոլորիդ,
Թավալվելու չափ անել է ձեզ իր ճոռան ճառերով,
Սակայն նա դիմացավ նա մերթ գովք ու սուլոց հնձելով.
Այսպես՝ պոետը վախեցավ և մտածում էր սակայն
Թե նախքան ղեկը խլելը, պիտի լինել թիավար,
Լավ թիավար և հետո էլ քաջ նավավար սրատես,
Որ քմահաճ քամիների բնությունը հասկանա,
Հետո ուժեղ, պինդ բազուկով նավը ուղղի ու տանի։—

Ուսաի և նա, իր բնույթով և խելացի և համեստ,
Եվ անգոռոզ, առանց հոգսի կոմեդիայով դուրս կգա
Դեպի ծովը։ Դե բարձրացրեք ուրախ ճողփյուն համերաշխ,
Ուրախ զարկեցեք թիերը, որպեսզի
Լենեական աղմուկները հրճվալի
Պարգև լինեն պոետին և նա խնդուն
Ու գոհ գնա,
Շողացնելով ճաճանչափայլ ճաղատը։

Ա. ՈՒԱ.ՋԻՆ ԿԻՍԱՀՈՒՄԲ

Տե՛ր նժույգների, քեզ դուր է գալիս,
Քառաձիերի ուրախ խրխինջը, մեծդ Պոսեյդոն,
Եվ պղնձաձույլ ծանր զնգոցը հաղթ ամբակների.
Եվ ղեկի ներքո, դունաղարդ ղեկի
Հանած փրփուրը նավերի միշտ հաղթ.
Եվ ջահելների փարթամ խմբերը,
Հաղթակառքերի վրա սիրում ես
Վառվռուն, կրքոտ գեռնողներին միշտ։
Սունոսը սուրբ է, քեզ համար սուրբ է ափը Հերքոսի
Մարդ մեր շուրջպարն ահեղ եռատամը բռնած ձեռքիդ.
Քրոնոսի զավակ և սաստիկ արքա դու Դիլփիննների.
Ֆորմիոնին հար սիրելի ես դու,
Աթենքի համար ողջ աստվածներից ինքըդ առավել
Սուրբ և պատվելի։

Ա. ՈՒԱ.ՋԻՆ ԿԻՍԱՀՈՒՄԲ

Էպիռեմա.

Գովաբանել ենք ուզում մենք մեր քաջ պապ և հայրերին,
Փառքը քաղաքի և ապա ծածկոցն անմահ Տիրուհու.
Որոնք, նավերով մարտեր վարեցին, հետիոտ կռվեցին.
Եվ անմահացրին քաղաքի անունն իրենց հաղթական.
Թշնամու ուժը չէին հաշվում մեր պապերը կռվող,
Մոլի սրտերում կար հաստատ վճիռ—կռվել և հաղթել.
Իսկ երբ թեքվում էին մարտի մեջ, նրանք խիստ հմուտ,
Լոկ փոշին էին թափ տալիս, իբրև ներքև չեն ընկել,

Եվ հաղթում էին։ Զորավարները այդ տարիներին
Հյուրասիրություն չէին աղերսում Պրիտանեյում,
Իսկ հիմա, ավա՜ղ, զորավարները պարգև են խնդրում,
Որպեսզի կռվեն։ Իսկ մենք ուրախ ենք մեր երկրի համար,—
Մեր հայրենիքի համար բարձրացնել և նիզակ և սուր,
Առանց պարգևի ակնկալության. քանզի կռվից ետ
Մենք հանգիստ կառնենք տարաժամերից և աղետներից,
Մեր գանգուրներով՝ թեկուզ և ըմբոստ՝ կսիրվենք ձեզնից։

ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱԵՈՒՄԲ

Կարկուտ արգելող ով կույսըդ Պալլաս
Մենք քեզ ենք կանչում, լսիր մեր ձայնը.
Սուրբ է քո հողը և աշխարհում այս
Չկան առավել սրասայր սուսեր
Եվ պռեաններ, որ ու քաղցր են ու պարզ։
Իջիր քո գահից։ Եվ եղիր մեզ հետ
Արշավներում և բոլոր մարտերում,
Ով հավերժական ուղեկցուհիդ մեր.—
Հաղթանակն է գալիս մեզ մոտ. ահա քույր ընկերուհին.
Թշնամիների ընդդեմ թող ելնի մեզ հետ ապստամբ.
Հիմա, ով Պալլաս, իջիր, հայտնվիր,
Մենք պիտի հաղթենք ճակատամարտում,
Եվ հաղթանակներ դու մեզ նվիրիր
Նոր հաղթանակներ՝ ինչ առաջներում։

ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱԽՄԲԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Անապիռեմա

Ուզում ենք գովել մենք մեր ձիերին,— բարեկամներին.
Նրանք արժանի են ամեն գովքի, քանզի մարտերում
Խիզախություն և քաջություն ենք մենք միասին արել.
Բայց փառաբանենք քաջությունները ոչ թե ցամաքում
Այլ նավակների վրա բարձած, երբ լող էին տալիս
Հորդ ալիքներում, երբ որ բաժակներն առան արշավի,
Ապա վերցրին նաև թիերը, ու սոխ ու սխտոր,
Ասես, մարդկանց պես, և լողում էին և զիլ խրխնջում։

«Ի՜հ-հի, վերցրեք համերաշխորեն, սեղմեցեք ուժգին
Եվ մի վախենաք. թիերըդ շարժիր, թիիր դու, Սավրաս»։
Եվ ափ դուրս ելան հենց Կորնթոսում, բանակատեղում
Նորակոչիկներն այնտեղ սմբակով հողը փորեցին,
Ծղնոտ բերեցին, բայց երեքնուկը մոռացել էին։
Ջրերի խորքից խեցգետին էին բռնում և ուտում.
Ֆեորն ասում է.—Թե խեցգետինը զիլ բացագանչեց.
«Պոսեյդո՜ն, աղե՜տ։ Ի՞նչ պիտի անենք, զի հեծյալներից
Ազատում չկա ոչ ջրում, ոչ էլ նույնիսկ ցամաքում»։

ԱՐԱՐ ՁՈՐՐՈՐԴ

(Պսակը գլխին մտնում է երշիկագործը)

Ա.Վ.Ա.Գ ՀԵՔԻԱԼ

Ողջո՜ւյն քեզ, ո՛վ սիրելի և քաջահաղթ մարդդ դու,
Քո վիճակը քիչ անհանգիստ չարավ մեզ,
Իսկ քանի որ վերադարձար ողջ-առողջ
Ասա մեզ, թե մարտը ի՞նչպես վարեցիր դու Խորհրդում։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Ի՞նչպես պիտի լիներ, ահա.
Օկել եմ ես Խորհրդի գլուխը բերելով։

Ա.ՌԱՋԻՆ ԿԻՍԱԽՈՒՄԲ

Գովերգ

Հիմա արդեն մեզ բոլորիս
Հնչեց ժամը ցնծության։
Հրաշալի ես խոսում դու,
Բայց գործերըդ գեղեցիկ են խոսքերիցդ քո բոլոր։
Իսկ հիմա տաք կուվի ընթացքը պատմիր։
Պատրաստ եմ ես երկար ճամփա անցնելու
Որ քո պատմածը լսեմ։ Դե, շտապիր, ուրեմն,
Բարեկամս, որ մենք խնդանք հաղթանակով քո տարած։

Էպիռեմա.

Օ՜, հիրավի միջադեպը արժանի է պատմել ձեզ։
Վազեվազ ես իսկույն հասա կաշեգործի եռանից։
Գալով Խորհուրդ՝ դղրդացող խոսքերի
Մի հորդ հեղեղ թափեցի ես դավաճան
Հեծյալների վրա, այնտեղ, մերկացնելով վերից վար,
Խոսքըս ժայռեր էր շուռ տալիս,
Վախեցնելով, սոսկմկելով հավատացրի բոլորին։
Իսկ Խորհուրդը նման թթու պատմություններ լսելով՝
Իր հոնքերը կիտեց ահեղ, և բերանը ծռեց իր,
Նստել էր նա մանանեխից էլ կծու...
Հենց որ տեսա, որ Խորհուրդը խճճվել է ամենը,
Եվ խաբված է չարաչար, ես հանդուգն
Հնարքներով սկսեցի իմ աղերսանքը այսպես.—
«Օ՜ չարքեր դուք, սրիկաներ դուք խարդախ,
Դու, Դուրինդազ, խաբեբաներ դուք չնչին,
Դու, Շուկա, իմ դաստիարակդ, ահավասիկ,
Լցրեք մեջըս հանդգնություն, դարձրեք ճառըս հնչեղ,
Եվ տվեք ինձ ձայն ահեղ ու անամոթ»։
Այսպես ահա ճառում էի, երբ աջից
Հանկարծակի դղրդաց մի տղամարդ
Եվ սեղմվեց։ Այդ նշանը բարության
Ակնածությամբ ընդունեցի։ Եվ վանդակը
Եռևի իր մասովն այսպես սեղմեցի և ոռնացի
Ինչքան ուժ կար։ «Լսեցե՜ք ինձ, ես բարի լուր եմ բերել։
Ուզում եմ ձեզ պատմել. թե երբ պատերազմը փուլ եկավ
Հենց մեզ վրա, այդ օրվանից՝ ես էժան
Տառեխ երբեք չեմ տեսել դեռ շուկայում»։
Այստեղ նրանց դեմքերն իսկույն պարզվեցին—
Ու ես, կարծես, պսակավոր դարձա բարի լուրերով։
Այնժամ գաղտնի մի առաջարկ մտցրի.—
«Որպեսզի մենք մի գրոշով գնենք տասնյակ տառեխներ՝
Պետք է բոլոր բրուտների կճուճները գրավել»։
Ծափահարել սկսեցին ով նստած էր Խորհրդում,

Բերանները լայն բաց արած՝ մոխիկ էին տալիս ինձ։
Կաշեգործը տեսնում էր այս։ Այստեղ արդեն հասկացավ,
Թե խորհրդի անդամներին սիրաշահի ինչ ճառով։
Ու մտցրեց այսպիսի մի առաջարկ.
«Քաղաքացինե՛ր, ի նշան այս լուրերին բարեբաստ,
Հարյուր հատ հորթ պիտի զոհել Աթենասին տիրուհի»։
Այստեղ խորհուրդը վերստին թեք նայեց ինձ ողորմած,
Բայց ես նրան թույլ չտվի, որ ինձ հաղթի թրիքով։
Ես նրանից առաջ անցա հորթերի
Նախատեսած երկու հարյուր գլուխով.
Դեռ ի պատիվ Արտեմիսի՝ հազար այծ
Առաջարկեցի որ մորթեն, այծը, որ մի դրոշով
Գնելուց ետ՝ հարյուրներով ձեռք կզարկեն վաճառել։
Հավանությամբ թեքվեց խորհուրդը իմ կողմ,
Եվ թույլ թվեց տխմարություն այնպիսի,
Որ պահնորդները, ուժ առած, շրպտեցին նրան դուրս։
Իսկ խորհրդի անդամները վեր ոստնեցին տեղերից
Եվ տառեխի մասին թունդ վեճ բացեցին։
Իսկ Կլեոնը խնդրում էր նրանց մի քիչ սպասել.
«Լսեցե՛ք դուք Լակեդեմոնից արդ եկած դեսպանին,
Խաղաղության առաջարկներ է բերել»։
Սրանք ոռնացին ահարկու. — «Օ՜, ոչ, երբե՛ք, բարեկամ,
Թշնամիներն իմացել են, մեր տառեխը էժան է
Դրա համար հաշտության եղը են փնտրում։—
Մեզ հաշտություն հարկավոր չէ,
Շարունակվի պատերազմը թող նորից։
Պրեստանեցինե՛ր, ցրել իսկույն խորհուրդը»։
Նրանք այս ու այն կողմերով լարի վրա ցատկոտեցին,
Ոռնացին և ուրախացան, իսկ ես, օգուտ քաղելով,
Հենց խորհրդից իսկույն շուկա վազեցի.
Եվ գնեցի ինչքան այնտեղ կանաչեղեն ու սոխ կար։
Իսկ երբ նրանք փնտրում էին համեմունք՝
Որ տառեխը վայելեին՝ նրանց ձրի բաշխեցի։
Այստեղ նրանք շնորհակալություն հայտնելով՝
Հետս էին և շնչասպառ լինելով
Քծնելով ու գովք երգելով ցրվեցին։

Ահա այսպես, մի բուռ սոխ ու կանաչով,
Ես խորհուրդը նվաճեցի ոլորված ու կապկապված։

ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱԽՈՒՄԲ

Անտոդա

Ի՞նչ աստղով մարդ, դու ամեն ինչը հաջող
Կատարեցիր հմտորեն ու ճարպկաբար.
Ճշգրտորեն գտավ սրիկան՝ սրիկայագույն ներհակին։
Բանսարկության մեջ վարպետ ես դու հմուտ.
Խարդախության մեջ մարդված ու համարձակ,
Շողոքորթության մեջ ուժեղ առավել.
Իսկ հիմա լուռ՝ խոհեր առողջ, խելամիտ,
Թե ինչպես դու պիտի կռվես այսուհետ
Եվ հուսալի դաշնակից
Մեր մեջ գտնես—առաջվա պես և դարձես։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Անտեպիռեմա

Ահա ինքը պաֆլագոնցին է գալիս,
Կատաղությունից եռալով ու բերանից փրփուր թափելով,
Ուր որ է ինձ կուլ է տալու։ Ա՜յ քեզ հրեշ։

(Մոլեգնած ներս է բնկնում Կլեոնը)

ԿԼԵՈՆ

Թող տեղն ու տեղը կործանվիմ,
Թե վաղեմի հնարքով իմ խելամիտ
Չկործանեմ քեզ իսպառ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

(Թռչկոտելով և ծամածռելով)

Միծաղում եմ սպառնանքիդ, գովքի վրա քո դատարկ.
Տե՛ս, պարում եմ, թռչկոտում եմ, գլխի վրա եմ քայլում։

ԿԼԵՈՆ

Թող չապրեմ, ես Դեմետրայով եմ երդվում,
Եթե անգամ քեզ կուլ տամ՝ չեմ տրաքվի։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Չե՛ս տրաքվի։ Ես ինքս քեզ կուռցընեմ.
Այնուհետև թեկուզ պայթեմ, դու կոկորդումս կմնաս։

ԿԼԵՈՆ

Պիլոսեսյան մեծարանքով դու կկորչես, երդվում եմ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

«Մեծարանքո՞վ»։ Իսկ թե հանկարծ ընկնես դու
Առաջին իսկ շարքից դեպի ետին շարքը, իբրև մի
Պատվազուրկ մարդ, այն ժամանակ ի՞նչ կանես։

ԿԼԵՈՆ

Ջևսը վկա՝ ես քեզ ամուր կաղապարում կգամեմ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

(Դեպի հանդիսատեսները)

Կատաղել է։ Ասա՛, ինչո՞վ քեզ սնել,
Արդյոք. ինչո՞վ զվարճացնել, գուցե փողի քսակո՞վ։

ԿԼԵՈՆ

Եղունգներով փորոտիքդ դուրս կքաշեմ, սրիկա՛։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Իսկ ես այն կերն եմ, որը դու Պրիտանեո՞ւմ լափեցիր։

ԿԼԵՈՆ

Ոտից գլուխ կմերկացնեմ, թող ժողովուրդը դատե։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Իսկ ես ինքըս՝ քեզ երեքտակ կհյուսեմ։

ԿԼԵՈՆ

Ժողովուրդը քեզ չի լսի, շան լակո՛տ.
Կհիմարացնեմ ես նրան, եթե կամքըս ուզենա։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Ժողովրդի վրա շա՞տ ես դու հենվում։

ԿԼԵՈՆ

Նրան սնում, պահում եմ և օրորում։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Եվ ճիշտ, նրան դայակի պես կերակրում ես, զվխիլ,
Մինչև պատառը ծամելը, երեք քառորդն իսկապես
Կուլ ես տալիս, իսկ մանկանը լոկ փշրանքները թողնում։

ԿԼԵՈՆ

Երդվում եմ ես աստվածներով, հմուտ եմ այդ բանի մեջ,
Որ վեր ու վար, ժողովրդին, ինչպես ուզեմ՝ շուռ կտա՛մ։

ԵՐՇԻԿԱԳՈՐՕ

Է, հետո ի՞նչ։ Ծանոթ եմ ես և այդպիսի վարպետի։

ԿԼԵՈՆ

Ջմռռանաս, որ խորհրդում, սուտ ասեցիր իմ մասին։
Ապա գնանք ժողովրդի մոտ իսկույն։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Ի՞նչ կա որ, ես համաձայն եմ. դե գնա՛նք։
Սակայն ինչու կանգնեցիր դու։ Չէ՞ որ մեզ չեն արգելում։

(Երկուսով մոտենում են ժողովրդի բնակարաններին)

ԿԼԵՈՆ

(Ծեծում է դուռը)

Օ՜, դո՛ւրս արի, ժողովուրդ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Օ՜, դո՛ւրս արի, ժողովուրդ։
Շուտով այստեղ, ժողովրդիկ աղավնյակ։

(Լուսամուտում երևում է ժողովուրդը,
ալեհեր, զառամյալ ծերունի)

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Ո՞վ է այնտեղ բղավում։ Դուք դռնից հեռու չեք գնա։

ԿԼԵՈՆ

Յած եկ այստեղ, և կտեսնես՝ վիրավորված ինչպե՜ս։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

(Երևում է տաճ միջի դռներում)

Ո՞վ է արդյոք քեզ ծեծում իմ պաֆղագոնցի սիրեցյալ։

ԿԼԵՈՆ

(Ցույց է տալիս երշիկագործին և խմբին)

Ահա՜, սա՛,
Ե՛վ ջահելները, և ողջը քո պատճառով։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Ինչո՞ւ համար։

ԿԼԵՈՆ

Նրա՛ համար, որ սրտանց քեզ փայփայում եմ և սիրում։

Իսկ դու ո՞վ ես։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Ո՞վ եմ ինքըս։— Ախոյա՛նն եմ ես նրա.
Քեզ վաղուց եմ սիրում և քեզ վաղուց եմ
Ուզում այնպես քաջի նման ծառայել,
Լինել ազնիվ, այնպես, ինչպես քաղաքացին քո շիտակ։
Բայց Կլեոնը խանգարում է ամեն տեղ։
Չէ՞ որ ինքըդ շատ ես նման տղաներին փայփայված,
Ազնիվներին քշում, վանում ես հեռու։—
Սակայն հետո՝ մոմագործին, կաշեգործին և կաշի
Դաբաղողին ու քերթողին ուրախությամբ ես տրվում։

ԿԼԵՈՆ

Միշտ եղել եմ ժողովրդին օգտակար։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Դո՛։ Իսկ ինչո՞վ. ասա ինձ։

ԿԼԵՈՆ

Ի՞նչ թե ինչով։ Սարսաւեգներն երբ վախեցան Պիլոսում,
Գերիներին քարշ ավեցի ես ինքս։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Իսկ ես նույնպես թափառելով՝ խանութից
Գողացա մի աման, որը ուրիշի ձեռքն էր խառնել։

ԿԼԵՈՆ

(ժողովրդին)

Իմ ժողովո՛ւրդ, իսկույն ժողով գումարիր,

Եվ կտեսնես ով է, որ քեզ բոցավառ
Սիրով սիրում։ Այնուհետև քո դատաստանը արա։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Այո՛, դատիր, հրաշալի է, միայն ո՛չ թե Պնիկսոսում։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Օ՜, ոչ. ատյանը կլինի Պնիկսոսում,
Ինչպես հնուց է սահմանված։ Դե, գնանք։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

(Ինքն իրեն)

Կորա՜, կորա՜ ես թշվառս։ Ախր ծերուկն այնպես է՝
Որքան որ տանը խելամիտ է, սակայն
Հենց որ այնտեղ՝ նստոտում է քարերին՝
Սկսում է հորանջել և ադռավներ համրել լուռ։

(Գնում են օրխեստրի կողմը։
Ժողովուրդը տեղավորվում է
աստիճաններին վրա)

ԱՐԱՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՄԵԾ ԱԳՈՆ.

ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱԽՈՒՄԲ

ԳՈՎԵՐԳ

Առագաստներն այժմ պարզած՝ դուրս պիտի գաս դեպի ծով։
Եղիր ահեղ ու ռազմատենչ,
Քո խոսքի մեջ՝ աննահանջ.
Թշնամին միշտ խորամանկ է ու ճարպիկ.
Նա կփորձե անանցանելի շավիղներ անց կենալ,
Որպեսզի դու նրան ջարդես՝
Ապա սուրա նրա վրա շեշտակի և անվրեպ։

Միայն զգո՜ւշ։ Եվ նախքան նա կպատրաստվի
Գրոհ տալու քեզ վրա,
Կառթաձողին ու կառքերը և դելփիններըը պահիր
Եվ պատրաստիր քո ճոպանված մակույկը։

ԿԼԵՈՆ

Էպիռեմա.

Կույս Աթենաս տիրուհուն ես կաղոթեմ, որ պահում է
Այս քաղաքն ու գետինքը։
Նթե իրոք ծառայությունները իմ մեծ են
Աթենական ժողովրդի հանդեպ իմ,
Լեսիկլուսին, Սալաբակիին և Կեննայիին հավասար՝
Ապա իզուր, Պրետանեում ինչպես
Հյուրասիրեն պիտի ինձ։
Իսկ եթե քեզ թշնամի եմ, քո փոխարեն չեմ կռվում
Շատերի դեմ մեն-միայնակ. ապա թող,
Կաշե փոկեր կտրեն ինձնից,
Ջիու փորքաշ կտրատեն։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Իմ ժողովո՛ւրդ, թե թշնամի եմ ես քեզ,
Թող ինձ կտոր-կտոր բրդեն, եփեն, երշիկ լցնեն ինձ.
Իսկ եթե դու չես հավատում իմ խոսքին՝
Թող ինձ ձեռքիս ափսեի մեջ աղկեն, հունցեն պանրի հետ
Եվ դարձընեն ձիթաբլիթ,
Ապա կարթով մսագործական քարշ տան ինձ՝
Կիրամիկում թաղելու։

ԿԼԵՈՆ

Ո՞վ ժողովո՛ւրդ։ Ո՞վ կարող է ինձանից
Էլ ավելի քեզ սիրել մի ուրիշ մարդ.
Չէ՞ որ ինքս, այն պահից ինչ, նստած եմ քո խորհրդում՝

Միշտ լսրել եմ քո գանձարանը փողով։
Ես սովալլուկ՝ ուրիշներին խեղդում էի, վախեցնում,
Կողոպտում ու ցանցում էի, չէի խղճում ոչ ոքի,
Որովհետև ուզում էի սիրաշահել քեզ միայն։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Ով ժողովո՛ւրդ։ Դրա մեջ չկա նշույլ քաջության։
Ես էլ քեզ պես կծառայեմ, այլոց քթի ճիշտ տակից
Փախցընելով պատառը ես՝ կասեմ՝ «կե՛ր, օ՜, սիրելիս»։
Իսկ որ նա քեզ թշնամի է, կապացուցեմ ես իսկույն։
Ախովախիդ՝ ուրախ է նա, թքելու մեջ մի հատիկ։
Դու, որ մարական ղորքը ետ մղեցիր—
Մարաթոնի դաշտերում և հաղթանակով պսակված՝
Կտակեցիր գոռոզություն, դատարկ ճառեր ճռճռան,
Որ եթե կոշտ քարին նստես, նրան հոգս չի պատճառում։
Սակայն նրա պես չեմ։ Ահա, սեղմած բարձ եմ բերել քեզ
Վեր կաց, ուրեմն, նստիր, ապա հանդստացիր,
Դու, որ այնքան չարչարվեցիր Սալամինի ռազմերում։

(Հրամցնում է բարձը ժողովրդին)

ԺՈՂՈՎՈՒՐԴ

(Նստում է բարձին)

Ո՞վ ես, դու այր։ Ժողովրդիս արժանավոր ժառանգորդ
Գարմոդիան չե՞ս, դու արդյոք,
Հիրավի, քո գործը վեհ է և ազնիվ է, խոսք չկա։

ԿԼԵՈՆ

(Ժողովրդին)

Ի՞նչպիսի փուչ, ողորմելի շոյանքների համար դու
Սիրեցիր այդ խաբեբային ստահակ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

(Կլեոնիին)

Ի՞նչ կա սակայն։ Ավելի վատ խայծով որսալ դու պրան
Չգտում էիր ավելի նենգ, քան թե ես։

ԿԼԵՈՆ

Նորից կրկնում եմ. օ՜, եթե գտնվի մի ուրիշ մարդ
Ավելի շատ հավատարիմ, քան թե ես,
Այն ժամանակ ինձ գլխովին մատնիր ձեռքը դու նրա։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Լա՛վ բան է սերը. չէ՞ որ դու տեսնում էիր քո աչքով,
Ութ ամիս է, ժողովուրդը պատսպարվում է ահա
Նկուղներում ու խորշերում, տակառներում և բարձր
Բներում, ուր բազեներն են ճախրում ազատ ու հպարտ.
Ժողովրդին դու չես խղճում, դու ավելի ուժգնորեն
Փորոտիքն ես քամում նրա և նեղում ես դառնությամբ։
Արքիպատեմեոսն եկավ, բայց մեր մոտից դու նրան
Արտաքսեցիր, ինչպես նաև բոլոր նրանց քշեցիր
Մործորականներին տալով նրանց վռնդեցիր անպատիվ.
Իրենք բերել էին խաղաղ առաջարկներ հաշտության։

ԿԼԵՈՆ

Այդ բոլորը նրա համար է, որպեսզի
Երշիկագործն Հելլադային տիրանա.
Գուշակությունը այդպես է վիճակել.
Արկադիայում դառնալ երդվյալ դատավոր և ստանալ
Ամեն մի օր հինգ դրոշ։
Թող ձգտի նա։ Իսկ առ այժմ ես նրան
Չեմ դժգոհում կերցընել ու խմցընել,
Օ՛, եթե ոչ ճշմարտությամբ, գեթ նենգությամբ կճարեմ
Նրա համար ամենօրյա երեք դրոշանոց պարեն։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Ո՛չ այն մասին, որ դատավոր Արկադիայում ես դառնում,
Չևսը վկա, այլ որպեսզի կարողանաս թալանել

Քաղաքներ և շորթեց նվեր ու կաշառք,
Որ ժողովուրդն պատերազմի ածխահոտում չտեսնի
Խռովորար, ստորածին արարքները քո բոլոր,
Այլ մտիկ տա քո բերանին, որ նա աղքատ ու թշվառ
Ու սովալլուկ՝ ողորմություն աղերսի։
Իսկ Կլեոնը տուն կդառնա, առաջվա պես կակսի
Քեֆեր անել, խաշեխ ուտել, ուժի գալ
Եվ մեկնըվել բակլային ու շաղգամին.
Այն ժամանակ, դու, ժողովո՛րդ, կզգաս թե
Ինչ բարիքներ է տվել քեզ, և գյուղացու պես ապա
Կառաջանաս նա վրդովված—տապալելու քեզ քվեով։
Այդ, դու, Կլեոն, ինքդ էլ գիտես, դրա համար մեզ խաբում,
Ու փոշի ես մեր աչիքների մեջ փչում։

ԿԼԵՈՆ

Ստորություն չէ՞, արդյոք, ինձ, որ սա ցեխով սևացնում,
Լկտիորեն վատաբանում է Աթենքի առաջ ողջ.
Իսկ չէ՞ որ ես ավելի շատ արժանիքներ ունեմ մեծ
Քան թե ինքը՝ Թեմիստոկլեսը սիրված։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Սրա խոսքերը լսեցեք։
Թեմիստոկլեսի՞ն ես քեզ հավասարեցնում այդպես,
Նա՛, որ քաղաքը մեր գտավ քաղցի մեջ,
Հեռանալով՝ թողեց կուշտ,
Որ ոչ մի գանձ չվերցըրեց, հյուրասիրեց բոլորիս
Ջտեսնըված ուտեստներով թանկագին։
Ահա՛։ Իսկ դո՞ւ, աթենացոց վերածում ես քաղքենի,
Դավեր նյութելու մեջ չնչին չարչիներ։
Օ՜, պարսավանք։ Եվ ահա Թեմիստոկլեսին մրցակից։
Հիշիր, որ նա վտարանքի մեջ մեռավ,
Մինչդեռ ինքըդ քո ձեռքերը քաղցրահացով ես մաքրում։

ԿԼԵՈՆ

Իմ ժողովո՛րդ։ Կրկնապատիկ վիրավորական չէ՞ ինձ

Լսել սրանից անարգանքներ այսպիսի։
Եվ ամենը նրա համար, որ սիրում եմ քեզ այդպես։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Դադարի՛ր։ Սիրտ խառնող է քո սուգ ու շիվանը հանած.
Նորից աչքիս թոզ ես փչում և ուզում ես խաբել ինձ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Այո՛, այո՛։ Ստոր կերպով նա քեզ շատ շատ է խաբել,
Հենց որ քնել ես սկսում՝ նա որսում է իր համար՝
Վերստուգման արմատները կոկորդի մեջ է խոթում
Եվ աներկյուղ շոշափում է կճուճները արքունի։

ԿԼԵՈՆ

Կղզյաս, տե՛ս։ — Կմերկացնեմ կեղծիքը
Հազարներով դու դրեցիր գրպանդ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Ի՞նչ ես ոռնում և անտեղի ջուր ծեծում։
Գերանամոթ, ստորագույն են արարքներդ բոլոր
Աթենական ժողովրդի նկատմամբ։
Կապացուցեմ։ Երդվում եմ ես Դեմետրայով, որ ինքդ
Միթիլենում կարողացար դու շորթել
Ոչ պակաս, քան տաղանդ, այն էլ չորս տասնյակ։

ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱԽՈՒՄԲ

Անտոդա

Դու Կլեոն, փրկություն ես ու բերկրանք,
Նախանձի է արժանի
Ճարտարախոս քո լեզուն.
Քաջություններ կատարելով կդառնաս
Առաջինը Աթենքում։—
Հելլադայի կղզիներում եռամանիդ ցնցելով՝

Թագավորես պիտի դու և ամեն ինչ
Պատասցնելով՝ դրամ դիզես անհաշիվ։

ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱԽՄԲԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Բայց մի թողնիր ձեռքիցդդ, նա անձնատուր է լինում.
Նրա լեզուն դու էլ ունես. նրան հաղթել հեշտ է շատ։

ԿԼԵՈՆ

Անտիպիեմա

Օ՜, ոչ, օ՜, ոչ, աղավնյակներ։ Այդ բանը շատ հեռու է։
Ես այնպիսի քաջություններ եմ թողել իմ թիկունքում,
Որ կարող եմ ոսոխներիս կոկորդները պինդ ծեփել։
Ես հանգիստ եմ, քանի դեռ
Անվթար է թեկուզ մեկը վահաններից մեր ռազմի։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Վահաններին հենց կա՛նգ առ։ Վրիպեցիր դու այստեղ։
Եթե դու մեր ժողովրդին սիրեիր՝
Վահաններին չէիր թողնի մնար անգամ մի բոնակ։

(ժողովրդին)

Իմ ժողովո՛րդ. եթե նրան ինքդդ պատժել ուզենաս,
Ոչ մի մեղք էլ չես ունենա։ Տեսնո՞ւմ ես
Նրա շուրջը բազմություն կա կաշեգործ.
Նրա կողքին թերմոնագործ մարդիկ կան,
Մորթեգործներ, չորթանագործ հիմարներ,
Եվ բոլորը մի երամի թռչուն են։
Հազիվ հոնքերդդ կիտես դու, որ մի խեցի վերցընես՝
Ուշ գիշերին վահանները կպոկեն և կնետվեն,
Կգրոհեն մեր շարքերին, որ հետո
Չկարենանք երբեք հացի մոտենալ։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Ա՜յ քեզ փորձանք։ Իրավացի ես խոսում։
Բռնակները անվթար են մնացել։

(Կլեոնին)

Է՛յ, անպիտան. քա՞նի տարի է այսպես
Ժողովրդի քթից բռնած ման ես ածում քեզ ու քեզ։

ԿԼԵՈՆ

Խենթուկս, մի լսիր դրան, դու ոչ մի տեղ չես գանի
Ավելի քեզ հավատարիմ երկրպագու, քան ես եմ։
Գիտե՞ս որքան դավեր եմ ես խափանել։
Եվ ոչ մի բան ինձնից խույս տալ չի կարող.
Հենց որ խոռվք է սկսվում՝ ես շտապ
Սուր աղմուկ եմ բարձրացնում իմ շուրջ բոլոր։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Օ՜, ճիշտ այդպես՝ ձկնորսները օձաձկներ չե՞ն քշում
Դեպի ուռկանը իրենց։ Երբ ծովածոցը խաղաղ է
Նրանք մի ձուկ որսալ անգամ չեն կարող։
Բայց հենց տիղմը վեր է ցայտում այնպես
Եվ ջրերը վրդովվում են՝ իմացիր,
Սկսում է նրան որս գալ շահավետ։
Դու ևս քո որսը պղտոր ջրերի մեջ ես որսում։
Տագնապը քեզ ձեռնտու է։ Պատասխանիր դու սակայն։
Դու կաշի քիչ չես վաճառում, բայց նվիրել ե՞ս արդյոք
Ծերուկին գեթ մի միջատակ, իր մուճակի համար տաք։
Չէ՞ որ ասում ես, թե սիրում ես նրան։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Ջևսը վկա, ոչ մի բան չի նվիրել։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Դրա համը տեսա՞ր հիմա, ժողովո՛ւրդ։
Իսկ ես ահա մի զույգ մուճակ եմ գնել։
Համեցիր, և բարով մաշես դու դրանք։

(Մուճակները նագցնում է ծերունուն)

ԿԼԵՈՆ

Դե, ասացե՛ք, անտանելի չէ՞ արդյոք,
Որ մուճակներն այդքան կարող են կյանքում։
Իսկ ես, ի՞նչ է, մոռացվա՞ծ եմ, մոռացվա՞ծ.
Ինչպես որ մոտ ժամանակներս Աթենքից
Անառակներ դուրս հանեցի՝ հանձնելով
Գրիտտոսի անպատվությանը սաստիկ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Իսկ մի՞թե դու անտանելի չես, ով հսկիչ անկողնի։
Անառակներին դուրս արիր, սակայն այն էլ երկյուղից.
Վախեցար, թե նրանք խոսքի անառակնե՞ր դուրս չգան։
Բայց նայի՛ր։ Նա արդեն ծեր է, սակայն շրջում է նորից
Այս ցրտերին առանց վերնազգեստի։
Իսկ դու նրան մի տաք բաճկոն չտվիր։
Նայիր։ Թիկնոց եմ նվիրում ես նրան.
Ով իմ սիրելի ժողովուրդ, տաքացի՛ր։

(Թիկնոց է տալիս նրան)

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Օ՜, այսպիսի խորհրդաստ բան, երդվում եմ՝
Թեմիստոկլեսը չէր տեսել, թեև վատ չէր Պիրեյը.
Այս հնարքը՝ թիկնոցի հետ՝ չէր դիջանի Պիրեյին։

ԿԼԵՈՆ

Փորձա՞նք։ Եվ դու մոլորեցնե՞ս ինձ այսպիսի նենգությամբ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Քո իսկ նենգությամբ, բարեկամ։
Քեֆի ժամանակ էլ այսպես կարիքը կլքի քեզ,
Դու կփախչես առանց մուշտակ հարցնելու։

ԿԼԵՈՆ

Քծնախոսությամբ ինձ երբեք դերազանցել չես կարող։
Ժողովո՛ւրդ իմ, ահա նվեր մի մուշտակ։

(Հանում է վրայից մուշտակը և տալիս ծերունուն)

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Ի՞նչ ձեռք բերիր, սրիկա։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Թյո՛ւ, գրողը քեզ տանի։
Մուշտակիցդ ամբողջովին կաշու վատ հոտ է փչում։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Նա դիտմամբ է այդպես արել, որ դու հոտից խեղդվես.
Առաջ էլ նա ջանում էր քեզ ոչնչացնել, հիշո՞ւմ ես,
Ինչպես եղավ՝ էժանացավ օդանուշը և ... հանկարծ։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Հիշո՛ւմ եմ ես, իհարկե, բայց ինչի՞ց էր։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Օդանուշի գինը հանկարծ իջեցրեց այն ժամանակ,
Որ նրանով կշտանային մոլուցքյամբ.
Ապա հետո, հելիումով դատավորները իրար
Գարշահոտության մեջ զոպիր՝ մեկը մեկի թույն տային։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Երդվում եմ ես աստվածներով, այդ մասին ինձ ասել էր
Շատ հասարակ Ռամիկը։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Այո՛, և դուք այդ հոտի մեջ շեկացաք։

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Եվ դա, անշուշտ, հնարել է ինքը, այս շեկ-կարմի՞րը։

ԿԼԵՈՆ

(Եշրիկագործին)

Սրիկա՛, այդ խարդախությամբ ինձ ճանկե՞լ ես ուզում դու։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

(Հանդիսավորությամբ)

Աստվածուհին ինձ հրամայեց սպանել քեզ,
Պոռոտաբան խոսքերով։

ԿԼԵՈՆ

Չես սպանի։ Իմ ժողովո՛րդ։ Խոստանում եմ ահա քեզ
Եվ կերցնել, և խմցընել, հյուրասիրել ինչ պետք է։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Ահա՛ շշով քսուկ եմ քեզ նվիրում.
Քսիր քոսին և խոցերին քո ծնկների վրայի։

(Մի սրվակ է տալիս ձեռն)

ԿԼԵՈՆ

Քո սպիտակ մազերը ես կպոկեմ,
Եվ դու կրկին երիտասարդ կդառնաս։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Ահա և քեզ նապաստակի փափուկ պոչ,
Որ դու սրբես աչքերըդ։

(Տալիս է ձեռն)

ԿԼԵՈՆ

Իմ ժողովո՛ւրդ, խնչելիս դու
Իմ մազերով քո մատները չորացրու։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Ե՛վ իմ մազերով, և՛ իմ մազերով։

(Երկուսով առաջ են խցկվում, իրար հրելով)

ԿԼԵՈՆ

Ահա կարծես եռապետարան կընկնես.
Անթիվ գանձեր կտեսնես դու, և ձեռքդ
Կընկնի նավակ մի փտած.
Սակայն և այն կարկատելու, պնդացնելու համար դու
Ջեռք չես բերի անգամ չնչին մի գրոշ։
Բայց ես դրամ կճարեմ, կքայքայեմ ամեն ինչ,
Որպեսզի դու, ամուսնությամբ, գոնե պիտույք ստանաս։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Եռում է, տես, բոցկլտում է ուշքի եկ.
Կանցնի-կերթա, բռնի՛ր, ահա դդալ տամ
Եվ կավե թաս, է՛յ, քաշիր դու ապուրի գովքը փրփուր։

(Կլեոնին դդալ է տալիս իր տոպրակից)

ԿԼԵՈՆ

Փոխարենը կհատուցես, իհարկե.
Քեզ կքամեմ ես հարկերով՝ մինչև քրտինքդ դուրս տա։
Եվ կսարքեմ գործը այնպես, որ ընկնես
Դու առաջին հարուստների ցուցակը։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Իսկ ես քեզ չեմ սպառնում,
Այլ մի բան եմ ցանկանում.

Թող ձուկն եփվի ամանում,
Դու շտապիր ժողովում
Միլեթյան գործերը վճռելու,
Տաններիս տաղանդ պոկելու,
Որ չուշանաս դու Պնիքսոս հասնելու.
Ջուկը արագ քո բերանն ես դու կոխում,
Մեկ էլ՝ բանբերն է մտնում,
Քեզ կանչում է շտապեցնում,
Վախենում ես տաղանդները բաց թողնես,
Շտապում ես տապակածը կուլ տալու.
Եվ ոտքի վրա արդեն
Խեղդվում ես ու պայթում։

ԵՐԳԵՑԻԿ ԽՈՒՄԲ

Հրաշալի է։ Աստվածներով եմ երդվում։

ԱՐԱՐ ՎԵՑԵՐՈՐԴ

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Ինձ թվում է, թե այժմ արդեն չկա ոչ մի տարակույս։
Քաղաքացի ես դու ընտիր։ Դեռ չեմ տեսել քեզ նման
Մի մարդ անգամ եռագոռոշ միաբանության ծոցում։

(Կլեոնին)

Դու էլ սիրովդ ինձ միայն բարկացրիր.
Ես տուր տված իմ մատանին, այսուհետ
Դու արդեն իմ մառանապետը չես։ Դե՛։

ԿԼԵՈՆ

(Հանձնում է մատանին)

Ինչ արած, առ, վերցրու, սակայն իմացիր,
Եթե դու ինձ չես հավատում, բայց մի ուրիշը կգա,—
Ինձնից ավելի ատորը, անպիտանը, նողկալին։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

(Ջննելով մատանին)

Ահա՛, կարծես այս մատանին իմը չէ։
Կնիքն այլ է բոլորովին։ Թե՞ արդյոք ես չեմ տեսնում։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Տուր, ե՛ս նայեմ։

(Վերցնում է մատանին)

Իսկ քո կնիքն ի՞նչպես է։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Տնաբույծ խոճկոր՝ ձիթապաղով փորագրված։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Ամենևին էլ այն չէ։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Թե խոճկոր չէ, ապա ինչ է, ուրեմն։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Շատակեր մի ձկնկուլ է, ամբիոնից բղավող։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Դժբախտությո՞ւն, դժբախտությո՞ւն։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Ինչ է որ։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Հեռուն նետիր։
Ամենևին մատանիս չէ, այլ ուրիշ.
Վերցրու և իմ մատանագիտը դարձիր։

(Տալիս է նրան իր մատի մատանին)

ԿԼԵՈՆ

Ո՛չ, ո՛չ, տեր իմ. դեռ սպասիր և լսիր
Իմ խոսքերը։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Նույնպես և իմը լսիր։

ԿԼԵՈՆ

Եթե մի քիչ էլ հավատաս դու սրան՝
Կպլոկի մերկացնելու չափ հենց քեզ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Կպլոկի նա քեզ, սակայն ո՛չ այդպես։

ԿԼԵՈՆ

Գուշակությունն իմ դիտեցիր, դու պիտի
Տիեզերքը կառավարես ալ վարդերով պսակված։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Իսկ քեզ համար կանխատեսում եմ այսպես.—
Վրադ գցած ասեղնագործ ծիրանի՝
Հետապնդել ոսկե կառքում նստածին՝
Դատարանին հանձնելու։

ԿԼԵՈՆ

Դե, ի՞նչ կա որ, քարշ տուր շտապ ամենը,
Որ ոնկնդրի տերը նրանց։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Գերազանց է։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

(Կլեոնին)

Դու էլ քոները քարշ տուր։

ԿԼԵՈՆ

Անմիջապես։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Անմիջապես։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Դե, վազիր։

ԿԼԵՈՆ և ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Մեզ համար արդեւք չկա։

(վազում են տարբեր կողմերով)

ԵՐԳԵՑԻԿ ԽՈՒՄԲ

Օդա և անօդա

Արեւի քաղցր շողերը պայծառ
Փայլում են բոլոր քաղաքացիների,
Փայլում են բոլոր հյուրերի համար՝
Անկման օրը բիրտ Կլեոնի։

Լսեցի, այսպես են բացահայտում,
Իրենց ճակատները կնճռոտելով,

Դատարանական խառնաշփոթում
Ծերունիները շատախոսելով։—

«Եթե Կլեոնը ուժ չունենար՝
Չէր երևա նա, չէր անի ոչինչ.
Մեզ համար երկու բան կա օգտակար,—
Ոչ սանդ է մեզ պետք և ոչ էլ թակիչ։

Բայց մի բանի ես զարմանում եմ դեռ
Ճարպիկությունն է նրա ձևոների.
Պատմում էին ինձ փոքրիկ տղաներ,
Որ սովորել են կողքին Կլեոնի։

Թե նա, քնարին, լոկ մի եղանակ՝
«Նվիրե՛ք»-ները շատ հեշտ յուրացրեց.
Էլ չսովորեց ուրիշ ոչ մի հանգ,
Նրա քնարը ամեն ինչ մերժեց։

Նա պատվիրեց դպրոցից տանել
Եվ բութ և հիմար տղային կողքից.
Լոկ մի եղանակ էր անգիր արել.
«Նվիրե՛ք, մի բան, բան տվեք ինձ»։

Էպիռեմա.

(Կլեոնը և Երշիկագործը ներս են վազում կապոցներով)

ԿԼԵՈՆ

Հը՞, տեսնո՞ւմ ես որքան է։ Բերածս դեռ ոդջը չէ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Օ՜ֆ, խեղճ հոգիս դուրս եկավ։ Բերածս բոլորը չէ։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Իսկ ի՞նչ կա այդտեղ։

ԿԼԵՈՆ

Գուշակարաններ։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Այդ ամբողջը գուշակարա՞ն է միթե։

ԿԼԵՈՆ

Ջարմանո՞ւմ ես։
Ես դրանցից ունեմ լիքը մի սնդուկ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Իսկ ես ամբողջ մի վերնահարկ,
Հետը լեցուն երկու մարագ։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Ցույց տուր տեսնեմ՝ ո՞մն են դրանք։

ԿԼԵՈՆ

Բաքիդեսին են պատկանում իմոնքս։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

(Հարգանքով)

Ահա թե ի՞նչ։

(Երշիկագործին)

Քեզ մոտ եղածներն ո՞մն են։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

(Առանց աչքը բարձրացնելու)

Գլադինեսին, Բաքիդեսի մեծ եղբոր։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Ինչի՞ մասին են դրանք։

ԿԼԵՈՆ

Դե՛, քաղաքի, Պիլոսի.
Մեր մասին քեզ հետ միասին,
Ուրիշ ամեն ինչի մասին։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

(Երշիկագործին)

Իսկ քոները ինչի՞ մասին։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Քաղաքի մասին ու խաշիլի,
Սպարտայի, ապա թյունիկ ձկների,
Շուկայի և խարդախ ալրավաճառների,
Մեր մասին՝ քեզ հետ միասին։

(Կլեոնին)

Հը՞, լսո՞ւմ ես։ Առ քեզ, ապա չե՞ս կծի։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Սկսում ենք։
Ձեր ունեցածն ամեն մեկդ կարդացեք.
Նույնպես և այն, ինչ իմ մասին է գրված.
(Այդ ինձ շատ դուր է գալիս),
Թե ինչպես ես արծիվի պես ճախրելու եմ երկնքով։

ԿԼԵՈՆ

Արդ. լսի՛ր ինձ և եղիր խիստ ուշադիր։

(Շուտ ու մուտ է տալիս ու կարդում հանդիսավորությամբ)

«Այժմ լսիր, էրիխֆիդա՛ս. գուշակություն Տաճարի,
Սքանչելի եռոտանուց մեծ Թևբիսը հաղորդեց
Այս պատգամը բազմիմաստ։
Նա հրամայել է քեզ պաշտել սուրբ շունը բացատում,
Շուն, որ քեզ համար մռնչում, քեզ համար է կրծոտում
Եվ կեր ճարում իր համար, որ չսատկի։
Նրա վրա գորշ ագռավները դժկամ
Պատւյա-պատւյա են գալիս ու կռկռում»։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Երդվում եմ ես Դեմետրայով, չպիտի ես հասկանամ։
Ի՞նչ գործ ունին այստեղ շունը, էրիխֆիդասն ու նաև
Ագռավիկները այդ գորշ։

ԿԼԵՈՆ

Շունն—այդ ե՛ս եմ։ Չէ՞ որ շունը քեզ համար է գոռգոռում.
Եվ ահա շանն, այսինքն ինձ, հրամայված է քեզ պահպանել։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Բանը այդ չէ։ Ինչպես կրճիկ ոսկորի՝
Կրծել է շունը ահա գուշակության մի պատառ.
Բայց ինձանից կիմանաս դու իսկությունը շան մասին.

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Կարդա՛։ Բայց նախ՝ կվերցնեմ ես մի քար.
Ապա թե ոչ ինձ կարող է կծել շնային գուշակը։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

(Կարդում է ցուցակով)

Աստծուն լսիր, էրիխֆիդաս։ Կերպերիոսը դարշելի.
Քծնողաբար պոչը շարժում և հառում է աչքերը

Ամանիդ մեջ՝ այն էլ ուտելուց հետո։
Իր շնային բնութքով նա, խոհանոցն է ներս մտնում,—
Գաղտագողի, դիշերով, լպստում է ամեն ինչ,
Մատուցարան ու կճուճներ ու կիկլադներ մեծ ու փոքր։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Գլանիդա՛ս, դու ավելի լավն էս շատ,
Վկայում է Ջևսը ինձ։

ԿԼԵՈՆ

Նախ լսիր ինձ, հետո, տեր իմ, դատ արա։

(Կարդում է)

«Լինելու է մի կին և նա առյուծ պիտի ծնի մեր
Ասավածակերտ Աթենքում.
Այս առյուծը պիտի դաժան պատերազմ
Մղի ընդդեմ մոծակների բազմությանը բազմահոծ.
Եվ դու նրան պիտի պահես ապահով
Փայտե պատերի ետևում ու բերդերում պղնձակերտ»։

(Ժողովրդին)

Սա հասկացա՞ր։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Ե՞ս։ Երբեք ո՛չ։

ԿԼԵՈՆ

Հրամայում է Թեբիսը՝ պահպանել ինձ խնամքով,
Քանի որ ես, առյուծի պես, քեզ համ խոնարհ ծառայում։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Բայց դու ի՞նչպես Առյուծ դարձար գաղտնաբար։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Գուշակումից դիտմամբ մի բան թաքցրեց.
Արդ ի՞նչ պատ է, ի՞նչ պղնձյա աշտարակ,
Որտեղ նրան պահելու մեզ հրամայել է Լուկասը։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Սակայն ինքը ըմբռնե՞ց։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Թեբիսը մեզ հրամայել է
Նրան դնել կաղապարում հնգաճեղք։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Մտածում եմ՝ կկատարվի՞ ինչ գուշակված է առաջ։

ԿԼԵՈՆ

Մի հավատար զրպարտությանը.
Արդ ագռավներն, են նախանձով կռկռում.
Դու բազեին սիրիր—ապա ազնիվ քո հոգով
Հիշիր՝ ինչպես ճանկեց բերեց շատ արագ
Լակեդեմոնյան ագռավի ձագերը։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Այսպես արեց պաֆլագոնցին, գուցե խումար վիճակում,
Օ՛, խելահեղ կեկրոպիդես. գործի մասին այս խորհիր։
Ասված է. «Բեռը կտանի կինարմատը, թեև նրան
Ամուսինը հենվի պինդ.
Բայց կին ասածն եթե ուզի մարտնչել՝
Ապա վեթով եւ կգա»։

ԿԼԵՈՆ

Լսի՛ր, թե ինչ է հաղորդում Լուկասը.
«Բացի Պիլոսից կա Պիլոս...»։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Իսկ ի՞նչ է այդ բառախաղի իմաստը։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Նվ ասում են, նա բաղնիսից ջրցանիչը կվերցնի։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Իսկ ես, ուրեմն, ամբողջ օրը պիտի մնամ անվա՞ր։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Նա գողացել է ջրցանիչն ու տաշտակները հետը։
Բայց ահա քեզ գուշակումը նավատորմի մասին քո.
Դու այդ պետք է լսես լարված ուշադիր։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Լսելը, դե, լսում եմ, բայց ո՞րտեղից
Նավատերերի համար ես փող ճարեմ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Օ՜, էգեյո՛ս։ Շնաղվեսի խաբկանքներից զգուշացիր։
Թակարդ լարող այդ վարպետից նենգամիտ,
Որ սլացիկ է իր որսի հանդիման։

(Ժողովրդին)

Դու հասկացա՞ր։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

(Ուրախացած)

Շնաղվեսը՝ ֆիլհատրատե՞ն է, այո։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Դրա մեջ չէ էությունը։ Երբ սա քեզնից պահանջի
Առագաստանավ՝ հարկերը տուն բերելու,
Ջտա՛ս դրան, արգելում է Թեբիսը։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Առագաստանավն ինչո՞ւ է այստեղ կոչված շնաղվես։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Ինչո՞ւ. քանզի արագասլաց է նավը.
Չէ՞ որ շունը արագասլաց է նույնպես։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Իսկ ինչո՞ւ շանն ավելացրած է—աղվես։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Ջինվորներին այստեղ ասավածը աղվես է անվանում,
Նրա համար, որ գյուղերում նրանք խաղով են քաղում։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Է՜, թող քաղեն։
Այդ աղվեսները ո՞րտեղից վճարեն։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Երեք օրում ես քեզ փող էլ կճարեմ։
Լսի՛ր նաև դուշակությունը Լեթրինոսի որդու,—
«Ապառաժե Կելլենայից վախեցիր,—
Այն ժամանակ չարիքից զերծ կմնաս»։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Կելլենայից, բայց ո՞րը։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Որ ապառաժ անվանեց մեծ Թեբիսը.
Թաքն այդ—ահա՛,

(Ցույց է տալիս կլեոնին)

Որ գողության մասին է լոկ մտածում։

ԿԼԵՈՆ

Դու այդ ճիշտ չես մեկնաբանում, Թեբիսը
Դիսպոթոսի ձեռքն է կոչել կեղեհնա։
Բայց ես ունեմ այլ դուշակում քո մասին .
Թե ինչպես դու արծիվի պես պիտի հպարտ սավառնես,
Տիրես երկիրը ամբողջ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

(Ընդհատելով)

Պիտի դատես Ակբատանում՝ կարկանդակով ու մեղրով։

ԿԼԵՈՆ

(Ընդհատելով)

Իսկ ես տեսիլք տեսա, որ աստվածուհին
Ժողովրդի վրա տաշտից հարստություն էր լցնում։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

(Ընդհատելով)

Ջևսով եմ ես երդվում ահա, տեսա, որ
Աստվածուհին դուրս եկավ իր տաճարից,
Իսկ բոն՝ թառել էր ուսին։
Իմ ժողովուրդ, տեսա, որ քո վրա ինքը մեծ կոնքով
Վերից թափեց աստվածային քաղցր ջուր,
Սրա վրա էլ սխտորի լվացքաջուր։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

(Ցնծությամբ)

Օհո՜, օհո՜.
Երկրում չկա իմաստուն Գլանիդեսին հավասար։

(Երշիկագործին)

Ես ինձ քեզ եմ վստահում։ Դու ծերուկիս
Նվիր գայակ և առաջնորդ այսուհետ։

ԿԼԵՈՆ

Ո՛չ, աղաչում եմ, սպասիր դեռ մի քիչ.
Ամենօրյա հատիկն ու հացըդ կտամ։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

(Փակելով ականջները)

Բավակա՛ն է. հացի մասին էլ չեմ ուզում ես լսել.
Ջեոֆանի հետ այնպե՜ս խաբեցիք։

ԿԼԵՈՆ

Քեզ ալյուր կբաժանեմ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Ես քեզ կտամ կարմրացրած բլիթներ,
Եվ տապակած երիկամներ, դու միայն
Հասցրու, որ բերան դնես նրանք իրար ետևից։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Շտապեցեք բերել ինչ որ կարող եք.
Ով ինձ այժմ ավելի կուշտ կերակրի՝
Երասանակները նրան ես կըհանձնեմ Պնիկսի։

ԿԼԵՈՆ

Ես առաջինը վազ կտամ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Ո՛չ, առաջինը ես կտամ։

(Երկուսով վազում են)

Օդա և անտօդա II

Ժողովո՛ւրդ իմ, գեղեցիկ է
Տիրությունդ երկրի վրա.
Ահավոր ու փառավոր ես,
Սարսափելի՝ ինչ զորեղ տեր։
Բայց հնազանդ ու թույլ ես դու,
Ու պարուրված ես քծնությամբ.
Ու մոլորված ստի ցանցում.
Ամ ճառն էլ որ լսում ես դու,
Քո բերանը լայն բաց արած՝
Լսում ես դու լռիկ-մնջիկ,
Չի միտքն ու խելքդդ տանը չի։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Թե՛ խելք, թե՛ միտք հենց ինքներդ եք, որ չունեք,
Դրա համար ձեր աչքում ես մի հիմար եմ երևում.
Աստված վկա, այսպես ամիրկ ես ձևանում եմ միայն։
Սիրում եմ ես զվարճանալ ճիշտ այսպես,
Ուրախ վազ տալ հետևիցը ծծուկի,
Եվ գողին աստիճանավոր՝
Պնիկսի վրա կերցընել ու մեծացնել,
Հետո—նրա անկոչտ փորը լցնելով՝
Վեր բարձրացնել և գետնովը զմփացնել։

ԵՐԳԵՑԻԿ ԽՈՒՄԲ

Դու վատ բան չես մտածում,
Երևում ես խելացի.

Խորամանկորեն դիտես
Անպետքներին պատժել միշտ.
Պնիկսի վրա նրանց,
Անասունները ինչպես
Աճեցնում են մորթելու՝
Որպեսզի հենց տեղը գա,
Երբ ձեռքի տակ միս չկա,
Բռնես կոտած աքլորին,
Շամփրըես ու խորովես։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Տեսեք՝ ինչպես ես հմուտ ու ճարպկորեն
Ոսոխներին որսում են իմ թակարդում,—
Գիտնականին, խելոքին,
Խորամանկին, ըմբոստին։
Այո՛, գողերին ես կույր եմ երևում,
Ամեն ինչին հայում եմ իմ այս մատների արանքով։—
Սակայն ինքըս, առանց աչքըս թարթելու՝
Այն, ինչը որ ակնթարթում շորթել են ու գողացել՝
Դուրս եմ քաշում կոկորդներից ես նրանց
Ու պինդ սեղմում եմ խեցիի կտորով։

Անտեպիռեմա

(Կլեոնն ու երշիկագործը լիքը զամբյուղներով, հայհոյելով, կռվելով)

ԿԼԵՈՆ

Հե՜յ, կործանվի՛ր, անպիտան։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Դու կործանվիր, սրիկա։

(Հրում է նրան)

ԿԼԵՈՆ

(Նստում է իր զամբյուղի մոտ)

Իմ ժողովո՛ւրդ, վաղուց էի ես պատրաստել բոլորը.
Նստած եմ, քեզ հաճոյանամ որպեսզի։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

(Նույնպես նստում է)

Իսկ ես՝ վաղո՜ւց, վաղո՜ւց, վաղո՜ւց։
Մեկ հարյուր և հազար անգամ—վաղո՜ւց, վաղո՜ւց, վաղո՜ւց։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Ես ձեզ սպասում եմ վաղո՜ւց, բյուր անգամ։
Թքել եմ ձեզ վրա վաղո՜ւց, վաղո՜ւց, վաղո՜ւց։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

(Ժողովրդին)

Հիմա ի՞նչ անենք, դիտե՞ս։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Կասես և կգիտենամ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Մեզ երկուսիս բաց Թող իրար հետ վազենք,
Որ գրազով կարողանանք քեզ պատվել։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Է՜, ինչ կա որ, գործ է։ Հե՜յ։

(Ծափ է տալիս)

ԿԼԵՈՆ և ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

(Հրմշտկում են)

Ահա—իսկույն։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Հե՜յ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Մի՛ խցկըվիր դու առաջ։

(Վազում ու կռվում են)

Երկրպագուներս այսօր հյուրասիրելու են ինձ,
Ուզած չափով, եթե մի քիչ ես կոտրատվել ուզենամ։

ԿԼԵՈՆ

(Ներս է վազում բազկաթոռով)

Դե, նայիր այս բազկաթոռին, առաջինն ես եմ բերում։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

(Բերելով իր արկղը)

Այո՛, թեև սեղան չէ, բայց առաջինն եմ սեղանով։

(Կլեոնը և Երշիկագործը մեկ ընդմեջ վազում են իրենց զամբյուղների մոտ և բերում մեկ այս, մեկ այն հյուրասիրելիքը)

ԿԼԵՈՆ

(Մոտ վազելով բլիթներով)

Ահա բլիթ եմ բերել քեզ, նայիր տե՛ս,
Հացահատիկից է թխված Պիլոսի։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

(Հացի չոր կեղևով)

Ահա չոր հաց՝ սպասի համար,—
Այն պարգևել է դիցուհու մատը ճերմակամարմար։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

(Ակնածությամբ)

Տիրուհի, մե՞ծ է, տեսնում եմ, մատը քո։

ԿԼԵՈՆ

(Բերում է սպաս, բակլայով)

Ահա բակլան, որ տաք է ու կարմրավուն,—
Աթենասի շնորհածը—ռազմիկուհու պիլոսյան։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

(Բերում է աման, խաշիլով)

Քեզ պաշտպանում է Աթենասն ակնհայտ.
Եվ քեզ վրա տարածում է ապուրման խաշիլով։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

(Ավելի ակնածանքով)

Իսկ մեր քաղաքը է՞լ պիտի դիմանար,
Եթե վրան տիրոջ թասը չլիներ։

ԿԼԵՈՆ

(Տապակածուով)

Մի կոտորվածք ուղարկել է Ահեղուհին մարտերում։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

(Մի կտոր կոշտ մսով)

Ապուրի մի՛ս. դա խորտիկ է մի կտոր.
Եվ փորոտիք՝ ուղարկել է Բվակնուհին։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Շնորհակալ եմ նրանից, հիշել է Պիպլոսին։

ԿԼԵՈՆ

(Գաթա է հրամցնում)

Ահա գաթա, որպեսզի դու տաքանաս,
Երբ որ գնաս, նավով, առանց հանգստի։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

(Կրծած ոսկորներով)

Վերցրու և ա՛յս։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Իմ ինչի՞ն են պետք այդ չորուկ կողերը։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Ինչի են պ՞ետք։ Աստվածուհին մեր բարի
Ուղարկել է քեզ այս նավի կողերը։
Սքանչելին հոգում է, որ նավատորմիղ ունենաս։

(Գինի է հրամցնում ժողովրդին)

Այս էլ գինի։ Ամենալավ խառնուրդից է, ճաշակի՛ր։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Որքան քաղցր է. աստվածներ։ Ընտիր թնդություն ունի։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Սատակիչը նրա համը մարտերի մեջ է առել։

ԿԼԵՈՆ

(Ձկնով կարկանդակ տալով)

Ահա քեզ նաև մի պատառ կարկանդակ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Իսկ իմ կողմից վերցրու լրիվ կարկանդակ։

ԿԼԵՈՆ

Իսկ նապաստակ՝ ոչ մի կերպով չես ճարի։

(Վազում է նապաստակի ետևից)

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

(Մի կողմ)

Փորձա՞նք, կորա՞։ Ինչպե՞ս գտնեմ նապաստակ։
Օ՜, միտք, հիմա մի նոր սողանց հնարիր։

ԿԼԵՈՆ

(Բերում է նապաստակ և հանդիսավորությամբ ցույց տալիս երշիկագործին)

Սա տեսնո՞ւմ ես, գարշելի։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Ով, ինձ, պատուհաս չկա։

(Շարժումով հեռուներ ցույց տալով)

Ահա ինձ մոտ դեսպաններ են գալիս ինչ որ մի տեղից
Ով քսակներով ծանրը գանձ են բերում։

ԿԼԵՈՆ

Ապա՛, ո՞ւր են։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Քեզ ի՞նչ. ով ձեռք չտաս դու իմ հյուրերին։

(Կլեոնը փախչում է, Երշիկագործը բռնում է նապաստակին)

Իմ ժողովո՛րդ, ահա ինձնից մի նապաստակ ընդունիր։

(Տալիս է նապաստակը ծերունուն)

ԿԼԵՈՆ

(վերադառնում է դատարկաձեռն)

Ա՜խ, պատուհաս, դու անազնիվ գողացար այն ինձանից։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Ի՞նչ է, ինքդ չե՞ս գողացել Պիլոսում։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Ասա՛, ինչպես դու այդ մասին խորհեցիր։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Կույսիցը—միտք, իսկ գողանալը ձեռքերի գործն է իմ։

ԿԼԵՈՆ

Նրան բռնել և ես էի խորովել։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Կորի՛ր։ Պարգևը քեզ չէ, այլ հրամցնողին։

ԿԼԵՈՆ

Փորձա՞նք, փորձա՞նք։ Գերազանցեցիք ինձ որպես անամոթ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

(Ժողովրդին)

Դե՛, ինչո՞ւ չես որոշում՝ մեր երկուսից՝
Քեզ ու փորիդ արդյոք ո՞վ է օգտակար։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Բայց ո՞ր և ի՞նչ նշաններով ձեզ դատեմ,
Որպեսզի ես դիտողներին արդարադատ երևամ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

(Ժողովրդին)

Իմ խորհուրդն է՝ նախ զամբյուղիս մոտեցիր,
Կամաց նայիր՝ ի՞նչ կա այնտեղ զետեղված.
Հետո նրա զամբյուղին և դա կլինի ճշմարիտ։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Կնայեմ։

(Մոտենում է երշիկագործի զամբյուղին)

Ի՞նչ կա այստեղ, զամբյուղում։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Տեսնո՞ւմ ես, որ դատարկ է։
Ինչ կար մեջը՝ բոլորը քեզ տվեցի։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

(Հրճվաճիի մեջ)

Այս զամբյուղը՝ դեմոկրատուհի է մաքուր։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Կաշեգործի տուփին այժմ մոտեցիր։

(Ժողովուրդը մոտենում է մյուս գամբյուղին)

Ի՞նչ ես տեսնում։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Ա՜յ թե բարիք կա այստեղ։
Չկնակարկանդակն ահագին թաքցըրել է ինձանից,
Մինչդեռ տվեց նա մի փոքրիկ պատառիկ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Ճիշտ այդպես էլ, առաջներում, նա վարվել է հենց քեզ հետ։
Օգուտից նա քեզ մի մասնիկ էր տալիս,
Այն ինչ մնծը՝ իր համար էր ետ գցում։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Անպիտա՛ն, դու ինձ խաբել ես և խաբելով՝ գողացել.
Հապա ինչի՞ համար էին քեզ տրված
Պսակներըս և ընծաներըս բոլոր։

ԿԼԵՈՆ

Գողացել եմ՝ ի փրկություն քաղաքի։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Հանի՛ր պսակը շուտով, դա ես կտամ այ սրան։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Հանի՛ր, կախելու արժանի սրիկա։

ԿԼԵՈՆ

Օ՜, ոչ, երբեք։

Գուշակություն է ինձ տրված այն մասին,
Թե ո՛վ է ինձ հաղթելու։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Եվ իմ մասին է գուշակված, իսկ այդ մասին ոչ մի վեճ։

ԿԼԵՈՆ

Բայց և այնպես՝ հարց եմ տալիս քեզ հիմա.—
Փոքր հասակում ո՞ր ուսուցչի մոտ ես ինքդ սովորել։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Սովորել եմ սպանդանոցում և իմ խելքի թակիչով։

ԿԼԵՈՆ

Ինչ ասացի՞ր։
Գիտելիքներից մթագնում է միտքը։
Մրցադպրոցում դու ի՞նչ ես սովորել։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Գողանալիս—ուրանալ և հանդուգն դեմք ընդունել։

ԿԼԵՈՆ

Օ՜, Թեբեոս Էկկիոսական։ Այս ի՛նչ արիր դու ինձ հետ։
Իսկ ինչո՞վ դու սկսեցիր մտածել, երբ մեծացար։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Ե՛վ առջևով, և՛ հետևով, և՛ երշիկներով։

ԿԼԵՈՆ

Ա՜խ, թշվառակա՛նըս։ Վա՜յ ինձ։ Ոչի՞նչ եմ։
Միակ հույսից եմ կառչում՝ ինչ ծղնոտից։

Այս մեկն ասա, ինչ երշիկի առևտուր ես դու արել
Դարբասի մո՞տ, թե՞ շուկայի խանութում։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Դարբասի մոտ, ուր տառեխի խաբող աճուրդ է գնում։

ԿԼԵՈՆ

Ավա՞ղ, կատարվեց այն, ինչը որ ասովածն էր կամեցել։
Ինձ, քամբախտիս, թավալեցիք դեպի տուն։

(Պսակը գցում է գետնին)

Մնաս բարով, պսա՛կ, ահա բաժանվում եմ քեզանից։
Մի ուրիշը կվերցընի, կզարդարվի քեզանով,
Որը գող չէ, այլ թերևս՝ երջանիկ։

(Վազում է տուն։ Երշիկագործը ծածկում է պսակը)

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

(Հանդիսավոր)

Օ՜, Զևսըդ դու Հիլլեններին։ Հաղթանակի փառքը քե՛զ։

ԱՎԱԳ ՀԵՏՅԱԼ

Ողջո՞ւյն քեզ, ով քաջահաղթ։
Հիշի՛ր, ես քեզ մարդ դարձըրի, թույլ տուր ինձ
Դառնում ես քո պրագիրը դատական։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Բայց ինձ ասա, թե ի՞նչպես ես դու կոչվում։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Ագորակրի՛տ։
Հայհոյելու համար ես այս մականունն եմ ստացել։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Ագորակրիտի՛ն եմ հիմա հանձնում ինձ
Իսկ Կլեոնը թող կորչի իր համար։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Իմ ժողովո՛ւրդ, այժմ ինքդդ կտեսնես
Ի՞նչ ուշադիր ես քեզ պիտի ծառայեմ,
Այնպես, որ դու խոստովանես, թե բացթերան մարդկանց մեջ
Ինձ հավասարը չկա։

(Ժողովուրդն ու երշիկագործը մտնում են տուն)

ԱՐԱՐ ՅՈՔԵՐՈՐԴ

ՓՈՂՐ ՊԱՐԱԲԱՍԱՍ

ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱԽՈՒՄԲ

Օդա

Ի՞նչն է ավելի գեղեցիկ, քան թե երգը գիշերային,
Քան երգերի երգի մասերը վերջին,
Երգել գովքը
Մարզիչների նժույգների կրակոտ։
Բավակա՛ն է Լիսիստրատեսի մասին,
Բավական անտուն—անտեր Թումանտին
Մեր թունավոր երգերովը վշտացնել։
Օ՜, սիրելի Թեբեոսդ իմ, նա քաղցած է մշտապես,
Ջերմ արտասուք թափելով,
Եվ, աղեղիդ առջև ահա խոնարհված,
Քաղցից փրկվել է խնդրում.

ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱԽՄԲԻ ԱՌԱՋՆՈՐԴ

Էպիռեմա

Անպիտաններին ծաղրելը—հանցանք չկա դրանում։
Ով ազնիվ է՝ հարգ ու պատիվ, իմաստուններն են դատում.

Իսկ նա, ով արժանացել է հայհոյանքի ու ծաղրի՝
Բայց եթե նա հաշտ է ձեզ հետ, նրան չէի ես դիպչի։
Արիգնոտեսին գիտե նա, ով կարող է տարբերել
Պայծառ ցերեկը գիշերից, եղանակը քնարի։
Արիֆսադը սրիկա է. ինքը կորզեց հայհոյանք.
Բայց սրիկա չէ հասարակ. ապա չէի ճանաչի։
Գերսրիկա է, ավելի վատ բան կարող է սարքել,
Նա խայտառակ զվարճությամբ իր շուրթերը անարգեց։
Հափշտակված ու արբեցած, ամեն ինչը մոռացած,
Փողոցային կեղտոտ ու պիղծ աղջիկներ է լիզում նա։
Իր առջևից էոնիքան է, պոլիմնիստը՝ ետևից։
Իսկ ում համար գեղեցիկն այդ զզվելի չէ, ապա ես
Նրա հետ մի գինեթասից չեմ խմի տաք քեֆերին։

ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱԽՈՒՄԲ

Անտոդա

Վաղուց է ինչ գիշերային լռության մեջ
Ես մի մտքով եմ տանջվում ու մտածում։
Օ՜ ինչպիսի նենգությունով է տրաքվում
Կլեոնիմն այդպես անասուված կերպով։
Ասում են, թե հարուստի տոնը ընկնելով
Ու գոռ տալով ուտելուն,
Կերակրամանից ոչ մի կերպ պոկ չի գալիս.
Եվ տանտերերը իզուր ձեզ խնդրում են,
«Ոտքդ ընկած՝ աղաչում ենք, թող-գնա,
Պատվելի մարդ, գոնե սեղանին խղճա»։

ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱԽՄԲԻ ԱՌԱՋՆՈՐԴ

Անտեպիռեմա

Ասում են, թե մի անգամ,
Առագաստանավերը հավաքվում են խորհրդի,
Եվ ամենից ավագը՝ այսպիսի ճառ է ասում.
«Դուք չեք լսել, քույրիկներ, բամբասանքներ նորաթուխ,—

Կարթագենի արշավին՝ հարյուր հատ են պահանջում։
Ջարաբաստիկ զորավա՛ր, թող քացախ Հիպերբոլ»։
Սարսափելի սա թվաց, անտանելի ամենքին։
Խոսում է նավուհի, դեռ տղամարդ չտեսած։
«Խափանեցե՛ք, ապուշներ։ Ո՛չ, նա ինձ չի տիրանա.
Լավ է պարապ մնամ ես, ու հնանամ ու փտեմ»։
«Նույնպես և ես, Ալիքահատս, որ ծնվել եմ թռիլով,
Երդվում եմ այն սոճիով, որ տախտակն է կմախքիս։
Սակայն եթե այդպես է ժողովուրդը ցանկանում,
Իմ խորհուրդն է՝ ծնկաչոք, Թեբեսի տաճարում,
Այդ պատվավոր տաճարում աղերսով բեմը զրկենք։
Ո՛չ, չի կարող նա երբեք ամբողջ քաղաքը խաբել։
Թող մենակ ինքը լողա, թեկուզ ծոցը շների,
Թող արմունկներն իր մոմե ջրերի մեջ կախ գցե»։

Էքսոդա

(Մտնում է երշիկագործը տոնական զգեստներով)

Բարեխոսությամբ սրբազան փակեցե՛ք ձեր շուրթերը,
Դադարեցրեք հարց ու փորձը, դատավճիռը բոլոր,
Դատարանները թող փակեն, և երջանիկ լուրերով
Ժողովուրդ հիմա ուրախ թող ողջունե թատրոնը,
Եվ թող երգե, փառաբանե և ցնծա։

ԱՎԱԳ ՀԵՐՅԱԼ

Օ՜, ողջույն քեզ, ջահ սրբազան Աթենքի։
Կղզիների հովանավորըդ հզոր։
Ի՞նչ բարի լուր ես դու բերում։
Ինչո՞ւ համար, շուկաներում փառաբանենք և ցնծանք։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

(ժողովրդին)

Ես ձեզ համար, եռման ջրով եփեցի
Եվ հրեշից վերածեցի գեղեցկի։

Ա.Վ.Ա.Գ ՀԵՏՅԱԼ

Այժմ ո՞ւր է նա, ասա՛, ո՞վ դու կախարդանքում հմտացած։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Ծաղկապսակ, առաջնակերտ մեր սրբազան Աթենքում։

Ա.Վ.Ա.Գ ՀԵՏՅԱԼ

Ի՞նչպես տեսնենք։ Հագի տարաղն ի՞նչպիսին է, ասա մեզ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Հենց այնպիսին, ինչպես որ մի ժամանակ
Միլթիադի և Արիստեդի հետ սեղան էր բաժանում։
Դուք բոլորդ կտեսնեք այդ։ Բայց ահա
Ձոնչալով խմելիներն են բացվում։
Արդ, ցնծացե՛ք, Աթենքը ձեզ ներկայանում է ահա
Փայլ ու փառքով, անմոռաց ու անթառամ,
Բազում գովված, հրաշալի Աթենքի,
Ժողովրդի մայրաքաղաքը ոսկե։

(Տաճ դռները բացվում են։ Երևում է ժողովուրդը տոնական հագուստով)

Ա.Վ.Ա.Գ ՀԵՏՅԱԼ

Աթե՜նք, Աթե՜նք, քաղաքների վարդը դու.
Մանուշակե պսակ գլխիդ, օ՜, Աթե՛նք։
Ապա, ցույց տուր Հելլադայի տիրոջը,—
Ինքնակալին—Հելլադայի երջանիկ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Ահա՛ և նա՛։ Խոպոպներում ոսկյա ճպուռ է դրած.
Ապուպապերի վաղեմի ղեմստով։

Նրանից դորշ հոտ է փչում դատավճռի սկսված.
Օծված է նա մեռոնով ու թանձր յուղով ձիթենու։

ԱՎԱԳ ՀԵՐՅԱԼ

Գո՛վք ու ողջո՜ւյն, հելլեննների թագավոր.
Ուրախություն և ցնծություն մեզ համար։
Ահա այժմ արժանի ես հայրենիքին քո ազատ
Եվ սրբազան մասունքներին մարաթոնյան ռազմերի։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Ագորակրի՛տ։ Սիրեցյալըս, եկ այստեղ։
Երջանիկ եմ, որ քո ձեռքով երիտասարդ դարձա ես։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Այո՛, ազնիվ բարեկամըս։ Մոռացար, թե ինչ էիր.
Եվ ինչ էիր անում առաջ, ապա թե ոչ՝ ինձ աստված
Համարեիր դու պիտի։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Թե ի՞նչ էի, ի՞նչպես էի, պատմիր ինձ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Երբ ժողովում մեկը ճառ էր ձեռնարկում՝
«Ժողովո՛ւրդ, ես սիրում եմ քեզ, բարեկամն եմ քո միակ,
Ես քեզ համար եմ չարչարվում աշխարհում...»։
Այսպիսի մի ներածական հազիվ էիր դու լսում՝
Իսկույն ևեթ հալվում էիր, ցցած գլուխդ հպարտ։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Ինչպե՞ս, ե՞ս։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Իսկ նա—հենց քեզ խաբում էր։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Ինչ ասացի՞ր։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Այո՛, տեսնում էր Զևսը այդ,
Որ ականջներդ, անմիջապես, հովանոցի նման ճիշտ,
Բացում էիր, ապա ծալում քեզ ու քեզ։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Այո, ի՞նչ հիմարն եմ եղել ես, ծերուկըս։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Ասաված վկա, այո՛։ Եթե հռետորներից մեկը
Պահանջեր մի նոր նավախոտաբ կառուցել,
Երկրորդն ուզեր դանձարանը գաղտարկել՝
Հաղթությունը առաջինին կլիներ։
Սակայն քեզ ի՞նչ պատահեց, որ կախել ես գլուխդ գետին։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Ա՜խ, հին մեղքերիս համար եմ ամաչում։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Դու մեղք չունես, բարեկամս, մի՛ տխրիր.
Քեզ գայթակղիչն ու սրիչն են մեղավոր.
Այժմ ասա, երբ դրագիրն անպիտան
Սպառնա, թե «գաղտավորներ, հայ չի լինի ձեզ համար,
Թե գործերը մեղադրությամբ չավարտեք»։
Դու այսպիսի հռետորին ի՞նչ կանես։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Բարձրացնելով օդի մեջ, ժայռից ներքև կգցեմ,
Հիպերբոլային վզիցը կախելով։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Փառավոր է և ասածդ շատ ճիշտ է.
Սակայն ի՞նչպես կառավարես պիտի դու։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Թիավարներին նախ կտամ ճոխ ապրուստ,
Որ ռազմական նավերը վարժ վարպետի պես վարեն միշտ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Կոշտուվավոր շատ հետույքներ կուրախացնես բավական։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Այժմ դառնանք թիապարահին իմ ցուցակի մեջ գրված,
Նրան, ոչ ոք, մտերմությամբ, չի կարենա աղաւել։
Ո՛չ, որտեղ որ նա գրված է՝ հենց այնտեղ էլ թող մնա։

ԿՐՇԻԿԱԳՈՐԾ

Կլեոնիմի վահանի տակ թվում է, թե քոր եկավ։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Անմորուքները թող լռեն ժողովում։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Կլիոթենեսն ու Ստրաթուն հապա ո՞րտեղ ճառ ասեն։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Ես խոսում եմ տղաների մասին ահա, որոնք որ
Ներկըված են, ճըրթճրթում են իրար կողքի նստոտած.
«Մեծ է Փեակը, նա իրեն ձեռնահասությամբ փրկեց—
Ճարպիկ է և խիստ համարձակ. դատողության մեջ՝ ուժեղ,

Գերազանց է հռետորաբար,
Քննադատորեն սուր է նա, վիճելու մեջ՝ տիպական»։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Դու տղային ցանկանում ես քնացնե՞լ։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Ո՛չ, նրան դաշտ կվռնդեմ՝ որս անի,
Որ վեճերի մասին անգամ մոռանա։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Արդ, ինձանից, դրա համար, ընդունիր մի նստարան։

(Ներս է մտնում մի տղա, նստարան բերելով)

Եվ ընդունիր տղային, որ քո հետևից բերի միշտ.
Իսկ երբ ինքըդ կցանկանաս՝ նա նստարան կդառնա։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Բախտավո՞ր եմ։—
Վերադառնում է անցյալը փառապանծ։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Իսկ ի՞նչ կասես, եթե աշխարհը ես քեզ
Հրամցընեմ, այն էլ՝ տարով երեսուն։—
Հե՞յ, աշխարհի խաղաղության քնքուշ դուստրեր, դուրս եկեք։

(Դուրս են վազում պարուհիներ, աշխարհի հավերժահարսեր)

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Օ՜, սրբազան, հար պաշտելի Ջևսըդ մեծ։
Եվ, այ թե, ի՞նչ գեղուհիներ, բայց ասա ինձ, բարեկամ,

Կարո՞ղ ես դու նրանց հպվել մի վայրկյան.
Եվ ո՞րտեղից կարողացար ճարել դրանց, իսկապես։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Պաֆլագոնցին, Կլեոնը, իմացի՛ր,
Թաքցըրել էր սրանց տունը, որ ինքըդ չտեսնեիր։
Այժմ ինձանից ընդունիր և նրանց հետ
Գնա դեպի դաշտ ու դյուղերն համարձակ։—

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Պաֆլագոնցուն ի՞նչպես ես դու պատժելու։

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ

Շատ հասարակ։ Հիմա թող նա բանեցնի իմ արհեստը,—
Թող դարբասների մոտ երշիկ վաճառե,
Էշի մսի հետ շան միսը խառնելով.
Կոնծի—հարբի ու հայհոյի աղջկերանց,
Բաղնիսներից հոսող փրփուր սապնաջուրը թող խմի։

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Օ՜, հրաշալի՛ է մտածված։ Ստորն այդ
Վաստակեց լոկ աղջիկների ու նաև
Թուքն ու մուրը մարդկանց, որոնց բաղնիսական են ողջ կյանքում։
Իսկ դրա համար քեզ կկանչեմ Պրիտանեյ
Գրավելու այն տեղը, որ մինչև հիմա այդ սրիկան էր նստած.
Դե գնա հագիր կանաչ զգեստ տոնական։

(Երշիկագործին զգեստավորում են տոնական կանաչ ծիրանիով)

Իսկ նրան էլ աշխատանքի թող քարշ տան,
Ծաղր ու ծանակի առարկա թող դառնա
Առջևը մեր հյուրերի և դաշնակից պետությանց։

(Դերակատարները և երգեցիկ խումբը թողնում են օրխեստրը)

ՀԵԼԼԵՆԻԶՄԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՀՈՒՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒԿԻԱՆՈՍ

Լուկիանոսն անտիկ աշխարհի՝ անկման շրջանի գրականության ամենանշանավոր դեմքն է, որը հանդիսանում է հելլենիզմի դարաշրջանի քայքայված բարքերի և հոգևոր այլասերվածության ամենասուր քննադատը: Նա ծնվել է Սիրիայի Սամոսատ քաղաքում 125 թ. և մեռել է 192 թվին (մ. թ.): Աղքատ ծնողները ուզեցել են նրան բանդակագործ դարձնել, սակայն երեխայի հակումները գրականության և ճարտասանության կողմն էին: Դառնալով ճարտասան և ազդեցիկ դրող, նա երկար թափառել է հունական և փոքրասիական քաղաքներում: Ամենուրեք նա ճառեր էր արտասանում և կարդում էր իր ստեղծագործությունները: Իր անդրանիկ գրվածքներում ծաղրում է Հռոմի այլասերված կյանքը: Նրա նշանավոր գրվածքները՝ «Ատավածների գրույցները», «Մեռելների գրույցները», և «Գեղեցկուհիների գրույցները» երկխոսական գործերն են, որոնցում փայլում է Լուկիանոսի սատիրական տաղանդը: «Ատավածների գրույցները» սատիրան ուղղված է մեռնող հեթանոսական կրոնի դեմ: Այդ սատիրան բաղկացած է 26 գրույցներից, որոնց մեջ հանդես են գալիս համարյա թե բոլոր հունական նշանավոր աստվածները և սպանիչ քննադատության են ենթարկվում: «Մեռելների գրույցները» սատիրան բաղկացած է 30 գրույցներից, որոնցում Լուկիանոսը ծաղրում է կեղծ փիլիսոփաներին, դիտնականներին, հարուստներին ու իշխանավորներին: Այս սատիրաների մեջ նա մեծ արհամարհանքով է խոսում ժամանակի դիտության ներկայացուցիչների մասին: «Գոյություն

ունի մարդկանց հատուկ տեսակ, որոնք առժամանակ թռչում են հասարակության մակերևույթի վրա, ծույլ, կամակոր, անբարտավան, դյուրագրգիռ, որկրամոլ, ցնդած, հպարտությամբ համակված, հանդգնությամբ փքված սերունդ, Հոմերոսի բառերով ասած՝ անօգուտ բեռ երկրի վրա»։ Լուկիանոսն այդպիսի մարդկանց շարքին է դասում ստոյիկներին, ակադեմիկներին, պերիպատեթիկներին և հելլենիզմի դարաշրջանի փիլիսոփայական այլ դպրոցների ներկայացուցիչներին։ Լուկիանոսը ծաղրում է նաև բռնապետներին, ինչպես, օրինակ, Ալեքսանդր Մակեդոնացուն, որն աստվածացնում է ինքն իրեն, թաքցնելով իր հիմար էությունը։ «Մեռելների զրույցները» սատիրայում Լուկիանոսը բոլորին այն միտքն է արտահայտում, թե մահվան հանդեպ ամեն ինչ՝ փառք, իշխանություն, հարստություն, գեղեցկություն և այլն—ոչնչություն են դառնում։ Բացի այդ գրվածքներից, Լուկիանոսից մեզ հասել են նաև բազմաթիվ այլ աշխատություններ, թվով մոտ 80։

Լուկիանոսի ստեղծագործությունները բարձր են գնահատվել Մարքսի և Էնգելսի կողմից։ «Հունական աստվածները», որ մի անգամ տրագիկորեն վիրավորվեցին Էսքիլեսի շղթայված Պրոմեթեոսի մեջ,— ասում է Մարքսը,—հարկադրված եղան մի անգամ էլ կոմիկորեն մեռնել Լուկիանոսի «Զրույցների» մեջ։ Ինչո՞ւ պատմությունն այդպես է ընթանում։ Նրա համար, որպեսզի մարդկությունը ծիծաղելով բաժանվի իր անցյալից»։ (Մարքս-Էնգելս, Երկեր, հատոր 1-ին, էջ 389)։

«Առաջին քրիստոնյաների մասին մեր առաջին լավագույն աղբյուրներից մեկը,—ասում է Էնգելսը,—սամոսատցի Լուկիանոսն է, դասական հնության այդ Վոլտերը, որը ամեն տեսակի կրոնական անոտիապաշտության վերաբերվել է միատեսակ սկեպտիկորեն և որն այդ պատճառով չի ունեցել ոչ հեթանոսական-կրոնական, ոչ քաղաքական հիմքեր քրիստոնյաներին այլ կերպ դիտելու, քան ամեն մի կրոնական համայնք։ Ընդհակառակը, անոտիապաշտության համար նա նրանց բոլորին ծաղրում է,—Յուպիտերի երկրպագուներին ոչ պակաս, քան Քրիստոսի երկրպագուներին»։

(Մարքս և Էնգելս, հատոր XVI, մաս II, էջ 411)։

ԱՍՏՎԱԾՆԵՐԻ ԶՐՈՒՅՑՆԵՐԸ

1. ՊՐՈՄԵԹԵՈՍ ԵՎ ՋԵՎՍ

Պրոմեթեոս.— *Ազատիր ինձ, Զևս, բավական է որքան սարսափ կրեցի ես։*

Զևս.— *Ազատեմ քե՞զ, ասում ես դու։ Քեզ պետք էր ավելի ծանր շղթաների մեջ կոփել՝ ամբողջ Կովկասը շրջելով քո գլխին։ Տանջվեց ցին պետք է ոչ միայն ծվատեն քո լյարդը, այլ և կտցահարեն քո աչքերն այն բանի համար, որ դու ստեղծեցիր այնպիսի կենդանիների, ինչպես մարդիկ են, հափշտակեցիր իմ հուրը, ստեղծեցիր կանանց։ Իսկ այն, որ դու ինձ խաբեցիր— միսը բաժանելիս՝ տալով ինձ ճարպով ծածկված ոսկորները միայն ու ամենալավ մասը պահեցիր քեզ. ինչ պետք է խոսել այս մասին։*

Պրոմեթեոս.— *Բայց միթե ես բավական չեմ հատուցել, այսքան ժամանակ տառապելով Կովկասի ժայռերին—շղթայված և սեփական լյարդովս կերակրելով այդ անիծյալ թռչունին—արծիվին։*

Զևս.— *Այդ նույնիսկ ամենափոքր մասը չէ այն պատժի, որին դու արժանի ես։*

Պրոմեթեոս.— *Բայց դու ինձ իզուր տեղը չես ազատի, ես քեզ, Զևս, կհայտնեմ մի շատ կարևոր բան։*

Զևս.—*Դու խորամանկությամբ ես դիմում, Պրոմեթեոս։*

Պրոմեթեոս.— *Իսկ ի՞նչ կշահեմ ես դրանից։ Չէ որ դու շատ լավ գիտես, թե որտեղ է գտնվում Կովկասը ու եթե ես որևէ դավ նյութելով քո դեմ—բռնվեմ, դու շղթաների պակասություն չես ղգա։*

Զևս.— *Առաջ ասա, թե ինչ կարևոր ծառայություն կմատուցես դու ինձ։*

Պրոմեթևս.— *Եթե ես ասեմ քեզ, թե ո՞ւր ես դու հիմա գնում, կհավատա՞ս արդյոք դու ինձ, թե իմ մնացած դուշակումները ևս ճշմարտացի կլինեն։*

Զևս.— *Իհարկե։*

Պրոմեթևս.— *Դու գնում ես Ֆեմիդայի մոտ՝ տեսակցության։*

Զևս.— *Այդ դու ճիշտ դուշակեցիր, իսկ հետո՞։ Քեզ, կարծես, իրոք կարելի է հավատալ։*

Պրոմեթևս.— *Մի՛ գնա, Զևս, այդ հավերժահարսի մոտ. եթե նա քեզ համար տղա ծնի, ապա նա կանի քեզ նույնը, ինչ դու արիր...*

Զևս.— *Դու ուզում ես ասել, որ ես կզրկվեմ իշխանությունի՞ցս։*

Պրոմեթևս.— *Թող չհատարվի այդ, Զևս։ Բայց քո զուգակցությունը նրա հետ՝ սպառնում է քեզ դրանով։*

Զևս. *Եթե այդպես է—մնաս բարով, Ֆեմիդա։ Իսկ քեզ դրա համար թող ազատի Հերկեստոսը։*

2. ԷՐՈՍ ԵՎ ԶԵՎՍ

Էրոս.— *Բայց եթե անգամ որևէ բանում ես հանցանք եմ գործել, ներիր ինձ, Զևս. ես երեխա եմ և դեռ անմիտ եմ։*

Զևս.— *Դու երեխա՞ ես։ Չէ որ դու, Էրոս, շատ ավելի մեծ ես, քան թե Իապետը։ Նրա համար, որ դու չունես մորուք և սպիտակ մազեր, դու ուզում ես երեխա համարվել չնայած նրան, որ դու ծերունի ես, միաժամանակ և արիկա։*

Էրոս.— *Քո կարծիքով ինչո՞վ եմ ես ծերուկս, այնքան խիստ վիրավորել քեզ, որ դու ուզում ես կապել ինձ։*

Զևս.—*Ինքդ ասա, անամոթ, արդյոք քիչ ես դու վիրավորել ինձ. չէ որ դու այնքան ես ծաղրում ինձ. չկա այնպիսի մի բան, որը դու չսարկեիր դառնալ ինձ. դու դարձրել ես ինձ այծամարդ, եզ, ոսկի, կարապ, արծիվ։ Իսկ ոչ մի կնոջ չսարկեցիր սիրահարվել ինձ, ոչ մեկին ես դուր չեկա՝ քո աջակցությամբ, ու ես ստիպված եմ դիմել կախարդանքի, թաքցնել ինքս ինձ։ Նրանք սիրահարվում են եզին կամ կարապին, իսկ երբ տեսնում են ինձ, ահից մեռնում են։*

Էրոս.— Այդ միանգամայն բնական է։ Նրանք, որպես մահկանացուներ չեն կարողանում դիմանալ քո տեսքին, Զևս։

Զևս.— Ապա ինչո՞ւ Ապոլոնին սիրում են Բրանխը և Գիացինտը։

Էրոս.— Սակայն Դաֆնան փախավ նրանից, թեպետ Ապոլոնի մազերը երկար են և նա մորուք չունի։ Եթե դու ուզում ես դուր գալ, ապա մի թափահարի քո էգիդան, մի կրի հետդ կայծակները, այլ որքան հնարավոր է ավելի հաճելի տեսք ընդունիր՝ երկու կողմից հավաքելով գանգուր մազերդ և գլխիդ փաթաթան դնելով. հագիր ծիրանի զգեստ, ոսկե սանդալներ, քայլիր նրբադեղ քայլվածքով՝ ֆլեյտայի և տիմպանների հնչյունների տակ, և այն ժամանակ դու կտեսնես, որ դու կունենաս ավելի շատ ուղեկցուհիներ, քան Դիոնիսը մենադներ ունի։

Զևս.— Կորիր։ Ես չեմ ուզում դուր գալ, եթե դրա համար հարկավոր է այդպիսին դառնալ։

Էրոս.— Այդ դեպքում, Զևս, այլևս մի ձգտիր սիրուն. չէ որ այդ դժվար չէ։

Զևս.— Ոչ, սիրուց ես չեմ հրաժարվի, բայց ուզում եմ, որ այդ ինձանից ավելի քիչ ջանք պահանջի, այս պայմանով ես ազատ եմ արձակում քեզ։

3. ԶԵՎՍ ԵՎ ՀԵՐՄԵՍ

Զևս.— Հերմես, ճանաչո՞ւմ ես դու Ինախայր գեղեցկուհի աղջկան։

Հերմես.— Ճանաչում եմ, չէ որ դու խոսում ես Իոյի մասին։

Զևս.— Երևակայիր, նա այլևս աղջիկ չէ, այլ հորթ։

Հերմես.— Այ քեզ հրաշք։ Իսկ ի՞նչ ձևով է տեղի ունեցել այդ վերափոխումը։

Զևս.— Նրան վերափոխել է Հերան՝ խանդից դրդված։ Բայց այդ դեռ քիչ է և դժբախտաբար աղջկա համար նոր տառապանք է հնարել նա. դրել է նրա մոտ բազմաչյա մի հովիվ—Արգոս է նրա անունը—և ահա նա անդադրում պահպանում է նրան։

Հերմես.— Ի՞նչ պետք է անենք ուրեմն, մենք։

Զևս.— Թռիր Նեմեայա. այնտեղ արածացնում է նրան Արգոսը. սպանիր նրան, իսկ Իոյին ծովով անցկացրու Եգիպտոս և դարձրու նրան Իզիդա։ Թող այսուհետև նա այնտեղ աստվածուհի լինի,

կատարի Նեղոսի հեղեղումները, կարգադրի քամիներին և պահպանի ծովայիններին։

4. ՋԵՎՍ ԵՎ ՀԱՆԻՄԵԴ

Ջևս.— Եվ ահա, Հանիմեդ, մենք հասանք։ Համբուրիր ինձ, որ համոզվես, որ ես չունեմ այլևս կեռ կռուց, ոչ սուր մագիլներ, ոչ էլ թևեր, ինչպես առաջ, երբ ես քեզ թռչուն էի թվում։

Հանիմեդ.— Մի՞թե դու, մարդ, հենց նոր արծիվ չէի՞ր. մի՞թե դու բարձրից չթռար և չհափշտակեցիր ինձ՝ իմ հողի միջից։ Այդ ինչպե՞ս պատահեց, որ հանկարծ անհայտացան քո թևերը և տեսքդ էլ միանգամայն ուրիշ դարձավ։

Ջևս.—Սիրելի տղա, ես ոչ մարդ եմ ոչ էլ արծիվ, այլ բոլոր աստվածների արքան. և արծվի վերափոխվեցի լոկ այն պատճառով, որ այդ հարմար էր իմ նպատակի համար։

Հանիմեդ.— Այդ ինչպե՞ս։ Դու հենց այդ նույն Պա՞նն ես։ Հապա ինչո՞ւ դու սրինգ չունես, եղջյուրներ չունես և ոտներդ էլ բրդոտ չեն։

Ջևս.— Ուրեմն դու կարծում ես, որ բացի Պանից ուրիշ աստվածներ չկա՞ն։

Հանիմեդ.—Իհարկե։ Մենք միշտ զոհաբերում ենք նրան չամորձատված այծը այն անձավի մոտ, որտեղ նա ապրում է։ Իսկ դու երևի հափշտակեցիր ինձ, որպեսզի սարկուբյան վաճառես։

Ջևս.— Մի՞թե դու երբեք չես լսել Ջևսի անունը և երբեք չես տեսել Գարգարի վրա այն աստծու զոհասեղանը, որը ուղարկում է անձրև, որտա և կայծակ։

Հանիմեդ.— Ուրեմն, սիրելիս, այդ դո՞ւ էիր, որ նորերս ուղարկեցիր մեզ այդպիսի սարսափելի կարկուտ։ Այդ քո՞ մասին են ասում, որ դու ապրում ես երկնքում և այնտեղ աղմուկ ես առնում։ Ուրեմն այդ քե՞զ էր հայրս զոհաբերել ոչխար։ Բայց ի՞նչ վատ բան եմ արել ես։ Ինչո՞ւ հափշտակեցիր դու ինձ, աստվածների արքա։ Իմ ոչխարները մենակ մնացին նրանց վրա, երևի, կհարձակվեն գայլերը։

Ջևս.— Դու դեռ անհանգստանում ես ոչխարների՞ համար։ Հասկացիր, որ դու անմահացար և կմնաս այստեղ մեզ հետ միասին։

Հանիմեդ.— Այդ ի՞նչպես։ Դու հետ չե՞ս տանի ինձ այսօր Իդա։

Ջևս.— Ոչ։ Այդ ժամանակ կարիք չկար, որ ես աստծուց վերափոխվեի աղծվի։

Հանիմեդ.— Բայց հայրս կսկսի որոնել ինձ և, կբարկանա, իսկ վաղը կծեծի ինձ նրա համար, որ ես թողել եմ հոտը։

Ջևս.— Բայց նա քեզ չի տեսնի։

Հանիմեդ.—Ոչ, ոչ։ Ես ուզում եմ գնալ հորս մոտ։ Եթե դու ինձ հետ տանես, ապա խոստանում եմ, որ նա ոչխար կդոհաբերի քեզ, որպես իմ փրկագինը, մենք ունենք մեկ եռամյա խոշոր ոչխար—նա մեր հոտի նոխազն է։

Ջևս.— Որքան հասարակ ու անմեղ է այս տղան, իսկական երեխա է։ Լսիր ինձ, Հանիմեդ, թող դու այդ բոլորը և մոռացիր ամեն ինչ—հոտը, Իդան։ Դու հիմա երկնաբնակ ես,—և այստեղից կարող ես շատ բարիք առաքել հորդ և հայրենիքիդ։ Պանրի և կաթի փոխարեն դու ամբրա կուտես և նեկտար կխմես. դու մեզ բոլորիս համար նեկտար կլցնես և կմատուցես։ Իսկ որ ամենից կարևորն է, դու այլևս մարդ չես լինի, այլ անմահ կդառնաս, քո անվան մի աստղ կշողշողա, երկնքում,—մի խոսքով քեզ սպասում է կատարյալ երանություն։

Հանիմեդ.— Իսկ եթե ես ուզենամ խաղերով զբաղվել, ապա ո՞վ կխաղա ինձ հետ։ Իդայում ես շատ ընկերներ ունեի։

Ջևս.— Այստեղ քեզ հետ կխաղա Էրոսը, իսկ ես խաղալու համար քեզ շատ ու շատ վեդ կտամ։ Դու միայն առույգ և ուրախ եղիր և մի մտածիր այն մասին, ինչ մնացել է ներքևում։

Հանիմեդ.—Բայց ես այստեղ ձեր ինչի՞ն կարող եմ պետք դալ։ Մի՞թե այստեղ էլ պետք կլինի հոտ արածացնել։

Ջևս.— Ոչ, դու մեր մատուռակը կլինես, նեկտար կլցնես և կսպասարկես մեր ճաշասեղանին։

Հանիմեդ.— Այդ դժվար չէ. ես գիտեմ, թե ինչպես պետք է լցնել և մատուցել կաթով գավաթը։

Ջևս.—Ահա, նորից նա հիշում է կաթը և մտածում, որ նա պետք է սպասարկի մարդկանց։ Հասկացիր, որ հիմա մենք երկնքումն ենք, և խմում ենք—ես արդեն ասացի քեզ—նեկտար։

Հանիմեդ.— Այդ կաթից ավելի համե՞ղ է։

Ջևս.— Շուտով կիմանաս և համբ տեսնելուց հետո այլևս կաթ չես ցանկանա։

Հանիմեդ.— Իսկ դիշերը ես որտե՞ղ պետք է քնեմ։ Իմ ընկեր Էրոսի՞ հետ։

Ջևս.— Ոչ, ես նրա համար էլ հափշտակեցի քեզ, որպեսզի մենք միասին քնենք։

Հանիմեդ.— Դու չես կարողանում մենակ քնել և կարծում ես, որ քեզ ավելի հաճելի կլինի ինձ հետ քնել։

Ջևս.— Իհարկե, քեզ նման գեղեցիկի հետ։

Հանիմեդ.— Ի՞նչ օգուտ կարող է լինել քնի համար—գեղեցկությունից։

Ջևս.— Գեղեցկությունն ինչ որ քաղցր հմայք ունի և քունն ավելի հաճելի է դարձնում։

Հանիմեդ.— Իսկ իմ հայրը, միանգամայն հակառակն էր, նա բարկանում էր, երբ ինձ հետ էր քնում, և առավոտը պատմում էր, որ ես չեմ թողնում նրան քնել, շուռ ու մուռ եմ գալիս, հրում եմ նրան և ինչ որ բան եմ ասում քնիս մեջ. այդ պատճառով սովորաբար նա ինձ մորս մոտ էր ուղարկում քնելու։ Տես հա, եթե դու ինձ հափշտակել ես այդ նպատակի համար, ապա ավելի լավ է վերադարձրու ինձ Իդա, թե չէ դու քուն չես ունենա իմ մշտապես շուռ ու մուռ գալու պատճառով։

Ջևս.— Հենց այդ է, որ ամենից շատ հաճելի կլինի ինձ. ես ուզում եմ անքուն գիշերներ անցկացնել քեզ հետ՝ համբուրելով և գրկելով քեզ։

Հանիմեդ.— Ինչպես կուզես։ Ես կքնեմ, իսկ դու կարող ես համբուրել ինձ։

Ջևս.— Երբ ժամանակը կգա, մենք ինքներս կտեսնենք, թե ինչպես վարվենք։ Հերմես, վերցրու հիմա նրան քեզ հետ, տուր Թող ըմպի անմահության, սովորեցրու, թե ինչպես պետք է մատուցի գավաթը և բեր մեր խնջույքին։

5. ՀԵՐԱ ԵՎ ՋԵՎՍ

Հերա.— Այն պահից սկսած, երբ դու հափշտակեցիր և բերիր այստեղ Թրագիացի այդ տղային, դու սառել ես դեպի ինձ, Ջևս։

Զևս.— Հերա, դու խանդում ես նույնիսկ այդ անմեղ և անվնաս տղայի՞ն: Ես կարծում էի, որ դու արհամարհում ես միայն այն կանանց, որոնք միակցվում էին ինձ հետ:

Հերա.— Իհարկե, և այդ շատ վատ է և անվայել, որ դու բոլոր աստվածների առջև, Ողնում ես ինձ, օրինական ամուսնուդ, և երկիր ես իջնում սիրային արկածների համար, վերափոխվելով մերթ ոսկու, մերթ այծամարդու, մերթ եզան: Բայց նրանք գոնե երկրի վրա են մնում, իսկ այդ երեխային, ամենապատուականդ աստվածների մեջ, դու հափշտակեցիր Իդայից և երկինք բերիր, և ահա, նա ապրում է մեզ հետ և խոսքով մատուռակ է հանդիսանում: Կարծես շատ մեծ կարիք ունեիր դու մատուռակի. մի՞թե Հերան ու Հեփեստոսը հրաժարվել են մեզ սպասարկելուց: Ոչ, բանն այն է, որ դու չես ընդունում գավաթը նրանից՝ մինչև որ բոլորի աչքի առաջ չհամբուրես նրան, և այդ համբույրը քեզ համար նեկտարից էլ քաղցր է. այդ պատճառով դու հաճախ ես ըմպելիք պահանջում՝ առանց որևէ ծարավ զգալու: Պատահում է, որ մի փոքր ըմպելուց հետո, դու վերադարձնում ես գավաթը տղային, տալիս ես, որ նա ըմպի և հետ վերցնելով գավաթը նրանից, խմում ես մնացածը, շուրթերդ հպելով այն տեղին, որին նա էր հպվել, որպեսզի այսպիսով միաժամանակ և խմես և համբուրես: Իսկ անցյալ օրը, բոլոր աստվածների արքադ և հայրդ, մի կողմ դնելով էգիդադ և շանթդ, նստեցիր նրա հետ վեդ խաղալու,—դու, քո այդ մեծ մորուքովդ: Դու մի կարծիր, թե այդ բոլորն այդպես էլ անցնում է աննկատելի. ես ամեն ինչ հիանալի տեսնում եմ:

Զևս.—Ի՞նչ սարսափելի բան կա դրանում, Հերա, ըմպելու ժամանակ համբուրել մի այդպիսի սքանչելի տղայի և հրճվել միաժամանակ թե համբույրով և թե նեկտարով: Եթե ես հրամայեմ նրան գոնե մեկ անգամ համբուրել քեզ, դու այլևս չես հանդիմանի ինձ նրա համար, որ ես նրա համբույրը նեկտարից ավելի բարձր եմ դնահատում:

Հերա.— Դու խոսում ես ինչպես տղաներին անբարոյականացնող: Հուսով եմ, որ ես այդ աստիճանի չեմ կորցնի խելքս, որպեսզի թույլ տամ, որ իմ շուրթերին դիպչի այդ փափկակյաց, կանացիակերպ Թրակիացին:

Զևս.— Պատվելիս, դադարիր հանդիմանելուց իմ սիրեցյալին.

այդ կանացիակերպ, վախկակյաց բարբարոսն ինձ համար ավելի սիրելի ու ցանկալի է, քան... բայց ես չեմ վերջացնի խոսքս, այլևս չեմ գրգռի քեզ:

Հերա.— Ինձ համար միևնույնն է, թեկուզ ամուսնացիր նրա հետ. ես միայն հիշեցնում եմ քեզ, թե դու հարկադրում ես ինձ որքա՞ն վիրավորանք կրել քո այդ մատուռակի պատճառով:

Զևս.— Այո, իհարկե, մեր սեղանին պետք է սպասարկի ուղղակի դարբնոցից եկող ամբողջովին ածուխի փոշիով ծածկված և աքցանը նոր թողած քո կաղ տղան—Հեփեստոսը, իսկ մենք պետք է գավաթն ընդունենք նրա այդ սքանչելի ձեռքերից և դեռ համբուրենք, իսկ չէ որ անգամ դու, նրա մայրը, ոչ այնքան հաճույքով կհամբուրեիր նրան, երբ նրա ամբողջ դեմքը մրով է ծածկված: Այդ ավելի հաճելի է, այդպես չէ՞: Այդպիսի մատուռակը շատ ավելի հարմար է աստվածների խնջույքի համար, իսկ Հանիբեդին պետք է հետ ուղարկել Իդա. չէ որ նա մաքուր է, նրա մատները վարդագույն են, և նա հմտորեն է մատուցում գավաթը և որ ամենից շատ է վշտացնում քեզ, նա ավելի անուշ է համբուրում, քան նեկտարը:

Հերա.—Այժմ Հեփեստոսը քեզ համար և կաղ է, և նրա ձեռքերն անարժան են քո գավաթին, և նա մրոտված է, և նրան տեսնելիս քո սիրտը խառնում է, և այս բոլորն այն պահից հետո, երբ Իդայում աճեց այդ դանդրահեր գեղեցիկ տղան. առաջ դու այդ բոլորը չէիր տեսնում և ոչ ածուխի փոշին, ոչ դարբնոցը չէին խանգարում քեզ ըմպելիք ընդունելու Հեփեստոսից:

Զևս.— Հերա, դու ինքդ քեզ տանջում ես,— ահա այն բոլորը, ինչին դու հասնում ես, իսկ իմ սերը դեպի այդ տղան, քո խանդից ավելի է մեծանում: Իսկ եթե դու ղղվում ես գավաթն ընդունել գեղեցիկ տղայի ձեռքից, ապա թող քեզ սպասարկի քո տղան, իսկ դու, Հանիմեդ, ըմպելիք կմատուցես միայն ինձ և ամեն անգամ կրկնակի կհամբուրես ինձ—մեկ անգամ մատուցելիս և մեկ անգամ դատարկ գավաթն ինձանից ընդունելիս: Այդ ի՞նչ է: Դու լա՞ց ես լինում: Մի վախենա, վատ կլինի նրան, ով կփորձի վիրավորել քեզ:

6. ՀԵՐԱ. ԵՎ ԶԵՎՍ

Հերա.— Ինչ վարքի տեր է, Զևս, Իքսիոնեսը:

Զևս.— Նա լավ մարդ է և հիանալի ընկեր է խնջույքներում.

նա չէր գոնվի աստվածների շրջանում, եթե արժանի լիներ կոդմանել մեր սեղանի շուրջը։

Հերա.— Խնդիրն այն է, որ անարժան է. նա անամոթ է և նա չպետք է շփվի մեզ հետ։

Զևս.— Այդ ի՞նչ է արել նա։ Կարծում եմ, որ ես էլ պետք է իմանամ այդ մասին։

Հերա.— Էլ ինչ ... ինչպե՞ս ... Բայց ես ամաչում եմ ասել, նա համարձակվեց այնպիսի՛ քայլի դիմել։

Զևս.— Առավել ևս դու պետք է ինձ ասես այդ, եթե նրա վարմունքն այդքան խայտառակ է։ Արդյոք չի՞ ցանկացել նա գայթակղեցնել որևէ մեկին։ Ես դուշակում եմ, թե ինչ կարգի է նրա այդ խայտառակ վարմունքը, որի մասին դու անհարմար ես համարում անդամ խոսել։

Հերա.— Նա ուզում էր ինձ գայթակղեցնել Զևս,— ինձ և ոչ թե ուրիշ որևէ մեկի, և այդ արդեն վաղուց է սկսվել։ Սկզբում ես չէի հասկանում, թե նա այդպես սևեռուն, առանց հայացքը հեռացնելու, ինչո՞ւ էր նայում ինձ. միաժամանակ նա հառաչում էր, և նրա աչքերը լցվում էին արտասուքով։ Երբ ես ըմպելուց հետո գավաթը վերադարձնում էի Հանիմեդին, նա պահանջում էր, որ իրեն համար լցնեն նույն գավաթի մեջ և գավաթը վերցնելով համբուրում էր այն և սեղմում աչքերին և նորից նայում էր ինձ,— այն ժամանակ ես սկսեցի հասկանալ, որ այդ բոլորը նա անում է սիրուց դրդված։ Երկար ժամանակ ես ամաչում էի պատմել քեզ այդ մասին և կարծում էի, որ նրա խելագարությունը կանցնի։ Բայց ահա նա համարձակվեց արդեն ուղղակի սիրո մեջ բացատրվել ինձ. այն ժամանակ ես, թողնելով նրան արցունքների մեջ գետնին պառկած, փակեցի ականջներս, որպեսզի չլսեմ նրա վիրավորական աղերսանքները ու եկա քեզ մոտ՝ ամեն ինչ պատմելու։ Այժմ ինքդ որոշիր, թե ինչպես պատժել այդ մարդուն։

Զևս.— Ահա թե ինչ։ Սրիկա։ Իմ դե՞մ է գնացել և ոտնձգությո՞ւն է արել իմ՝ Հերայի հետ ամուսնության սրբության դեմ։ Այդ աստիճան հարբե՞լ է նեկտարից։ Մենք ինքներս ենք մեղավոր։ Մենք շատ հեռու ենք գնացել՝ մեր սիրո մեջ դեպի մարդիկ—մեր սեղանակիցները դարձնելով նրանց։ Չի կարելի մեղադրել մարդկանց նրա համար, որ մեր ըմպելիքի համն առնելով ու երկնային գեղեցկությունները տեսնելով, ինչպիսիք նրանք եր-

բեք չեն տեսել երկրի վրա, սիրով համակված, նրանք ցանկանան ճաշակել նրանց, իսկ չէ որ սերը մեծ ուժ է և նա սիրում է ոչ միայն մարդկանց, այլ երբեմն նաև մեզ։

Հերա.— Քեզ իրոք սիրում է սերը և, ինչպես ասում են, քրթիցդ բռնած մարն է ածում ուր որ ուզում է, ու դու գնում ես, ուր որ տանի նա քեզ և անտրտունջ վերափոխվում ես՝ ինչի որ նա հրամայում է քեզ։ Դու իսկական ստրուկն ու խաղալիքն ես սիրո։ Ճիշտ հիմա եմ հասկանում, թե դու ինչո՞ւ ես ներում Իքսիոնին. չէ որ դու ինքդ մի ժամանակ գայթակղեցրիր նրա կնոջը, և նա քեզ համար ծնեց Պիբոտոյեսին։

Զևս.— Դու դեռ հիշո՞ւմ ես երկրի վրա կատարած իմ բոլոր չարաճճիությունները։ Բայց դիտե՞ս, թե ինչ կանեմ ես Իքսիոնին։ Մենք չենք պատժի նրան և չենք վռնդի մեր շրջանից. այդ անհարմար է, եթե նա սիրահարված է, ու լավիս է, ինչպես դու ես ասում, և շատ է տառապում...

Հերա.— Այդ դեպքում ի՞նչ։ Չե՞ս ուզում արդյոք դու ես որևէ վիրավորական բան ասել։

Զևս.— Դե ոչ։ Մենք ամպից միանգամայն քեզ նման մի ուրվական կշինենք, երբ ինջույքը կվերջանա և նա բուռ սովորականի պատկած կլինի սիրուց՝ առանց աչքերը փակելու, այդ ուրվականը բաց կթողնենք նրա մահիճը։ Այդպիսով նա կդադարի տառապելուց, կարծելով որ հասել է իր ցանկությունների հագեցմանը։

Հերա.— Վերջ տուր։ Թող նա կործանվի նրա համար, որ իր ցանկությունների առարկա է դարձրել նրանց, ովքեր իրենից բարձր են։

Զևս.— Համաձայնվիր, Հերա։ Ինչ կկորցնես դու նրանից, որ Իքսիոնը սիրի ամպին։

Հերա.— Բայց չէ որ նրան կթվա, որ ամպը ես եմ, չէ որ կատարյալ նմանություն կլինի, այնպես որ իր խայտառակ վարմունքը նա կկատարի ուղղակի իմ նկատմամբ։

Զևս.— Հիմարություններ մի՛ խոսի։ Երբեք ամպը Հերա չի լինի, իսկ Հերան՝ ամպ. միայն Իքսիոնը խաբված կլինի։

Հերա.— Բայց մարդիկ կոպիտ են և տգետ։ Երկիր վերադառնալով, նա թերևս սկսի պարծենալ և բոլորին պատմել, որ Հերայի հետ եղել է նույն մահիճում՝ օգտվելով Զևսի իրավունքներով։ Նա, մի գուցե այն էլ ասի, որ ես սիրահարվել եմ նրան, իսկ

մարդիկ կհավատան, չիմանալով, որ նա գիշերը անց է կացրել ամպի հետ։

Զևս.— Իսկ եթե նա որևէ նման բան ասի, այդ դեպքում ուրիշ բան. նա կնեռվի դժոխք, կկապի անիվից և նա շարունակ կպտտվի նրա վրա՝ անընդհատ տանջանքներ և պատիժ կրելով ոչ թե սիրո համար—դրանում ոչինչ վատ բան չկա,— այլ իր պարծենկոտության համար։

7. ՀԵՓԵՍՏՈՍ ԵՎ ԱՊՈԼՈՆ

Հեփեստոս.— Ապոլոն, տեսե՞լ ես դու Մայայի նորածին երեխային։ Որքան գեղեցիկն է։ Եվ բոլորին էլ ժպտում է։ Նրանից մի ինչ որ շատ լավ բան դուրս կգա. այդ արդեն երևում է։

Ապոլոն.— Դու շատ լավ բա՞ն ես սպասում այդ երեխայից։ Բայց չէ որ նա Իապետից մեծ է, եթե դատելու լինենք նրա անամոթ արարքներով։

Հեփեստոս.— Ի՞նչ վատ բան կարող էր անել նորածին երեխան։

Ապոլոն.—Հարցրու Պոսիդոնից, որից նա գողացել է նրա նռաժանին, կամ Արեսից գաղտնի նա դուրս է քաշել նրա սուսերը պատյանից. էլ չխոսենք իմ մասին. նա ինձնից փախցրել է աղեղս ու նետերս։

Հեփեստոս.— Ինչպես։ Նորածին երեխան, որը դեռ դժվարությամբ է կանգնում ոտների վրա՞։

Ապոլոն.— Դու ինքդ, Հեփեստոս, կարող ես համոզվել, թող միայն մոտենա նա քեզ։

Հեփեստոս.— Ահա և մոտեցավ նա։

Ապոլոն.— Եվ ի՞նչ։ Քո բոլոր գենքերը տեղո՞ւմն են։ Ոչինչ չի՞ կորել։

Հեփեստոս,—Ամեն ինչ տեղումն է, Ապոլոն.

Ապոլոն.— Մի լավ նայիր։

Հեփեստոս.— Երդվում են Զևսով, ես չեմ տեսնում ունելիքը։

Ապոլոն.— Կտեսնես դու այն տղայի բարուրի մեջ։

Հեփեստոս.— Ինչ ճարպիկ ձեռք է ունեցել։ Կարծես նա դեռ մոր արգանդում ուսումնասիրել է գողության արվեստը։

Ապոլոն.— Դու դեռ չես լսել, թե նա արդեն ինչպես է խոսում՝ արագ և պերճախոս։ Եվ արդեն սկսում է սպասարկել մեզ։

Երեկ նա Էրոսին ըմբշամարտի հրավիրեց և մեկ ակնթարթում հաղթեց նրան, չգիտեմ, թե ինչ ձևով ոտ խփելով նրան. իսկ հետո, երբ բոլորը սկսեցին գովել նրան և Աֆրոտիդեն նրա տարած հաղթանակի համար գրկեց նրան, նա դողացավ նրա գոտին, իսկ Զևսից, մինչ նա ծիծաղում էր, թոցրեց նրա գայիտոնը. և եթե շանթն չափազանց ծանր չլիներ և այնքան հրավառ, նա երևի կթոցներ և շանթը:

Հեփեստոս.— Այո, դա ինչ որ հրաշալի երեխա է:

Ապոլոն.— Այդ դեռ քիչ է. նա արդեն երաժիշտ էլ է:

Հեփեստոս.— Իսկ այդ դու ինչի՞ց ես եզրակացնում:

Ապոլոն.— Ինչ որ տեղ նա սատկած կրիա է գտել—և ահա նրանից իր համար երաժշտական գործիք է շինել, ամրացրել է երկու կեռ ձողիկ, որոնք միացրել է իրար կամրջակով, մեխել է սեպիկներ, ամրացրել նեցուկը, ձգել յոթը լար և սկսել է նվագել, Հեփեստոս, շատ վարժ և հմուտ, այնպես, որ ես ստիպված եմ լինում նախանձել նրան, իսկ որքան ժամանակ է արդեն, որ ես վարժվում եմ նվագելու կիթառի վրա: Սա դեռ բոլորը չէ. Մայան պատմում էր, որ դիշերները նա չի մնում երկնքում, այլ անգործությունից իջնում է տարտարոսը, երևի այն նպատակով, որ այնտեղից էլ մի բան թոցնի: Թևեր էլ ունի նա, և նա ինչ որ գավազան է պատրաստել, որը հրաշագործ ուժ ունի, նրա օգնությամբ նա շարժում է հոգիները և մեռածներին իջեցնում ստորերկրյա թագավորություն:

Հեփեստոս.— Ես եմ տվել նրան այդ գավազանը, որ հեռը խաղա:

Ապոլոն.— Դրա համար նա գեղեցիկ կերպով շնորհակալություն եղավ քեզ ունելիքը...

Հեփեստոս.— Լավ որ հիշեցրիր ինձ: Գնամ հետ վերցնեմ իմ ունելիքը, եթե նա, ինչպես դու ես ասում, պահված է նրա բարուրի մեջ:

8. ՀԵՓԵՍՏՈՍ ԵՎ ԶԵՎՍ

Հեփեստոս.— Ի՞նչ կհրամայես, որ ես անեմ, Զևս: Ես եկել եմ համաձայն քո հրամանի՝ հետս վերցնելով շատ լավ սրված կացինը,— եթե հարկավոր լինի, նա մի հարվածով կճեղքի քարը:

Զևս.— Հիանալի է, Հեփեստոս, խփիր իմ գլխին և ճեղքիր այն երկու մասի։

Հեփեստոս.— Դու կարծեմ ուզում ես համոզվել՝ խելքս տե՞ղն է, թե ոչ։ Հրամայիր ես քեզ անեմ այլ բան, ինչ հարկավոր է քեզ։

Զևս.— Ինձ հենց այդ է հարկավոր, որ դու ճեղքես իմ գանգը։ Եթե դու չենթարկվես, ստիպված կլինես, ոչ առաջին անգամ լինելով, զգալ իմ ցասումը. պետք է խփել ամբողջ ուժով, առանց ուշացնելու։ Ես ծննդաբերական անտանելի ցավեր եմ զգում իմ ուղեղում։

Հեփեստոս.— Տես հա, Զևս, դժբախտություն չդուրս գա... կացինս սուր է, գործն առանց արյան չի ստացվի—ու նա քեզ համար այնպիսի լավ տատմեր չի լինի, ինչպիսին Իլիտիան է։

Զևս.— Համարձակ խփիր, Հեփեստոս, ես գիտեմ, թե ինչ է պետք ինձ։

Հեփեստոս.— Էհ, ինչ արած, կխփեմ, այդ իմ կամքը չէ. ի՞նչ կարող եմ անել ես, երբ դու ես հրամայում։ Այս ի՞նչ բան է։ Լրիվ սպառազինված կո՞ւյս։ Ծանր բան էր նստած քո գլխում, Զևս, զարմանալի չէ, որ դու վատ տրամադրության մեջ էիր. գանգի մեջ կրել այսպիսի խոշոր դուստր, այն էլ լրիվ սպառազինված, հեշտ բան չէ։ Այդ ինչ է, գլխի փոխարեն ռազմական ճամբա՞ր ես կրում։ Իսկ դուստրդ արդեն աստղատակում ու ռազմական պար է պարում, վահանն է թափահարում, նիզակն է բարձրացնում և ամբոջովին շողշողում է աստվածային ներշնչումից։ Բայց գլխավորն այն է, որ նա իսկական գեղեցկուհի է և մի քանի ակնթարթում արդեն հասակ առավ. միայն նրա աչքերը ինչ որ գորշ-երկնագույն են,— բայց այդ լավ է հարմարում նրա սաղավարտին։ Զևս, որպես պարգև ծննդաբերությանդ ժամանակ իմ ցույց տված օգնության, թույլ տուր ամուսնանամ նրա հետ։

Զևս.— Այդ անհնար է, Հեփեստոս, նա կցանկանա հավիտյան կույս մնալ։ Իսկ ինչ վերաբերում է ինձ, ապա ես ոչինչ դեմ չունեմ։

Հեփեստոս.— Ինձ միայն այդ էլ հարկավոր է, մնացածի մասին ես ինքս կհոգամ և կաշխատեմ նրա հետ պործս կարգադրել։

Զևս.— Եթե քեզ թվում է հեշտ, վարվիր ինչպես պիտես, միայն հավատացնում եմ քեզ, որ դու ցանկանում ես անիրագործելին։

9. ՊՈՍԻԴՈՆ ԵՎ ՀԵՐՄԵՍ

Պոսիդոն.— Հերմես, կարելի՞ է տեսնվել Զևսի հետ։

Հերմես.— Չի կարելի, Պոսիդոն։

Պոսիդոն.— Այնուամենայնիվ դու զեկուցիր։

Հերմես.— Մի պնդի, խնդրում եմ, հիմա անհարմար է, դու չես կարողանա տեսնվել նրա հետ։

Պոսիդոն.— Նա հիմա կարող է լինել Հերա՞յի հետ։

Հերմես.— Ոչ, բոլորովին էլ այդ չէ։

Պոսիդոն.— Հասկանում եմ, նրա մոտ Ganymedes է։

Հերմես.— Այդ ևս չէ. նա անառողջ է։

Պոսիդոն.— Ի՞նչ է պատահել նրան, Հերմես։ Դու ինձ վախեցնում ես։

Հերմես.— Դա մի այնպիսի բան է, որ ես ամաչում եմ ասել։

Պոսիդոն.— Կարիք չունես ամաչելու. չէ որ ես քո հարեղբայրն եմ։

Հերմես.— Նա, գիտես, հենց նոր ծնեց։

Պոսիդոն.— Ի՞նչպես։ Նա ծնե՞ց։ Բայց ո՞ւմնից. մի՞թե նա երկսեռ էակ է, և մենք այդ մասին ոչինչ չգիտեինք։ Նրա փորից ամենևին ոչինչ չէր երևում։

Հերմես.— Այդ ճիշտ է, բայց պատուղն այդտեղ չէր։

Պոսիդոն.— Հասկանում եմ. նա նորից գլխից է ծնել, ինչպես մի ժամանակ Աթենասին, բայց պղտաբեր գլուխ է ունեցել։

Հերմես.— Ոչ, այս անգամ Սեմելայից նա երեխա էր կրում ազդրի մեջ։

Պոսիդոն.— Այ կարիճ, ի՞նչ արտասովոր պղտաբերություն։ Եվ մարմնի բոլոր մասերում։ Բայց ո՞վ է այդ Սեմելան։

Հերմես.— Ֆիբիացի է, Կադմայի դուստրերից մեկը։ Զևսը զուգակցվեց նրա հետ, և աղջիկը հղիացավ։

Պոսիդոն.— Եվ այժմ Զե՞ւս է ծնել նրա փոխարեն։

Հերմես.— Այո, այդ այդպես է, թեպետ և անհավանական է թվում քեզ։ Բանն այն-է, որ Հերան, դու դե գիտես, թե որքան խանդոտն է նա, գաղտնի եկել է Սեմելայի մոտ և համոզել է

նրան պահանջել Զևսից, որ նա ներկայանա իրեն որոտով և կայծակով։ Զևսը համաձայնվել և եկել է իր հետ վերցնելով նաև շանթը, բայց դրանից վառվել է տունը ու Սեմելան զոհվել է բոցի մեջ։ Այն ժամանակ Զևսը հրամայեց ինձ կտրել դժբախտ կնոջ փորը և բերել իրեն դեռևս չհասունացած, յոթնամսյա պտուղը։ Իսկ երբ ես կատարեցի այդ, նա ճեղքեց իր ազդրը և դրեց այնտեղ պտուղը, որպեսզի նա հասունանա։ Եվ ահա այժմ, երրորդ ամսում, նա երեխա ծնեց ու ծննդաբերական ցավերից իրեն անառողջ է զգում։

Պոսիդոն.— Իսկ ո՞րտեղ է հիմա այդ երեխան։

Հերմես.— Ես նրան տարա Նիսա և հանձնեցի Նիմֆաների դաստիարակությանը, նրան կոչում են Դիոնիս։

Պոսիդոն.— Ուրեմն նշանակում է եղբայրս այդ Դիոնիսի միաժամանակ թե՛ մայրն է և թե՛ հա՞յրը.

Հերմես.— Այդպես է ստացվում։ Բայց ես գնամ. պետք է ջուր բերել նրա վերքերի համար և անել այն ամենը, ինչ անհրաժեշտ է ծննդկանին խնամելու համար։

10. ՀԵՐՄԵՍ ԵՎ ՀԵԼԻՈՍ

Հերմես.— Հելիոս, Զևսը հրամայում է, որ դու ոչ այսօր, ոչ վաղը և ոչ էլ մյուս օրը դուրս չգաս, այլ մնաս տանը, և թող այս ամբողջ ժամանակը լինի մի երկար գիշեր։ Թող լեռները արձակեն քո ձիերին, իսկ դու հանգցրու կրակը և այդ ժամանակամիջոցում հանգստացիր։

Հելիոս.— Դու բերել ես ինձ միանգամայն անսպասելի և տարօրինակ հրաման։ Արդյոք Զևսը չի գտնում, որ ես սխալ եմ կատարել իմ ուղին, գուցե թույլ եմ տվել ձիերին դուրս գալ իրենց աղուրից և դրա համար բարկացել է ինձ վրա և որոշել է գիշերը երեք անգամ ավելի երկար անել, քան ցերեկը։

Հերմես.— Բոլորովին ոչ։ Եվ այս բոլորն արվում է ոչ ընդմիշտ։ Նրան իրեն է հարկավոր, որ այս գիշերներն ավելի երկար լինեն։

Հելիոս.— Իսկ որտե՞ղ է հիմա ինքը։ Նա քեզ որտեղի՞ց ուղարկեց ինձ մոտ այդ հրամանով։

Հերմես.— Բեոտիայից,— Ամֆիտրիոնեսի կնոջ մոտից։ Նա լուռն ցանկություն ունի՝ նրա մահճի ընկերակիցը լինել։

Հելիոս.— Մի՞թե մեկ գիշերը քիչ է նրա համար։

Հերմես.— Քիչ է։ Բանն այն է, որ այդ կապից պետք է ծնվի մի մեծ աստված, որը շատ սխրագործություններ պիտի անի, և ահա նրան հնարավոր չէ մեկ գիշերում պատրաստել։

Հելիոս.— Թող պատրաստի, հաջողություն նրան։ Միայն թե Կռոնոսի ժամանակ այդպիսի բան չէր պատահում, Հերմես,— մեզ ոչ ոք չի լսում։ Նա երբեք չէր լքում Հռեայի մահիճը, չէր հեռանում երկնքից, որպեսզի գիշերն անցկացնի Թեբեայում։ Ոչ, այն ժամանակ, օրն՝ օր էր, գիշերն էլ ժամերի քանակով ճշտությամբ համապատասխանում էր իրեն—ոչ մի տարօրինակ բան չկար, ոչ մի փոփոխություն, ասենք Կռոնոսն էլ կյանքում երբեք գործ չի ունեցել մահկանացու կնոջ հետ։ Իսկ հիմա ի՞նչ է կատարվում։ Մեկ չնչին կնոջ պատճառով ամեն ինչ պետք է գլխիվայր շրջվի, ձիերը պետք է անգործությունից ծանրաշարժ դառնան, ճանապարհը անհարմար պիտի դառնա երթի համար՝ երեք օր շարունակ դատարկ մնալով, իսկ խեղճ մարդիկ պետք է ապրեն խավարի մեջ։ Ահա այն ամենը, ինչ կշահեն նրանք Զևսի սիրային արկածներից. նրանք ստիպված կլինեն նստել և սպասել մինչև որ խոր մթության ծածկոցի ներքո կպատրաստվի քո այդ մեծ աթլետը։

Հերմես.— Լռիր, Հելիոս, թե չէ նման ճառերի համար կարող է քեզ վատ լինել։ Իսկ ես հիմա կգնամ Սելենայի և Քնի մոտ ու կհայտնեմ նրանց Զևսի հրամանները։ Սելենան պետք է դանդաղորեն առաջ շարժվի, իսկ Քունը պետք է բաց չթողնի մարդկանց իր գրկից, որպեսզի նրանք չնկատեն, որ գիշերն այդքան երկար է դարձել։

11. ԱՖՐՈԴԻՏԵ ԵՎ ՍԵԼԵՆԱ.

Աֆրոդիտե.— Այդ ի՞նչ են ասում, այդ ի՞նչ ես ասում, Սելենա։ Կարիայի սահմաններին հասնելով դու կանգնեցնում ես քո կառքը և ներքև ես նայում Էնդիմիոնեսի վրա, որը որպես որսորդ պառկած է բաց երկնքի տակ։ Իսկ երբեմն դու նույնիսկ ճանապարհի կեսին իջնում ես երկիր՝ նրա մոտ։

Սելենա.— Հարցրու քո աղայից, Աֆրոդիտե, նա է այդ բոլորի հանցավորը։

Աֆրոդիտե.— Ահա թե ինչ։ Այո, նա իրոք, որ մեծ անբանն է։ Դու մի ինքդ մտածիր, թե ինչ էր անում նա ինձ հետ, իր սեփական մոր հետ։ Մերթ տանում էր ինձ Իդա՝ որոյացի Անքիսեսի մոտ, մերթ Լիբանա, նա նրա մոտ, գիտես՝ ասորեստանցի պատանու մոտ, որի սերը ես դեռ պետք է բաժանեի Պերսեփոնեի հետ, չէ որ նա նրան էլ ստիպեց սիրահարվել այդ պատանուն։ Ես արդեն շատ անգամ եմ սպառնացել էրոսին, որ եթե նա վերջ չտա իր արարքներին, ես կկոտրեմ նրա աղեղն ու կապարճը և կկոտրատեմ նրա թևերը,— մեկ անգամ ես նույնիսկ ծեծեցի նրան սանդալներովս, իսկ նա,— տարօրինակ բան,— իսկույն սկսում է վախենալ ինձանից և խնդրում է չպատժել իրեն, իսկ հաջորդ վայրկյանին արդեն մոռանում է այդ ամենի մասին։ Բայց, ասա ինձ, գեղեցի՞կ է արդյոք այդ էնդեմիոնեն։ Այդ դեպքում չէ որ դա մեծ մխիթարություն է դժբախտության մեջ։

Սելենա.— Նա ինձ թվում է արտակարգ գեղեցիկ, Աֆրոդիտե։ Մանավանդ, երբ նա ժայռի վրա փռելով իր թիկնոցը՝ քնում է՝ ձախ ձեռքում տեգերը բռնած, որոնք աննկատելի կերպով դուրս են սահում նրա ձեռքից, իսկ աջ ձեռքը ծալված վեր, գլխի շուրջը, որ գեղեցիկ կերպով շրջանակում է նրա դեմքը։ Այսպես պառկած է լինում նա քնի մեջ ընկղմված և շնչում է իր երկնային շնչառությունով։ Այդ ժամանակ անաղմուկ իջնում եմ ես երկրի վրա, քայլում եմ մատներիս ծայրին, որպեսզի չարթնացնեմ և չվախեցնեմ նրան...Իսկ թե ինչ է հետևում դրան, դու ինքդ էլ գիտես, կարիք չկա, որ ես քեզ ասեմ։ Մի բան միայն իմացիր, ես կործանվում եմ սիրուց։

12. ԱՖՐՈԴԻՏԵ ԵՎ ԷՐՈՍ

Աֆրոդիտե.— Էրոս, զավակս, տես թե ինչ ես անում դու, էլ չեմ ասում այն մասին, թե ինչեր ես անում դու երկրի վրա, ինչեր ես ստիպում, որ մարդիկ անեն քեզ և ուրիշների հետ, բայց դու մտածիր այն մասին, թե ինչպես ես պահում քեզ երկընքում։ Քո կամքով Ձևսը վերափոխվում է այն ամենի, ինչ անցնում է քո գլխով. Սելենային դու իջեցնում ես երկնքից երկիր,— իսկ քանի-քանի անգամ է պատահել, որ Հելիոսը քո զորմածությամբ մնացել է Կլիմենայի մոտ՝ մոռանալով ձիերի

և կառքի մասին, իսկ ինձանից, քո հարազատ մորից, դու այլևս բոլորովին չես քաշվում: Եվ չէ որ դու արդեն այնպիսի հանդգնության ես հասել, որ նույնիսկ Հռեային այնքան ատելածների մորը, նրա ծերության հասակում, ստիպեցիր սիրահարվել այդ տղային, երիտասարդ Թրագիացուն: Եվ ահա քո պատճառով նա ընկել է խելացնոր վիճակի մեջ, իր կառքին առյուծներ է լծել, իր հետ վերցրել է կորիբանտներին, որոնք իրեն պես խելահեղ են, և նրանք միասին սլանում են ամբողջ Իդայում, վերևից մինչև ներքև, նա վշտահար կանչում է իր Ատտիսին, իսկ կորիբանտներից մեկը սուսերով իր ձեռքն է վիրավորում, մյուսը հողմահար մազերով խելացնոր սուրում է լեռներում, երրորդը շեփոր է հնչեցնում, չորրորդը խփում է տիմպանները, կամ կիմվալը. այն ամենը, ինչ տեղի է ունենում Իդայում, դա համատարած ճիչ, աղմուկ ու խելահեղություն է: Իսկ ես վախենում եմ,— այն մայրը, որ ծնել է քեզ՝ ի՛ վիշտ ամբողջ աշխարհի, պետք է քեզ համար միշտ էլ վախենա,— վախենում եմ, որ Հռեան, խելահեղության պոռթկումի մեջ, կամ, ավելի շուտ, ընդհակառակը,— ուշքի գալով հրաման տա իր կորիբանտներին՝ բռնել քեզ և կտոր-կտոր անել և գցել առյուծներին կերակուր, չէ որ դու մըշտապես ենթակա ես այդ վտանգին:

Էրոս.— Հանգստացիր, մայրիկ,— ես լավ հարաբերությունների մեջ եմ նույնիսկ այդ առյուծների հետ. հաճախ բարձրանում եմ նրանց մեջքին և բաշից բռնած վարում եմ նրանց, իսկ նրանք պոչերն են շարժում, թույլ են տալիս, որ ձեռս կոխեմ նրանց երախը, լիզում են ձեռքս և բաց թողնում: Իսկ ինքը՝ Հռեան հազիվ թե ժամանակ գտնի ուշադրություն դարձնելու ինձ վրա, որովհետև նա ամբողջովին զբաղված է իր Ատտիսով: Եվ իրոք, ի՞նչ վատ բան եմ անում ես՝ բոլորի հայացքը դարձնելով գեղեցկության վրա: Ապա ինչո՞ւ դուք բոլորդ դեպի գեղեցկությունն եք ձգտում: Ինձ չպետք է մեղադրել դրանում: Խոստովանիր, մայրիկ, կուզենայի՞ր արդյոք, որ դու և Արեսը երբեք իրար չսիրեիք:

Աֆրոդիտե.— Այո, դու հզոր ես և բոլորին տիրում ես. բայց և այնպես երբևէ դու ստիպված կլինես հիշելու իմ խոսքերը:

13. ՋԵՎՍ, ԱՍԿԼԵՊԻՈՍ ԵՎ ՀԵՐԱԿԼԵՍ

Ջև.— Ասկլեպիոս և Հերակլես, վերջ տվեք մարդկանց պես իրար հետ վիճելուն: Այդ անվայել և անթույլատրելի է աստվածների խնջույքում:

Հերակլես.— Ջևս, միթե՞ դու թույլ կտաս այս կախարդին ինձանից ավելի բարձր բազմելու:

Ասկլեպիոս.— Երդվում եմ Ջևսով, այդպես էլ պետք է լինի. ես դրան արժանի եմ քեզանից շատ ավելի:

Հերակլես.— Բայց այդ ինչո՞վ, դու կայծակնահարդ: Մի դուցե նրանով, որ Ջևսը սպանեց քեզ նրա համար, որ դու անթույլատրելի բան էիր անում և որ միայն խղճալով՝ անմահություն տվին քեզ:

Ասկլեպիոս.— Դու, Հերակլես, կարծեմ արդեն մոռացել ես, թե ինչպես ինքդ այրվում էիր Էտայի վրա, այլապես դու ինձ չէիր հանդիմանի կրակով:

Հերակլես.— Այո, բայց իմ կյանքը համեմատաբար նման չէ քո կյանքին: Ես Ջևսի տղան եմ, ես այնքան սխրագործություններ եմ կատարել՝ աշխարհը հրեշներից մաքրելով, մարտնչելով վայրի գազանների դեմ և պատժելով հանցագործ մարդկանց, իսկ դու ի՞նչ ես: Վհուկ և շրջմոլիկ: Դուցե դու և կարողանաս օգնել հիվանդին՝ քո որևէ դեղերով, բայց ա՛յ տղամարդուն արժանի սխրագործություն կատարել — դրանով դու չես կարողանա պարծենալ:

Ասկլեպիոս.— Ինչ լավ ես խոսում: Իսկ ես դեռ վերջերս բուժեցի քեզ, երբ դու եկար մեզ մոտ՝ կիսով չափ տապակված, մի մարմնով, որ այրված էր սկզբում չարաբաստիկ խիտոնով, իսկ հետո կրակով: Եթե նույնիսկ չխոսենք այլ բանի մասին, ապա ինձ համար բավական է թեկուզ այն, որ ես քեզ պես սարսուռ չեմ եղել Լիդիայում բուրդ չեմ գզել՝ կանացի զգեստ հագած, և Օմֆալան չի ծեծել ինձ՝ իր սանդալով. խելահեղության պոռթկումի պահին ես չեմ սպանել տղաներիս և կնոջս:

Հերակլես.— Եթե դու չդադարես ինձ վիրավորելուց, ես հիմա ցույց կտամ քեզ, որ քո անմահությունը շատ էլ չի օգնի. կբռնեմ քեզ և գլխիվայր երկնքից ցած կգցեմ այնպես, որ ինքը Պեանը չի կարողանա նորոգել քո ջարդված գանդը:

Զևս.— Բավական է, լսո՞ւմ եք։ Մի խանգարեք մեր հավաքույթը, այլապես երկուսիդ էլ կքշեմ խնջույքից։ Լսիր, Հերակլես, կարգը պահանջում է, որ Ասկլիպիոսը բաղմի քեզանից բարձր. չէ որ նա ավելի շուտ է մեռել։

14. ՀԵՐՄԵՍ ԵՎ ԱՊՈԼՈՆ

Հերմես.— Դու ինչու ես այդպես մռայլ, Ապոլոն։

Ապոլոն.— Ախ, Հերմես։ Դժբախտությունը հետապնդում է ինձ՝ իմ սիրային գործերում։

Հերմես.— Այո, իրոք, որ այդ տխուր է։ Բայց ի՞նչն է քեզ վշտացնում։ Արդյոք Դափնեի հետ պատահած դեպքը չէ՞ որ դեռ տանջում է քեզ։

Ապոլոն.— Ոչ, այդ չէ, ես լաց եմ լինում իմ սիրեցյալի համար՝ Լակոնիացի էբալի տղայի համար։

Հերմես.— Ի՞նչ է պատահել։ Միթե՞ Գիացինթը մեռել է։

Ապոլոն.— Այո, դժբախտաբար։

Հերմես.— Իսկ ո՞վ է նրան կործանել։ Մի՞թե գտնվել է այնպիսի անխիղճ մի մարդ, որը համարձակվել է սպանել այդ սքանչելի պատանուն։

Ապոլոն.— Ես ինքս եմ սպանել նրան։

Հերմես.— Դու խենթացել ես, Ապոլոն։

Ապոլոն.— Ոչ, այդ դժբախտությունը տեղի ունեցավ իմ կամքին հակառակ։

Հերմես.— Այդ ի՞նչպես, ասա ինձ, ես ուզում եմ դիտենալ։

Ապոլոն.— Նա սովորում էր սկավառակ նետել, ես էլ դրեցի նրա հետ միասին։ Իսկ Զեփյուռը, անիծված այդ քամին, վաղուց սիրահարված էր նրան, սակայն ոչ մի հաջողություն չուներ և չէր կարողանում տանել, որ տղան ոչ մի ուշադրություն չի դարձնում նրա վրա։ Եվ ահա, երբ ես ըստ սովորականի սկավառակը վեր նետեցի, Զեփյուռը փչեց Տայգետից և սկավառակը տարավ ուղիղ դեպի տղայի գլուխը, այնպես որ հարվածից դուրս ցայտեց արյան շիթ, և իմ սիրեցյալը տեղն ու տեղը մեռավ։ Ես սկսեցի հետապնդել Զեփյուռին՝ նետեր արձակելով նրա վրա, և հետապընդեցի նրան ընդհուպ մինչև լեռները։ Իսկ տղայի համար ես այն տեղում, որտեղ հարվածել էր նրան սկավառակը՝ հողաթումբ

կառուցեցի և ստիպեցի, որ հողը նրա արյունից հլուշալի ծաղիկ ստեղծի. այդ ծաղիկը, Հերմես, ավելի սքանչելի է, քան աշխարհիս բոլոր ծաղիկները և նրա վրա երևում են մեռածի համար լաց արտահայտող նշաններ: Մի՞թե ես իրավացի չեմ, որ տուչորվում եմ վշտից:

Հերմես.— Ոչ, Ապոլոն, դու գիտեիր, որ քեզ սիրեցյալ ես դարձրել մահկանացուի, ուստի դու չպետք է զանգատվես, որ նա մեռել է:

15. ՀԵՐՄԵՍ ԵՎ ԱՊՈԼՈՆ

Հերմես.— Դու մի մտածիր, Ապոլոն, նա կաղ, արհեստով դարբին, բայց և այնպես կին ստացավ աստվածուհիներից ամենագեղեցիկներին՝ Աֆրոդիտեին և Քարիտային:

Ապոլոն.— Նրա բախտը բերել է, Հերմես: Ինձ մի բան է միայն զարմացնում, թե ինչպես են կարողանում նրանք ապրել նրա հետ, մանավանդ երբ տեսնում են, թե ինչպես է նրանից քրտինքը հոսում, թե ինչպես նրա ամբողջ դեմքը մրով է պատած՝ անընդհատ վառարանի մեջ նայելուց: Եվ չնայած դրան, նրանք դրկում են նրան, համբուրում ու քնում են նրա հետ:

Հերմես.— Այդ ինձ ևս բարկացնում է և ստիպում է, որ ես նախանձեկ Հեփեստոսին: Ապոլոն, դու կարող ես հանգիստ կրել քո երկար մազերը, կիթառ նվագել, կարող ես որքան ուզես պարծենալ քո գեղեցկությամբ, իսկ ես՝ իմ վայելչակազմությամբ և քնար նվագելով, միևնույն է, երբ քնի ժամանակը կգա, մենք մենակ կպառկենք:

Ապոլոն.— Ընդհանրապես սիրո մեջ ես դժբախտ եմ. ամենից շատ ես սիրում եմ Դափնային ու Գեացինտին, և ահա Դափնան այնպես արհամարհեց ինձ, որ գերադասեց ավելի շուտ ծառի վերափոխվել, քան իմ կինը լինել, իսկ Գեացինտին ես ինքս սկավառակով սպանեցի. հիմա ես նրանց երկուսի փոխարեն պսակներ միայն ունեմ:

Հերմես.— Խոստովանանք լինի, մի անգամ ես Աֆրոդիտեին արդեն...բայց չեմ ուզում պարծենալ:

Ապոլոն.— Գիտեմ,—և ասում են, որ նա քեզ համար ծնել է Հերմոֆրոդիտին: Իսկ դու ահա թե ինչ ասա ինձ, եթե գիտես,

այդ ինչպես է լինում, որ Աֆրոդիտեն և Քարիտան իրար չեն խանդում։

Հերմես.— Այն պատճառով, որ Քարիտան նրա հետ ապրում է Լեմնոսի վրա, իսկ Աֆրոդիտեն՝ երկնքում, բացի այդ, նա այնպես է զբաղված իր Արեսով և այնպես է սիրահարված նրան։, որ նա այնքան էլ շատ չի մտածում մեր դարբնի մասին։

Ապոլոն.— Դու ինչ ես կարծում, այդ մասին պիտի՞ արդյոք Հեփեստոսը։

Հերմես.— Գիտեմ. բայց ի՞նչ կարող է անել՝ մի այդպիսի ուժեղ և ռազմատենչ պատանու հետ։ Նա վերադասում է հանդիստ նստել. բայց դրա փոխարեն սպառնում է, թե այնպիսի ցանց պիտի սարքի, որ նրանով պիտի բռնի նրանց երկուսին մահճի մեջ։

Ապոլոն.— Կտեսնենք։ Իսկ ես հաճույքով կհամաձայնվեի բռնված լինել...

16. ՀԵՐԱ. ԵՎ. ԼԱՏՈՆԱ.

Հերա.— Խոսք չունեմ, Լատոնա, սքանչելի երեխաներ ես ծնել դու Զևսի համար։

Լատոնա.— Դե, Հերա... Բոլորն էլ շնորհք չունեն ծնելու այնպիսի երեխաներ, ինչպես քո Հեփեստոսն է։

Հերա.— Համենայն դեպս, թեպետ և նա կաղ է, բայց և այնպես օգտակար է. նա հմուտ վարպետ է, մեզ համար զարդարել է ամբողջ երկինքը, ամուսնացել է Աֆրոդիտեի հետ և վայելում է նրա մեծ հարգանքը։ Իսկ ինչպիսի՞ն են քո երեխաները։ Դուստրդ չափից ավելի տղամարդու է նման և լեռների բնակիչ է, իսկ վերջին ժամանակներս Սկյութիա է գնացել և այնտեղ, այդ հայտնի է բոլորին, անվում է օտարերկրացիներին սպանելով և մարդակեր սկյութացիների բարքերը ընդօրինակելով։ Իսկ Ապոլոնը ձևացնում է իրեն ամենագետ. նա և նետահար է, և կիթառիստ, և բուժակ, և բախտագուշակ. իր համար բախտագուշակողական հաստատություններ է բացել՝ մեկը Դելֆիում, մյուսը՝ Կլարոսում, երրորդը՝ Դիդիմոսում—և խաբում է բոլոր նրանց, ովքեր դիմում են իրեն, միշտ էլ հարցերին պատասխանելով մթագնած և երկիմաստ ասույթներով, որպեսզի այդպիսով իրեն ապահովի սխալներից։ Եվ

դրա հետ նա զգալիորեն շահում է. աշխարհում շատ կան հիմար մարդիկ, որոնք թույլ են տալիս, որ իրենց խաբեն: Բայց ավելի խելացի մարդիկ հիանալի կերպով հասկանում են, որ չի կարելի հավատալ նրան, չէ ինքը բախտագուշակը չդիտեր, որ սկավառակով կսպանի իր սիրեցյալին, և ինքն իր համար չգուշակեց, որ Դափնան կփախչի իրենից, չնայած, որ ինքն այնքան գեղեցիկ է և այդպիսի սքանչելի մազեր ունի: Եվ իրոք, ես չեմ հասկանում, թե դու ինչու էիր կարծում, թե քո երեխաները ավելի սքանչելի են, քան Նիոբայի երեխաները:

Լատոնա. Օ՜, ես բոլորովին էլ չեմ զարմանում, որ իմ երեխաները — դուստրս, որ սպանում է օտարերկրացիներին և ուստրս — կեղծ մարգարեն — վշտացնում են քեզ, երբ տեսնում ես նրանց աստվածների մեջ և մանավանդ, երբ բոլորը գովաբանում են աղջկաս՝ դեղեցկության համար, իսկ տղաս խընջույքի ժամանակ կիթառ է նվագում՝ ընդհանուրի հիացմունքն առաջացնելով:

Հերա.— Ես չեմ կարողանում ծիծաղս զսպել, Լատոնա: Նա հիացմունք է առաջացնում, նա, որին երեք մուսաներն արդարացի դատին, Մարսիոսը հավանորեն կաշին կքերթեր՝ հաղթելով նրան երաժշտության մրցության մեջ: Դժբախտաբար, անբախտ Մարսիոսը ինքը ստիպված եղավ կործանվել՝ աչառու դատարանի պատճառով: Իսկ քո սքանչելի դուստրը այնպես է սքանչելի, որ իմանալով, թե Ակթեոնեսը տեսել է իրեն, իր շներին բաց է թողել նրա վրա՝ վախենալով, որ նա կպատմի բոլորին նրա այլանդակության մասին, էլ չեմ խոսում այն մասին, որ նա չէր օգնի ծննդկաններին, եթե ինքը կույս լիներ:

Լատոնա.— Շատ ես հպարտանում, Հերա, նրանով, որ ապրում ես իրեն՝ Զևսի հետ և թագավորում ես նրա հետ միասին: Բայց դու մի քիչ սպասիր, կգա ժամանակ և ես նորից կտեսնեմ քեզ լաց լինելիս, երբ Զևսը քեզ մենակ կթողնի, իսկ ինքը երկիր կիջնի՝ վերափոխվելով եզան կամ կարապի:

17. ԱՊՈԼՈՆ ԵՎ ՀԵՐՄԵՍ

Ապոլոն.— Ինչո՞ւ ես ծիծաղում Հերմես:

Հերմես.— Ախ, Ապոլոն, որովհետև այնպիսի ծիծաղելի բան եմ տեսել:

Ապոլոն.— Պատմիր, ես ինքս էլ եմ ուզում ծիծաղել:

Հերմես.— Հեփեստոսը բռնել է Աֆրոդիտեին Արեսի հետ և միասին կապոտել է մահճի վրա:

Ապոլոն.— Բայց այդ ի՞նչպես է արել: Դու կարծես ինչ որ շատ զվարճալի բան կարող ես պատմել:

Հերմես.— Ես կարծում եմ, որ նրանց կապի մասին նա վաղուց գիտեր և հետևում էր նրանց. և ահա այսօր մահճին անտեսանելի ցանց ամրացնելով, նա գնում է իր դարբնոցը: Գալիս է Արեսը, կարծելով, որ ոչ ոք չի նկատել, բայց Հելիոսը այդ մասին հայտնում է Հեփեստոսին: Մինչ այդ Արեսն ու Աֆրոդիտեն պառկում են մահճին, և նոր էին գործի անցել, որ ընկնում են ցանցի մեջ և զգում, որ սինդ կապկպված են: Այն ժամանակ գալիս է Հեփեստոսը: Աֆրոդիտեն՝ միանգամայն մերկացած, չգիտե, թե ինչով ծածկի իր մերկությունը, իսկ Արեսը սկզբում փորձում է փախչել, կարծելով, թե իրեն կհաջողվի պատռել ցանցը, բայց շուտով հասկանում է, որ այդ անհնար է և սկսում է աղերսել, որ ազատի իրեն:

Ապոլոն.— Եվ ի՞նչ: Ազատե՞լ է նրանց Հեփեստոսը:

Հերմես.— Ոչ, նա կանչել է աստվածներին, որ տեսնեն նրանց շնությունը, իսկ նրանք, երկուսն էլ մերկ, տրամադրությունների ընկած, պառկած են միասին՝ կապկպված և ամոթից կարմրած: Թվում է ինձ, նրանք հաճելի պատկեր են ներկայացնում. չէ որ նրանց գործը գրեթե դլուխ էր եկել...

Ապոլոն.— Եվ մեր դարբինը չի՞ ամաչում ցույց տալ բոլորին իր ամուսնության խայտառակությունը:

Հերմես.— Երդվում եմ Զևսով, նա կանգնած է նրանց վրա և հրհրում է: Իսկ ինձ, ճիշտն ասած, Արեսի վիճակը նախանձելի թվաց. էլ չեմ ասում այն մասին, թե ինչ արժե աստվածուհիներից ամենագեղեցիկին տիրանալը, բայց և նրա հետ կապոտած լինելը, նույնպես լավ բան է:

Ապոլոն.— Դու կարծես թե դեմ չես լինի, որ քեզ էլ կապոտեն նման պայմաններում:

Հերմես.— Իսկ դո՞ւ, Ապոլոն: Գնանք այնտեղ. եթե դու նրանց տեսնես և նույնը չցանկանաս, ես կխոնարհվեմ քո առաքինության առաջ:

Հերա.— Ես կամաչեի, Զևս, եթե ունենայի այդպիսի կանացիակերպ տղա, որն ինքն իրեն արբեցողության է տվել, պճնամոլում է կանացի գլխաշորով, անընդհատ գտնվում է խելագար կանանց շրջանում՝ գերազանցելով նրանց իր նրբագեղությամբ և նրանց հետ պարելով տիմպանների, ֆլեյտաների և կիմվալների հնչյունների ներքո. ընդհանուր առմամբ նա ավելի շատ նման է որևէ այլ մեկին, քան թե քեզ՝ իր հորը:

Զևս.— Բայց և այնպես կանացի սանրվածքով աստվածը, ավելի նրբագեղ, քան իրենք կանայք, ոչ միայն տիրապետեց Լիդիային, նվաճեց Տմոլի բնակիչներին և իրեն ենթարկեց Թրակիացիներին, այլև իր կանացի զորքով դնաց Հնդկաստանի դեմ, հափշտակեց փղերին, նվաճեց ամբողջ երկիրն ու թագավորին, որ համարձակվել էր դիմադրել նրան, գերի վերցրեց,—և այս բոլորը նա արավ, երգերի ու պարերի մեջ՝ բաղեղով պատած թիրսաններով, հարբած—ինչպես դու ես ասում և աստվածային խելահեղությամբ համակված: Իսկ բոլոր նրանց, ովքեր համարձակվեցին վիրավորել նրան՝ չհարգելով խորհուրդները, նա կարողացավ պատժել, կապոտելով նրանց խաղողի վազով, կամ ստիպելով հանցագործի մորը, որ պատառ-պատառ անի իր զավակին, ինչպես մատղաշ եղջերուի: Մի՞թե սրանք արիության գործեր չեն և արժանի չեն ինձ: Իսկ եթե ինքը և նրա շրջապատողները այդ ժամանակ խրախճանքի մեջ են լինում և մի փոքր սանձարձակ են, ապա այդ այնքան էլ մեծ չարիք չէ, նամանավանդ, եթե մտածես, թե ինչպիսին կլիներ նա զգաստ վիճակում, եթե հարբած դրության մեջ այդպիսի սխրագործություններ է կատարում:

Հերա.— Դու կարծես հակված ես գովաբանելու Դիոնիսին նաև նրա գյուտարարության, այսինքն, խաղողի ոստի և գինու համար, թեպետ ինքդ էլ տեսնում ես, թե կորցնելով իրենց ինքնազսպումը, ինչեր են անում հարբածները՝ հանցանքներ գործելով և այդ խմիչքի ազդեցության տակ պարզապես խելահեղության մեջ ընկնելով: Հիշիր, որ Իկարիին, որը մարդկանցից առաջինն էր նվեր ստացել խաղողի ոստը, իր իսկ սեղանակիցները սպանեցին բրիչներով:

Զևս.— Այդ բոլորը դատարկ բաներ են: Ամեն ինչում մեղա-

վորը ոչ գինին է և ոչ էլ Դիոնիսը, այլ այն, որ մարդիկ խմում են իրենց չափը չիմանալով և ամեն սահման անցնելով, իրենց փորը անվերջ լեցնում են գինի՝ առանց ջրի հետ խառնելու այն: Իսկ ով չափավոր է խմում, նա միայն ավելի ուրախ ու սիրալիր է դառնում և իր սեղանակիցներից ոչ մեկի հետ չի անի այն, ինչ արին Իկարիի հետ: Բայց, Հերա, դու կարծեմ խանդում ես ու չես կարողանում մոռանալ Սեմելային, և այդ պատճառով վատաբանում ես Դիոնիսի սքանչելագույն քանքարը:

19. ԱՖՐՈԴԻՏԵ ԵՎ ԷՐՈՍ

Աֆրոդիտե.— Ի՞նչ է նշանակում այս, Էրոս: Դու հաղթահարեցիր բոլոր պատվածներին՝ Զևսին, Պոսիդոնին, Հռեային, քո սեփական մորը, իսկ միայն Աթենասին խնայում ես, նրա համար քո կերոնը չի վառվում, քո կապարճում նետեր չկան, դու դադարում ես նետահար լինելուց և չես կարողանում լավ նշան բռնել:

Էրոս.— Նրանից ես վախենում եմ, մայրիկ, նա սարսափելի է, նրա աչքերը այնպես փայլո՞ւն են ու նա չափազանց նման է տղամարդու: Երբ ես աղեղս լարելով մոտենում եմ Աթենասին, նա թափահարում է իր սաղավարտի փետրափունջը, և դրանով այնպես է ինձ վախեցնում, որ ես ամբողջովին դողում եմ, և նետն ու աղեղը վայր են ընկնում ձեռքերիցս:

Աֆրոդիտե.— Բայց մի՞թե Արեսը ավելի սարսափելի չէ: Իսկ դու այսուամենայնիվ նրան դինաթափ արիր և հաղթեցիր:

Էրոս.— Ոչ, նա թույլ է տալիս մոտենալ իրեն և նույնիսկ ինքն է կանչում, իսկ Աթենասը միշտ հոնքերի տակից է նայում ինձ: Մի անգամ ես պատահմամբ թռչում էի նրա մոտով՝ Կերոնս մոտ պահած, նա իսկույն դուրս. եթե դու մոտենաս ինձ, ապա երգվում եմ հորս անունով, ես կծակեմ քեզ նիզակով, կամ կբռնեմ ոտքերիցդ և կգցեմ Տարտարոսը, կամ սեփական ձեռքերովս պատառ-պատառ կանեմ: Եվ դեռ ուրիշ շատ սպառնալիքներ էր ասում այդ ոգով: Նա միշտ բարկացած է նայում, իսկ նրա կրծքի վրա ինչ որ սարսափելի դեմք կա՝ վարսերի փոխարեն օձերով. այդ դեմքը վախեցնում է ինձ, և ես փախչում եմ, երբ տեսնում եմ նրան:

Աֆրոդիտե.— Նշանակում է Աթենասից իր Գորգոնեով դու վախենում ես, թեպետ բոլորովին չէիր վախենում Զևսից իր շան-

թով։ Ապա ինչո՞ւ մուսաներն անձեռնմխելի են քեզ համար և ապահովագրված են քո նետերից։ Մի՞թե նրանք ևս թափահարում են իրենց փետրափնջերը և կրծքների վրա Գորգոնե են կրում։

Էրոս.— Նրանց ևս չափազանց հարգում եմ, մայրիկ. նրանք այնքան պատկառելի են, միշտ ինչ որ բանի մասին մտածում են և երգերով են զբաղված. ես ինքս հաճախ երկար ժամանակ նրանց մոտ մնում եմ կանգնած, նրանց երգասացությամբ հիացած։

Աֆրոդիտե.— Դեհ, հանգիստ թողնենք նրանց, եթե նրանք այդքան պատկառելի են։ Բայց ինչո՞ւ դու չես նետահարում Արտեմիսին։

Էրոս.— Ես նրան ամեհին չեմ կարողանում բռնել. նա շարունակ վազվզում է լեռներում. բացի այդ, նա ունի իր սեփական սերը։

Աֆրոդիտե.— Այդ ի՞նչ սեր է, զավակս։

Էրոս.— Նա սիրահարված է որսորդությանը, եղջերուներին և եղնիկներին, որոնց հետից վազվզում է շարունակ՝ մերթ բռնելով նրանց, մերթ սպանելով աղեղով. նա ամբողջովին դրանով է միայն զբաղված։ Բայց դրա փոխարեն նրա եղբորը, չնայած, որ նա ինքն էլ նետահար է և շատ հեռուն է դիպչում...

Աֆրոդիտե.— Այո, զավակս, նրան դու շատ անգամ ես նշանի բռնել ու խփել։

20. ՊԱՐԻՍԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

Զևս, Հերմես, Հերա, Աթենաս, Աֆրոդիտե, Պարիս, կամ Ալեքսանդր

Զևս.— Հերմես, վերցրու այս խնձորը և գնա Թրագիա, Պրիամի որդու մոտ, որը հոտ է արածացնում Իդայի լեռներում, Գարգարում։ Ահա ինչ ասա նրան։ «Պարիս, Զևսը հանձնարարում է քեզ վճռել աստվածուհիների վեճը, թե նրանցից ով է գեղեցկագույնը, չէ որ ինքդ էլ գեղեցիկ ես և տեղյակ սիրո գործերում. ով վեճի մեջ հաղթի, թող ստանա այս խնձորը»։ Ջեզ էլ ժամանակ է աստվածուհիներ, գնալ այդ դատաստանին. ես հրաժարվում եմ վճռել ձեր վեճը, որովհետև բոլորիդ էլ հավասարապես սիրում եմ և կուզեի, եթե այդ հնարավոր լիներ, բոլորիդ էլ

հաղթող տեսնել։ Բայց այդ, ես համոզված եմ, որ եթե ձեղանից մեկին պարգևատրեմ գեղեցկության համար, մյուս երկուսդ իմ թշնամիները կդառնաք։ Այդ պատճառով, որպես դատավոր, ես անպետք եմ ձեզ համար։ Իսկ այդ թղագիացի պատանին, որին դուք կդիմեք, թագավորական ծագում ունի և իմ Հանիմեդի ազգականն է—իսկ ընդհանրապես նա լեռների հասարակ, անարատ բնակիչ է, որը միանգամայն արժանի է այն տեսարանին, որ սպասում է նրան։

Աֆրոդիտե.— Ինչ վերաբերվում է ինձ, Զևս, ապա ես պատրաստ եմ առանց տատանվելու այդ դատաստանին, եթե անգամ դատավոր նշանակեիր դու հենց իրեն կատակաբան Մոմոսին, նա ծաղրելու ոչ մի առիթ չի գտնի իմ մեջ։ Բայց անհրաժեշտ է, որ քո ընտրած դատավորը նրանց ևս դուր գա։

Հերա.— Մենք նույնպես, Աֆրոդիտե, չենք մտածում վախենալ, եթե դատը հանձնվեր անգամ քո Արեսին ու Պարիսի դեմ, ով էլ որ լինի նա, մենք ոչինչ չունենք։

Զևս.— Է, իսկ դու, աղջիկս, նույնպես համաձա՞յն ես։ Ի՞նչ կասես։ Երեսդ շրջում ես և կարմրո՞ւմ։ Դուք աղջիկները միշտ կարմրում եք, երբ նման բանների մասին խոսք է բացվում, բայց դու այնուամենայնիվ գլխով արիր,— նշանակում է համաձայն ես։ Ուրեմն գնացեք, բայց տեսեք պարտավոնները թող չբարկանան դատավորի վրա և խեղճ պատանուն շար բան չանեն, չէ որ անհնար է, որ բոլորը հավասարապես գեղեցիկ լինեն։

Հերմես.— Կնշանակի մենք ճանապարհ ընկնենք ուղիղ դեպի Թրագիա. ես կառաջնորդեմ ձեզ, իսկ դուք հետևեցեք ինձ և հետ մի մնաք։ Համարձակ եկեք, ես ճանաչում եմ Պարիսին, դա շատ գեղեցիկ պատանի է և սիրո արժեքը գիտե։ Նման դատի համար նա միանգամայն հարմար է և, երևի, արդարացի վճիռ կհանի ձեր մասին։

Աֆրոդիտե.— Այդ բոլորը շատ լավ է, իսկ ինձ համար առանձնապես ձեռնտուն այն է, որ նա արդարադատ դատավոր է։ Բայց նա ինչպե՞ս, դեռ չէ՞ ամուսնացած, թե արդեն կի՞ն ունի։

Հերմես.— Չի կարելի ասել, որ նա բոլորովին ամուսնացած չէ։

Աֆրոդիտե.— Բայց այդ ի՞նչպես։

Հերմես.—Նրա հետ կարծես մի իլացի կին է ապրում, ար-

տաքինով վատ չէ, բայց շատ է գեղջկական, լեռների հասարակ աղջիկ է. Պարիսը կարծես այնքան էլ ուժեղ չէ կապված նրա հետ: Բայց դու ինչո՞ւ ես ուզում պիտենալ այդ:

Աֆրոդիտե.— Ես միայն այնպես, հարցրի:

Աբենաս.— Սիրելիս, դու խախտում ես քո լիազորությունները՝ առանձին խոսելով նրա հետ:

Հերմես.— Ոչ մի վատ բան չկա, Աբենաս, ոչ մի խոսք ձեր դեմ. նա հարցրեց, թե ամուսնացա՞ծ է արդյոք Պարիսը:

Աբենաս.— Իսկ դա ինչո՞ւ է այնքան հետաքրքրում նրան:

Հերմես.— Չգիտեմ. նա ասում է, որ այդ մասին հարցրեց ոչ որևէ նպատակով, այլ պատահականորեն:

Աբենաս.— Եվ ի՞նչ, ամուսնացած է նա:

Հերմես.— Կարծեմ, այո:

Աբենաս.— Իսկ ռազմական սխրագործությունները՞րը... Սիրո՞ւմ է արդյոք նա, ձգտո՞ւմ է արդյոք փառքի, թե՞ լոկ հասարակ հովիվ է նա:

Հերմես.— Ես չեմ կարող համոզված կերպով պատասխանել քեզ, բայց կարելի է կռահել, որ նա որպես երիտասարդ մարդ, դրան էլ է ձգտում և կուզենար առաջինը լինել մարտերում:

Աֆրոդիտե.— Այ, տեսնում ես, ես չեմ բարկանում և քեզ նկատողություն չեմ անում, որ դու նրա հետ առանձին ես խոսում, այդ բանով զբաղվում է ոչ թե Աֆրոդիտեն, այլ բոլոր նրանք, ովքեր շարունակ մրթմրթում են:

Հերմես.— Նա ինձանից հարցրեց մոտավորապես նույնը, ինչ դու. մի բարկանա և մի մտածի, որ քեզ վիրավորում են, ես նոան ևս շատ պարզ պատասխանեցի: Բայց խոսակցությամբ զբաղված մենք նույնիսկ չնկատեցինք, որ աստղերը թողել ենք շատ հեռում և արդեն Թրակիայի մոտ ենք գտնվում: Ես արդեն տեսնում եմ Իդան և ամբողջ Գարդարը—ինչպես ձեռքիս ափի վրա, և անգամ եթե չեմ սխալվում, տեսնում եմ մեր դատավոր Պարիսին:

Հերա.— Իսկ ո՞ւր է նա: Ես ոչինչ չեմ տեսնում:

Հերմես.— Նայի՛ր, Հերա, դեպի ձախ, ոչ թե լեռան գագաթին, այլ նրա լանջին, որտեղ երևում է քարանձավն ու նրա առաջ ածող հոտը:

Հերա.— Ես ոչ մի հոտ էլ չեմ տեսնում:

Հերմես.— Ինչպե՞ս թե: Կովեր չե՞ս տեսնում, այ այնտե՛ղ

մատիս ուղղությամբ: Նրանք դուրս են գալիս ժայռերի ետևից, իսկ սարի վրայից մի մարդ է վազում դավազանը ձեռքին և հոսը ետ է քշում՝ չթողնելով, որ նրանք ցրվեն:

Հերա.— Այո, հիմա ես տեսնում եմ, եթե այդ նա է:

Հերմես.— Նա է, նա: Բայց մենք արդեն մոտ ենք. ես կարծում եմ, որ մենք պետք է իջնենք և գնանք երկրի վրայով, թե չէ հանկարծակի իջնելով բարձունքից՝ մենք կվախեցնենք նրան:

Հերա.— Դու իրավացի ես. իջնենք երկրի վրա: Այժմ Աֆրոդիտե, դու պետք է գնաս առջևից և տանես մեզ, դու երևի լավ ես ճանաչում այս վայրերը, չէ, ասում են, դու հաճախ ես այցելել այստեղ Անխիսին:

Աֆրոդիտե.— Հերա, դու մի կարծիր, թե քո ծաղրը կարող է չատ գրգռել ինձ:

Հերմես.— Ես ինքս կտանեմ ձեզ: Այստեղ, Իդայում, ես արդեն եղել եմ. այդ այն ժամանակ էր, երբ Զևսը սիրահարված էր այն փոքրիկ Թրագիացուն, նա հաճախ ուղարկում էր ինձ տեսնելու, թե ինչ է անում այդ տղան: Իսկ երբ նա արծիվ դարձավ, ես թռչում էի նրա կողքից և նրան օգնում՝ տանելու այդ փոքրիկ գեղեցիկ տղային. եթե հիշողություն ինձ չի դավաճանում, նա հենց այս ժայռի վրայից փախցրեց նրան: Այն ժամանակ տղան իր հոտի մոտ էր և սրինգ էր նվագում: Հանկարծ ետևից Զևսը թռավ նրա վրա և մեծ զգուշությամբ մատիլներով նրան վերցնելով, իսկ կատուցով նրա գլխաշորը բռնելով, բարձրացրեց օդի մեջ, իսկ նա գլուխը ետ ծռելով, վախեցած նայում էր իր հափշտակիչներին: Այն ժամանակ ես, բարձրացնելով սրինգը, որ տղան վախից վայր էր գցել... Բայց մեր դատավորն արդեն մեր առաջն է և այնքան մոտ է, որ կարելի է խոսել նրա հետ:

Բարև, հովիվ:

Պարիս.— Բարև և քեզ, պատանի: Ո՞վ ես դու, որտեղի՞ց ես եկել մեզ մոտ: —Այդ ի՞նչ կանայք են քեզ հետ: Նրանք այնքան գեղեցիկ են, որ չեն կարող այս լեռների բնակիչներ լինել:

Հերմես.— Նրանք կանայք չեն, Պարիս, դու տեսնում ես՝ Հերային, Աթենասին և Աֆրոդիտեին, իսկ ես Հերմեսն եմ և ինձ Զևսն է ուղարկել քեզ մոտ: Բայց դու ինչո՞ւ ես դողում և ամբողջովին գունատվել ես: Մի վախենա, սարսափելի ոչինչ չկա: Զևսը հանձնարարում է քեզ դատավոր լինել աստվածուհիների վեճում

այն մասին, թե նրանցից որն է ամենագեղեցիկը։ Որովհետև դու ինքդ էլ գեղեցիկ ես և տեղյակ ես սիրո գործերում, ապա ես, ասում է Զևսը, թողնում եմ, որ դու վճռես այդ վեճը, իսկ թե ինչ կլինի հաղթական պարգևը, այդ դու կիմանաս՝ կարդալով այս խնձորի վրա արված մակագրությունը։

Պարիս.— Տուր տեսնեմ, թե ինչ է գրված այդտեղ։ Գրված է. «Սքանչելագույնը թող վերցնի՛ ինձ»։ Բայց ով իմ տեր Հերմես, ես ի՞նչպես, մահկանացու մարդս և անկիրթս կարող եմ դատավոր լինել, ինձ համար, խեղճ հովվի համար շատ վսեմ մի այսպիսի արտասովոր տեսարանում։ Այդ ավելի շուտ կարող էր վճռել նուրբ և կրթված մի մարդ։ Իսկ ես ո՞վ եմ։ Երկու այծերից, կամ երկու հորթերից ո՞րն է գեղեցիկ՝ այդ ես կկարողանայի վճռել— ինչպես հարկն է։ Իսկ այս երեքն էլ հավասարապես սքանչելի են, ու ես անգամ չգիտեմ, ինչպես կարելի է պոկել հայացքը մեկից և դարձնել մյուսին. աչքերը չեն ուզում պոկվել, բայց որ կողմ որ մի անգամ նայեցի, այն կողմն էլ անընդհատ նայում են և հիանում. իսկ երբ, վերջապես, անցնում են ուրիշին, ապա նորից հիացմունքի մեջ են ընկնում և կանգ են առնում, և ապա նորից նրանց դրավում են նորանոր գեղեցկություններ։ Ես ամբողջովին ընկղմվել եմ նրանց գեղեցկության մեջ, այդ գեղեցկությունը ամբողջովին կախարդել է ինձ։ Ես կուզենայի նայել իմ ամբողջ մարմնով՝ ինչպես Արգոսը... Ես կարծում եմ, որ միակ արդարացի դատաստանը կլինի—խնձորը տալ երեքին էլ։ Այն էլ այսպիսի վուգադիպություն։ Սա Զևսի քույրն է ու ամուսինն է, իսկ նրանք՝ նրա դուստրերը, մի՞թե այդ առավել ևս չի դժվարացնում—առանց այն էլ դժվարին—վճիռը։

Հերմես.— Չգիտեմ, բայց պետք է ասեմ քեզ, որ դու անպատճառ պարտավոր ես Զևսի կամքը կատարել։

Պարիս.— Մի բան եմ խնդրում քեզ, Հերմես, համոզիր նրանց. որպեսզի երկու պարտվածները չբարկանան ինձ վրա և դրանում իմ աչքերի սխալը միայն տեսնեն։

Հերմես.— Նրանք խոստացել են այդ... Բայց ժամանակն է Պարիս, որ գործի անցնես։

Պարիս.— Փորձենք, ինչ արած։ Բայց նախ և առաջ ես կուզեի իմանալ, բավական է արդյոք դիտել նրանց այնպես, ինչպես

հիմա նրանք կանգնած են, թե քննության առավել ճշգրիտ լինելուն համար ավելի լավ կլինի, որ նրանք հանվեն։

Հերմես.— Այդ կախված է քեզանից, որպես դատավորից-կարգադրիր ինչպես կուզես։

Պարիս.— Ինչպես կուզե՞մ։ Ես կուզենայի դիտել նրանց մերկ վիճակում։

Հերմես.— Աստվածուհիներ, հանվեցեք, իսկ դու ուշադիր դիտիր։ Ես արդեն շրջվել եմ։

Հերա.— Սքանչելի է, Պարիս. ես առաջինը կհանվեմ, որ դու համոզվես՝ ես ոչ միայն սպիտակ ձեռքեր ունեմ և որ իմ միակ հպարտությունն այդ չէ, որ ես եզաչյա եմ, և որ ես ամեն մասով հավասարապես սքանչելի եմ։

Պարիս.— Դու էլ հանվիր, Աֆրոդիտե։

Աթենաս.— Մի կարգադրի նրան հանվել, Պարիս, մինչև որ չհանի իր գոտին. նա վհուկ է և այդ գոտիով կարող է կախարդել քեզ։ Բացի այդ—պետք չէ, որ նա հանդես գա իր բոլոր զարդերով և իր այդ ներկած դեմքով, կարծես մի ինչ որ հետերա լինի, այլ նա պետք է լրիվ բացած ցույց տա իր իսկական դեղեցկությունը։

Պարիս.— Գոտիի մասին նա իրավացի է, հանիր գոտիդ։

Աֆրոդիտե.— Իսկ ինչո՞ւ դու, Աթենաս, չես հանում սաղավարտդ և չես ցույց տալիս քեզ բուց դլխով, այլ թափահարում ես փետրափունջդ և վախեցնում դատավորին։ Գուցե դու վախենում ես, որ քո գորշ երկնագույն աչքերը ոչ մի ազդեցություն չեն թողնի՝ առանց այն խիստ տեսքի, որ ստանում են նրանք քո սաղավարտից։

Աթենաս.— Դե, ահա, ես հանում եմ սաղավարտս։

Աֆրոդիտե.— Ահա, ես էլ հանում եմ գոտիս։

Հերա.— Ժամանակն է հանվելու։

Պարիս.— Օ՜, հրաշագործ Զևս։ Այս ի՞նչ տեսարան է, ինչ հաճույք. ինչ սքանչելի է այս կույսը։ Իսկ սա այնպես արքայական վսեմությամբ է շողշողում՝ իրոք ինչպես վայել է Զևսի ամուսնուն։ Իսկ սա ի՞նչ հրաշալի է նայում, ինչ սքանչելի և գրավիչ ժպտում է, բայց ես չեմ դիմանա այս ամբողջ երանելիությանը։ Ես կխնդրեի ձեզ, որ թույլ տաք դիտեմ ամեն մեկիդ առանձին. ես հիմա բոլորովին կորցրել եմ ինձ և չգիտեմ, թե առաջ

ուր նայեմ, այնպես բոլորդ հավասար ուժով ձգում եք իմ հայացքը:

Աֆրոդիտե.— Լավ, այդպես անենք:

Պարիս.— Այդ դեպքում դուք երկուսովդ հեռացեք, իսկ դու Հերա, մնա:

Հերա.— Ես մնում եմ, մի լավ դիտիր ինձ, իսկ հետո մտածիր, թե ինչպես դուր կգան քեզ իմ պարգևները: Լսիր ինձ, Պարիս, եթե դու իմ օգտին կվճռես պարգևը, ես քեզ կդարձնեմ ամբողջ Ասիայի տերը:

Պարիս.— Ո՛ պարգևներով դու չես գայթակղեցնի ինձ: Կարող ես գնալ. կանեմ այնպես, ինչպես արդարացի կթվա ինձ:

Իսկ դու, Աթենաս, մոտեցիր այստեղ:

Աթենաս.— Ես այստեղ եմ, Պարիս, եթե դու իմ օգտին վճռես պարգևը, դու այլևս երբեք պարտված չես հեռանա մարտից, այլ միշտ հաղթող կլինես. ես կդարձնեմ քեզ մարտական և հաղթական հերոս:

Պարիս.— Աթենաս, ինձ հարկավոր չեն ռազմական սխրագործությունները. դու տեսնում ես, որ խաղաղություն է տիրում Թրակիայում և Լիդիայում, և իմ հայրը կառավարում է առանց որևէ պատերազմի: Դու մի անհանգստանա. դու վիրավորանք չես կրի, եթե անգամ ես դատելու լինեմ՝ առանց ուշադրություն դարձնելու պարգևների վրա: Կարող ես հագնվել և սաղավարտդ դնել: Հիմա Աֆրոդիտեի հերթն է:

Աֆրոդիտե.— Ահա և ես. դիտիր ինձ ճշգրիտ և մանրամասն, ոչինչ բաց չթողնելով, այլ երկարորեն կանգ առնելով իմ մարմնի յուրաքանչյուր մասի վրա, ու եթե ուզում ես, ո՛վ գեղեցիկ այր, լսիր, թե ինչ կասեմ ես քեզ: Վաղուց արդեն տեսել եմ, թե որքան երիտասարդ և սքանչելի ես դու,— հազիվ թե ամբողջ Թրակիայում քեզ նախանձ գտնվի,— նման գեղեցկության համար ես քեզ երջանիկ եմ համարում, սակայն չեմ կարող ներել այն, որ դու չես թողնում այս լեռներն ու ժայռերը և չես գնում քաղաք ապրելու, այլ այստեղ, այս խուլ անկյունում իզուր կորցնում ես գեղեցկությունդ: Ի՞նչ կարող են տալ քեզ այս լեռները: Կովերի՞ն ինչի՞ն է պետք քո գեղեցկությունը: Դու պետք է քեզ համար գտնեիր կին, բայց ոչ կոպիտ, գյուղական կնոջ, ինչպիսիք են այստեղ Իդայում բոլորը, այլ որևէ մեկին, Հելլադայից, Արգոսից,

Կորնթոսից, կամ օրինակ, լակոնացու, ահա այնպիսի մեկին, ինչպիսին Հեղինեն է. նա երիտասարդ է, գեղեցիկ, ինձանից բնավ էլ պակաս չէ, և որ ամենակարևորն է, ամբողջովին ստեղծված է սիրո համար, ես համոզված եմ, որ բավական է, որ տեսնի քեզ՝ նա կթողնի իր տունը ու քո հետևից կգնա — պատրաստ ամեն ինչ կրելու, բայց անկարելի է, որ դու լսած չլինես նրա մասին:

Պարիս.— Երբեք չեմ լսել: Պատմիր ինձ ամեն ինչ,— Աֆրոդիտե. մեծ հաճույքով կլսեմ ես:

Աֆրոդիտե. Նա դուստրն է հայտնի գեղեցկուհու՝ Լիդայի, որի մոտ Զևսը իջել է կարապի տեսքով:

Պարիս.— Իսկ ինչպիսին է նա արտաքինով:

Աֆրոդիտե.— Սպիտակ է, ինչպես և պետք է լինի կարապի դուստրը, քնքուշ է—իղուր չէ, որ նա ծնվել է հավկիթից, վայելչակազմ և ուժեղ է և այնպիսի հաջողությամբ է օգտվում, որ նրա պատճառով արդեն պատերազմ է եղել, երբ Թեսեոսը հափշտակել էր նրան՝ դեռ բոլորովին դեռահաս վիճակում: Իսկ երբ նա մեծացավ և ծաղկեց, այն ժամանակ բոլոր ականավոր աքեացիները սկսեցին ձգտել ամուսնալու նրա ձեռքը, իսկ նա ընտրեց Պելոպիդների ցեղից Մենելային: Ուզո՞ւմ ես, նրան կդարձնեմ քո կինը:

Պարիս.— Այդ ինչպե՞ս: Չէ որ նա ամուսնացած է:

Աֆրոդիտե.— Որքան երիտասարդ և անփորձ ես դու: Այդ արդեն իմ գործն է, թե ինչպես կատարեմ ես ամեն ինչ:

Պարիս.— Բայց այդ ի՞նչ ձևով: Ես ինքս էլ եմ ուզում իմանալ:

Աֆրոդիտե.— Պետք է որ դու հեռանաս այստեղից՝ Հելլադան դիտելու պատրվակով: Երբ դու կգաս Լակեդեման, Հեղինեն կտեսնի քեզ, իսկ ես կհոգամ այն մասին, որ նա սիրահարվի քեզ և հետդ գնա:

Պարիս.— Ահա այդ է, որ անհնար է թվում ինձ. մի՞թե նա կհամաձայնվի թողնել ամուսնուն և գնալ օտարերկրացու և բարբարոսի հետից:

Աֆրոդիտե.— Այդ մասին դեռ մի անհանդստացիր: Ես երկու դեղատեսիլ տղա ունիմ՝ Հիմերոսը և Էրոսը. նրանց ճանապարհ կդնեմ քեզ հետ՝ որպես քո ուղեկիցները: Էրոսը կտիրի նրա ամ-

բողջ էությունը և կատիպի, որ սիրահարվի քեզ, իսկ Հիմերոսը՝ իր ամբողջ գրավչությունը թափելով քեզ վրա՝ քեզ կդարձնի ցանկալի և գրավիչ: Ես ինքս կօգնեմ քեզ և կխնդրեմ Քարիտեսին դալ ինձ հետ, որպեսզի ընդհանուր ուժերով սեր ներշնչենք նրան:

Պարիս.— Թե այս բոլորից ինչ կստացվի, ես չգիտեմ, Աֆրոդիտե, գիտեմ միայն, որ ես արդեն սիրահարված եմ Հելինեին, և չեմ հասկանում, թե ինչ է կատարվում ինձ հետ, ինձ թվում է, թե տեսնում եմ նրան, լողում եմ ուղիղ Հելլադա, հասել եմ Սպարտա և ահա Հելինեի հետ հայրենիք եմ վերադառնում... Ինչպե՞ս է ջղայնացնում ինձ այն, որ այս բոլորը դեռ չի իրականացել:

Աֆրոդիտե.— Պարիս, մի հանձնվիր սիրուն մինչև վեճն իմ օգտին չլուծես՝ որպես շնորհակալություն այն բանի համար, որ ես քո խնամախոսությունն սիրով լինեմ և հարսնացուիդ քո ձեռքը տամ. չէ որ անհրաժեշտ է, որ ես դամ ձեզ մոտ որպես հաղթող ու ձեր հարսանիքի հետ միասին տոնեմ և իմ հաղթանակը: Այս խնձորի գնով դու կարող ես ձեռք բերել ամեն ինչ՝ սեր, գեղեցկություն, ամուսնություն:

Պարիս.— Ես վախենում եմ, որ ինձնից խնձորը ստանալով, դու կմոռանաս քո խոստումների մասին:

Աֆրոդիտե.— Ուզո՞ւմ ես երդվեմ:

Պարիս.— Ոչ, այդ հարկավոր չէ, կրկնիր միայն խոստումդ:

Աֆրոդիտե.— Խոստանում եմ քեզ, որ Հելինեն քոնը կլինի և քեզ հետ միասին Տրոյա կգնա, ես ինքս կզբաղվեմ այդ գործով և ամեն ինչ կկարգադրեմ:

Պարիս.— Եվ քեզ հետ կվերցնես Էրոսին և Հիմերոսին և Քարիտեսի՞ն:

Աֆրոդիտե.— Անպատճառ կվերցնեմ նաև Պոտոսին և Հիմենեայինն:

Պարիս.— Կնշանակե, այդ պայմանով ես քեզ եմ տալիս խնձորը, այդ պայմանով նա—քոնն է:

21. ԱՐԵՍ ԵՎ ՀԵՐՄԵՍ

Արես.— Հերմես, լսեցի՞ր թե ինչ սպառնաց մեզ Զևսը: Ինչ զոռոզ և միաժամանակ ինչ անիմաստ սպառնալիքներ: Եթե ես դանկանամ, ասում է, երկնքից շղթա կիջեցնեմ, իսկ դուք բոլորդ

նրանից բռնելով կաշխատեք ներքև քարշ տալ ինձ, բայց այդ ձեզ չի հաջողվի, իսկ եթե ես ցանկանամ ձգել շղթան, ապա երկինք կբարձրացնեմ ոչ միայն ձեզ, այլ ձեզ հետ միասին նաև երկիրն ու ծովը,— և այլն, չէ, դու ինքդ լսեցիր։ Ես չեմ վիճի, որ նա մեզանից յուրաքանչյուրից հզոր և ուժեղ է, բայց իբր նա այնքան է ուժեղ, որ մենք բոլորս միասին չենք կարող քաշել նրան, եթե նույնիսկ երկիրն ու հողը մեզ հետ լինեն, այդ բանին ես չեմ կարող հավատալ։

Հերմես.—Վերջ տուր, Արես, այդպիսի բաներ ասելը վտանգավոր է, այդ շաղակրատանքը շատ անախորժություններ կարող է պատճառել մեզ։

Արես.— Միթե՞ դու կարծում ես, որ ես այդ կասեի բոլորի ներկայությամբ։ Ես միայն քեզ եմ ասում, իմանալով, որ դու ուրիշին չես ասի։ Բայց դու գիտե՞ս, թե ինձ ամենից շատ ինչը ծիծաղելի թվաց, երբ լսում էի նրա սպառնալիքը։ Ես չեմ կարող չասել քեզ այդ։ Ես հիշեցի դեռ նորերս տեղի ունեցած մի դեպք, երբ Պոսիդոնը, Հերան և Աթենասը վրդովվեցին նրա դեմ և մտադրվեցին բռնել նրան և կապոտել։ Ինչպես այն ժամանակ նա ահից չդիտեր, թե ինչ անի, չնայած նրանք ընդամենը երեքն էին և եթե Թետիդան չլիներ, որը խղճաց նրան և օգնության կանչեց հարյուր ձեռանի Բրիարեյեսին, նա այնպես էլ թույլ կտար, որ իրեն կապոտեին՝ իր որոտի և կայծակի հետ միասին։ Երբ ես հիշեցի այդ, քիչ մնաց որ հռհռայի նրա հպարտ ճառերը լսելով։

Հերմես.— Ես խորհուրդ եմ տալիս քեզ լռել. քեզ համար անվտանգ չէ՝ նման բաներ ասելը, իսկ ինձ համար՝ լսելը։

22. ՊԱՆ ԵՎ ՀԵՐՄԵՍ

Պան.— Բարև, հայր Հերմես։

Հերմես.— Բարև և քեզ։ Բայց ի՞նչ հայր եմ ես քեզ համար։

Պան.— Ուրեմն դու Կիլլենացի Հերմեսը չե՞ս։

Հերմես.— Նա ինքը։ Բայց ինչո՞ւ դու քեզ իմ որդին ես անվանում։

Պան.— Այո, ես քո ապօրինի որդին եմ, որ ծնվել եմ քեզ համար անսպասելի կերպով։

Հերմես.— Երդվում եմ Զևսով, ավելի շուտ դու նման ես ա-

նառակ արու և էգ այծերի որդու։ Դու ի՞նչ որդի ես ինձ համար, երբ դու եղջյուրներ ունես և այդպիսի քիթ ու բրդոտ մորուք, և այծի՞ նման եղկճեղքված կճղակներով ոտներ, և ետևիցդ էլ պոչ։

Պան.— Հայր, դու ծաղրում ես ինձ, քո սեփական տղային, այդ ինձ համար շատ վիրավորական է, թող որ քեզ համար ա-ռավել վիրավորական է, որ դու լույս աշխարհն ես ընծայում նման որդիներ. դրանում ես մեղավոր չեմ։

Հերմես.— Իսկ ո՞ւմ կանվանես դու քեզ մայր։ Ի՞նչ է, ես այծի հետ եմ պատահմամբ միակցվել։

Պան.— Ոչ, այծի հետ չէ, բայց ստիպիր վերհիշել քեզ, ար-դյոք մի ժամանակ Արկադիայում դու չե՞ս գայթակղեցրել մի ազ-նիվ աղջկա։ Ի՞նչ ես մտքերի մեջ ընկել և մատներդ ես կրծոտում, որպես թե չես կարողանում վերհիշել։ Ես խոսում եմ Իկարիայի աղջկա՝ Պեներլոպայի մասին։

Հերմես.— Բայց ինչո՞ւ նա քեզ ծնել է ոչ ինձ նման, այլ այ-ծի նման։

Պան.— Ահա թե նա ինքն ի՞նչ ասաց ինձ այդ մասին։ Ուղար-կում է նա ինձ Արկադիա և ասում... Որդիս, քո մայրը ես եմ՝ սպարտացի Պեներլոպան, իսկ ինչ վերաբերում է քո հորը, ապա իմացած եղիր, որ նա աստված է, Հերմեսը։ Մալայի և Զևսի որդին։ Իսկ որ դու եղջյուրների և այծի ոտներ ունես, թող այդ քեզ չշփոթեցնի, երբ քո հայրը միակցվեց ինձ հետ, նա այծի կերպարանք էր ընդունել՝ չցանկանալով, որ ճանաչեն իրեն, այդ պատճառով էլ դու այծի նման ստացվեցիր։

Հերմես.— Երդվում եմ Զևսով, դու իրավացի ես. ես ինչ որ դրա նման բան վերհիշում եմ։ Կնշանակի, ես, որ հպարտ եմ իմ գեղեցկությամբ, պետք է քո հայրը՝ կոչվեմ և թույլ տամ՝ բոլորը ծաղրեն ինձ, որ այդպիսի գեղեցիկ տղա ունեմ։

Պան.— Դու, հայր, կարիք չունես իմ պատճառով ամաչելու։ Ես երաժիշտ եմ և շատ լավ սրինգ եմ նվագում։ Դիոնիսը առանց ինձ չի կարողանում մնալ. նա ինձ իր ընկերն է դարձրել և իր գաղտնիքների մասնակիցը, ես գլխավորում եմ նրա շքախումբը։ Իսկ եթե դու տեսնեիր, որքան հոտեր ունեմ ես Թեգեայի մոտ և Պարրենայի լանջերում, դու շատ ուրախ կլինեիր։ Այդ դեռ քիչ է, ես տիրում եմ ամբողջ Արկադիային. վերջերս ես այնպես աչքի ընկա մարաթոնյան ճակատամարտում՝ աթենացիներին օգնելով, որ

ի պարգևատրում իմ սխրագործությունների ստացա Ակրոպոլիսի տակ գտնվող քարանձավը. եթե դու լինես Աթենքում, կտեսնես, թե այնտեղ ի՛նչ հարգանքով է օգտվում Պան անունը։

Հերմես.— Ասա ինձ, Պան, կարծեմ այդպես է քո անունը, դու ամուսնացա՞ծ ես։

Պան.— Ո՛չ, ո՛չ հայր։ Ես շատ շուտ սիրահարվող եմ, մեկն ինձ համար քիչ է։

Հերմես.— Քեզ երևի հաճույք են պատճառում այծե՛րը։

Պան.— Միծաղում ես ինձ վրա, ես ապրում էի Էխոյի հետ, Պիտիայի հետ, Դիոնիսի բոլոր մենադների հետ, և նրանք ինձ շատ բարձր են գնահատում։

Հերմես.— Գիտե՛ս, որպիս, թե ես նախ և առաջ ինչ պիտի խնդրեմ քեզնից։

Պան.— Հրամայիր, հայր, ես կաշխատեմ ամեն ինչ կատարել։

Հերմես.— Ավելի մոտեցիր և փսփսթիվիր ինձ, բայց դեռ կողմնակի անձանց մոտ ինձ հայր մի անվանիր։

23. ԱՊՈԼՈՆ ԵՎ ԴԻՈՆԻՍ

Ապոլոն.— Տարօրինակ բան, Դիոնիս, Էրոսը, Հերմոֆրոդիտը և Պրիապը հարազատ եղբայրներ են, մի մոր տղաներ, մինչդեռ նրանք այնպես նման չեն իրար՝ թե՛ արտաքինով և թե՛ բնավորությամբ։ Մեկը դեղեցիկ այր է, հմուտ նետահար, բավականին խոշոր իշխանությունով օժտված և բոլորին կարդադրող, մյուսը կանանցիակերպ, կիսատղամարդ է, արտաքինից այնպես անորոշ և երկիմաստ, որ չի կարելի վստահությամբ ասել, թե պատանի է արդյոք նա, թե աղջիկ, բայց դրա փոխարեն Պրիապը այն աստիճանի տղամարդ է, որ նույնիսկ անպարկեշտ է։

Դիոնիս.— Զարմանալի ոչինչ չկա, Ապոլոն։ Այդ բանում մեղավորը Աֆրոդիտեն չէ, այլ տարբեր հայրերը։ Բայց չէ որ պատահում է, որ նույնիսկ մի հորից ծնված երկվորյակները տարբեր սեռի են լինում, ինչպես օրինակ, դու և քո քույրը։

Ապոլոն.— Այո, բայց մենք իրար նման ենք, և մենք միևնույն գործով ենք զբաղվում։ Երկուսս էլ նետահարներ ենք։

Դիոնիս.— Այդ միակ բանն է, որ ձեր մեջ ընդհանուր է, իսկ մնացած ամեն ինչը տարբեր է։ Արեամիսը Սկյութիայում ապա-

նամ է օտարերկրացիներին, իսկ դու ապագան ես գուշակում և հիվանդներին բուժում։

Ապոլոն.— Դու չկարծես, թե քույրս իրեն լավ է զգում սկյութացիների մեջ. նա այնքան զզվել է սպանություններից, որ պատրաստ է փախչել առաջին իսկ հելլենացու հետ, որը պատահմամբ Տավրիդա կընկնի։

Դիոնիս.— Նվ լավ էլ կանի։ Բայց Պրիապի մասին. ես քեզ նրա մասին կպատմեմ մի շարք ծիծաղելի բաներ։ Վերջերս ես համպլըսակոմն էի. Պրիապը ընդունեց ինձ իր տան մեջ, հյուրասիրեց և մենք պառկեցինք քնելու՝ ընթրիքի ժամանակ մի քիչ խմելով։ Նվ ահա, կես գիշերին մոտ իմ սիրելի տանտերը վեր է կենում և... ես ամաչում եմ ասել քեզ։

Ապոլոն.— Ուզում էր դայթակղեցնե՞լ քեզ։

Դիոնիս.— Այո, հենց այդ է։

Ապոլոն.— Իսկ դու ի՞նչ արիր։

Դիոնիս.— Ինձ ի՞նչ էր մնում անել։ Ծիծաղեցի։

Ապոլոն.— Շատ լավ է, որ դու չբարկացար և նրա հետ կոպիտ չվարվեցիր, նրան կարելի է ներել՝ քեզ նման դեղեցիկ մի տղամարդու դայթակղեցնելու փորձի համար։

Դիոնիս.— Այդ նույն նպատակով, Ապոլոն, նա կարող է քեզանից էլ կպչել. չէ որ դու այսպես դեղեցիկ ես, և այնպիսի սքանչելի մազեր ունես, որ նույնիսկ Պրիապը զգաստ վիճակում կարող է հրապուրվել քեզանով։

Ապոլոն.— Նա չի համարձակվի։ Ես ունեմ ոչ միայն սքանչելի մազեր, այլ և նետ ու աղեղ։

24. ՀԵՐՄԵՍ ԵՎ ՄԱՅԱ

Հերմես.— Կա՞ արդյոք ամբողջ աշխարհում ինձանից ավելի դժբախտ աստված։

Մայա.— Մի՛ խոսիր, Հերմես, նման բաների մասին։

Հերմես.— Էլ ինչպես կարելի է չխոսել, երբ ինձ բոլորովին տանջեցին՝ այդպիսի աշխատանք թափելով գլխիս,— գործերի շատությունից ես մաս-մաս եմ լինում։ Առավոտյան զարթնելուն պես իսկույն պետք է գնամ ճաշասենյակը ավլելու։ Հազիվ եմ հասցնում կարգի բերել բազմելու տեղերը և ամեն ինչ ինչպես

հարկն է կարգադրել, որ անհրաժեշտ է լինում ներկայանալ Զևսին և երկրով մեկ տարածել նրա հրամանները՝ անընդհատ վազվզելով դեպի երկիր ու ետ. հազիվ է վերջանում այդ, դեռ ևս ամբողջովին փոշու մեջ կորած, արդեն պետք է սեղանին ամբրոս մատուցեմ. իսկ առաջ, քանի դեռ չէր եկել նոր ձեռք բերված մատրվակը, նեկտարն էլ ես էի լցնում դավաթների մեջ։ Եվ ամենաասաելին այն է, որ ես բոլոր աստվածների մեջ միակն եմ, որ դիշերները չեմ քնում և պետք է Պլատոնի մոտ տանեմ մեռածների հոգիները, պետք է հանգուցյալների ուղեկցորդը լինեմ և ներկա լինեմ սաորերկրյա դատաստանին։ Բայց իմ ցերեկային գործերը դեռ քիչ չեն. բավական չէ, որ ես ներկա եմ լինում պալեստրաններում, ժողովրդական ժողովներում մունետիկի դեր եմ կատարում, հռետորներին սովորեցնում եմ ճառեր արտասանել. մեռելների գործերը կարգավորելը՝ նույնպես իմ պարտականությունն է։

Լեդայի տղաները փոխարինում են իրար, երբ մեկը երկընքումն է գտնվում, մյուսը օրն անց է կացնում դժոխքում։ Միայն ես եմ, որ ստիպված եմ յուրաքանչյուր օր անել թե՛ մեկը և թե՛ մյուսը։ Ալքմենայի և Սեմելայի տղաները, որ խղճուկ կանանցից են ծնվել, ապրում են իրենց բավականության համար, չունենալով որևէ հոգս,—իսկ ես Ատլանտի դուստր Մայայի տղաս, պետք է սպասարկեմ նրանց։ Այ, հիմա ես հենց նոր եմ վերադարձել Սիդոնից, Կադմոսի քրոջից, ուր ուղարկել էր ինձ Զևսը, թե ինչպես է ապրում իր սիրեցյալը. դեռ շունչ անգամ չեմ առել, իսկ նա արդեն ուղարկում է ինձ Արգոս՝ այցելելու Դանայային, իսկ այնտեղից վերադառնալիս «մտիր,—ասում է,—Բեսոիա և տես Անտեսպային»։ Ես այլևս չեմ կարող։ Եթե հնարավոր լիներ, ես հաճույքով կստիպեի նրան, որ վաճառի ինձ որևէ մեկին, ինչպես այդ անում են երկրի վրա սորուկների հետ, երբ այլևս ուժ չեն ունենում ծառայելու։

Մայա.— Թող այդ գանգատները, որդյակ իմ։ Դու դեռ երիտասարդ ես և պետք է ծառայես հորդ, որքան որ նա ցանկանա։ Իսկ հիմա, քանի նա ուղարկում է քեզ վազիր շուտով Արգոս և ապա Բեսոիա, թե չէ նա կարող է ծեծել քեզ՝ քո դանդաղկոտության համար. սիրահարվածները միշտ էլ շատ դյուրաբորբոք են լինում։

Ջևս.— *Այդ ի՞նչ ես արել դու, անիծյալ Տիտան։ Դու ոչընչացրել ես այն ամենը, ինչ կա երկրիս վրա՝ կառքդ վստահելով մի հիմար տղայի. նա այրել է երկրի մի մասը՝ չափազանց մոտենալով նրան, իսկ մյուսին հարկադրել է կործանվել ցրտից՝ չափազանց շատ հեռացնելով նրանից կրակը։ Նա պարզապես ամեն ինչ շրջել է գլխիվայր։ Եթե ես չնկատեի, թե ինչ է կատարվում և չապաներ նրան կայծակով, մարդկային ցեղի հետքն անդամ չէր մնա։ Ահա թե ինչպիսի կառապան ես ուղարկել քո փոխարեն։*

Հելիոս.— *Այո, Ջևս, ես մեղավոր եմ. բայց այդպես մի՛ բարկանա ինձ վրա նրա համար, որ ես զիջեցի տղայիս աղերսանքներին. ես ինչպես կարող էի իմանալ, որ դրանից այդպիսի դժբախտություն դուրս կգա։*

Ջևս.— *Դու չգիտե՞ր, թե ինչ հմտություն է հարկավոր քո գործի մեջ, չգիտե՞իր, որ բավական է միայն մի փոքր դուրս գալ աղուրից և ամեն ինչ կկործանվի։ Քեզ հայտնի չէ՞ր քո ձիերի վայրենությունը, որոնց պետք է միշտ զսպել երասանակով։ Բավական է նրանց միայն մի փոքր ազատություն տալ և նրանք իսկույն ծառս կելնեն։ Այդպես էլ պատահեց նրանց հետ. ձիերը սլացան մեկ ձախ, մեկ աջ, մեկ ետ, վեր և վար, ուր միայն ցանկանում էին իրենք, իսկ նա չգիտեր, ինչ անել նրանց հետ։*

Հելիոս.— *Այդ բոլորը ես գիտեի և դրա համար երկար ժամանակ չէի համաձայնվում վստահել նրան ձիերը։ Բայց երբ սկսեց արտասուքն աչքերին աղերսել ինձ և նրա հետ նաև նրա մայրը Կլիմենան, ես նստեցրի նրան կառքի մեջ և ամեն ինչ բացատրեցի, թե ինչպես պետք է կանգնել, մինչև որտեղ պետք է բարձրանալ առանց ձիերին զսպելու, իսկ հետո կառքը ուղղել ներքև, ինչպես պետք է պահել երասանակը և ձիերին ազատություն չտալ, ես ասացի նրան նույնպես, թե ինչ վտանգ է սպասում, եթե նա շեղվի ուղիղ ճանապարհից։ Բայց հասկանալի բան է, որ նա դեռ բոլորովին երեխա, այդպիսի սարսափելի կրակի մեջ ընկնելով և իր տակին անհատակ անդունդ տեսնելով, վախեցավ, իսկ ձիերը երբ զգացին, թե ես չեմ վարում նրանց, շեղվեցին ճանապարհից՝ արհամարհելով երիտասարդ կառապանին։*

առաջացրին այդ ամբողջ սարսափը։ Երևի նա էլ վախենալով, որ ցած ընկնի, բաց է թողել երասանակը և բռնել կառքի վերևի մասից։ Խեղճը արդեն պատժված է, իսկ ինձ, Ջևս, բավական է իմ սեփական վիշտը։

Ջևս.— Բավական է, ասում ես դու։ Այդպիսի գործի համա՞ր։ Այս անգամ ես ներում եմ քեզ, բայց եթե դու մի անգամ ևս դրա նման մի բան անես և քո տեղը նման փոխանորդ ուղարկես, ես քեզ ցույց կտամ,— որ քո կրակից ավելի ուժեղ է այրում իմ շանթը։ Իսկ քո տղային թող քույրերը թաղեն Էրիդանի ափին, այն տեղում, որ նա ընկել է կառքից, թող նրա գերեզմանի վրա թափած նրանց արցունքները սաթ դառնան, իսկ իրենք թող վշտից բարդիներ դառնան։ Է, իսկ դու կառքը նորոգելով,— չէ որ առեղը կոտրված և մի անիվը բոլորովին փշացած է,— լծիր քո ձիերը և ճանապարհ ընկիր։ Միայն թե հիշիր այն ամենը, ինչ ասացի ես քեզ։

—

26. ԱՊՈԼՈՆ ԵՎ ՀԵՐՄԵՍ

Ապոլոն.— Հերմես, արդյոք դու չես կարող ասել ինձ, թե այս երկու պատանիներից ո՞րն է Կաստորը և որը՝ Պոլիդևկը։ Ես ոչ մի կերպ չեմ կարողանում տարբերել նրանց։

Հերմես.— Նա, ով երեկ մեզ հետ էր՝ Կաստորն է, իսկ ահա սա Պոլիդևկն է։

Ապոլոն.— Այդ ի՞նչպես ես ճանաչում։ Չէ՞ որ նրանք այնպես նման են իրար։

Հերմես.— Ահա թե ինչպես,— Ապոլոն, այս մեկի դեմքին հետքեր կան այն հարվածներից, որ ստացել է նա հակառակորդից ըմբշամարտում, մանավանդ բեբրիկիացի Ամիկից՝ Յազոնի հետ ծովային արշավի գնացած ժամանակ, իսկ այն մյուսը նման բաներ չունի—նրա դեմքը մաքուր է, առանց որևէ խեղության։

Ապոլոն.— Դու ծառայություն մատուցեցիր ինձ, սովորեցնելով, թե ինչպես պետք է տարբերել նրանց։ Բայց մնացած ամեն ինչը նրանց մեջ նույնն է. և կիսաձվաձև գլխարկը, և գլխից վեր եղող աստղերը, և տեգը ձեռքերին, և սպիտակ ձին, այնպես որ խոսակցության ժամանակ հաճախ պատահել է, որ ես Պոլիդևկին Կաստոր եմ կոչել, իսկ Կաստորին՝ Պոլիդևկ։ Մի բան

Ես ասա ինձ. ինչո՞ւ նրանք երբեք երկուսով միասին չեն գալիս մեզ մոտ, և նրանցից յուրաքանչյուրը հերթով՝ մերթ մեռել է դառնում, մերթ՝ աստված։

Հերմես.— Այդ նրանց փոխադարձ եղբայրական սիրուց է։ Երբ պարզվեց, որ Լիդայի տղաներից մեկը պետք է մեռնի, իսկ մյուսն անմահ դառնա, նրանք այդ ձևով անմահությունը բաժանել են իրար մեջ։

Ապոլոն.— Հերմես, այդպիսի բաժանում ես չեմ հասկանում. չէ որ այդպիսով նրանք երբեք չեն տեսնի իրար,—իսկ այդ, թվում է ինձ, իրենք ցանկացել են ամենից շատ։ Սակայն էլ ինչպե՞ս հանդիպեն իրար, եթե մեկը բնակվում է աստվածների թագավորությունում, իսկ մյուսը նույն ժամանակում՝ մեռածների թագավորությունում։ Բայց ահա ուրիշ ինչ է հետաքրքրում ինձ. ես գուշակում եմ ապագան, Ասկլեպիոսը մարդկանց է բուժում, դու, որպես աքանչելի դաստիարակ, սովորեցնում ես մարմնամարզություն և ըմբշամարտություն։ Արտեմիսը օգնում է ծննդկաններին, և ընդհանրապես մեզանից յուրաքանչյուրը որևէ բանով զբաղվում է, որով նա օգուտ է բերում աստվածներին և մարդկանց,— իսկ ի՞նչ են անում նրանք։ Մի՞թե նրանք արդեն բոլորովին հաստակավոր են և ապրում են առանց որևէ բան անելու։

Հերմես.— Բնավ երբեք։ Նրանք սպասարկում են Պոսիդոնին. նրանց վրա պարտականություն է դրված ձիով շրջել ծովի շուրջը և եթե որևէ տեղ տեսնեն, որ ծովայինները վտանգի մեջ են, նավ նստել և լողորդներին փրկություն բերել։

Ապոլոն.— Այո, Հերմես, այդ շատ լավ և օգտակար զբաղմունք է։

ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՔ ՄԵՌԵԼՈՑ

«Խոսակցություն մեռելոց» սատիրական դիալոգները մեր մեծ երգիծաբան Հակոբ Պարոնյանը բնագրից կատարած թարգմանությամբ, պարբերաբար հրատարակել է «Խիկար»-ում 1884 թվի ընթացքում: Լուկիանոսի այս գործի հրատարակման առթիվ Պարոնյանը «Խիկար»-ի նույն տարվա հունվար ամսվա համարում գրում է. «Հելլեն երգիծաբանության վրա ճաշակ մը տալու նպատակով՝ մեր ազգայնոց արժան դատեցինք Լուկիանոսի, որ Բ. դարու բարոյախոսն և նշանավոր երգիծաբանն է Հելլենաց, Մեռելական տրամախոսություն անուն խոսակցություններն հունարենեն թարգմանելով—մաս առ մաս հրապարակել հանդեսիս մեջ»:

Սակայն, դժբախտաբար, մեծ երգիծաբանը թարգմանությունը չի ավարտել. «Խոսակցություն մեռելոց» շարքից մի քանի դիալոգներ դուրս են մնացել:

ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՔ ՄԵՌԵԼՈՑ

ՔԱՐՈՆ, ՀԵՐՄԵՍ ԵՎ ՋԱՆԱՋԱՆ ՄԵՌՅԱԼՆԵՐ

Քարոն.— Մոխիկ ըրեք ինձ, որպեսզի քմանաք ինչ վիճակի մեջ են գործերն։ Նավակն, ինչպես կտեսնեք, փոքր է. փտած և ամեն կողմեն ջուր կառնե, և եթե քիչ մը ծովի դեպի մեկ կողմ՝ կը հրի և չրասույզ կը լինի։ Մինչդեռ դուք շատավոր եք, և ձեզմե յուրաքանչյուրն շատ բաներ բերած է հետը։ Եթե այդ բաներով նավակն մանել ուզեք, կը վախնամ, թե մի գուցե զղջաք հետո և մանավանդ անոնք, որ լողալ չեն գիտեր։

Հերմես.— Ի՞նչ պետք է ընել, ուրեմն, որպեսզի անվտանգ նավենք։

Քարոն.— Պիտի ըսեմ։ Պետք է, որ մերկ մանեն և բոլոր այս բաները դետեղերքը թողուն. հազիվ այսպես պիտի կրնա զձեզ տանիլ նավն։ Եվ դու, ո՛ Հերմես, նայե, որ նավակին մեջ ոչ ոք ընդունվի՝ մինչև որ հագուստները չհանէ և ինչպես ըսի, հոս չթողու ծրարները։ Նավամատույցին մոտը կեցիր, քննե զանոնք և ընդունե, միայն թե ամիսպե զիրենք, որ մերկ մանեն։

Հերմես.— Իրավունք ունիս, ըսածիդ պես կընենք։ — Ո՞վ է այս առաջինն։

Մենիպպոս.— Մենիպպոսն եմ. ահա մախաղս, ո՛ Հերմես, և գավազանս, որ լճի մեջ նետված են. պատառուն վերարկուս չբերի իսկ և շատ աղեկ ըրի։

Հերմես.— Մոխիր, Մենիպպե՛, լավագույնդ մարդոց և նավակին բարձր կողմն առաջին տեղը բռնե՝ որպեսզի ամենքը դիտես վերեն։ Եվ ահա գեղեցիկ պատանի մը, այս ո՞վ է։

Քարմոլեոս.— Սիրունն Քարմոլեոս մեգարացի, որու համբույրն երկու տաղանդ գին ուներ։

Հերմես.— Ի՛նչ մերկացի՛ր ուրեմն գեղեցկությունդ և համ-

բույրներդ և թավ մազերդ և այտերուդ կարմիրն և ամբողջ մորթդ։ Տեսա՞ր հիմա, ինչպես թեթևաշարժ եղար. հրամմե՝ մոխիր։ Բայց ո՞վ է սա, որ ծիրանի պատմուճան հագած, արքայական թագ ի՛գլուխ և գոռոզ նայվածք մ՚ ունի։

Ղամբիկոս.— Ղամբիկոսն եմ, բռնավորն Գեղայի։

Հերմես.— Ինչո՞ւ համար, Ղամբիկե, ասոնք հետդ առեր եկեր ես։

Ղամբիկոս.— Ի՞նչ... ո՛չ Հերմես, բռնավոր մարդու մը կը վայլե՞ր մերկ գալ։

Հերմես.— Ոչ իրր բռնավոր, այլ իբր մեռյալ մարդ։ Օ՛ն ուրեմն, վար դիր զանոնք։

Ղամբիկոս.— Հաճությունս ձգեցի ահա։

Հերմես.— Ձգե նաև, Ղամբիկե, բարձրամտությունդ և շքասեր կերպարանքդ, վասնզի եթե անոնք ալ հետդ դան նավակն կը ծանրաբեռնի։

Ղամբիկոս.— Բույլ տուր զոնե, որ թագս և պատմուճանս հետս առնեմ։

Հերմես.— Ո՛չ, զանոնք ալ ձգե։

Ղամբիկոս.— Ուրիշ բան մը մնա՞ց, ահա, ինչպես կը տեսնես, ամենն ալ ձգեցի։

Հերմես.— Դեռ ունիս ձգելու բաներ. վայրագությունդ, անապիսությունդ, ինքնահաճությունդ և բարեկարգությունդ, ասոնք ալ հոս ձգե։

Ղամբիկոս.— Ահա, բոլորովին մերկ եմ։

Հերմես.— Մոխի՛ր եվ դու ո՞վ ես, այրդ թանձրամարմին։

Դամասիաս.— Ըմբիշն Դամասիաս։

Հերմես.— Արդարև, կարծեմ թե զքեզ ախոռ ձանչնամ, վասն զի շատ անգամներ տեսած եմ զքեզ մրցարաններու մեջ։

Դամասիաս.— Այո՛, Հերմես, մերկ եմ, ընդունեցեք զիս։

Հերմես.— Մերկ չես սիրելիս, մխերդ շատ են, պետք է որ ձգես զանոնք, որովհետև եթե մեկ ոտքդ դնես նավակին մեջ, նավակն ջուրին տակ կերթա. նետե նաև այդ պսակներն և մրցանակացդ ծանուցումները։

Դամասիաս.— Ահա բոլորովին մերկ եմ, և այսու հեռևյներուն հետ համակշիռս։

Հերմես.— Ահա այսպես, թեթև։ Մոխի՛ր։ Դուն ալ կրատո՛ն,

ձգե՛ հարստությունդ, մեղկությունդ, տոփանքդ. մի՛ տանիր հետդ ոչ հուղարկավորության շքեղությունն, ոչ նախահարցդ պատիվն և իշխանությունն. հոս ձգե նաև աղնվականությունդ և փառքդ և փայլուն տիտղոսներդ, զորս քեզ տվին քաղաքակիցներդ, ինչպես նաև արձաններուդ վրա գրված տողերն: Մի՛ խոսիր այն մեծ հիշատակարանին վրայոք, զոր կանգնեցին ի՛ պատիվ քո, որովհետև ասոնց հիշատակն իսկ խիստ ծանր բեռ մ'ե մեր նավակին:

Կրատոն.— Յավոք սրտի կը թողում ամենը, ի՞նչ ընեմ:

Հերմես.— Ի՞նչ կուզես այդդ սպառազինյալ, ինչո՞ւ կը բերես այս հաղթանակն:

Ջինվոր.— Որովհետև հաղթեցի և քաջության գործերով նշանավոր հանդիսացա և հայրենիքն ազիս պատվեց:

Հերմես.— Գետինը ձգե՛ սա հաղթանակն, որովհետև դժոխքի մեջ խաղաղություն կը տիրե և զենքերն ավելորդ են: Բայց ո՞վ է այս ամբարտավան և անբարեհաճ մարդն, որ բարձրահոն և մտախոհ կը հառաջանա և թանձր մորուս մ'ունի:

Մենիպպոս.— Փիլիսոփա մը լինելու է, ո՛ Հերմես, կամ շաղակրատ մը, խաբեբա մը: Մերկացուր զայն ալ, որովհետև պիտի տեսնես յուր վերարկուին տակ պահված շատ խնդալու բաներ:

Հերմես.— Առաջ եկուր, նախ և առաջ ձգե սա արտաքինդ և հետո մյուսները: Ո՞վ Արամազդ, որքա՞ն շաղակրատություն ունի, ինչքան տգիտությո՞ւն, հաղթասիրությո՞ւն, սնափառությո՞ւն, սոփեստական խնդիրներ և բազմակնճիռ տրամաբանություններ, բայց նաև շատ վայրաբանություններ, մանրապատում ճարեր: Բայց, ո՛ Արամազդ, ի՞նչ կը տեսնեմ, ոսկի ալ կա, ինչպես նաև հեշտասեր կյանք, անպարկեշտություն, բարկություն, տոփանք, մեղկություն. ասոնցմե և ոչ մին աչքես վրիպեցավ, թեպետ և մեծ խնամքով պահած ես զանոնք: Ձգե նաև սուտդ և գոռոզությունդ և այն կարծիքն, թե ուրիշներեն նախապատիվ ես, որովհետև եթե ասոնց ամենն մեկ տեղ առնելով մտնես նավակն՝ հիսուն թիով նավ մ'ալ չկրնար տանիլ այս ծանրությունն:

Փիլիսոփա.— Կը ձգեմ ուրեմն զասոնք, որովհետև այսպես կը հրամայեք:

Մինիպպոս.— Բայց թող ձգե նաև յուր ծանր ու թանձր մորուն, որ ինչպես կտեսնես, առնվազն հինգ մնասի ծանրություն ունի:

Հերմես.— *Աղեկ ըսիր, մորուքդ ալ ձգե։*

Փիլիսոփա.— *Ո՞վ պիտի կարե։*

Հերմես.— *Մենիպպոսը, որ նավագործին սակրը պիտի առնե և մորուքդ պիտի կարե, նավամատույցին վրա դնելով, զոր կոճղի տեղ պիտի գործածե։*

Մենիպպոս.— *Ոչ։ Հերմե՛ս, սղոց մը տուր ինձի, այդպես ավելի զվարճալի է։*

Հերմես.— *Սակրը կբավե, լավ է... հիմա մարդու նմանեցար, հանելով այդ աղտոտ մորուքն։*

Մենիպպոս.— *Կուզե՞ս որ քիչ մ'ալ հոնքերուն կտրեմ։*

Հերմես.— *Այո, որովհետև ճակտին վրա կը բարձրացնե զանոնք, և չեմ գիտեր ինչու համար կանկվի։ Այս ի՞նչ է, կուլա՞ս, վա՛տ, և կը դողա՞ս ի՛տես մահու. շուտ ըրե, մարի՛ր։*

Մենիպպոս.— *Թևին տակ ծանրագույն բան մ'ալ ունի։*

Հերմես.— *Ի՞նչ։*

Մենիպպոս.— *Շողոքորթությունը, որ իրեն շատ օգնած է կենդանությանը։*

Փիլիսոփա.— *Բայց դուն ալ, Մենիպպե՛, ձգե՛ ազատությունն, ազատախոսությունն, անհոգությունն, վեհանձնությունն և կատակըն, միայն դու ես որ այդպես կը խնդաս։*

Հերմես.— *Ո՛չ, պահե՛ զանոնք, որովհետև թեթև են, դյուրատար և նավարկության մեջ օգտակար։ Եվ դուն, ո՛ հռետոր, վար ձգե անվերջ և անհատնում խոսքերդ, հակադրություններդ, զուգակշիռներդ, լրջաբանություններդ և օրինաց հակառակ բառերդ և ճառերուդ մյուս բեռները։*

Հռետոր.— *Ահա ձգեցի։*

Հերմես.— *Շատ աղեկ։ Օն, երթանք. չվանը քակեցե՛ք, նավամատույցն քաշեցեք, վերցուցեք խարիսխը, առագաստներն բա՛ց ղեկավար և ղեկն վարե՛։ Ճանապարհ բարի... ինչո՞ւ կուլաք, խենդեր և մանավանդ դուն փիլիսոփա, որուն մորուսը կտրեցինք քիչ մը առաջ։*

Փիլիսոփա.— *Որովհետև կը կարծեի, ո՛ Հերմես, թե հոգին անմահ էր։*

Մենիպպոս.— *Սուտ կը խոսի, ուրիշ բաներու վրա կը ցավի նա։*

Հերմես.— *Ո՞ր բաներու վրա։*

Մենիպպոս.— Ալ պիտի չունենա բազմախորհրդական սեղաններ, ոչ ալ դիշերն գաղտ դուրս պիտի ելնե, գլուխն վերարկուին մեջ փաթթուած, շրջելու համար ցոփութեանց վայրերը, և առաւոտուն չ'պիտի կրնա երիտասարդներու իմաստութեան վաճառել և անոնցմե ստակ առնել, այս բաներուն վրա է որ կը ցավի։

Փիլիսոփա.— Մենիպպե, մեռնելուդ վրա չե՞ս ցավիր դուն։

Մենիպպոս.— Ինչպե՞ս, քանի որ ես ճեպելով եկա մահվան, ուր ոչ ոք զիս կանչած էր. բայց մեր խոսակցութեան առեն չե՞ք լսեր մարդոց աղաղակաց ձայներ, որ երկրեն կուգան։

Հերմես.— Այո՛, Մենիպպե, և աղաղակն միայն մեկ կողմեն չգար. ոմանք ժողովներ գումարելով կուրախանան և կը խնդան՝ Դամբիկոսի մահվան վրա. յուր կինն ուրիշ կնիկներե պաշարված է, և յուր զավակներն, որ պզտիկ են, ուրիշ տղաներե կը քարկոծվին անխնա. ոմանք ալ կծափահարեն Դիոփանտոս հռետորն, որ Սիկեոնի մեջ դամբանական կը խոսե այս Կրատոնի համար։ Ասդին, ահա մայրն Դամասիա կականաբարձ կը հառաչե ուրիշ կանանց հետ՝ զավկին մահվան վրա, իսկ զքեզ, ո՛ Պենիպպե, ոչ ոք կողբա, դու միայն հանդիստ կը պառկես։

Մենիպպոս.— Բնավ երբեք, սակավիկ մի ևս, և պիտի լսես շուներն, որ դառնագին պիտի կաղկանձեն իմ մահվանս վրա, ինչպես նաև ագռավներուն, որ իրենց թևերն պիտի բախեն, երբ գումարվին թաղմանս հանդեսին համար։

Հերմես.— Անվեհեր ես Մենիպպե։ Բայց որովհետև հասանք, դուք դնացեք դեպի ի'դատարան, չիտակ սա ճամփեն։ Ես և նավավարն դառնանք ուրիշ մեոյալներ բերելու համար։

Մենիպպոս.— Բարի ճամփորդութիւն, Հերմես։ Մենք ալ առաջ երթանք։ Ինչո՞ւ կուշանաք. անհրաժեշտ հարկ է, որ դատվինք և կրսեն, թե պատիժներն խիստ ծանր են — անիվներ, անգղեր և ապառաժներ — յուրաքանչյուրին վարքը ճշտիվ երևան պիտի ելնե հոն։

Քարոն, Մենիպպոս և Հերմես

Քարոն. Նավողչեքը տուր, թշվառական։

Մենիպպոս. Պոռա՛, ո՛ Քարոն, եթե պոռալն հաճույք կը պատճառե քեզ։

Քարոն. Ստակս տուր, կրսեմ քեզի, որովհետև նավակովս հոս փոխադրեցի զքեզ։

Մենիպպոս.—Կարելի չէ, որ ստակ առնես այն մարդեն, որ ստակ չունի։

Քարոն.— Կը գտնվի՞ մարդ մ'որ լումա մը չունենա։

Մենիպպոս.— Թե կը գտնվի ուրիշ մ'որ լումա մը չունենա, չեմ գիտեր. սակայն ես չունիմ։

Քարոն. Կերդնում Հանուն Պղուտոնի, որ զքեզ խեղդամահ կընեմ, անառակ, եթե պահանջքս չվճարես։

Մենիպպոս.— Ես ալ այս վայրով քու գանկդ կը ջախջախեմ։

Քարոն. Ուրեմն ձրի՞ կուզես նավարկել այնչափ տեղ։

Մենիպպոս.— Հերմես թող վճարե ինձի համար, քեզի նա՛ հանձնեց զիս։

Հերմես.— Ո՜հ ..... աքանչելի՜ վաստակ ..... եթե մեռելոց համար ես վճարեմ.....

Քարոն.— Օձիքդ թող չպիտի տամ, մինչև որ պահանջքս չհատուցանես։

Մենիպպոս.— Լավ ուրեմն, նավակդ հոս կապե և սպասե, որ ստակդ տամ. բայց քանի որ չունիմ՝ ինչպե՞ս կուզես որ վճարեմ։

Քարոն.—Չէի՞ր գիտեր, թե դրամ պետք էր բերել հոս՝ վճարելու համար։

Մենիպպոս.— Շատ լավ գիտեի, բայց չունեի։ Ի՞նչ ուրեմն, ասոր համար պետք էր, որ չմեռնեի՞։

Քարոն.— Դո՞ւն ուրեմն միայն պիտի պարծենաս ձրի նավարկելուդ վրա։

Մենիպպոս.— Ձրի չէ, բարեկամ, որովհետև նավակին ջուրը պարպեցի, թիավարությամբ օգնեցի և բոլոր ուղևորներու մեջ ես էի միայն որ չ'լացի։

Քարոն.— Նավողչեքին հետ հարաբերություն չունին այս բաները, պետք է, որ լուման վճարես՝ ուրիշ ճար չկա։

Մենիպպոս.— Ուրեմն նորեն ի'կյանս դարձուր զիս, ողջընթո՛ւր զիս։

Քարոն.— Որպեսզի Էակոսեն ծե՞ծ ուտեմ։

Մենիպպոս.— Գլուխ մի ցավցուներ ուրեմն։

Քարոն.— Ի՞նչ ունիս մախաղիդ մեջ։

Մենիպպոս.—Ոլոռն և Եկաղյան ճաշ։

Քարոն.— *Հերմե՛ս, ուսկի՞ց բերիր այս շունը։ Եվ ինչե՞ր չէր սավ նավարկության միջոցին բոլոր ուղևորներու, ինչպես կը քններ և կծաղրեր զանոնք, սա՛ միայն կերպեր՝ երբ ալոնք կողբային։*

Հերմես.— *Քարոն, չես գիտեր, թե ո՛վ է այս մարդն, զոր նավակովդ բերիր. արդարև ազատ և հաճելության անհոգ մարդ մը։ Մենիպպոսն է սա։*

Քարոն.— *Ահ, եթե անգամ մ՚ալ ձեռքս անցունեմ զքեզ...։*

Մենիպպոս.— *Անգամ մ՚ալ ձեռք անցունես զի՛ս... բաւեկամ, բայց երկրորդ անգամ կաթելի չէ։*

ՄԵՆԻՊՊՈՍ ԵՎ ԷԱԿՈՍ

Մենիպպոս.— *Հանուն Պղուտոնի, ցույց տուր ինձ, Էակե, ինչ որ կգտնվի դժոխոց մեջ։*

Էակոս.— *Ամենը ցույց տալն դյուրին չէ, Մենիպպե, այժմ գլխավորները միայն սորվե։ Ահա Կերբերոսն, զոր կը ճանաչես, և նավավարն, զոր հոս բերավ զքեզ, ահա Լիճն և Փլեգեթոնն, զոր տեսար հոս եկած ժամանակդ։*

Մենիպպոս.— *Կը ճանաչես այս ամենն և զքեզ, որ դռնապան ես. կը ճանաչեմ նաև Թագավորն և կայսրազնները։ Ցույցդ ինձ այժմ հին մարդերն և մանավանդ անոնց միջեն երևելիները։*

Էակոս.— *Ահա Ակամեմնոնն, ահա Աքիլլևսը, սա Ագամեմնոնն է, և դա Ոդիսևսն. անդին Եսան է և Դիոմեդես և Հունաստանի երևելիները։*

Մենիպպոս.— *Բարե՛, ո Հոմե՛ր, դյուցազներգությանդ բոլոր գլխավոր անձերն որքան տձև և անճանաչ եղած են. ամենքը փոշի են դարձեր..... ի՞նչ ծիծաղաշարժ մնացորդներ, պարոն դանկեր. սա ո՞վ է, Էակե։*

Էակոս.— *Կյուրոսն է, մյուսն Կրեսոս, անդին Սարդանաբաղն է, քիչ մալ անդին Միտասն է։ Ան ալ Քսերքսեսն է։*

Մենիպպոս.— *Դո՞ւն էիր, Թշվառական, որ էլլադան կը դողացնեիր էլլեսպոնտոսն միացնելով և լեռներու մեջեն նավարկել ուզելով։ Սա Կրեսոսն ալ ի՞նչ բան դարձած է։ Սարդանաբաղին գալով, թույլ տուր ինձ, Էակոս, որ ապտակեմ զինքն։*

Էակոս.— *Մի՛ ըներ, որովհետև կխորտակես դանկն, որ կնայինք։*

Մենիպպոս.— *Գնե՛ք թող տուր, որ սա կնամարդուն երեսն ապտակ մ՚իջեցնեմ։*

Էակոս.— *Կուզե՞ս փիլիսոփաները տեսնել։*

Մենիպպոս.— *Այո՛, այո՛, կուզեմ տեսնել։*

Էակոս.— *Սա առաջինն, որ կը տեսնես, Պյութագորասն է։*

Մենիպպոս.— *Բարև՞, ո՛ Եվփորբե, կամ Ապողոն, կամ ինչ որ կուզես։*

Պյութագորաս.— *Բարև ո՛ Մենիպպե։*

Մենիպպոս.— *Ազդըրդ ոսկիե չէ՞ այլևս։*

Պյութագորաս.— *Ոչ, սա մախաղդ բեր նայիմ ուտելու ինչ կա մեջը։*

Մենիպպոս.— *Միայն պակլա կա, բարեկամ, հրամանոցդ արժանի ուտելիք չունիմ։*

Պյութագորաս.— *Ձեն չունի, տո՛ւր, որովհետև մեռելոց մեջ տարբեր են կարծիքներն. ես սովորեցա, որ բնավ տարբերություն չկա պակլաներու և մեր նախահարց գլուխներուն մեջ տեղ։*

Էակոս.— *Ահա Սողոնն, որդի Էքսեկեստիդեսի. անդին Թաղեսըն, և ասոնց քով Պիտտակոսա և մյուսներն. յոթն իմաստուններն ալ հոն են, ինչպես կը տեսնես։*

Մենիպպոս.— *Այո, և անոնք են միայն, որ հանդարտ և զվարթ են։ Բայց ո՞վ է սա, որ մոխիրի մեջ թաթխված է՝ մոխրի վրա եփած հացի պես, և որուն մարմինն ծածկված է վերքերով։*

Էակոս.— *Էմբետոկղն է, որ կես խորոված ինկավ հոս Էտնայեն։*

Մենիպպոս.— *Ո՛ պղնձոտն մարդ, ի՞նչ ունեիր, որ ինքզինքդ հրաբուխին բերանը նետեցիր։*

Էմբետոկղ.— *Մելեմաղձոտություն։*

Մենիպպոս. *Ո՛չ, այլ անափառություն, ամբարտավանություն և ծայրահեղ հիմարություն։ Ասոնք ահա մրկեցին զքեզ՝ սանդալներովդ մեկտեղ. և այսպես պետք է ըլլայիր։ Բայց այդ վարպետությունդ ապարդյուն մնաց, որովհետև խաբեությունդ երևան ելավ և ամեն մարդ գիտցավ քու մեռած ըլլալդ։ Բայց սա Սոկրատն ո՞ւր է։*

Էակոս.— *Նեստորի և Բաղամեդի հետ չնչին բաներու վրա կը խոսի։*

Մենիպպոս.— Կը փափաքիմ տեսնել զինքն, եթե հոս մոտ է։

Էակոս.— Կը տեսնե՞ս սա կումտը.....

Մենիպպոս.— Ամենն ալ կումտ են, այնպես որ ամենուն ալ նշանն այս է։

Էակոս.— Սա տափակ քիթը կըսես.....։

Մենիպպոս.— Միևնույնն է, բոլոր քիթերը տափակ են հոս։

Սոկրատ.— Ջի՞ս կը փնտրես, Մենիպպե՛։

Մենիպպոս.— Հրամմեր եք։

Սոկրատ.— Ի՞նչ կա Աթենք։

Մենիպպոս.— Երիտասարդներեն շատեր իրենք զիրենք փիլիսոփա կանվանեն, և եթե նոցա վերարկուեն և քայլվածքեն դատես որ՝ կատարյալ փիլիսոփաներ են։

Սոկրատ.— Շատ տեսած եմ անոնցմե։

Մենիպպոս.— Բայց տեսար կարծեմ, ինչպես հո եկան Արիստիպպոս և Պղատոն, մին անուշահոտ յուղեր բուրելով և մյուսն Սիկիլիո բռնավորները շողոքորթելու արհեստն ուսած։

Սոկրատ.— Իմ վրա ի՞նչ կարծիք ունին։

Մենիպպոս.— Այս տեսութեամբ[1]) երջանիկ ես Սոկրատ, որովհետև ամենքն զքեզ կկարծեն, թե սքանչելի մարդ մ'ես և թե ամենագետ ես, այսուամենայնիվ — ճշմարիտն խոսելով — ոչինչ գիտես։

Սոկրատ.— Ես ալ կըսեի իրենց, թե բան մը չեմ գիտեր, բայց անոնք կատակ կկարծեին։

Մենիպպոս.— Որո՞նք են շուրջդ գտնվողները։

Սոկրատ.— Քարմիդես, Փեդրոս և Կղենիոսի որդին։

Մենիպպոս.— Լավ. հոս ալ չես մոռնար քո արհեստդ։

Սոկրատ.— Ուրիշ ավելի քաղցը ի՞նչ գործեմ, բայց նըստե՛ մեր քով, եթե հաճո կը թվի քեզ։

Մենիպպոս.— Ոչ, ոչ, պիտի երթամ Կրեսոսի և Սարդարաբադի քով նստելու։ Կը հուսամ, թե շատ պիտի խնդամ և՝ պիտի զվարճանամ լսելով անոնց ողբերն և հառաչանքներն։

Լակոս.— Ես ալ կերթամ, որպեսզի մեռյալ չփախցնեմ, ուրիշ անգամ ալ մնացածներն կը ցուցանեմ քեզ։

Մենիպպոս.— Գնա՛, այսչափն ալ բավական է։

---

[1] տեսակետից։

Աղեքսանդր.— *Իրավունքը կպահանջե, որ քեզմե առաջ անցնիմ, ո՛ Լիբիացի, վասնզի ես ավելի արժանավոր եմ։*

Անիբաղ.— *Բնավ երբեք, նախապատվությունն ինձ կը վայլե։*

Աղեքսանդր.— *Թող Մինովս դատե և արդարությունն հայտնե։*

Մինովս.— *Ո՞վ եք դուք։*

Աղեքսանդր.— *Կարթեդոնացի Աննիբաղն է սա և ես Աղեքսանդրն եմ, Փիլիպպոսի տղան։*

Մինովս.— *Ո՞վ Արամազդ, երկուքն ալ մեծահամբավ...։ Բայց ի՞նչ է ձեր վիճաբանության նյութը։*

Անիբաղ.— *Նախապատվությունը։ Սա կըսե, թե զորապետության մեջ զիս անցած է և ես, որպես ամենքը գիտեն, կը պնդեմ, թե գերազանցած եմ պատերազմական արվեստին մեջ ոչ միայն զինքն, այլ նաև այն ամեն անձերն, որ ինձմե առաջ եկած են։*

Մինովս.— *Հասկացա։ Թող ուրեմն ձեզմե յուրաքանչյուրն խոսի կարգավ։ Նախ դո՛ն խոսե Լիբիացի։*

Անիբաղ.— *Այստեղ սա օգուտն ես ունեցա, որ հելլեն լեզուն ալ սորվեցա, այնպես որ այս մասին ես իմ վրա առավելություն մը չունի։ Մեր խնդրույն դառնալով՝ ես այն կարծիքն ունիմ, թե ավելի անոնք են արժանի գովեստից և փառաց՝ որք աննշան լինելով ի՛սկզբան՝ իրենք իրենցմե մեծ աստիճանի բարձրացան և ուժ և զորության ձեռք բերելով իրենց անձն հրամանատարության արժանի կացուցին։ Ես, օրինակի աղագավ, ի՛սկզբան իբրև ստորակարգյալ պաշտոնյա եղբորս սակավաթիվ զորքերով Իբերիա գնացի և քաջության հռչակ հանեցի։ Նվաճեցի Կեղտիբերքը, հաղթեցի և տիրեցի Գաղղիո, և մեծ լեռներն անցնելով ավերեցի, կողոպտեցի, իբրև հաղթող, ինչ որ գտա Երիդանի շուրջը. քանդեցի, կործանեցի, հիմն ի՛վեր տապալեցի բազում քաղաքներ. տիրացա Իտալիո ամբողջ դաշտին. ավելի առաջ գնացի և հասա մայրաքաղաքին մինչև արվարձաններն և մեկ ավուր մեջ այնքան մարդ ջարդեցի, որ անոնց մատանիներն կապիճով կը չափվեին և մարդոց դիակներով կամուրջներ կձևանային գետերու վրա։ Եվ այս ամենը գործեցի ոչ Ամմոնի որդին կոչվելով, ոչ ինքզինքս աստ-

ված կըլլեցնելու աշխատելով, ոչ ալ մորս երազնեին ասոր անոր պատմելով, այլ խոստովանելով, թե մարդ եմ, այլ ճակատելով հաջողակ զորավարներուն և պատերազմելով քաջամարտիկ զինվորներու դեմ և ոչ թե Մարաց կամ.....դեմ, որք չհալածված փախուստ կուտան և հաղթանակն անմիջապես կը հանձնեն որևէ հանդուգնի: Իսկ Աղեքսանդր՝ նախահայրերուն ընդունելով տերությունն՝ աճեցուց և շատ ընդարձակեց զայն օգտվելով բախտեն: Իսկ երբ Իսոսի և Արբելայի մոտ հաղթեց Դարեհին, ի՛բաց նետեց յուր նախահարց օրենքներն և սովորություններն, իբրև աստված պաշտվիլ ուզեց, մարական կենցաղավարության կերպն ընդունեց և խնճոյից մեջ բարեկամներ սպանեց կամ կերուխումի մեջ մահվան դատապարտեց: Ես ալ հայրենյացս մեջ հրամանատար էի իրեն պես, իսկ երբ Լիբիայի կողմերը նավարկող Պշնամյաց մեծ նավատորմիղին դեմ կանչեց զիս, անմիջապես հնազանդեցա իբրև սոսկական մարդ, և դատապարտվելով՝ հանդարտությամբ կրեցի վճիռս: Այս ամենն ըրի բարբարոս լինելով, հելլեն կրթություն առած չլինելով, ոչ Հոմերոսն կարդալով բարձրաձայն և ոչ ալ դաստիարակվելով իմաստուն Արիստոտելեն, այլ միայն առաջնորդվելով իմ խելքով: Ահա ասոնք են, որ զիս Աղեքսանդրեն նախատպատիվ կը հանդիսացնեն: Երե ինձմե ավելի գեղեցիկ կերևա՝ այն միակ պատճառով, թե գլուխն թագ դրած է, թերևս արժանիք մ'է այս հաշս Մակեդոնացվոց, բայց չվայլեր, որ ասոր համար առաջին տեղն գրավե և ավելի բարձր կարծվի արի և քաջասիրտ զորավարե մը, որու գործերն ոչ թե բախտը, այլ հանճարի և խոհեմության արդյունք էին:

Միննվս.— Շատ արժանավայել կերպով խոսեցավ յուր անձին նկատմամբ և այնքան պերճախոսությամբ, որքան չէր ակնկալվեր Լիբիացիե մը: Աղեքսանդր, ի՞նչ պատասխան ունիս այս խոսքերուն:

Աղեքսանդ.— Պետք էր, ո՛ Մինովս, ոչ ինչ պատասխանել այսքան հանդուգն մարդու մը, վասնզի համբավս բավ է ձեզի ցույց տալ, թե ինչպես թագավոր մ'էի ես և ինչպես ավազակ մ'էր սա: Այսու ամենայնիվ ունկն դրեք ինձ, հասկնալու համար, թե ինչ անհուն տարբերություն կա մեր երկուքին մեջ տեղը: Երիտասարդ էի, երբ կառավարության գլուխն անցնելով երերուն գահուն

վրա բազմեցա։ Հալածական վանեցի հայրս սպաննողները։ Թեքեի կործանմամբ ահ և սարսափ սփռեցի համայն էլլադայի մեջ և սպարապետ ընտրվեցա հույներեն։ Չկշտացա թագավորելով միայն Մակեդոնացվոց և ուրիշ ազգաց վրա՝ զորս թողած էր ինձ հայրս, այլ ամբողջ աշխարհին տիրապետելու գաղափարն հղացա, կարծելով թե դիշ կըլլա, եթե ամենուն չտիրեմ։ Փոքրաթիվ զինվորներով Ասիո վրա արշավեցի, Գրանիկոսի մոտերը մեծ ճակատամարտի մը մեջ հաղթող ելա և տիրացա Լիդիայի, Հոնիայի և Փռյուգեի, և քիչ մը հետո նվաճելով ինչ որ տեսա և գտա ճամփուս վրա, հասա Իսոոս, ուր Դարեհ ինձ կսպասեր բյուրավոր զորքերով։

Գիտեք, Մինովս, մեկ ավուր մեջ որքան մեռյալներ ըրկեցի ձեզ, վասն զի նավավարն կըսե, թե նավակն չէ բավեր զանոնք ընդունելու և թե ստիպվեր է լաստեր շինել, որպեսզի շատ մը մեռյալներ կարենան նավարկել։ Եվ այս քաջագործություններն կրնեի անձս վտանգի մեջ դնելով և վերքերն արհամարհելով։ Ավելորդ կհամարեմ մի ըսա միոջե պատմել ինչ որ գործեցի ի Տյուրոս և Հ'Արբելա, միայն կըսեմ, թե մինչև Հնդկաստան գնացի և օվկիանոսն սահման դծեցի տերությանս. ասոնց փիղերուն տեր եղա, իշխանությանս տակ առի Պորոսն և անցնելով Տանայիսն, մեծ ձիամարտի մը մեջ հաղթեցի Սկյութացվոց, որ մեծ հաջողությամբ և քաջությամբ կը կռվին։ Բարեկամներում մեծ բարիքներ ըրի և թշնամիներս պատժեցի։ Ուստի ներելի է մարդոց, եթե դիս աստվածի տեղ կը դնեին, ըստ որում քաջագործությանցս մեծությունն կը տեսնեին։

Ի՞նչ հարկ կա երկարելու, ես թագավոր էի, երբ մեռա, մինչդեռ նա Պյութանիո Պրուսիայի քովն էր աքսորված, որպես կը վայելեր նենգամիտ և վայրագ մարդու մը։ Եվ ինչպե՞ս հաղթեց Իտալիո, չեմ ուզեր ըսել. ոչ թե քաջությամբ հաղթեց, այլ չարությամբ, նենգությամբ և խորամանկությամբ։ Ասոր պատերազմին մեջ ոչ արդարություն կա և ոչ օրինավորություն։ Գալով այն ամբաստանության, որով դիս կներկայացնեն իբրև մեղկ՝ մեր հիանալի զորավարն կը մոռանա յուր ըրածներն Կապուայի մեջ, ուր բարեկամաց հետ համախմբվելով՝ հեշտության անձնատուր կլիներ և զեխության մեջ կը վատներ պատերազմի անգին ժամերն։ Իսկ ես չուզելով ձեռք անցունել Արևմուտքն, փափաքեցա Արևելյան

ազգաց վրա հարձակիլ. և սուտիվ ավելի ի՞նչ մեծագործություն կրնայի ընել, եթե ոչ առանց արյունահեղության նվաճելով Լիբիան և Գադեսի լայնատարած գավառն։ Չէր արժեր, որ այս կողմերն զինու զորությամբ գրավեի, պատերազմի արժանի չէի դատեր զանոնք, որ արդեն կը դողային և պատրաստ էին զիս իրենց տեր ճանաչելու և ընդունելու։ Քեզ կը մնա ուրեմն դատել, ո՛ Մինովս, բավ համարելով ըսածներս, որ գործոցս մեկ համառոտությունն են։

Սկիպիոն.— Ինձի մտիկ չըրած մի՛ դատեր։

Մինովս.— Դուն ո՞վ ես, բարկամ, ո՞ր քաղքեն ես։

Սկիպիոն.— Սկիպիոնն եմ, զորապետ իտալացի, որ Կարթեդոնն նվաճեցի և Աֆրիկեին տիրացա՝ արյունալի պատերազմներով։

Մինովս.— Լավ, ի՞նչ պիտի ըսես։

Սկիպիոն.— Ըսելիքս սա է, թե վար եմ Աղեքսանդրեն և վեր եմ Աննիբալեն՝ որուն հաղթեցի և զոր հալածելով անպատիվ փախուստի մը հարկադրեցի։ Ինչպե՞ս ուրեմն կը հանդգնի սա նախապատվություն կորզել Աղեքսանդրեն, որու հետ ոչ իսկ ես, հաղթողս Սկիպիոն, կը հանդգնիմ ինքզինքս բաղդատել։

Մինովս.— Իրավունք ունիս. առաջին պատիվն թող Աղեքսանդրին տրվի ուրեմն, երկրորդը քեզի և երրորդն ալ Աննիբալին, վասնզի ան ալ նեռվելու մարդ չէ կարծեմ։

ԴԻՈԳԻՆԵՍ ԵՎ ՊՈՂԻՏԵՎԿԻՍ

Դիոգինես.— Կը հանձնարարեմ քեզ, ո՛ Պողիտևկիս, որ վեր ելնելուդ պես — որովհետև կարծեմ վաղը վերակենցաղելու կարգը քովդ է — եթե տեսնես ուրեք Մենիպպոս շունը ի՛Կորնթոս, Կրանիոնի կամ Լիկեոսի կողմերը կը գտնես զինքն, որ կը ծիծաղի իրերաց հետ վիճաբանող փիլիսոփայից վրա, ըսես իրեն. «Մենիպպե՛, կը հրավիրե զքեզ Դիոգինես, որ եթե հոգնեցար երկրիս վրա անցած իրերն ծաղրելե, հոս դաս առավել ևս խընդալու համար։ Հոն վատահ չես միշտ թե պիտի խնդաս, որովհետև, ինչպես կըսեն, ո՞վ գիտե սուտիվ, թե ի՛նչ կը լինի մեռնելեն վերջը։ Մինչդեռ հոս չպիտի դադրիս խնդալե, որպես

Ես և մանավանդ երբ տեսնես հարուստները, սատրապներն և բռնավորներն՝ այնքան խոնարհ և այնքան աննշան՝ որք միայն իրենց հառաչանքեն ու հեծեծանքեն և այլն կը ճանաչվին, վերի բաներու հիշատակն ղիրենք այնքան վատ և տմարդի դարցուցած է»: Ասոնք ղրուցե իրեն. ինչպես նաև ըսե, որ մախաղը լեցունէ լուբիայով, և եթե քառուղիներու վրա ձգված եկագյան ճաշ կամ մաքրության հավկիթ և կամ ուրիշ բան մը գտնե՝ հետն առնե և այնպես գա:

Պողիտևկիս.— Այս ամենն պիտի հաղորդեմ իրեն, բայց որպեսզի ճանաչեմ ղինքն՝ պատկերը նկարագրե ինձ:

Դիոգինես.— Ծեր է և կունտ. մաշած և պատառուն վերարկու մ'ունի, որ ամեն կողմեն ծակված, ամեն կողմերեն բացված և գույնզգույն քուրջերով կարկտված է. միշտ կխնդա և շատ անդամ կը ծաղրե այն շաղակրատ փիլիսոփաները:

Պողիտևկիս.— Այս ծանոթություններով դյուրին է ղինք գտնել:

Դիոգինես.— Կուզե՞ս որ այն փիլիսոփայից համար ալ հանձնարարություն մընեմ քեզ:

Պողիտևկիս.— Ըսե՛, ծանրություն չտար ինձ:

Դիոգինես.— Ընդհանրապես ասոնց ղրուցե, որ դադրին զառանցելե, ամեն բանի վրա վիճաբանելե, իրարու եղջյուրներ բուսցնելե, կոկորդիլոսներ շինելե և հուզելե անտեղի խնդիրներ, զորս երիտասարդաց ալ կուսուցանեն:

Պողիտևկիս.— Բայց պիտի ըսեն, թե անուս և տգետ եմ, եթե իրենց իմաստությունն պարտավեմ:

Դիոգինես.— Դուն ալ իմ կողմես ըսե, թե վայ անոնց դլխուն:

Պողիտևկիս.— Աս ալ կըսեմ:

Դիոգինես.— Հարուստներուն դալով, սիրելի Պողիտևկիս, նույնպես ըսե իրենց իմ կողմես. «ինչո՞ւ համար, հիմարներ, կը պահեք ոսկին, ինչո՞ւ կը տանջվեք տոկոսներ հաշվելով և տաղանդի[1] վրա տաղանդներ դիզելով, դուք որ քիչ տեսենն հոս պիտի իջնաք Թանկ[2] մը միայն ունենալով»:

Պողիտևկիս.— Այս ամենն կըսեմ իրենց:

Դիոգինես.— Մի մոռնար նաև ըսելու գեղեցիկներուն և ու-

---

[1] Դրամական միավոր:

[2] Օբոլոս - նույնպես դրամական միավոր:

Ժեղներուն, Կորնթացի Մեգիղղոսին և ըմբիշ Գամոքսեսոսին, թե մեր մեջ չկա ոչ խարտյաշ մազեր, ոչ կապույտ կամ սև աչքեր, ոչ կարմրություն դիմաց, ոչ ուժեղ ջիղեր, ոչ զորավոր ուսեր, այլ ամենն փուշի մ'է, որպես կըսեն, մերկ և ոձև գանկեր են։

Պողիտևկիս.— Դժվարություն մը չկա այս խոսքերն ալ հաղորդելու գեղեցիկներու և ուժեղներու։

Դիոգինես.— Իսկ աղքատներուն գալով, ո՛ Լակեդեմոնացի, որովհետև ասոնք բազմաթիվ են և դժգոհ իրենց բախտեն, իրենց թշվառությունը կողբան—զրուցեր, որ չկան և չողբան. պատմե իրենց, թե հոս հավասարություն կը տիրե, և թե պիտի տեսնեն այն տեղի հարուստներն, որ և ոչ մեկ բանի մեջ իրենցմե առավելություն մի չունին հոս։ Եվ եթե կուզես Լակեդեմոնացիներն ալ հանդիմանե իմ կողմես ըսելով, թե շատ թուլացած են։

Պողիտևկիս.— Լակեդեմոնացվոց համար բան մը մի ըսեր Դիոգինես, չեմ ներեր, իսկ զոր ինչ պատվիրեցիր ուրիշներուն համար պիտի կատարեմ։

Դիոգինես.— Շատ լավ, թողունք ուրեմն Լակեդեմոնացիներն, որովհետև այնպես կուզես, բայց մյուսներուն համար ըսած խոսքերս մի մոռնար իրենց հաղորդելու։

ԿՐԵՍՈՍ, ՊՂՈՒՏՈՆ, ՄԵՆԻՊՊՈՍ, ՄԻՏԱՍ ԵՎ ՍԱՐԴԱՆԱԲԱՂ

Կրեսոս.—Ո՜, Պղուտոն, չենք կրնար հանդուրժել, որ այս Մենիպպոս շունն մեր քովը նստի, կամ զինքն ուրիշ տեղ մը փոխադրե և կամ մենք պիտի ստիպվինք մեր տեղը փոխել։

Պղուտոն.— Ի՞նչ չարիք կրնա գործել ձեզ, քանի որ նա ալ մեռած է ձեզի պես։

Կրեսոս.— Երբ մենք կուլանք, կողբանք վերի բաները հիշելով՝ Միտաս յուր ոսկիները, Սարդանաբաղ յուր տուփանքները և ես, Կրեսոսս, դանձերս, նա կը խնդա և կը ծիծաղի, ամեն նախատինք կը բափե մեր գլխուն՝ զմեզ վատոգի կոչելով, երբեմն ալ երգերովն կը խանդարե մեր ողբերն, վերջապես քաշվելու բան չէ։

Պղուտոն.— Մենիպպե՛, ի՞նչ կըսեն ասոնք։

Մենիպպոս.— Ճշմարտությունը։ Կատեմ և կը նախատեմ այս վատերն ու ողորմելիներն, որք բավական չհամարելով իրենց

վարած հոռի կյանքն, մահվանե հետո ևս վերի բաները կը հիշեն տակավին և իրենց խելքն ու միտքն անոնց վրա կհոգնեցնեն դեռ։ Ես ալ ուրեմն կզվարճանամ և կզբոսնում դիրենք վշտացնելով։

Պղուտոն.— Չ'վայլեր, սակայն. ասոնք կողբան, որովհետև մեծ բաներե զրկված են։

Մենիպպոս.— Դուն ալ, Պղուտոն, ասոնց ողբոյ կարեկորությյուն կուտաս և ասոնց հետ համակարծիք լինելու չափ հիմար ես։

Պղուտոն.— Ոչ, բայց չեմ ուզեր, որ ձեր մեջ երկպառակություն ըլլա։

Մենիպպոս.— Իմ հոգս չէ...։ Գիտցեք, ո՛ վատագույնքդ Լյութացվոց, Փռյուկեցվոց և Ասորեստանյանց, որ ձեր օձիքը թող չպիտի տամ, ուր ալ երթաք ձեր ետևեն պիտի գամ և ինձի բան գործ պիտի ընեմ զձեզ վշտացնել ու չարչարել իմ երգերովս ու ծիծաղներովս։

Կրեսոս.— Մի՞թե նախատինք չե՞ն ասոնք։

Մենիպպոս.— Ոչ երբեք, այլ անոնք էին նախատինք, զորս դուք գործեցիք պաշտելի ուզելով, ազատ մարդոց հետ ամբարտավանությյամբ վարվելով և վերջապես մոռանալով, թե պիտի մեռնիք օր մը. ողբացեք ուրեմն այն վայելքներն, զորս կորանցուցիք իսպառ։

Կրեսոս.— Բարե՜, որքան մեծ և բազում ստացվածքներե բաժնըվեցա։

Միտաս.— Ավա՜ղ, ի՜նչ ոսկիներե զրկվեցա։

Սարդանապաղ.— Ափսո՜ս, ո՜ւր մնացին իմ հեշտություններս։

Մենիպպոս.— Քաջ է, ահա այսպես ողբացե՛ք. Ինձի գալով, ես չպիտի դադրիմ ձեզի երգելե՝ «Ծանիր զքեզ նաբարաթին»[1] որովհետև ատանկ ողբերուն ատանկ երգ վայել է։

ՓԻԼԻՊՊՈՍ ԵՎ ԱՂԵՔՍԱՆԴՐ

Փիլիպպոս.— Այլևս չես կրնար ուրանալ իմ տղաս ըլլալդ, որովհետև եթե Ամմոնի որդին ըլլայիր, չպիտի մեռնեիր։

Աղեքսանդր.— Ես ալ գիտեի, հայր իմ, որ Ամինտոսի որ-

---

[1] Նաբարաթե—տաճկական արտասանությամբ պարսկերեն բառ «նադարաթ» հիմնական մեղեդին ընդմիջող, արագ տեմպով ուրախ երաժշտություն։

դի Փիլիպպոսի տղան եմ, այլ պատգամ ընդունեցա, որովհետև նպատակիս հասնելու համար այս միջոցն շահավոր կը կարծեի։

Փիլիպպոս.— Ի՞նչ կըսես, գուշակներն խաբվիլն շահավո՞ր բլլեցավ քեզ։

Աղեքսանդր.— Այնպես չէ։ Բարբարոսներն զիս աստվածի որդի կարծելով վախեցան ինձմե և ոչ ոք ընդդիմացավ ինձ՝ խորհելով թե աստվածի մը դեմ պիտի կռվեր, այնպես որ դյուրությամբ հաղթեցի ամենուն։

Փիլիպպոս.— Եվ ի՞նչ քաջ զինվորներու հաղթեցիր։ Փցուն աղեղներով և եղեգնյա վահաններով զինված վատերու դեմ պատերազմեցար։ Այլ էր նվաճել Հելլեններն, Բեովտիացիներն, Փոկեացիներն, Աթենացիներն, Արքատիո հետևակ զորքն, Թեսաղիո հեծելազորն, Էլիոնի նետաձիգ զինվորներն, Մանտինեովնի վահանազեն զորքերն, Թրակիացիներն, Իլլիրացիներն և Պեովնացիներն, ասոնք արդարև մեծ քաջագործություններ են. իսկ Մեսացիներն, Պարսիկներն և Քաղդեացիներն թուլամորթ և ոսկիներով զարդարված մարդիկ են, չե՞ս գիտեր, թե քեզմե առաջ Կղեարքոսի հրամանատարությամբ հաղթեցին անոնց՝ որք ի փախուստ աճապարեցին առանց սպասելու Հելլենաց նետերուն։

Աղեքսանդր.— Բայց, հայր իմ, Սկյութացիներն ու Հնդկաց փիղերն աննշան բաներ չեն, և սակայն անոնց ալ հաղթեցի՝ առանց բաժանում ձգելու անոնց մեջ և առանց մատնությամբ գնելու հաղթանակն։ Երդմանս չդրժեցի բնավ, խոստումներս կատարեցի և հաղթելու համար դավաճանություն չգործեցի։ Առանց արյունահեղության նվաճեցի Հունաստանն և Թեսեցիներին, լսեցիք հարկավ, ինչպես վրեժս լուծեցի։

Փիլիպպոս.— Այո՛, գիտեմ այս ամենն. Կղիդոսն պատմեց, զոր նիզակովդ սպանեցիր կռունքի մը մեջ, որովհետև համարձակեցավ դրվատել իմ գործերս, զանոնք բազդատելով քուկիններուդ հետ։ Իմացա նաև, թե մակեդոնական քղամիդն հանելով պարսկական զգեստ հագար և պարծկաց բարձր խոչրն գլուխդ դնելով պաշտելիր ուզեցիր մակեդոնացիներեն, ազատ մարդերեն. և ավելի ծաղրելին, հաղթվածներուն բարուց և սովորությանց հետևեցար։ Ջեմ հիշեր մյուս բոլոր գործերդ. ուսումնական մարդերն առյուծներու հետ մեկտեղ փակելդ, տարօրինակ հրամանիքներ կատարելդ և Հեփեստիոնը չափազանց սիրելդ։ Մեկ

գործդ միայն գովեցի, այն է, թե Դարիոսի կնոջ հետ, որ գեղեցիկ էր, հարգանոք վարվեր ես և անոր հորն ու աղջկանց խնամք տարեր ես, ահա արքայավայել գործ։

Աղեքսանդր.— Չգովեցի՞ր, հայր իմ, այն հանդգնությունն, զոր ցույց տվի ամենեն առաջ Ոքսիտրակեցվոց քաղաքն մտնելով և այնքան վերքեր ընդունելով։

Փիլիպպոս.— Ոչ, այս գովելի բան մը չէ, ոչ թե անոր համար, թե թագավորի մը չվայելեր վիրավորվել, բանակին գլուխն անցնիլ և յուր անձն վտանգի ենթարկել, այլ անոր համար, թե այդ հանդգնությունդ քեզի համար վնասակար էր։ Որովհետև ինքզինքդ աստված մը կը կարծեիր, եթե վիրավորվեիր և զքեզ պատգարակի մը մեջ դնելով պատերազմի դաշտեն դուրս հաներին—արյունաթաթախ, վերքերուդ ցավոց տակ ընկճած, տարակույս չկա, թե ամենուն ծաղրն ու ծիծաղը պիտի շարժեիր։ Ամոնն պիտի համոզվեր, թե շաղակրատ և խաբեբա մ'ես և գուշակներն ալ շողոքորթ. և ո՞վ կրնար յուր ծիծաղը զսպել տեսնելով Արամազդա որդին հիվանդ վիճակի մեջ և բժշկաց խնամոց կարոտ. և նույնիսկ այսօր, որ մեռած ես, կը կարծե՞ս, որ շատերը չբախդան այդ ստախոսությանդ վրա, երբ տեսնեն աստվածի մը որդվույն դիակն գետինը փռված, փտտած և ուռեցած ուրիշ դիակներու պես։ Աս ալ մեկդի թողունք. այդ ստախոսությունն, զոր նպատակիդ շահավոր կարծեր ես և որ հաղթություններդ դյուրացուցեր է, մեծ մասամբ քու քաջագործությանցդ փայլն նսեմացուց, որովհետև անոնք աննշան բաներ կը համարվեին աստվածի մը համար։

Աղեքսանդր.— Մարդիկ քեզի պես չեն խորհիր իմ վրաս, անոնք զիս կը զուգակշռեն Հերակղեսի և Բաքոսի հետ։ Ես Ամոնի կրցի տիրել, մինչդեռ Հերակղես և Բագոս չհաջողեցան։

Փիլիպպոս.— Հերակղեսի և Բագոսի հետ բաղդատելով իրրև ճշմարիտ որդի Ամմոնի կը խոսիս տակավին։ Չե՞ս խոսներ, չե՞ս ամչնար, Աղեքսանդր, չպիտի՞ թողուս այս դոռոզությունդ, ինքզինքդ չպի՞տի ճանչնաս բնավ և չպի՞տի հասկնաս վերջապես, թե մեռած ես։

Դիոգինես.— *Աս ինչ է, ո՛ Աղեքսանդր, դո՞ւն ալ մեռար մեզի պես։*

Աղեքսանդր.— *Ջարմանալու ինչ կա, ո՛ Դիոգինես, մարդ էի և մեռա։*

Դիոգինես.— *Ամոնն կը սաեր ուրեմն, ըսելով, թե յուր տղան էիր, երբ Փիլիպպոսի որդին էիր։*

Աղեքսանդր.— *Այո, Փիլիպպոսի որդին, որովհետև չէի մեռներ, եթե Ամոնին լինեի։*

Դիոգինես.— *Սուտ էին ուրեմն Ողիմպիադայի նկատմամբ սարված այն զրույցներն, թե վիշապի մը հետ կը կենակցեր, թե անկե ծնած էիր դուն և թե Փիլիպպոս կը խաբվեր, ինքզինքն քու հայրդ կարծելով։*

Աղեքսանդր.— *Ես ալ լսեցի այդ զրույցներն, բայց այժմ կը տեսնեմ, թե ուղիղ բանի հակառակ կը խոսին մայրս և ամմոնյան մարդաբեներն։*

Դիոգինես.— *Բայց ասոնց ստախոսությունն քու գործիդ եկավ, ո՛, Աղեքսանդր, որովհետև շատերն կը դողային առջևդ՝ կարծելով, թե աստված էիր։ Բայց ըսե ինձի, որո՞ւ, ձգիցիր այնքան ընդարձակ պետությունդ։*

Աղեքսանդր.— *Չեմ գիտեր, Դիոգինես, որովհետև ժամանակ չունեցա այս մասին խորհելու, միայն մեռած ժամանակս Պերդիկկասի տվի մատանիս։ Բայց ինչու կը խնդաս, ո՛ Դիոգինես։*

Դիոգինես.— *Կը խնդամ, որովհետև միտքս ինկավ Հելլանաց ըրածներն, երբ պետության գլուխն անցար, որքա՜ն շողոքորթեցին և ի՜նչ իրարանցումով զորապետ ընտրեցին զքեզ՝ բարբարոսաց դեմ։ Ոմանք ալ երկոտասան աստվածոց կարգը դասեցին զքեզ, տաճարներ կանգնեցին ի պատիվ քո, և զոհեր նվիրեցին քեզ իբրև որդվույն Ամմոնի։ Բայց, թողունք ասոնք, Մակեդոնացիք ո՞ւր թաղեցին զքեզ։*

Աղեքսանդր.— *Այսօր երեք օր է, որ Բաբելոնի մեջ կը պառկիմ. բայց Պտողեմեոս, տեղակալս, խոստացավ ներկա տագնապալից վիճակեն խալսելուն պես, դիս Եգիպտոս փոխադրել և հոն թաղել, որպեսզի տեղվույն աստվածներուն հետ դասավորվիմ։*

Դիոգինես.— Եվ տակավին կուզես որ չխնդամ,— ո՛, Աղեքսանդր, նույնիսկ հոս, դժոխոց մեջ,— տեսնելով քու հիմարությունդ և Անուբիս կամ Օսիրիս լինելու հույսդ։ Այլ պարապ տեղ մի՛ հուսար, ո՛ ապուշություն, անգամ մը գետին ապրին անցնելեն ետքը ներելի չէ վեր ելնել։ Էակոսին և Կերպերոսին ձեռքեն ազատիլ անհնար է։ Շատ շնորհակալությամբ կուզեի իմանալ, թե ինչ կզգաս արդյոք հիշելով հոս գալդ և երկրի վրա ձգած երջանկությունդ՝ անձնապահ-զորքերն, սպաներն, առատ ոսկիներն, զբեղ պաշտող ազգերն, Բաբելոնն, Բակդրան, մեծ փիղերն, փառքն ու պատիվն, ծիրանի պատմուճանով և ոսկետակ թագով հաղթական մուտքերդ։ Չե՞ն վշտացներ զբեղ ասոնք՝ երբ միտքդ իյնան։ Ինչո՞ւ կուլաս, ո՛ հիմար, մի՞թե չտրվեցուց քեզի իմաստունն Արիստոտել, թե բախտին պարգևաց մեջ ոչինչ կա, որ հաստատ և մշտատև ըլլա։

Աղեքսանդր.— Իմաստո՞ւն, շողոքորթներուն ամենեն խորամանկն էր, թող որ մենակ ես դիտնամ Արիստոտելին ինձի ըրածներն, ինչե՞ր խնդրեց ինձմե, ի՞նչ նամակներ գրեց ինձի, ուսման համար ունեցած փափաքս որքա՜ն չարաչար գործածեց, միշտ պատրաստ զիս շողոքորթելու, գեղեցկություններ գովելու և զայն երջանկություն համարելու, երբեմն գործերս և երբեմն հարստություններս գովաբանելու, զոր ճշմարիտ բարիք կհամարեր, որպեսզի չկարմրի ճոխ պարգևներ կորզելու ինձմե։ Ա՛հ, ո՛ Դիոգինես, շաղակրատ և նենգավոր մ՛էր. յուր փիլիսոփայություններեն սորված սա եղավ, որ կողբամ այն կորուստներն, զորս քիչ մ՛առաջ թվեցիր, որպես թե անոնք մեծ երջանկություն կամ հարստություն եղած ըլլային։

Դիոգինես.— Գիտե՞ս ինչ ընելու ես — որովհետև կփափաքիս դարման գտնել ցավոցդ։ — Ըստ որում եղերորոս չբուսնիր հոս, դնա Լեթեյի ջուրեն խմե. շատ խմե, միշտ խմե. ուրիշ միջոց չկա Արիստոտելի գոված հարստությանց զրկումեն մխիթարվելու։ Այլ՝ Կղիդենն և ուրիշ շատեր դեպի այս կողմը կը վազեն քեզմե վրեժ լուծելու համար՝ փոխարեն այն չարյաց, զորս գործեցիր իրենց, շուտ ըրե, մյուս ճամբեն վազե, դնա խմե, և ինչպես ըսի, շատե՛կ խմե, աղե՛կ է։

Հերմես.— *Կարդադրենք մեր հաշիվն, եթե կուզես, ո՛ նավավար, և տեսնենք որքա՞ն պարտք ունիս ինձի, որպեսզի այս մասին դարձյալ չվիճենք։*

Քարոն.— *Այո՛, կարդադրենք, որովհետև աղեկ բան է հաշիվները մաքրելը։*

Հերմես.— *Քեր հրամանաց համեմատ խարիսխ մը բերի, զոր հինգ տրախմի գնեցի։*

Քարոն.— *Հինգ տրախմին շատ է։*

Հերմես.— *Հանուն Պղուտոնի կ'երդնում, որ հինգ տրախմի գնեցի։ Երկու դանկի գնեցի նաև փոկ մը՝ թիավարելու համար։*

Քարոն.— *Դիր ուրեմն հինգ տրախմ և երկու դանկ։*

Հերմես.— *Առագաստը կարելու ասեղ մ'ալ առի, որուն կանխիկ վճարեցի հինգ դանկ։*

Քարոն.— *Ան ալ անցուր։*

Հերմես.— *Դիր նաև մեղրամոմ՝ նավակիդ ծակերը գոցելու համար, բևեռներ և պզտիկ չվան մը, զոր կայմին գործածեցիր, ամենն երկու տրախմ։*

Քարոն.— *Աղեկ դներ ես։*

Հերմես.— *Ահա այս է, եթե բան մը չմոռցանք հաշվույն մեջ։ Ե՞րբ ուրեմն պիտի վճարես այս գումարը։*

Քարոն.— *Ա՛ռ այժմ անհնար է, Հերմես, բայց երբ ժանտախտ կամ պատերազմ ինձ շատ մարդիկ ղրկե, այն ատեն կրնամ աղակ վաստրկիլ՝ նավողչեքն շատկեկ առնելով։*

Հերմես.— *Ինձ կը մնա ուրեմն ամեն աղետք և չարիք մաղթել, որ կարենամ աղակս առնել։*

Քարոն.— *Ուրիշ կերպով կարելի չէ, որ կարենամ վճարել. ինչպես կտեսնես, հիմա խիստ քիչ մարդ կուգա, որովհետև խաղաղություն կտիրե։*

Հերմես.— *Ես ալ կուզեմ, որ այսպես ըլլա, վնաս չունի, թող իմ պահանջքիս վճարումն ուշանա։ Բայց կհիշե՞ս, Քարոն, երբեմն ի՞նչ մեղայներ կուգային մեզի. ինչպես հաղթանդամ և արյունաթաթավ էին, և անոնցմե շատերն որքա՞ն վերքեր ունեին. մինչդեռ հիմա եկողն կամ զավկեն կամ կնիկեն թունավորված մեկն է, կամ շռայլութենե փորը կամ ծունկերն ուռեցած մարդ*

մը։ Ամենքը դեղին և վատուժ են, և բնավ չեն նմանիր մյուսներուն։ Ասոնց մեծ մասը, ինչպես կերևի, հոս կուգան միմյանց հարբատութիւնը հաւիշտակելու համար՝ իրարու թակարդ լարելով։

Քարոն.— Եվ արդարև ատակն խիստ փափաքելի է։

Հերմես.— Ուրեմն պետք չէ ես ալ գեշ երևամ քեզի, եթե առնելիքս թախանձանոք պահանջեմ քեզմե։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կարլ Մարքսը հունական գեղարվեստի մասին 3

Ֆրիդրիխ Էնգելսը սոցիալական անհրաժեշտության մասին՝ հունական գեղարվեստի և համաշխարհային կուլտուրայի համար 7

Ֆրիդրիխ Էնգելսը մայրական և հայրական իրավունքի մասին 10

Ի. Վ. Ստալինը հունական դիցաբանության մասին . . . 14

1 ՀՈՒՆԱԿԱՆ ԷՊՈՍԸ

ՀՈՄԵՐՈՍ 15

Իլիական (Հատվածներ) *(Գրաբարից աշխարհաբարի վերածեց՝ Դ. Դեմիրճյան)* 17

Դիմոսն մուսային 17

Թերսիդեսի ըմբոստացումը 17

Հեկտորի հրաժեշտը Անդրոմաքեին 19

Հեկտորի և Աքիլլեսի կռիվը 23

Ծերունի Պրիամոսը Աքիլլեսի մոտ 34

Պրիամոսը Իլիոն է տանում Հեկտորի դիակը, Տրոյացիների ողբը 36

Հեկտորի թաղումը 39

Ոդիսական (Հատվածներ) *(Գրաբարից աշխարհաբարի վերածեց՝ Դ. Դեմիրճյան)* 40

Դիմոսն մուսային 40

Նավախիկայա 40

Ալքինոյի ապարանքը 41

Ոդիսևսը և իր խոզապան էվմեոսը 43

Պենելեպեին և հոմանիները 45

Էվմեոսի հավատարմությունը 47

ՀԵՍԻՈԴՈՍ

Աշխատանք և օրեր պոեմի բովանդակությունը . . . 48
Աշխատանք և օրեր (Հատվածներ) *(Թարգմ. Ս. Տարոնցի)* 51
[Առակ սոխակի և բազեի մասին] (Թարգմ. Ս. Տարոնցի) 53
[Հողագործի աշխատանքները] (Թարգմ. Ս. Տարոնցի) . 53
[Վերաբերմունք դեպի կինը] (Թարգմ. Ս. Տարոնցի) . 55
[Աշխատանքի կոչ] (Թարգմ. Ս. Տարոնցի) 55
[Հողագործի անհավասարությունը] (Թարգմ. Ս. Տարոնցի) 56

2. ՀՈՒՆԱԿԱՆ ԼԻՐԻԿԱ.

ԱՆԱԿՐԵՈՆ 57
Պետք է խմել (Թարգմ. Ա. Կարապետյան) 58
Ինքս ինձ (Թարգմ. Ա. Կարապետյան) 58
Քնարին (Թարգմ. Ա. Կարապետյան) 58
Աղջկան (Թարգմ. Ա. Կարապետյան) 59
Հարստությունն (Թարգմ. Ա. Կարապետյան) 59
Կույսին (Թարգմ. Հար. Թումանյան) 60
ՍԱՖՈ 61
Աֆրոդիտեին (Թարգմ. Դ. Դեմիրճյան) 62
**** (Թարգմ. Ս. Տարոնցի)* 63
**** (Թարգմ. Ս. Տարոնցի)* 63
**** (Թարգմ. Ս. Տարոնցի)* 64
**** (Թարգմ. Ս. Տարոնցի)* 64
[Պատասխան Ալքեոսին] (Թարգմ. Ս. Տարոնցի) . . . 65
Էպիթալամաներ (Թարգմ. Ս. Տարոնցի) 65
**** (Թարգմ. Ս. Տարոնցի)* 65
**** (Թարգմ. Ս. Տարոնցի)* 66
**** (Թարգմ. Ս. Տարոնցի)* 66
**** (Թարգմ. Ս. Տարոնցի)* 66
ՊԻՆԴԱՐՈՍ 67
I Իսթմիական ներբող (Թարգմ. Ս. Տարոնցի) . . . 68
I Պյութիական ներբող (Թարգմ. Ս. Տարոնցի) . . . 72

3. ՀՈՒՆԱԿԱՆ ԴՐԱՄԱ.

ԷՍՔԻԼԵՍ 80
Պրոմեթևսը շղթայված (Թարգմ. Հ. Համբարձումյան) . 82
ՍՈՖՈԿԼԵՍ 139
Էդիպ արքա (Թարգմ. Հ. Համբարձումյան) 141

ԵՎՐԻՊԻՏԵՍ 226
Մեդեա (Թարգմ. Հ. Համբարձումյան) 228
ԱՐԻՍՏՈՖԱՆ 304
Հեծյալները (Թարգմ. Ս. Տարոնցի) 305
ՀԵԼԼԵՆԻԶՄԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՀՈՒՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ . 403
ԼՈՒԿԻԱՆՈՍ 403
Ասավածների զրույցները *(Թարգմ. Է. Խոճիկ)* 405
1. Պրոմեթեոս և Զևս 405
2. Էրես և Զևս 405
3. Զևս և Հերմես 407
4. Զևս և Անխիսես 408
5. Հերա և Զևս 410
6. Հերա և Զևս 412
7. Հեփեստոս և Ապոլոն 415
8. Հեփեստոս և Զևս 416
9. Պոսիդոն և Հերմես 418
10. Հերմես և Հելիոս 419
11. Աֆրոդիտե և Սելենա 420
12. Աֆրոդիտե և Էրոս 421
13. Զևս, Ասկլեպիոս և Հերակլես 423
14. Հերմես և Ապոլոն 424
15. Հերմես և Ապոլոն 425
16. Հերա և Լատոնա 426
17. Ապոլոն և Հերմես 427
18. Հերա և Զևս 429
19. Աֆրոդիտե և Էրոս 430
20. Պարիսի դատաստանը.— Զևս, Հերմես, Հերա, Աթենաս, Աֆրոդիտե, Պարիս կամ Ալեքսանդր . . . 431
21. Արես և Հերմես 439
22. Պան և Հերմես 440
23. Ապոլոն և Դիոնես 442
24. Հերմես և Մայա 443
25. Զևս և Հելիոս 445
26. Ապոլոն և Հերմես 446
Խոսակցություն մեռելոց *(Թարգմ. Հակոբ Պարոնյան)* . . 448
Քարոն, Հերմես և դանապան մեռյալներ 449

Քարոն, Մենիպպոս և Հերմես 453
Մենիպպոս և Էակոս 455
Աղեքսանդր, Աննիբաղ, Մենովա և Սկիպիոն 458
Դիոգինես և Պողիտեկիս 461
Կրեսոս, Պղուտոն, Մենիպպոս, Միտաս և Սարդանապաղ 463
Փիլիպպոս և Աղեքսանդր 464
Դիոգինես և Աղեքսանդր 467
Հերմես և Քարոն 469



Պատ. խմբագիր՝ Ս. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
Տեխն. խմբագիր՝ Հ. ՄԱՆՎԵԼՅԱՆ
Կոնտրոլ սրբագրիչ՝ Է. ԽՈՆԴԿԱՐՅԱՆ

Վ/Ֆ 03731։ Պատվեր 249։ Տիրաժ 2000։ Տպագրական 29¾ մամուլ։

Հանձնված է արտադրության 1951 թ. հոկտեմբերի 19-ին։
Ստորագրված է տպագրության 1952 թ. մարտի 30-ին։

Հայկակակ ՍՍՌ Պետական Հեռակա մանկավարժական ինստիտուտի տպարան,
Երևան, Տերյան փ. № 127

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0005773

ԳԻՆԸ 7 Ռ. 70 Կ.

ЦЕНА
Л II
21826